Ltn
1731

1999

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
# ՀԱՅՈՑ

ՍԿՍԵԱԼ

Ի 1772 ԱՄԷ ՓՐԿՉԻՆ ՄԻՆՉԵՒ ՑԱՄՆ 1860

ՀԱՆԴԵՐՁ ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՄԲ

ԵՒ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ԱՒԵՏԻՍ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍ ԿԻՐԵՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

— 1871 —

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
# ՀԱՅՈՑ

ՍԿՍԵԱԼ

Ի 1772 ԱՄԷ ՓՐԿՉԻՆ ՄԻՆՉԵՒ ՑԱՄՆ 1860

ՀԱՆԴԵՐՁ ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՄԲ

ԵՒ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ԱՒԵՏԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՊԷՐՊԷՐԵԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍԻ ՔԻՒՐՔՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

— 1871 —



41731.60

2B-1736



Ի ՅԻՇԱՏԱԿ

# ԳԱԼՈՒՍՏ ԱՂԱՅԻ ԹԷՄՀԱՃԵԱՆ

ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏ ԱՏԱՂՁԱԳՈՐԾԻ

ԱՐՔՈՒՆԻ ՇԻՆՈՒԱԾՈՑ

ԵՒ

ՀՕՐ ԲԱԶՄԱԹԻՒ ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐԱՑ

ՆՈՒԷՐ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Ի ՀՐԱՏԱՐԱԿՉԱՑ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Բազմահմուտն Հայր Միքայէլ վարդապետ Չամչեան սկսեալ զպատմութիւն Հայոց յարարչութենէ աշխարհի, բերէ եւ հասուցանէ յեռահատոր գիրս պատմութեան իւրոյ մինչեւ ցիւր ժամանակս, այս է՝ մինչեւ յամ տեառն 1772, յորում դնելով զՂուկաս կաթողիկոս սրբոյ Էջմիածնի, զՋաքարիա պատրիարք Կոստանդնուպօլսոյ, եւ զՍուլթան Մուստաֆա Գ. կնքէ զպատմութիւն իւր։

Իսկ անտի եւ այսր ազգային դէպք եկեղեցականք եւ քաղաքականք յանծանօթս էին, եւ ամենայն որ 'ի ծերունեաց պէսպէս եղանակաւ պատմէր. երկոքին իսկ ականատեսք պատմէին զմի եւ զնոյն իր, բայց երկոքունցն պատմութիւն չէր միաբան 'ի ստուգութեան մասին, թէ եւ երկաքանչիւրն զիւր խօսն պնդէր հաւաստի ցուցանել. եւ այս անհամաձայնութիւն նոյնն հատէր եւ մաշէր զոգիս, որ 'ի մանկական տիոց անսպառելի սէր եւ փափագ ունելով ընթեռնուլ զպատմութիւն ազգիս, մինչեւ զերիս հատորս Չամչեան պատմութեան ծայրէ 'ի ծայր քննութեամբ ընթերցեալ, եւ չէի լիովին յագեալ։

Իսկ մինչ 'ի 1812 ամին դէպ եղեւ ինձ մտանել պաշտօնի փոխանորդութեան առ տեառն Յովհաննու պատրիարքի Կոստանդնուպօլսոյ, որ հրաժարեալ 'ի պատրիարքութենէն նստէր յԵւդոկիատ 'ի վանս սուրբ Երուսաղէմի, (որ այժմ Ճեմարան ասի) ունելով ընդ ունէր եւ զրագմանս ինչ առ ունէր պատմութեան ազգիս, հրամայեաց ինձ զժամանակակից դէպս պատմութեան ազգիս շարակարգել պարզ շարադրութեամբ. եւ կամեցեալ դէպսն նորին իսկ պատմէր բանիւ բերանոյ եւ առաջի իւր տայր գրել։

Եբաց եւ զարկղ մի մեծ, յորում էին նամակք, կոնդակք աւելի քան զերկերիւր. գրեալք 'ի սուրբ Աթոռոյն Էջմիածնի եւ Երուսաղէմի եւ առաջնորդաց. զորս զննեալն ետ ինձ մի առ մի ընթեռնուլ եւ քաղել 'ի նոցունց զվերաբերեալսն պատմութեան ազգիս, յամենայնի զստոյգն բացատրելով եւ մեկնելով։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
# ՀԱՅՈՑ

## ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս պատրիարքութեան Զաքարիայ, եւ Յովհաննու Համադանցւոյ, եւ հալածանաց Հռոմէականն Հայոց։

(1772) Զաքարիա պատրիարք կացուցանի՝ միաբան ա-թոռոյն Էջմիածնի եւ ՚նախկին. ՚նորա յաթոռ պատրիարքու-թեան Կոստանդնուպօլսոյ՝ ՚ի վեցերորդ ամի թագաւորու-թեան Սուլթան Մուստաֆա արքային, եւ ՚ի տասներորդ ամի Հայրապետութեան տեառն Սիմէօնի Հայոց կաթողիկոսի՝ յամի տեառն 1772 ՚ի նոյեմբերի 30։

(1777) Յաւուրս սորա տէր Սիմէօն կաթողիկոս Էջմիածնի՝ արար փոփոխութիւն Տօնացուցին Հայոց. զոր շինեալ էին նախնի սրբազան հարք. սուրբն Սահակ Պարթեւ եւ սուրբն Մեսրոպայ. որոց զկնի եւ սուրբն Գրիգոր Վկայասէրն՝ եդրեալ ներբողս Շնորհալւոյն՝ զկարգս որոց թարգմանեալ ՚ի Յունականէն, եւ բերեալ ՚ի մի բան աւուրց ՚նահատակութեան նոցին՝ կարգաւորեաց զՏօնացոյցն, եւ բանադրանս յաւելեալ ՚ի վե-րայ՝ փակեաց զնա, յասելն. «Որպէս զի մի իշխեսցէ այլ ոք սատար ինչ եւ սպառական զնա մնծանել ՚ի յայս հաստա-տահմանեալն Տօնացոյց»։ Իսկ Սիմէօն կաթողիկոս առ ոչինչ համարեալ զայս կալ բանադրանաց, արար փոփոխութիւն տօնախմբութեանց՝ որպէս ինքն կամեցաւ. Յաւել ՚ի նմա եւ զերիս անուանս, այսինքն՝ զՅովհան Որոտնեցի, զԳրիգոր, եւ զՄովսէս Տաթեւացիս, եւ սահմանեաց տօնել զնոսա ընդ սուրբ եւ աստուածազարդ հայրապետին Յովհաննու Օձնեցւոյ՝ յերրոր-

դում շարժու քառասնօրեայ պահոցն։ Նա այսպէս կարգադրեալ Սիմէօն զՏօնացոյց իւր, առաքեաց 'ի կոստանդնուպօլիս, զի խափանեալ զառաջինն, զայս զշարակարգեալն յիւրմէ 'ի կիր արկցեն։ Իսկ Զաքարիա պատրիարք ընթերցեալ զՏօնացոյցն զայն, մինչդեռ ծանօթացու փոփոխութեանց նորին, կամեցաւ հերքել զնա 'ի բաց, այլ անկանեալ յայնժամ 'ի Սիմէօնէ՝ չեղեւ կարող առնել՝ զոր կամէրն, ուստի և 'ի կիր ածին զնա 'ի կոստանդնուպոլիս իբրեւ զամս չորս։

(1780) Այս Զաքարիա պատրիարք յարոյց հալածանս 'ի վերայ Հռովմէական Հայ կոչեցեալ ժողովրդեանն 'ի մարտի 25. և զբազումս 'ի նոցանէ առաքեաց 'ի ծառայութիւն թիոց 'ի նաւատեղին, որոց անուանքն են այսոքիկ. Տէր Մինաս, Դափանճի Լօրէն, վարդան մանկաւարժ, Թիւլպէնտճի Յովսէփ, մահտեսի Քերովբէ, Գերձակ Սերովբէ, ժամագործ Սերովբէ, երկու եղբարք Արիկ և Յովհաննէս, ճամփալեան մահտեսի Յարութիւն։ Երկուք 'ի նոցանէ այսինքն Տէր Մինաս և ճամփալեան մահտեսի Յարութիւնն մեռան 'ի բանտի անդ նաւատեղեաց։ Արգել Զաքարիա և զքահանայս չմկրտել զերեխայս նոցա, և չթաղել զմեռեալս, որով մեռեալք հոտէին 'ի տուն։

Բայց և նոքա 'ի ձեռն դեսպանին Գերմանացւոց հայթհայթեցին զծանր վնաս յանցանաց վասն նորա, իբրեւ զի «Զաքարիա պատրիարք Հայոց 'ի ձեռս բերեալ զգիրեալ թուղթ տէրութեան Գերմանացւոց, լուծեալ է զկնիք նորա և ընթերցեալ – զայսպիսի բամբասանս եդեալ 'ի վերայ նորա, և ծանուցեալ արքունի դրան, փոխեցաւ Զաքարիա առ ժամանակ մի 'ի պատրիարքութենէն, և գնաց 'ի Պրուսա, և եդին 'ի տեղի նորա զՀամատանցի Յովհաննէս վարդապետ զառաջնորդն Պրուսայու։

(1781) Սա այնչափ սաստկացոյց զհալածանս Հռովմէական Հայ ժողովրդեան, մինչեւ խնդրել նոցա կրկին անդամ զԶաքարիա պատրիարք, քանզի եղեւ պատճառ Յովհաննէս սպանանելոյ և զմի ոք 'ի Հռովմէական Հայոց, և տանց յեղաշրջջելոյ 'ի Մահմէտական օրէնս։ Առաքեաց 'ի ծառայութիւն թիոց 'ի նաւատեղին և զբազումս, յորոց գլխաւորքն են այ-

ուքին․ Համբո՛ օղլու, աքաէր Մուրխաս, Պարոն օղլու, Նի-
կողոսս, Նալբանդեան Գրիգոր, Ժամագործ Մատաթիա, Երկանեան Գէորգ, Սրմաքէշ Պարոն, Պօղոս Սերովբէ, Սըր-
մաքէշ Հերբէլուղ, խաչ Թաւաֆօղլի կամիոսս, և Տուզճեան Անտոն, և Զիլինկիր Գէորգ, որք եղան 'ի բանտի, բայց ազատեցան 'ի գնոյս 'ի Թիֆ․ խոստանալով Ցոլհաննէս պատրիարք և զԹաղուիս նոցա, բառնալ կախեալ զդադարէ մաւերցն 'ի ճանապարհի, և զձեռս դատաւորին ևս փոխեալ, սանդղաձև յօրինեալ վասն նոցա, և յայսմ միջոցի մեռաւ Թրնկըրեան Գրիգոր, և զկնի երից աւուրց ժահահատեալ Թա-
գեցաւ խղճաբար։ Այդ այսպիսեօք անհամդուրժելի նեղու-
թեամբք այնչափ տառապեցայ զնոտ Ցոլհաննէս պատրի-
արք, մինչև յետ սակս ամաց հանին զնա 'ի պատրիարքու-
թենէն, և տարեցին զնա 'ի գիւղն Խարթալ, յորմէ ապա գնաց յառաջնորդութիւն Ակնայ քաղաքի, և դարձուցին վերստին զՋաքարիա վարդապետ յաթոռ պատրիարքութեան կոստանդնուպօլսոյ, յամի տեառն 1782 'ի մարտի 31։ Այլ 'ի վերադառնալ Զաքարիայ պատրիարքի՝ ոչ այնչափ եցոյց նոցա զհալածման, և տակաւ առ տակաւ ետ նոցա զհամար-
ձակութիւն և զԹղյառութիւն, բայց արար ժողով 'ի պատ-
րիարքարանին, և օրինադրեաց, զի Հայք մի՛ արասցեն խառ-
նութիւն ընդ Հռոմէական Հայոց, և մի՛ աղդակցութիւն, և այսպէս որոշեալ զնոսա Զաքարիա իբրև զազդ մի, որոց ուրախացեալ ընդ այս, առ աւել ևս վստահացան յորջոր-
ջել իւրեանց, և սկսան յայտնել չերթալ երբէք յեկեղեցիս Հայոց, այլ միայն յեկեղեցիս Լատինացւոց։

(1785) Եւ 'ի սմին ժամանակի 'ի կոստանդնուպօլիս Սահակ եպիսկոպոս՝ Նուիրակ Էջմիածնի, այր ահագին և փառաւորեալ տեսլեամբ։ Սմա այնչափ առնէր Զաքարիա պատրիարք, մինչ զի բազում անգամ երեալ Սահակ յեկեղեցւոջ յառաջնոր-
դութեան իւրում՝ քար արձակէր առ նա, այլ այլ իրաց նմանութիւնս կուտակելով 'ի վերայ նորա առանց տալոյ զա-
նուն նորա։ և երբեմն բերեալ 'ի կարգ բանից իւրոց զրաւ-
"գայլ յափշտակող" արտաբերեալ ընդ բերանն բարձր ձայ-
նիւ, ձեռամբ իւրով զՋաքարիա պատրիարք ցուցանէր։

Սա՛ յաւուր միում՝ առանձինն գտեալ զՁաքարիա 'ի սենեկի իւրում, և 'ի միջել երկոցունց վասն աթոռոյն Էջմիածնի, զայրանայ Սահակ ընդ Զաքարիա, և յարուցեալ 'ի տեղւոջէ խրոխտ՝ բուռն հարկանէ զնմանէ, և կռուփս հանէ նմա ամենայն զօրութեամբ, և ելեալ անտի գնայ այլուր: Իսկ Զաքարիա պատրիարք լցեալ սրտմտութեամբ և բարկութեամբ՝ հանէ վասն նորա հրովարտակ արքունի յաքսորս առաքել զՍահակ, բայց նորա ծանուցեալ զայն, խոյս տայ 'ի Կոստանդնուպօլսոյ, զորս գիտէր խնայել Ղուկաս կաթողիկոս, առաքէ նախիրակ զՄինաս եպիսկոպոս զայր բարեբարոյ և հեզ, որ յառաջ քան զՍահակ փոխանորդ եկեալ էր և երբեմն 'ի նախիրակութիւն Կոստանդնուպօլսոյ, և Սահակ գնայ 'ի Զմիւռնիա, և մնայ անդ, որ և վախճանեցաւ յետ սակաւ ամաց:

## ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս փոփոխութեան Տօնացուցին Հայոց, և կաթողիկոսութեան Սսոյ տեառն Թէոդորոսի, և պատրիարքութեան Երուսաղէմի տեառն Թէոդորոսի, և պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ տեառն Դանիէլի:

Այսպէս Սիմէոն յաթոռ հայրապետութեան զամս եօթն և տասն և կէս, վախճանեցաւ, և յաջորդեաց յաթոռ նորա Ղուկաս կաթողիկոս, ընդ որս դժկամակեալ Զաքարիա պատրիարք, վասն լինելոյ Ղուկասու կաթողիկոսին առանց գիտութեան իւրոյ, ոչ յիշատակեաց զնա ամենևին, այլ յետ սակաւ ամաց ժողովեալ իշխանաց առ նա, և շահելով զկամս Զաքարիայ, գրեցին առ Ղուկաս թուղթ մեծարական՝ ընկալեալ զնա կաթողիկոս կնքով պատրիարքին և ամենայն մեծամեծաց:

(1784) Ի սորա ժամանակս Ջաքարիա պատրիարք՝ որ չէր հաճեալ ընդ Տօնացոյց Սիմէօն կաթողիկոսի, արար ժողով եպիսկոպոսաց, որք գտան յայնժամ 'ի Կոստանդնուպոլիս, և քահանայից, և մեծամեծայն Հայոց, և համաձայնութեամբ ամենեցուն՝ վճարեալ 'ի ժողովին 'ի գործ արկանել զհին Տօնացոյցն, որպէս յառաջն, և չընդունել զՍիմէօնին ամենեւին երբէք, զի այդ մեր ասէ՝ ամուր և հաստատ է 'ի վերայ ամենայն ծիսից և աւանդութեանց նախնեաց մերոց, և չէ կարօղ զհին աւանդութիւնս իւր փոփոխել երբէք.

Եւ այսպէս հրամանաւ ժողովոյն ուր ուրեք գտանէին ըզ Տօնացոյց Սիմէօնին, բերէին առ Ջաքարիա պատրիարք, որ գայր թաղուցանէր զնոսա 'ի հուր, և եկաց մնաց առաջինն 'ի գործածութեան յաւուրս Ջաքարիայ պատրիարքին. Բայց յետ ժամանակաց յաւուրս Դանիէլի պատրիարքի արգելաւ վերստին գործածութիւն հին Տօնացուցին, և զՏօնացոյց Սիմէօնի տպագրեալ 'ի Կոստանդնուպոլիս, սկիզբն արարին 'ի կիր առնուլ, յորմէ մինչեւ ցայսօր 'ի գործ ածի յեկեղեցիս Հայոց.

(1784) Յաւուրս յայսմիկ վախճանի տէր Եփրեմ կաթողիկոսն Սսոյ 'ի տանէ աջապահից, դեռ մինչ արտաքսեալ յայլազգի իշխանէ անդրոյն, և յաջորդէ զաթոռ կաթողիկոսութեան Սսոյ՝ Թորոս եպիսկոպոս Սսեցի, զորոյ ըշանդէս օծութեանն կատարեցին յամսեանն սեպտեմբերի յամի տեառն 1784 'ի Կոստանդնուպոլիս յեկեղեցւոջ սուրբ Աստուածածնի, ուր և գտան առաջնորդ վեց եպիսկոպոսունք, երկոտասան վարդապետք, քան և չորս քահանայք՝ և սարկաւագունք ինն, զոր յետ երկոտասան աւուրց առաքեցին 'ի Սիս.

(1796) Եղեն յայսմիկ աւուրս 'ի Կոստանդնուպոլիս Դանիէլ եպիսկոպոս նուիրակ սուրբ Էջմիածնի՝ այր խոհեմագործ և գովելի վարուք, միանգամայն և չքեղ կերպարանօք՝ պատուեալ յազգէ մեծամեծայն Հայոց, և կատարեալ զգործս պաշտաման իւրոյ, գնաց 'ի Զմիւռնիա ըստ առաքելութեան նուիրակոյն Էջմիածնի մնալ անդ զամս երիս.

Բայց սակայն խռովութիւն ինչ ծագեալ անդր 'ի հասարակութեան վասն Դանիէլի, և երկպառակութիւն մեծ մտա-

եալ 'ի մէջ նոցա լինէր կռիւ ոչ սակաւ ։ Եւ թէպէտ Զաքարիա պատրիարք բազմօք ջանայր խաղաղեցուցանել զնոսա, և հաստատել զԴանիէլ յաջորդութեան իւրում, այլ չկարէր հնար ։ վասն որոյ և այն մասն ժողովրդեանն՝ որք չէին հաճեալ ընդ Դանիէլ ։ գրեցին առ Ղուկաս կաթողիկոս բառնալ 'ի միջոյ իւրեանց զԴանիէլ ։ զի բարձցի և երկպառակութիւնն 'ի միջոյ իւրեանց ։ և Ղուկաս կաթողիկոս առ դարման անելոյ այսմ, առաքեաց 'ի Կոստանդնուպօլիս զՄարտիրոս եպիսկոպոս Կեսարացի՝ այր հեզ և խոնարհ՝ և շահեցող յամենայնի ։ և ետ նմա երկու կոնդակս ։ զմին՝ վասն նուիրակութեան 'ի կողմանս Բուլղարի ։ և զմիւսն՝ վասն առաջնորդութեան Զմիւռնիոյ ։ և խօսեցաւ ընդ նմա ։ զի եթէ Զմիւռնացիք ամենեքեան հաճեսցին ընդ Դանիէլ ։ գնասցէ Մարտիրոս 'ի նուիրակութիւն Բուլղարի ։ իսկ եթէ չհաճեսցին ։ Մարտիրոս գնասցէ 'ի Զմիւռնին ։ և Դանիէլ 'ի Բուլղարի ։ որպէս և եղեւ իսկ ։ վասն զի Զմիւռնացիք ոչ հաճեցան բնաւ երբեք ընդ Դանիէլ ։ առաքեաց Զաքարիա զՄարտիրոս եպիսկոպոս 'ի Զմիւռնին ։ և Դանիէլ դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս ։ (1797 փետրուար 1) ։

Ի վերադառնալ Դանիէլի այսր ։ մինչդեռ յանդիման եղեւ Զաքարիա պատրիարքի՝ նախատեաց զնա Զաքարիա բազմադիմի բանիւք ։ և 'ի սաստիկ ձմերան եղանակի առաքեաց 'ի նուիրակութիւն 'ի Բուլղարի՝ և հանդարտեցաւ խռովութիւնն այն մեծ ։

(1798) Յետ այսր ամենայնի խնդրեաց հրաման Զաքարիա պատրիարք յեպարքոսէն մեծէ՝ որ կոչէր Իզզէթ Մէհէմմէտ փաշա ։ նորոգել զեկեղեցին 'ի Գուրուչէշմէ յանուն սուրբ Խաչի ։ որ 'ի բազում ժամանակաց հետէ աւեր և անշէն մնացեալ էր ։ և նորա ծանուցեալ արքայի զխնդիր նորուն ։ ետ հրաման 'ի նմանէ և նորոգեաց Զաքարիա զեկեղեցին գեղեցիկ յոյժ քան զառաջինն ։ և էօծ զնա յամի տեառն 1798 'ի փետրուարի 28 'ի Տնտեսի կիւրակէի աւուր մեծի պահոցն ։

Յետ չորից ամաց շինութեան եկեղեցւոյն՝ ետ հրաման Զաքարիա պատրիարք և վասն եկեղեցեացն Պրուսայու և Անդրիանուպօլսոյ ։ և ընկալեալ զհրովարտակն արքունի՝ առաք-

եաց առ իշխանս քաղաքացն, որոց փաղփաղակի քակեալ զեկեղեցիս 'ի հիմանց՝ նորոգ կառուցին զնոսա գեղեցիկ և փայլուն քան զառաջինն և մեծ ։

Ի սոյն ժամանակս շինեցին և զորմանս պարսպի սուրբ Աստուածածին եկեղեցւոյն պատրիարքարանի, բայց վասն առնել բարձրութեան նորին քակեցին զնա, թէպէտ հրամանաւ Եպարքոսին դարձեալ շինեցին զնա խոնարհ քան զառաջինն ։

Իսկ Դանիէլ եպիսկոպոս՝ որ գնացեալ էր 'ի Ռումէլի 'ի նուիրակութիւն, յետ միոյ ամի վճարեալ զգործս իւր, եկն 'ի կոստանդնուպօլիս յաւուրս մեծի պահոց, և անտի եւս կամէր գնալ յէջմիածին. բայց վասն զի Զաքարիա պատրիարք անկեալ կայր հիւանդագին 'ի մահճին, վասն որոյ և մեծամեծք Հայոց ոչ հաճեցան ընդ գնալն նորա, և ոչ թոյլ ետուն նմա հրաժարել 'ի կոստանդնուպօլսոյ, զի գիտէին, թէ մերձ էր փոխման պատրիարքին, և կամէին նստուցանել զնա յաթոռ պատրիարքութեան, վասն որոյ արգելին զգնացս նորա, և մնաց Դանիէլ սպասեալ կամօք 'ի կոստանդնուպօլիս ։

Իսկ յաւուր միում՝ ուրբաթու 'ի մարտի 11 'ի հինգերորդ ժամու վճարեաց զկեանս իւր Զաքարիա պատրիարք, կալեալ զաթոռ պատրիարքութեանն ամս քան և մեկ, և ընդ առաւօտն յաւուրս շաբաթու նա ինքն Դանիէլ եպիսկոպոս կատարեաց զկարգ թաղման նորա, և տարեալ 'ի Ղուրուչէշմէ, թաղեցին զնա յեկեղեցւոջն, և հրամանաւ Դանիէլի յաւուրն յայնմիկ լինէր պատարագ յայսմի ամենայն վասն հոգւոյ հանգուցեալ պատրիարքին, բացեալ զփարագոյրս խորանացն, որք ծածկեալ էին ըստ գոլոյ աւուրցն 'ի պահս քառասնորդաց, և յաջորդեաց զաթոռ պատրիարքութեան Դանիէլ յամի 1799 'ի մարտի 15 ։

—⸰⸰⸰—

# ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս փախճանի Ղուկասու կաթողիկոսի, եւ ընտրութեան Յովսեփայ, եւ Բարթողիմեայ, եւ Դանիէլի։

---

Յետ անցանելոյ ութն ամաց եղեւ նորոգութիւն շինութեան եկեղեցւոյն Ղալաթիոյ՝ որ յանուն սուրբ Լուսաւորչին. և գնացեալ անդ Դանիէլ պատրիարք էօծ զեկեղեցին ՚ի նոյեմբեր 13.

Անդ առաջնոյ գտան Յովհաննէս, Պետրոս, և Յակոբոս եպիսկոպոսունք աշակերտք Զաքարիայ պատրիարքի յօծման եկեղեցւոյն, ընդ որս գտաւ և Յովսէփ նուիրակ սուրբ Էջմիածնի՝ այր ծեր և պարզամիտ, որ նորոգ եկեալ էր յայնժամ ՚ի կոստանդնուպոլիս, թէպէտեւ յառաջ քան զերիս ամս եկեալ էր երբեմն և յաւուրս Զաքարիայ պատրիարքի։

Յետ չորից ամաց եղեւ նորոգութիւն և սուրբ Եղիայ եկեղեցւոյն՝ որ յԷյուպ. և հրամանաւ Դանիէլի պատրիարքի գնաց Յովհաննէս եպիսկոպոս, և էօծ զեկեղեցին յամի տեառն 1800 ՚ի մարտի 26.

Իսկ իբրեւ ամս լրանայր պատրիարքութեան Դանիէլի, փախճանեցաւ Ղուկաս կաթողիկոս կացեալ զամս կաթողիկոսութեանն զամս քսան և մի, և լուր մահուան նորա եհաս ՚ի կոստանդնուպոլիս.

Եւ միաբանք սուրբ Էջմիածնի ամենեքին ստիպեալ ժողով ՚ի յընտրութիւն կաթողիկոսի՝ գտին ընտիր և արժանաւոր կաթողիկոսութեան զԴանիէլ պատրիարք կոստանդնուպոլսոյ. վասն որոյ թուղթ մաղթանաց գրութեան գրեալ և կնքեալ յականէ յանուանէ եպիսկոպոսաց, վարդապետաց, և բոլոր միաբանութիւն սուրբ ուխտին, առաքեցին առ Դանիէլ ՚ի ձեռն Գաւթի եպիսկոպոսի Լոռեցւոյ՝ որդւոյ Պօղոսայ Տէփխիսեցւոյ, որ էր այր բարձրահասակ և մեծանձն, երկայնաձեւ և թխադէմ, խորադէտ և գարանադարձ. Սա եկեալ ՚ի կոստանդնուպոլիս, մատոյց զթուղթն առ Դանիէլ

պատրիարք, յորում՝ հրաւիրէին զնա նոքա զԴանիէլ 'ի հովուապետութիւն ընդհանուր ազգիս։

(1800) Ընդ այս ժամանակ և Յովսէփ արքեպիսկոպոս առաջնորդն բոլոր Ռուսաստանու, այր մեծահամբաւ և գրասէր, որ հաստատեալ պաշտպանն Հայոց 'ի Ռուսաստան, գրազուռ գիրս ետ տպել, որպիսիք են՝ Ընդհանրական, և Յիսուս Որդի, Պատմութիւն Թելեմաքին, Աղօթագիրք, Նարեկ և այլ այնպիսիք, և յամին 1796 առաքեալ 'նաև զՕրացոյց տպել անդր գեղեցիկ յօրինուածով։

Սա լսեալ զկար մահուանն Ղուկասու, և 'ի ձեռն տէրութեան Ռուսաց ջան գործեալ յինքն ընկերել զիշխանութիւն կաթողիկոսութեան, գրէր առ որս հաւատարիմ կարծէր ինքեան, զի ընտրեսցեն զինքն 'ի կաթողիկոսութիւն Էջմիածնի, պատճառս դնելով, թէ ինքն իցէ 'ի հնոյն եպիսկոպոսաց սուրբ աթոռոյն, և վասն այն քան զամենեսին արժանաւոր։

Այս համբաւ տարածեալ 'ի Կոստանդնուպօլիս, 'ի խորհուրդ մտին մեծամեծք Հայոց յընտրութիւն կաթողիկոսի, և թէպէտ Դանիէլ պատրիարք կամեցաւ գնալ ինքն 'ի կաթողիկոսութիւն ըստ խնդրոյ բոլոր միաբանութեան սուրբ Էջմիածնի, այլ իշխանք մեծամեծք ոչ երբէք թողուին զնա 'ի կամս իւր՝ առնելով. «Եթէ ոչ թոյլ տամք քեզ հրաժարել 'ի պատրիարքութենէդ, զի ոչ մեկնիմք 'ի քէն. զի բոլոր հասարակութիւն քաղաքիս ոչ գիտէ այլ ճանաչել պատրիարք իւրեանց, բայց միայն զքեզ։

«Բայց զի միաբանք ամենեքին խնդրեալ են զքեզ, ընտրեմք մեք հրամանաւ քով փոխանակ քո զմի ոք յեպիսկոպոսաց՝ առաքինի և խոհական, խոհեմ և յանձնանձիր կառավարութեան սուրբ աթոռոյն»։

Իսկ Դաւիթ որ եկեալ էր յԷջմիածնայ միաբանական գրութեամբն, ստիպէր զԴանիէլ պատրիարք մեկնիլ յաթոռոյ պատրիարքութեան՝ ասելով. «Եթէ հայր սուրբ, միաբանք զքեզ կամին ամենեքին, և անհնար է այլոց ումեք 'նստիլ յաթոռ կաթողիկոսութեան նորա. մինչ զի եթէ ոչ կամեսցի տէրութիւն քո, ծանիցես, զի սուրբ ատեանն խանգարի և կոր-

ծանի. և պատճառ կործանման նորա լինի չընդունելութիւն քո, հայր՝ 'ի փառս ազգիս և յօգուտ սուրբ աթոռոյն ընկալ զիշխանութիւն հովուապետութեան ազգիս »։

Այս էր միտ գիտաւորութեան Դաւթին, զի հրաժարեալ Դանիէլ 'ի պատրիարքութենէն, ինքն յաջորդեսցէ 'ի տեղի նորա. քանզի գիտէր ստուգիւ, զի անհնար էր լինել ինքեան կաթողիկոս, վասն որոյ և զաթոռոյն Կոստանդնուպօլսոյ ջանայր յինքն կորզել զիշխանութիւն պատրիարքութեան, ուստի և զգաստիկ և որ այլքն նման են բանք, խոսեցաւ Դաւիթ առ Դանիէլ, և հաճեցոյց զնա առ այս միտ։

(1800) Իսկ իշխանք Հայոց ժողովեալ արարեալ յեկեղեցւոջն սուրբ Աստուածածնի յաւուր հինգշաբթի, ընտրեցին զԲարթուղիմէոս եպիսկոպոս՝ կալուածի վերակացեալ՝ աշակերտ Զաքարիայ պատրիարքի՝ այր շնորհազարդ և գովելի վարուք, խնամոտ և խորախորհուրդ, արժանաւոր արդարեւ կաթողիկոսական վերամբարձ իշխանութեան, որ առաջնորդն էր յայնժամ՝ 'ի Նիկոմիդիա։ Հաճեցուցին և զԴանիէլ պատրիարք 'ի կամս իւրեանց, և հրամանաւ նորա և հաւանութեամբ ժողովոյն առաքեցին հրաւիրակս առ Բարթուղիմէոս եպիսկոպոս գալ 'ի Կոստանդնուպօլիս, և ընդունել զիշխանութիւն կաթողիկոսութեան, և գնալ յԷջմիածին։

---

## ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս գործոց Յովհաննու եպիսկոպոսի Կոստանդնուպօլսոյ, և Գալուստ նուիրակին Էջմիածնի, և ընտրութեանն Դանիէլի 'ի կաթողիկոսութիւն, և Դաւթի 'ի պատրիարքութիւն։

---

ՆՈՅՆ 'ի նմին ժամանակի 'ի Պօլիս Յովհաննէս եպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի աշակերտ Զաքարիայ պատրիարքի՝ այր հանճարեղ և խորագէտ, որ էր յայնժամ՝ քարոզիչ 'ի սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոջն Գալաթու։

Այս տեսեալ զայրագին փոփոխութիւնս, և լսեալ զխորհուրդս ընտրութեան կաթողիկոսի և պատրիարքի, կամեցաւ յինքն ընկրկել զպատրիարքութիւն Կոստանդնուպոլսոյ, այլ չէր նմա հնար յառաջ տանել զայս խնդիր սրտի իւրոյ՝ ոչ ուստեք, եթէ ոչ՝ երկպառակութիւն ինչ անկցի ՚ի ժողովրդեան, որով գուցէ մարթ իցէ նմա ՚ի գլուխ հանել զխորհուրդ իւր։ Այս հանապազ կենակցէր ընդ Պօղոսի նուիրակին Էջմիածնի, որ էր այր պարզամիտ և անխորհեմ, և հաւատացուցեալ էր նմա զինքն իբրև ճշմարիտ և սիրելի և հարազատ բարեկամ։

Արդ յայսմիկ ուրեք հրաւիրեալ զնա ածէր ՚ի Պալատն, և սկսանէր նմա առանձինն խօսել վասն աթոռոյն Էջմիածնի, և խռովեցուցանէր զմիտս նորա վասն ընտրութեան Բարթողիմէոսի եպիսկոպոսի ՚ի կաթողիկոսութիւն, ասելով. «Եթէ՝ այր դու՝ ո՞չ երկնչիս յԱստուծոյ, որ գիտես բարուք զնա և զյաւն, և խցեալ զբերան քո՝ ոչ խօսիս երբէք։

«Ո՞չ գիտես զԲարթողիմէոս եպիսկոպոսն, զոր ընտրեցին ՚ի կաթողիկոսութիւն ընդհանուր ազգիս, իցէ՞ արդեօք նա արժանաւոր այնմ աթոռոյն, ո՞չ ապաքէն իբրև պաշխարհականս ծխախոտի և նարգիլէի չառնայ նա։

«Ո՞չ ապաքէն դու ՚ի քառասուն ամաց հետէ միայն այնմ աթոռոյն և եպիսկոպոս և նուիրակ նորա ես, և ընդէ՞ր զքեզ ոչ համարին արժանաւոր ընտրութեան, որ ես այր չորհազարդ և գովելի փառօք, ծեր ամօք և սիրելի և հաճոյ յաչս ամենայն ժողովրդեան Հայոց, որք որպէս զաւր և զայր Աստուծոյ ճանաչեն զքեզ։ Ընդէ՞ր ոչ խօսիս, մի՞ բաւական է քեզ առնել ինչ „ և այլն։

Զայսպիսիս և զայլս նման բանս խօսեցաւ Յովհաննէս առ Պօղոս, և ամբոխեաց զմիտս նորա իբրև ծով ալէկոծեալ, որոյ անշուշտ և աներկբայ միօք հաւատացեալ բանից Յովհաննու՝ գնաց ՚ի Պալատէ ՚ի խուցս ՚ի տունն Էջմիածնի հանդիման մայր եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի, և ըղ գիշերն ամենայն ոչ կարացեալ ննջել վասն խռովութեան այլոց սրտի նորա, որք ամբոխէին զհոգի նորա, յաւուր ուրբաթու ընդ այգանալ առաւօտուն գնաց յեկեղեցին և կանգնի ՚ի տեղի իւր, որ էր յարտաքին գաւթին եկեղեցւոյն։

Եւ մինչ էր ժամ ընթերցմանց զաւեշտաբանն աւուր դատաս_
տանին, դարձեալ ընդ կրտսերն Գաղուստ, երաց զբերան
իւր, և սկսաւ խօսել առ ժողովուրդս, ասելով. «Եթէ ասկաւ
ինչ բան ունիմ ասել ձեզ»: և յետ քանի մի բանից առաջար_
կեալ ժողովրդեանն զընտրութիւն Բարթողիմէոսի առանց
փաստութեան իւրոյ, ասելով. «Եթէ այն այր՝ որ քարոզէ զհար_
գիլել և զծխախոտ, և ուտէ հանապազ ընդ աշխարհականս,
ոչնչագիւտ այր՝ որ անկայել և անպատշան իւր է քահանայու_
թեան, ընդդէմ ի յընդ հանուր կաթողիկոսութիւն սորա. և
զիս՝ որ քառասնամեայ միայնակ աւուր աթոռոյն եմ, և 'ի
մանկութենէ անեալ եմ 'ի սուրբ ուխտ նորա, ոչ կոչեցին, և
ոչ հարցին ինչ.

«Ինքեանք բաւ կամին իւրեանց առնուլ և տալ, ընտ_
րել և իշխեցանել, և զայլ այնպիսիս.

«Արդ՝ կաթողիկոսն այն՝ զոր ընտրեցին ոմանք, նզովեալ
է և եղիցի. և որք ընտրեցին զնա՝ և ընկալան՝ և կամ որք ըն_
դունին, անիծեալ եղիցին 'ի Հօրէ և յՈրդւոյ և յամենասուրբ
Հոգւոյն»:

Զայս լուեալ ժողովրդեան, խռովեցան ամենեքին, և սկը_
սան ամբոխել զիրեարս, և լինէր աղմուկ մեծ 'ի ժողովրդեան:

(1800 ապրիլ 22) Իսկ Գաւիթէլ սպասաւորք առեալ զայս
գործ Գաղուստ նախիրակին, և 'ի թերաց բաւթենէ բանից Գաւ_
թին դրդեալ, խաւեցաւ ընդ մեծամեծս Հայոց, և յառաջ
կոչրակէն ապար ժողով մեծ 'ի Մայր եկեղեցւոջն, յորում և_
ղեւ բազմութիւն մեծ, և առաջի ամենեցուն եա ընթերցուլ
զթուղթ մանշապատկան գրութեան բոլոր միաբանիցն էջմիած_
նի, որք մեծաւ թախանձանօք յորդորէին զնա իջանել 'ի պատ_
րիարքական աթոռոյն և յանձն առնուլ զհայրապետութիւն
աթոռոյն Էջմիածնի. յորում յետ բազում փոյթ յանձին յա_
ցանելոյ փառն կաթողիկոսութեան նորա, գրեալ էին այսպէս.

«Կոչէ զքեզ տէր Աստուած 'ի կոչումն սուրբ.

«Մի արհամարհեր զնոսա.

«Կոչէ զքեզ տէր քո, մի խուսափեր, այլ հայեցեալ 'ի
«զրեցեալն նախնի երջանկացելոյս, այսինքն 'ի Մովսէս, յԵ_
«սայի, և յԵրեմիա, և յայլսն, փութա կամաւորութեամբ հա_

«Հաւանեալ կոչմին գնեա Քրիստոսի տեառն մերոյ, զի որ-
«դարեւ նոյն ինքն է, որ զքեզ սրբեաց հրաւիրէ փոխանոր-
«դել իւր, որում եթէ ոչ անսայցես, ոչ իսրուք տանես, և
«առաջի նորա ձեռն մեր 'ի քո դրդայանս մնայ. և դու կաս
«և մնաս մեզ՝ և որոց Էջմիածնի՝ և ամենայն բաւութեան և
«վաստութեան մերոյ պարտական»։

Այս թուղթ էր բաղձանքին, զոր եւեր Դաւիթ առ Դանիէլ, և բաց յայսմանէ էին և այլ թուղթք բաղձանքիքք գըրեալք 'ի քաղաքաց քաղաքաց՝ և յառաջնորդաց՝ առ Դանիէլ պատրիարք, զի յանձն առցէ զիշխանութիւն կաթողիկոսութեան այդիս։

Զայս ամենայն եա ընթեռնուլ Դանիէլ 'ի յուր ամենեցուն, և զինի ընթերցման՝ եհարց զամենեսին անկուս, եթէ որդ՞ի իմ սիրելիք, այսուքիկ ամենեքին ընտրեալ զնա առաւութեան իմ կաթողիկոսութեան, ինդրեն զիս, որպէս լուայք յայսցանէ գրոց. դուք զի՞ կամիք, համեղայք սրբեւք ընդ ընտրութիւն այս, եթէ ոչ։

Պատասխանի ետուն և ամենեքին՝ որք ժողովեալ էին, և ասեն, զոր նորա ընկալան, ընկալաք և մեք, և ամենեցուն ընդունելի է։

Յայնժամ եկեալ Դանիէլ 'ի բեմն եկեղեցւոյն, եդ զաթուիւր, և սրբոյ առանձնութեան մեծ նկատելով զընտրութիւն իւր, և 'ի միջնորդութեան իւրում ասէ. եթէ առանիկ երթամ ես 'ի կաթողիկոսութիւն սուրբ Էջմիածնի, բաց կոչեցից և ընտրեցից ամենայն միաբանից սուրբ ուխտին, բայց մի պատմեսջիք դուք, եւ ինքնին հրամայիմ 'ի պատրիարքութենէս, թէպէտ հեռանամ 'ի ձէնջ մարմնով, այլ հոգւով մերձ եմ. և միշտ օրհնութեամբ կենդանի իմով անուանեմ զձեզ. բայց որովհետեւ պարտ է ձեզ ունել զմի ոք 'ի պատրիարքութեան աթոռս, աչա ընտրեմ ձեզ փոխանորդ իմ զԴաւիթ եպիսկոպոս միաբան սուրբ Էջմիածնի, որ արժանաւոր իսկ է ձեզ լինել պատրիարք։

Եւ զայս ասացեալ՝ կոչեաց զԴաւիթ առ իւր, և հանեալ զմատանին 'ի ձեռաց իւրոց, եդ 'ի մատն նորա, և եա զգաւազան իւր 'ի ձեռս նորա, և օրհնեաց զնա՝ ասէ.

«Գտի զԴաւիթ ծառայ իմ այր ըստ սրտի իմոյ, և իւ- ղով սրբով օծի զնա, ձեռն իմ ընկալցի, և բազուկ իմ զօրա- ցուսցէ զնա» ևայլն։

Եւ տեսեալ զօրհնութիւն ժողովրդեանն՝ էջ յաթոռոյ իւրմէ։

Յետ լռելոյ նորա և Դաւիթ արար առենաբանութիւն ժո- ղովրդեանն՝ ներբողելով զվարս և զընտրութիւն Դանիէլի, և յետ առենաբանութեանն իւրում դարձուցեալ զերեսս իւր 'ի խորանն սուրբ, ընթերցաւ մի ոմն 'ի վարդապետաց դպրացն «Սուրբ ճգնաւորօք աղաչեսցուք զՏէր»։ և Դաւիթ գոչեաց 'ի ձայն բարձր, և ասէ զաղօթսն «Որ ընտրեցեր և ընկալար զերանելի և զերջանիկ հայրապետն մեր՝ զՏէր Դանիէլ կաթո- ղիկոսն...» և աւարտեալ զմաղթսն, գնացին իւրաքանչիւր ոք 'ի տեղիս իւրեանց, և Դանիէլ սկսաւ տեսանել զպաշտօնատա- րութիւն չուելոյ յԷջմիածին։

Իսկ Դաւիթ ուրախանայր մեծապէս և ցնծայր հոգի իւր, վասն զի կարծէր, թէ լցաւ փափագ սրտի իւր, որում զհետ եղեւ ամենայն ոգւով։

## ԳԼՈՒԽ Ե․

Յաղագս խռովութեան և երկպառակութեան ազգիս 'ի Կոստան- դնուպօլիս և պատրիարքութեան Յովհաննու։

(1800) Լուեալ զայսոսիկ Յովհաննէս եպիսկոպոս 'ի Գա- լատու, խռովեցաւ յանձն իւր, զի երկպառակութիւնն, որոյ ինքն եղեւ բարեյախն պատճառ, ոչ ինքեան եղեւ օգուտ, այլ Դաւթի։

Սկսաւ կոչեալ կրկին անդամ զԳալատանուիրակ առ ինքն, յորդորեաց զնա և ասէ. «Ո՞չ տեսանես մարդ ոք առանձին ժո- ղով, և ըստ հաճոյից իւրեանց կացուցանեն կաթողիկոս և պատրիարք, և զքեզ ոչինչ համարին, և ոչ ճանաչեն ոչ որ- պէս զնուիրակ Էջմիածնի, գէթ և ոչ իբրեւ զարեւելց մի, ահա յերեկեան աւուր ժողով արարեալ բազմութեամբ, զի

որ կացուցին կաթողիկոս և զայլ ոք պատրիարք, և ընդէ՞ր զքեզ ոչ կոչեցին, և ոչ հարցին ինչ, եթէ արժանաւո՞ր իցեն, և եթէ ոչ։

«Ընդէ՞ր լուեալ կաս մարդ, խօսեաց և մի երկնչիր, զի ես ընդ քեզ եմ 'ի փրկել զքեզ յամենայն վտանգէ, և ոչ ոք կարէ խորհել զքեն չար ինչ։

«Մանաւանդ զի և բազումք յիշխանաց Հայոց եկեալ առ իս հարցին ինձ, եթէ ընդէ՞ր և Գաղուստ Նուիրակ ոչ հրաւիրեցաւ 'ի կոչումն ժողովոյն, զոր մեք համարիմք այր սուրբ և մաքուր, և խոհական, և արժանաւոր կաթողիկոսութեան, որոց ես զոչինչ կարացի տալ պատասխանի։

«Արդ զգոյշ լեր ով մարդ, և երկիր յԱստուծոյ. զի ժամ է քեզ խօսելոյ. մի լռեր, զի լռութիւն այսպիսեաց պատիժ բերէ առ յԱստուծոյ»։

Զայսոսիկ լուեալ Գաղուստ, այլայլեցան դէմք նորա, և փոխեցաւ հոգի նորա 'ի դառնութիւն, և եղեալ անոյ յաւուր շաբաթու եկն 'ի խուցմաստ։

Եւ յաւուր կիւրակէի ընդ առաւօտն գնացեալ յեկեղեցի, կանգնեցաւ 'ի տեղի իւր, և սկսաւ զժամերգութիւնն, որհնեալ տէր մեր, և տէր զի բազում, եւայլն.

Եւ մինչդեռ երգէին՝ առաւօտ լուսոյ, եկն Գաւիթ պատրիարքական շքով յեկեղեցին, և որոշեալ անդ էր առկային գահիկէլ, և կանգնեալ էր յաթոռ պատրիարքութեան, եկն Գաւիթ կանգնել յարտաքին եկեղեցւոյն, ուր կանգնեալ էր Գաղուստ Նուիրակ յաթոռ իւր. և նոյն ժամայն ազատաւորք Գաւթին բուռն հարին զհանդերձից Գաղուստ Նուիրակին, և հանեալ զաղարտակ ընդ ծնօտ նորա, իջուցին զնա յաթոռոյ իւրմէ, և զԳաւիթ բազմեցուցին յաթոռ նորա, և Գաղուստ գնացեալ կանգնեցաւ 'ի մէջ ժողովրդեան 'ի ներքոյ ամպիոնին, և երկու վարդապետաք իւր ընդ նմա։

Բայց այս ոչ եղեւ բարւոք, զի ժողովուրդն՝ որ հաւաքեալ էր դայլն յեկեղեցին, 'ի տեսանելն այսպէս զԳաղուստ Նուիրակ 'ի մէջ ժողովրդեան, մրմնջէին 'ի վերայ նորա. և եղեւ շշնջիւն մեծ 'ի ժողովրդեան, բայց Գաղուստ մեկնեալ անտի գնաց 'ի տուն Էջմիածնի։

Իսկ ժողովուրդն, որ ոչ կարացին տանել այնմ՝ ամբոխ մեծ գումարեալ գնացին 'ի սուրբ Էջմիածնին, և բարձեալ անտի զԳալուստ մեծ փառօք, ածին յեկեղեցին, և խուռն ընթացեալ 'ի ներքս, փակեցին անտի զԳալուստ՝ ասելով. « Եթէ դու՝ որ պատրիարք եղեր, դնա 'ի ներքս յեկեղեցին, և կաց 'ի տեղի քո, զի այս տեղի նախկին է, և ոչ պատրիարքի. և գանձել որ եղեւ կաթողիկոս, զի՞ դեգերի ընդունայն 'ի քաղաքիս. գնասցէ յԷջմիածին »: Եւ զայս ասացեալ նոցին զԳալուստ յաթոռ Խրիմ, և զԳալուստ յաթոռ պատրիարքութեան, և գանձել խոյս ետ 'ի պատրիարքարանն:

Եւ իբրեւ ժամ եղեւ քարոզի, ընթացեալ դարձեալ ժողովրդեանն՝ առաքեցին զԳալուստ, զի արասցէ տանճնապանութիւն:

Եւ նա առեալ զգաւազան 'ի ձեռին իւր, և կանգնեալ 'ի մէջ դրանն, արար տանճնապանութիւն. և սկսաւ գանգատիլ զԳալստէ. « Եթէ Հայրն զիս ապատանորդոյս, դանեցին և փակեցին 'ի տեղւոջէ իմմէ, զի՞նչ չար գործեցի ես նոցա, զի զայսպիսի հատուցին ինձ. ո՞չ ապաքէն և ես մի եմ 'ի միաբանութենէ Էջմիածնի, այր անուանեալ զաւուրք, և կեցեալ յայն զնեղութիւն փառն առ քո ուխտին. մինչ զհեռաւորեալ գանապարանն »: և այլն:

Եւ այսպիսեաց առաւել ևս խռովեաց զժողովուրդն, այնչափ մինչ զի յառաջիկ քաղաքին՝ բուռն հարին ժողովուրդք զնմանէ, և առեալ եղին յաթոռ պատրիարքին, և զԳալուստ փախուցին 'ի պատրիարքարանէն, և այս էր 'ի ժամ՝ պատարագին:

Իսկ իբրեւ եհաս պատարագիչն յայն տեղին, ուր ասէ, « Եւս առաւել զեպիսկոպոսութեան մեր »: գոչեցին ժողովուրդք, եթէ յիշէս զԳալուստ պատրիարք մեզ, և նոտան նմա յիշել:

Եւ ընդ առաւօտ եկեղեցւոյն, ժողովուրդք բազումք՝ ընդ որս էին և բազմութիւնք եկեղեցւոյ սրբոյ Աստուածածնին, առեալ զԳալուստ մեծաւ շքով տարան 'ի սուրբ Էջմիածնին, և կամէին զի առեալ 'ի դուռն արքունի բառ կամաց իւրեանց կացուցեն զԳալուստ պատրիարք կոստանդնուպօլսոյ:

Իսկ մեծամեծք Հայոց իբրեւ տեսին, զի ոչ մեկնին յեկեղեցւոյն, այլ հետաղհեալ ոմանք բռնիւք և ոմանք կաշառօք ժողովին յեկեղեցւոջն, ծանուցին 'ի դուռն արքունի, և զօրավարն մեծ Եէնիչէրի աղասին եկեալ բազմութեամբ զօրաց, եմուտ յեկեղեցին, և զորս միանգամ գտին անդ, հարին չարաչար, և գանեցին, և զգլխաւորս նոցա ձերբակալեալ տարան 'ի բանտ, և մնացեալք խոյս ետուն ամենեքին հարուածեալք յոյժ.

Եկին յայնժամ իշխանք և վարդապետք յեկեղեցին, և ծանուցեալ Եէնիչէրի աղասին զապստամբութիւն հասարակութեան Հայոց ընդդէմ պատրիարքին՝ ցուցին զգլխաւոր պատճառ այսմ խռովութեան զԳալուստ նուիրակ, և հրամանաւ նորուն հանեալ 'ի տանէն զԳալուստ, յանձնեցին զօրաց տանել 'ի դուռն արքունի.

Անդ էր և վարդապետ մի Աստուածատուր անուն, որ գանեալ զԳալուստ նուիրակ, եհար զգլուխ նորա բռամբ յոյժ, և հանեալ զվեղարն 'ի գլխոյ նորա, մատոյց 'ի ձեռս զօրաց յաւելն, եթէ առէք զգլուխ և զպատճառ ապստամբութեան, և այնպէս չարաչար հարուածովք տարեալ 'ի դուռն Եպարգոսին հարին զոտս նորա 'ի կոճեղս և եդին 'ի բանտի, և զգլխաւոր անձինս ըմբռնեալ՝ տարան և ձգեալ 'ի բանտ, և արկին 'ի կոճեղս.

Առեալ զլուր այսոցիկ Յովհաննէս եպիսկոպոս 'ի Պալատու, ապախտացու յանձն իւր, և որովհետև որսացեալ ունէր զբազումս 'ի մեծամեծաց Հայոց 'ի կողմն իւր, 'ի ձեռն նոցին ծանուցեալ արքունի դրան, յետ չորից աւուրց կոչեալ զՅովհաննէս եպիսկոպոս 'ի դուռն Եպարգոսին, և տուեալ նմա զիշխանութիւն պատրիարքութեան, առաքեցին մեծաւ շքով 'ի պատրիարքարանն, յամի տեառն 1800 մայիս 19.

# ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս աքսորանացն Դանիէլի և Դաւութ Նուրիճանին, և ընտրութեանն Յովսեփայ ՚ի կաթողիկոսութիւն Էջմիածնի և վախճանի նորա.

---

(1800) Յետ նստելոյ Յովհաննու յաթոռ պատրիարքութեան, եկն հրաման յարքունուստ դառնալ զպատճառս խռովութեանս այսմիկ, և Յովհաննէս պատրիարք՝ որոյ ձեռնտու դժկամակ էր առ Դանիէլ վասն կացուցանելոյ նորա պատրիարք զԴաւութ, և առ ոչինչ համարելոյ զինքն, գրեաց ՚ի դուռն արքունի, եթէ պատճառ այսմ՝ ամենայնի եղև Դանիէլ, որ առանց հրամանի և գիտութեան բարձր և հզօր թագաւորութեան ձեռամբ հրաժարեալ ինքն ՚ի պատրիարքութենէ, ընտրեաց զԴաւութ ՚ի պատրիարքութիւն, և Դաւութ վարդապետ զոր ըմբռնեալ տարեալ ՚ի բանտ, ընդդէմ եկաց գործոց նորա, ուստի և ժողովուրդք յերկուս պառակտեալ, ոմանք ՚ի կողմն Դանիէլի, և այլք ՚ի կողմն Դաւութ վարդապետին, յարեան յոյժ և արարին զայս խռովութիւն.

Արդ այս պատճառանաւ ծանուցեալ ՚ի լսելիս արքային, եղև հրաման աքսորել զԴանիէլ ՚ի Տենեդոս կղզի, և զԴաւութ ՚ի Կիպրոս, և զգլխաւոր անձինս աշխարհականաց՝ որք ՚ի բանտի էին, առաքեցին ՚ի ծառայութիւն թիոյ, և այսպէս հանդարտեցաւ ամբոխ ժողովրդեանն.

Յետ այսր ամենայնի կոչեալ Յովհաննէս պատրիարք զՅովսէփ, խօսեցաւ ընդ նմա, և նա առ երկիւղի արդարացոյց զգործս նորա, եթէ օրէն էր այսպէս առնել, և բազմադիմի բանիւք յանկոյց զսիրտ Յովհաննու ՚ի կամս իւր, և հաճոյ եցոյց նմա զինքն այնչափ, մինչ զի և Յովհաննէս պատրիարք խօսեցեալ ընդ իշխանաւորս Հայոց, որք էին բարեկամք իւր, հաճեցոյց զնոսին յօժարել զՅովսէփ ՚ի կաթողիկոսութիւն Էջմիածնի, և հաւանութեամբ նոցին առաքեցին զՅովսէփ յԷջմիածին, զի դնուցեալ անդ գտցէ զեղանակ և զճանապարհ

խնճ՝ յինքն ընկրկել զկաթողիկոսութիւն, քաջալերս առնել նմա, եթէ որով և իցէ եղանակաւ մարթասցի լինել կաթողիկոս, ընկալցին զնա Կոստանդնուպօլսեցիք.

Գնաց Դաւիթ յէջմիածին, և իբրև պատմեաց զամենայն եղելութիւնս և զանցս Կոստանդնուպօլսի, և զաքարտանս Դանիէլի, վշտացան միաբանք ամենեքին, և 'ի խոր խոցեցան յայժ, և ժողով արարեալ ետուն ամենայն կամօք հաւանութիւն լինելոյ կաթողիկոս Յովսէփայ արքեպիսկոպոսին Ռուսաստանու, մինչ զի և Կոստանդնուպօլսեցիք ընկալցին զնա կաթողիկոս, և տացեն զհաւանութիւն մահճապարական գրութեամբ իւրեանց.

(1800) Իբրև իմացեալ եղև Յովսէփ այսմ, 'ի ձեռն տէրութեան Ռուսաց հայթհայթեաց հրաման առաքել առ Կոստանդնուպօլսեցիս, զի ընկալցին զՅովսէփ 'ի կաթողիկոսութիւն. և դեսպանն Ռուսաց՝ որ նստէր 'ի Կոստանդնուպօլիս, ծանոյց արքունի գրան զնոյն և զհաւանութիւն Ռուսաց տէրութեան, ասելով, եթէ կաթողիկոսն Հայոց՝ որ նստի յէջմիածին ընդ իշխանութեամբ Պարսից, վախճանեալ է, և տէրութիւնս մեր 'ի խնդրոյ Հայազգեաց՝ որք են 'ի բաժնի մերում, ընտրեալ է նոցա կաթողիկոս զՅովսէփ արքեպիսկոպոսն նոցա. արդ՝ հրամայեսջիք և դուք ամենայն Հայոց՝ որք գտանին ընդ իշխանութեամբ ձերով, զի և նոքա ընկալցին զնա կաթողիկոս իւրեանց մահճապարական գրութեամբ իւրեանց.

Այս հրաման և խնդիր թէպէտ ծանր եղև առաջի Օսմանեան տէրութեան, և գաղտնի հրաման առաքէր 'ի պատրիարքարանն, զի մի ընկալցին զՅովսէփ կաթողիկոս լինել իւրեանց, բայց այսու ամենայնիւ կոչեալ զիշխանաւորս Հայոց 'ի դուռն Եպարդոսին 'ի ներկայութեան դեսպանին Ռուսաց, հրամայէր Եպարդոսն յասելն, «Եթէ կաթողիկոսն ձեր վախճանեալ է, և բարձր տէրութիւն Ռուսաց ըստ խնդրոյ ազգի ձերում ընտրեալ է ձեզ կաթողիկոս զՅովսէփ վարդապետ, արդ հրամայեմք և մեք զի ընտրեալն 'ի նմանէ՝ ընտրեալ է և 'ի մէնջ, և դուք պարտիք հնազանդիլ, և ընդունիլ զնա ձեզ կաթողիկոս».

Պատասխանի ետուն իշխանաւորքն Հայոց և ասեն. «Մե

այդպէս տէր մեր, ազգ մեր ոչ ընդունի զնա երբէք, և ոչ մեք ―։

Ցասուցեալ որպէս թէ ընդ այս խորհրդոյն՝ հրամայէ տա-երեաս իշխեցանել զնոսա 'ի բանտ, զի ակամայ կամօք յանձն առցեն հաւանութիւն տալ. և այնպէս կեղծաւորէր Օմման-խան դուռն առաջի դեսպանին Ռուսաց, զի յայտնի հրամա-յէր և պատրաստ ընդունել, և գաղտնի հրամայէր և յորդո-րէր չընդունել երբէք, և վասն այսր յերկարէր և յապաղէր կաթողիկոսութիւնն Յովհաննու մինչև ցամ մի։

Իսկ Դանիէլեանք անձանքն աղաչանօք և յորդորանօք հաճեցուցեալ զմիտս Յովհաննու պատրիարքին՝ յետ չորից ամ-սոց ազատանայն հանին զհրաման ազատութեան Դանիէլի, տալով նմա և զառաջնորդութիւն Եւդոկիոյ քաղաքի, և զդա-լուստ նախիջ տառաքեցին յառաջնորդութիւն Ակնայ քա-ղաքի։

Յայնժամ միջոցի և Յովսէփ եպիսկոպոս մինչդեռ հանդեր-ձեցաւ հրամանաւ տէրութեանն Ռուսաց գնալ յէջմիածին, և անդ օծանել կաթողիկոս, եկեալ 'ի Տփխիս քաղաք, հի-ւանդացաւ, և փոխեալ մահու հանգեաւ նմա, թաղեցաւ անդ 'ի Տփխիս յամի տեառն 1801 'ի մարտի։

## ԳԼՈՒԽ Է.

Յաղագս երկիցս անգամ ընտրութեանն Դանիէլի, եւ քննախոյզն Դաւթի 'ի կաթողիկոսութիւն, եւ գործոց նորին։

(1801) ՅՈՐԺԱՄ լուր մահուան նորա խոյլի եղեւ յականջս միաբանութեանն Էջմիածնի, ըստ առաջնոյ ընտրութեանն ընտրեցին դարձեալ զԴանիէլ եպիսկոպոս, և հրաւիրակս ա-ռաքեցին առ նա յԵւդոկիա, փութանակի ժամանել յէջմի-ածին, գրելով առ նա զբաղձանկին մահուար ընդունելու-

թեան, յորում էր և կնիք Դաւթի եպիսկոպոսին. ուր և բղ-
մանց Յովսեփայ առաջադրեալ էին այսպէս, եթէ.

«Եւ քանզի Յովսէփ արհի եպիսկոպոսն եկեալ 'ի Տփխիս
«քաղաք, վախճանեցաւ անդ, հաստատեմք, եթէ 'ի բարե-
«րար կամացն Աստուծոյ եղեւ, որ ինչ եղեւ, վասն որոյ 'նո-
«րոդ ժողով արարեալ հանդերձ քահանայիւք, իշխանօք, և
«ժողովրդովք երկրիս, ըստ աստուածային ազդեցութեան
«և ըստ առաջնոյ ընտրութեան մեր՝ վերստին զանձնապատ-
«ուական Հայրդ մեր ընտրեցաք լինել գահակալ սուրբ աթո-
«ռոյս, և կաթողիկոս և տէր հոգեւոր Հայաստանեայց որդւոց
«եկեղեցւոյ, և բնաւից պաշտօնէից ... առաքէն միաբանու-
«թեամբ վաւթացուցեալս զշնորհաւորեր գալուստդ. զի ահա
«տէր է՝ որ յաջողէ և կոչէ զօրութիւնդ գալ պսակիլ ընդ-
«անարատ հարսին լուսոյ, առ 'ի կատարել զխնդրուածս ծա-
«ռայից իւրոց, զոր հաստատուն հաւատով խնդրէաք 'ի վա-
«ղուց հետէ, և անկրկին յուսով սպասէաք ընդունել. վասն
«որոյ պարտ է և սրբութեանդ հնազանդել սուրբ կոչողին
«գալով 'ի յայս գերագոյն պատիւ քահանայապետութեան, և
«լնուլ ձայնի աղաչանաց մերոց», և այլն.

Բայց յայտնէ գրեալ և Դաւիթ յառաջ ձեռագրով իւ-
րով զայլ ևս գիր հրաւիրանաց առ Դանիէլ յԵւդոկիա, ուր
գրէ այսպէս.

«Եթէ ես զքեզ առաքելոյն 'ի մեզ բերեմ՝ եթէ ոչ ըստ
«այնմ՝ ինչ է, որ կամիցի կամ ընթանայցէ ... արդ՝ թէպէտ
«բազում կամեցան և ընթացան, այլ Աստուած է, որ յաջո-
«ղէ զամենեսեան ... և ո՞վ է, որ Աստուծոյ կամացն կայցէ
«հակառակ ... որովհետև և այս այսպէս է. հրաշագործո-
«ղին Աստուծոյ զխաւս և զգուշութիւնս վերառաքեմք, և
«քեզ ո՞վ Դանիէլ այր սուրբ և արդարն 'ի յԱստուծոյ ընտ-
«րելոյդ և կոչեցելոյդ գալիս լինիմ, զի դու ես արժանաւոր
«լինել այժմէս սուրբ աթոռոյ Հայոց», և այլն.

Զայս ամենայն ընթերցեալ Դանիէլ, և հաւանութիւն տա-
լով ևս 'ի Կոստանդնուպօլսեցւոց, եւ և պատրաստեցաւ գը-
նալ յԷջմիածին. իսկ Դաւիթ յայնմ միջոցի ցանկալով յինքն
ընկալել զկաթողիկոսութիւն Էջմիածնի, գնացեալ 'ի Տփխիս

անկաւ առ Դաւիթ խանն վրաց՝ որդի Կէօրկի խանին, և մե֊ծամեծ պարգևս խոստացաւ նմա, զի հաճեսցուցէ զմիա֊բանսն Էջմիածնի 'ի կաթողիկոսութիւն իւր, որոշեալ ամէ և պատրիարքն Կոստանդնուպօլսի և մեծամեծք Հայոց, որք անդ էին, ընտրեցին ամէ զնա, բայց սոքա ոչ կամին, և ոչ ընդունին երբէք։

Լուեալ զայսոսիկ Դաւիթ խանին, գրեաց գիր առ միա֊բանսն Էջմիածնի, զի ընտրեսցեն 'ի շնորհս իւր զԴաւիթ կա֊թողիկոս։

Իսկ նոքա ոչ երբէք ընդունելով զխնդիր նորա, գրեցին առ նա պատասխանի, "Եթէ 'ի կողմանէ սիրելւոյն մերոյ Դա֊ւիթ արհի եպիսկոպոսին՝ զոր հրամայեալ էիք ընտրել և կա֊ցուցանել մեզ կաթողիկոս, բարի էր թէպէտ հրամանն ձեր, բայց մեք՝ որ միաբանաւ խնդրեցաք զԴանիէլ սրբազան արհին գալ 'ի կաթողիկոսութիւն մեզ, դաշնադիր եւս եղաք 'ի մէջ աստուածաբնակ տաճարիս՝ երդուեալ 'ի կենդանի սուրբ խաչն Քրիստոսի, և 'ի նորին կողմանն սուրբ գեղարդն, և 'ի նշանագործ աջ սուրբ Լուսաւորչին մերոյ, զի բաց 'ի Դա֊նիէլ սրբազան արհւոյն զայլ ոք ոչ ընդունիցիմք 'ի գահակա֊լութիւն սրբոյ աթոռոյս, և նովաւ եւս եդաք... զի եթէ ոք 'ի մէջ ինքնիշխան բռնութեամբ ձեռնադրեսցի կաթողիկոս, անիծեալ լիցի ինքն և ձեռնադրողքն իւր։ Արդ այսպիսի հաստատութեամբ երդուեալ եմք, և սաստիկ նզովիւք փակ֊եալ եմք, և չեմք կարող երդմնազանց լինել, թէ և մահ եւս հանդիպեսցի"։

Իբրեւ ետես Դաւիթ, եթէ ոչ յաջողեցան ջանք իւր այս֊պէս, փութացաւ գնալ յԵրեւան, և անդ յանդիման եղեալ խանին Պարսից, պատմեաց նմա զընտրութիւն իւր 'ի Կոս֊տանդնուպօլիս 'ի կաթողիկոսութիւն Էջմիածնի, և զարհա֊մարհութիւն և զչընդունելութիւն միաբանիցն, և խոստացաւ նմա բազում ինչ, զի 'ի լրումն հանցէ զխափան սրտի իւրոյ։

Եւ նա առաքեաց 'ի կողմանէ իւրմէ զերիս այր Պարսիկս, և գրեաց առ միաբանսն ընդունել զԴաւիթ կաթողիկոս, այլ նոքա ոչ երբէք խոտորեալ 'ի բանից իւրեանց իբրեւ զառա֊ջինն՝ գրեցին առ նա պատասխանի, յորում գրեալն էին.

«Եթէ մի բռնադատեսցես զմեզ տէր մեր՝ առնել զայլ ոք կաթողիկոս, զի ահա մեք երդուեալ եմք 'ի սուրբ տաճարս և 'ի սուրբ գեղարդն, և անխիթիւք հանդերձ փակեալ եմք, զի մինչև 'ի գալ այսր Դանիէլի վարդապետին՝ ով ոք ինքնակամ լիցի կաթողիկոս, ամենեքին անընդունակ լինելոց է»:

Զայս լուեալ Դաւիթ 'ի խանէն, և անճարացեալ յայնմ հետէ առնել ինչ, յաւել այլ ևս զխոստմունս իւր, տալ նմա զբազմութիւն ոսկւոյ և արծաթոյ, զի բռնութեամբ արասցէ օծանել զինքն կաթողիկոս:

Եւ նորա լուեալ զայս, առաքեաց զԴաւիթ բազմութեամբ զօրաց Պարսից յԷջմիածին, զի հրամանաւ իւրով օծցեն զԴաւիթ կաթողիկոս և ընկալցին, և որ ոք անհնազանդ գտցի հրամանաց նորուն, զանեսցեն զնա ուժգին, և առաքեսցեն առ ինքն:

Եկեալ նոցա յայնժամ և մտեալ յԷջմիածին, ցուցին զհրաման խանին, և ծանուցին նոցա, եթէ ոք ոչ հպատակ կացցէ հրամանին, չարաչար ունի սպանանել:

Եւ նոցա լուեալ զայս, և յուսահատեալ ոչ գիտէին, թէ զինչ արասցեն:

Եւ 'ի թելադրութենէ Դաւթին՝ բռնութեամբ ժողովեալ զօրաց Պարսից զեպիսկոպոսունս Էջմիածնին, և ինքեանք որբոմք և բրոմք 'ի վերայ նոցա կացեալ՝ եսուն օծանել զԴաւիթ կաթողիկոս, և նստուցանել զնա 'ի գահ կաթողիկոսութեան յամի տեառն 1801 յապրիլ 28:

(1801) Յայնմ ժամանակի և Դանիէլ՝ որ եկեալ յԽուդակից՝ կամէր գնալ յԷջմիածին, և չև ևս հասեալ 'ի Պայազիտ, ընկալաւ գիր 'ի միաբանից սրբոյ Էջմիածնի, ուր լալագին ողբովք պատմէին զբռնութիւն Դաւթի, և զանհնարին աղէտս և զտառապանս իւրեանց. զոր ընթերցեալ Դանիէլ, ասաց, փառք ձեզ ամենակալ Աստուած, որ հայեցեալ յանարժանութիւն ծառայի քո՝ խնայեցեր և յետս ընկեցեր զիս, և զայս տեսեալ սկսաւ մխիթարել զորս ընդ իւր էին զամենեսին:

Եւ գնացեալ 'ի Պայազիտ՝ խաղաղեցաւ 'ի լուսաւորչաշէն վանսն՝ կոչեցեալ Խաչ քիլիսա:

Իսկ Դաւիթ իբրև օծաւ կաթողիկոս, սկսաւ նոյն հետայն

բռնանալ 'ի վերայ միաբանիցն, և խոստացեալ ընդ Երևանու խանին՝ պահել զզօրս նորա առ ինք, և զմի մի յեպիսկոպոսաց անուն ինչ պատճառանօք առաքէր առ նա, որք գնացեալ անդ դանէին, և տուժէին զբազում ոսկիս, և դառնային չարաչար հարուածովք յէջմիածին։

Եւ այնչափ 'ի նեղ էարկ զեպիսկոպոսունս անհանդուրժելի չարչարանօք և դառնական անդթութեամբ, մինչ ոչ կարացեալ տանել բոլոր միաբանութեան սուրբ ուխտին, սկսան բողոքել ազգայնոց գրովք առ ամենայն տեղիս, ուր գտանէին Հայազգիք։

Գրեցին 'ի Կոստանդնուպօլիս և զմահար բողոքանաց՝ պատմելով զանարժան գործս Դաւթի, և խնդրելով 'ի նոցանէ զօգնութիւն և զկարեկցութիւն, որ յետ այլոց բանից գրեալ էր այսպէս.

«Թէ յօրէ յայնմանէ՝ յորում բռնաւորեաց բարբարոսս «այս, չմնաց չարիս՝ յորս ոչ եղեւ ձեռնամուխ։

«Ի սկզբն բռնաւորելոյն իւրոյ առ սոյն եհար և արհա«մարհեաց զԱստուածայինն և զեկեղեցական օրէնս։ Էարկ «զինքն ընդ նզովիւք, և ջանաց զազգն եւս ընդ ինքեան «արկանել… գործով և ամենայն ապերախտութեամբ իւրով «գերազանցեաց քան զայլազգիս, որք կաշառակուր եղեալ «ընտրեցին զսա։

«Քանզի բարբարոս այս՝ չար քան զԴեկիոս անաստուած՝ «և եղբայրասպան ուրացող՝ ամենեւին ուրացեալ զաւան«դութիւն և զհայրս հայրենի, և զկանոնս սրբազան հայրա«պետացն, ցանկանալով յափշտակութեան յուսացու յանի«րաւութիւն։ Եւ զբռնաւորս բազում քաղաքաց յաղեցու«ցանելով կաշառօք, կատարեաց զչար կամս անձին իւրոյ, և «ընծայեցուցեալ զանձն իւր բռնութեամբ՝ յափշտակեաց զայս «աթոռ, որում չէր արժանի։

«Աստուածագումար սուրբ միաբանութեան և բոլոր Աստ«ուածայնոց արանցն ցրուելով զխորհուրդս՝ եղեւ արժան«ակի գայթակղութ. և առ 'ի պատրուակել զիւրն չարութիւն՝ «բազում անգամ զմահուէրս բազում գրեալ ըստ կամս իւր 'ի «դիմաց միաբանից և երկրպագուաց 'ի Ջատագովութիւն ինքեան,

«ելից զնոսա ամենապատիկ ստութեանց, և բռնութեանց
«կնքել ես, և յղեաց ուր ունէր յղել, որք ամենեքեան են
«սուտ և սնոտիք....։

«Վասնէ զինչ հաստատեաց և զապրտուան միաբանից յամ-
«պէտս, զի ինքն միայն բարւոք տայեսցի. խանգարէ զազգն
«'ի բարեկարգութեանց, և զաթոռն 'ի պայծառութեանց, զի
«ինքն միայն պայծառասցի. Զաղտս կեանս միաբանից գրու-
«եալ 'ի գերութիւն, զի ազատապէս իշխեսցէ 'ի վերայ ամենից.

«Զկաշառատուութեան յանցանս դնէ 'ի վերայ յօժարու-
«թեանց ընտրելոյն մերոյ տեառն Դանիէլի սրբազանին, զի
«ինքն անյանցանք երեւեսցի, փառօքն և յանուն նորա զինք
«փորագրել տուեալ, գրէ զթէ մէջսև կը յանուն երեւման խա-
«նին և այլոց, և առաքէ աստ և անդ, զի գայթակղեցուսցէ
«զպարզամիտսն. Բայց եթէ կամք լինէր ընտրեալ հայրապե-
«տին մերոյ կաշառօք գալ և նստիլ յաթոռն, մեք հեշ-
«տեաւ բերէաք զնա, զի միաբանք ամենեքին հոգւով 'ի նա
«եմք կապակցեալ.

«Մինչ գողացեալ զսուրբ զեղարդն և զայլ սրբութիւնս
«և զայլ գանձս պատուականս, և բարձեալ սխտանք 'ի վե-
«րայ գրաստու՝ առաքեր 'ի փչելի տուն եղբօր իւրոյ. զոր
«ըմբռնեաց և դարձոյց կենդանի նահատակն Յովհաննէս արք-
«եպիսկոպոսն, 'ի վրէժխնդրութիւն բրդեալ բոլոր միաբա-
«նութեանց՝ կամէաք կործանել զնա յայնժամ.

«Բայց բազում երդմամբ և ազգի ազգի պատրանօք խար-
«եալ զմեզ առ ժամն, յետոյ բերել ես ծածկաբար զԳարսիկ
«գինուորս, և նոքօք բռնացաւ 'ի վերայ մեր մահու չափ
«սպառնացմամբ, որով և մեք յակամայ կամս տանջէաք զոր
«ինչ առնէր մինչեւ ցայնժամ, և ոչ խօսէաք ինչ առ եր-
«կիւղի.

«Բայց իբրեւ տեսաք, թէ անցանեն բան չափ բարբարո-
«սական գործք սորա, զմեզ յանձն առնել ընդդիմանալ
«ընդդիմացելոյն Աստուծոյ... քանզի 'ի մէջ առած չարաթու՝
«առ զՅովհաննէս սրբազան արքեպիսկոպոսն Ակնեցի զեղար-
«դանիլ՝ առաքեաց յերեւան առ գործոյ իւրք, և նա տես-
«եալ զգործս իւր և զանալ ժամ զփախուչ խոյս տուեալ էր

«անուն 'ի Թիֆլիզ՝ հող տանիլ ազատութեան սրբոյ տանս և
«միաբանութեանս մերոյ . . . և յաւուր մեռելոցն Զատկին գի_
«տացեալ սա , ըստ իւրն անբարի բնաւորութեան կատաղե_
«ցաւ գազանաբար , և կոչեալ էարկ 'ի բանտ խաւարային ըզ
«Ղազար եպիսկոպոսն ծերունի խոստովանահայր Դուկասու
«հոգեւոյս մեհին , (որոյ սրբութեան համբաւն իցէ թէ հաս_
«եալ իցէ յունկն ձեր) .

«Եւ զնորընծայ տէր Կարապետ աբեղայ մի՝ որ զգրաւա_
«սունս պահէր յեկեղեցւոջ , եդ յայլում բանտի առեալ զփի_
«լոնն և զվեղարն .

«Եւ զայլ ևս վարդապետ Յակոբ անուն , եդ յայլում
«բանտի , և զոտս՝ երկոսեան շղթայեաց , և պատրաստել ետ
«զփայտ , զի յայլ միաբանսն ևս ձեռնարկեսցէ , և 'ի գիշերի
«գանակոծ արասցէ զամենեսեան . նմին իրի միաբանքն ա_
«մենեքեան ապաւինեալ յԱստուած՝ դիմեցաք 'ի վեհարանն
«քարիւ և փայտիւ , և հանաք զեղբարսն մեր 'ի բանտից և
«'ի կապանաց , և այս բուռն բազմութեամբ գնացաք յեկե_
«ղեցին՝ եպիսկոպոսք , վարդապետք , աբեղայք , և սարկա_
«ւագունք՝ և բոլոր ուխտ եկեղեցւոյ , և քննութիւն արար_
«եալ գտաք զսա՝ ընդդէմ Աստուածային և եկեղեցական օ_
«րինաց՝ խանգարիչ բարեկարգութեան ազգին՝ և աւերիչ
«սրբոյ աթոռոյս .

«Վասն որոյ ուխտեցաք առաջի Քրիստոսաէջ սուրբ
«տեղւոյս , և 'ի հաստատութիւն բանիս գրեցաք գիր մի առ
«ինքն Դաւիթն , թէ վասն զանազան անկարգութեանց և
«բարբարոսական գործոց քոց ոչ ընդունիմք զքեզ , և մի_
«անգամայն ՚նզովեցաք զինքն և զհամախոհս նորա .

«Եւ 'ի միում՝ աւուր յերկուշաբթի Զատկին եպիսկոպո_
«սունք՝ վարդապետք՝ աբեղայք՝ սարկաւագունք և ման_
«կունք վարժարանին՝ և բոլոր միաբանք՝ քանզի փակեալ
«էր զդրունսն , քակեցաք զորմն հիւսիսոյ կողմանց՝ որ հայի
«'ի շուկայն , և իջեալ անդուստ խուռն բազմութեամբ դիմե_
«ցաք յԵրեւանն յապարանս խանին , և բողոքեցաք ամենեքեան,
«թէ կամ բարձ 'ի միջոյ մերմէ զԴաւիթն զայն , և բեր զօրի_
«նաւոր հայրապետն մեր , և կամ սպան զմեզ զամենեսին .

«Ա՛ռ որ և խանն զառաջինն ունէինք եղեալ, խոստա-
«ցաւ թէպէտ կատարել զխնդիր մեր, բայց յետոյ չընչա-
«հաւատ մելիքն 'ի ձեռն մեծապատւոյ կաշառաց՝ շրջեաց
«զմիտս նորա, որ ժխտեաց զխոստումն իւր, և դաժանաց-
«եալ 'ի վերայ միաբանութեանս, հրամայեաց դնել շղթայիւք
«'ի բանտի զԱստուածատուրն և զՇարպեղ, և զՍերգիս ե-
«պիսկոպոսունս, և պահանջեաց տուգանս 9000 դահեկան։

«Իսկ զայլ ծերս և զաղայս մնացեալս 'ի ձեռս ծառայից
«իւրոց, որք հիւսուրեալք և զինազարդեալք՝ ձգեցին ըզ-
«բազմութիւն քահանայակարգ միաբանիցն առաջի երիվա-
«րացն իւրեանց, և դանակով և հարկանելով գլխոց և բո-
«կոտն հանէին 'ի ճանապարհ, և ստիպէին ընթանալ փութով։

«Էր ժամանակ գիշերային՝ մութն՝ անձրևոտ և ցրտոտ,
«ուստի ոմանք 'ի ծերոց՝ որք յանկ ընթանային, ուժգին գա-
«նէին, զի արագ ընթասցեն, փախուցեալ ոմանք զօտս իւրեանց
«հարկանէին, ոմանք անկանէին 'ի խորխորատ, և ոմանք ոչ
«գտեալ զգդանելիս, բոկոտն ընթանային զերկարաձիգ ճա-
«նապարհն, որոց ոտք ծակոտեցան և վիրաւորեցան։

«Եւ այսպէս տուայտանօք՝ տառապանօք՝ ողորմելի կեր-
«պիւ հասուցին զմեզ 'ի սուրբ աթոռն, և փակեալ զիւրա-
«քանչիւրսն 'ի սենեակս իւրեանց՝ արարին զբնակարանս մեր
«մեզ՝ բանտք և արգելանոցք։

«Որ 'ի լուսանալ առաւօտուն ձայնէաք 'ի ներքուստ, թէ
«բացէք զդրունս մեր, զի գնասցեալ արտաքս փոքր կարեաց
«որովայնից մերոց՝ եկեսցուք, և ապա փակեցէք միւսանգամ,
«բայց ոչ ոք էր, որ ունկնդիր լինէր։

«Վասնորոյ 'նեղացեալ բազումք, ոմանք կատարեցին զսա-
«փորս ջրոյ, և յայնս հողայինն զզէտս որովայնից, ոմանք 'ի
«կոնքս, և այլք յայլ անօթս, զորպիսիս առեալ մեզ երագ
«հանապէաք. և մինչև ցարդ այսու կերպիւ եմք անցուցեալ
«զկեանս մեր, որ չիք ումեք առեալ զայսպիսի զանխիղճ
«բռնութիւն։

«Եւ ապա 'ի գլխոց միաբանից գիր գրել ետ առ խանն
«զայս օրինակ, եթէ ոք 'ի մէնջ փախիցէ և կամ ուրեք ըզ-
«գիր ինչ գրեսցէ, 'ի յըմբռնելն գերծցեն զմօրուս նորա, և

«քեզ հարիւր թուման առժեացի այսինքն 1250 դահեկան.

«Եւ եթէ ոք ընդդիմասցի կաթողիկոսին, նմա եւս զայն «պատիժ հատուցեն.

«Եւ հաներալ մի մի 'ի սենեկաց, բռնութեամբ կնքել ետ «իւրաքանչիւրոցն զթուղթն զայն, եւ արձակեաց զամենս.

«Բայց զքանի վարդապետսն հաներալ 'ի սենեկաց իւրեանց «արգել յայլ եւ այլ բանտս.

«ԶԱբրահամ վարդապետն Աժդարխանցի արկ 'ի բանտ «խաւարային.

«Զփիլիպպոս վարդապետն Եւդոկիացի յամբարին դարուց.

«Զցակոբ վարդապետն Պօլսեցի 'ի սենեակ մի Ղալաթա- «սարային.

«ԶՍտեփաննոս վարդապետն յայլում սենեկի նոյն Ղալա- «թասարային.

«Զկարապետ արեղայն նորընծայ՝ եա յայլում բանտի.

«Զփոքրաւորն Բարսղի արքեպիսկոպոսին զՄելքիսեթ վար- «դապետն եւ զեփրեմ տարկաւագն 'ի միասին յայլում բանտի.

«Եւ զՂազար արքեպիսկոպոսն խոստովանահայր յիւրում «սենեկի.

«Զայսոսիկ զամենեսեան եհան 'ի բանտէ, եւ նոցա եւս «կնքել ետ բռնութեամբ զատենական գիրն, եւ Ղազար ե- «պիսկոպոսն եւ Աբրահամ վարդապետն տակաւին են 'ի բանտի «եւ երկք եպիսկոպոսունք են յիշեալն.

«Եւ կնքել ետ զանձանց Աստուածատուր եւ Բարսեղ եւ «Յովհաննէս եւ Աւետիս եպիսկոպոսացն.

«Նաեւ սենեակք Աբրահամ վարդապետին եւ տիրացու «խդնատրոսին կան տակաւին այնպէս կնքեալք.

«Եւ բերել ետ 'ի խանէն զերկուեցի տաճիկս, զի յաւելցէ «զբռնութիւն իւր 'ի վերայ միաբանիցս, եւ մանաւանդ զի «լեզուն ամենայն ընդ սպասաւորաց իւրոց՝ զի մի կարասցեն «միաբանք խօսս տալ, եւ պահապանս եդ 'ի վերայ ամենայն «ճանապարհաց, զի մի ոք կարասցէ հանել արտաքս գիր, «կամ ազատիլ փախստեամբ.

«Արդ՝ եթէ կամիցիմք մի լուր միայն զամենայն բարբա- «րոսական գործսն նորա գրել, անպատմանաց թուղթ եւ մե-

« լան, ուստի այսու միայն համառօտեմք, զի եկաց յամենայն « ճանապարհ, որ ոչ է բարի, և 'ի չարէ երբէք ոչ ձանձրա֊ « ցաւ, և չունի ձանձրանալ 'ի բոլոր կեանս իւր։

« Այսուհետև գիտասցէք ձեր զայսոսիկ, կարեկից և ցաւա֊ « կից լերուք խղճալի միաբանութեանս, և զամենայն տառա֊ « պանս մեր՝ անձանց ձերոց համարեալ, ջանասջիք ազատել « զաթոռն, և զմեզ 'ի ձեռանէ բարբարոսս այսմիկ։

« Որով ընկալջիք զվարձս բարեաց յԱստուծոյ, և ժա֊ « ռանգեսջիք զաղօթս և զօրհնութիւնս սրբոյ Լուսաւորչին « մերոյ »։

## ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս գրութեան Ներսիսեայ արհի եպիսկոպոսի առաջնորդի Ռուսաստանու, և աքսորանացն Յովհաննու պատրիարքի, և պատրիարքութեան Գրիգորի, և վախճանի Թորոսի կաթողիկոսին Սսոյ, և յաջորդելոյ Կիրակոս եպիսկոպոսին։

(1802) Այս 30 օրինակ գրութիւնք բազմաց՝ գրեալք առ ամենայն կողմանս 'ի կարեկցութիւն և յօգն շարժեցին զԱզ֊ ազգս զամենեսին, բայց առաւել զմտադիւրս Ռուսաստանու, որոց էր յայնժամ առաջնորդ և վերատեսուչ՝ Ներսէս արհի եպիսկոպոս՝ յաջորդն Յովսեփայ։

Սա գրով առաւել պաշտպան և ջատագով Դանիէլի, և լուեալ զբռնութիւն Դաւթի և զայս ամենայն արարս նորին՝ և զխղճութիւն միաբանից, յարեաւ 'ի մրցմանդրութիւն նորին։ Եւ թէպէտ 'ի ձեռն տէրութեան Ռուսաց կամեցաւ վճարել՝ զոր եդեալն էր 'ի մտի իւրում, բայց խոհեմութեամբ ձեռն 'ի գործ արկեալ լաւ համարեցաւ յառաջագոյն զդիտաւորութիւն և զմիտս կոստանդնուպոլսեցւոց գիտել և փորձել, և ապա 'ի պայքար մտանել ընդ Դաւթի, ուստի և գրեալ զգիր իւր 'ի կոստանդնուպոլիս՝ խնդրելով զպատասխանի նորուն 'ի Յովհաննէս պատրիարքէ՝ զայս օրինակ։

«Վեհապատիւ յարգելի եղբօրդ իմոյ, տեառնդ Յովհաննէս սրբազան պատրիարքի մեծին Պոլսոյ, չքնաղաշուք և մեծահամբաւ բարեմիտ իշխանաց, ամիրայից, արդարափառակ էսնաֆից, և արիաջան արհեստաւորաց, և առ հասարակ օրհնեալ ժողովրդականաց մեծին Պոլսոյ, այս ինչ յԱստուածակերպ կոչմանէ յայտարարութիւն։

«Յայտնի է ինձ ձայն փրկչին՝ որ ասէ. վա՜յ այնմիկ, որ ասիցէ զլոյսն խաւար, և զխաւարն լոյս, զդառն քաղցր, և զքաղցր դառն։

«Զխո՞րդ ուրեմն ամենայն բարին զլոյս բանականութեան անօրինեաց 'ի մարդն, որ ոչ զգայ զբարին, և ոչ խորշի 'ի չարէն։

«Զի անբանք միայն երևակայութեամբ զգալով ընդորս ունին ընթանալ, ոչ թիւրեն զճանապարհ իւրեանց, քանզի 'ի մէնաշորթ գիշերի եւս ճանաչեն զեր շաւղաց իւրեանց, 'ի յստակէ և յանծանօթէ խորշին, և զայն՝ որոց զխոտն զոլ բարիս, թողլով զբնականն իւրեանց զգմնէութիւն, ընդ ամուք նոյնն թաւալին, որպէս առ այս գանգատէ տէր, բան Եսայեայ, թէ ծանեաւ եզն զստացիչ իւր, և էշ զմսուր տեառն իւրոյ, և Իսրայէլ զիս ոչ ծանեաւ, և ժողովուրդն իմ զիս 'ի միտ ոչ էառ։

«Զարթի՛ր Պոլիսդ, և տե՛ս, թէ զիա՞րդ 'ի թուլութենէ և 'ի զանցառութենէ ազգին մերոյ քաղաքացան հիմունք հաւատոյ մերոյ, դարձան օրէնք և կրօնք մեր 'ի տեսարանս թէատրօնից, և ճշմարտութեանն ճրագ լուսաւորչադաւան կրօնից մերոց՝ 'ի ներքոյ գրուանի թաղուցաւ, և բանականութիւն մարդկային սեռի աղաւաղեալ ոչ զգայ ընաւ ըղձաւ։ Արդեօք զի՞նչ է պատճառ այսց ամենից խանգարմանց, եթէ ոչ՝ բարձումն սիրոյ և համաձայնութեան։

«Զրկեցաք 'ի թագաւորութենէ մեր առաւելեալ մերազնեայք, և միաբանութիւն մեզ է հովուապետս, եթէ ունիմք բարձրագահ աթոռ 'ի Քրիստոսէ հիմնեցեալ, աթոռ Լուսաւորչին՝ որով պարծիմք 'ի մէջ ամենայն ազգաց, այժմ նոյն պարծանքն մեր եղև մեզ նախատինք 'ի մէջ ամենայն աշխարհի, միթէ՝ նոյն բանութեանցն զօրու-

«թիւնք բարձա՞ն, քան լիցի, այլ մեք միայն արարաք ըղ
«լուսատու տունն այն՝ տուն առաքելոց։

«Ասա՞ց կարդամ՝ 'ի վերայ անձինս ո՛վ Պոլիսդ լսեալ, զի
«որ երբեմն զճշմարտութենէն բուռն հարեալ, 'ի մի շունչ և
«'ի մի հոգի գտեալ՝ զգուշինս կայէր, գաւառական տուրք լու_
«սաւորչին՝ ընտրութեամբ բոլոր ազգին լինել. այժմ օտա_
«րածնին հնազանդի, որ պատուեաց զքեզ հարսինն անա_
«րատի։

«Ո՞ւր է տառապեալն Դանիէլ, ո՞չ ապաքէն 'ի Պոլիսդ էր,
«որ կալեալ զնա բարձրացոյց յաստիճան պատրիարքութեան,
«ո՞չ ապաքէն ընտրութիւն ընդհանուր ազգին էր, և խոր_
«հուրդ սինոդոսին արքեպիսկոպոսաց, և բոլոր միաբա_
«նիցն՝ 'ի պատրիարքութենէ հանել զնա, և հրաւիրել 'ի
«ծայրագոյն պատրիարքութիւն ամենայն Հայոց՝ յետ վախ_
«ճանի լուսահոգի հայրապետին Ղուկասու։

«Գիտէք թէ յայնժամ Յովսէփ արքեպիսկոպոսն յառա_
«ջանալով, իբրու օրինաւոր առաջնորդութիւնս առնէր, թէ
«ես եմ հնազոյն արքեպիսկոպոս, և մանաւանդ հաճոյ գրո_
«եալ յաչս բարեյիշատակ կայսերն Պօղոսի, որ կատարէր
«զաղերս նորա լինել հայրապետ Հայոց. և ողորմելին Դանի_
«էլ 'ի յաքսորս մատնեցաւ 'ի գուբն ախտուց։

«Բայց տեսէք զխոհականութիւն Յովսեփայն։

«Որ ոչ յառաջ մատեաւ՝ բան որում գիտէր վաղուրեմն
«զճշմարտական համաձայնութիւն ձեր, ապաւէր ձերդ շնոր_
«հաւորութեան, զորս տուեալ առս 'ի Մոսկով՝ ապա դիմ_
«եաց 'ի սուրբ Աթոռն։

«Տեսէք այժմ, որ արժանայ մի՝ փառնելով զկայս հան_
«դուցեալ Յովսեփին իբրու ընդհանրական գլուխ, խոտելի յա_
«ռաջացոյց. միթէ առաջին վէրք և սուրբապարտուց խայտա_
«ռակութիւնք ողբալի Դանիէլին չէ՞ր նմա բաւական, որ
«կրկին հրաւիրանօք բոլոր եպիսկոպոսաց և միաբանից՝ և
«ընտրութեամբ ընդհանուր ազգին՝ եկուք շարժիլ 'ի Յեւդո_
«կիոյ, հասուցանել մինչ ցՊոլիսդ, և անդէն նոր 'ի նորոյ
«զվէրս 'ի վերայ վիրաց դնելով՝ եկուք խայտառակել 'ի մէջ
«աշխարհի։

"Պահեալ կան առ իս ով Գօլանցիք զանազան ազդակք
„և բողոքք առ հասարակ արքեպիսկոպոսաց, որք միաձայն
„և միահաղի զգանգատանս գրեն 'ի չար արեգայէն, թէ ըղ
„հաւատս մեր ընդ ոտիւք էարկ, և կամի զԴաւիթն յառա-
„ջացուցանել, զի ինքն լիցի եպիսկոպոս, և զամենայն կայս
„սրբոյ աթոռոյն վաճառէ հաղարաւորս, և զմեզ ևս բռնու-
„թեամբ կալանաւորեալ, ոչ թողու երթալ 'ի Թիֆլիզէ. բայց
„մեք երդուեալ եմք 'ի վերայ սրբոյ գեղարդեանն՝ և մասանց
„սրբոց՝ բաց 'ի Դանիելէ զոչ ոք ճանաչել, որպէս և չորք ան-
„ձինք՝ երկու եպիսկոպոսք և երկու վարդապետք առա-
„քեալ եմք հրաւիրակք նմա, զի եկեսցէ.
"Բայց զայդ իսկ լսեմք, որ դուք ևս 'ի նախնական բա-
„րի դաշնաւորութենէ չեղեալ, հաւանութիւն մատուցա-
„նէք ապօրինաւորին այնմիկ՝ փէրման տալով նմա.
"Լուարո՛ւք, լուարո՛ւք, նա՞ իցէ փոխանորդն Քրիստոսի,
„որ զնիւթն իւր երեւելի եդեալ 'ի վերայ մահուարի ընդ այլ
„երեւելի արքեպիսկոպոսաց, հրաւիրեաց զԴանիէլն, և ա-
„պա 'ի ներքուստ 'ի չարաւոր փառացն գրդեալ, 'ի ձեռն
„անպատմելի կաշառուց գանձու և սաստիւ ահացուցանելով
„զեպիսկոպոսունս, զօծումն ընկալաւ զինուորօք.
"Բռնութեամբ բռնակալաց՝ ոչ թէ հոգի չնորհաց, այլ
„թէ հոգի գիւական հանդերձ 'ի վերայ նորա, որ յայնմ օ-
„րէ մինչեւ ցարդ 'ի գրամն ապաւինեալ՝ զարծաթեայ և
„զոսկեայ գլխաւորական սրբոյ աթոռոյն հալէ՝ և անխնայաբար
„վաճառէ առ և անդ վասն միոյ անուան կարգաւորանի, և
„գանձու ահացուցանէ զամենայն որպէս բարբարոս.
"Ջրնիկ Գօլանցի կենդանի նահատակ Յովհաննէս արք-
„եպիսկոպոսն՝ որ գրեթէ 'ի վերայ գեղարդեանն Քրիստոսի
„զկեանս իւր դնէր, և յայնմ միջոցի զնորին կառավարու-
„թեանն մնայր անվրդով յաթոռն սուրբ, զայնպիսի հարա-
„զատ որդին այս 'ի կապանս, արկանէ 'ի բանտ, և հալա-
„նէ զգլուխն Լուսաւորն հօդւոյ մերոյ՝ Գրիգոր զպակա-
„սութիւն չարչարանաց Տեառն 'ի մարմնի իւրում կրէր, և
„սա զպակասութիւն չարչարանաց նորին՝ իբրեւ անողորմ
„բարբարոս այլոց սայ վճարել.

«Բացէք զներքսա շնորհալւոյ ընդհանրական գիրքն 'ի
«չորս գլուխ, և ԺԴ. համարն, թէ զի՞նչ գրէ վասն այսպիսեաց
«ապօրինաւորաց յառաջ մատչելոց 'ի մաքուր աթոռն հայրա-
«պետութեան, որ եթէ զնա՝ և թէ զընդունօղս նորին ընդ-
«նզովիւք սրբոց հայրապետացն արկանէ.

«Ո՜հ, ո՜հ անզգայութեան մերոյ, զի 'ի մեոյ քահանայից նզո-
«վից երկնչիմք, և փութամք 'ի կապանաց արձակումն խնդրել.

«Իսկ յայնքաններց սրբազանից առաքելականաց՝ որք
«հոգւով սրբով խօսէին՝ ոչ զգամք բնաւ.

«Տեսէք մի՛ զոլեցիք, որ 'ի սոյն միճակիս եղեալ հայկա-
«զունքն զխառնելով զձեռդ երկիցս բնութեան, և մանաւանդ
«զճշմարտաւէր համաձայնութիւն ձեր, որ ոչ ընդունիք զայն-
«պիսի ստորածինն, այլ 'ի վերայ ճշմարտութեան զմահ յանձն
«առնուք, վասնորոյ պատիւ և յարգանս տալով ձեզ՝ գրեցին
«վասն աթոռոյ միաբանիցն բազմակնիք մահար՝ առ ամե-
«նազօրամ կայսրն, թէ նա չէ ընտրութեամբ ազգին յառաջաց-
«եալ, այլ այսպիսի չարաճնար արեղայի արարմամբ.

«Ընդ որս եհաս 'ի Պայազիտէ ազերս 'ի Դանիելէն առ-
«ակինքս ամենազօրամ մեծի կայսերն մերոյ, զոր լուեալ այսպ
«մեծաւ ցաւակցարար, և խոկայն գրեաց Թամարով զեսպա-
«նին յեղաշրջել զֆէրման դաւթին, և վասն Դանիելին հաս-
«տատել, և բարձրագոյն հրաման ետ ս առ Երևանու խանն
«թէ զի՞նչ փոյթ է քեզ ընդ հոգևորական գործս խառնել,
«և ընդ օրինաւոր հայրապետութիւն Դանիելին ներհակել,
«որ ազգն զնա կամի.

«Ահա զայս համբաւն գրեալ էր առ Յովհաննէսն առ-
«եղբարսն իւր, առ ապա Մինասն և առ ապա Յովակիմն, զո-
«րոց օրինակն ընդ գրոյս մատուցի.

«Ամենազօրամ կայսրն ես մեծաշուք հանդիսիւ եմուտ 'ի
«քաղաքս, և 'ի ԺՆ. աւուր սոյն ամսոյ՝ օծեալ աշխարհախումբ
«հանդիսիւ, որ 'ի ժամ օծմանն մեք ես ընդ ներկայացեալ
«էաք 'ի Սօբօռն, որ է հռչակաւոր վանք, և կացեալ էաք 'ի
«չորս առաքելականացն Ռուսաց, որ բնաւ յոյժինչ ժամա-
«նակս յայդէ մերմէ առաքելական չէր պատահեալ այս-
«պիսւոյ բարեբաղդութեան.

« Թէպէտ անկարելի էր և խնն պատահել անդ՝ 'ի մէջ
« Սօրօսին, բայց ահր օրհնեալ զծնունդս նորին գերապատ_
« ւութեան՝ այս Յոփհաննէսին, և եղբարց իւր մեծագնելոյ
« այս Մինասին, և այս Յովակիմին որ դողալ փառեալ 'ի սէր
« մեր և բոլոր ազգիս՝ այնքան հաւատարմութեան արարին, զի
« առ հասարակ մեծամեծայն իւրեաց թէ հոգևորականաց
« և թէ մարմնաւորականաց նախ ծանօթս արարին զմեզ, և
« այսպ 'ի Սօրօսն մածին։

« Յիրաւի յիրաւի՝ 'ի կարմնել ազգին այնքան ջատագով
« են, որ թողեալ զանոյհակեան անձանցն դհոգս, աշխին վասն
« օգտակարութեան ազգին։

« Եւ խնն այս հաւատարմութիւն՝ ոչ թէ մի միայն վասն ան_
« ձին խնդ առնել, այլ կամիմ՝ մինչ ցապարել ջնջոյ՝ բոլոր աղ_
« գին զօգտակն խորհիլ, և կարեւեաց զանել։ Եւ յետ քանի
« ժամուց՝ ահի կայսրն հրովարտակս հանել, որ ազգին հա_
« ւանեալն դանիէլն է, և 'նա պարտի լինել կաթողիկոս, և
« այժմ այս կողմանցս վիճակք մինչ լսեն զհնազանդութիւնս
« ձեր աղօթնատորին այնմիկ, հեամատն և զարմանան։

« Բայց զխոհեմ ես, զի դու ք պատճառ ատ բերէք, թէ որ_
« պէս յայնժամ՝ 'ի ժամանակս Յովսէփայն՝ յաճէ զեպսկոպոսին ա_
« ռարիք, նոյնպէս և այժմ երկին զնորին եդ ձեզ առնել զայս։

« Բարուոք ասէք, բայց այժմ բաս փոփոխեալց՝ 'ի բաս_
« նոյ պատճառին, բարձցի և պատճառելին. աստ՝ աշա բար_
« ձումն պատճառի ձերոյ, որ անհնարին կայսրն բաս ըղձի
« ազգին արար՝ զայս խնամ և զողորմութիւն իւր, հաստատե_
« լով զհայրապետութիւն Դանիէլին։

« Եւ 'ի ձէնջ այժմ ապաւեմ մեծապահականն զգութեան՝ ըղ
« ձշմարիտ զխոստովանութիւն ձեր ծանուցանելով ինձ որ մի
« յառաջ, որ այսուհետև 'ի կամս ազգին յառաջացի անձրա_
« թիւն հայրապետութեանն։ Գիտեմ հաստատաս, զի 'ի բարի
« խորհրդոց ջանից չեղելի, մի արասցէ ահր. եթէ դուք ես
« ցանկայք ընդ սոս միոյ արեգակի թառալել, յայնժամ ես ան_
« պարտ և ազատ գտանելով հանեալ երա այն վիճակս խնով,
« ոչ զաթառն խմ ճանաչելոյ և ոչ զյօժարեալն այն, և ոչ ընդ
« այսքանեաց սրբազան ժողովոյն նզովից ներքոյ մնալ։

« Թէպէտ ժամանակ 'ի ժամանակ բազում անկարգութիւնք եղեալ են, բայց ոչ այսպիսի, որ 'ի ժամ չծնանելն Մահմետական զինուորք և բռնաւորք 'ի վերայ եպիսկոպոսաց կանգնեալ համարձակ սրբոյ տաճարին, որովք՝ մեծօք՝ և այլ ահաւասչական գործեօք սաստ տալով՝ այնպէս տանջանել։

« Իմ՝ սիրելիք, եթէ դուք 'ի վերայ եկեղեցւոյ հաւանեալ միաբանութեան ձերոյ հաստատուն կայք, նախ ինձ ծանուցէք զկատարութիւնն ձեր, թէ մեք ականջ բռնադատեալ հանեցայք։

« Իսկ որովհետև ամենազօր կայսրն բարեհաճեալ է թողուլ 'ի կամս ազգիս, ըստ նախնական ծիսի մեր և օրինի ընտրել զօրինաւոր հայրապետ, ահա մեք եկեղեցւոյ ընտրեալն Գանիէլն է, որդ և թէ ձեօք և թէ Պարսից բռնակալութեամբ զապօրինաւորդ այդ արտաքսեցէք, և զԳանիէլն մուծէք 'ի ներքս։ Իսկ եթէ եկեղեց իցէ 'ի կողմանէ Պարսից, գրեցէք Գանիէլին զնալ յԷջմիածին, և անդ օծանել։ Գիտէ Աստուած, որ ես հանդերձ միաբանութեամբ խնդրեմ՝ ոչ թէ 'ի յօգուտ և 'ի նպաստ Գանիէլին առնեմ զայս, այլ թէ վասն հաստատութեան նախնական կարգի ծիսի և կրօնի մերում, զի մի խափանս անհնար լիցի. Իմ պարտաւորութիւնս այսչափ, և ձերդ բարեաց նախանձախնդիր լինելն դուք գիտէք։

« Եւ սակս երկու պատճառի ասեմ Գանիէլին 'ի յԷջմիածին օծանել, նախ՝ որ նա ինքն չօծեալն միայն մնասցէ, և հետևեալքն իւր չկարասցեն մտանել 'ի Տէրութիւն Օսմանցւոց, և կանոն ականոն ծառայական լեալ հերքեսցեն զնա անտի։ Եւ երկրորդ, զի այսպիսի չարաչար ժամանակի ոչ բարւոք վարկանիմ Գանիէլին 'ի սուրբ աթոռն լինել, և անդ մնալ, որովհետև յեկեղեցէ Պարսից մտաւ մեծամեծ հայրապետահանջութեանց յառաջնայոց է, որոյ աղագաւ ես փաղաքշեամբ անխիւ գրեալ նախանձոտ զխոնարհ թէ 'ի սուրբ Աթոռն, և թէ առ Գանիէլ արքեպիսկոպոսն, մինչ յաղթ 'ի պատերազմութեան էր, զոր դուք ևս ընթերցեալ էք զայն գիր, և ըստ այն հաւանութիւն տուեալ։

« Զկաթողիկոսն այն՝ զգիտութեանց Գրիգորին չեղեալ կարօ

„ տպարեալ՝ առաքեալ էր 'ի կողմանս յայս ընդդէմ կանոնաց
„ ժողովրդոյն Ռուսաստանու, որք քանիցս մահապարտական գր-
„ րութեամբ գրեալ էին մի առաքել, բայց նա յանդգնեալ
„ առաքեալ էր ընաւ ոչինչ անսալով կանոնաց հասարակու-
„ թեանս, որոյ 'ի մասունս 'ի Մօսկօք, թէ զո՞րպիսի անար-
„ գանս և անխաղաղութիւնս կրեալ է 'ի ժողովրդոց, ընդ գրչաւ
„ երկրափակել ոչ լինի, և կամ թէ զի՞նչ ինչ հատուցումն եւս
„ կրելոց է այսուհետև։

„ Եւ կողմանցս ազգ Հայկազունեաց զչարաճնարութիւն
„ նորին հատուցանելով յանձին ամենայնում կայսերն, հրաման
„ գրեաց արգիլեալ մնալ 'ի սահմանի Ռուսաց, մինչև ըստ
„ արժանւոյն իւր զվրէժս ընկալցի։

„ Որ ահա զժողովրդոց մահապարտական օրէնսն, և 'ի Թիֆ-
„ լիզու չորս եպիսկոպոսաց առ ի գրեցեալն, և առ կուսա-
„ կալ կաւ Յեհարիչ անօրինողն, զնոցուն օրէնսն և զպլոցն
„ եւս՝ ահա ընդ գրոյս առաքեցի, զորս ունիք տեսանել, թէ
„ զի՞նչ ինչ անցք անցեալ են։

„ Տէր օրհնեսցէ զկայսերութիւն նորին, ամենայն ինչ 'ի
„ կամս ազգին եթող և թողլոց է այսուհետև, մեծ շնորհ
„ եւս մերարերէ 'ի վերայ նուաստիս, զորմէ յինէն պատմելն
„ է անկարել։

„ Եթէ զայս առաջարկէք, թէ ժամանակ 'ի ժամանակ
„ այսպիսի գործառնութիւնք են եղեալ, որպէս Եղիազար
„ Անթափեցւոյն, փութային և այլոյն, միթէ և յայժմ բար-
„ ւոք են տպարեալ, զորս խոստովանէ Միքայէլ Չամչեանն։

„ Ո՜չ ապաքէն ազգին թշնամութեամբն և ընդ նովիւք
„ նոյն արբաղան ժողովոյն մնալով՝ ոչ երբէք բանամք զաչս
„ 'ի յանդաջողութենէ։

„ Եթէ հաստատութեան սորա աթոռոյն ցանկայք, չունիք
„ այլ եւս արգելման առիթս, հեռացէք ճշմարտութեան,
„ որ յառաջագոյն ազատ մնացաք յայսպիսի յանկարգութեանց,
„ և խաղաղ 'ի մէջ այլազգեաց մի լիցուք առակ նշաւակի։

„ Այս հատուածն գիտեմ, և անդուստ ժողովրդոյն եւս
„ պատասխանեալ եմ, թէ նոցա կամօք չէ, այլ յերկիւղէ
„ դեսպանին առնեն։

«Ահա ապահովութիւն սրտի ձեր՝ որ ամենագթած կայսրն
«ըստ ըղձի և փափագմանց ձերոց պարգևեաց, որ և ցան-
«կալով բարերջանկութեան սրբազան պատրիարք յարգելի
«եղբօրդ իմոյ, և վասն օրհնեալ իշխան ամիրայից և ժողո-
«վրդոց՝ միշտ ջերմեռանդն աղօթարար, և մինչև ցպատիլ
«շնչոյս ՚ի վերայ ճշմարտութեան հաստատուն միացող, ամե-
«նախոնարհ Եփրեմ արքեպիսկոպոս բոլոր Հայոց Ռուսաս-
«տանու»։

Յամի տեառն 1801 և. ՚ի սեպտեմբեր 19.
Ի յարքայանիստ քաղաքս Մոսկով.

(1801) Այս թուղթ Եփրեմայ արհի եպիսկոպոսի տարած-
եալ ՚ի կոստանդնուպօլիս էարկ շշնչիւն ՚ի լսելիս ժողովրդ-
եան, յեղաշրջեաց զմիտս բազմաց, և փոխեաց զնոսա ՚ի նա-
խանձ պաշտպանութեան սորոյ աթոռոյն Էջմիածնի, մինչև
և կողմնակալքն Դանիէլի քաջալերութիւն և վստահութիւն
քաղեալ ՚ի նոցանէ, յարեան յառ ազ.ով ջանի ջանալ և զուն
գործել նուաճեցուցանել զկողմն Դաւթի, և ՚ի ձեռն բազում
և մեծամեծ ընծայից և կաշառուց ազերս արաջանաց մատուց-
եալ առ մեծամեծս տէրութեանն, յանկարծ իջուցին զՅով-
հաննէս պատրիարք յաթոռոյ իւրմէ, և յաքսորս վարեցին
զնա ՚ի քաղաքն Եւդոկիա, յամսեանն հոկտեմբեր 29, և սկը-
սան ՚ի խորհուրդ մտանել վասն ընտրութեան պատրիարքի և
խնդրել զայնպիսի պատրիարք, զի զկողմն Դանիէլի զօրա-
ցուցէ, և զհակառակորդս նորին զամենայն ընդ ոտիւք իւ-
րոց նուաճեսցէ.

Եւ յետ բազմաց ժողովոց գումարեցան վերջապէս և ՚ի
միում աւուր ՚ի Պալատը կոչեցեալ վանն Հացագործի ՚ի շու-
կայն, և անդ առաջարկեալ զքանի ինչ եպիսկոպոսունս, յետ
բազում հարցաքննութեանց ջատագովութեամբ եղբօր որդի
տէր Պօղոս քահանայի՝ առաջարկեցին և հնքեցին կացուցա-
նել պատրիարք զԳրիգոր եպիսկոպոս խամսեցի զնախկին
սորոյ Էջմիածնի, որ գեղերէր ՚ի կողմանս Եւդոկիոյ.

Եւ ծանուցեալ վասն նորին ՚ի դուռն արքունի՝ հանին
հրաման ածել զնա այսր, և հրովարտակս առաքեալ առ նա

զԱստուածատուր վարդապետ զոմն, ածին զնա 'ի Կոստանդնուպօլիս, և տարեալ 'ի դուռն արքունի, զգեցոյց նմա և պարդուն զկապոյն պատրիարքական իշխանութեան, և մեծաւ հանդիսիւ դարձոյց զնա 'ի պատրիարքարանն յամի տեառն 1801 'ի դեկտեմբեր 19։

Եւ յետ աւուրց ինչ զաշակերտն Մինասայ զԳէորգ եպիսկոպոս՝ որ գնացեալ էր 'ի նուիրակութիւն 'ի Բումէլի, ետուն բերել 'ի Կոստանդնուպօլիս, և արարին մերժել զԳրիգոր պատրիարքին։

(1804) Ի սմին ամի Թորոս կաթողիկոս Սսոյ՝ որ օծեալն էր 'ի Կոստանդնուպօլիս յաւուրս Զաքարիայ պատրիարքի, պատճառի յօշոտեալ անդամ անդամ 'ի խողան ողլու կոչեցեալ յայլազգի իշխանէ տեղւոյն արտաքոյ պարսպին Սսոյ 'ի մերոյ կամրջոյ գետոյն, որում յաջորդէ՝ եղբօր որդի նորուն Կիրակոս արքեպիսկոպոս Սսեցի՝ այր առաքինազարդ և սըրբակրօն՝ երիտասարդ. քսան և չորս ամեայ՝ փառաւորեաց զխուք և զեկեղեցիկ տեղեաց, և յետ մեց ամի գնացեալ յերուսաղէմ յուխտ և յերկրպագութիւն, փառաւորի մեծաւ պատւով, եւ դառնայ յաթոռ իւր։

## ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս օծման Դանիէլի 'ի կաթողիկոսութիւն, և մաղախյն Դաւթայնոց։

(1802) ԳՐԻԳՈՐ պատրիարք՝ որ յաջորդեաց Յովհաննու յայնմ խռովութեան ժամանակի, գոլով անհնարին թշնամի Դաւթի, և սերտ բարեկամ և ջատագով Դանիէլի, և ինքն բան բարուցն գոլով անխռով և անխարդախ, և չգիտելով զկեղծաւոր բարս և զառաջական ընթացս Կոստանդնուպօլսեցւոց. սկսաւ անխոհեմաբար ձեռն 'ի գործ արկանել և յաղթահարել զհզօրագոյնս Դաւթի. և փոխանակ ողոքանօք և քաղցրա-

թեամբ հանճարոյ և արտաքոյ զժողովուրդն՝ սկսաւ բռնաբար խոշտանգանօք և սպառնալեօք վարել ընդ նոսա.

Եւ ձեռնտուութեամբ կոմիսակալաց իւրոց ծառայեալ 'ի դուռն արքունի էառ զհրովարտակ կաթողիկոսութեան Դանիէլի, և 'ի ձեռն ներքինի վարդապետի՝ որ աշակերտն էր Դանիէլի, առաքեաց առ նա 'ի Պայազիտ.

Գրեաց և առ միաբանսն սուրբ Էջմիածնի, և զայս 'ի Դաւթէն՝ ետ տանել զօծման գիրսն առ Դանիէլ. գրեաց և առ կաթողիկոսն Աղթամարայ, և առ երեւելի առաջնորդս և եպիսկոպոսունս բազմաց քաղաքաց երթալ ժողովել 'ի Պայազիտ, և օծանել զԴանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց.

Եւ իբրեւ այս այսպէս եղեւ, և օր քան զօր զօրացաւ կողմն Դանիէլեան, ժողովեցան 'ի Պայազիտ բազմութիւնք եպիսկոպոսաց և վարդապետաց, և ըստ օրինի և կանոնի կաթողիկոսութեան քննութիւն արարեալ առանց կեղծեաց, գտին զԴաւիթ ապարատոր՝ մեղաւոր՝ և բռնաւոր՝ և անարժան կաթողիկոսութեան, և զԴանիէլ անմեղ և անպարտ և արժանաւոր օծման շնորհին, և միաձայնաբար ստորագրութեամբ ամենեցուն օծին զԴանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց 'ի նոյն վանսն խաչ Բիլլիսո կոչեցեալ, յամի տեառն 1802 'ի մայիս 28.

Եւ զքննութիւն և զվճիռ սիւնհոդոսին գրեցին 'ի Կոստանդնուպոլիս օրինակ զայս.

## ԲՆՆՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ ՍԻՒՆՀՈԴՈՍԻՆ

### ԲԱՆ Ա.

«Ուր իցեն երկու և երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ «ես 'ի մէջ նոցա, ասաց Քրիստոս տէրն մեր. վասնորոյ և 'ի «ժամանակիս յայսմիկ մինչ ձեռնարկեաց ամենաչարն խան-«գարել զեկեղեցի սուրբ, յանուն Յիսուսի Քրիստոսի Տեառն «մերոյ ժողովեցաք բազմութիւնք եպիսկոպոսաց՝ վարդապե-«տաց՝ քահանայից՝ և այլ ժառանգաւորաց՝ յերեք վանք կո-«չեցեալ սուրբ ուխտս՝ որ 'ի ստորոտ Նպատ լերինն 'ի Բագ-«րեւանդ գաւառի ... և աստ 'ի մէջ սքանչելահրաշ տաճա-

«րիս կառուցելոյ . . . առաջի արքութեան սեղանոյն միաբա-
«նութեանն Աստուծոյ և որդւոյ Աւետարանի նորա՝ ուղիղ ակ-
«նարկութեամբ 'ի հանդէս մատուցեալ՝ քննեցաք զդատաս-
«տան Դաւթի Թիֆլիզեցւոյ՝ որ անձնընծայ եղեալ անուանե-
«ցաւ կաթողիկոս Հայոց՝ յամի 1804 'ի 20 ապրիլի, յորմէ և
«այսր ոչ տեսանել երբէք եկեղեցիս Հայոց զերկուս խաղաղու-
«թեան, զորս փայլէր առատապէս յերկրէն և յեռանդ.

«Եւ 'ի զննել եղեալ համեմատութեամբ աւետարանական
«բանից և առաքելական և մարգարէական գրոց՝ ծանեաք
«զնա ամենևին խոտորեալ 'ի շաւղաց կենարար վարդապե-
«տութեան նորին, և հետախոյզ քննութեամբ կանոնաց հարցն
«որոց առաջնոց՝ և բարւոք վերահասութեամբ բանի բանի
«բազմօրինակ բազմանենիք գրութեանց քահանայական մի-
«աբանութեան որոց աթոռոյն Էջմիածնի՝ գտաք զնա խախ-
«տեալ ընդ դատապարտութեամբ եկեղեցւոյ, և ապօրինաւոր
«օծութիւն նորա.

«Եւ զի մի ընդ համօրէն ընթացեալ, 'ի տարակուսի
«թողուցումք զմիտս այնոցիկ, որք զարձ տեղեկութեան պա-
«րագայից՝ միայն պարզ մտօք ընկալեալ զնա զառաջինն որ-
«պէս կաթողիկոս վաւերական օծութեամբ, զայթակղեցին
«զանձն դատաստանի սուրբ սինհոդոսիս մերոյ, արժան հա-
«մարեցաք առաջի ամենեցուն գրով և տպագրութեամբ մերով.

«Որպէս զի լու վերծանութեամբ իւրեանց հանգամանաց՝
«սրբեսցի խիղճ մտաց ամենայն հաւատարմութեան հեռաւո-
«րաց և մերձաւորաց ազգիս մերոյ, և մնասցէ այնպէս վասն
«հաստատութեան սուրբ եկեղեցւոյ 'ի յաւիտենական անշիջելի
«յարակայ ժամանակի»:

Կանոնք վասն ընտրութեան կաթողիկոսի.

ԲԱՆ Բ.

"Արդ 'ի սկզբան անդ խնդրեցաք զկանոնս վասն ընտրու-
«թեան կաթողիկոսի, և գտաք 'ի գլուխս գրքոյն օծութեան
«կաթողիկոսի այսպէս. «Յորժամ հանդերձեալ լինին բարձ-
«րացուցանել զոք 'ի պատիւ կաթողիկոսութեան տանս Հայոց,

«բոլոր ժողովուրդք Հայկազեան ազինս հանդերձ ամենայն
«ժառանգաւորօք և երկրատամն եպիսկոպոսօք ժողովեալ
«'ի մի. ընտրեսցեն նախ զերիս, և ապա քննութեամբ ամե-
«նայն ժողովոյն որոշեալ զմին յերիցն՝ մկրտեալ յամենայն
«գործս բարիս և 'ի վարս առաքինիս սուրբս և անարատս,
«լի զգաստութեամբ և իմաստութեամբ:

«Եւ մի լիցի 'ի հաւատս թիւր, 'ի բարս ժանտ, 'ի վարս
«անուղիղ, և 'ի բանս անհաստատ, մանաւանդ՝ զի մի լիցի
«անձնընծայ և ընտրեալ արծաթով 'ի ձեռն կաշառաց յայլազ-
«գի իշխանաց, զի այդ է այնպիսին առաջի Աստուծոյ, և
«բանադրեալ է նա»:

"Այլ և զաւք յետ-հանրական գիրս Ներսէսի Շնորհալ-
«ւոյն. գլուխ Գ. երես 44. ուր ընդ երկար դրէ վասն Դաւթի
«եպիսկոպոսի ուրումն, որ այնպէս յաշտարանօք՝ բռնութեամբ՝
«'ի ձեռն կաշառաց՝ ընկալեալ է զօծումն հայրապետական 'ի
«գլուխ իւր, այլ բազմութիւն եպիսկոպոսաց՝ վարդապետաց՝
«հարց վանականաց՝ և միանձանց՝ աւելի քան երկու հազար
«և հինգ հարիւր անձանց, ընդ որս էին և տեառն Ներսէս Շը-
«նորհալին, և եղբայրն իւր տէրն Գրիգորիս, ժողովեալ 'ի
«Սիս քաղաքն, և մեծաւ սինհոդոսին դատապարտեալ զնա.
«նզովեալ և հերքեալ էին յեկեղեցւոյ Քրիստոսի ... գրեալ
«էն զկանոնս զայս թէ "Որք ոչ ընտրութեամբ Աստուծոյ և
«Աստուածային արանց՝ այլ ինքնաշարժ միտիւք՝ և բռնա-
«կալաց աշխարհի հրամանօք զանձինս իւրեանց բարձրացու-
«ցանեն յաստիճան սրբազան քահանայապետութեան, ոչ մի-
«այն քահանայապետութեան չեն արժանիք, այլ և ոչ քրիս-
«տոնէական հաւատոյ, ոչ որդւոց պատարագի քրիստոնէութեան՝
«և ոչ օրինաւոր թաղման անգամ"»:

Յետ այսորիկ 'ի մէջ բերէ զթուղթս միաբանիցն որոց
Էջմիածնի:

ԲԱՆ Գ.

Յորս մի առ մի պատմէ զանարժան գործս Դաւթի, և
զբռնութս եպիսկոպոսաց զնմանէ, և յետ այնորիկ դնէ զմնա-
հատութիւն սինհոդոսին զայս օրինակ:

ԲԱՆ Դ.

«Տեսաք և ընթերցաք և զայլ 'բազում գրութիւնս որոց անձնեցուն համեմատութեամբ գտաք զԴաւիթն անձնեւին հակառակ հարցն կանոնաց, և անընդունելի բնութիւն և ծնութիւն նորա, որովք՝ եթէ ծնեալ և եթէ չծնեալ՝ մի և նոյն է, և ըստ հարցն օրինաց դատապարտէ ծնութիւն նորա զինքն և զընդունողսն իւր, ըստ որում և գրեալ է, թէ Արժանի են մահու, ոչ միայն որք գործեն, այլ և որ կամակից լինին գործողացն, ուստի խառնեցաք զնա ընդ բանի մարգարէին, թէ «խառնեցին այնոքիկ, զի ընտրեալ են աշ-ծամիթայ»... և հարաք զնա 'ի վէմն Քրիստոս, և դատա-պարտեցաք զնա ինքն զԴաւիթ և զամենայն համախոհս նո-րա, դատապարտութեամբն եկեղեցւոյ, մինչև զզջասցեալ ապաշխարեսցեն, և դիմեալ յառ օրինաւոր սրբազանին գայցեն զպատուութիւն ինքեանց»։

Եւ յետ այսորիկ կարդէ զիրազմանիկս մահապս միաբա-նիցն և երևելի առաջնորդաց այլոց քաղաքաց վասն խնդրե-լոյ զԴանիէլ 'ի կաթողիկոսութիւն Էջմիածնի, նաև զնոյն ինքն իսկ զվկայութիւն Դաւթի վասն արժանաւոր կոչմանն Դանի-ելի, և եդեալ զառա՝ պատմէ զչորհարցս օծումն տեառն Դանիելի՝ ասելով այսպէս։

ԲԱՆ Ե.

«Ուստի և մեք համաձայնեալ նոցին բնութեամբ՝ ընտ-րեցաք և մանաւանդ ընկալաք զարժանաւորս ընտրեալն 'ի բազմաց՝ զտէր Դանիէլ սրբազան արք եպիսկոպոսն, որ 'ի քսան և հինգերորդ աւուր ամսոյն մայիսի՝ հեղմամբ սրբա-լոյս միւռոնին յարժանաւոր գագաթն նորա՝ օծաք զնա օծ-մամբ սուրբ Հոգւոյն Աստուծոյ՝ կաթողիկոս և քահանայա-պետ ամենայն Հայոց, և ծայրագոյն պատրիարք սրբոյ Էջմի-ածնի. զոր տէր Աստուած հաստատուն պահեսցէ ընդ եր-կար ամս...։

«Ապա յայտնեալ որ ոք բերանով և գրով խարով խօ-

„ սեռցի ընդ ձեզ զայս՝ Ներհակ դատաստանի յանուն Աստու-
„ ծոյ ժողովելոցս, ծանիջիք զպնդախոհն ըստ առաքելոյն՝ փոր-
„ դապետ ատութեան՝ մոծանող հերձուածոյ յազգս և յե-
„ կեղեցիս մեր․․․։
„ Եւ եթէ ոք առաջարկեսցէ, թէ ծնեալ էր Դաւիթն, և
„ ՚ի վերայ այնր չէր պարտ զայս ծանել։
„ Զպատասխանի առուն յառաջագոյն իսկ գրեալ է սրբա-
„ զան առաքեալն, թէ «Աչ, որ զանձն ընծայեցուցանէ, նա է
„ ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ»։
„ Ըստ որոյ և ժողով երկու հազար հինգ հարիւր հայրն
„ (յասուրս Շնորհալւոյն) զմիւս Դաւիթ ապօրինաւորութեանն
„ ծնեալն յայնմ ժամանակի՝ ՚ի մանկութենէ քրիստոնէու-
„ թեան եւս հատանէ․․․։
„ Եւ եթէ ոք զանգլին պատճառեսցէ, թէ օրինաւոր սրբ-
„ բազանն ծնաւ պատարագ սրբոյ էջմիածնի, կարէ հատ ըն-
„ Նիլ, թէ և յառաջագոյն բազումք պատարագ սրբոյ էջմիածնի
„ ծնեալ են օրինաւորութեանն՝ ընդ հանրական կաթողիկոս
„ ամենայն Հայոց, որպէս և ՚ի մերձակայ ժամանակս տէր
„ Կարապետ Ուլնեցի՝ ծնաւ ՚ի կոստանդնուպօլիս ՚ի Մէջա-
„ գիւղն, և ձեռնադրեաց զեպիսկոպոսունս, և այսպէս են ՚ի
„ սուրբ աթոռն զինի ժամանակաց․․․։
„ Զայս եւս արժան համարիմ՝ ծանուցանել օրհնեալ ազգիս
„ մերում, թէ ՚ի վերջգրեալ Դաւիթ դաւաճանէ ձեռնադ-
„ րեալ եպիսկոպոսունքն, և ՚ի նոցանէ ձեռնադրեալ քահա-
„ նայք և այլ ամենայն սպասաւորք՝ անընդունելիք են ե-
„ կեղեցւոյ և բոլոր ազգի մերում․․․ մինչև զղջասցին, և
„ գնասցեն առ սոս հոգևորական կայսերականս և ազդ ուհրաւէր
„ տեառն Դանիէլի սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց,
„ և ընկալցին զներումն և զթողութիւն։
„ Եւ տէր որ կոչեաց և արդարացոյց, և փառաւոր արար
„ զընտրեալն իւր ՚ի սկզբանէ՝ զտէր Դանիէլ սրբազան կաթո-
„ ղիկոսն ամենայն Հայոց, պայծառացուսցէ զդաւաճան իշ-
„ խանութեան սորա, և արասցէ զսա պարծանք ազգիս, և
„ սիւն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, և զձեզ զամենեսին
„ ընդ հովանեաւ սորա քրիստոսաւանդ բարի հովուութեան

« տածելով 'ի վայրի դալարւոջ և 'ի ջուրս հանգստեան, այս-
« հետև անխռով կենօք և անսասան ժամանակօք՝ անձանց
« բարօրութեամբ և անդորր ուրախութեամբ, ամէն:

« Ողջ լերուք, և շնորհք անուան Աստուծոյ ընդ հոգւոյդ
« ձերում»:

Այս է ստորագրութիւն անուանց սիւնհոդոսին, այս-
պէս շարակարգեալ:

1 Կարապետ կաթողիկոս Էջմիածնայ:
2 Գէորգ եպիսկոպոս Դամէնոս առաքելոյ առաջնորդ:
3 Յովհաննէս եպիսկոպոս միաբան Մշու սրբոյ կարապետին:
4 Գրիգոր եպիսկոպոս՝ Բաղեշու:
5 Մարտիրոս եպիսկոպոս՝ միաբան սրբոյ Էջմիածնի:
6 Յովհաննէս եպիսկոպոս՝ Երկաթեան առաքելոց ա-
ռաջնորդ:
7 Անտոն եպիսկոպոս՝ սուրբ Աղբրկոյ:
8 Գրիգոր եպիսկոպոս՝ առաջնորդ Բալուայ:
9 Փիլիպպոս եպիսկոպոս՝ առաջնորդ Խարբերդու:
10 Գրիգոր եպիսկոպոս՝ առաջնորդ Սեբաստիոյ:
11 Աբրահամ եպիսկոպոս՝ սուրբ Սահակայ:
12 Կարապետ եպիսկոպոս:
13 Մանուէլ եպիսկոպոս վարդի հօր վանից:
14 Աբրահամ եպիսկոպոս Դերջանու:
15 Սահակ վարդապետ Խաչ քիլիսայու:
16 Աւետիս վարդապետ ժամօրհնող:
17 Գալուստ վարդապետ լուսարար:
18 Յարութիւն վարդապետ:
19 Մկրտիչ վարդապետ:
20 Գէորգ վարդապետ:
21 Յարութիւն վարդապետ միւս:
22 Գասպար վարդապետ Թովմայ առաքելոյ:
23 Յովսէփ վարդապետ Տաթեւու:
24 Եղիա վարդապետ Վաղարշապատու:
25 Եղիա վարդապետ Բագրեւանու:
26 Յարութիւն վարդապետ Տաթեւու:

27 Վարդան վարդապետն կոչեալ՝ Ս. Դանիէլի աշակերտ։
28 Ներսէս վարդապետ ընկեր միաբան սորա Լէհմանի, և հարազատ զաւակ հոգեւորի մեծ հայրապետին մերոյ։
29 Խաչատուր վարդապետ Բաղիշու։
30 Կարապետ վարդապետ Դաւթէոս աշակերտ։
31 Առաքել վարդապետ։
32 Մարտիրոս վարդապետ՝ միաբան Մշոյ սրբոյ Կարապետին։

«Եւ այլ վարդապետք և քահանայք հոգևորք, գործք զանց առարաք առ 'ի չասելոյ ձանձրոյթ ընթերցողաց, որոց համախմբութեամբն գրեցաւ և կնքեցաւ. 'ի թուին Հայոց ՌՄԾԱ. 'ի մայիսի 28. յերեք խորան կոչեցեալ սուրբ վանս, որ 'ի Բագրեւանդ գաւառ»։

Այս ամենայն գրութիւնք՝ ընդ որս և քահանայապետական կոնդակ տեառն Դանիէլի Նորընտրեալ կաթողիկոսին՝ եկեալ 'ի Կոստանդնուպօլիս 'ի ձեռն Գրիգորի արքեպիսկոպոսի աշակերտին Սեբաստիոյ, և ընթերցեալ յամենայն եկեղեցիս 'ի լուր ամենեցուն, և մի առ մի բացատրեալ զգրաբառ բանս անհասկանալիս ռամիկ ժողովրդեանն, ուրախացան մեծապէս Դանիէլեանք, և ծափ զծափի հարեալ՝ առն ուրախութեան ոգւոյն կատարել 'ի տանն միաբանից, երգիծանելով և զմիւս կողմն Դաւթի, որ իբրև յանցաւորս մահու չափ մեղաց սպառնէին հայել 'ի խոնարհ սրտանց սրտիւք և խոժոռեալ դիմօք։

Իսկ Գրիգոր արքեպիսկոպոս ժողով արարեալ 'ի պատրիարքարանի եկեղեցւոջ, ընթերցաւ դարձեալ 'ի լուր ամենեցուն զգրութիւնս սինհոդոսին, և զկոնդակ տեառն Դանիէլի կաթողիկոսին, և բազում բանս զօրութեան խօսեցաւ զԴանիէլէ՝ խնդրելով 'ի ժողովոյն գրել ստորագրութեամբ ամենեցուն զթուղթ հնազանդութեան ընծայ տեառն Դանիէլի՝ 'ի դիմաց համօրէն յուխտեան կոստանդնուպօլսոյ՝ առաքել առ նա ինքն Դանիէլ, զոր և յառաջագոյն գրեալ և պատրաստեալ էր նա ինքն Գրիգոր արքեպիսկոպոսն, և 'ի ժողովին յանդիման առաջարկել ամենեցուն, որոյ օրինակն է այս։

«Աստուածընտիր՝ արքայակոչ՝ և ազգահրաւէր՝ սրբազ-«նափայլ վեհապետի տեառն մերոյ, որդիական խոնարհու-«թեամբ մատուցանեմք համբոյր շնորհաբաշխ աջոյն, մեք՝ «կայսերապերճ մայրաքաղաքիս պատրիարք, եպիսկոպոսք, «վարդապետք, աւագերիցունք, և քահանայք աթոռակալք, «իշխանապետք, միւթէվէլլիք, իշխանք, բոլոր արուեստա-«ւորք, և էսնաֆք, և համայն լուսաւորչածին հաւատաց-«եալքս, Մնալ քեզ ընդ երկար ամօք 'ի ցնծութիւն մեր.

«Բազ որում վերին անճառելութեամբ այցելութիւն հզօ-«րաձեռն արքային եղեալ լրութիւն փափագանաց ազգիս «տառապելոյ, բարեկարգեաց զվեհանձնութիւնդ փոխանորդ «և յաջորդ նախկին լուսաւորչաց մերոց՝ երջանիկ հարցն սր-«բոց, և աւետաբեր նամակդ օրհնութեան՝ և սուրբ սինհո-«դոսին ձեր կանոնական միահաւրագրութիւն հնչեաց առ լսե-«լիս մեր զմեծահանդէս օծմանդ սքանչելահրաշ եղանակ, և «հեռուապար ժամանեալ եղեւ քահանայապետական անդ-«րանիկ օրհնութեանդ կոնդակ առ հասարակութիւն մեր, «որպէս զանձրեւ 'ի վերայ սիզոյ, և որպէս զջուր բարեհամ՝ «առ ծարաւեալս.

«Ուրախ եղաք փոխանակ աւուրցն անցելոց, և լուր բա-«ղում՝ ցաւոց սրտից մերոց՝ մխիթարութիւնն երկնաձիր պար-«գեւաց՝ զոր եհեղ սուրբ հոգին առ պանծալի գլուխդ մեր «առ 'ի սփռել յանդամս քո 'ի մեզ, մեծապէս ուրախ ա-«րար զմեզ.

«Վասն որոյ նախապէս շնորհաւորեմք զսրբազան օծումն «քո հոգեձիր, և խնդրեմք յաստուածպետական բարերա-«րութենէն հարուստ ամօք վայելել քեզ զաստուածափառ «քահանայապետութիւնդ, և հովանաւորել զաստուածահա-«ճոյ աղօթից օժանդակութիւն 'ի վերայ սրբոյ եկեղեցւոյս.

«Եւ երկրորդ շնորհակալ եմք մեծապէս, որ սրբազան «օծութեանդ աւետաւոր և յատկապէս օրհնութեանդ կոն-«դակաւ՝ զոր շնորհեալ էիք առաքելով 'ի ձեռն Սեբաստիոյ «առաջնորդ խոհեմատ Գրիգոր արքեպիսկոպոսին, զուար-«ճացուցեր զտրտմագնեալ սիրտս մեր, և օրհնակից փա-«ռաւորութեամբ բարձրացուցաք զԱստուածն մեր ճշմա-

«բեա, որ արդար է և զուղղութիւն տեսանեն երեսք Նորա։
«Որ և կենդանարար մեծաճարտար արքեպիսկոպոսն 'ի «յատենի սրբոց եկեղեցեաց ընթերցեալ բարւոք բացայայ«տութեամբ, և լռութեամբ եւս ճառեալ եկեղ 'ի միտս մեր ա«մենեցուն։
«Յայնժամ լցան բերանք և սիրտք մեր խնդութեամբ, և «լեզուք մեր ցնծութեամբ, վասն այնորիկ երրորդապէս որ«դիական սիրով յօժարեցաք փառաբանել 'ի խնդիրս յայս «յատուկ, զի աստուածապէս Ներումն շնորհեցես զզջացեալ «անգիտութեամբ յանցաւորացն քոց, և Նոյն օրհնութեան «շնորհին մասնակից և հաղորդ առնել զհամայն ազգս մեր, «առաքելով զպատշաճաւոր Նուիրակս աստուածադրոշմ սրբ«բալոյս միւռոնի, և շնորհաբուղխ օրհնութեան կոնդակաւ։
«Որպէս զի Նորօք սփռեալ ծաւալեսցի խնամալի լոյս «աստուածային շնորհաց առ ամենայն հաւատացեալ մերազ«նեայքս իբրև զլոյս արեգական, որք տեսեալ ընկալցին «զհայրագութ խնամս ձեր, և գոհանալով փառաւորեսցեն «ընդ մեզ զամենասուրբ Երրորդութիւնն զՀայր և զՈրդի և «զսուրբ Հոգին, որում միշտ գեղանանած երկրպագութիւն և «փառք յաւիտեանս ամէն»։

1 Գրիգոր պատրիարք Կոստանդնուպօլսոյ։
2 Յակոբ եպիսկոպոս առաջնորդ Թրակիոյ։
3 Պետրոս եպիսկոպոս միաբան սուրբ Երուսաղէմի։
4 Գէորգ եպիսկոպոս վէքիլ պատրիարքարանի։
5 Յակոբ եպիսկոպոս վէքիլ սրբոյ Երուսաղէմի։
6 Կարապետ եպիսկոպոս միաբան պատրիարքարանի։
7 Յարութիւն վարդապետ վէքիլ սրբոյ Կարապետի։
8 Մկրտիչ վարդապետ միաբան սրբոյ Կարապետի։
9 Մկրտիչ վարդապետ Վանցի միաբան սրբոյ Կարապետի
10 Գրիգոր վարդապետ միաբան պատրիարքարանի։
11 Մանուէլ վարդապետ միաբան պատրիարքարանի։
12 Սիմէօն վարդապետ միաբան պատրիարքարանի։
13 Մկրտիչ վարդապետ միաբան պատրիարքարանի։
14 Մարտիկ վարդապետ միաբան պատրիարքարանի։

Նօթն որոց եկեղեցեաց աւագ երիցանք, և աթոռակալք, և մութէվէլլիք, և եկեղեցպանք, և վարժապետք, ամիրայք, իշխանաւորք, իշխանք և բոլոր էսնաֆից գլխաւորք, որոց համախոհութեամբն գրեցաւ և կնքեցաւ համահաճական մահզարս այս։

---

## ԳԼՈՒԽ Ժ·

**Յաղագս գործոց Գրիգորի պատրիարքի, եւ դիպուածոց նորին եւ Դանիէլի, եւ վերադառնալոյ Յովհաննու երկրին անգամ յաթոռ պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ։**

---

(1802) Առաքելոյ Գրիգորի պատրիարքի զայս թուղթ շնորհաւորութեան առ Դանիէլ կաթողիկոս 'ի յՈւչ քիլիսա, և ընդ ամենայն ուղղիս զինուորս և զհրամանատարս, զի ըզ Դանիէլ կաթողիկոս յիշատակեսցեն 'ի պատարագին, և մի երբէք զԴաւիթ, և այսպէս երկու կաթողիկոսք երեւեցան 'ի մի և 'ի նոյն ժամանակին՝ և 'ի վերայ մի և նոյն աթոռոյ և ազգի. մինն՝ Դանիէլ օրինաւոր կաթողիկոս ածեալն 'ի յՈւչ քիլիսա, և միւսն՝ Դաւիթ բռնաւոր կաթողիկոս ապօրինաւորն կոչեցեալ. և երկպառակութիւն մի և նոյն ազգի յերկուց կողմանց սկսաւ ծաւալել որ քան զոր, և հրդեհել աւերել զգեղեցիկ շէնս և զբնակութիւնս ողորմելի ազգիս։

Եւ Գրիգոր պատրիարք՝ փոխանակ խոհեմութեամբ և քաղցրութեամբ ամոքելոյ զախտս ժողովրդեան երկուց կողմանց, և հայրաբար խրատելոյ և հանդարտելոյ զայրացեալ խռովութեանն, բաց անխոհեմ բարուց իւրոց և առ՝ 'ի միւսմէ կողմանէ նաւթ և ձէթ արկանէր 'ի հուրն բորբոքեալ, առաւելուլ և տարածանել զխռովութիւնն փոխանակ օգտի հասարակութեանն։

Քանզի՝ սկսաւ բռնաբար խոչընդոտել զԴաւթեանս, և

զինեցուցիչ բանիւք նախատել երդիծանել և զայրացուցանել զնոսա 'ի քարոզս և յայլ զինչ և իցէ ատենաբանութիւնս իւր, որպէս և 'ի միում նուագի 'ի քարոզի իւրում 'ի մէջ եկեղեցւոյն պատրիարքարանին՝ 'ի մէջ արկեալ զԴաւիթ, ստուգաբանեաց զանուն նորա, զմի վանկն տառադարձութեամբ հայերէն բացատրելով, և զմիւս վանկն ըստ տաճկական բարբառոյ, զի ասէ «Ցիրաւի կոչեցաւ Դաւիթ, այսինքն Թաւ, իթ, զի Թաւն նշանակէ մազոտն, և իթն՝ զշուն» որով և Դաւիթն ստուգաբանի մազոտ շուն, և այլն:

Արդ այսպիսի գրուցաբանութիւնք թէ որքան անվայել են բերանոյ խոհական մարդոյ՝ թող թէ՝ պատրիարքի և կարդաւորի, և թէ զիարդ անհեթեթ և առայօդ իցէ զտառս դ դարձուցանել 'ի թ, և զպարզ անունն Դաւիթ բարդել տաճկական նշանակութեամբ:

Բայց զայս ոչ բարւոք արար, զի ոչ մի միայն 'ի բարկութիւն և 'ի սրտմտութիւն շարժեաց զԴաւթեան կողմն, կամ զայնոսիկ՝ որոց անուանքն էին Դաւիթ, այլ նաև վրդովեաց և պղտորեաց զմիտս բազմաց և գայթակղեցոյց նաև զԴանիելեանս եւս առ հասարակ, յասելն նոցա և 'ի հարցանել զմիմեանս, ուրեմն և Դաւիթ Աստուածահայրն իցէ մազոտ, և այլ եւս սուրբք Դաւիթ անուանակոչեալք:

Ուստի սկսան զաղտնի խորհուրդ առնել կողմնակալքն Դաւթի, և 'ի ձեռն կաշառաց յանկուցեալ զմեծամեծս տէրութեանն, յետ մետասան ամսոյ պատրիարքութեան նորա իջուցեալ զԳրիգոր 'ի պատրիարքութենէն, վտարեցին զնա 'ի Քաղկեդոն, յաւուր երեքշաբթի 'ի հոկտեմբեր 11 յամի տեառն 1802, և վերադարձուցին վերստին զՅովհաննէս պատրիարք յեւդոկիոյ քաղաքէ՝ ուր աքսորեալն էր:

Եւ 'ի յայսմ միջոցի նորա տեղապահ պատրիարքի՝ Անդրէաս եպիսկոպոս աշակերտակիցն Յովհաննու, որ գոլով 'ի կողմն Դաւթի՝ սկսաւ հալածել և որոնել զԴանիելեանս, և զորս միանգամ գտանէր, մատնէր 'ի գան և 'ի բանտ, և զոմանս յաքսորս և 'ի թի նաւաստեղեաց:

Իսկ Յովհաննէս պատրիարք վերադարձեալ յեւդոկիոյ՝ զգեցաւ զկապայն պատրիարքական իշխանութեան, 'ի դեկ-

ամսիւր 3, և հրամայեաց յիշատակել 'ի պատարագի զանուն Դաւթի կաթողիկոսի, և փոխանակն արար զԴանիէլեանս առ հասարակ, և 'ի սոյն աւուրս Մանուէլ փորձացեալ աշակերտն Դանիէլի ունելով ընդ ինքեան զմահասար Դանիէլի կաթողիկոսութեան, խոյս ետ 'ի Ռուսաստան.

Այլ Ցախճանեկս ոչ շատացեալ այսու ամենայնիւ, նաև զերկպառակութիւնն կաթողիկոսաց բառնալ կամելով, եհան հրովարտակ 'ի տէրութենէն զխռովարարսն առաքել յաքսորս, ուստի զԳրիգոր պատրիարք բարձեալ 'ի Քաղկեդոնէ՝ և ըզ Դանիէլ կաթողիկոս 'ի Պայազիտէ՝ առաքեաց յաքսորս յէջմիածին, մատնեալ զնոսին 'ի ձեռն Դաւթի, և զԳէորգ եպիսկոպոս վէքիլն պատրիարքարանի՝ զառաջինն առաքէ 'ի նուիրակութիւն յԱնդրիանուպօլիս, ապա և զնա առաքեաց յաքսորս յէջմիածին.

Եւ զԿարապետ եպիսկոպոս զառաջնորդն սուրբ Դանիէլի վանիցն Կեսարիոյ՝ զոր Գրիգոր պատրիարք բերեալ էր 'ի Կոստանդնուպօլիս, զնա ևս առաքեաց 'ի տեղի իւր.

(1802) Իսկ Դաւիթ՝ ոխերիմ թշնամին Դանիէլի, իբրև ետեսանէր իւր մատնեալ 'ի ձեռն իւր, զուարճացաւ անպատմելի խնդութեամբ, և ըստ անողորմ և անգութ բռնաւորութեան իւրոյ սկսաւ մատնել զնոսա 'ի բանտ, և չարչարել դառն տանջանօք.

Սոյնպէս արար զԳէորգ եպիսկոպոս անդ 'ի բանտին, և զպատուական մօրուս տեառն Դանիէլի գերծեալ յետ բազում չարչարանացն՝ առաքեաց յաքսորս 'ի Մարաղա քաղաք հրամանաւ Շահին Պարսից. և ոչ շատացեալ այսու՝ ջան գործեաց 'ի ձեռն կաշառաց հրովարտակ առնուլ 'ի Շահէն վասն կարճելոյ զԴանիէլ 'ի կենաց.

Այլ իբրև գնաց հրովարտակն 'ի խանն Մարաղա քաղաքին՝ ուր աքսորեալն էր Դանիէլ, ընթերցեալ զնա խանին առաքեաց զդահիճս՝ զի սպանցեն զնա, և դահճացն ընթացեալ՝ իբրև կամէին մտանել 'ի ներքս առ Դանիէլ, տեսանեն առաջի նորա զերկուս առիւծս պաշտպանս նմա, և զզազանի հարեալք դառնան յետս՝ և պատմեն խանին, և նորա ոչ հաւատացեալ՝ անձամբ անձին երթայ առ նա 'ի ստուգել

զգաստութիւն նոցա, և ինքն եւս ասէր այնպէս. խնամոյ զանձեղութիւն և զօրութիւն Դանիէլի, և կոչէ զնա բարձր ձայնիւ արտաքս ասելով, ով այր Աստուծոյ Դանիէլ՝ հրամայեա՛ արտաքս առ իս, զի յայտնի արար Աստուած զանձեղութիւն քո առաջի աչաց մերոց.

Եւ Դանիէլ ելեալ արտաքս 'ի սենեկէն՝ եղ և չոգաւ յառաջ խանին, որ առեալ զնա բազում պատուով և մեծարանօք. յղեաց 'ի տուն ուրումն իշխանաւորի Հայոց. կալ մնալ անդորր և խաղաղ կենօք. ուր գնացեալ մնաց անդ աղօթից և ճգնութեան պարապեալ՝ ողբայով զմերկութիւն որբոց աթոռոյն էջմիածնի, և զխղճութիւն միաբանիցն.

Նոյն Գրիգոր պատրիարք մնաց անդ 'ի բանտին էջմիածնի՝ ոչ տեսեալ երբէք զերեսս Դաւթի. որպէս և ինքն ուխտեալ էր խոկ Աստուծոյ.

(1803) Ի սմին ամի հրամանաւ տէրութեանն նորոգեաց Յովհաննէս պատրիարք 'ի հիմանէ զհիւանդանոցն Կոստանդնուպօլսոյ. շինեալ 'ի նմին և զմատուռ մի յանուն սրբոյն Յովհաննու Աստուածաբան աւետարանչին, որ յետ ժամանակաց եղեւ բոլորովին եկեղեցի. և յետ ամաց ինչ ձեռն էարկ 'ի շինութիւն սուրբ Գէորգ եկեղեցւոյն Սամաթիոյ, զորոյ աւարտեալ զշինութիւնն յամսեանն յուլիս 2, էօծ փառաւոր հանդիսիւ աղօթս մատուցանելով վասն կենաց արքային.

## ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս պատերազմին Պարսից եւ Ռուսաց, եւ դարձին Դանիէլի յաքսորանացն, եւ նստելոյ յաթոռ կաթողիկոսութեան էջմիածնի.

(1804) Այն ինչ Դանիէլ էր 'ի Պայազիտ, և չեւ եւս օծեալ էր կաթողիկոս Հայոց. բացաւ պատերազմն 'ի մէջ Ռուսաց և Պարսից, և տեւեալ զամս երկուս, յորում յաղթող

հանդիսացաւ՝ տէրութիւնն Ռուսաց, և էառ՝ պատերազմաւ զբաղում քաղաքս Պարսից, նաև զէջմիածին, և պաշարեաց և զԵրևան քաղաք, և զամենայն տագնապ տառապանաց հասոյց 'ի վերայ նոցա.

Եւ 'ի յայսմ միջոցի խռովութեան ժամանակի Դանիէլ կաթողիկոս և Գրիգոր պատրիարք աքսորեալ յէջմիածին, մնացեալ կային 'ի ձեռս Դաւթի, և էին 'ի բանտի բերդին Երևան քաղաքին.

Իսկ Շահն իբրև ետես զաղետալի տագնապ տէրութեան իւրոյ, որ մերձ էր 'ի կործանիլ, և անճարացեալ գտանել զայլ իմն հնար յաղթական լինելոյ Ռուսաց, փութացաւ դեսպանս առաքել առ տէրութիւնն Ռուսաց, յամենայնի ընդունելով զպայման և զդաշնադրութիւնս նոցին, և ամ յամէ հատուցանել նմա զպայմանեալ գումար դրամոցն և զամենայն ծախս պատերազմին, և յաղագս այսր մինչդեռ խնդրէր գըտանել միջնորդս և բարեխօսս առաքել առ Ռուսս, աճապարեաց Դաւիթ, և հաճեցոյց զմեծամեծս Պարսից, զի զԴանիէլ և զԳրիգոր առաքեսցէ դեսպանութեամբ առ Ռուսս, որպէս թէ ըստ ամենայնի ընդունելի իցեն աղաչանք և խնդրուածք սոցին առաջի տէրութեանն Ռուսաց.

Սակայն և եղև հրաման, և ածին յառեան զԴանիէլ և ըզ Գրիգոր առաջի Շահին Պարսից, և հրամայեաց Շահն, և ասէ ցնոսա, ահա օր և ահա ժամ, զի յայտնի արասջիք զհաւատարիմ ծառայութիւն ձեր և զսէր՝ զոր ունիք առ թագաւորութիւնս իմ, և ես ձեզ հատուցից փոխարէն հաւատարմութեան ձերոյ զբարիսն՝ որք վայելեն խնամս առատապարգեւ թագաւորութեան.

Արդ՝ այսօր ետու ձեզ իշխանութիւն և պատիւ դեսպանութեան 'ի կողմանէ իմմէ գնալ առ տէրութիւնն Ռուսաց, և խաղաղեցուցանել զվրդով պատերազմիս, և օր սահմանել, զի յերկուց կողմանց մեծամեծ նախարարք և երեսփոխանք 'ի մի եկեալ, վճարեսցեն և կնքեսցեն զբանս և զդաշնադրութիւնս մեր.

Լուեալ զայս Դանիէլի՝ պատասխանի ետ և ասէ ցնա, ես ուստի՞ գիտեմ և ճանաչեմ զմեծամեծս Ռուսաց, զի բանք և

խնդրուածք իմ հաճոյ գտանիցին առաջի նոցա, և ըստ աղա-չանաց իմոց արասցեն և վերջացուսցեն զպատերազմն, զոր բացեր դու ընդդէմ նոցա. ոչ կարեմ առնել ես զայդ. զայլ ոք 'ի ծառայից քոց առաքեսցես, որ ծանօթ և սիրելի իցէ յաչս նոցա.

Զայրացաւ Շահն՝ իբրև լուաւ զայս 'ի Դանիելէ, և թե-լադրութեամբ բանսարկութին Դաւթի հրամայեաց փութանակի յաքսորս վարել զնա 'ի Մարաղա քաղաք. և կարճել զկեանս նորա, բայց նախախնամութիւնն Աստուծոյ ապահեաց զնա կեն-դանի և անվնաս 'ի ձեռն սքանչելեաց իւրոց, զոր 'ի վեր անդր յիշեցաք.

Բայց Գրիգոր պատրիարք տեսեալ զայս աքսորանս Դանի-ելի, և կամելով զերծանել 'ի ձեռաց Պարսից, և ըստ ուխ-տադիր լինելոյ իւրոյ չտեսանել զերեսս Դաւթի ատելոյն իւ-րոյ, ընկալաւ զհրաման Շահին, և յանձն էառ դնել դեսպա-նութեամբ 'ի կողմն Ռուսաց, և հաճեցուցանել զմիտս սպա-րապետի նոցին և ամենայն մեծամեծաց.

Եւ այսու եղանակաւ եկեալ 'ի բանակն Երևանու՝ գնաց 'ի Տփխիս քաղաք, և անդ վանեաց զթիկնապահս իւր Պար-սիկս՝ զորս եդեալ էր Շահն դնել ընդ Գրիգորի և օգնական լինել նմա 'ի բանս և 'ի խորհուրդս, և անդ եկաց մնաց մին-չև ցվախճան կենաց իւրոց.

(1804) Իսկ իբրև այսպէս եղանակաւ վճարեցաւ գործ պա-տերազմին, և յերկուց կողմանց երեսփոխանք եկին 'ի միասին գրել և կնքել զպայմանս դաշնադրութեան ուխտութեանցն, յայն-ժամ Եփրեմ արհի եպիսկոպոսն առաջնորդն Ռուսաստանու 'ի ձեռն Հայ ազգի մեծամեծ իշխանաց իւրոց՝ մատոյց աղերս առ կայսրն և առ խորհրդականս ուխտութեանն, զի 'ի վճիռ դաշնադրութեանն յաւելուցուն և զայս, զի բարձցէ Շահն ըզ Դաւիթ բռնաւորն յէջմիածնայ, և զԴանիէլ հայրապետ կաթո-ղիկոսն ազգին կարգեսցէ և դիցէ յաթոռ իւր.

Եւ զայս այսպէս կարգեալ և պայմանեալ և մեկնեալ 'ի միմեանց, իբրև բերին երեսփոխանք զդաշնադրութիւնս կնքեալս, և ցուցին Շահին իւրեանց, ընկալաւ զամենայն զգր-եալսն, և գրեաց հրովարտակ առ խանն Երևանու, զի զԴա-

նիէլ կաթողիկոս յետ կոչելոյ յաքսորանացն 'ի Մարաշա քաղաքէ՝ նստուցէ զնա յաթոռ իւր, և զԴաւիթ ապօրինաւորն մատնեսցէ 'ի ձեռն Դանիելին՝ առնել նմա զինչ և կամեսցի։

Եկեալ հրովարտակ Շահին առ խանն Երևանու, փութանակի կատարեաց զհրամայեալսն 'ի տէրութենէն, և բերեալ զԴանիէլ մեծաւ պատուով յաքսորանացն՝ բազմեցոյց զնա 'ի սենեկի իւրում՝ յանդիման աչաց իւրոց, և զԴաւիթ բերեալ յԷջմիածնէ հրամայեաց կացուցանել զնա առաջի իւր, և յետ բազմաց նախատելոց զնա և հայհոյելոց՝ հրամայեաց մերկացուցանել զնա, առեալ 'ի նմանէ զփօղ կաթողիկոսութեանն՝ և զեմբարկուն՝ և զմատանին՝ և զգաւազանն, զգեցուցեալ զնոսա Դանիելի, հրամայեաց զԴանիէլ հեծուցանել յերիվար զարդարեալ և շքեղ, և զԴաւիթ բոկոտն և բացագլուխ ընթացուցանել յառաջոյ երիվարին մինչև յԷջմիածին։

(1804) Այլ ընդ այս ոչ հաւանեալ անյիշաչար տեառն Դանիելի, և աղաչանօք իւրովք հանգուցեալ զկամս խանին, ետ և զնա նստուցանել յերիվար, և 'ի միասին գնալ եղբայրաբար և համարձակ շքեղութեամբ մինչև յաթոռն սուրբ. և հասեալ յԷջմիածին բազմեցաւ ինքն 'ի գահ կաթողիկոսութեան իւրոյ կամօքն Աստուծոյ և ընտրութեամբ ազգին, և զնոյն Դաւիթն հրամայեաց յատուկ սենեակ զարդարել և պատրաստել, և տնօրինեալ նմա զկերակուրս և զպաշտաւորս, մերթ ընդ մերթ յայց ելանէր նմին, և մխիթարէր սիրով, բարիս ամենայնի բարիս հատուցանելով չարեացն ամենայնի՝ զոր ընկալաւ յանդուգն բռնութենէ և 'ի ձեռաց նորին։ Իբրև այսպէս հաստատեցաւ Դանիէլ 'ի կաթողիկոսութիւն իւր ըստ ընտրութեան ազգին և ըստ խնդրելոյ ամենայն միաբանիցն, յետ միոյ ամի գրեցին միաբանք գիր մաղթանաց համահաճութեամբ ամենեցուն 'ի Կոստանդնուպօլիս առ Յովհաննէս պատրիարք և առ իշխանաւորս ազգին, և առաքեցին զգիրն 'ի ձեռն Գայլակեր կոչեցեալ Յովհաննու եպիսկոպոսին։

(1805) Որ բերեալ զգիրն՝ մատոյց 'ի ձեռն Յովհաննու պատրիարքին, և նորա ժողով արարեալ 'ի պատրիարքարանի յեկեղեցւոջն՝ հաւանութեամբ ամենեցուն ընկալան և հաստատեցին զԴանիէլ 'ի կաթողիկոսութիւն բոլոր ազգին, և ծա-

նուցեալ արքունի դրան՝ առին զհրովարտակ իշխանութեան նորա, և առաքեցին առ Դանիէլ կաթողիկոս 'ի ձեռն Աստուածատուր վարդապետին Կոստանդնուպօլսեցւոյ.

Որոյ եկեալ և գտեալ 'ի Շաղին գաւառակին, ուր էր յայնժամ՝ առաջնորդ Երեւանայ վարդապետն Կոստանդնուպօլսեցի, և զնա եւս առեալ ընդ իւր 'ի խնդրոյ իշխանաւոր անձանց ամենեցուն, յուղարկաւորեցաւ 'ի սուրբ Էջմիածին, և մատուցեալ առաջի ատեան Դանիէլի զհրովարտակ կաթողիկոսութեան իւրոյ յարքունի դրանէ Կոստանդնուպօլսոյ, ուրախացոյց Դանիէլ և բոլոր միաբանութիւն սուրբ ուխտին. զի այս երկպառակութիւն և խռովութիւն ազգին բարձաւ 'ի միջոյ, և սէր և խաղաղութիւն տարածեցաւ յամենեսին.

Աւասիկ և 'ի շնորհս այսր ընդունելութեան ձեռնադրեաց Դանիէլ կաթողիկոս զԱստուածատուր և զԵրեմիա վարդապետսն եպիսկոպոս, և գրեաց զկոնդակ օրհնութեան իւրոյ առաքեաց 'ի ձեռն նոցին 'ի Կոստանդնուպօլիս.

Որ իբրեւ եկին՝ և ընթերցաւ 'ի լուր ամենեցուն յեկեղեցիս Կոստանդնուպօլսի, եղեւ ուրախութիւն մեծ ամենեցուն. և յայնմ օրէ սկսան յիշատակել 'ի պատարագի զԴանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց.

## ԳԼՈՒԽ ԺԲ.

*Յաղագս գալոյ Անգղիացւոց պատերազմական նաւուց 'ի Կոստանդնուպօլիս, և բազմադիմի խռովութեանցն, որք եղեն 'ի Կոստանդնուպօլիս.*

(1806) Ի սմին ժամանակի բացաւ պատերազմն մեծ 'ի մէջ Գաղղիացւոց և Ռուսաց, և ամենայն Եւրոպա խռովեցաւ իբրեւ ծով ալեկոծեալ յահէ և յերկիւղէ Նաբոլէոն Բոնաբարդ կոչեցեալ արքային Գաղղիացւոց.

Եւ Սուլթան Սէլիմ արքայն Օսմանեան յարեցաւ 'ի կողմն Գոնաբարթին՝ ուխտ և դաշն հաստատելով ընդ նմա, բարեկամի նորուն լինել բարեկամ, և թշնամւոյն թշնամի։

Իսկ Անգղիացիք՝ որք էին 'ի կողմն Ռուսաց, սկսան յորդորել և համոզել զմեծամեծս տէրութեանն Տաճկաց, զի թողեալ զԳոնաբարթ՝ յարեսցին 'ի կողմն Ռուսաց։

Եւ թէպէտ մեծամեծք տէրութեանն համոզեցան և կամէին բարեկամանալ ընդ Ռուսս, բայց չեղեւ հնար համոզել զՍուլթան Սէլիմ, զի յամենայնի մանաւանդ ոգւով և հաւատարիմ սրտիւ կապեալ էր ընդ Գոնաբարթին։

Վասն որոյ նաւատորմիղն Անգղիացւոց մտեալ սպառնական նաւուք յանկարծակի եհաս ընդ նեղուցն Միջերկրական ծովուն յաւուր յիշատակութեան Յովհաննու Մարգարէին 'ի փետրուար 8. յամի տեառն 1807, և եկն յանդիման քաղաքին Կոստանդնուպոլսոյ առաջի Հէյպէլի կղզւոյն, և պատրաստեցաւ 'ի պատերազմ։

Եւ այս գաղտնի խորհրդով մեծամեծաց տէրութեանն էր առ 'ի ահացուցանել զՍուլթան Սէլիմ արքայ, զի հաճեսցի ակամայ կամօք յարել և միաբանել ընդ Ռուսս։

Որ թէպէտ երկեաւ յոյժ յերկիւղ մեծ, և հրաման ետ վաղվաղակի նորոգել զծովահայեաց կողմանս պարսպաց քաղաքին, և ամրացուցանել զնոսա թնդանօթօք և ռմբագործօք, և կանգնել պատնէշս առաջի դրանց քաղաքին։

Եւ հրաման արար իւրաքանչիւր ազգաց գնալ ժողովիլ 'ի պաշտօն և 'ի գործ բերդաշինութեան, վասն որոյ և հարկ եղեւ Յովհաննու Պատրիարքի հանդերձ հասարակ ժողովրդեամբ գնալ 'ի պալատն արքայի, և ինքն առաջնորդ լինելով ժողովրդեանն՝ սկսաւ հող կրել 'ի թիկունս իւր, և կիր՝ և որ ինչ պիտոյք էին 'ի գործ շինութեան։

Տեսեալ զայս Սուլթան Սէլիմ արքայ, և հարցեալ՝ թէ ով ոք իցէ նա, և իմացեալ՝ հրամայէ զգեցուցանել նմա զամենայն մուշտակ արքայապարգեւ, և նստուցանել զնա յաթոռ, զի ինքն մի աշխատ եղիցի, այլ ժողովուրդ իւր փոխանակ իւր։

Արդ՝ թէպէտ մեծ և ծանր էր գործ շինութեանն, և թերեւս անպիտան առաջի մեծազօր հնարագիտութեանց

Անկլիացւոց, բայց որոշեցաւ միայն յանհարկութիւն արքայի եկեալ էին նոքա և ոչ 'ի պատերազմ, ուստի դարձն և ուխտ հաստատելով ընդ արքայի, զի թողեալ զԳաղղիացին միաբանեսցի ընդ Ռուսս, և այնպէս յետ ութ և տասն աւուրց տանելոյ մեծ ուրուք վնասուց դարձան ընդ որ եկեալն էին. թէպէտ յետ դնալոյ նոցին առեալք դաշինս և ուխտին զոր արարին ընդ նոսա, նաւաստիքն արքայի դնացեալ զինի նոցին և եկեալ արտաքս 'ի Նեղուցէն Կոստանդնուպօլսի, առաջի Տենեդոս կղզւոյն պատերազմեցան չարաչար, և ութ և տասն մեծամեծ նաւք արքային այրեցան և կործան 'ի ծովն.

(1807) Յետ չորից ամսոց 'ի մայիսի 16 ապստամբ զօրքն Օսմանեան' որ կոչին Եէնիչէրիք, յարեան յոտն դաւաճանաբար, և յաւուր միում, որ օր էր հինգշաբթի, արախորդ կրօնին զերկոտասան մեծամեծս տէրութեանն, և յաւուր ուրբաթու առաջնորդութեամբ Մուսա փաշա դայմաղամի' իջուցեալ յաթոռոյ թագաւորութեանն զՍուլթան Սէլիմ արքայ, եդին 'ի դիպահոջ, և եդին յաթոռ թագաւորութեանն զՍուլթան Մուստաֆա' որդի Սուլթան Համիտի' զայր հնարագէտ և անմիտ.

(1808) Բայց յետ միոյ ամի 'ի յուլիսի 16 եպարքոսն Ռուսճուգ քաղաքին' որ կոչէր պայրագտար Մուստաֆա փաշա, եկեալ բազմութեամբ զօրաց Ռումէլիի' ընդ որում և բանակն արքայի' դարձեալք 'ի պատերազմէն Ռուսաց. եկեալ բանակեցան արտաքոյ Կոստանդնուպօլսի 'ի Տաւուտ փաշա կոչեցեալ տեղւոջն. և յետ երկուց աւուրց հրաման առեալ բազմութեամբ զօրաց' եկն և եմուտ 'ի դուռն եպարքոսին, և ընկեցեալ յիշխանութենէն զմեծ եպարքոսն Չէլէպի Մուստաֆա փաշա կոչեցեալ, գնաց ապա 'ի պալատն արքունի' ընկենուլ յաթոռոյ զՍուլթան Մուստաֆա, և դնել դարձեալ զՍուլթան Սէլիմ.

Այլ նորա իրազեկ եղեալ խորհրդոյ և մտաց Մուստաֆա փաշային, նոյն ժամայն խեղդամահ արար զՍուլթան Սէլիմ, զի մի ինքն ընկեցի յաթոռոյ իւրմէ.

Կամեցաւ և զեղբայր իւր զՄահմուտ սպանանել, այլ փախուցին զնա թիկնապահք նորին.

Իսկ իբրեւ ետես Մուստաֆա փաշա զխեղդամահ մարմին Սուլթան Սելիմ արքային սիրելւոյն իւրոյ, կատաղեցաւ զայ-րացար, եւ կապեալ զգլուխս պալատանն՝ յարձակեցաւ իբրեւ զառիւծ ՚ի վերայ պալատականաց արքային, եւ սրախողխող արարեալ՝ զորս միանգամ՝ զխնդրոյ իւր գտանէր, ընթացաւ ՚ի ներքս, եւ ընկեցեալ զՍուլթան Մուստաֆա յաթոռոյն՝ եդ ՚ի տեղի նորուն զեղբայր նորին զՍուլթան Մահմուտ յաթոռ թագաւորութեանն ՚ի յուլիսի 30, 1808, եւ ՚ի հիճրէթի տաճ-կաց ١٢٢٣ ՚ի ճէմազիլ ախըր ։

Եւ ՚ի նմին աւուր սատակեալ եւ ինքն զփոխարքայութիւնն՝ եկն հանդիսիւ ՚ի դուռն Սարայոյն. եւ նստաւ ՚ի տեղի իւր, եւ սկսաւ յայնմ օրէ անտի կոտորել եւ ՚ի սուր սատակել մաշել զգլխաւորս Ենիչէրի զօրացն՝ զշարժառիթ անձին ապստամ-բութեանն ։

Ետ բերել եւ զանէրեւելիս քաղաքս ՚ի Կոստանդնուպոլիս, եւ արար նոցա ընթրիս քաղցրամոխ ՚ի Փէրապաու խանէն, եւ այսու ահաւոր արար զամենայն Ենիչէրիս եւ զզաւառս Կոստանդնուպոլսոյ ։

(1808) Եւ յայսմ միջոցի եկն եւ Մանուկ պէյ երեւելի իշ-խանն Ռուսճուկի՝ որ սիրելին էր յոյժ Մուստաֆա փաշայի, եւ մեծամեծ փառօք պատուեցաւ ՚ի նմանէ ՚ի Կոստանդնու-պոլիս ։

Այլ յետ չորից ամսոց զայնպիսի խորհրդով եւ թերապրու-թեամբ Արապզատէ կոչեցեալ Ճէյլօխսադին՝ ՚ի գիշերի միում, որ օր էր երկուշաբթի նոյեմբեր 2, եւ բէմէքզան ամսոյ նոյա ٢٦ յարեան յառ Ենիչէրիք զօրօք, եւ քաղմաթեամբ եկեալ հրդեհեցին զդուռն Սարայոյն ։

Զայս իբրեւ ետես Մուստաֆա փաշայն, խոյս տուեալ թագեաւ ընդ երկիր, որ էր շինուած քարուկիր, եւ ՚ի նմա էին տակառք վառօդոյ ։

Եւ ՚ի հուր մատուցեալ զտակառս զայնոսիկ՝ ամբարձ յօդս զշինուածն ամենայն, եւ զորս միանգամ գտան անդ ՚ի զօրաց ապստամբաց՝ ՚ի հուր փառեալ զամենեսին, բայց եւ ինքն խեղդամահ եղեւ ՚ի ծխոյն՝ որ լցեալ էր զգետնայարկն ողջոյն ։

Եւ զկնի երից աւուրց գտեալ Եէնիչէրիք զդի նորին, և կապեալ չուան ընդ ոտսն՝ անարգանօք քարշեցին զնա ՚ի յէթ մէյտան կոչեցեալ տեղին։

Ի սմին գիշերի խոյս ետ ՚ի Կոստանդնուպօլսոյ Մանուկ պէյ իշխանն, և անվնաս զերծեալ զանձն փախստեամբ ՚ի Ռուսաստան։

Իսկ Սուլթան Մահմուտ արքայ երկուցեալ, զի մի ընկեսցի յաթոռոյ իւրմէ, խեղդամահ արար գիշերայն զեղբայր իւր զՍուլթան Մուստաֆա, և մնաց ինքն միայն ժառանգ թագաւորութեան։

Յետ աւուրց ինչ այրեցին Եէնիչէրիք և զձմերանոցն, զոր շինեալ էր Սուլթան Սէլիմ արքայ ՚ի Լէվէնտ չիֆթլիկի և ՚ի յիսկիւտար։

Եւ յետ եօթն աւուրց հանդարտեցաւ խռովութիւնն, և բացան դրունք քաղաքին Կոստանդնուպօլսոյ, որ զաւուրս եօթն փակեալ մնացին։

Եւ ՚ի մէջ խռովութեան աւուրցս այսոցիկ չեղև վնաս երբէք և ոչ միոյ ումեք ՚ի քրիստոնէից, բայց ՚ի Տաճկաց բազումք կորեան գրեթէ իբրև քան հազար հոգիք։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս ջանալոյ Յունաց գրաւել զվանս սրբոյն Յակոբայ ՚ի յԵրուսաղէմ, և յաղագս դատի նոցին ընդ Հայս։

Ընդ այս ժամանակի նստէր եպարգոս Քէօր Եուսուֆ փաշա կոչեցեալ՝ այր ժանտ և ագահ. առ սա մատուցին Յոյնք զբազմութիւն կաշառաց և զընծայս մեծամեծս, և որսացին զնա ՚ի կողմն իւրեանց։

Եւ նա ՚ի շնորհս նոցա գրեաց առ արքայ զխնդիր նոցա՝ քանզի, եթէ կայ վանք մի կոչեցեալ Մարեադաւալ (այսինքն

է՝ սուրբ Յակոբ) 'ի յԵրուսաղէմ, և այս մինչ գորով յառա-ջին ժամանակս առաքելական ստացուած Յունաց ազգին․ յետ ժամանակաց Հայք 'ի ձեռն կոչատուց գրատեալ են զնա, և մինչև ցայժմ մնացեալ է 'ի ձեռս Հայոց։

Արդ այժմ ցոյցք ազերսն և աղաչեն ազգային զարդա-րադատ կամս ձեր, զի հանեալ զնա 'ի ձեռաց Հայոց՝ շնոր-հեսցես ազգին Յունաց զառաքելական ստացուած խրբեանց․ որք և վասն այսր զՀաղար քանի ամս ոչ պաշտօն ընծայեն արքունի գանձարանին։

Ընթերցեալ զայս արքայ՝ ոչ խիկ և խիկ հրաման արար հանել 'ի ձեռաց Հայոց զվանքն, կամեցեալ տալ զիւ Ճշմար-տել զիրսն․ և Հայք թէպէտ խրատել եղեն այսմ 'ի ձեռն մե-ծամեծայն արքայի, և զխասցին ջրոր խորհուրդս անխրա-տութեան նոցա, բայց զխակալ, զի եղարդան մեծ է 'ի կողմն նոցա, յաւելին առ ժամն աղաւխնեալ յաղթականութիւնն Ըս-տածոյ, և համբերելով հրամանաց արքային՝ թէ զինչ ինչ հրաման ծագիցի։

Վասն զի յառաջան յայնաիկ բացեալ էր պատերազմն մեծ ընդ գէմ Ռուսաց, և հանդերձեալ էր եղարդան կարգել զրանակին արքայի և զնալ 'ի պատերազմ։

Եւ իբրև յետ չորից ամաց եկ զնաց եղարդան մեծ, և նստաւ փոխանորդ նորին Շաքիր Ահմէտ փաշա, զառ փութա-ցան Հայք առնուլ 'ի կողմն իւրեանց, և համեցուցեալ զկամս նորին, խորհրդով և համաձայնութեամբ նորին ետուն առ արքայ գիր աղերսանաց յառաջ ուրբաթու յաւուրն 23, 'ի զնալն 'ի մզկիթն Հէքիմ օղլու Ալի փաշա ճամփի կոչեցեալ, յորում յայտ արարեալ էին Հայք զանիրաւ պահանջումն ազգին Յու-նաց, և զլինելն այն վանուցն առաքելական ստացուած Հայոց ազգին՝ յառաջ անտի ամիրապետութեանն Լոմէրի խալի-ֆայի, և յետ նորուն նախուզ կոչեցեալ Սուլթան Սէլիմի, զրով և կնքով նոցին առեալ ազգին Հայոց։

Ընթերցեալ արքայի զայս ամենայն, եթող 'ի կախ զիւրն և զմէծ երկուց ազգացս, և կամէր այլ ստանաք բարիոք զգու-շութեամբ առնուլ և տեղեկանալ Ճշմարտութեան իրացն եղելոց։

Յայնժամ ժողով արարեալ Յովհաննու պատրիարքի զիշխանաւորս ամենայն և զգլխաւոր անձինս յամենայն արուեստից, և ՚ի ձեռն մահտեսի Տատ Առաքել ՚ամիրայի իշխանին յորդորեաց և զմեծամեծս կաթողիկաց միաբանել ընդ իւրեանս յայս հոգևոր գործ ազգասիրութեան։

Եւ յաւուր շաբաթու ՚ի յունիս 24, 1844, արար Յովհաննէս պատրիարք ժողով մեծ ՚ի պատրիարքարանին համաձայնութեամբ իշխանաւորաց Հայոց, և հրաւիրեաց անդ զմեծամեծս կաթողիկաց, զՅովհաննէս Չէլէպի Տիւզեան, զՄանուկ Մինասեան Թընկրրեան, զՍտեփան աղան Գըլճեան, և զայլս, և ՚ի նմին ժողովի արար առաջարկութիւն ինքն գեղեցիկ, յորում՝ յորդոր ՚ի մէջ էարկ ազգային պաշտպան լինելոյ սրբոյն Յակոբայ վանիցն, և յաղթական լինելոյ ազգին Յունաց։

Եւ այնչափ խրախուսեաց զնոսա յայս հոգևոր գործ ազգասիրութեան, մինչև ՚ի կարեկցութիւն և ՚ի յոյզ շարժել զնոսա զամենեսին, և փութեռանդն ոգւով փոխել ՚ի պաշտպանութիւն սուրբ ուխտին։

Եւ այս հոգևոր սիրով վառեցան և կազմեցան պատրաստեցան իշխանաւորքն աստուածասէրք, և ամենեքին լաւ աստիճանի և կարի իւրեանց սկսան նպաստամատոյց լինել բանիւ և արդեամբք, և յօժարեցուցանել զմեծամեծս ազգութեանն ՚ի լուր աղաչանաց և գթոյ Հայկազեան ազգին։

Եւ որովհետև Յովհաննէս չէլէպի Տիւզեան սիրելի էր յոյժ պալատականացն արքայի, ՚ի ձեռն նորին ծանուցին արքայի զճշմարիտ պատմութիւն իրացն եղելոց, և ազդարարութեամբ նորին ետուն երկիրպագ անդամ՝ զգիր աղերսանաց յաւուր ուրբաթու ՚ի յուլիս 23 ՚ի փառս արքայի ՚ի մզկիթն Մահմուտիէ կոչեցեալ ՚ի յԱյազմա նաւահանգստին Իւսկիւտարու. և զայս գիր աղերսանաց ետ Աստուածատուր եպիսկոպոսն, և Պօղոս վարդապետ մեծին սրբոյ Երուսաղէմի, Պօղոս եպիսկոպոս ծերունի առաջնորդն Պրուսայու, և Վարդան վարդապետ Մշեցի՝ հանդերձ քահանայիւք և ժողովրդովք՝ բազկատարած և բացա գլխով, զոր ետեսեալ արքայի և շարժեալ ՚ի գութ և ՚ի սէր ազգին Հայոց, հրամայեաց անաչառ քննութեամբ դատաստան առնել Հայոց և Յունաց ՚ի դուռն դեն-

պետին մեծի՝ որ կոչի Շէյխիսլամ էֆէնտի, և դատաւորք կարգեցան հրամանաւ արքայի՝ Տիւրրի զատէ Ապտուլլահ Շէյխիսլամին.

Գաղիասկէրն Ռումէլիյի՝ Խըզըր պէյ.

Գաղիասկէրն Անատօլիյի՝ Մէհմէտ Թահիր պէյ.

Գայիմմագամ՝ Շաքիր Ահմէտ փաշա.

Նագիպ իւլ էշրէֆ Սայիտ էֆէնտի.

Ֆէթվա էմինի Արեանի զատէ Մէհմէտ Րաշիտ.

Րէիս էֆէնտի Մուստաֆա.

Ջավուշ պաշի Խալուհիմ.

Պէկլէկճի Ահմէտ Աֆիֆ.

Ամէտճի Սէյիտ Մուհամմէտ.

Իսկ յազգէ մերմէ գտան անդ ՚ի դատին.

Պօղոս վարդապետ վէքիլն Երուսաղէմի.

Գրիգորիոս վարդապետ միաբան սրբոյ Երուսաղէմի.

Սարրաֆլէր քէթխուտասի Աշնաւուրեան Կարապետ.

Մահտեսի Յովհաննէս Երկանեան.

Զարդարեան Գրիգոր.

Փափազեան Ճանիկ.

Գըլճեան Անտօն.

Վաղինէ սարրաֆի Խաչատուր.

Շնորհքեան Մանուէլ.

Եւ յազգէն Յունաց գտան անդ ՚ի դատին.

Եպարասօս մետրապօլիտ Թեսաղոնիկեցւոց.

Աթանասիոս մետրապօլիտն Նիկոմիդացւոց.

Աթանասիոս փոխանորդ՚ն պատրիարքին Երուսաղէմի.

Կեսարիոս գանձապետն պատրիարքին Երուսաղէմի.

Տիմիթրաքի, և Լամպիկ, և Եօրկի, և Խրիսթօ, և Անտոնիօ, և Անէսթի, և Թօդօրու, և Փանայօտ, մեծամեծքն Յունաց.

Իսկ մինչ սկիզբն եղեւ խօսելոյ ՚ի դատաստանին, եհան Պօղոս վարդապետ զնորեալ Ահտնամէ՝ այն է հրամանագիր մեծի Ամիրապետին Հագարացւոց՝ Էօմէրի խալիֆայի, որ յանուն իւր զԵրուսաղէմ, տուեալ էր հրովարտակաւ իւրով զվանքն սուրբ Յակոբայ՝ Հայոց ազգին, եհան և զինքնագիր հրովարտակ Եաւուզ Սուլթան Սէլիմ արքային, որ ՚ի հնդե-

տասներորդ դարու և հիճրէթի Տաճկաց ٤٢٣. ՚ի քսան և հինգերորդ աւուր սաֆէր ամսոյ ՚նոցա՝ եկեալ և մտեալ զԵրուսաղէմ, և կոչեալ առաջի իւր զՍարգիս պատրիարքն Հայոց, և զԱխթալիս պատրիարքն Յունաց, և ընթերցեալ զհրամանագիրս Էօմէրի խալիֆային մեծի, և ինքն իսկ ձեռամբ իւրովք գրեալ և շնորհեալ էր Հայոց զսուրբ Յակոբ վանքն Երուսաղէմի.

Եւ ՚ի գրին յայնմիկ մանրամասնաբար որոշեալ էր զուխտատեղիս Հայոց և Յունաց, զեկեղեցականս և զվանորայս, և զայնս՝ ընդ որս համահաւասար մասն ևս է երկուց ազգաց՝ Հայոց և Յունաց.

Արդ՝ զայս ամենայն ընթերցեալ դատաւորայն, և անաչառ քննութեամբ բացատրեալ և հարցափորձեալ միառմի զամենայն տեղիսն, և վկայութեամբ այլոց ազգաց հաստատեալ և ապացուցեալ, ՚ի չորրորդ գումարման վճռեցին դատաւորք ամենեքին, և զուգիդ պատմութիւն դատաստանին և զվճիռ ժողովոյն գրեցին առ արքայ. Որ ընթերցեալ և տեղեկացեալ զամենայնն՝ հրամայեաց արքունի հրովարտակ գըրել և կնքել կնքով արքայի, և տալ ՚ի ձեռս երկուց ազգաց Հայոց և Յունաց, յորում յայտնի որոշէ զսուրբ Յակոբայ վանքն լինել միայն Հայոց, և բացատրէ և զայլ ուխտատեղիս, ընդ որս ունի Հայն բաժին իւրացուցանելոյ, և պատարագ առնելոյ, որպիսի է սուրբ Ծնունդն Փրկչի, յոր մինչեւ ցայնժամ չէր կարող Հայն պատարագ մատուցանել, իսկ այժմ հանապազօր պատարագէ անդ Հայ քահանայ. Նաև սուրբ Գերեզմանն Փրկչի, և Բանտն Փրկչի, և սուրբ Գերեզմանն Աստուածածնին, որք են երկուց ազգաց անխտիր.

Զայս ամենայն գրեալ արքունի հրովարտակաւ, եւ մեծաւոր արքային զսուրբն Յակոբ ազգին Հայոց, և երդմամբ յանուն Մահմէտի և բանադրանօք ՚նորին կնքեաց զգիրն չըլինել յայտնեալ մէջ այսպիսի, և կամ՝ փոփոխութիւն ինչ, և այսպէս դադարեցաւ խռովութիւն մեծ, և եղեւ ուրախութիւն անպատում՝ համօրէն լրութեան ազգին.

Յաւուրս յայսմիկ դէպ եղեւ բարեխնամ՝ արքային երթալ ՚ի զբօսանս յՕրթագիւղ ՚ի ԵԼՄԱԼԱՐ փէշէք կոչեցեալ տեղին,

և պատահմամբ ընդ առաջ եղեն նմա մանկունք դպրոցին Օր-թագիւղի երկու հարիւր տասն թուով, որոց խակ և խակ չա-րակարգեալք դաս առ դաս, բազկատարած հայցմամբ սկը-սան աղօթել առ Աստուած վասն կենաց արքային՝ քաղցր նուագերգութեամբ սաղմոս և տաղասացաց։

Տեսեալ զայս արքային, և խնդացեալ, թէ յազգէ Հայոց են տղայքն, անդ էին ՚ի ձեռն նախարարի ուրումն մեծի Ալի պէյ կոչեցելոյ պարգևս բաշխեաց անհնեցուն, ի բաքանչիւրումն մէն մի ոսկի, որոց ընկալեալ խոնարհութեամբ և երկրպագ-եալ արքային՝ դնացին յիւրաքանչիւր տեղիս։

Անդ էի ընդ նոսին և ես այս պատմութեանս գրիչ, որ յայնմ ժամանակի կարգեալ էի ՚ի խորհրդաւութիւն մանկանց դպրոցին, և ընկալեալ յայնմ աւուր զաթն ոսկիս ՚ի ձեռանէ նո-րին խակ նախարարին, յօժարեցայ գրել զայս ՚ի կարգի պատ-մութեանս՝ թողուլ յիշատակ առ յապայս։

Ի սմին ժամանակի շինեցաւ նորոգ և եկեղեցին խաղամ փաշայի յանուն սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին, զորոյ զհանդէս օծութեանն կատարեաց Երեմիա եպիսկոպոս կոս-տանդնուպոլսեցի հրամանաւ Յովհաննու պատրիարքի յամի տեառն 1810 ՚ի սեպտեմբեր 29։

# ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս փոխման տեառն Դանիելի կաթողիկոսի, եւ յաջորդելոյ Եփրեմի, եւ յաղագս բանի միաբանութեանն ընդ Հռովմէական Հայ կոչեցեալ ժողովրդեանն։

(1809) Ի սմին ժամանակի դարձեալ զրգռեցաւ պառակ-տումն ՚ի մէջ Պարսից և Ռուսաց, և Դանիել կաթողիկոս կո-չեցաւ հրամանաւ Շահին Պարսից ՚ի քաղաքն Երեւան հան-դերձ երկոտասան արքեպիսկոպոսօք, և եդան ՚ի բանտի բերդին, զի մի յարեսցին ՚ի կողմն Ռուսաց, և թեկնածուք և օգնականք գաւառիցն նոցա։

Եւ յայսմ միջոցի քահանայապետութեան հիւանդացաւ Դա-նիէլ կաթողիկոս, և գրեաց յԷջմիածին, և խնդրեաց զբժշ-կական գիրս Մխիթարայ բժշկին, զի թերևս դարման և դեղ գտանիցէ 'ի նմանէ:

Եւ որովհետև այն գիրք էին պահեալք յարկեղս Դաւ-թի, եկին քանի մի եպիսկոպոսք և վարդապետք առ Դա-ւիթ, և պահանջեցին 'ի նմանէ տալ ինքեանց զգիրսն զայն: Եւ Դաւիթ ոչ կամելով, թէ Դանիէլ խնդրէ զգիրսն, ասաց նոցա, թէ չիք իմ տեսեալ զգիրս զայն, և չէ առ իս:

Զայս լուեալ նոցա, զայրացան անհնարին բարկութեամբ, և որովհետև ունէին ընդ նմա ոխ ատելութեան, սկսան ա-սել, թէ ահա ժամանակ է, զի առցուք զվրէժս 'ի թշնամւոյն մերմէ:

Եւ զի Դանիէլ կաթողիկոս չէր անդ, որ ոչ թողլ տայր առնել, զոր կամէին, ուստի խուռն ընթացեալք 'ի ներքս 'ի սենեակ նորին, ամենք բրօք և ամենք քարամբք և փայտ-իւք, զնա հարին շարաչար, և մերկացուցեալ զնա զերծե-ցին զմօրուս նորին, և եդին 'ի բանտի:

Եւ յարկեղէ գրոց նորին յաւելեալք գտին զգիրսն բժշ-կական, և առաքեցին յԷջմիածին առ Դանիէլ կաթողիկոս, պատմելով նմա զանցս՝ որ անցին ընդ Դաւիթ: Իսկ 'ի լսելն զայս տեառն Դանիէլի, հառաչեաց 'ի խորոց սրտէ, և յողբս ե-հան, և ապա 'ի յուշ եկեալ սկսաւ լալ և արտասուել, զի ինքն առիթ եղեւ դառնակոծ լինելոյ Դաւթին վասն խնդրելոյ ըզ գիրսն զայն: Եւ դառնացաւ ոգի նորա 'ի յանձն նորա, և ախտ ցաւոցն առաւել ևս զայրացաւ, և այնպէս յետ չորեք-տասան աւուրց հիւանդութեան նորա հանգեաւ 'ի Քրիստոս տէր Դանիէլ կաթողիկոս, կացեալ 'ի Հայրապետութեան զամս մի և կէս:

Բայց որովհետև անդ 'ի բանտին բերդին Երևանու վախ-ճանեցաւ, կատարեցին եպիսկոպոսունք զօծումն և զկարգ թաղման նորա, և պատուեալ զմարմին նորա, մաքրեցին և զգեցուցին զհանդերձն, և եդին 'ի տապանակի միում պատուեալ բեհեզօք և շուրջառովք, և պահեցին զգուշութեամբ և պա-տուով:

Իսկ յետ չորից ամսոյ իբրեւ դադարեցաւ պատերազմն, և եղեւ հրաման դնալ 'ի տեղիս իւրեանց, եղին եպիսկոպոսունք, և բարձեալք զտապանակն մեծաւ փառօք և պատուովք, բերին յէջմիածին, և եդին 'ի դիրս հանգստեան կաթողիկոսաց:

Եւ յայնմ միջոցի Եփրեմ արհի եպիսկոպոս առաջնորդն Ռուսաստանու՝ ըստ ընտրութեան և խնդրոյ միաբանից սրբոյ էջմիածնին՝ և հրամանաւ մեծի կայսերն Ռուսաց, եկն հանդիսիւ 'ի սուրբ էջմիածին, և օծաւ կաթողիկոս ամենայն Հայոց, յամի տեառն 1809 'ի դեկտեմբեր 26, և առաքեաց յառաջնորդութիւն փոխանակ իւր զԳայլակէր կոչեցեալ Յովհաննէս արք եպիսկոպոսն, և զԴաւիթ հանեալ 'ի բանակէն՝ պահեաց պատուով և յարգութեամբ ռոճիկս կարգեալ նմա, և սենեակ շքեղ և զարդարուն տալով նմա մինչեւ ցվախճան նորին:

(1810) Թէպէտ յառաջին ժամանակս ոմանք 'ի մերոց պատրիարքաց և իշխանաց՝ փոյթ տարեալ են զՀռոմէական Հայ կոչեցեալ ժողովուրդս մուծանել յեկեղեցիս մեր բռուն իշխանութեամբ, և գանիւ և սաստիւ ահացուցանել զնոսա, բառնալ կամելով 'ի միջոյ զերկպառակութիւն ազգիս, բայց այնու առաւել եւս զայրացուցեալ էին զխռովութիւն ազգիս վիրօք զվէրան բժշկել կամելով:

Այս՝ ոչ սաստկագոյն գանիցն յաճախութիւնք, ոչ շղթայակապ բանտարգելութիւնք, ոչ պատիժք աքսորանաց 'ի դժնդակ վայրս, ոչ բազմապատիկ տուգանք տուժից, և ոչ այլ ինչ դառնագին պատուհասք կարացին գործել ինչ օգուտ ազգիս, քան եթէ տագնապ և վնաս եղեն մեզ պատճառք, և համարձակութեան առիթ նոցին իւր հաստատելոյ, և սիրոյ օրինաց մերժումն:

Իսկ յայսմ ժամանակի մինչդեռ բռնաւորութիւն ազգին Յունաց և զրկողութիւն՝ որ յաղագս Երուսաղէմի, անհնարին ցուցաւ, և ազգ մեր ողջոյն 'ի խոր խոցեցաւ, և մեծամեծք և փոքրունք 'ի խորհուրդ մտեալ բազմօրեայ քննութեամբ, զելս իրացն խնդրէին գտանել:

Բազումք՝ որ թշնամիք էին միմեանց, և ատեցողք, մա-

ռացան զայն ամենայն, և միաբանեցան 'ի սոյն։ Յուսով և բա-րւոք անսասանութեամբ և խոհական խորհրդով Յովհաննու պատրիարքի՝ զոր 'ի վեր անդր յիշեցաք, իշխանապետք մեր առհասարակ յամենայնի խորհրդակից իւրեանց առնէին և զերևելի և զմեծամեծ իշխանս Հռովմէական Հայոց, և եղ-բայրական սիրով արդահասնէին զմիմեանս, ջանալ ճգնիլ ա-մենայն յօժարութեամբ 'ի պարծանս ազգիս, և զերծուցանել զազգն մեր յարհամարհանաց անտի և 'ի մեծապանութեանց Յունաց։

Չերևէին երբէք 'ի նոսին ցոյցք ատելութեան կամ հա-տուածման, այլ մանաւանդ 'ի մի սիրտ և 'ի մի հոգի համա-զուգեալ փութային կամակար աշխատասիրութեամբ, և յեր-կուց կողմանց մի քան զմի առաւելեալ հայրենասէր բարոյիւք, յամենայն առենի գտանէին 'ի միասին ընդ մերոց իշխանաւո-րաց, և դեգերէին անձանձիր յօժարութեամբ 'ի դրունս ար-քունեաց։

Եւ այսու օրինակաւ որ քան զոր առաւելեալք ներքին հոգևոր սիրով, զոյգս առեալ 'ի մէջ արկանէին բառնալոյ խո-տոր զկրճիմն հակառակութեան 'ի միջոյ։

Այն ինչ օգնականութեամբ Տեառն յաջողեցան իրքն որ-բոց Երուսաղէմի, ուրախամիտ եղեալ մեծարու իշխանք մեր՝ ասացին նոցա յայտ առնել գրով զայնոսիկ բանսն, զորոց լի-նին վճարանութիւնք։

Եւ նոցա գումարեալ զկարգաւորս և զիշխանս իւրեանց, և 'ի քանի մի տեղիս ժողով արարեալ, նշանակեցին 'ի թղթի, և ետուն իշխանաց մերոց, և էր խնդիր նոցին հնգեքին այ-սոքիկ։

Նախ՝ թէ Քրիստոս ունի զերկուս բնութիւնս և զերկուս կամս և զերկուս ներգործութիւնս։

Երկրորդ՝ թէ ամենասուրբ Հոգին Աստուած է 'ի Հօրէ և յՈրդւոյ։

Երրորդ՝ թէ հոգիք սրբոց փառաւորեալք են այժմ, և մեղաւորք դատապարտեալք։

Չորրորդ՝ թէ Պետրոս է գլուխ առաքելոց, և զնոյն գլխաւորութիւն ունին յաջորդք նորա։

Հինգերորդ՝ թէ վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ, հաստատեալ 'ի սրբազան առաքելոյն Յակոբայ։

Յաւելին յայտնի և վկայութիւնս 'ի գրոց սրբոց Հարց և վարդապետաց մերոց, յայս առնելով՝ եթէ և դուք ընդունիք զայսոսիկ, ամենայն ողջմտութեամբ, հաշտեալ միաբանիմք և մեք ընդ ազգիս մերոյ, ընդունելով զամենայն ծէսս և զդաւանութիւնս և զարարողութիւնս, և ճանաչելով և ընդունելով մեզ գլուխ և առաջնորդ զյաջորդ սրբոյն Գրիգորի հօրն հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ։

Իսկ իշխանաւորք ազգիս հաւանեալ էին յառաջագոյն փոխն ածին իւր զՄակարիոս եպիսկոպոս առաջնորդն զՄիւռոնոյ, և ժողով պարեալ հանդիսիւ 'ի տաճարի Մայր եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի որ 'ի կոստանդնուպօլիս, յորում՝ ներկայ գտան Յովհաննէս պատրիարք կոստանդնուպօլսի, Աբրահամ եպիսկոպոսն իմաստն սրբոյ Էջմիածնի, Մակարիոս եպիսկոպոս առաջնորդն Զմիւռնոյ՝ հանդերձ Ստեփան վարդապետի, Պօղոս արքեպիսկոպոս առաջնորդն Պրուսայու՝ հանդերձ երկու աշակերտօք, Ներսէս եպիսկոպոս առաջնորդն Նիկոմիդիոյ, Պօղոս վարդապետ վէքիլն սրբոյ Երուսաղէմի, Վարդան եպիսկոպոս վէքիլն Մշու սրբոյ Կարապետի, և յիշխանաւորաց երեք անձինք գխոսնակոնք՝ մահտեսի Առաքել աղբարն Փառոդաղեան, Զարգարեան Գրիգոր, և Ամիրայեան Գրիգոր։

Եւ 'ի վարժապետաց՝ տէր Մեսրոպայ քահանայն, Գէորգ դպիր պալատական, Գրիգոր փէշտմալճեան, և խաչատուր, և Յարութիւն, և այլ անձինք տան և ութ։

Եւ կնքեալ զայսոսիկ գլուխ խնդրոց՝ պատասխանի ետուն ոչ յինքնայօժար կամաց իւրեանց, այլ 'ի գրոց սրբոց հարց և վարդապետաց մերոց, հիմն ամենայնի եդեալ զհանգանակն նիկիական, և 'ի բացատրութիւն նոյին՝ զհոգեշունչ բանս սրբոց հարց։

Առ վարդապետութիւն բնութեանցն Քրիստոսի՝ որ էր խնդիր առաջին, վկայութեամբ սուրբ Լուսաւորչին և Աթանասի և Կիւրղի՝ ցուցին ողջամիտ լինել խոստովանութիւն միոյ բնութեան մարմնացելոյ՝ ընդդէմ Նեստորի բաժանողի, և

միաւորութիւն երկուց բնութեանց անքակտանելի 'ի մի անձն ընդ դէմ Նեստորեանց չփոթողի, նզովելով զայս խնդիր ընդ որձակ և անպարտելի վարդապետութեամբ Շնորհալւոյն և Գրիգոր կաթողիկոսի և Լամբրոնացւոյն.

Առ երկրորդն՝ թէ Հոգին սուրբ է 'ի Հօրէ և յՈրդւոյ, պատասխանի ետուն 'ի բանից Քրիստոսի և սրբոց Լուսաւորչին և Աթանասի և Կիւրղի և այլոց հարց, և ցուցին, թէ Հայր է յանձնէ, Որդի 'ի Հօրէ, և Հոգին սուրբ 'ի նոցունց էութենէ, որպէս վարդապետեաց և ուսոյց Հայրն հաւատոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ.

Առ երրորդն՝ թէ սուրբք 'ի փառս են, և միջնորդք յանորդութեան և 'ի դատապարտութեան, պատասխանի ետուն 'ի բանից սուրբ Լուսաւորչին և Շարականացն և Լամբրոնացւոյն և այլոց հարց. և ցուցին թէ հոգիք սրբոց 'ի փառս են յուսոյն, իսկ ամենեցուն միջնորդք 'ի սպառիլ դատաստանաթեան յուսահատութեան.

Առ չորրորդն՝ թէ Պետրոս գլխաւոր է յԱռաքելոյն, և յաջորդք նորին 'ի հայրապետս, պատասխանի ետուն 'ի բանի աւետարանչաց և սրբոց Լուսաւորչին և Մարգարի Շնորհալւոյն, և ցուցին ամենայն առաքելոց ունել բաշխարձակ իշխանութիւն նոյնպէս և յաջորդաց նոցին 'ի վերայ յատուկ աթոռ իւրեանց, բաց այնմ, թէ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի.

Ուստի անկախ գոլով 'ի միմեանց ամենայն յաջորդք առաքելոց՝ զնոյն իշխանութիւն և պատիւ ունին, զոր ունէին նախնիք իւրեանց սուրբ առաքեալքն, ըստ սահմանադրութեան սուրբ ժողովոյն Նիկիոյ և Կոստանդնուպօլսոյ.

Առ հինգերորդն՝ որ էր օծումն մեռոնին, պատասխանի ետուն, թէ մեռոնին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ, վասն որոյ ըստ սրբազան առաքելոյն Յակոբայ՝ եթէ ոք 'ի մէնջ հիւանդանայցէ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյ, և առնեմք 'ի վերայ նորա աղօթս.

Բայց օծանել իւղով զհիւանդս՝ չէ 'ի գործածութեան, և չէ հարկաւոր յոյժ, որպէս գրէ մեծն Խոսրով 'ի գիրս Մեկնութեան Ժամագրքի.

Մինչ զայսոսիկ պատասխանիս գրեցին Հայք և ետուն հատուածեալ կողմանն, նոքա դարձեալ ժողով արարեալ վարդապետօք և իշխանօք, գրեցին և պահանջեցին 'ի Հայոց նախ՝ չյիշել 'ի պատարագի զանուանս Յոհաննու Որոտնեցւոյ՝ և Գրիգորի և Մովսիսի Տաթևացւոց, պատճառելով, զի նորամուտք են այն անուանք.

Եւ երկրորդ՝ բառնալ 'ի շարակնոցէ և 'ի ձեռնադրութեան գրոցն զնզովսն Լևոնի և ժողովոյն Քաղկեդոնի, պատճառելով և հաստատելով, թէ այն բանք նզովից ոչ են շարակարգեալք 'ի նախնի սրբոց հարց մերոց, այլ 'ի յետին ժամանակս յանդգդոյշ և 'ի խռովասէր անձանց ոմանց.

Եւ զայս երկոսին խնդիրս գրեալ նոցա ետուն իշխանաց Հայոց, և նոցա գումարեալ հանդերձ ամենեքումբք, մինչ ամենեքին ցուցանէին զհաճութիւն և զհաւանութիւն, և առաւել ևս Յոհաննէս պատրիարքն և վարժապետք վերոյիշեալք, բայց ոմանց անընդունելի եղև այս բան.

Մանաւանդ Երեմիա եպիսկոպոսն և Զաքարիա վարդապետ ամն՝ որոց 'ի լսելն զայս՝ ընդոստուցեալք 'ի տեղեաց իւրեանց, աղաղակ բարձին 'ի ժողովին ասելով. « Թէ անկարելի է առնել և անընդունելի է մեզ, զի զոր ինչ գտեալ եմք 'ի նախնեաց մերոց, ոչ կարեմք փոփոխել կամ՝ յաւելուլ և կամ՝ նուազեցուցանել.

Եւ առ այս համամիտ գտան և ոմանք 'ի քահանայից և յիշխանաց, անգէտ գոլով հնութեան և նորութեան, և եկեղեցական պատմութեանց և ժողովոց սահմանադրութեանց.

Եւ ծագեցաւ 'ի մէջ ազգին չփոթութիւն մեծ, և տարաձայնութիւն, ոմանց ասելով թէ՝ մոլորական իրք են, և պարտին բառնալ, և ոմանց պնդել ընդհակառակն, թէ սուրբք են և պաշտելիք. և այսպէս օր 'ի յօր յաճախեաց չփոթութիւնն 'ի մէջ ժողովրդեանն, զոր տեսեալ Յոհաննու պատրիարքի, խոհական խորհրդով մտածելով զապագայ չարիսն՝ որոց մերձ էր ծագել 'ի խռովայոյզ անձանց ժամանակին, դարձոյց զբանն, և հրամայեաց ըստ առաջին կարգացն ընթանալ իւրաքանչիւր ումեք զճանապարհս իւրեանց.

Բայց այսու ամենայնիւ արգել հրամանաւ իւրով չընթեռ-

նուլ զերկս հետամուտ տունս ՈՎ. ՀՐԱՇԱՅ չարակամին 'ի տօ-նի սուրբ հայրապետաց, և այսպէս մնաց անկատար այն հո-գևոր եռանդն և գործ միաբանութեան ազգիս, այլում ժա-մանակի թողեալ ըստ կամացն Աստուծոյ.

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս հրաժարելոյ Յովհաննու 'ի պատրիարքութենէ, եւ յաջոր-դելոյ Աբրահամ պատրիարքի.

---

(1813) ՅԵՏ այսր ամենայնի հիւանդացաւ Յովհաննէս պատրիարք անբժշկելի ախտիւ փայծեղնացաւութեան՝ նեղ-եալ 'ի բազմագլխի հոգւոց և աշխատութեանց ազգին.

Եւ մինչ յոյս առողջութեան ոչ գտաւ, և ախտ ցաւոցն օր քան զօր զօրացաւ, մինչեւ չկարել յառնել կալ և պատարա-գել, վասն որոյ և իշխանք և մեծամեծք ազգիս ժողով արար-եալ, խորհեցան զայլ ոք գնել յաթոռ պատրիարքութեան, և զնա հանգուցանել 'ի վանս սուրբ Երուսաղէմայ, որ 'ի Խրի-սուպօլիս.

Ուստի և 'ի միում աւուր ժողովեալ ամենեցուն 'ի պատ-րիարքարանի, յայտնեցին նմա զխորհուրդս իւրեանց, խոս-տանալով երդմամբ յանուն Աստուծոյ, զի պահեսցեն զնա յանդորրու՝ հոգ տանելով զամենայն պիտոյից նորին մինչեւ ցվախճան նորին.

Լուեալ զայս ամենայն Յովհաննէս պատրիարք, և յօժա-րակամ հաճեալ ընդ խնդիր նոցա, ասէ ցնոսա. « Ընտրեցէք ձեզ զոմն առաջնորդ և պատրիարք, և ես 'ի պատրաստի եմ հրաժարել յաթոռոյս »:

Եւ նոքա ասեն միաբերան, թէ « Ոչ վայելէ մեզ ընտրել պատրիարք, այլ այդ ստացուածքին ձերումդ խոհականու-թեան անկ է. »

Զայսու ժամանակաւ Աբրահամ եպիսկոպոս Գոլեան՝ նուիրակ սուրբ Էջմիածնի, շրջեալ զամս ութ 'ի նուիրակութիւն, և ապա եկեալ 'ի Կոստանդնուպօլիս նստէր յեկեղեցւոջ սուրբ Աստուածածնի, և Յովհաննէս պատրիարք սէր ցուցեալ նմա, առաքէր յեկեղեցիս յաւուրս տօնախմբութեանց նոցին իբրեւ իւր իսկ փոխանորդ.

Եւ սա՝ զի ունէր ինչս առ իւր ժողովեալ 'ի նուիրակութենէ, վաճառեաց զնոսա ադալով սուղ և անգ՝ և նոքօք որսաց զբազումս յիշխանաւորաց ազգիս 'ի կողմն իւր.

Գիտելով զայս ամենայն Յովհաննէս պատրիարք, ընտրեաց 'ի ժողովի իշխանաց զԱբրահամ նուիրակ 'ի պատրիարքութիւն, որոց 'ի լսելն զայս՝ միակամ հաւանութեամբ հաճեցան և խնդրեցին 'ի Յովհաննէ պատրիարքէ՝ տալ թուղթ հրաժարական, և առաքել 'ի դուռն արքունի.

Եւ Յովհաննէս պատրիարք կոչեալ զգրագիր պատրիարքարանին, ետ գրել 'ի լեզու տաճկաց գիրն, և առաքեաց 'ի ձեռն փոխանորդին իւրոյ Սահակայ վարդապետին 'ի դուռն եպարքոսի, և եպարքոսն առաքեաց առ թագաւորն.

Յայն թուղթ յայտ առնէր Յովհաննէս պատրիարք, թէ ինքն կամակար մտօք հրաժարի 'ի պատրիարքութենէ վասն տկարութեան անձին, և խնդրէր, զի տացի այն պատիւ Աբրահամ վարդապետի.

Այլ թագաւորն՝ որ խնամութեամբ առնէր զամենայն, կասկածեալ, թէ գուցէ ակամայ ինչ իցէ այն և կամ դաւաճանութեամբ այլոց, յղեաց 'ի պատրիարքարանն զիւր հաւատարիմ հարցանել, թէ ճշմարտիւ կամիցի Յովհաննէս հրաժարել 'ի պատրիարքութենէ, և թէ ճիր իցէ գրել առեալ զթուղթն հրաժարական.

Եւ իբրեւ ստուգեաց զամենայն, յղեաց պատգամ առ եպարքոսն կոչել զԱբրահամ վարդապետ 'ի դուռն իւր, և ըզգեցուցանել նմա զֆերաճէ պատրիարքական պատուոյ, և նա փաղփաղակի կատարեաց զհրամանն 'ի մայիս 5 յամի տեառն 1843, և հանդիսիւ դարձոյց զնա 'ի պատրիարքարանն.

Ի հասանել նորա անդր՝ եկին ընդ առաջ նորա մեծամեծք Հայոց, և ընկալեալ զնա մեծաշուք պատուով, ածին 'ի ներքս

ու Յովհաննէս պատրիարք, զորս համբուրեաց զաջ Աբրահամ պատրիարք, զոր և սիրով ընկալեալ Յովհաննու պատրիարքին օրհնեաց զնա, և հանեալ զմետաքսեայ ծիրանի փիլոնն պատրիարքական յանձնէ իւրմէ՝ էարկ 'ի վերայ նորա, նոյնպէս և զպատուական յակինթ մատանին հանեալ 'ի ձեռաց իւրոց՝ եդ 'ի մատն նորա, և զգաւազան իւր փղոսկրեայ՝ արծաթապատ և ոսկեզօծ՝ մատոյց 'ի ձեռս նորա. և յերրորդում աւուր յանձն արարեալ նմա զամենայն ինչ, և տուեալ նմա զողջոյն հրաժարական, ելեալ նստաւ յերիվար զարդարուն և չքեղ.

Ընդ առաջ նորա բազմութիւնք քահանայից և իշխանաց, և յետուստ նորա ամբոխ հասարակ ժողովրդեան, էջ 'ի նաւահանգիստն 'ի Գումգափու. Ընդ գկոյ առեալ Յովհաննու պատրիարքին՝ առաց նոցա բանս մխիթարութեան, և օրհնեալ զնոսա եմուտ 'ի նաւ, և էանց 'ի Խրիսուպօլիս, և հանգեաւ 'ի վանս սուրբ Երուսաղէմի՝ որ անդ. կացեալ 'ի պատրիարքութեան զամս 14.

## ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս գործոց Աբրահամ պատրիարքի եւ արարմանց նորին, եւ յաջորդելոյ Պօղոսի եպիսկոպոսի Անդրիանու պօլսեցւոյ.

(1843) ՀԱՄԲԱՒ պատրիարքութեանն Աբրահամու՝ դըրեալ և աղդ արարեալ 'ի սուրբ էջմիածին, առաքեաց Ներսէս կաթողիկոս զՅովհաննէս արքեպիսկոպոսն կարբեցի առ նա 'ի Աբրահամ պատրիարքն զհաշիւ նուիրակութեանն, և զառնալ յէջմիածին. և մինչդեռ լուաւ Աբրահամ պատրիարք ըզ գալուստ նորին, անձկայրեաց և փափագանօք ուրախանալով առաքեաց առ նա, և գրեաց. զի դարձցի յէջմիածին. և մի եկեսցէ 'ի կոստանդնուպոլիս, և ինքն խոստանայր 'ի թղթին

զգուշացեալ ինչս և զհաշիւ նախարարութեան իւրոյ՝ ամբողջ հասուցանել յաթոռն սուրբ.

Այլ նորա արհամարհեալ զգիր և զխոստումն նորա, և յուսացեալ 'ի բազում զօրութեան ամենայաղթ կայսրութեանն Ռուսաց, ընդ որոյ պաշտպանութեամբ էր նա ինքն Յովհաննէս եպիսկոպոս, եկն 'ի կոստանդնուպօլիս, և անցեալ ընդ Բերա՝ այն է Պէյօղլու, գնաց 'ի տուն մեծի թարգմանի դեսպանին Ռուսաց՝ որ կոչիւր միւսիւ Բիզանի, առ որ ունէր և զգիր յանձնարարութեան 'ի մեծէ կուսակալէն Վրաստանու, և անդ նստաւ, և 'ի ձեռն նորին ազդ արար Աբրահամ պատրիարքին՝ զի զհաշիւ նախարարութեանն ամբողջ հասուսցէ 'ի ձեռս իւր, ապա թէ ոչ՝ 'ի ձեռն դեսպանին ազդ առնեմք 'ի դուռն արքունի, և արքունի հրամանաւ պահանջեմք և առնումք՝ որչափ և կամիմք.

Լուեալ զայս Աբրահամ պատրիարք՝ արար ժողով իշխանաց, և 'ի նմին ժողովի յայտ արար, որոց ինչ տուեալ էր 'ի գանձուց նախարարութեան իւրոյ, և խորհուրդ խորհեալ, զի մեծ երկնէր ինքեանց, եթէ դեսպանն ազդ արասցէ 'ի դուռն արքունի, վասն որոյ ամենայն կամօք հատուցին զամենայն՝ զոր ինչ առեալ էին յԱբրահամ պատրիարքէ, և ժողովեալ զգանձն և զհաշիւ նախարարութեանն, տարան երկուք ոմանք յիշխանաց առ նա ինքն Յովհաննէս եպիսկոպոս 'ի տուն թարգմանին, և յորդորեալ զնա աղաչանօք և ընծայիւք, և հաճեցուցեալ զնա նորին առաքեցին 'ի սուրբ էջմիածին.

(1814) Իսկ Աբրահամ պատրիարք յետ միոյ ամի պատրիարքութեան իւրոյ՝ փոխեաց զբնութիւն իւր, և որ յառաջն ձեւանայր այր բարեկեցիկ և հեզահոգի և առատաձեռն, յետոյ եղեւ այր ժիր և ագահ և բարկացող, և սկսաւ հակառակութիւն և երկպառակութիւն սերմանել 'ի մէջ ազգին, կեղեքել զժողովուրդն, և յանիրաւի յափշտակել և պահանջել 'ի նոցանէ զոսկի և զարծաթ. Եւ որովհետեւ գտեալ էր և ինքն 'ի ժամանակս Յովհաննու պատրիարքի 'ի ժողովի միաբանութեանն Հայոց ընդ Հռովմէական Հայոց, և տեղեակ էր ամենայն անցից և վիճաբանութեանց եղելոց ընդ նոսա, այժմ կամեցեալ երեւեցուցանել զինքն հաճոյ յաչս նոցա՝ յուսալով

տանել 'ի նոցանէ զինչս բազումս, և կեղծաւորիր հնարիւք հրաւիրէր զմեծամեծ իշխանս նոցին 'ի պատրիարքարանն, և խօսակցեալ ընդ նոսին քաղցրութեամբ և սիրով՝ պատիւ և ընդունելութիւն ցուցանէր նոցին առաւել քան զարժանն։ Եւ սմին իրի կոչեալ առ ինքն զփէշտիմալճեան Գրիգոր գիտնական վարժապետն Օրթագիւղի՝ խօսեցաւ ընդ նմա գաղտնի, և հրամայեաց, զի գայցէ զհին ձեռագիր Շարական մի, և բաղդատեսցէ զնա ընդ տպագրելոյն, և քարձցէ 'ի նմանէ զերիս յետամուտ տունս ՈՎ ՀՐԱՇԱԼԻ շարականին, և տացէ տըպագրիչ Արապեան Պօղոսին՝ տպել զՇարականն ըստ այնմ օրինակի։

Յանձն առեալ վարժապետին զայս տաժանելի գործ աշխատութեան՝ հրամանաւ նորին և 'ի սէր ազգին, որոնեաց աստ և անդ և եգիտ զընտիր ձեռագիր Շարական մի՝ գրեալ 'ի մերայ մագաղաթի «ի թուին Հայոց ՁՃԱ։ ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ արքայի, 'ի խորէմի կոչեցեալ անապատին, 'ի ձեռն Թովմայի Սեւակրի»․ և զայս Շարական եգիտ առ արքունի վառօդապետ մահտեսի Յասա Աւաքել գրասէր իշխանին, և առեալ 'ի նմանէ աշխատ եղեւ զամիսս վեց զոյն և զգիշեր՝ (ընդ որում և ես ոչ սակաւ վաստակեցայ 'ի բաղդատութիւն ընթերցուածոյն և գրութեան նորին, որ յայնմ ժամանակի պարապէի յուսումն առ սմա նորին)։

Եւ աւարտեալ զուղղագրութիւն նորին՝ ետ Արապեան Պօղոսի ծերունւոյն տպագրել զնա հրամանաւ պատրիարքին։

Եւ նորա գնացեալ առ Աբրահամ պատրիարք, և ստգտեալ 'ի նմանէ զհաճութիւն և զտուչութիւն հրամանի նորին, և ձեռն 'ի գործ արկեալ յանկ եհան և կատարեաց զտպագրութիւն նորին, և սկսաւ վաճառել և տարածել զնորոգ տըպեալն։

Այլ իբրեւ տարածեցաւ այս աստ և անդ, մինչ 'ի տըգէտ քահանայից և յիշխանաց սկսան չփոթութիւնս արկանել 'ի լսելիս ռամիկ ժողովրդեան, որպէս թէ բանք շնորհալւոյն բարձեալ իցեն 'ի Շարականացն, և եկեալ առ Աբրահամ պատրիարք, հարցանէին զնա և ցաւէին, թէ ընդէր փոփոխութիւնս և պակասութիւնս եմուծ 'ի բանս Շարականացն։

Եւ որովհետեւ երեւելի էր յայն աւուրս Աղնաւուրեան կարապետ գլխաւորն հաստատաճառաց, և նա էր մին 'ի դատախազիցն այսր իրի, որք եկեալ էին առ Աբրահամ պատրիարք, 'ի լսելն զայս Աբրահամու՝ որպէս թէ ամենեւին չիցէ լուեալ զայս ուրացութիւն Շարականին, ասէ ցնոսա. զի՞նչ ասէք ո՞վ յարգի իշխանք, իմ չէ լուեալ զայդ երբէք, և ոչ գիտացեալ.

Եւ խոկոյն կոչեալ զվէքիլ իւր առաջի նոցա, պատուիրեաց նմա, զի փութանակի կոչեսցէ զառաջադրիչն, և հարցցէ և տեղեկասցի 'ի նմանէ, թէ ո՞վ ետ նմա առնել զայս, և նորա կոչեալ զնա 'ի պատրիարքարանն, ասէ ցնա, դու որո՞յ հրամանաւ փոփոխեցեր և բարձեր 'ի Շարականացէն զայն երկս տունսն.

Եւ նա ասէ ցնա, հրամանաւ պատրիարքին և սրբազնութեանդ Գրիգորի վարժապետին.

Ընդ այս պատասխանի նորուն զայրացեալ վէքիլ վարդապետին, հրամայեաց, զի մի՛ ումեք վաճառեսցէ 'ի նորոգ տըպելոցն, և կոչեալ զԳրիգոր վարժապետն 'ի պատրիարքարանն, եդ 'ի դիպահոջ, զի առաքեսցէ զնա յաքսորս.

Այլ նա փութանակի գրեալ զգիր աղերսանաց առ Տիւզեան Գրիգոր չէլէպի, աղդ արար նմա զանմեղութիւն իւր և զանիրաւ բանադրելութիւն.

Եւ նորա կոչեալ առ ինքն զԱղնաւուրեան կարապետ և զմահտեսի Յովհաննէս Երկանեան զիշխանսն Հայոց, խօսեցաւ ընդ նոսա, զի ազատեսցեն զԳրիգոր վարժապետ յարգելանաց բանտին, ապա թէ ոչ՝ ինքն կարէ ազատել 'ի ձեռն մեծամեծացն արքայի.

Եւ նոցա լուեալ զայս, և գիտելով՝ զի կարող է առնել զոր կամի նա, եկին 'ի պատրիարքարանն, և խօսեցեալք ընդ Աբրահամ պատրիարքի՝ թողուլ ետուն Գրիգոր վարժապետի գընալ անվնաս 'ի տեղի իւր.

Եւ յետ ոչ բազում աւուրց տպագրիչ Պօղոս ծերունին ըսկսաւ վաճառել զՇարականսն զայնսիկ, որք մինչեւ ցայսօր գտանին առ և մեզ, բայց վասն այսր ոչ սակաւ ատելութիւն և խէթ ունէր ընդ Տիւզեան իշխանացն և ընդ Աբրահամ պատրիարք, սուտ և գաղտնի խորհրդակցութիւնս արարեալ

ընդ ոմանց իշխանաց Հայոց, առաքեցին 'ի սուրբ Էջմիածին զՊօղոս վարդապետ վէքիլն սրբոյ Երուսաղէմի. զի ընկալեալ զօծումն շնորհի եպիսկոպոսութեան դարձ արասցէ 'ի Կոստանդնուպօլիս, խորհուրդ եդեալ ընդ նմա կացուցանել զնա պատրիարք Հայոց.

(1814) Եւ Պօղոս վարդապետ 'ի Կոստանդնուպօլսոյ, և համերձ վկայական թղթով իշխանաց իւրոց կուսակցաց, յուսումն էր և կնիք Յովհաննու պատրիարքին, որ նստէր յայնժամ 'ի Քիւթախիա, գնաց 'ի սուրբ Էջմիածին. և առեալ զորբացան կարգ եպիսկոպոսութեանն դարձ արար անդրէն 'ի Կոստանդնուպօլիս.

Յաւուրս յայսոսիկ Աբրահամ պատրիարք հակառակ երեւեցաւ միաբանից սրբոյ Երուսաղէմի, որք էին 'ի Կոստանդնուպօլիս, զոմանս աքսորեաց, և զոմանս արգել 'ի քահանայութենէ և 'ի պատարագելոյ, արգել և զԳրիգոր վարդապետ զոմն 'ի քահանայութենէ՝ ընդ աշխարհական կարգեալ զնա, և նորա գնացեալ անկաւ յոտս Յովհաննու պատրիարքի. զի միջնորդեսցէ վասն իւր առ Աբրահամ պատրիարք, և հանեցուսցէ զնա տալ հրաման ինքեան պատարագելոյ.

Սուրգեալ Յովհաննու պատրիարքի զանմեղութիւն նորա, կոչեաց առ ինքն զիշխան մի Պէզճեան Յարութիւն կոչեցեալ, որ երեւելին էր 'ի դրան Տիւզեանց և գործակալ նոցին. և յորդորեաց զնա գնալ անձամբ անձին առ Աբրահամ պատրիարք, և առնուլ 'ի նմանէ զհրաման և զթոյլտուութիւն վասն պատարագելոյ Գրիգորի վարդապետին.

Եւ նորա գնացեալ աղաչեաց և բազմօք թախանձեաց զԱբրահամ պատրիարք, զի ներեսցէ յանցանաց Գրիգորի վարդապետին. իսկ Աբրահամ պատրիարք յետ քանիցս անգամ ասելոյ, թէ անկարելի է այդմ աղաչանաց լինել ընդունելի, ասաց 'ի վերջոյ և զայս, թէ ո՞ իցես դու, որ այդպիսի վստահութեամբ յանդգնեցար յայդ աղաչանս, 'ի բաց գնա յինէն դեսպան հերձուածողաց.

Զայս լուեալ Յարութիւն Պէզճեան, և խոժոռ իմն հայեցիւք պատասխանի տուեալ նմա, ասէ. դու զդեսպանութիւն իմ աստ 'ի Կոստանդնուպօլիս ծանեար և պատմեցեր.

և ես յարեւելս դրոյդ ինքնակալ թագաւորութիւն քարոզեցից. և զայս ասացեալ ել արտաքս ։

Եւ գնացեալ առ Գրիգոր Չէլէպի Տիւզեան, պատմեաց նմա զամենայն, զոր ինչ լուաւ յԱբրահամ պատրիարքէ. և նա գաղտնի խորհրդակցութեամբ ընդ ոմանց իշխանաց Հայոց բան եդեալ, հաստատեցին իջուցանել զԱբրահամ յաթոռոյ, և նստուցանել պատրիարք զՊօղոս եպիսկոպոս փոխանորդն սրբոյ Երուսաղէմի, որպէս և յառաջ քան զամ մի զնոյն խորհուրդ խորհեալ էին ։

(1814) Յայսմ միջոցի շինեցաւ նորոգ և սուրբ եկեղեցին Քաղկեդոնի սուրբ Թագաւոր կոչեցեալ, և առաջակայ գտան յօծման նորա Յովհաննէս նախկին պատրիարք, Աբրահամ պատրիարք, Կարապետ եպիսկոպոս Ծերունի, Աստուածատուր եպիսկոպոս, Պօղոս եպիսկոպոս՝ փոխանորդն սրբոյ Երուսաղէմի, Յակոբոս և Մատթէոս վարդապետք՝ աշակերտք Յովհաննու պատրիարքի, Յովակիմ վարդապետ՝ աշակերտ Աբրահամ պատրիարքի, Պօղոս վարդապետ Մշեցի, Գրիգոր վարդապետ Նարեկցի, և բազմութիւնք քահանայից, և դպրաց. և մեծաւ հանդիսիւ օծին զսուրբ եկեղեցին յամսեանն յուլիսի 4, յամի տեառն 1814 ։

Այս հանդիսաւոր օծումն եկեղեցւոյն Քաղկեդոնի՝ գրգռեաց զսիրտս ժողովրդոյն Բերայի (այն է Պէյօղլու) նորոգել և զեկեղեցին իւրեանց, որ 'ի բազում ամաց հետէ հրակէզ լեալ, աւեր և անշէն մնացեալ էր ։

Եւ ժողով արարեալ նոքին, բազմութեամբ եկին առ Աբրահամ պատրիարք, և աղաչեցին զնա, զի հրաման տացէ յարքունուստ նորոգել զեկեղեցի իւրեանց ։

Եւ նա փոխանակ քաղցրութեամբ համոզելոյ և անոքելոյ զսիրտս նոցա, խոժոռ սպառնալեօք վանեաց զնոսա յառաջ իւրմէ, ասելով, բերէք այսր առ իս դշապար քանի ոսկւոյ, զի հրաման առից նորոգել զեկեղեցի ձեր ։

Ընդ որ ցասուցեալ ժողովրդոյն անհնարին տրտմութեամբ, բողոք բարձին 'ի դրունս մեծամեծացն Հայոց, զի գթասցին յինքեանս և յեկեղեցի իւրեանց, և գտցեն զճանապարհ նորոգութեան եկեղեցւոյն ։

Այս աղմուկ և խռովութիւն ժողովրդոցն Բերայի՝ եղեւ կողմնակի ինչ պատճառ աքսորանաց Աբրահամ պատրիարքին, զի երբեւ լուան զայս Գրիգոր Չէլէպի Տիւզեան և խորհրդակիցք իւր, 'ի ձեռն ոմանց խորագէտ և խորհրդապահ ծանօթից իւրեանց սկսան գրգռել և յորդորել զԲնակիչս Բերայի, զի միաբան ժողովեսցին յաւուր ուրբաթու տալ առ արքայ զգիր աղերսանաց վասն հրամանատուութեան և նորոգութեան եկեղեցւոյն իւրեանց։

Եւ ինքեանք ետուն գրել զգիր 'ի դիմաց համօրէն լրութեան ազգին, թէ պատրիարքս մեր չունի զխոհականութիւն և զպարկեշտ կառավարութիւն շահելոյ զազգն, և թէ յանիրաւի բռնանայ և կեղեքէ զժողովուրդն յափշտակութեամբ ընչից և զրկողութեամբ իրաւանց. ուստի խնդրեմք 'ի մեծազօր տէրութենէդ ձերմէ, զի բարձցես 'ի միջոյ մերմէ զայրս զայս անիրաւ և յափշտակող, և դիցես մեզ պատրիարք զայլ ոք իրաւարար, խոհական, և շահեցող։

Զայս գիր միայն ինքեանք գիտէին, որք ետուն գրել, իսկ հասարակ ժողովուրդն այնպէս գիտէին, որպէս թէ վասն նորոգութեան եկեղեցւոյն Բերայի տան առ արքայ զգիր աղերսանաց։

Եւ այսպէս միահամուռ բազմութեամբ քահանայից և ժողովրդոց ետուն առ արքայ զգիրն լալագին պաղատանօք 'ի մզկիթն Թօփհանէի, և ինքն Գրիգոր Չէլէպի Տիւզեան 'ի ձեռն մեծագին ընծայից յանկոյց զսիրտ պալատականացն արքայի գթալ յազգն և 'ի ժողովուրդն, և զերծուցանել զնոսա յանիրաւ բռնութենէ Աբրահամ պատրիարքի։

Ընթերցեալ արքայի զգիրն, և լուեալ 'ի պալատականաց իւրոց զկեղծեալ բողոք և զպաղատանս ժողովրդոցն, հրամայեաց փոխանորդի իւրում՝ մեծի եպարքոսին, իջուցանել զԱբրահամ պատրիարք յաթոռոյն, և դնել զայլ ոք լաւ ընտրութեամբ ազգին Հայոց։

Իմացեալ զայս իշխանաց Հայոց. յորոց բազումք էին 'ի կողմն Աբրահամ՝ պատրիարքի, ժողովեցան 'ի պատրիարքարանն, և համահաճութեամբ ժողովոյ իւրեանց գնացին 'ի դուռն եպարքոսին, և աղաչեցին 'ի դիմաց լրութեան ազ-

գին, խնդրելով հաստատել զնոյն ինքն զԱբրահամ 'ի պատրիարքութիւն ինքեանց. բայց ոչ լուաւ նոցա Եպարքոսն, մի՝ զի հրաման արքային այնպէս էր հրամայեալ, և զժողովուրդն երեւէր յետս կոչել զհրամանն, և երկրորդ՝ զի 'ի ձեռն կաշառաց և ինքն Եպարքոսն էր ցասուցեալ առ Աբրահամ պատրիարք.

Վասն որոյ և յաւուր երեքշաբաթի 'ի Նոյեմբեր 29 առաքեաց Եպարքոսն զհրամանագիր արքային 'ի պատրիարքարանն, և ընկեցեալ զԱբրահամ յաթոռոյն, աքսորեաց զնա 'ի Ղասիդիւղ, յորմէ ապա գնաց յառաջնորդութիւն Մարզուան քաղաքին.

Եւ յետ երկուց աւուրց ժողով մեծ եղեւ 'ի պատրիարքարանն, յորում՝ Ներկայ գտան Գրիգոր և Սարգիս չէլէպիք Տիւզեանք, և հարցափորձ արարեալ ընդ միմեանս՝ ընտրեցին զՊօղոս եպիսկոպոս փոխանորդն Սրբոյ Երուսաղէմի, և ծանուցեալ վասն նորին 'ի դուռն արքունի, յաւուր հինգշաբաթի 'ի դեկտեմբեր երեք 1815 կոչեաց Եպարքոսն առաջի իւր զՊօղոս եպիսկոպոս, և խօսեցեալ ընդ նմա, հրամանաւ արքայի զգեցոյց նմա զվերարկու պատրիարքական պատուոյ, և մեծաւ հանդիսիւ յղեաց զնա 'ի պատրիարքարանն.

Որոյ եկեալ պատրիարքական պատուովն, կանգնեցաւ 'ի բեմի Մայր եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի, և արար գեղեցիկ ատենաբանութիւն ինն, անարժան համարելով զընտրութիւն անձին իւրոյ, և ապաստան լինելով 'ի կոչումն Աստուծոյ, և 'ի վերջոյ յարեալ զմաղթանս և զօրհնութիւն իւր առ Աստուած, կնքեաց զճառն իւր գոհաբանական նուագօք.

(1817) Յետ երկուց ամաց երջանիկ փոխման ընկալաւ Յովհաննէս պատրիարքն Կոստանդնուպօլսոյ, և թաղեցաւ 'ի գերեզմանատանն Իւսկիւտարու.

(1818) Վախճանեցաւ և յետ ամաց ինչ և Թէոդորոս պատրիարքն Երուսաղէմի՝ կացեալ 'ի պատրիարքութեան զամս 25, և եղաւ յաթոռ նորին Գաբրիէլ եպիսկոպոս 'ի միաբանութեանն սրբոյ Երուսաղէմի.

# ԳԼՈՒԽ ԺԼ·

Յաղագս կոչելոյ Պօղոսի պատրիարքին զՀռոմէական Հայս 'ի սէր միաբանութեան ։

Ի սմին ժամանակի ժողովուրդ Հռոմէական Հայոց համարձակութիւն գտեալ 'ի կողմանէ Հայոց, և տեսեալ եւս՝ զի 'ի բազում՞ քաղաքս ծառայողք եպարգոսաց և սաքիկանաց 'ի Հռոմէական հայոց անտի գտանէին, և բառ հաճոյից իւրեանց համոզելով և որսալով զեպարգոսս, 'ի ձեռն նոցին նեղէին և չարչարէին զհայկազուն ժողովուրդս, որք գտանէին 'ի քաղաքսն յայնոսիկ, համարձակ շրջեցուցանէին զկարգաւորս իւրեանց, և զպարզամիտ ժողովուրդս մեր հանէին 'ի հնազանդութենէ սեպհական հովուի իւրեանց, և նախատելով և արհամարհելով զազգ և զեկեղեցի մեր՝ գոմ՞ անուանէին և ախոռ ձիոց, և զեկեղեցականս մեր կոչէին խաբեբայս՝ և սատայս՝ հերձուածողս՝ և հերետիկոսս, որովք զբազմաց սիրտս յորդորելով և համոզելով որոշէին 'ի ծնողաց իւրեանց, զեղբայր յեղբօրէ բաժանելով, և զկին յառնէ իւրմէ տարացուցանելով, և զորս միանգամ՞ որսային, խրատէին խապառ հեռանալ 'ի հաղորդութենէ եկեղեցւոյն Հայոց, իբրեւ անթողլի մեղս ինչ համարելով ։

Զայս ամենայն առնէին ազգի ազգի չողոքորթութեամբ՝ ոմանց դրամս տալով, և ոմանց ձեռնտուութեամբ իւիք օգնելով, և բազմաց զլայն և ընդարձակ ճանապարհ ցուցանելով 'ի լրումն մարմնոյ հեշտութեանց ։

Եւ յորժամ՞ որսային զոք 'ի կողմն իւրեանց, տօն ցնծութեան և ուրախութեան կատարէին 'ի միջի իւրեանց, ասելով. թէ զհոգի մի ազատեցաք 'ի դժոխոց, որպէս թէ յառաջագոյն անհաւատ ոմն էր այն ։

Եւ զայս ոչ միայն առ աշխարհականս, այլեւ առ եկեղեցականս առնէին, անդի և տուն ապստամբաց եղեալ, վասն զի՝ ոմանք 'ի մերոց ադէտ քահանայից և վարդապետաց՝ յան-

գիմնեալք վասն անկարգ գնացից իւրեանց, վաղվաղակի գիշերագնաց փախչէին 'ի մէնջ 'ի կողմն նոցա, և աղաս գոլով 'ի հրամանաց մեծաւորաց, և ոխառազանց եղեալք 'ի կրօնաւորական կարգաց իւրեանց, բնակէին 'ի տունս նոցա, և անդ բացեալ զանդուռն բերանս իւրեանց՝ բիւր բամբասնօք չարախօսէին զազգէս մերմէ ասելով, թէ Հայք այսպէս առնեն, այնպէս առնեն, հերձուածող և հերետիկոս են, վասն որոյ փախեաք և որոշեցաք 'ի նոցանէ առ փրկութիւն հոգւոց մերոց, և այլն:

Եւ իբրև այս այսպէս լինէր 'ի բազում տեղիս, սկսան 'ի բազում քաղաքաց աղաղակք և բողոքանաց գրութիւնք հասանել մի զկնի միոյ առ Պօղոս պատրիարք, աղաղակելով և աղերսելով. զի գտցէ հնար իմն այսմ անբժշկելի ախտիս, որ օր քան զօր աճէ զայրանալ և ճարակել յամենայն անդամս եկեղեցւոյ մերոյ, և յապականութիւն մահու հասուցանել ըզ բոլոր մարմին ազգիս:

Ընթերցեալ զայս ամենայն գրութիւնս Պօղոսի պատրիարքին, և ոչ կարացեալ յուել և տանել անբժշկելի խոցուածոյս, վասն որոյ 'ի նոյեմբեր 9 յամի տեառն 1846 սկիզբն արարեալ՝ խորհուրդ արար ընդ իշխանաւորս ազգի մերում, և ապա 'ի 23 աւուր նոյեմբերի հրաւիրեաց 'ի պատրիարքարանն զերեւելիս միւս կողման, որք էին Տիւզեան Գրիգոր Չէլէպին, Աբիկեան Պօղոս, կարինեցի Աստուածատուրեան Մաթէոս, Յախուպեան Անտոն, և Թիւնկըրեան Յակոբ:

Եւ յորդորելով զնոսա քաղցրութեամբ և սիրով, սկիզբն արար հարցանել, թէ զի՞նչ է պատճառն այդր բաժանման և վնասուց, ո՞չ ապաքէն մի և նոյն ազգ եմք, միոյ սուրբ եկեղեցւոյ ծնունդք, զմի և զնոյն սուրբ հայրս՝ հեղինակ ուղղափառ հաւատոյ մերոյ ունիմք զսուրբ Լուսաւորիչն և զսուրբ Ներսէս Շնորհալին, և ահա գրեանք նոցին Յաճախապատումն և Ընդհանրականն՝ զօրհանապազ պաշտին յեկեղեցւոջ մերում, և զոր ինչ ընկալաք յերից սուրբ ժողովոց և 'ի սուրբ հարց մերոց, զնոյն անխախտ պահեալ եմք հաւատովք և արդարութեամբ:

Արդ ընդէ՞ր կարգաւորք ձեր ջանան թիւրել զազգս մեր,

տարագուցանել և բաժանել յեկեղեցւոյ ՚ի մերմէ․ և այսր ա-մենայնի խաղաղութեան և շարժեալ ճգնին լինել պատճառ ։

Առ այս պատասխանի ետուն նոքին և ասեն, թէ մեք եւս ընդունիմք զսուրբ Լուսաւորիչն և զՆերսէս Շնորհալին, և ա-մենայն բանք նոցին ուղղափառութեան են ։

Յայնժամ ասէ Պօղոս պատրիարք, թէ այդ խիկ են արան-քիք, զի թէ մեք և թէ դուք, միաբան ընդունիմք զսուրբ հարս, և այստ ամենայնիւ միճիմք ընդ միմեանս․ ապա ե-կայք քննեսցուք, թէ նախ քան զբաժանմն ձեր ՚ի մէնջ՝ զի՞նչ դաւանութիւն ունէր սուրբ եկեղեցին մեր, և այժմ զի՞նչ դաւանի, եթէ զկնի նոր ինչ մուծեալ եմք ՚ի հաւատս մեր, ցուցէք և փնտեցէք, և մեք զխոստացուք և ուղղեսցուք զնոյն․ ապա թէ ոչ՝ զի՞ է, զի այդպէս չարիք և զրպարտու-թիւնս յարուցէք զան ՚ի ձերոց կարգաւորաց, և զխո՞ղ կա-րացուք լսել ։

Յետ այս ամենայն բանից ՚ստորագրեցին ՚ի ժողովին, զի գրեսցեն յամենայն քաղաքս, զի սիրով և խաղաղութեամբ փարեսցին Հռովմէական Հայք ընդ Հայոց, մինչև տար ինք-եանց տեսցեն զպատասխանի ։

Բայց առ ալ եւս յանձնեցին խաղաղութեան առիթք և տղի ազդի զրպարտութիւնք և ստութ․ մինչև և գեկեղեց-յես մեր փոխեալյին զհաւել և յանդիմանել ՚ի Գաղատիա և ՚ի Տրապիզոն, և այս ամենայն զրութիւնք հասանէին առ Պօղոս պատրիարք ։

Այսպէս ՚ի 23 ամսոյ մայիսի կրկին կոչեաց Պօղոս պատրի-արք զերեւելի իշխանս նոցին, որք էին դերաղնի Գրիգոր Չէլէպին Տիւզեան, կարնեցի Մաթէոս, խոջեան Անտոն, և Թընկըրեան Յակոբ ։

Եւ ՚ի ժողովին եցոյց նոցա զգանգատանաց թուղթն, և ընթերցան զաւետալի գործոյն և զմիաբանութիւն, որք լի-նէին ՚ի Հռովմէական Հայոց ՚ի քաղաքս բազումս ։

Որոց ընթերցեալ խրատուն եսան պատրիարքին, բայց խնդրեցին երկայն խորհել, և տալ նմա զպատշաճ պատաս-խանին ։

Գնաց Պօղոս պատրիարք ՚ի գիւղն Գուրուչէշմէ ՚ի պատ-

րիարքարանն, և 'ի 15 աւուր յունիսի կոչեաց զվերոյիշեալ իշխանսն, և ստիպեաց զնոսա, զի պատրաստեսցին և գայցեն առ ինքեան պատասխանի, և նոքա խնդրեցին համբերել և տալ զմինչ վախճան աւուր, որպէս զի խորհեսցին ընդ իրեարս, և լրումն տայցեն պատասխանւոյ հարցուածոց պատրիարքին․

Յետ վախճան աւուրն կրկին հրաւիրեաց պատրիարքն զնոսա յառաջնում աւուր հոկտեմբերի, և եկին միայն Գրիգոր Չէլէպին Տիւզեան, և կարնեցի Մանթէոս աղայն, և մնացեալքն ընկերաց իւրեանց, բայց նոքա ոչ եկին, վասնորոյ և նոքա տրտնջելով զնոցանէ, խնդրեցին 'ի պատրիարքէն յառաջակայ ուրբաթի ժողով առնել, և 'ի նոյն ատենի զոր ինչ արժանն է՝ խօսիլ և տալ զպատասխանի․

Իսկ Փօղոս պատրիարք կամեցեալ յայտ առնել զայս ամենայն ազգի մերում, արար ժողով մեծ 'ի 17 հոկտեմբերի, կոչեաց զքահանայս և զիշխանս և զգլխաւոր անձինս յամենայն արհեստէ, և յայտ արարեալ նոցա զամենայն, որ ինչ մինչեւ ցայն էին խօսակցութիւնք, էառ բացարձակ հաւանութիւն 'ի ժողովոյն անօրինել զամենայն ըստ իւրում խոհեմութեան և օրհնեալ զնոսա արձակեաց զամենեսին․

Ապա յատուկ հրամանագրով իւրով կոչեաց 'ի հոկտեմբեր 23 զերկուց կողմանց իշխանաւորս 'ի պատրիարքարանն Ղուրուչէշմէի, և 'ի նմին ատենի արար զայս ատենաբանութիւն․

## ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս ատենաբանութեան Փօղոսի պատրիարքին, եւ կանոնական կոնդակի նորին․

(1817) ․ ՀՈԳԻՆ սուրբ որ է աղբիւր սիրոյ և խաղաղութեան․
« տացէ մեզ խօսիլ զհանճարս իւր, և ձեզ լսել և 'ի գործ դը-
« նել, որպէս զի բարձցի անմիութիւն և խռովութիւն 'ի պայ-
« ծառութիւն ազգիս Լուսաւորչեան․

«Մեծ ուրախութիւն է ինձ այսօր, զի տեսանեմ՝ զեկա-
«մեր ամենեցուն վառեալ բարի նախանձու ուղղափառու-
«թեան հաւատոյ և սիրոյ խաղաղութեան։

«Բայց միանգամայն և ս տրտմութիւն մեծ է ինձ այսօր,
«զի ընդէ՞ր ընդ դատ տատանողական որոմն 'ի մէջ ազգիս
«արմատացեալ, որովհետեւ հարազատ մի ազգ և մի արիւն եմք,
«միոյ մօր սուրբ եկեղեցւոյ զաւակունք՝ միով կաթամբ լու-
«սաւորչական վարդապետութեան զարգացեալք։

«Ողբամ զանձն իմ՝, զի վասն մեղաց իմոց տեսանեմ՝ զազգս
«իմ՝ բաժանեալս 'ի միմեանց, և թշնամութեան աչօք հայե-
«ցեալս առ միմեանս։

«Խնդամ՝, զի թերեւս բարձցի 'ի միջոյ վէճն գայթակղու-
«թեան, և հաստատեսցի դիւրին անկեան բաժանեալ որդւոց
«միացուցիչ սուրբ Լուսաւորչին Հօրն մեր։

«Զի՞նչ արդեօք կարծէք զարամեանս ազգ և զսուրբ ե-
«կեղեցին Հայոց, միթէ փոքր և արհամարհ՞ դատ 'ի մէջ աշ-
«խարհի, ո՛չ երբէք, քանզի առ ազգս մեր և առ սուրբ եկե-
«ղեցիս Հայոց խնամք և փառքն Աստուծոյ 'ի վեր է քան զբա-
«զում՝ ազգս, մինչեւ գոչել մեր զմարգարէականն բան, թէ
«մեծ արար Տէր զառնել իւր ընդ մեզ։

«Զի մինչ մեք էաք 'ի խաւարի և 'ի ստուերս մահու կռ-
«ապաշտութեան, ծագեաց առ մեզ լոյս ուղղափառութեան և
«արդարութեան, քանզի յարոյց Աստուած զառաջին քահա-
«նայապետն մեր զսուրբ Գրիգոր Լուսաւորիչն, և 'ի ձեռն
«նորին կանգնեցաւ խորան վկայութեան, տաճար փառացն
«Աստուծոյ, այս է՝ մայր աթոռն մեր կաթուղիկէ սուրբ Էջ-
«միածնի 'ի դաշտն Արարատեան, յոր միածին Որդին Աստու-
«ծոյ իջեալ ոսկի ուռամբ հզօր ձեռին՝ ձեւացոյց լուսով 'ի
«պարծանս ազգիս, և անխախտ պահեալ է մինչեւ ցայսօր,
«և պահէ մինչեւ 'ի կատարած աշխարհի. առ որ յարմարի և
«մեզ բան մարգարէին, թէ ոչ այսպէս արար ամենայն ազ-
«գաց այլ։

«Այժմ զի՞նչ պակաս ունիս քան զայլ քրիստոնեայս, միթէ
«լեզու ո՞չ ունիս սեպհական հնչմանց հարստացեալ։

«Գիր ո՞չ ունիս աստուածահրաշ անպակաս զարդարեալ,

«դիրք ո՛չ ունիս Աստուածաշունչ կտակարանօք և պէս պէս
«գիտութեամբք պերճացեալ, այլ ոչ ունիս հոգևոր իշ-
«խանութեամբք հաստատեալ, կենդանիս և պտղաբերք ո՛չ
«ունիս եկեղեցական ուխտիւք զարդարեալ, զիարդ թողեալ
«զեկեղեցական հովիւս և վարդապետս քո, որք Աւետարանաւն
«ծնեալ են զքեզ, գնացեալ իբր անազգի յայլս յօտար հայս,
«վասն էր ամօթի լքեալ զհացալից սեղանս հօր քոյ, իբր ա-
«վայլուկ դեգերիս առ դրունս այլոց.

«Վասն այսր հաշեալ և մաշեալ են սիրտք հարցն մերոց՝
«որ նախ քան զմեզ, և զմեծամեծ տառապանս կրեալ են
«վասն սուրբ եկեղեցւոյ պայծառութեան և ազգիս խաղա-
«ղութեան, նոյն վասնզի կայ և մեր առաջի.

«Այս քաղցր է ինձ զմահ ճաշակել, քան զազգս իմ յայս-
«պիսի դառն այլև տեսանել, և որպէս կարացից համբերել։

«Նա՛ սրտառութիւն է ինձ զայսպիսի ազգեալ՝ զոր
«եթէ լռեմ, վայ է ինձ, և եթէ խօսիմ, ոչինչ առաւելու-
«թիւն, բայց որում յաստուածայինն կոչմանէ հովիւ կարգե-
«ցայ, հանապազ հնչէ յականջս իմ ահաւորապէս ձայն աստ-
«ուածային, թէ որդի մարդոյ՝ դէտ կացուցի զքեզ տան
«Իսրայելի.

«Իսկ եթէ վասն այսր զմարմնաւորականինչ վնաս կրեցից յազ-
«գէն, և այն իսկ ուրախութիւն է ինձ, բայց որում զերծեալ
«՚ի դատապարտութենէս, ազատ դատիմ ՚ի յաւիտենական
«դատապարտութենէն, որպէս և առ Աստուած նոյն մարդա-
«րէիւն և զմիւս բանն, ապա թէ դու յառաջագոյն պատմես-
«ցես, և նոքա ոչ լուիցեն, դու զանձն քո ապրեցուցես, և
«արեան իւրեանց ինքեանք եղիցին պարտականք.

«Առ այս միւս եւս յայտնի օրինակ իմն, մեր հովուի ու-
«խարք յերկուս ճեղքեալ՝ մինչ զմիմեանս կապեն, զի՞նչ
«պարտ է հովուին առնել, արդեօք փախչի՞լ և ՚ի բաց ան-
«գիտել, եթէ ՚ի մէջ հօտին մտեալ ՚ի խաղաղութիւն հաշտել.

«Այս օրինակ այժմ և իմ առաջի կայ. ոչխարք իմ են
«յոյժ խռովեալ և աղմկեալ, թէև չափաւոր խրատուց իմոց
«առ ասն կախեցեն զիս, սակայն և այն փառք է ինձ յայս-
«պիսի ճգունս մեռանել, զի ոչ առ հանդիպոյ մարմնոյ հրա-

«ւփրեցայ յայս իշխանութիւն պատրիարքական, և 'ի վերայ
«ազգիս խոյ 'ի մէջտու և 'ի տառապանս որբեալ եմ՝ զանձն իմ:
«և չիք առ այժմ՝ քան զայս հարկաւոր, զի այս ախտ օր քան
«օրէ զօրացեալ ճարակի յազգի մերում, մինչեւ անդր մօտ
«և 'ի ճարտարութենէ բժշկաց:

«Եւ չիք քան զայս դարձեալ դժուարին, զի կարի քաջ
«արմատացեալ է, և յամենայն տեղիս սաստ արձակեալ, և որ
«առաւել զարմանալի և անհերքելի մեքենայ չարին է, զի
«զայս մեծ և զայս երկպառակութիւն հաստատեալ՝ իւրա-
«քանչիւր ոք համարի Աստուծոյ հաճոյական պաշտօն ընծայել:

«Եւ այս յիրաւի, կարի քաջ պարտական է իւրաքանչիւր
«քրիստոնեայ մինչեւ 'ի մահ մարտնչել և պահել զուղղափառ
«հաւատն, քանզի հաւատքն է գլուխ հոգւոյն, և ուղղա-
«փառութիւնն է կենդանութիւն նորին, և որպէս անդամք
«մարմնոյ 'ի գլխոյն առնուն զկենդանութիւն, և 'ի վնասել
«և 'ի բառնալ գլխոյն՝ վնասեալ և բարձեալ լինի և կենդա-
«նութիւն մարմնոյն, ուստի և անդամք մարմնոյն պարտաւոր
«են պահպանել զգլուխն և օգնել առողջութեան նորին:

«Այսպէս և իւրաքանչիւր մարդ ամենայն կարեօք՝ դա-
«խուք և աստուածայինք պարտական է եւս և ամենայն մա-
«սամբք հոգւոյ և մարմնոյ՝ պահպանել զգլուխ հոգւոյն, այ-
«սինքն զհաւատս քրիստոնէական, և զկենդանութիւն նորին
«զուղղափառութիւն, և թէ հնար է զմարմինն եւս փոխանա-
«կել, զի հոգին կեցցէ, ըստ որում հոգի առաւել է քան ըզ
«մարմին:

«Բայց ամենայն առ այժմ յայտնի ոչ է այնպէս՝ զոր կար-
«ծէքն, նա աւանիկ՝ եկ, երկոքումբք աչօք քննեա և տես,
«զի Հայաստանեայց առ ըր եկեղեցի առաջի ունի զգլուխ հոգ-
«ւոյն զուղղափառութիւն հաւատոյն, զոր 'ի առ ըր լուսաւոր-
«չէն է ընկալեալ, և 'ի սահմանի նախնեաց երից առ ըր ժողովոցն
«հաստատեալ կայ, և ոչ ինչ պակասեալ 'ի հարկաւորացն
«առ կենդանութիւն հոգւոյ. այս թուեալ ձեր զճշմարտու-
«թիւնն, և ոչ գիտելով զձեր ուղղափառութիւն, զճշմարտու-
«թիւն և զուղղափառութիւն խնդրէք, 'ի խնդիր աստուած-
«պետութեան եղեալ՝ յաստուածատեսութիւն ժամանէք:

«Ապաքէն թողեալ զայս ամենայն, զորս ոչ միայն այժմ,
«այլեւ 'ի սկզբանէ վերատեսչութեանս մինչեւ ցայժմ բազ-
«միցս խօսեալ եմք, և այժմ վերստին զնոյն հարցանեմք և ոչ
«դադարիմք 'ի խնդրելոյ զայս, թէ զի՞նչ կարծիք ունիք
«զուղղափառութենէ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս, բայց
«յայսմանէ առ այժմ չունիմք զայլ ինչ ասել ձեզ, և խնդ-
«րել 'ի ձէնջ, և յորժամ այս հարցմանս տայք զպատասխա-
«նին, յայնժամ ըստ կարգի յառաջասցի բանս մինչ 'ի նպա-
«տակ խաղաղութեան ազգիս, առ որ պատրաստական եմք հոգ-
«ւով և մարմնով ճգնիլ, մինչեւ 'ի ձեռս բերցուք, զոր միայն
«խնդրէ Աստուած յամենայն անձնէ, ըստ այնմ, չիք հնար ընդ
«Աստուծոյ ունել զխաղաղութիւն, մինչչեւ առ եղբարս զնոյն
«ուղղեալ իցեմք։

«Եւ որովհետեւ ցանկայիք 'ի միասին գալ ընդ գլխա-
«ւորս մեր, և այնպէս զպատասխանին տալ, ահա այս է այն
«ատեանն, այս է ժամանակն, յայսմ հանդիսի հրամայեցէք,
«ամենեցուն յայտնի ծանուցէք զմիտս ձեր, զոր ինչ համա-
«րում ունիք վասն սուրբ եկեղեցւոյս Հայոց»։

Յայս վերջացուցեալ զբանս իւր պատրիարքն, լռեաց։ Յայնժամ երեւելի իշխանք միւս կողման միաբան աղաղակեցին, թէ մեք եւս ճանաչեմք և ընդունիմք ընդհանուր ազգիս Հայոց զառաջին քահանայապետն մեր զսուրբ Գրիգոր Լուսաւորիչն և զսուրբ Ներսէս Շնորհալին, սոցին ուղղափառութեանն հետեւիմք, ուստի 'ի միջի բերցուք զգիտնական անձինս երկուց կողմանց, զի անաչառ սիրով քննեսցեն և ծանուսցեն զուղղափառութիւն սուրբ եկեղեցւոյս համաձայնութեամբ սուրբ դրոց հարց մերոց, որոց ամենեքեանքս համաձայնեալ հնազանդիմք պատգամաց նոցին։

Եւ առ այս իբր քսան օր միջոց խնդրեցին, որպէս զի իւրաքանչիւր կողմանք զարժանաւոր անձինս ընտրեալ 'ի պայմանեալ օրն անպատճառ 'ի միասին գասցեն, և ըստ այսց գրոց և բանից քննեալ և սահմանեալ արասցեն զարժանն, և այսպէս սիրով վճարեալ այս ժողով՝ արձակեսցին 'ի խաղաղութիւն։

Այս յերրորդում աւուր հրաւիրեաց պատրիարքն զարքեպիսկոպոսունս՝ զվարդապետս՝ և զքահանայս՝ և զգիտնական

անձինս 'ի մեր կողմանէ, և միայն խորհրդով որոշեաց ըղ պատշաճաւոր անձինս խօսել ընդ գիտնականս այնր կողման, որոց կարգ և սահման եդ ըստ պայմանի ժողովոյն՝ կանոնական կոնդակաւ խրատու, և ետ կնքել 'նոցա և ստորագրել, զի ըստ այնմ պայմանի խօսեցեալ կատարեսցեն զամենայն ինչ։

Եւ այս իսկ է օրինակ կանոնական կոնդակին պատրիարքին։

«Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Պօղոս արք եպիսկոպոս, «և շնորհիւ սուրբ Հոգւոյն վերատեսուչ և պատրիարք մեծի «մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ, յորմէ սիրով և սա-«ուածային օրհնութեամբ ծանիցուք որդեակք մեր 'ի տէր, զի «հովուապետութեան պաշտօնիս պարտաւորութիւն ստիպէ «հոգ տանել պայծառ հաստատութեան Հայաստանեայց սուրբ «եկեղեցւոյ, սիրոյն Քրիստոսի 'ի խաղաղութեան պահելով։

«Եւ քանզի յառաջ քան զաւուրս մեր 'ի ժամանակս «նախկին սրբազան պատրիարքաց, և յաւուրս պատրիարքու-«թեան մերում, 'ի բազում քաղաքաց հասանէին յականջս «մեր բողոքք և աղաղակք անլսելիք, իբր զի՝ համազգային «հարազատք՝ միոյ սուրբ աւազանի ծնունդք, և միոյ հօր «սուրբ Լուսաւորչի ժողովուրդք, ոմանք այլ ընդ այլս սո-«մանք համարին զեկեղեցիս Հայաստանեայց հեռացեալ 'ի «Լուսաւորչական հաւատոյ յուղղափառութենէ, ուստի և 'ի «դատապարտութիւն անձանց 'ի չարիս իրերաց յառաջացեալ «գտանին անհիմն հակառակութիւնք, անհաշտ խռովու-«թիւնք, ազգի ազգի վնասք և տուգանք, (և թէ մարթ է «ասել) աստուածընդդէմ հայհոյութիւնք, տանց և եկեղեց-«եաց աւերութիւնք, մինչև անողորմ մահ եղբարք եղբարց «պատճառեցին։

«Վասնորոյ և մեք ամենախնամ հայրութեամբ մերով 'ի «ջատագովութիւն ուղղափառութեան Լուսաւորչականն հա-«ւատոյս մերոյ՝ և առ 'ի բժշկել և բառնալ զայս ազգակորոյս «ժանտախտս, խորհեցաք և խօսեցաք ընդ երևելի մեծա-«բու անձինս 'ի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսի, և սիրով «հարցումն արարաք, թէ առ ինչ պատճառ այս ամենայն չա-

«րեք լինին, զի՞նչ երկբայութիւն կամ կարծիք զԼուսաւոր-
«չական հաւատոյս մերոյ ունին, զոր մինչեւ ցայսօր ան-
«խախտ պահեալ է և պահէ սուրբ եկեղեցիս Հայոց. և զայս
«բան իբր միոյ տարւոյ միջոցաւ հարցեալ, գրանաւոր պա-
«տասխանի ինչ ոչ ընկալաք։

«Այս 'ի Գուրուչէշմէ 'ի պատրիարքարանի մերում 'ի
«հոկտեմբեր 23. ժողովեալ առհասարակ զգերյարգի իշխանս
«և զերեւելի անձինս երկուց կողմանց, և 'ի նոյն հանդիսի մե-
«րըստին առաջարկեցաք զնոյն հարցումն մեր։

«Իսկ միւս կողմն յարգի երեւելիքն յայլ իմն դարձուց-
«եալ զբանն, խնդրեցին 'ի մէնջ զնոր իմն խնդիր այսպիսի,
«թէ յերկուց կողմանց խաղաղասէր խոհեմագոյն գիտունք 'ի
«միասին նստեալ 'ի ներկայութեան գերյարգի իշխանաց, ա-
«ռաջի արասցեն զսուրբ Լուսաւորչի ուսուցեալ զուղղափառ
«հաւատս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, և առ այս ամե-
«նայն ժողովն հաճեալ միաբերան խոստացան, թէ զսուրբ
«Լուսաւորչին մերոյ ուսուցեալ զհաւատս խնդրեմք, զոր ինչ
«սուրբ Լուսաւորիչ և սուրբ Ներսէս Շնորհալի հայրապետք
«մեր գրեալ են, ամենեցունցս ընդունելի են, ամենեքեանքս
«այնպէս հաւատամք, 'ի սուրբ Լուսաւորչէ բնաւին ոչ շեղիմք,
«զի այնին միջնորդութեամբ ընկալաք զուղիղ հաւատս։

«Ուստի և մեք սիրով ընկալաք զայս խնդիր բոլոր ժողո-
«վոյս, վասնորոյ և յանձնացուցաք առ այս գործ զայսոսիկ
«զանձինս։

«Արդ Երուսաղէմի նուիրակ Ծերունազարդ Մարկոս արք-
«եպիսկոպոսն, մեր որդի Կարապետ եպիսկոպոսն, Գէորգ
«վարդապետն, աթոռակալ տէր Մեսրոպն Խումարուի, ա-
«թոռակալ տէր Բարթողիմէոսն Իւսկիւտարու. Թադէոս
«վարժապետն պատրիարքարանի, և նոտարք են Դալաթիոյ
«տէր Զաքարիայն, և պատրիարքարանի տիրացու Գրիգորն։

«Որք լինիցին միայն բացայայտիչք Լուսաւորչական հա-
«ւատոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս ընդունելի գրովք,
«և ոչ ունին իշխանութիւն բնաւին զանօրէնութիւն և զար-
«տեսութիւն իմն առնելոյ։

«Այս պատրիարքական իշխանութեամբ մերով հրաման

«տուաք. զի յայտնեսցեն զսուրբ Լուսաւորչին մերոյ աւանդեալ զքրիստոնէական հաւատս զհարկաւորս փրկութեան հոգւոց, զոր անկորուստ և անխախտելի պահեալ ունի սուրբ եկեղեցիս Հայոց մինչև ցայսօր, սակայն որպէս 'ի մէջ այն ժողովոյն պայման եդաք, այնպէս պատուիրեմք գիտել, թէ ի՛նչ կերպ պարտ է խօսել, և ո՛ր գրովք ունին յայտնել.

«Կերպ և եղանակ խօսելոյ նախապէս հարկիւ պատուիրեմք համայն ժողովելոց՝ մեծաւ խոհեմութեամբ զգուշութիւն ունել ընդ առաքելական խրատուն, մի՛ բանակռիւ լինել, և մի՛ խռովեցուցանել զմիմեանս, այլ առանց երկբայութեան ճշմարտութեամբ քաղցր և աստուածային սիրով խօսել, և յայտնել զճշմարտութիւն ուղղափառութեան մերս սուրբ եկեղեցւոյ, զի և անուանն Աստուծոյ փառաւորութեան և ազգիս շինութեան լինիցի պատճառ, ըստ պայմանին սահմանելոյ 'ի ժողովին, և չունիմք բնաւին հրաման անցանել անդր քան զայս սահման.

«Գիրք բացայայտիչք ուղղափառ հաւատոյ Հայոց սուրբ եկեղեցւոյս՝ բացի Աստուածաշունչ գրոց են յառակապէս այսք. որք որոշեալ հայրապետաց մերոց սահմանադրութեամբ համապատօր պաշտին յամենայն սուրբ եկեղեցիս Հայոց, որովք խոստովանիմք զուղղափառ հաւատս մեր առաքելական և մարգարէական բանիւք հաստատեալ. և են այսքիկ. Ժամագիրքն, Շարականն, Խորհրդատետրն, Ճաշոցն, և Մաշտոցն, ընդ սոսա և գիրք սուրբ Լուսաւորչին և ընդհանրականն սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ, յայտնի գրեալ լուսաւոր մտօք հաւաքեալ զանձին բանք ուղղափառ վարդապետաց եկեղեցւոյ մերոյ հարկաւորքն 'ի փրկութիւն հոգւոց, և բաց 'ի սոցանէ չունիմք հրաման զայլ գիրս բերել, քանզի սոքա են հիմունք ուղղափառութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ.

«Այս գրոց բանք ընդունելի են ըստ միայն հեղինակին զիւրմիանց մտօք՝ նոյն բառիւք՝ ոչ աւելել և ոչ պակաս:

«Դիւրմիանց մտօք այն է, զոր բանն ըստ ինքեան առաջին իմացմանքն ցուցանէ, կամ որպէս բազում սուրբ հարք իմացեալ յառաջ բերեն 'ի գիրս իւրեանց, հարկ է և մեզ

« այնպէս ճանաչել զատոյգն, ուսոփ զմթին և զգերագանց բանս
« նոցին պարտաւորիմք առուգել վկայութեամբ սուրբ հարցն
« մերոց, որք վասն այնր պարզապէս գրեցին, և մի այժմ նո_
« րոգ մեկնութիւն տալով բանաքարել։
« Նոյն բանիւք, այսինքն մի և մի լիցի գիտնական ոճիւ
« աւելի բան ինչ իբր 'ի յայտնութիւն մուծանել, այլ նոցին
« բարբառով զնոցայն խօսիմք։
« Այս է ժողովոյն պայմանն, և այսքան է մեր այժմ աստ
« հրամանն։
« Ողջ լերուք, և հոգին ճշմարտութեան առաջնորդեսցէ
« ձեզ ամենայն ճշմարտութեամբ »։

Յամի տեառն 1817, 'ի նոյեմբեր 22
Ի պատրիարքարան ամենայն Հայոց։

Արդ 'ի կատարել պայմանադրեալ բան աւուրց՝ զոր նոքա խնդրեցին, ըստ սեպհական սովորութեան իւրեանց յանձնագու կայսին, ոչինչ բան և ըստ պատրաստութեան իւրեանց ծանու_ցանէին մերոյս կողմանս։

Իսկ պատրիարքն 'ի ձեռն Աշխատուրեան կարապետ ամի_րային ազդ արար նոցա, թէ ահա անցին պայմանեալ աւուրքն, հրամայեսցեն 'ի կատարումն գործոյ, զոր 'ի մեծահանդէս ժողովին դաշնադրեալ ուխտի յանձն առին։

Բայց նոքա վերստին խնդրեցին 'ի պատրիարքէն, զի թէ հնար է, գրով յայտնեսցեն զմիտս իւրեանց, 'ի ձեռն թղթոյ խոստովանեսցին։

Ընդ այս բանին ոչ հաճեցեալ պատրիարքին, գրեաց առ նոսա, թէ կամք իցեն ձեզ, փութաջիք գալ որ մի յառաջ 'ի կատարումն գործոյս, բայց գրութեամբ խօսելոյ լինելոյ չու_նիմ հրաման, զի ոչ կամիմ զվիճաբանութիւն, վասն զի անթիւ վիճաբանութեան գիրք մինչ ցայժմ ոչինչ զօրեցին բառնալ զերկպառակութիւն ազգիս, մի խօսեսցի գրիչ 'ի ձեռին, այլ լեզու 'ի բերանի յանդիման ամենեցուն, զի և զայս պահանջէ բան հաւատոյ համարձակ խօսել և յայտնել ունկնդրաց զճա_նաչողութիւն սրտի և մտաց։

Ընթերցեալ իշխանաց նոցին զգրութիւն պատրիարքին, և

յորդորանօք և սպառնալեօք չեղեն բաւական առաքել զկարգաւորս իւրեանց 'ի պատրիարքարանն առ 'ի յայտնել զուղղափառութիւն հաւատոյ իւրեանց, զոր պահանջէին 'ի մէնջ, ուստի եկեալ առ իշխանապետս մեր 'ի շուկայն 'ի սենեակ նոցին, սկսանէին գանգատանօք ամբաստանել զկարգաւորաց իւրեանց ասելով, թէ նոքա բնաւին ոչ կամին գալ և երևիլ առաջի ձեր, և երես առ երես խօսիլ, տէր հատուսցէ նոցա զարժանն, ուստի զոր ինչ կամի պատրիարքն առ մեզ, ասասցէ, պատրաստ եմք ասեն 'ի բանտս, 'ի գանս, և յայլ զինչ և իցէ պատիժս տառապիլ, եւ այլն.

Զայս լուեալ պատրիարքին, և զայրացեալ յոյժ ընդ արհամարհութիւն և զանցառութիւն նոցին, գրեաց առ ամենայն արհեստաւորս յերկուց կողմանց միանգամայն ժողովիլ 'ի պատրիարքարանն, և այս վերջին ժողով եղեւ 'ի դեկտեմբեր 12, որ գումարեալքն էին աւելի քան զյիսուն թուով 'ի նոցանէ յիւրաքանչիւր արհեստէ, և սկսաւ յառաջնորդութեան իւրում խօսիլ այլազգական բարբառով առ 'ի դիւրաւ իմանալ նոցին, և պատմեալ զամենայն, որ ինչ մինչեւ ցայն վայր անցեալ բանք և կոչմունք և հրաւէրք սիրոյ, սկսաւ ապա գանգատանօք խօսիլ զապստամբութենէ նոցին, և խնդրել 'ի ժողովոյն զպատասխանի.

Զոր լուեալ նոցա՝ որք էին 'ի ժողովին 'ի կողմանէ նոցին, սկսան աղաղակել միաբան և ասել. իրաւունս ունիս հայր տէր, զոր ինչ կամիս առնել ընդ նոսա, զի դու յօգուտ ազգիս փութացար մինչեւ ցարդ ուղղել և աշխատիլ, և նոքա եղծանել և խռովութեան լինել քեզ վտանգեցան և վտանկին, և բազումք 'ի նոցանէ սկսան արտասուել առաջի պատրիարքին, զոր տեսեալ մերայնոց՝ ցաւակից եղեն ընդ նոսա, և պատրիարքն օրհնեալ զնոսա, արձակեաց զամենեսին խաղաղութեամբ 'ի տեղիս իւրեանց.

Իսկ նոցա գնացեալք, և իւրաքանչիւր արհեստաւորք առանձինն ժողով արարեալք 'ի տեղիս իւրեանց, պատմէին մի առ մի զամենայն զոր լուանն 'ի պատրիարքէն, և յորդորելով զմիմեանս՝ ժողովին աւելի քան զերեք հարիւր հոգիս 'ի Բերա ժողովրդութեան եկեղեցւոյն Լատինացւոց, և կոչեն անդ ըզ

կարգաւորս իւրեանց, զի խօսեսցին և հարցցեն զնոսա, թէ ո՞յր փախուստ տան 'ի գնալոյ և վասն 'ի խօսելոյ ընդ դիտնականն վարդապետացն Հայոց.

Բայց 'ի սադրելոյ կարգաւորացն սպասաւորք և քահանայք եկեղեցւոյն արտաքս վանեն զնոսա բռնութեամբ և գանիւ, ասելով. թէ այս եկեղեցի է Լատինացւոց, և չէ ձեզ անդի գումարելոյ և խորհուրդ առնելոյ.

Եւ նոքա պատասխանի տան աղաղակելով, և ասեն, թէ յորժամ' նուէրս պահանջէք 'ի մէնջ, եկեղեցին ձեր է ասէք, և 'ի պահանջել հարկին խորհուրդ առնելոյ' արտաքս վանէք զմեզ յեկեղեցւոյ. զի՞նչ այս քրիստոնէութիւն, ո՞րպիսի հովւութիւն, և զի՞նչ անիրաւ դրկողութիւն է զոր առնէք ընդ մեզ։

Եւ քանզի բազմութիւն ժողովրդեան մեայ արտաքս եկեղեցւոյն, և անձրեւն ներգէր զնոսա առ ժամն, անճարացեալ նոցա գնան 'ի տուն պարոն Աթանասի դրագրին Տիւզեանց, և 'ի նորա տանն գումարեալք տան բերել անդր զկարգաւորս իւրեանց քառասնիւ չափ, և սկսանի ժողովն աղաղակել և ասել. ո՞չ ապաքէն դուք էք, որք զօր ամենայն նախատինս ծանունս դնելով 'ի վերայ ազգին Հայոց, պախարակէիք զնոսա, և հերձուածողս և հերետիկոսս ճանաչել զնոսա հրամայէիք մեզ, և ահա կոչէ զձեզ ազգն ոչ իշխանութեամբ և բարկութեամբ, այլ սիրով և հանդարտութեամբ, ընդէ՞ր ոչ երթայք առաջացանել, զի յայտնի արասջիք զճշմարտութիւնն, ո՞չ ապաքէն և պաշտամանց ձերոց պայման զայս պահանջէ, զի և մահ կացցէ ձեր առաջի, չէ պարտ ձեզ խուսափել, այլ զմահ յանձն առնուլ վասն հաւատոյն Քրիստոսի.

Արդ' ահա չիք մահ և ոչ երկիւղ ինչ, այլ սէրն Քրիստոսի կոչէ զձեզ. ընդէ՞ր զանգիտէք, մեք աշխարհական մարդիկ եմք, և որդւոց և ընտանեաց տէր, և ոչ կարեմք 'ի պատճառս ձեր անկանել 'ի փորձութիւնս և 'ի տուգանս, զայս և որ այցին նման են բանք, խօսին ժողովուրդք ընդդէմ կարգաւորաց իւրեանց, և անհնարին պատմութեամբ երանեն և գնան 'ի տունս իւրեանց.

Իսկ նոցա սփացեալ ընդ այս սատանայական քինու, և վրէժս առնուլ կամեցեալ 'ի Հայոց, 'ի ձեռն չարադրքեա և

քու որանց Թիկնապահից ի բերանց Լատին քահանայից, ամ-
բաստան լինելն զայդ էս մերժէ առ փոխանորդն խաբուսան
փաշայն, որպէս թէ ժողով արարեալ Հայոց կոխեցին եկեղե-
ցեցին Լատինացւոց, և առաջադրեալ են նոււ. կոխել զպա-
տաս դեսպանին յայսմ գիշերի.

Եւ նորա հաւատացեալ, բազմութեամբ զօրաց իւրոց գայ
'ի նմին գիշերի, և յանկարծուստ մտանէ 'ի սուրբ Երրորդու-
թեան եկեղեցին մեր 'ի Բերա, որպէս թէ անդ գումարեալ
իցեն Հայք.

Եւ ոչ զոք գտեալ, այր անդր հարցափորձ առնէ, և
գնէ, զի սուտ են բանք նոցին բոլորովին, և զուր զրպար-
տութիւն, դառնայ 'ի տեղի իւր զայրացեալ.

Լուեալ զայս խարդախութիւն նոցին պատրիարքին, և ժո-
ղով արարեալ ընդ իշխանաց ազգին, վճռեցին լռել առ ժամս,
և չխօսել ինչ, այլում ժամանակի թողեալ զկարեւոր զայս
գործ սիրոյ և միաբանութեան, և մնաց այսպէս անկատար,
որ ամենեցուն փափաքելին էր տեսանել մտերմոյ աչօք զկա-
տարումն այսր աստուածահաճոյ փափաքմանս և գործա-
նութեան.

## ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս գործոց Պօղոսի պատրիարքին.

Օրէն էր 'ի կոստանդնուպօլիս, զի 'ի փոխճանել ծխա-
ւէր քահանայի միում, ժողովուրդք նորին դրուէին յիրա-
ւունս պատրիարքին, որ վճռէր զնոսա այլում քահանայի,
և պարտիք այն փոխճանեալ քահանայքն մնային 'ի վերայ ժող-
ւոց և ընտանեաց նորին, որք անպատմելի խեղճութեամբ
տուայտէին 'ի ներքոյ այնց պարտուց անհնարին տառապանօք.

Ի խօսել վասն այսր Պօղոսի պատրիարքին ընդ Մարտիրոս
քահանայի ուրուք ամօք ինչ յառաջ քան զնստիլ իւր յաթու

պատրիարքութեան, խոստանալ ձեռագրով իւրով, զի եթէ Տէր յաջողեսցէ լինել նորեան պատրիարք, բարձցէ զայս անիրաւ սովորութիւն 'ի կոստանդնուպօլսոյ, այնպէս զի ժողովուրդք փոխանակ քահանային փառաւորեսցին 'ի մէջ քահանայից, և դրամքն տացին որդւոց և ընտանեաց փոխանակելոյն, որով և նոքին մի՛ լիցին ողորմելիք և տառապեալք 'ի ներքոյ ծանր պարտուց:

Զայս ձեռագիր Պօղոսի առեալ տէր Մարտիրոս քահանայ, հաւաքեաց յամենայն եկեղեցիս, որք ուրախացեալք անպատմելի խնդութեամբ սկսան գովաբանել զՊօղոս եպիսկոպոս, և պարսաւել զԱբրահամ պատրիարք պէսպէս մեղադրութեամբ փառուց և բարուց:

Եւ մինչ յաջողեաց Աբրահամու ընկեցիկ լինել յաթոռոյն, և Պօղոսի ընտրել պատրիարք, 'ի նմին ժողովի ուր իշխանապետք ազգիս հաւաքեալ ընտրել կամէին պատրիարք զմի ոք յեպիսկոպոսաց, քահանայք միաբերան աղաղակեցին ասելով, թէ զՊօղոս եպիսկոպոսն Անդրիանուպօլսեցի զփոխանորդն սրբոյ Երուսաղէմի խնդրեմք մեզ լինել պատրիարք, զի է այր շահեցող և խոհական և իրաւասէր:

Զոր լուեալ որոց ժողովեալքն էին յայն ատեան, որք և ինքեանք 'ի նոյն միտս էին, գիրաւ յաջողեցաւ նոցա ընտրել զնա առանց երկպառակութեան, և կնքեցին ամենեքին ընդունել զնա պատրիարք:

(1819) Առ յետ չորից ամաց պատրիարքութեան նորա, իբրև փոխանակեցաւ քահանայ մի 'ի Պալատ տէր Գէորգ անուն, և ժողովուրդք նորին գրաւեցան 'ի պատրիարքէն ըստ առաջնոյ սովորութեանն, եկեալ տէր Մարտիրոս քահանայ անձամբ անձին առ Պօղոս պատրիարք, յիշեցոյց նմա զուխտ իւր և զձեռագիր, որ ոչ կատարեաց զխոստումն իւր, զոր ուխտեաց ձեռագրով իւրով:

Լուեալ զայս Պօղոսի պատրիարքին, և պատասխանի տուեալ նմա, ասէ, զոր ինչ տեսի և գտի յառաջնոց պատրիարքաց, ոչ կարեմ փոփոխել, եթէ իրաւացի և եթէ անիրաւ: Տէր հատուսցէ, որոց սահմանեալք են զայս սովորութիւն:

Այս բան տարածեալ 'ի մէջ քահանայից, զզջացին ամենեքին, որք աղաղակեցին և խնդրեցին զճշմարտութիւն նորա, և սկսան թշնամանել նմա և պարսաւել. և ոմանք 'ի նոցանէ անխոհեմութեամբ ձեռն 'ի գործ արկեալ, ետուն առ արքայ գգիր աղերսանաց, յորում գրեալ էին, թէ Պօղոս պատրիարք մեր և Այնտաուրեան կարապետ գլխաւորն հաստախճառաց՝ երկոքին այսուքիկ կեղեքեն զմեզ և զժողովուրդս մեր, զերծո՛ զմեզ տէր արքայ՝ 'ի բռնակալութենէ սոցին.

Ընթերցեալ արքայի զայս գիր, յանձն արար մեծի եպարգոսին ստուգել յայդէն զայս մեղապարտութիւն նոցին.

Եւ հրամանաւ նորին եղև ժողով մեծ 'ի Պատրիարքարանին, և յայնմ ժողովի գլացաւ Պօղոս պատրիարք զձեռագիր իւր, զոր տուեալ էր յառաջ քան զնստիլ իւր յաթոռ պատրիարքութեան, և գեղեցիկ ատենախօսութեամբ իւրով որսաց զամենեսին 'ի կողմն իւր.

Յայնժամ ժողով իշխանաց միաբան հաւանութեամբ վճռեցին մեղապարտ լինել քահանայիցն, և ծանուցեալ 'ի դուռն արքունի, աքսորեցին զտէր Զաքարիա Պէյօղլուի, զտէր Վրդանէս Խումբարուի, զտէր Սահակ Սամաթիոյ, զտէր Պաղտասար և զտէր Միքայէլ քահանայսն Գալատու, և զամենայն չարամախոհս նոցին արգելին 'ի քահանայագործութենէն զաւուրս երկուսն, զի ապաշխարեսցեն.

Բայց յետ ամսոյ ինչ դարձան ամենեքին 'ի տեղիս իւրեանց, և մնաց այն առաջին ատելութիւն յաւուրս պատրիարքութեան Պօղոսի, և ոչ փոխեցաւ ինչ.

Ի նմին ամի առաջնորդն Թրակիոյ Տէրունի Յակոբ եպիսկոպոսն վախճանեցաւ իբրև հարիւր և քսան ամաց. և եդաւ 'ի տեղի նորին Առաքել վարդապետ մէջին պատրիարքարանի. իսկ մէջին պատրիարքին եղև Յակոբ եպիսկոպոսն Աջէմէրցի 'ի միաբանութենէն սրբոյ Երուսաղէմի, որ յետ ժամանակաց խառնեցաւ յաղանդս Լուտերականաց, և եղև [illegible] Անգղիացւոց յԱսկաղոն քաղաքի.

# ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս ապստամբութեան Ռուբինեան Հայազգեաց, եւ մահուամբ վախճանի տեառն Կիրակոսի կաթողիկոսին Սսոյ.

---

(1819) Զայսու ժամանակաւ Ռուբինեցիք՝ որք էին ազգաւ Հայ, եւ քաջամարտք 'ի մրցմունս արիական պատերազմաց, կտրիճք, եւ հիրթք յաշտանակել 'ի ձի, եւ 'ի ձգել դէպ աղեղ 'ի նպատակն զհրացանս եւ զատրճանակս.

Սորա 'ի վաղ ժամանակաց հետէ սովորեալք յապստամբութիւն, 'ի սմին ամի բողոքմամբ 'ի բաց քերեցին յանձանց իւրեանց զհպատակութիւն արքայի, եւ զարքունի հարկն՝ որ պարտ էր նոցա ամ՝ յամէ հատուցանել արքայի ընդ ամենայն զխաթուն հազար դահեկան ըստ վաղեմի սովորութեան, որ եւ բաղդատելով ըստ այժմեան սովորական հարկին, ոչինչ ինչ է.

Իսկ նոքա սիրելով զապստամբութիւն եւ զինքնագլուխ հասարակապետութիւն իւրեանց, եւ յիշելով զվաղեմի թագաւորական ազատութիւն իւրեանց, մանաւանդ զի եւ գաւառ նոցին լինելով անդի անառիկ եւ դժուարամատչելի, ընդ ափափոյ նեղ եւ անձուկ ճանապարհս քարաժայռ լերանց սեպացելոց յամենայն կուսէ. եւ 'ի գագաթ լերանցն դաշտ ընդարձակ եւ բազմաբերքուն արգասեօք ցորենոյ եւ գարւոյ եւ այլոց պիտանեաց, ապաստանեալք սոքա յանառիկ դիրս երկրի իւրեանց, եւ 'ի քաջամարտ կորովութիւն անձանց իւրեանց, վստահացեալ բնածին իւր զօրութեամբ, եւ սկսան չտալ արքայի յայնմհետէ զսովորական հարկ իւրեանց.

Յառաջ քան զամս ութ, տէր Կիրակոս կաթողիկոս Սսոյ՝ առեալ հրաման յարքունի դրանէ, նորոգեաց զկաթողիկոսարանն իւր եւ զմեծ եկեղեցին յանուն սրբոյն Սոփիայ, այն է՝ իմաստութիւն որդւոյն Աստուծոյ, եւ քակեալ զհին չէնն, կանգնեաց նորոգ 'ի հիմանց. եւ զշրջապատ նորին բարձր պարսպապատ ամրացուցեալ, սքանչելապէս յօրինեաց ըստ նմանութեան սրբոյ Էջմիածնի.

Զայս գործ նորոգութեան կաթողիկոսարանին և եկեղեցւոյն առիթ գտեալ մեծանուն բդեշխին Բերիոյ, գրեաց ամբաստանութիւն առ արքայ, թէ կաթողիկոսն Սսոյ մտադրէ, և ահա այս ուժ առ է, զի պատրուակաւ շինութեան վանից կառուցանէ զամրոց մեծ ՚ի Սիս, աշտարակս անմատչելիս և բրգունս բարձրաբերձս ՚ի նմին հաստատեալ, և զՀայկազուն բնակիչս Զէյթուն քաղաքի՝ որք անդստին թելն ածեն ընդդէմ արքայի, գնացեալ միաբանեաց ընդ իւր, և զՀամազգիս իւր՝ որ ՚ի Կիլիկիա, յինքն յանկուցեալ հանդերձեալ է փախչել, և եթէ ոչ փութափութակի կարճեսցի ՚ի կենաց, աշխարհէ զմեզ սպառնարարիւ.

Ընթերցեալ զայս արքայի, գրեաց հրովարտակ առ բդեշխն Գերմանիկ քաղաքի, փութանակի ունել զկաթողիկոսն Սսոյ հնարիւք իմն, և անհրաժեշտ մահու առնել բառնալ զնա ՚ի կենաց, և զաթոռն ուր հին յարկաւ աւերանել իբրեւ ամրոց ապստամբաց, և զքաղաքն Զէյթուն ամենայն բնակչօքն հանդերձ մատնել ՚ի սուր և ՚ի գերութիւն.

Զայս ամենայն ոչ գիտելով երբէք երանելի կաթողիկոսն Տէր Կիրակոս, այն ինչ ՚ի պէտս նորոգմանց շրջէր անխափան յայնսիկ կողմանս, այլ առեալ բդեշխին, առաքեաց պաշտօն, և կոչեալ առ ինքն, ծանոյց նմա զհրամանն արքունի.

Լուեալ զայս երանելւոյն, յոգւոց եհան, արտասուելով. և միամտութեամբ սրտի իւրոյ և հաստատ վկայութեամբ արդարահաստատ սրտիւ՝ եցոյց զիւրն անմեղութիւն, մի՞ զի ոչ աշտարակ անմատչելի և ոչ բրգունս բարձրաբերձս շինեալ էր, այլ միայն զվանս իւր և զեկեղեցին նորոգեալ, և այն հրովարտակաւ արքայի.

Եւ երկրորդ՝ զի չէ երբէք համամիտ և միախորհուրդ ընդ Զէյթունցւոց, այլ հաւատարիմ հպատակ ծառայ արքայի՝ իրով իսկ համօրէն մեծակաւն.

Եւ այսպէս բազում բանիւք աղաչանաց և միջնորդութեամբ բարեկամաց առեալ նմա ՚ի ծածուկ զամենայն՝ զոր ունէր առ ինքն զոսկի և զարծաթ, և զհանդերձս պատուականս, և զայլ եւս բազում արծաթ, զոր շատոյ տագնապաւ ՚ի հաւատացելոց բնակչաց քաղաքին ժողովեաց, հազիւ հազ

կարաց հանել զնա, զի գրեաց վասն այսր 'ի դուռն արքունի զանմեղութիւնէ իւրմէ, և մինչեւ 'ի դարձ պատասխանւոյ նորին սպասեաց, և եթէ չիցէ հրաման յարքունուստ վասն ազատութեան իւրոյ, յայնժամ սպանցէ զինքն չարաչար.

Եւ յայսմ միջոցի ժամ՝ դառնալ երանելւոյն, ծանոյց գրով առ իշխանաւորս ազգին 'ի Կոստանդնուպօլիս, զի դարման ինչ աղետիցս գտանել մարթասցին, ոչ վասն անձին իւրոյ ազատութեան, զոր յօժար էր զոհել ընդ քաջ հովուին պատկերի վասն փրկութեան հօտին, որոց պարգեւեալն էր տեառն 'ի յԱստուծոյ, այլ մանաւանդ վասն որոց աթոռոյն՝ որ հանդերձեալ էր կործանիլ իսպառ, և վասն բիւրաւոր բազմութեան հաւատացելոց, որք մատնելոց էին 'ի կերակուր սրոյ.

Փութանակի հասեալ մահաշունչ լրոյ ապաժոյժ աղետիցս 'ի Կոստանդնուպօլիս, հանդերձ գրովք երանելւոյն, ապշութիւն կալաւ զիշխանաւորս ազգին, և բարեջան փութով Պօղոսի պատրիարքին՝ ջերմանակ հնարից ազատութեան նորին և բազմութեան հաւատացելոց 'ի խնդիր եղեն գտանել.

Ապա էր տեսանել զգթութիւնն Աստուծոյ և զառատ մարդասիրութիւն նորա, զի որ ոչ ննջէ պահապանն իսրայելի Ամենատեսն, զթութեամբ հայեցաւ 'ի մեղուցեալս ժողովրդեան իւրոյ, և զերծոյց զնոսա 'ի մահաբեր վտանգէն.

Զի ինքն իսկ Գրիգոր Զէյնայի Տիւղեան եղեալ 'ի ժողովոյ պատրիարքարանին յորում խորհեցան ամենեքին երթալ առ մի մի 'ի նախարարացն արքայի, դնոյ և ինքն 'ի պալատն արքայի, և բազմօք աղաչաւորութեամբ վկայեալ զանմեղութիւն կաթողիկոսին և զսուտ ամբաստանութեան թշնամեաց, զիջոց զբարկութիւն արքայի, այնպէս և այլք ումանք յիշխանաւորաց ազգին, քաղցրացուցին զսիրտ առաջնորդացն արքունի, ինքեանք ազդմամբ երաշխաւոր լինելով վասն անմեղութեան նորին հանդերձ պատրիարքաւն Պօղոսիւ.

Ուստի և հրամանաւ արքայի առաքեցաւ հրովարտակ յարքունուստ դրանէ 'ի Գերմանիկ քաղաք, և ածին զկաթողիկոսն 'ի Կոստանդնուպօլիս, և տարեալ առ Բէյլիգ էֆէնտին և առ փոխանորդն եպարքոսին՝ և առ այլ մեծամեծս, հարցին քննեցին զայնր ամենայնէ, զորմէ լուեալն էին, և ծանուցեալ՝ և

ստուգեալ զանմեղութիւն նորին առաքելցն առ պատրիարքարանն կալ մնալ առ ժամանակ մի՝ յուսադրելով զնա ազատիլ 'ի վտանգէս, և առնուլ զհրովարտակ ներողութեան, և դառնալ անդրէն 'ի Կիլիկիա.

Յետ աւուրց ինչ կոչեալ վերստին 'ի դուռն արքունի, հրամանաւ արքային յորդորեցին զկաթողիկոսն աւագորեարն արքային, զի ինքն ամ՝ յամէ հատուսցէ տէրութեանն զհարկն Ջէյթունցւոց յիսուն հազար դահեկան, և ինքն ժողովեսցէ և տացէ 'ի նոցանէ.

Իսկ պատասխանի կաթողիկոսն և ասէ. Նոքա արք ապստամբք են և ոչ հնազանդ ինձ. ոչ տէրութեան հրամանի ձերոյ և ոչ խնամս անազգութեան, ոչ կարեմ՝ զայդ առնել, և ոչ վասն նոցա հատուցանել ինչ.

Յայնժամ ասեն աւագորեարն, մեք հաճեսցուք զարքայ, և քսան հազար դահեկան ամ՝ յամէ հատոյ վասն նոցա զկարձս հարկի նոցա.

Իսկ կաթողիկոսն, և ոչ մի դրամ՝ վասն այնց ապստամբաց յանձն առնուլ՝ տալ արքային. Եւ զիմ՝ և զինչ վճռակի հայրատակաց քոց՝ ամ՝ յամէ հատուցանեմ՝ տէրութեան ձեռամ՝ քո պահանջեալ հարկն արքային. որպէս և հատուցեալ եմ՝ մինչեւ ցայսօր. և վասն նոցա և ոչ մի փող կարեմ՝ հատուցանել.

Լուեալ զայս ամենայն մեծամեծայն արքային՝ և իրաւացի կշռեալ զբանս նորին, գրեցին առ արքայ զամենայն, և ընկալեալ յարքայէ զհրաման, ետուն հրովարտակ ներողութեան, զի դարձցի անխռով յաթոռ իւր.

Յայնժամ եղեւ ուրախութիւն մեծ ազգին, և կամեցան, զի ժամանակ ինչ մնասցէ երանելին աստ 'ի Կոստանդնուպօլիս, և յամենայն եկեղեցիս պատարագեսցէ և օրհնեսցէ, և ապա դառնասցէ յաթոռ իւր. և վասն այսր արգելին զնա 'ի գնալոյ, և մնաց աստ 'ի Կոստանդնուպօլիս.

# ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս կործանման տանն Տիւզեանց, եւ բանի միաբանութեան Հայոց ընդ Հռոմէական Հայս.

---

(1819) Ի սմին ամի յամսեանն օգոստոսի 29 չարաչար և աղետալի դիպուած պատահեաց մեզ.

Քանզի հայրենատէր ազնուականքն Տիւզեան՝ որք 'ի նախ-նեաց 'ի յաջորդս տանժի իւրեանց հրովարտակաւ մեծազօր թագաւորաց Օսմանեան՝ ստացեալ էին զարքունի փողե-րանոցին գործակալութիւն, այժմ 'ի դրդմանէ Հալէթ էֆէնտի անուն ոխերիմ թշնամւոյ քրիստոնէից, իբրեւ բազմագումար դրամոց պարտապանս և անհաւատարիմս 'ի գանձն արքային՝ եղան 'ի բանտի 'ի սալ դհաշիւ.

Երեւելի իշխանք ազգիս ոչ միաբանութեամբ գնեցան 'ի պաշտպանութիւն պանծալի տանն այնորիկ՝ կալով առ ան-րութեամն երաշխաւոր պարտուց նոցա, զոր դիւրաւ կարէին վճարել, եթէ եղանէին 'ի բանաւ այնու առերանց պաշտպանքն

Վասնորոյ նախարարք թագաւորին գնացին 'ի տունս նոցա և ամենայն մերձաւորաց նոցին, և զինչս և զստացուածս նոցա եւտուն յաճուրդ հանել վաճառել, և զպարտիս նոցա լնուլ 'ի գանձն արքունի.

Եւ ահա անսին 'ի տունս ամենեցուն նոցա յատուկ սեն-եակս պատարագամատոյց խորանի, որ դէմ ընդդէմ ներհակ է կրօնից Տաճկաց, և մեծապատիւ կացուցանէ իբրեւ զհայհո-յիչս դենի իւրեանց՝ որ առանց հրամանի եկեղեցիս կառու-ցանէ.

Վասնորոյ զզգեստս պատարագի և զպատկերս և զայլ ա-նօթս սրբութեան՝ զորս գտին անդ, զամենեսին առաքեցին առ պատրիարքն մեր, որք էին եօթն բեռինս:

Եւ պատուիրեցին իբրեւ 'ի դէն նոցա հաւաքել 'ի Հռոմ-մէական Հայ ժողովրդոց հազար քսակի դահեկանս, և տալ 'ի փողերանոցն արքունի, և նա արար.

Եւ 'ի հոկտեմբեր 4. յաւուր տօնախմբութեան եօթանասուն երկու աշակերտացն Քրիստոսի, երեք եղբարքն բարեպաշտօնք Գրիգոր, և Սարգիս՝ գլխատեցան առաջի մեծի գրան արքունի պալատին, և միւս եղբայրն Միքայէլ և հօրեղբօրորդի նոցա Մկրտիչ, կախեցան 'ի պատուհանէ ծակեջերեալ յարկի իւրեանց յՃենիգիւղ.

Ողբաց ազգն համօրէն ընդ մահ պայազատացս, այլ 'ի Գանձկլի 'ի տան Աստանի Տաղաւտեան խնջոյս կազմէին Թընկըրեան Յակոբ և Յովսէփ, Գըլճեան Գրիգոր և այլ հարազատքն Գոլէճեան քահանայից ընդ մահ պաշտպանաց Աբրաեան ուխտին.

Իսկ մնացեալ երեքին եղբարք նոցա Կարապետ և Յակոբ և Գէորգ՝ աքսորեցան 'ի Կեսարիա, և Ալէքսանեան Յովհաննէս քեռայրն Տիւզեանց և երեք եղբարք նորա 'ի Նիկոմէ. Ջանճեան Յովսէփ 'ի Մխիթլի գեղին, Մարիանէ կին հօրեղբօր Տիւզեանց՝ հանդերձ որդւով իւրով 'ի Սոանքեօյ. Աղնաւորեան երեք եղբարք յԿիլիկիա, և Քիւչիւկ Յովհաննէս 'ի Ճորում. Թընկըրեան Յարութիւն և Աթանաս 'ի Կիպրոս, և հայր Ստեփանոս վարդապետն՝ որ գտաւ 'ի նմին գիշերի 'ի տանն Տիւզեանց, աքսորեցաւ յԿիլիկիա.

Բայց պատրուակն գաղտնի, և ակն յայտնի ծանուցաւ տէրութեանն, թէ անձնիւր Հռովմէական Հայք ունին 'ի տունս իւրեանց գեկեղեցիս, և չեն ընդ Հայս միաբան.

Ուստի սաստիկ հրաման առաքեաց առ պատրիարքն մեր բառնալ զայս բաժանումն, զի մի է, մեզ ասէ, ծանօթ ազգն ողջոյն, և զոր անհնազանդ գտանիցէ նոքեան՝ ծանուցանել 'ի դուռն.

Արդ արքունի ճարտարապետ Գրիգոր աղա, և Պէզճեան Յարութիւն աղա, որ առաջնորդութեամբ Գրիգոր աղային յաջորդեաց զտեղի Տիւզեանց 'ի փոխերանոցն, որք անդուգական սիրելիք էին մեծաց, և միախորհուրդ և միասիրտ գըտան յայս գործ եւս.

Քաջ խելամուտ էին անցից և միտաց երկուց կողմանց և գիտէին, թէ բանակռուութիւն հոլովայ և առաջնորդայ է, 'ի Չգալըղանիս դառնալ միակ հօտին Քրիստոսի 'ի միմեանց

հաղորդակցութեանց խորշեցուցանէ. վասն որոյ փոյթ կալան ազգասէր բարոյիւք և երկիւղած սրտիւք յեկեղեցւոյն Քրիստոսի զերկպառակութիւնն բառնալ։

Եւ նախ Թախանձէին զպատրիարքն մեծի մայրաքաղաքին՝ զԳօզոս արքեպիսկոպոսն քաջախորհուրդ, զի հովուական ցաւոյն յուշիկ 'ի բաց խոտեսցեն զհետ ընթացի, մեղմացն սալեսցէ, 'ի չրթունս բարբառեսցի, որինդ հարկանիցէ, դարձուցանել զնոսա 'ի հօտ խաչանց իւրոց։

Արդարեւ Բոլոփան՝ արքայ խոստապարանոց դասու առ ժողովուրդն 'ի հնումն, և զի՞նչ օգուտ գործեաց Թագաւորութեան իւրոյ և հասարակութեան։

Եւ որ 'ի նորումս դաւադան երկաթի ատին 'ի ձեռին, և փայլատակեցան կայծակնացայս բարկութեամբ 'ի վերայ ժողովրդոց, արդեօք ամբողջութեան հայրենի ազգին նպատամատոյց դատն, ոչ ընաւ. զի ոչ միայն զդրուեալն խաղավարանեցին, այլև զժողովեալն մոլորեցուցին։

Արդ վերջիշեալ արքունի ճարտարապետ Գրիգոր աղա և Յարութիւն աղա Պէզճեան իշխանքս հայրենասէրք, խորհրդակից ինքեանց գտին և զՃանիկ աղա հաստափանառ եպարդոսին, և զՃանի Յովհաննէս, և զՅարութիւն աղա, և ըզ Յակոբ աղա Մանուկեան, այլև առատութեամբ բանից բոպառնացան Ամնուրեան Նարապետ աղայի՝ որ էր հաստվաճառաց վերակացու և համախոհ պատրիարքին, զի անխարդախ լիցի 'ի բանս, և 'ի գլխաւորել զազգային միաբանութիւնս ամենայն հաւատարմութեամբ անօրինեսցէ։

Ի սոյն միտս և 'ի խորհուրդ բազումք 'ի բարեսիրաց ազգիս վառեալ էին բարենախանձ փութով։

Եւ որք 'ի նոյն առ անդխաութեան առելութեամբ բերէին, միայորդոր յօժարութեամբ կամակից եղեն և նոքա. վասն որոյ յամենեսին 'ի նոսա պատուղ հոգւոյն, սէր խնդութիւն և խաղաղութիւն Թագաւորէր, և արդարեւ չարեաց մահաբերին՝ ատելութիւն և Թշնամանք այլովքն հանդերձ անեղի եառան։

Բայց ես դարձայց 'ի կանխագրեալ տեղեկութիւն զաւրտուցելոցն 'ի մէնջ վարդապետաց բաժանմանէ 'ի կարգս և 'ի

կրօնս, որք կարեւորագոյն են յառաջիկայ պատմութեանս հետամտելոյ խնդրոյս.

Առաջին երեւելիքն են Գողէճեանք, որք ունին դպրոցս 'ի Համիդ, որ 'ի լեզու Լատինաց Գալէճ անուանի, ուր գնացեալք մանկունք ունինք հայկականք, ուսանին գիր 'ի վերայ գիտելիս ինչ բարբառոյն Հայոց և Համիդեցւոց. և ձեռնագրեալ կուսակրօն քահանայ՝ առնուն հրաման քարոզութեան, և գնան աստ և այլուր, և առքա անուանին Ցէր.

Երկրորդն են Դրեւատեանք, որոց վանքն է այժմ 'ի Վիէննա, և առաջնորդ նորին էր Ջագաւոր անուն ոմն, որ յաղագս խաղաղոյ բարուց իւրոց բաժանեցաւ 'ի խաղաղասէր միաբանութենէ Մխիթարեան, և գնացեալ 'ի Համիդ, եղեւ եպիսկոպոս 'ի վերայ վիճակին Էջմիածնի, և ունի աստ զանձս 'ի միաբանից իւրոց, որք Վարդապետ անուանին.

Երրորդն են Լիբանանեանք, քանզի անդ ունին մենաստանս, ուր նոսի ումն կաթողիկոս անուանի, և կարմիր կնքով կաթողիկէք անուանն իւրոյ՝ առաքէ կոնդակս 'ի վիճակս իւր, որք են Բերիա, և Եւդոկիա, եւ այլն.

Նա ու ունի աստ միաբանս, որ Հայր անուանին, և ճրդնաւոր անուանի պարոնին.

Արդ այս երեք միաբանութիւնքս միմեանց հակառակ գոլով, և 'ի խռովութեան մի քան զմի առաւելեալք, առ հասարակ Գողէճեանք անուանին աստանօր.

Որք յազգէս Հայոց ելեալ են, և յարաժամ զօղանջեն 'ի վերայ ազգիս.

Ցգէս են կարեւոր ունանց, այլ պարծին յաչս պարզամիտ հետեւողաց իւրեանց լինել աստուածաբանք.

Այս են ուսուցմունք նոցա, թէ Հայք հերետիկոս են և հերձուածող, ոչ հնազանդ են Պապին, ուստի արտաքոյ են 'ի փրկութենէ հոգւոյ.

Եւ այսպիսի բանիւք զարհուրեցուցեալ զուամիկս մեր, հեռանեն յազգիս միութենէ.

Վասն որոյ երեւելի և բազմաթիւ ժողովրդովք մեծացեալ են, որոց մեծ մասն Գաղատացիք են.

Արդ Գողէճեան կարգաւորաց գլուխ նախ աստ 'ի Բերա

ումն հայկազուն եպիսկոպոս, զոր Հայ բարբառով Գերապայծառ կոչեն. և Լատին բառն վիքար, այն է մերձիլ կամ փոխանորդ, և ձեռնադրէ քահանայս 'ի սան խրամ՝ առեալ հաւանութիւն 'ի Լատին եպիսկոպոսէն որ է երեսփոխան հայրապետին Հռոմայ։

## ԳԼՈՒԽ ԻԲ.

*Յաղագս ջատագովութեան Արքայեան հարց եկեղեցւոյն Հայոց։*

(1819) Եւ այլ մի ևս կարգ անուանեալ Մխիթարեան միաբանութիւն քաջածանօթ բոլոր Եւրոպիոյ, որք ունին 'ի վենետիկ վանս մեծամեծ և երևելի, բարեկարգ և բարեկրօն։

Եւ նորին միաբանք ոչ սակաւ քան զհարիւր, որք Հայր անուանին և զանազան գիտութեամբ պերճացեալ են, լեզուագէտք և բարեհանճարք, որք 'ի պայծառութիւն հայրենի ազգին անդադար աշխատասիրեն թարգմանութեամբք մատենից, և ինքնահնար հեղինակութեամբ և տպագրութեամբ բազմապատիկ գրեանց։

Սոքա նախանձախնդիր էին հնաւանդ սովորութեանց և ողջամիտ աւանդածոց նախնի սրբոց հարց Հայաստանեայց եկեղեցւոյ, և որոց օտարաձայն գտանին 'ի բանահետ շաւղաց նոցա՝ բանիւ և գրով հակառակէին, որպէս յայտ է՝ որոց բարեսէր մտօք արձակին յընթերցանութիւն տպագրեալ մատենից նոցա։

Եւս առաւել՝ եթէ հանդիպեալ իցեն վահանին հաւատոյ, (որոյ համառօտեալն միայն գտանի առ մեզ՝ հնարիւք պէզճեան Յարութիւն աղային անցեալ 'ի ձեռս մեր ամօք ինչ յառաջ) որ առաւել տեղեկագոյն կացուցանէ զբարեսէր մերծանողս Արքայեան հարց գովելի մտաց։

Գտանէին 'ի մայրաքաղաքիս իբրև քսան վարդապետք 'ի

միաբանից այսր փոխոց, և ունէին ժողովուրդս ոչ սակաւ, ծանուցանող զազնուականութիւն Տիւզեան և զմերձաւորս նոցա.

Ի սմին կարգէ Զանձեան հայր Միքայէլ վարդապետ բազմարդիւն ծերունին, յեցեալ յայնս ութսուն ամաց ծերութեան հիւանդագին անկեալ կայր այժմ 'ի մահիճս ցաւոց զառամութեան.

Վասն որոյ պարագլուխ հանդիսանայր Աբբայեան հարց՝ որ 'ի մայրաքաղաքիս Հ. Մեսրովբ Աղաւըրբեղեան, վերընծայեալ ծննդեամբ 'ի Կոստանդնուպոլսոյ՝ քաջավարժ 'ի փիլիսոփայական և յաստուածաբանական մակացութիւնս, խոհեմ և նրբին բնախօս, և ժրաջան փաստակաւոր 'ի պայծառ բարեկարգութիւն հայրենի ազգին.

Սա 'ի 1820 ամի առեալ 'ի սկզբան յունուարի՝ ընդելայն գայր յԵնկիխոսիս 'ի ծախեղերեայց տուն Նօնուզեան Յովհաննէս աղայի.

Զայն զգացեալ երևելի իշխանք մեր Գրիգոր աղա և Յարութիւն աղա՝ ընդ Աշնուորեան կարապետ աղայի գնացին 'ի տեսութիւն նորին, որոյ ազգասէր բարուց ծանօթ էին և յառաջն.

Եւ առաջարկեցին նմա բազում սիրով և մեծարու յորդորանօք, զի ամենայն կրօնաւորք թէ Աբբայեանք և թէ Գոլէճեանք միաբան սիրով եկեսցեն՝ առանց կարծիս կասկածանաց ունելոյ զումեքէ.

Դուք՝ և որ 'ի մեզ գլխաւորքդ էք, ասեն, քննեցէք զիրան, յորոց վերայ վիճէք, հաստ լիցուք ճշմարտութեանն, հեռախաւոսաց արասջիք զատելութիւնն, սէր և խաղաղութիւն հաստատեսջիք, և մի այլ զընկեր հարստահարեսջիք, և յառաջս մարդկային աւանդութեանց և յեկամուտ սովորութեանց ապախտ մի արասջիք զուխտ սիրոյ սիրողին ըզմեզ Աստուծոյ.

Եւ եթէ դուք ոչ յօժարեսջիք գալ, ժողովրդոց ձերոց բանք դառն տագնապաց և փառաց, քանզի ահա լուր հարկի ամբարտաւանց պատրիարքին ծանուցանելոց է ակրութեանն զանհնազանդս ձեր.

Իսկ հայր Մեսրովբայ ուրախութեամբ սրտի ընկալեալ

զրան նոյա՝ կոչէ առ ինքն զրաբեխան և զպարկեշտակրօն Սա- հակ վարդապետ, որ գնացեալ էր յԷջմիածին առ հիւանդս։

Եւ յայտ արարեալ զբանս իշխանաց մերոց՝ առաքէ զնա երթալ և ծանուցանել իշխանաց այնր կողման, և հրաւիրել զվարդապետն։

Եւ նորա եկեալ զառաջինն՝ խօսի ընդ կարնեցի Մահտեսի Աստուածատուրեան բարեյիշատակ Մանուկ աղայի, և եղբօր նորա Մատթէոս աղայի, և նոքա եւսն հաւանութիւն դնել։

Յետոյ գնացեալ յեկեղեցին Լատինացւոց, ուր ժողովեալ կային ամենայն վարդապետք յորէ կալանաւորութեան Տիեզերաց, յայտ առնէ նոցա թէ զպատգամս Հ. Մեսրոպեայ, և թէ զհաւանութիւն իշխանաց իւրեանց։

Հարք Աբբայեանք առ օրինաւոր գործելոյ զիրն՝ մատուցին զիր առ եպիսկոպոսն Լատինաց՝ վենետիկեցւոց Փօռէզի, զի հրամանաւ նորին լինիցի։

(1820) Եւ նորա ժողով արարեալ երեւելի վարդապետաց և մեծաւորաց եկեղեցեաց Լատինացւոց՝ առաջի արկանէ նոցա զառաջարկութիւնս Հարց Մխիթարեանց, թէ արժա՞ն իցէ երթալ կարգաւորացն յաղագս ապահովութեան ժողովրդոց, որոց վտանգ կայ առաջի, և վասն պայծառութեան հռովմէական հաւատոյ, որ գուցէ նախանձու պարզամտաց գայթակղութեանց, թէ ընդէ՞ր ոչ գնացեալ բարձրաձայն քարոզեցին և ցուցին, թէ արդարեւ ուղղափառութիւն է, զոր ուսուցանեն մեզ։

Եւ ժողովն զդատաստան իւր որոշեաց, թէ պարտ է դոցա երթալ. զի կամք սրբազան գահին եւս այսպէս հրամայէ, այլ և ինքեանք պատրաստ են առ այդ։

Եւ զի աւուրք ինչ յառաջ՝ յորժամ ասէր կոչէր Պօղոս պատրիարքն մեր զվարդապետն զայնոսիկ, ասացին անխնամ Դոլէճեանք, զի առանձինն ոչ կարեն գալ և պատասխանել Հայոց, թէ ոչ ընդ ինքեանս լինիցին Աբբայեանն Հարք։

Վասն որոյ գրեցին ՚ի ժողովն փրանկանոցս, թէ ահա ամբողջովին կոչէ զմեզ պատրիարքն Հայոց, ՚ի գնալն մեր զայս միայն ունի մեզ հարցանել, թէ այս Աբբայեան Հարք՝ զոր

ընդ ձեզ ամիք, չե՞ն ուղղափառ, և վարդապետութիւն սոցա մոլորակա՞ն են։

Եթէ ասեմք, չեն ուղղափառ, աւա՜ղ ցմեզ, թէ ընդէ՞ր եկիք ընդ սոսա առ մեզ 'ի պատասխանատուութիւն. և եթէ ասեմք, այո՛, ուղղափառ են, յայնժամ՝ զխաչան հաւատոյ ճառեանն ցուցանէ մեզ, և ասասցեն, թէ ընդէ՞ր այսմ վարդապետութեան հակառակ դնիք։

Եւ այսպէս երկուսեք զմեզ յորդորեն արկանել մտաբերել, զանձն 'ի մէնջ յաքսորս առաքէ, և զայլս 'ի թիւ նահատակեաց։

Ահա խաբեբայքն այսպիսի բանիւք ստութեան խարդախեցին յայնժամ զկրայն ատուգութիւն, և խաբեցին զայն ժողով, զոր անխախտ քարոզէին ազգաց, և ետուն գիր բերել անտի, որ նահանջէր զնոսա յերթալոյ 'ի խոստակցութիւն։

Այս նախադատութիւն՝ որ ըստ խելամուտ առնելոյ նոցա վճռեալ էր, բայց ըստ պայմանի ժամանակին չեղեւ այժմուս արդեւք խափանարար այսմ առաջարկութեան Աբրայեանց։

Միայն թէ ասացին, գիտութեամբ դեսպանին Գաղղիացւոց գնացեն։

Քանզի այն այս Դոլէճեանք, որ նախապատրաստ զգուշութեամբ հոգան զօգուտ անձանց, յառաջագոյն գրեցին 'ի Հռովմ, թէ այս եպիսկոպոս դիւրահաւան և պարզամիտ լինելով, Աբրայեանց և Հայոց բանից անտեղեակ՝ դիւրաւ խաբի, և 'ի բազում իրս գթէ։

Պարտ է սմա քաջուշիմ խորհրդակից ոք, զի առանց նորին խորհրդոյ մի ինքնահրաման գործեսցէ և արասցէ ինչ. ուստի և 'ի Հռովմայ եկն պատուէր առ Վինկենտիոս Թոմէզի, զի առանց խորհրդակցութեան ընդ դեսպանին Գաղղիոյ և հաւանութեան առնելոյ 'ի նմանէ, մի գործեսցէ և արասցէ ինչ։

Վասն որոյ և այժմ պարտաւորեցաւ եպիսկոպոսն ծանուցանել դեսպանին զայս ամենայն, և առաքեաց զտէր Անտոն եկեղեցւոյ մեծաւորն փաթէրփօնի այր ճարտարարան, զի յայտ արարեալ զխնդիրս ժողովոյն, առցէ հաճութիւն և 'ի նմանէ։

Գնաց փաթէրփօնի յապարանս դեսպանին, բայց անդ էր և դեսպանն Ռուսաց, և 'ի միասին 'ի խօսս ինչ պալօ ձայնեալ

պարապէին, և ոչ կարէ մտանել առ նա և խօսել զբանն։ Եւ զի օրն յերեկոյս խոնարհէր, դարձ արարեալ գայ յեկեղեցին իւր, և ծանուցանէ վարդապետաց, թէ ահա այսչափ հաւա_նութիւն եղեւ յեպիսկոպոսէն և 'ի ժողովէն, մինչ 'ի ձէնջ այսօր գնասցեն առ Հայս, և միացեալք 'ի վաղիւն, յորժամ և 'ի դեսպանէն առնումք հաճութիւն։

Վասն որոյ յայնմ գիշերի 'ի 19 յունուարի, Հ. Թովմաս և Հ. Սերովբէ եկին 'ի տուն Յովհաննէս աղայի, ուր էր և Հ. Մեսրովբն։

(1820) Արդ ոխերիմ թշնամիք միաբանութեան ազգիս Գոլէճեանք տեսին, թէ ամենայն ամուր ապաստանի իւրեանց խորտակեցան, և ոչ կարեն համարձակ շրջել, ուստի խորա_մանկ բանիւք իւրեանց փոյթ կալան յինքեանս յանկուցանել զանմիտս յիշխանաց իւրեանց, զի զերծին յաջողութիւն 'ի ձեռն նոցին շրջեսցեն, և ժամանակ առ որս առցեն 'ի Հայոց մտա_ծելոյ, որպէս զի յեցեալ զթիկունս իւրեանց 'ի Հռովմ, զկա_մակորն 'ի գլուխ տացեն չարիս։

Բայց իշխանք նոցին յանհնարին երկիւղս ըմբռնեալ յահէ սաստիկ հրամանին արքունի՝ փութացուցանէին մի կալ մնալ այլ եւս։

Եւ որ Հռովմայ աթոռոյն երեսփոխանն էր և բարձրապա_տիւ եպիսկոպոս, ժողովով իւրով խրատոյ որոշէր գնալ։

Վասն որոյ և նոքա մերժեցին զբանս իշխանաց, ասելով, թէ ընծայից հոգածու են ունելով զշահդխոս և ոչ զապահո_վութիւն հասարակաց։

Իսկ ազգասէրք և խաղաղասէրքն այնուքիկ առ տուն հա_րին և զիրաւունս դատաստանի եպիսկոպոսին, ասելով, թէ գործ և արարք եպիսկոպոսին արտաքոյ են ամենայն օրինաց և իրաւանց։

Այս միայն կայր նոցա հնար վերջին, և զայն տարան 'ի գլուխ։ Քանզի գլխաւորն 'ի նոսա Անտոն վարդապետ Քու_ցիանթի՝ այր չարագործ և խռովող, մուտ արարեալ յայնմ գիշերի գաղտագողի առ դեսպանն, հաճեցոյց զնա չը_տալ հրաման երթալոյ կարգաւորացն։

Եւ նա պարզամտութեամբ անսացեալ բանից Քուցիանթի

անգամիտ փառաւորեալին՝ ոչ միայն արգել կարգաւորաց եր_թալ, այլ և անհնարին սպառնացաւ եպիսկոպոսին, զի յետս դարձուցէ զառաջին հաւանութիւն իւր։

Իսկ եպիսկոպոսն անձնարացեալ չկարաց զդէմ ունել, քանզի գիտէր, թէ յանձինս նոցա բազմեալ է գահն առաքելական, և սոքա ժողովել հրապարակեալն. և թէ ոչ ՚ի հաճոյս նոցա ա_ռաջնորդեսցէ զիրաւունս բանից, անզգաստաբար թափին ՚ի վե_րայ իւր նետք բանից և մէգ սպառնալեաց ՚ի Հռոմայ։

Ուստի զոր վճռեաց բառ իրաւանց ՚ի ժողովս, առանձինն ՚ի ներհակս նոցա ունայնացոյց։

Այս բնաբոյս սովորոյթ աստուածաբանից և եպիսկոպո_սաց Հռոմայեցւոց է, որ զողջմտութիւն հաւատացելոց խան_գարէ, զհանդարտութիւն ազգաց ալէկոծէ, զկարծիս հեր_ձուածոց արծարծանէ։

Քանզի գործունեայ ճշմարտութեան անուանին, բայց մի_տահաճոյ մարդկութեամբ ՚ի կողմն կործանման զրպարտչաց և չարախօսաց, քան իրաւախոհաց և բարեխօսաց։ Մոլորական ընթացք իւրեանց թէ և ճշմարտութեան երեւեցին ՚ի դէպ, այլ ՚ի ճշմարտութենէ են տարադէպ։

Բայց արդարակորով Արքայեանք՝ հայեցեալ ՚ի սիրայիր հրաւէր ազգին, և երկուցեալ ՚ի վնասու է ժողովրդոց իւր_եանց յայտնապէս տապին։

Վասն նմ՝ յառաջին հրաման եպիսկոպոսին և իւրոյ ժողովոյն, որ բառ իրաւացի վճռոյ հրամայեաց մեզ գնալ. և զի չէք յատուկ արգելք ՚ի Հռոմայ վասն երթալոյ, ուստի ունիմք վճիռ հաստատուն ՚ի ձեռին գնալոյ և խօսելոյ ընդ հայս հրամանաւ եպիսկոպոսին, և վկայութեամբ այսչափ վար_դապետաց Լատինացւոց, որք ոչ կարեն յուրանալ զայն։

Ուստի ոչ ունին մատուցանել վերջնումն արգելմանց՝ զոր ՚ի սադրելոյ Գողէճեանց արար, որ փառնդաւոր եւս է ժո_ղովրդոց մերոց. և զայս առաջեալ գնացին նոքա յԷնկիւրիւ։

(1820) Յառաջ քան զամիս ինչ երեւ նորոգութիւն եկե_ղեցւոյն առ ըստ Աստուածածնի ՚ի խումբարու, որոյ օծութեանն հանդէս երեւ մեծաշուք հանդիսիւ, քանզի պճնարանայն կողմն այն է՝ զեկեղեցին կանանց էօծ առէր նկրակոս կաթողի_

կան Սսոյ, զմիջին եկեղեցին Պօղոս պատրիարք, զՀնուսխա-յին կոչմն կոչեցեալ Պաղչէ ժամ՝ Լօծ Աստուածատուր եպիս-կոպոս, և զգաւիթ եկեղեցւոյն՝ Գիմնեսիոս եպիսկոպոս, յա-ռաջներորդ ժամէ գիշերոյն սկսեալ մինչև չորրորդ ժամ յաջորդ աւուրն, ՚ի փետրվար 25, յամի տեառն 1820.

## ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս աքսորանաց և փախստեան Գոլէճեան կարգաւորաց, և գալստեան առ մեզ Արքայեան հարց և խօսելոյ նոցա ընդ վարժա-պետս մեր վասն խնդրոյ ինչ.

---

(1820) ՍԱՀՄԿ փարդաւալեա՝ զոր ՚ի վեր անդր յիշատա-կեցաք, ունէր թուղթ ՚ի պատրիարքէն հնգօրեայ աղատու-թեան, շրջել ժողովել զկարգաւորսն. վասն որոյ առեալ զնո-սա երեք յենիխափուն ՚ի 23 յունուարի.

Եւ որք եկին, էին Հ. Գրիգոր Գասպարեանն, Հ. Թա-դէոս Աճէմեան, Հ. Փիլիպպէ Արքայեանք, նաև Հ. Պօղոս բժիշկ. Յուղի անկան ընդ նոսա տէր Սահակ և տէր Յարու-թիւն Գրեստեանք, այլ ՚ի ճանապարհին խոյս տուեալ ՚ի փա-խուստ դարձան, քանզի յետս կոչեցան ՚ի Գոլէճեանց.

Արդ մինչ այսուքիկ այսպէս լինէին, եկն ՚ի դրանէ հրա-մանն առ պատրիարքն գտանել զնոյն քահանայս տանն Տիւզ-եան և մերձաւորաց նոցա, զի աքսորեսցին.

Եւ պատրիարքն փութացոյց չասպաւ գիշխանս այնու կող-մանն, զի զո՞ և իցէ վեց քահանայս յիւրեանցայնոց գտեալ տացեն.

Եւ նոքա փութացեալ, խորհէաթեամբ հրաւիրեցին ՚ի տուն իւրեանց զքահանայս՝ որպէս թէ վասն խոստովանու-թեան ինչ իցէ կոչումն նոցին, այլ գիշերոյն աղդ արարեալ ժամկոչաց Հայոց՝ հանեին ՚ի տանէն, և եսուն ՚ի ձեռս նոցա, և առաքեցին ՚ի պատրիարքարանն, և էին անուանք նոցա

դարձին. Անտոն եպիսկոպոս միւքար ի բռեանց, Քալիչքուշաք
եանւոր կոչեցեալն, Պօղոս վարդապետ Գաղատացի Մարտչ
իշեցեալն, Պետրոս վարդապետ, և Յովհաննէս վարդապետ,
ընդ սոսա դասու և հայր Դաւիթ խոհեմախոյլ վարդապետն
Երզնկեան, հինգն Գործեանք, և մին այս Արքայեան, և սա
խաւլին յօժարեցաւ երթալ, ասելով, եթէ չէ լսեալ թե-
պատրկոյն, ես կամիմ գնալ, զիս առաքեսջիք. Մնաց
միայն յԱրքայեանց Հ. Աբրահամն, և ոչ եկն ընդ նոսա.

Քանզի ընտանիք Տիւզեանց յանձնեալ եղեն պատրիարքին
յոյժ կնքելոյ զատանս նոցա.

Ընդ նոսա էին և այլ սպասաւորք, և Հ. Սեբաստիանոս, որ
զատ յայնժամ ՚ի տան նոցա.

Եւ զամենայն զնոսա եդ պատրիարքն հանդէպ աւուր
Աստուածածնի եկեղեցւոյն ՚ի տան միում, և զգուշանալ պա-
հապանօք.

Եւ զհայր Սեբաստիանոս առանձինն ՚ի միում խցի պահէր
կրեալ ՚ի բանտի.

Յաւուրն յայնմիկ Հ. Աբրահամն եկեալ գայ առ պատրի-
արքարանն, և առ ժամն ոչ գտանէր անդ մեծն, և բազմի ՚ի
յաթոռն. հարցանէին զնա վարդապետքն, և ասեն, դու ո՞վ
ես և վասն էր եկիր այսր.

Եւ նա պատասխանէ, վարդապետ եմ ես ՚ի վանաց սրբոյն
Ղազարու Հ. Աբրահամն անուն, և եկի աստ խնդրել հրաման
երթալ յայցելութիւն կարգակից եղբօր իմոյ Հ. Սեբաստիանոսի.

Յայնժամ մին ՚ի վարդապետացն՝ որոյ անուն էր Պօղոս վար-
դապետ Գաղատացի, և էր տեղապահ փոխանորդի պատրի-
արքին, և ունէր թշնամութիւն մեծ անդստին ՚ի մանկութենէ
իւրմէ ՚ի Գաղատիա ՚ի վերայ Հռոմէական Հայոց, հանէ զնա
արտաքոյ սենեկին, և ինքն գնացեալ ՚ի ներքս մտանէ առ Պօ-
ղոս պատրիարքն և ասէ, եթէ ՚ի Հռոմէական Հայոց կարգա-
ւոր մին եկեալ յանդիմանէ զմեզ անվայել բանիւք և ասէ,
թէ դուք լինէիք ուղղափառ և բարեկրօն, զուղղափառ վար-
դապետսն ոչ տայիք ըմբռնել և ՚ի բանտի արգելուլ. բայց զի
անկեալ էք յուղղափառութենէ, առանց խղճի առնէք զոր
ինչ և կամիք.

Եւ պատրիարքն լուեալ զայս, հրամայէ դնել զնա 'ի բանտի, մինչեւ եկեսցէ փոխանորդ իւր, և քննեսցէ զայն.

Եւ Գաղատացին տեսեալ, թէ անպատիժ ունի զերծանիլ 'ի ձեռաց իւրոց, զպրանս առեալ եւս, և ածեալ առաջի վէքիլարանի՝ տայ պնդել զոտս նորա յաղախան, և հարկանեն նմա բիրս իբրեւ եօթանասուն.

Իսկ նա ինքն եղկելին յետոյ 'ի գանակոծ ոտիցն կանգնեալ 'ի վերայ՝ հարցանէ զիրաւունս բանից, թէ զի՞նչ էին իմ յանցանք.

Իսկ Գաղատացին որ անօրէնութեամբ գործեացն զայն, և բերան խակ բանալ ոչ ետ նմա, և տարեալ արկին 'ի բանտ.

Բայց նախնեցի Յակոբ այս՝ որ ծանօթացեալ էր 'ի կարին Հ. Սրապիոնի, և 'ի բազում իրս մանաւանդ 'ի շինութեան դպրոցի գործակցեալ նմա, և սիրէր զնա ոչ սակաւ, իբրեւ զայս ամենայն լսէ, փութացեալ գայ առ պատրիարքն, և աղաչեալ հանէ զնա 'ի բանտէ, և պատրիարքն առաքէ յաքսորս զԳաղատացին զայն 'ի հայրենիս իւր 'ի Գաղատիա.

Արդ սա զի գանակոծ հարուածով մշտացեալ էր 'ի վերայ վարդապետաց մերոց, այժմ ոչ ընդ միաբանս իւր միաբանեցաւ գալ առ մեզ, այլ եկաց մնաց յեկեղեցիս Լատինացւոց.

Սահակ վարդապետ երթայ 'ի սկզբան փետրվարի առ Ստեփանոս եպիսկոպոսն Աւգերեան, որ երբեմն և մերքար էր, և յայնժամ թաքուցեալ կայր, և 'ի մեծի եղեալ էր գաղտնաւորել 'ի Թրեստ, առէ զնա, ընդէ՞ր ոչ գաս ընդ մեզ, յորո՞ց կասկածիս, մինչ ամենայն իշխանք Հայոց պաշտպան կան մեզ.

Որում պատասխանէ Ստեփանոս եպիսկոպոս թէ և ես ոչ սակաւ քան զձեզ ցանկացող եմ միաբանութեան ազգիս, բայց երկնչիմ 'ի Գոլէճցւոց սաստի ինքնին եկանել և գալ. Բայց և թէ իշխանք Հայոց կանխեալ խնդրեսցեն զիս 'ի մերայնոց, և նոքա առաքեսցեն զիս գնալ, յայնժամ փութացեալ գամ.

Սահակ վարդապետ զայս բան ծանոյց Հ. Մեսրոպայ, և նա հանեցոյց զիշխանս մեր, և ետ խնդրել յիշխանաց այնու կողման, զի առաքեսցեն զՍտեփանոս եպիսկոպոսն.

Եւ նոքա պատուիրեցին նմա գնալ, բայց ոչ երբեք կամակից լինել և մնալ 'ի կողմն Հայոց և Արքայեանց.

Եւ նորա գնացեալ՝ զբռնադատութիւն իշխանաց իւրոց՝ եպիսկոպոսին Լատինաց յայտ արար, և էառ 'ի նմանէ հաւանութիւն լուելեայն ։

Սահակ վարդապետ և այլ ոմանք յիշխանաց առեալ ընտրին զնա յեպիսկոպոսութիւն ։

(1820) Արդ յայսմ միջոցի՝ յաւուրս պահոց, զօրականքն Եէնիչէրի ձայնեալք՝ զոր միանգամ տեսանէին 'ի Հայոց ձուկն գնել կամ ուտել, կալեալ զնա տանէին 'ի պատրիարքարանն, և վէքիլ պատրիարքին ակամայ տայր զօրականին դահեկան մի խաժառեալ գինօք, և զայլն յանդիմանէր վասն յայտնի զձուկն ուտելոյն, և արձակէր 'ի բաց ։

Եւ զայս բազմարդիւն շահավաճառ իմն առնէին իւրեանց, զօրականքն, որք զհետ լինէին դատելոյ զո՛ և իցէ Հայ ազգաւ, որ ուտիցէ և գնեսցէ 'ի շուկայս զկերակուրս անուանեալս մեղ յաւուր պահոց ։

Այլ Պօղոս պատրիարք որ քաջախորհուրդ հեռատեսութեամբ իւրով գիտէր և մտածէր զվախճան ամենայն իրաց, կոչեալ առ ինքն զՅարութիւն աղա Պէզճեան և խորհեալ ընդ նմա, կոչեցին զՅարութիւն Շամլէօրէկեան, որ ունէր ելումուտ 'ի դուռն զօրապետին, և ակերբիչ նորին էր, 'ի ձեռն նորին ազդ արարին Եէնիչէրի աղայի զօրապետին զի հրամայեսցէ ամենայն զօրականաց՝ յայնմ հետէ կալնուլ և ոչ զոք վասն այնպիսի իրաց ։

(1820) Յամենայն յանկարծ խորհրդով իշխանաց մերոց պատրիարքն կոչէր մի առ մի 'ի Հռովմէական Հայ ժողովրդոց զերեւելի իշխանս և զմիջակային արհեստաւորս, և առաջարկէր նոցա զբան միութեան ։

Եւ զի ահ սաստիկ պաշարեալ էր զնոսա, բազումք դարձին 'ի հաւանութիւն, և ստորագրէին պայմանագրին, որ ունէր օրինակ զայս ։

«Ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ մերմէ սկսեալ մինչեւ «ցարդ, զոր ինչ ընդունի Հայաստանեայց ուղղափառ սուրբ «եկեղեցին, ընդունիմ և ես, և զոր ինչ մերժէ, մերժեմ և ես. «'ի հաստատութիւն այսր ողջամիտ դաւանութեանս յօժարա- «կամ կամօք կնքեցի և ստորագրեցի ես (այս անուն) եւայլն »

Բայց և բազումք դժկամակ գտեալ առ այն՝ ոչ հաճէին տպագրել։

Հայր Մխիթար՝ այր մեծախորհուրդ և բազմահմուտ առ շահելոյ զերկաքանչիւր կողմանս՝ հաւանեցոյց զիշխանս մեր, զի Լուսաւորչեան հանգամանքն անաղարտ և անյաւելուած գրեսցի 'ի թղթի, և նովին տպագրեսցէ հասարակութեան։

Եւ յայնժամ առանց ինչ դժուարա բանից զայն և ընտպագրէին ամենեքեան։

Ի նոյն աւուրս 'ի միում գիշերի ժողովեցան՝ իշխանք մեր առ Հ. Մխիթար վարդապետ, և նա զամենայն խնդիրս՝ յորոց վերայ լինէին վէճքն՝ մի ըստ միոջէ յայտ արար։

Անդ էր և փէշտըմալճեան Տիրացու Գրիգոր մեծանուն վարժապետն, և հաճութեամբ ժողովոյն գրիչ 'ի ձեռին նշանակէր 'ի թղթի, և միաձայնութեամբ զբանս հարց ընդհանուր եկեղեցւոյ՝ ընտրէին և բերէին 'ի վկայութիւն առաջարկութեանց իւրեանց։

Եւ ընդ առաւօտն Գրիգոր խոջիա, հաճի Ջէլէպի, Յանիկ աղա, Մանանեան Յակոբ աղա, և Աշնաուրեան կարապետ, առին զթուղթն զայն, և գնացին 'ի պատրիարքարանն, առեալ ընդ ինքեանս և զԳրիգոր վարժապետն, զի թէ վասն բանից թղթոյն դէպ ինչ լինիցի, խօսեսցի։

Մտեալ իշխանաց առ պատրիարքն, պատմեն նմա զխորհուրդ իւրեանց, յետոյ յերեւան հանեն և զթուղթն, զոր 'ի գիշերին գրեալ էին։

Որ երբեւ յաղագս բղխման Հոգւոյն սրբոյ և յՈրդւոյ բանք եղեն, ասէ պատրիարքն, է՞ ոք 'ի հարց մերոց սրբոց այդպէս գրեալ կամ բացատրեալ. Ես ընդունիմ և ասեմ, թէ Հոգին սուրբ հասի 'ի Հօրէ և յՈրդւոյ, կամ առնու 'ի Հօրէ և յՈրդւոյ, որպէս և Հարքն մեր ասացեալ են, բայց ոչ ընդունիմ, թէ Հոգին սուրբ բղխի 'ի Հօրէ և յՈրդւոյ, զի բղխումն նշանակէ զծագումն յառաջին սկզբնէ, և յայնժամ լինին յերկրորդութեան երկու սկզբունք։ Նա զի և Լատինք Հոգին [illegible] ասեն, որ նշանակէ, Հոգին յառաջագայի կամ հասի կամ առնու, և ոչ թէ բղխի։

Ուստի եթէ Լատինք բղխի ոչ ասեն, զնոյն ընդէ՞ր սովո-րին բղխի ասել։

Արդ որպէս ասացեալ են սուրբ Հարք Հայաստանեայց եկեղեցւոյ, զնոյն ասեմ և ես բանոնցին [?] բանից, որպէս ա-սացեալ է և Շնորհալի սուրբ հայրն մեր, թէ 'ի Հօրէ բղ-խումն Հոգւոյդ ոչ քննեցաւ, և հաւանեալ [?] յՈրդւոյ առումն ոչ գտանեցաւ։

Զայս ուղղափառ [?] ընդունիմ և ասեմ, և այլովք բանիւք ոչ կամիմ [?] բացատրել, և չունիմ հրաման առաջի բղխի բանին յելել [?] զբան [?] և յՈրդւոյ. զի հաստատեմ ես, թէ Հոգին սուրբ ելեալ 'ի Հօրէ և առնու յՈրդւոյ բան սուրբ Շնորհալւոյն որ-պէս ասէ, բղխումն Հօր անքննաբար, առնուլ յՈրդւոյ անճա-ռաբար. զայս գիտեմ ես, և զայս հրամայեմ գրել. աւելի ևս բացատրել արժան չէ։

Զայս հրահանգ առեալ 'նոցա, առաքեցին զվարժապետն Քէնէփեան [?] առ Հ. Մեսրոպայ պատմել 'նմա զհրաման պատ-րիարքին, զի այնու եղանակաւ լրացուսցեն զխոստ իւրեանց, և մի ընդունայն մեծ ճգանք լինիցին։

## ԳԼՈՒԽ ԻԴ.

Նորոգի խնդիր Արքայեան հայոց ընդ վարժապետաց մերոց վասն մասանցն հաւատոյ, զորոց էին խնդրեալ։

(1820) Այլ յառաջ քան զայս ամենայն հրամանաւ ար-քունի բերեալ էր 'ի Կոստանդնուպօլիս՝ որբացեալ [?] հայրապե-տանն Կիլիկիոյ Կիրակոս կաթողիկոս, որ և յամբաստանու-թեանց բդեշխին Բերիոյ իբրու այլ քննութեանց ձերբեալ, առեալ էր 'ներողութեան հրովարտակ դառնալ 'ի սուրբ ա-թոռն իւր. Բայց իշխանք մեր զբաղում ժամանակս պահե-ցին առ [?]։

Մի՝ զի յամենայն եկեղեցիս մայրաքաղաքիս պատարագեսցէ, և նոյնպէս ինչ հաւաքեսցէ ՚ի ժողովրդոց, և միւս՝ զի ՚ի գործ ցանկալի միաբանութեանս գտանիցի և մի ոք վեհափառ կաթողիկոս ։

Արդ սա ինքն ազնուասերունդ և ազնուաբարոյ գոլով, ոչ սակաւ օգուտս գործեաց համազգային միաբանութեանս ։

Քանզի զիւր անկակից ճշմարտասիրութեանն զհանդերձ գօտեւորեալ զգեցեալ՝ ուղիղ խորհրդով ողջ և անարատ նահատակէր ՚ի բանս ճշմարտախօսաց, և զխնդրու հանդիսանայր, որոց զարտուղի խուսափէին ՚ի ճշմարտութենէն ։

Արդ որովհետև հարկ եղև ընտրել զքանի մի գիտնական անձինս ՚ի մերայնոց, զի խօսեսցին ընդ Աբբայեան փորգալեաս ՚ի վերայ այնց խորհրդոց, յորոց վերայ լինէին մինչև ցայժմ տարապարտ վէճք և հակառակութիւնք ։

Եւ ընտրեաց Պօղոս պատրիարք զտէր Մեսրովբ գիտնական քահանայն Խումանափուխ, և զտէր Բարթողիմէոս Իւսկիւտարու, և զԴագւոր վարժապետ ևս, որ թէպէտ ծանօթ էր տրամաբանութեան, բայց ոչ այնչափ Աստուածաբանութեան, և խառնեալ կրկինք խօսէր ։

Իսկ յայնժամ յետնիխափու Հ. Ստեփանոս եպիսկոպոսն Աւգերեան՝ գերապայծառ կոչեցեալ, և յԱբբայեանց Հ. Մեսրոպ վարդապետ Աղաչըրպաղեան, Հ. Սերովբէ վարդապետ Ճէվահիրճեան, Հ. Քերովբէ վարդապետ Աղնաւուրեան, Հ. Գրիգոր վարդապետ Գասպարեան, Հ. Թադէոս վարդապետ Ասկէրեան, Հ. Թովմաս վարդապետ Մագսէթեան, Սահակ վարդապետ և Պօղոս վարդապետ ։

Ինքեանքն սոքա էին ՚ի ծախահայեաց տան Իշխանագեան Յովհաննէս աղայի, ՚ի տանէ ընտրեցան խօսել ընդ Հայս, Հ. Մեսրոպ Աղաչըրպաղեան, Հ. Թովմաս Մաքսէթեան, և Հ. Սերովբէ Ճէվահիրճեան, զի որովհետև երեք էին ՚ի կողմանց Հայոց յառաջացեալք ՚ի խօսել, ՚ի սոցունց ևս այս երեք միայն ընտրեցան, բայց յամենայն ժողովս նախագահ նստէր Հ. Ստեփանոս եպիսկոպոսն Աւգերեան, և ունկնդիր լինէր երկոցունց կողմանց, և ունկնդրութիւն սորին օգուտ մեծ արար Աբբայեան հարց յետ ժամանակաց, իբր զի լինէր եր-

րեմ, զի երկու կողմանք հակառակէին 'ի վերայ միոյ բառի, մինն ասէր, թէ զայս բառ պարտ է բառնալ և փոփոխել. և միւսն հաստատէր ուղիղ և խրատացի գոլ, և ոչ փոփոխել. և երկաքանչիւր կողմանք միայն 'ի վերայ մի և նոյն բառի վիճէին, և ոչ մին կամէր միւսոյն զիջանել.

Յայսպիսի բանս տեսեալ Ստեփանոսի եպիսկոպոսին զերկաքանչիւր կողմանն զյամառեալ կարծիս, հրամայէր լռել, և ինքն գրիչ 'ի ձեռին առեալ, տնօրինէր բառ պխտելոյ խնդրոյն այնպիսի բառս, որ ընդունելի լինէր երկաքանչիւր կողմանն, բայց առաւել Հայոց. զի Արրայեան հարք ոչ կարէին հակառակել ներհակութեան Ստեփանոսի եպիսկոպոսին, որովհետև 'ի գլխոյ Հռովմէական եկեղեցւոյ գլխաւոր էր նոցա կարգեալ, և եթէ աթոռն Հռովմայ խոնարհէր և գծամբնէր ընդ համաձայնութիւնս Արրայեան հարց, ի՞ւ վասն էր զայնպիսի բառ եդեալ էն, կամ ոչ եդեալ. առձեռն պատրաստ ունէին Արրայեան հարք զայս բան, թէ մեք զի՞նչ արասցուք, զի Ստեփանոս եպիսկոպոսն 'ի մէջի միրում էր, և նա այսպէս տնօրինէր, և թէպէտ մեք բազմօք պնդէաք ընդդէմ Հայոց, բայց նա այնպէս կամեցաւ և լռեցոյց զմեզ, և իւրով խօսք գրութեամբ խափանեաց զվէճ մեր.

Եւ զայս այսպէս առացին յետոյ Արրայեան հարք առ աթոռն Հռովմայ, որպէս ունիս տեսանել 'ի կարգի պատմութեանս.

Արդ վէճք սոյին էին 'ի վերայ հնդեցունց խնդրոյս այսոցիկ. նախ թէ Քրիստոս ունի զերկուս բնութիւնս և զերկուս կամս, և զերկուս ներգործութիւնս.

Երկրորդ՝ թէ Հոգին սուրբ բղխի 'ի Հօրէ և յՈրդւոյ.

Երրորդ՝ թէ հոգիք զղջացեալ և խոստովանեալ մեղաւորաց գնան 'ի կայանս քաւարանին, և անդ զատանեն զներբունն շնորհօք սուրբ պատարագին և գնան յարքայութիւն.

Չորրորդ՝ թէ Պետրոս է գլուխ առաքելոց, և զնոյն գլխաւորութիւն ունին յաջորդք նորա 'ի յաջորդս առաքելոց.

Հինգերորդ՝ թէ վերջին օծումն է խորհուրդ սուրբ եկեղեցւոյ, և պարտ է առնել զայն 'ի ծանր մահամերձ հիւանդս.

Ի վերայ հնգից խնդրոցս այսոցիկ եղեն բազմաքննին վէճք

իբրեւ զամիս երիս, զի յութօրէից սորա Ծննդեանն սկսեալ տեւեաց վէճն մինչեւ ցաւուր չորեքշաբաթ օր սուրբ Զատկին։

Եւ թէպէտ երկաքանչիւր կողմանք ուղղափառապէս ընդունէին զայս ամենայն մասունս հաւատոյ, բայց ոչ գիտելով զմիտս և զճանաչումն իրերաց, զմիմեանս հերետիկոս և հերձուածող դատէին անգիտութեամբ, զոր օրինակ Հայն մի բնութիւն ասէր, և Հռովմէականն Հայն երկու բնութիւն, երկոքին եւս ուղղափառութիւն են, եթէ ուղղափառ միտք առնիցին, և երկոքին եւս չարափառութիւն են, եթէ մոլորական միտք առնիցին։

Զի Հայն ասէ մի բնութիւն փոխանակ մի անձնաւորութեան, որ է ուղղափառութիւն, և Հռովմէականն Հայն ասէ երկու բնութիւն, փոխանակ Աստուածութեան և մարդկութեան Քրիստոսի, որ է ուղղափառութիւն։

Այնպէս է տեսանել և 'ի միւս խնդիրս, յորոց վերայ լինէին մինչեւ ցարդ տարապարտ վէճք և հակառակութիւնք, զի զիրն ամբողջապէս երկոքին կողմանք եւս ողջմտութեամբ ընդունէին, բայց 'ի վերայ բառի և ձայնի հակառակ ոգւով միճէին և կռուէին ոչ գիտելով զմիտս իրերաց։

Ահա այս եղեւ պատճառ բազմաց հակառակութեան և հերձուածոց կարգեան 'ի սկզբանէ մինչեւ ցայժմ, որով միոյ սուրբ աւազանի ծնունդք, միոյ հօր սուրբ Լուսաւորչի հարազատ զաւակունք, ազգակիցք և արիւնակիցք անգոսնէին և արհամարհէին զիրեարս, զմիմեանս հերձուածող կոչէին իբրեւ զարդարութիւն գիտէին, և արքայութեան ժառանգութեան պատճառս համարէին, որով զժտութիւն եղբարց, անհաւանութիւն ծնողաց և զաւակաց, բաժանումն և ապրումն տանց, և այլ անթիւ չարիք։

Առ որս ճարտար բժիշկք նախնի պատրիարքունք բազմաջանի հնարս հոգային 'ի դարման վիրացս, և մինչեւ ցայժմ չեղեւ բարբառելին բժշկութիւն, այլ որ քան զօրէ ճարակեալ՝ մահաբեր խայթուածովք կործանեցուցանէին զհոգիս ազգասիրաց։

Բայց յայսմ ժամանակի իղձ սիրոյ և փափաքանաց ազգասէր անձանց՝ որ մինչեւ ցայս վայր աղեկիզեալ բորբոքէր ան-

ամենայն գեղապարունս պատուիրանին Քրիստոսի, մինչեւ յաջողեցաւ արքունի հրամանաւ գեղեցիկ 'ի գործ ածել և միաբանութեան, վառեցան և պատրաստեցան 'ի գլուխ տանել զայս հոգեւոր պաշտօն աստուածային սիրոյ. ուստի և զամիս երիս ամբոխեցան և վառաւորեցան յամենայն երեկոյս ժողովել 'ի յեկեղեցիսարս, և զգիշերն ողջոյն անքնդհատ լինել միաբանութեանց և խնդրոց երկոցունց կողմանց, և յորդորէին զեկեղեցին կողմանս չխօսել կիրք և ողբալ հակառակութեան, այլ աստուածային սիրով և քաղցր կենակցութեամբ լրումն առնել բանից և գործոց իւրեանց։

Եւ այսպէս յետ եռամեայ քննախօսութեանց և ժողովոց համաձայնութեամբ և հաւանութեամբ երկոցունց կողմանց՝ գրեցին զհամաձայնագրութիւն ժողովոյն իւրեանց, և միաբան խոստովանութեամբ ստորագրեցին ամենեքին, և ընդ առաւօտն իշխանապետքն աստուածայինք տարան զհամաձայնագրութիւնն առ պատրիարքն, և նա մի առ մի քննեալ զամենայն, հաւանեցաւ, և ինքն եւս ժողով արարեալ եպիսկոպոսաց, յորս էր և աստուածընտիր կաթողիկոսն Այսր տէր Կիրակոս, և վարդապետաց, և քահանայից, և ամենայն երեւելի անձանց արուեստաւորաց, և 'ի ժողովին յայնմիկ արարեալ ամենաբանութիւն ինն սրբանչելի, ընթերցաւ 'ի լուր ամենեցուն ըզ համաձայնագրութիւնն զայն, և մի առ մի բացայայտեալ՝ կնիքս դրոշմեցաւ 'ի նոցանէ յամենեցունց։

Անդ էր տեսանել զայն մեծապայծառ ուրախութիւն որսի ժողովեալ ամենեցուն, և զքաղցր արտասուս փափաքելի սիրոյ և խաղաղութեան, որ վառեալք աստուածային սիրով յօժարեցան և ստորագրեցին ամենեքին կնքելով զհամաձայնագրութիւնն, և խնդրեցին, զի տպեսցի այն 'ի յիշատակ յաւերժական սիրոյ. և մնասցէ հաստատուն 'ի մէջ ազգիս, որ և յետոյ միաբան խորհրդով իշխանապետաց ազգիս տպեցաւ և կոչեցաւ ՀԲԱՆՔ ՍԻՐՈՅ, և յառաջին և 'ի վերջին կնքեցաւ կնքով Գողոսի պատրիարքին, և այնպէս տարածեցաւ ընդ ամենայն աշխարհ։

Այդ զօրինակ համաձայնութեան այնորիկ բարւոք վարկայ գնել աստանօր, զի որոց ոչն իցեն տեսեալ զանտարակն

Հրաւէր սիրոյ․ ընթերցցին առատանօք, և ծանիցեն թէ ոչ նորոգ եմուտ 'ի մեզ ուղղափառութիւնն, այլ զոր 'ի սկզբանէ ունէաք և անխախտ պաշտէաք յեկեղեցիս մեր․ նոյն իսկ է այն, զոր և անփոփոխ ունիմք և պահեմք հաստատ․

## ԳԼՈՒԽ ԻԵ․

*Սուրբ եւ ուղղափառ վարդապետութիւն եկեղեցւոյն Հայոց այս է, յորոյ վերայ միայն է խնդիրն․*

« Տէրն մեր Յիսուս Քրիստոս է Աստուած ճշմարիտ և
« մարդ ճշմարիտ, նոյն ինքն որդի մարդոյ և որդի Աստուծոյ,
« համագոյ Հօր ըստ Աստուածութեան, և համագոյ մեզ ըստ
« մարդկութեան․ (Ընդհանրական 118)․

« Ուստի ասեմք ընդդէմ Նեստորի՝ մի բնութիւն փոխա-
« նակ մի անձնաւորութեան․ Ասեմք ընդդէմ Եւտիքի՝ եր-
« կու բնութիւն անբաժանելի 'ի մի Քրիստոս, ըստ մտաց սուրբ
« Հարց և ժողովոց․

« Քանզի՝ ոչ ըստ Նեստորի 'ի յերկուս բնութիւնս և յեր-
« կուս դէմս բաժանեմք զմին Քրիստոս, և ոչ ըստ Եւտիքեայ
« և համախոհից նորին 'ի մի բնութիւն ժողովեմք շփոթմամբ
« և այլայլութեամբ․

« Այլ ունիմք առել զերկու բնութիւնն ըստ մեծին Գրի-
« գորի Աստուածաբանի՝ առ Կղեդոնոս թղթին գրեալ ընդ-
« դէմ Ապողինարի՝ և որոց ըստ նմա, եթէ՝ բնութիւնք եր-
« կուք․ Յաւելու առել և զպատճառն՝ քանզի Աստուած և
« մարդ ․ ․ ․ և այլուր ասէ, եթէ կրկին էր, յայտ է թէ՝ բը-
« նութեամբ և ոչ անձնաւորութեամբ․

« Իսկ զմի բնութեանն եղանակ՝ զոր ասեմք մեք, մի ոք
« յայլ դէմս կարծիցէ, բայց ․ ․ ․ զոր ուսաք 'ի յուղղափառ
« վարդապետաց եկեղեցւոյ, մանաւանդ 'ի սրբոյն Կիւրղէ Ա-

զէքսանդրացւոյ, որ ընդդէմ Նեստորի, որպէս և գրէ յառաջին թղթին՝ որ առ Սուկեանոս, եթէ խոստովանիմք միութիւն բանին մարմնացելոյ, որպէս և հարքն ասացին, փոխանակ մի անձնաւորութեան։

«Այնպէս և կրկին լինել կամաց և ներգործութեանց ՚ի միաւորութեան անդ՝ անհակառակս միմեանց, երբեմն Աստուածային՝ յորժամ զԱստուածութեանն կամէր ցուցանել զզօրութիւն, և երբեմն մարդկային՝ յորժամ զմարդկութեանն կամէր յայտնել զխոնարհութիւն»։ (Ընդհանրական 119)։

«Հաստատեմք և ներգործութեանցն նոյնպէս լինել Աստուածայնոցն և մարդկայնոցն ՚ի միաւորութեան անդ... միոյ անձնաւորութեան զերկոսին զայսոսիկ խոստովանիմք, երբեմն որպէս զԱստուած՝ զԱստուածայինս ներգործելով, և երբեմն որպէս զմարդ՝ զմարդկայինս։

«Իսկ զհոգին սուրբ խոստովանիմք Հօր և Որդւոյ, քանզի ըստ որում Լուսաւորչին Հայր յանձնէ, Որդի ՚ի Հօրէ, Հոգին սուրբ ՚ի նոցունց և ՚ի նոսին»։ (Ագաթանգեղոս 397)։

Վասն որոյ ասեմք ըստ Շնորհալւոյն այսպէս, «Եւ Հոգին սուրբ բղխի ՚ի Հօրէ և առնու յՈրդւոյ, բղխումն Հօր անքննաբար, առնուլ յՈրդւոյ անճառաբար»։ (Շարական Կէ.)։

«Եւ թէ ՚ի Հօրէ բղխումն Հոգւոյդ ոչ քննեցաւ, և համան յՈրդւոյ առումն ոչ պատմեցաւ։

«Եւ ըստ Շարականին, Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ՝ Հոգի Հօր և Որդւոյ»։ (Շարական Բ.)։

Իսկ հաստատումն անջատելոյ հոգւոյ՝ ՚ի հրաժարիլ նոցա յաշխարհէ, ըստ ուսուցանելոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին այսպէս. «Որք սուրբքն են, ՚ի Քրիստոս մերձ լինին; զի ուր եմ ես (ասէ) անդ և պաշտօնեայն իմ եղիցի»։ (Յովհ. ԺԲ. 26)։

«Դարձեալ, թէպէտ երկրաւոր կենօքս ՚ի ձեռն մահուան ՚ի գլուխ ելանեն, հոգին յուղարկի առ Աստուած, որ ետ զնա, և մարմինն դառնայ ՚ի հող, յորմէ առեալ յարարչէն։

«Եւ սուրբ և արդար հոգւոյն ընդ յառաջ գան հրեշտակք և սրբոցն հոգիք, և տանին առաջի Աստուծոյ՝ աղմանիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք, գովեն զա-

«մենագօր փառաց Տէրութեան, ամենատուր երկրորդութեան «և գոհանան զերախտաւոր բարութենէն, որ փոխէ յերկրաւորացս յերկնաւորն, յանարգութենէս 'ի պատիւ, զհրաւիրեալն և զկոչեցեալն յիւր արքայութիւն և 'ի փառսն»: (Յաճախապատում 152).

«Եւ յայլուր ասէ, խոկ որ 'ի սուրբ սէրն Քրիստոս հաստատեալ են, որք զանձինս իւրեանց եդին 'ի մահ... ապրեալք լինին....:

«Եւ բացցին դրունք կենաց բարեբարութեանն շնորհօք «հոգւոյն սրբոյ վերին կայանիցն, ուր ժողովք սրբոցն են «հանգուցեալք»: (Յաճախ. 171).

Իսկ յաղագս ներելի մեղօք ննջեցելոց՝ և թողեալ մահու չափ մեղաց զապաշխարանն ոչ վճարելոց ասա՝ աղօթս առնեմք ասելով. «Արա արժանի ողորմութեան և քաւութեան «և թողութեան մեղաց»:

Եւ վերագոչեմք յեկեղեցիս, «Որ թողութեանց ես տուող «Աստուած, թող զմեղս մեր ննջեցելոց»: (Շարական ձժէ.)

«Եւ հանգո՛ 'ի խորանի քում յարքայական 'ի հանգստեան»:

Եւ դարձեալ Շարական «Ահեղ խորհուրդ քահանայից»:

Վասնորոյ և մաղթէ քահանայն 'ի սուրբ պատարագին ասելով. «Յիշեա՛ տէր և ողորմեա՛, և գթա՛ 'ի հոգիս հանգուցելոց, հանգո՛ զնոսա և լուսաւորեա՛ ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից»:

Քանզի այսպէս ուսոյց սուրբ Լուսաւորիչն մեր յասելն. «Իսկ զհանգուցելոց մեղուցելոց և խոստովանողաց և ապաշխարողաց և հաղորդելոց փրկական խորհրդոյն՝ և հրաժարելոց յաշխարհէ, և նոցա կատարեսցին յիշատակք Քրիստոսի «պատարագաւն՝ և աղօթիւք և գթովք մանկանց՝ այլ և բարի գործովք. զի վերջնոցն բարեգործութեամբք հանգուցեալքն նորոգեսցին նորոգութեամբ կենացն անխախտանից»: (Յաճախ. 160).

Վասնորոյ և տեղին՝ յորում կան այսպիսի ննջեցեալ հոգիք, որ կարօտ են օժանդակութեան եկեղեցւոյ, կոչի 'ի մեզ կայան, զոր այլք կոչեն քաւարան կամ մաքրարան.

Իսկ զանդերձ մեղաւորս և զամբարիշտս և զանհաւատս՝

ցխեմք լինել արդէն խել անարգեալս և դատապարտեալս 'ի գեհենի․ ուստի ասեմք բանիւ սուրբ Լուսաւորչին․ «Այլ ծկայունք են նոքա․ որք արհամարհեցին զօրէնս նորա․ և ծառայեցին զմնդակ ցանկութեանց ախտին և այս այն չարեաց․ որ ժառանգելոց են զարտաքին խաւարն․ խաւար է արտաքին չար․ որոց խաւարեալ են միտք և զգայութիւնք․ և օտարացեալ են 'ի կենաց անտի․․․ և են անդ 'ի հուր գեհենի․ ուր լալ է աչաց․ և կրճել ատամանց»։ (Յաճախ 253)։

Իսկ սուրբ առաքեալն Պետրոս է գլուխ առաքելոց որոց․ և վէմ հաստատութեան անմնայուն եկեղեցեաց․ որպէս երգեմք․ «Որ գերագոյն ընտրելոց առաքելոցն դասուց անուանեցեր լինել գլխաւորին զՊետրոս․ գլուխ սուրբ հաւատոյ․ հիմն եկեղեցւոյ»։ (Շարական ԾԹ․)։

Եւ սուրբ Լուսաւորիչն մեր ասէ․ «Քրիստոսադրունդ և խաչակիր առաքելոցն, որոց գլխաւորն Պետրոս»։ (Ագաթ․ 30)։ «Եւ թէ՝ արար զնա վէմ հաստատութեան անմնայուն եկեղեցեաց»։ (Ագաթ․ 198)։

Եւ որպէս իւրաքանչիւր առաքեալք ունին 'ի Քրիստոսէ իշխանութիւն առաքելական․ նոյնպէս և անմնայուն աթոռք՝ որք ունին զօրինաւոր յաջորդութիւն առաքելոց․ Աստուածային իրաւամբք ունին զանմնայուն իշխանութիւն և զիրաւասութիւնս առաքելոց ըստ իւրեանց կարգի և սահմանի․ որպէս աւանդեն սուրբ գիրք․ և սահմանադրութիւնք սրբոց հարց և ժողովոց․ ըստ այնմ․ «Ուսուցէք նոցա պահել զամենայն․ զոր ինչ պատուիրեցի ձեզ․ և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի»։ (Մատթ․ ԻԸ․ 20)։

Եւ խորհուրդք սուրբ եկեղեցւոյ եօթն են․ յորոց մին է վերջին օծումն․ զոր պարտ է մատակարարել ծանր հիւանդաց՝ օծմամբ իւղոյ ձիթոյ օրհնելոյ 'ի քահանայէ․ ըստ պատուիրելոյ մեծին Յովհաննու իմաստասիրի 'ի ԺԱ․ կանոնի ժողովի անդ՝ ուր ասէ․ «Արժան է զհիւանդացն ձէթ՝ քահանային օրհնել ըստ իւրում աղօթիցն որպէս և առաքեալն Յակոբոս պատուիրէ ասելով, եթէ հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ, կոչեսցէ

« զերիցանս եկեղեցւոյն, և արասցեն 'ի վերայ նորա աղօթս,
« օծցեն իւղով յանուն Տեառն. և աղօթքն հաւատովք փըր-
« կեսցեն զաշխատեալն, և յարուսցէ զնա տէր, և եթէ մեղս
« ինչ իցէ գործեալ, թողցի նմա „. (Յակոբու Ե. 14).

## ԳԼՈՒԽ ԻԶ.

*Աղագագս խնդրոյ Արքայեան Հարց, եւ ընդունելութեան նոցին.*

---

(1820) Արդ՝ այս սահմանադրութիւն և խոստովանողական դաւանութիւն հաւատոյ մնացեալ յերկուց կողմանց միաբան հաւանութեամբ ստորագրեալ, բացայայտ ծանուցաւ 'ի լսելիս ամենայն ժողովրդեան, որով և ոչ սակաւ եղեւ առիթ ցնծութեան և ուրախութեան ամենեցուն՝ տեսանելով զկատարումն միաբանութեանց 'ի վերայ առաջարկեալ խնդրոյն, որում փափաքէին ամենեքեան։

Բայց յետ այսր յաւելին հարք Արքայեանք գրել այլ եւս զխնդիրս յարարողութեանց ասելի, և ասէին. թէ պարտ է զայս եւս ուղղել, զի բարբառոյին շահեսցին միայն ժողովրդոց իւրեանց, և մի՛ նեղեսցէ զնոսա խիղճ մտաց իւրեանց 'ի գալ յեկեղեցիս Հայոց. որովհետեւ այնպէս էին նոքա սովորք և զխտացեալք. թէ այն երեքին արարողութիւնք՝ զորս առնեն Հայք, հերետիկոսական ինչ իցեն, և էին այսոքիկ. Նախ՝ ոչ երգել զնզովսն Լեւոնի և ժողովոյն Քաղկեդոնի յեկեղեցական պաշտամունս մեր 'ի շարականս և 'ի ձեռնադրութեան գրոց բառնալով.

Երկրորդ՝ ոչ յիշել 'ի Պատարագի զանուանս Յովհաննու Որոտնեցւոյն՝ և Գրիգորի և Մովսէսի Տաթեւացեաց.

Երրորդ՝ ընդունել զամենայն ուղղափառական և սուրբ ժողովս սրբազան Հարց, զորս արարեալ են 'ի սկզբանէ դարս 'ի ջախջախումն աղանդոց բազմագլխի հերետիկոսաց.

Իւչիւնճիւ , Պետրոս առաքեալ գլուխ տըր , վէ խայթիսա քի առաքեալ տըր՝ առաքեալլարըն իչինտէ , վէ հէր առա-քեալլարըն յաջորդլարը փիլխէնին իչինտէ պէօյլէ քըլըգէրի վար տըր Ալլահտան վէրիլմիշ . նասըլ քի՝ սուրբ քիթապլար վէ աստուածաբանլար վէ սուրբ ժողովքլար պիլէ պէօյլէ էօյ-րէտիրլէր , վէ նասըլ քի չէօհրէթլի աստուածաբան Պիլուարտ պէօյլէ եազար , Բ. հատար վէ 96 սուրէթինտէ . " Բարըն քի-լիսէնին իչինտէքի պէօյլէ քըլըգըլ . վէ ճէմաաթ պայլըպա-ը՝ մարէյնէ քիմէ կիրմէմէն Քրիստոսուն էլինտէն սըլը րըր . անճալըն տախի եպիսկոպոսլար՝ Քրիստոսուն էլին-տէն ալըրլար . մարէյնէ պիր սանէրի կիրմէզ . վէ սանէր միլ-լէթլէրին հայրապետլէրի սահիհ չէրատիթ տըրլար քէնտի պաշլարընա . եօգ քի եալընըզ բար ըյան միւշաֆէրէ խանէլէր (կարդինալլար կիպի) . վէ պունլարտան մաա ընդհանուր մի-

հաւասըն իշըքի օլան խայր եռալընդ բար մէօհիւրլէ-մէզ, եւ խուսուսէն պուլունան քահանայապետլէր օնտա բար ըլան մէօհիւրլէրլէր, նէթիճէ վէրիրլէր մառտէյէ »։

Բէօյլէ ինսանըր ընդհանուր քիլիսէ, էկէր Հռոմէոյ քիլի-սէսի ընդհանուր քիլիսէնին ինանտըղը կիպի ինանմասա, հէ-րէտիկոս վէ հերձուածող օլուր, մալումլէրի օլան պէօյլէճէ.

Տէօրտունճու՝ կայտէ, քաւարան իչուն. խրիստիյան ա-տէմլէրին ճանը թէնինտէն այրըլտըղը կիպի Ալլահ ազիմիւշան պէյան իտէր օ ճանըն մագամընը, էկէր պիւթիւն պիւթիւնէ փաք տըր, օ ճանըն ճէննէթլիք օլտուղունու պէյան իտէր, բարի հրէշտակլար ալըրլար կէօթիւրիւրլէր ճէննէթէ. վէ պէօյլէ կիւնահլէր իլէն էօլէն ատէմլէրին ճանլարընը պէյան էտէր Ալլահ քի, օնլարըն ճանը ճէհէննէմլիք տիր տէյի, ա-նըտէ չար հրէշտակլար ալըրլար կէօթիւրիւրլէր ճէհէննէմէ.

Վէ էկէր պէյան իտէր քի, օլ ճանըն ճիւզի կիւնահը վար, նախոտ տոյ էտէր քի, պատըրշլահան պէօյլէ կիւնահ-լարըն զաղէպի տահա ազ օլունմալըն տըր, օնու տա բարի հրէշտակլար, Ալլահ ազիմիշան նէրէյէ քի էմր իտէր, օրայա կէօթիւրիւրլէր, օնտան դուրթուլուն ճէննէթէ կիթ-սին տէյի, վէ քիլիսէ տախի տուա իտէր, օ թարզ ճանլար իչին, վէ ազգաբաքարը սատագա վէրիրլէր, յէշիլլէք վէրիր-լէր պատարագտա, վէ տահա չոգ թիւրլիւ թիւրլիւ հոգե-հանգըստ իտէրլէր.

Պու մատտէյի տէ պիզիմ միլլէթին աւըր վարտապետլէ-րին քիթապլարընտա պագարագ, չոգ շահատէթնամէ վար, է-կէր ժամանգիրքտէ, էկէր Շարականտա, վէ էկէր Մաշտոցտա տըր.

Պու մատտէյի տէ ընդհանուր քիլիսէ պու թարզ ինանըր, վէ Հռոմէոյ աւըր քիլիսէսի տախի.

Պէշինճի մատտէ, վէրճին օթուրմասը, ճայիզ տիր հա-տալարու վէրմէք, նաասըլ քի աւըր առաքեալլար վէրիրլէր ի-տի Փրիստոս էֆէնտիմիզ պու ճիհանտէ իքէն, վէ Ցակորոս առաքեալ տա թէնպիհ իտէր, վէ ճումլէ խրիստիյան միլլէթ-լէր տէ իտէրլէր, վէ պիզիմ միլլէթ տախի իտէր իտի իլէրի, պիր պաշլըճա սէպէպ իչին օթուրմա զալտըրըլտը, լաքին

գիչէր ժամ գալըր օծումուզ․ վէ խըթէյէնէ վէրիրլէր․ գի-
բա Դաթոլիկլէրտէ տախի զուրուր խուէր գի․ եա հասըթա խա-
ռէմէզ ալմայա․ վէ եախօտ հասթանըն էթրաֆը դօյմէրմէզ
քի, հասթա էօլէճէյինի տույմասըն տէյի․

Պունլար ճէմիսի տէ պիր այնի խալի պիլդիրիր միլլէթին սուրբ
վարդապետլէրին գիթապլարընտա․ Պունտան ածնկյա ալէյէն-
մէօխյինիզ աղիզ աստուածաբան Արքայը վարդապետլէր նէ
եազըյոր, պագըն կէօրիւն, վէ էշյէնին, միլլէթիմիզին ա-
գիզ վարդապետլէրինէ վէ ադդասէր անիրայոտս աղնաթոր-
լար գի․ միլլէթիմիզին խըրիստիյանլըղընա խալէլ վէրէնլէրին
խաֆի գոյդուըն գիլիսէտէ օգունան գիթապլարըն իչինտէն,
քի պունլար տըր․ Յովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթեւացի,
և Մովսէս Տաթեւացի․ վէ Շարականտան Դէսախօրոս Ասորի,
վէ ձեռնադրութիւն գիթապընտան Լեւոն պապըն վէ Քաղկե-
դոն ժողովքունուն նզովքու, պունլար իչին եասաք իթմիշ-
լէր խալի Հռովմայ գիլիսէնին միսիոնարլարը, վէ պու մատտէ-
լէր իչին տէրլէր խալի Էրմէնի գիլիսէսինէ կիթմէյին․

Իշտէ պունլար տըր Արքայըլարըն կէօրտիւքլէրի իշ, ադ-
նայըն վէ պիլին․

Վէ գուսուր պարադուլթիւնլար, վէ ծէտլէր էսկի թագ-
լիմ տիր, պին սէնէտէն էվվէլի նասըլ քի խըմըտէն խըրիս-
տիյանլէրին, օնուն այնիսի տիր Էրմէնի գիլիսէնին գայտէլէրի․

Մէքրուհ փախագլար էսկի գիթապլարտան թասիհ իթմիշ-
լէր պագարընլար, աղնասընլար․ Նաֆիլէ նէրտէ Էրմէնիլէրէ
պուխատան իթմէսինլէր, վէ Էրմէնի գիլիսէսինէ հէրեսիկատ
տէմէսինլէր, իշտէ պու եօգարքի եազըլան մատտէլէրին խիւ-
լասէսինի վէրէյիմ․ Հռովմայ գիլիսէսի իլէ Էրմէնի գիլիսէ-
սինի պիրպիրինէ րուպար խաէրէք, նասըլ քի հէր մատտէնին
նիհայէթինտէ օլմուշ տուր․

1․ Էրմէնի միլլէթինին գիլիսէսի նէ թարզ իմանըյօրսա
հոգին սուրբուն բղխումընու, եըւմընու, պիր այնը իմանըր
Հռովմայ գիլիսէսի․

2․ Էրմէնիլէր նասըլ իմանըրլարսա իքի բնութիւնու Քրիս-
տոսուն, օնուն կիպի իմանըրլար Հռովմայլըլար․

3․ Պետրոսուն գլխաւորութիւնա վէ բաբըն պէօյիւքլիւ-

դիւնէ կէլիրսէ՝ ինֆիրամ ող թարաֆընտա սախըլըր, յաթէշ-
պին Ալլահ կիպի խանէլէր ։

4. Քաւարանը պիր այնի կըմէնիկլէրին աչարըղը կայմագ կի-
պի տէրլէր ։

5. Վերջին օծումու թարաֆէյնին գապուլ խանէլէր, օլա-
քի իքի թարաֆ տա պիր այնի հիչ պիր ֆէրք եօղ տուր ։

Վարին Քոչէսի լաթէշըին եպիսկոպոս, վէ մէքրուհ մի-
սիօնարլար, քի կըմէնի քիլիսէսինէ հերետիկոս հերձուածող
տէրլէր, էկէր Հռոմայ քիլիսէսի տէ պոռնկարա ույուպ, օ տա
տէրսէ, իւմումէն հերետիկոս վէ հերձուածող քէնտիլէրի օ-
լուրլար, զիրա իլիմսալ սամէմէր տէրլէր քի, (հաւատարաց
նոյն է հեռեւողութիւն) օլ քի իքի մասսէ պիր այնի տիր, պի-
րինէ էյի տէնիրսէ, հէլ հէլալ... օ պիրինէ տէ էյի տէնիլիր,
վէ էկէր պիրինէ ֆէնա տէնիրսէ օ պիրինէ տէ ֆէնա տէնիլիր,
զիրա իքիսի տէ պիր տիր ։

Վէ լաքին պիզ Հռոմայ քիլիսէսինէ հերետիկոս տէմէ-
յիզ, վէ հերձուածող հիչ, զիրա սորր եկեղեցի պիլիրիզ,
լաքը տա ձապա օթուրմալ իչին ղար տէրիզ, սատտածա-
րանեա խալֆաքի մանաւոր եկեղեցի ։

Վէ պու պին թարաֆըննան պէօյլէնքի կիտնահ կէրչի եօղ-
նըշը եօղ տուր, լաքին էյի րաղք աօէլ թարաֆընտան, վէ
իկիս չէրատծ թարաֆընտան ինքիրամ եաղնըշը վար ։

Զիրա չար, մոլորեցուցիչ, խաբեբայ, վէ մէքրուհ միսիօ-
նարլարըն, վէ պապի մոնախեցայոցն ճէմաաթըն թանին
տիր տէյի տիյնէմէ իլէն, չօղ եալընըզ չէրատծ կէօրիյոր,
պէօյլէճէ մալխումէրի օլան ադրաձ Գաթոլիկէրին ։

1820. Մայիս 7

Հ. Սերովբէ Վ. Ճէվահիրճեան
ի վարդապետէ Մխիթարեան

# ԳԼՈՒԽ ԼԱ.

*Յաղագս օրհնութեան խաչից վերջին օծման, և աղմկի ժողովրդեանն Հայոց.*

---

Որ 'ի սկզբան օգոստոսի, օրհնեաց պատրիարքն զխաչ վերջին օծման 'ի մայր եկեղեցին սուրբ Աստուածածնի.

Եւ յեկեղեցիս ինչ առաքեաց, զի ոք 'ի հիւանդաց յօժարին առնուլ զայն խորհուրդ, երկիցունք օծցեն զնա անխափան.

Բայց հակառակաւէր Գողէճեանք ոչ սակաւ գրգռէին զոմանս ոմանս 'ի մերայնոց, եթէ զպապն եւս յիշէք 'ի պատարագի, կատարեալ ուղղափառ լինիք, և այլ եւս անտեղի և ամբարիշտ բանս ասէք, ասէին.

Եւ յեօթներորդ աւուր օգոստոսի, որ էր շաբաթ, Գաղատացի ոմն 'ի հակառակաւէր Գողէճեանց՝ խորհրդով Փուցինեթի կոչեցեալ Խուսիայոյ կարգաւորին՝ որ ունէրին թշնամին եկեղեցւոյս Հայոց, ունելով 'ի ձեռին իւր զհրաւէր սուրբ գիրքն, և փոխանակ պատկերի Լուսաւորչին՝ մածուցեալ ընդ պատկեր պապին Հռոմայ, սկսաւ շրջիլ 'ի սենեակս կոչկակարաց կեսարացւոց, և ցուցեալ ամենեցուն զպատկեր պապին, ասէ ցնոսա, առ ինչ՝ նստեալ էք եղբարք առ անհոգս և միամիտ, ո՞չ գիտէք, զի պատրիարքն մեր փռանկացեալ՝ ուրացաւ զԼուսաւորիչ հայրն մեր, և զպապն Ֆռանկաց ընկալաւ. անարգեաց զէջմիածինն սուրբ, և Հռոմայ աթոռոյն հնազանդեցաւ, այսուհետև ոչ գոյ սրբալոյս միւռոն, որով որդիք մեր դրոշմեսցին 'ի Հոգի սուրբ, այլ իբրև աղցան խառն՝ իւղով ձիթոյ ունիք օծանիլ. տեսէք եղբարք, տեսէք ընդ պատկերս զայս, միթէ՞ նմանիցի սա սուրբ Լուսաւորչին մերում, երանի թէ եղբարք՝ մեռեալ էաք, և ոչ տեսեալ զայս օր, արիք եղբարք արիք, լռելոյ ժամանակ չէ, այլ երեք հարիւր ոգիք սուրբ Լուսաւորչի զաւակունք 'ի վաղիւն ունին գնալ առ պատրիարքն, բողոք բառնալ, գոչել և աղաղակել, և սաստկացուցանել զնա, զի թերևս զղջասցի, և մի փոխեսցէ զհայրենի աւանդութիւնս նախնեաց մերոց. և այլն.

Զայստիկ լուեալ անմիտ ժողովրդեանն, և տեսեալ զպատկեր սպային՝ հաստատեցին զժողովուր բանից նորա, և խոստացան նմա ընկերանք եւս կանխել ընդ առաւօտն յեկեղեցին 'ի խուռնմարու, և գլխաւորք կոչնակարացն խուռնեալք յայժ 'ի բանիցս յայսցանէ, առաքեցին զօրս 'ի կողմնս արշաւանիցն իւրեանց պատուիրել և ասել, զի թէ յառաւօտն յեկեղեցին խուռնմարանի ոչ գտանիցին, յարձակեալ անտի տարագիր լինիցին։

Այս ձայն եհաս յականջս պատրիարքին ընդ երեկս աւուրն, և խոկոյն փութացաւ գինմէսիոս եպիսկոպոս մէկի իւր առաքել յաւդկիստը առ Գրիգոր ճարտարապետն՝ և առ Յարութիւն աղա Պէզճեան ծանուցանել նոցա զայս՝ զոր Առաւն։

Բայց որովհետեւ երրորդ ժամ էր գիշերոյն, ոչինչ կարացին առնել նոքա, և սակ Յարութիւն աղա Պէզճեան, եթէ լուեալ էր խմ զայս յերեկոյին, գիւրին էր ցրուել զխորհուրդ նոցա, բայց զի գիշեր է, զի՞նչ կարացից առնել։

Եւ 'ի վաղիւ անդր 'ի կիւրակէի յառաւօտուն Գաղատացին այն՝ որ յառաջնում աւուր վրդովեալ էր զհասարակութիւնն, շրջագայեալ յեկեղեցին ամենայն ազխարախմաք ստարակմանց 'ի կերպարանս նեսարացւոց՝ հրաւէր կարդաց 'ի չորրորդ ժամուն ճշմանել յեկեղեցին ուխտ զմնաց։

Եւ Տէլի Պաղտասար՝ որ էր 'ի մանկոյն ծովակալ բդեշխին, թերադրեալ 'ի բանից երկուց աղխատախմբու նեսարացւոց՝ որոց անուանք էին Յակոբ և Կարապետ, առաքեաց և նա 'ի պատրիարքարանն յայն որ գրեհկայս Սամաթիոյ։

Եւ անմիտ մեծ ժողովրդեան 'ի Պաղչէ ժամ եկեղեցւոյն, և միաբան աղաղակէին, թէ պատրիարքն փառկացաւ, և զնեղ 'ի ֆռանկութիւն փախելոյ է, մեք Հայ եմք, Ֆռանկ ոչ լինիմք, 'ի սուրբ Լուսաւորչէ մերմէ ոչ բաժանիմք, եկեսցէ պատրիարքն և ծանուսցէ մեզ։

Առաքեաց Պօղոս պատրիարք զՄարկոս և զՅակոբ եպիսկոպոսունս Նիկոմիդիոյ, եկին նոքա, և յորդորէին զնոսա բանիւք բազմօք, թէ սուտ են այն ամենայն, զորս լուեալ են, բայց նոքա հարին նոցա բռունս, և վանեցին զնոսա։

Այս գրոհ տուեալ գնացին 'ի պատրիարքարանն, և տեսեալ զի փակ էր դուռն, հարին և խորտակեցին, և հեղան 'ի ներքս, յուզէին զամենայն անկիւնս, և ոչ կարէին գտանել զպատրիարքն, զի նա ոստուցեալ անդէն ընդ պատուհանն՝ անցեալ էր 'ի փախուստ 'ի մերձակայ տուն Ցաճկին, և թաքուցեալ անդ։

Եւ այսու պաշտպանեաց ոչ միայն զանձն, այլ և որ մեծ է՝ զազգն՝ զի թէ վնաս լինէր անձին նորա, տուժէր ազգն զանհնարին տուգանս։

Յայնժամ՝ Դիոնէսիոս եպիսկոպոս փոխանորդ պատրիարքին՝ ազդ արար 'ի դուռն Էէնիչէրի աղասին, որ իսկ և իսկ եհաս անդ 5-600 զօրականօք, և զամենա կալեալ՝ առաքեաց 'ի բանտ առ Մուհսիր աղա, և զայլսն ցրուեաց, և եթող անդ զՉաւշ աղա հանդերձ զօրականօք, որ պահէին զդուռն պատրիարքարանին զաւուրս հնգետասան, և զպատրիարքն հանեալ 'ի տանէ Ցաճկին հրամանաւ Տէրութեանն, նստուցին 'ի տեղի իւր։

Եւ 'ի միւսումն աւուր, որ էր 9 օգոստոսի, անդր 'ի կօշկակարաց յետ զայն ահիւս գործելոյ յանդգնեցան եկանել նաև անկրկիւղ յատեան եպարքոսին, և թուղթ բողոքանաց մատուցանել նմա։

Եւ եպարքոսն ասաց նոցա, թէ ո՞րով իշխանութեամբ արարիք զայդ 'ի վերայ պատրիարքին ձերոյ յարքունուստ կարգելոյ՝ կամօք ապստամբութեամբ. եթէ դատ ինչ ունէիք ընդ նմա, և բողոք զնմանէ, ահա ատեան, ո՞ւմ ծանեաւք, թէ գոյ իշխան 'ի վերայ ձեր, զի յետ ձեռնարկեց լինելոյ յայդ չարիս անհնարին՝ եկիք այսր անպատասխան լինել։

Եւ հրամայէ ձերբակալ առնել զամենեսին, և արկանել 'ի բանտ։

Ի նմին աւուր կոչեցան 'ի դուռն և իշխանք մեր, ուր Բէկիզ էֆէնտի եհարց նոցա՝ թէ զո՞հ էք զպատրիարքէն ձերմէ, զորմէ չարախօսեն ապստամբեալքդ, և թէ զի՞նչ իցէ այս իրդ օրհնելոյ, նոյն է ընդ պալատան խաչին եկելոյ յԷջմիածնէ, թէ այլ։

Պատասխանի արարին իշխանք մեր, թէ սա այն է, որ յա-

ւորց անուն առաքելոց և Քրիստոսի կայր 'ի մեզ, բայց 'ի սակաւ ժամանակս խափանեցաւ, և զի վասն սորա անկեալ էր բաժանումն 'ի մէջ մեր, նորոգեցաք անդրէն, զի խոչընդոտն բարձցի.

Եւ այս խոստովանութիւն բանից իշխանաց մերոց գրեցաւ յարքունի դիւանադիրս, և այս իբրեւ նախադասութիւն նմանրացուցանէ՝ զոր յայսմ հետէ ամբաստանութիւն զայսմ գլխոյ լինիցի, նոյնպէս և վասն նորաձեւ գրքոյ Հրաւէր սիրոյ անուանելոյն, վկայեցին լինել վարդապետութիւն հին և ոչ նորամուտ, զոր Տաճիկք ԷՍԿԻ ԷՐՄԷՆԻԼԻՔ կոչեն.

Այլ քանզի 'ի բանս դատախազից կայր հնազանդութիւն պապի, և Ֆրանկութիւն, թէ և դժուարահաւատ եղեւ առաջուած իշխանաց մերոց առաջի արքային, այլ մերժեցաւ առբակոյսն, յորժամ զՀրաւէր սիրոյն թարգմանեալ 'ի լեզու Արաբացւոց ընթերցան, հուսկ յետոյ ասէ Բէկիր էֆէնտի, եթէ այդպէս է, ո՞ զայդչափ բազմութիւն յամին կացցէ.

Պատասխանեն իշխանք մեր, թէ սոքա արք տգէտք և առանց դպրութեան են, իրաց չեն հասու լեալ խրթնութեան, և այլ ընդ այլոյ կարծեօք յայս 'ի սոյն են ձեռնարկեալ.

Եւ քանզի 'ի քրիստոնեայս մեզ հաճոյի ածիր ապստամբութեանս, և դէմ ընդդէմ ներհակ իշխանութեանս, վասնորոյ անհնարինս զայրացոյց զարքունի օրէնսն և գլխադաւորն, զի մինչ նոքա հնարին զաստահական ազգին իւրեանց ածել 'ի հպատակութիւն, քանի՞ մեծ զայրացումն ոչ լինի նոցա տեսանել զատուկն ես 'ի նոյն չարիս մատներեալ.

Ուստի յայնուհետեւ առ ուրս պատգամ՝ սաստիկ եկն 'ի դրանէ առ պատրիարքարանն մեր յայտնել զհեղինակն, որ զդրդմութեանն ամբոխ գումարեաց, և զի՞նչ է պատճառ այդմ, յայս առնել.

Եւ նա պատասխանեաց, թէ չիք այդմ պատճառ բանաւոր, բայց միայն բազմադիմի կոհակք ծովացեալ մեղաց իմոց, որ զխուժան ապարդամիտ ժողովրդոց կուտեաց 'ի վերայ իմ, բայց առ 'ի գտանել զհեղինակն՝ առանձինն զամենայն գլխաւորս արհեստաւորաց կոչեաց, յերդումն հրաւիրէր և նզովս կարդայր 'ի վերայ նորա, որ գիտէր զոլով՝ ոչ վկայէ և ծա-

նոցանէ, զի մատնեսցուք առ է զչարն, և չարիքն անցցեն յազգէս ։

Ի 22 օգոստոսի առաքեաց յամենայն եկեղեցիս փորձա- գետս, հրատարակեաց զհրաւէր սիրոյն՝ փորձառութիւն ազգասիրական, բանք ողջամիտ դաւանութեան սրբազան հարց, և ոչ նորահնար գայթակղեցուցիչ և մոլորամիտ ։

Նաև կոնդակաւ բանադրանս ընթերցաւ վասն նոցա, որք գիտեն, թէ ո՞ր եղեւ սկսեալ այսր չարախորհուրդ ա- պստամբութեան, և ո՞յք էին՝ որ զայդ հնարեցին, և ոչ յայտ արարեալ ծանուցանեն ։

Ցեկեղեցին առըր Հրեշտակապետին՝ յորժամ Եփրեմ վար- դապետ փակեալ զվարագոյր խորանին ընթեռնոյր, ժողո- վուրդք դիմադարձ գտան և չետուն թոյլ կարդալ ։

Այլ 'ի հանդիպակաց կիւրակէին գնացեալ վէքիլ Դիոնէ- սիոս եպիսկոպոս ընթերցաւ ։

Բայց այս ամենայն վճարեաց ոչինչ, և ոչ յերեւան կացոյց զոք, և բազումք 'ի բանտարգելոցն մատնեցան 'ի տանջանա- րան Գոմթան պաշիին, ուր ոմն խոստովանեցաւ, թէ Տէլի Գաղտատրն յորդորեալ զմեզ առաքեաց անդ, և առաքեալ արս՝ ըմբռնեցին զնա, և արկին 'ի բանտ ։

Եւ այլ ոմն ասաց, թէ առաքեաց ոմն նշանակեալ անուն կեսարացի յորդորեաց զմեզ յայս գործ ։

Եւ զայն գտին 'ի տուն Սախոյեան Գրիգորի աղայի, և բեր- եալ եդին 'ի բանտի ։

Այլ ապա յայտնեցաւ թէ Գաղատացի ոմն գնացեալ 'ի սենեակս նոցա յորդորեալ է զնոսա և հանդգնեալ ամբոխ մեծ յարուցանել ։

Ուստի հրամայեաց արքունիքն, և զամենս 'ի նոցանէ ծպտեալ կերպարանօք շրջեցուցին առ ուրս բազումս 'ի փողոցս կոստանդնուպօլսոյ գտանել զԳաղատացին զայն, այլ չգտա- ին, զի փախուցեալ էին զնա Գալէճեանք յեւրոպա ։

Եւ վասն այսր շրջէր Գիմէջեան եպիսկոպոս յեկեղեցիս կոստանդնուպօլսոյ և գիւղօրէից նորին, և բանադրանս կար- դայր, թէ որ ոք պահեալ իցէ զայրն զայն 'ի տան իւրում կամ զգիտելի ումեմն, յայտնի արասցէ, այլ ոչինչ օգտեցաւ ։

Իսկ սարկաւագն 'ի տանջանս անդ. մատնեաց նախ զԱստուածատուր և զԵրեմիա եպիսկոպոսունս, զորս իջուցեալ առ Գօմնոն դաշտին, և բերեալ առաջի սարկաւագն, ասէ ցնա Գօմնոնի դաշտին, սոքա՞ են սեւագլուխքն, զորս մատնեցեր, և զի՞նչ ատոյին քեզ, ծանո: Ասէ սարկաւագն, սոքա են, բայց ինձ ոչինչ տուեալ են սոքա, այլ առ ահի և սաստկութեան տանջանացս մատնեցի զսոսա:

Յայնժամ եդուն զնա մերկացին 'ի տանջանս, և նա մատնեաց յայն որ զսէր կիրակոս կաթողիկոսն Սայ, որ յաւուրսն յայնոսիկ եկեալ գնայր յաթոռ իւր:

Առաքեցին իսկոյն սուրհանդակս զհետ նորա, և գտեալ զնա 'ի ճանապարհին 'ի Նայլը խան, ածին 'ի կոստանդնուպօլիս, և տարեալ 'ի բարձրագոյն դուռն, հանին առաջի մեծի փոխարքային:

Հարցանէ եպարգոսն և ասէ, զի՞նչ է այն նորատիպ գիրքն, զորս հնարեալ է պատրիարքն հակառակ ուղղութեանց ձերոց, և պատճառ եղեալ է այլմոլոյգ լինելոյ ժողովրդեան ձերում:

Պատասխանի տայ կաթողիկոսն ճշմարտախօս բանիւք և ասէ, գիրքն այն ոչ է բնաւ հակառակ հայրենի ուղղութեանց մերոց, այլ է բուն իսկ հարազատ՝ համառօտութիւն հաւատոց մերոց, և այն գիրք խնդիր հրամանաւ տպեցաւ և ոչ պատրիարքին:

Իսկ եթէ պատրիարքն վասն կնքելոյ զսկիզբն և զվերջ գրքոյն այնորիկ յանցաւոր դատնի, նախ իմ՝ գլուխ պարտ է հատանիլ, զի ես կնքեցի զառաջինն կարմիր կնքով իմով՝ պարագլուխ եղեալ այնոցն ամենեցուն:

Ասէ ցնա փոխարքայն, և դու մեծ ի՞նչ ո՞ք իցես քան զպատրիարքն:

Ասէ կաթողիկոսն, ըստ օրինի մեհմետական թագաւորութեան ձերում զոր Տէր հաստատուն պահեսցէ մինչև 'ի կատարած աշխարհի, պատրիարքն մեծ է քան զիս, և հրամայէ ինձ 'ի մարմնաւորական դէպս: Այլ ըստ հոգևորութեան քրիստոնէական կրօնի մերում մեծ եմ ես քան զնա, և հրամայեմ նմա 'ի հոգևորական մասին:

Եւ այսպիսի բանիւք յանկուցեալ զնոսա փախստեայքն՝ մերժէ 'ի մտաց նորին զամենայն կասկած և զերկբայութիւն ։

Յայնժամ փախստեայն հրամայէ նմա անհոգս լինել, և երթալ ուր և կամիցի և հանգչել աւուրս ինչ, որ եկեալ եկաց 'ի պատրիարքարանն, և 'ի 18 սեպտեմբերի առեալ վերստին հրովարտակ յԱրքայէ՝ յուղի անկեալ չոգաւ յաթոռ իւր ։

Յայսմիկ աւուրս զՏէրն Պօղոսայն եւս եդուն 'ի տանջանս, և նա խոստովանեցաւ. թէ երկու եկեղեցականք Յակոբ և Կօշկակար Կարապետ թելադրիք եղեն ինձ և հաճեցուցին յայս յարկս ընդդէմ պատրիարքին ։

Գնացին զօրականք կալնուլ զնոսա՝ այլ նոքա փախուցեալ էին, յետ աւուրց ինչ Յակոբն գտաւ յԷնէփխուլէն ծպտեալ կերպարանօք մահմետականի, և բանտարգեալ եղեւ ընդ այլսն ։

Այլ յետ աւուրց ինչ տարկանալն 'ի տանջանս անդ մատնեաց զԹախոյեան Գրիգոր աղայն, և զազգականն նորին ըղկեղծ պատուելին Ազարիա, որ առ ահի տանջանացն 'ի բանտի անդ յեղաշրջեցաւ 'ի Մահմետական օրէնս, նոյնպէս և Տէր Պօղոսար, և անխիղճ այն սարգաւագ՝ որ ժամանակաւ յառաջ ուրացեալ 'ի հաւատոյ իւրոց 'ի Պարիզ քաղաք Գնացեալ՝ և այսպէս որպէս թէ ապաշխարեալ և փախուցեալ, այժմ 'ի բանտին վերստին ուրացաւ, զի զերծանիցի 'ի տանջանացն, այլ առ ոչինչ գրեցաւ դաւանութիւն Մահմետական կրօնին, միայն կերպարանափոխ և անուանափոխ արարեալ զնա, վերստին արկին 'ի տանջանս յայտնել զհամախոհս ապստամբութեանն ։

Եւ նա եցոյց յայն օր զՊէկիմօղլի տիրացու Յովհաննէսն խալիֆաթարու՝ անուամբ, թէև գիրս անգամ՝ գրեաց առ կաթողիկոսն Էջմիածնի՝ զանգատ զպատրիարքէն, զհետ եղեն զօրականք ունել զնա, այլ նա փախուցեալ էր 'ի Դրիմ ։

Եւ մինչ զԹուղթն գրեալ առ կաթողիկոսն՝ խնդրեցին յարքունուստ, Պէզճեան Յարութիւն աղայ՝ որ հնարիւք իւր 'ի ձեռս իւր առեալ և առ իւր պահեալ էր, տարաւ առ Ռուսանց դեսպանն, զոր Աստուածատուր Եպիսկոպոսին թարգմանել ետ 'ի ռուսական բարբառ, և առաքեաց առ Արքայ ։

Յետ երկուց աւուրց զժողովանոյն՝ ուրացողն մատնեաց և զԱրփիարեան Մկրտիչ աղա, զԳարաբէհեա մահտեսի Աբրահամ՝ աղա, զԿէլկէլեան մահտեսի Պօղոս աղա, և զՄարգարեան աղա Պօղոս։

Այլ Գարաբէհեա մահտեսի Աբրահամ աղա յետ երկուց աւուրց զերծաւ 'ի բանտէն միջնորդութեամբ Նէճիպ էֆէնտիին՝ որ Գաւիթ քեահեասի էր կուսակալին Եգիպտոսի, և այլքն մնացին 'ի բանտին։

Անդ 'ի 26 օգոստոսի յերեկոյս հինգշաբթի աւուր յերկրորդ ժամու գիշերոյն կոչեաց փոխարքայն զՊօղոս պատրիարք, և առանձինն եհարց զնա և ասէ, չգիտէ՞ր դու նախածանօթ ապստամբութեանս, և ընդէ՞ր ոչ յայտ արարեր 'ի դուռն արքունի զելս իրացն գտանել։

Ասէ պատրիարքն, ներողութիւնն հրամայեաց ինձ բանալ զբամբասանս 'ի յայդմ, և եթէ այս գործ խոհականութեան մերում միայն մնայր, բարւոք յաջողէր 'ի գլուխ ելանել, և այս անիր ապստամբութեան չլինէր 'ի ամիկ ժողովրդեան, բայց վասն զի քանի մի անձինք 'ի մեծամեծաց ազգիս ոչ թոյլ ետուն ինձ ըստ խելաց իմոց անօրինել, այլ ինքեանք ձեռներէց եղեն զպաշտօն պատրիարքի կատարել, զանխելս և զանդէպս հրամայել և 'ի գործ դնել, և ահա այս վախճան է նոցա խոհականութեան։

Հարցանէ փոխարքայն և ասէ. և ո՞յք են նոքա։

Ասէ պատրիարքն. Գրիգոր ճարտարապետ, Յարութիւն Պէզճեան, Ճանիկ փափազեան, Հաճի Յովհաննէս Երկանեան, և Կարապետ Աշնաուրեան։

Ասէ փոխարքայն, կարճեա՛ զլեզու քո, և մի ևս յաւելցես անուն 'ի բերան քո զծանիկ, (զի իւր սեղանաւոր էր նա), և առաքեաց զնա 'ի պատրիարքարանն, և գրեաց առ Արքայ՝ զոր լուաւ ինչ 'ի պատրիարքէն։

Իսկ Պօտոսեանի պաշտօն յաւել և զԱխալցեան Գրիգոր մատնել 'ի տանջանս, որ յետ եօթն աւուրց այլ ոչ կարացեալ ընդդէմ ունել տանջանացն յալեւորեալ հասակի ութանամեայ ծերութեան իւրոյ, զամենայն՝ մեղս յանձին իւր կալաւ, ասելով, ես միայնակ արարի զամենայն, և պատճառ դարձայ ամենայն

յարեացդ․ չունի ոք ընդ իս մասն և բաժին․ Թողէք երթալ զպղծալի բազմութիւն անօրէն անձանց, և մնաց իմ՝ տառապելի ամենայնի ։ Նոյնպէս և տարաբախտն Յակոբն 'ի տանջանս անդ տայ, եւ և Տէրն Պաղտասարն եղաւ գրգռիչ աղմկացդ խռովութեանն ։

Նոյնպէս և Աղաբիա պատուածին խոստովանեցաւ, թէ ընդդրացող աւրիսրադին շրջեցաց ասա անդ, և զոր ինչ քարոզէր աս 'ի գրգիռ ապստամբութեան, և ես մկայէի խոստացի լինել ։ Եւ զանձինեցուն սոյա զխոստովանութիւնս բանից՝ որ եղի Թադրիր, առաքեաց Փօսխան սպաշին առ արքայ ․

Եւ 'ի 18 սեպտեմբերի յաւուր շաբաթու յերեկոյեան ժամերգութեան մինչ երգէին զկարգ զուարթն, մտին 'ի դուռն մայր եկեղեցւոյն խումբս ի զծերանոցաւր Գրիգոր աղան Սախոյեան, և հանին անդ զնոտարս և զպատասխանի գլխոյ նորա, նոյնպէս և զտարաբախտն Յակոբն 'ի Չէմպէրլի Տիքէլի Թաշն գլխատեցին, զուրացեալ սարկաւագն և զպատանին Աղաբիա տաճկական զգեստուք կախեցին 'ի Բարմաղ գափուն․ Եւ զՏէրն Պաղտասարն 'ի Սամաթիա առաջի դռանցն իւրոյ կախեցին ․

Իսկ յաջորդ աւուր զԱստուածատուր և զԵրեմիա եպիսկոպոսունս հանեալ 'ի բանտէ՝ արձակեցին զնոսա 'ի տեղիս իւրեանց, ընդ նոսին և զտասն և ինն անձինս, որք չէին իրազեկ կամ՝ յանցաւոր ․

Այլ զիշխանսն՝ որք էին 'ի բանտին, առաքեցին յաքսոր, զՄկրտիչ Աբիխարեան 'ի Սամանքէօյ, զմահտեսի Պօղոս Կէրկէրեան յԻզմիր, և զաղա Պօղոս Մարգարեան 'ի Հալէպ ․

Իսկ զորս յառանձնախօսութեան անդ մատնեաց պատրիարքն զՆեղեսին իշխանսն առաջի փոխարքային, նոքա եւս արժանաւոր գտանեցան աքսորանաց, միայն ջանիւ սոցա՝ որ անզանաւորն էր փոխարքային, ազատեցան 'ի շնորհս նորա․ և Գրիգոր ծարատրապետն՝ որ կայր մնայր 'ի տան իւրում պահուցեալ․ յերրորդ աւուր հանկարծակի եղեւ սատակ մերկ․ և Յօանեաց զրպարտում չինուածս արքունի պալատին․ հրամանաւ արքային կոչեցաւ 'ի նորագոյն նորին․ և 'ի շնորհս այնր զերծաւ 'ի փորձութենէն՝ որում անդ ունէր համարել ․

Երկաննեան Հաճի Յովհաննէս՝ որ 'ի ծովու այսմիկ փորձութեան անկեալ լինէր, յեղաշրջեցաւ 'ի Մահմէտական օրէնս. Եւ Աղնաւուրեան կարապետ աքսորեցաւ 'ի Սաքըզ կղզի.

Պէզճեան Յարութիւն այս խնդրեաց 'ի վերատեսչէն փողերանոցին տալ զհաշիւս իւր զամենայն, և տուեալ զամենայն յանեղուածովք պարզերես համարձակութեամբ, ոչինչ պակասութիւն ցուցանելով յանձն իւր 'ի պաշտամանէն, հրամայեաց նմա վերատեսուչն երթալ մնալ 'ի տան իւրում.

Եւ յետ վեց աւուր 'ի Նոյեմբերի 10, առաքեցաւ ևնա յաքսորս յԿլխեա, որ ջերմեռանդն գոլով յաստուածապաշտութեան իւրում՝ էառ ընդ իւր զպաշտօն Պօղոս վարդապետ զքարոզիչն Թարգալի, և գնաց. և գիր յանցանաց նորա էր այս, թէ «Յարութիւն Պէզճեան ամենայն համարձակութեամբ եկաց 'ի պաշտօն արքունի փողերանոցին, և անպակաս զհաշիւս իւր ետ. բայց յաղագս այլին գործս լինելով ձեռնամուխ, 'ի խրատ զգուշութեան այլ օրինակ պատմապարտութեան արժանի դատեցաւ».

Իսկ 'ի տեղի Յարութիւն այրոյ Պէզճեան նստաւ Պօղոս Պիլէզիկճեան Հռովմէական ազգայինն զամ մի և եթ, զի երբեւ վերադարձաւ Պէզճեան յաքսորանացն, կալաւ նախ ըզ պաշտօն սեղանաւորութեան [illegible] կոչեցեալ, և ապա զտեսչութիւն փողերանոցին և որ բազ օրէ յաւելս լինէր արքային և յաժ սիրելի նմա.

Այս ամենայն խռովութիւնք՝ որք եղեն յազգի մերում, առաւելապէս ցրուեցուցին զեռանդն սիրոյ և ջանից հոգևոր իշխանութեանց մերոց և ամենայն ազգայնոց, և Պօղոս պատրիարք առաքեաց հրաման առ Աբբայեան վարդապետն, զի առեալ զկերպար և զփիլոն իւրեանց՝ եկեսցեն առ նա 'ի պատրիարքարանն, զի հանդերձեալ էմ առաքել զերկուսն յէջմիածին, զերկուսն 'ի Մուշ, և զերիսն 'ի սուրբ Երուսաղէմ.

Զայս լուեալ Աբբայեան վարդապետաց՝ յազի փախեան, և փախուստ առեալ 'ի Պէյօղլու՝ թաքեան յեկեղեցիս Լատինացւոց, և ապաշխարեցին անդ.

Յայնժամ եղեւ խնդութիւն մեծ Պոլսեցւոց, որք զչար կամս իւրեանց տեսին կատարեալ, 'ի քակել զմիաբանութիւն

ազգիս, զի և ժողովուրդք Աբրայեան վարդապետաց՝ որ եկ-
եալ էին յեկեղեցիս մեր, գնացին և նոքա յեկեղեցիս Լատի-
նացւոց, և եղեւ յետինն չար քան զառաջինն։

Բայց զպայր ամենայնի տուգանաց և վնասուց՝ զորս կրե-
ցին Հայք յերեսաց Գողէճեանց, արձանագրեցին 'ի սիրտս
իւրեանց պահանջել զարժանի վրէժս 'ի դէպ ժամանակի, որ
եղեւ յաւուրս կարապետ պատրիարքի։

## ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս ապստամբելոյ Յունաց 'ի հպատակութենէ Օսմանեան տէրու-
թեան, և գլխատման Գրիգորիոսի պատրիարքի՝ և մետրապօլտաց՝ և
մեծամեծաց Յունաց, և բազմաց հասարակութեան։

ՄԻՆՉ յայս աղմուկ շփոթի փարանեալ էին Հայք անհը-
նարին աւերութեամբ ընդ դէմ Հռոմէական Հայ ժողովրդեան,
բացաւ և այլ իմն դուռն խռովութեան և մեծամեծ չարեաց
'ի կոստանդնուպօլիս քաղաքի, քանզի Իբսիլանթեան Ալէք-
սանդր կոչեցեալ բդեշխն Մոլտաւիոյ, որ հնդետասան ամօք
յառաջ խոյս տուեալ էր յերկիր տէրութեան Ռուսաց, և մե-
ծամեծ շնորհս գտեալ 'ի կայսերէն՝ երեւելի անձն էր 'ի Ռու-
սաստան աշխարհին։

Սա այժմ՝ թեկն առեալ կանգնել զկործանեալ թագաւո-
րութիւն ազգի իւրոյ՝ երեք հարիւր արամբք ապստամբօք
եկեալ մտանէ յերկիր Մոլտաւիոյ, և զբդեշխ երկրին՝ որ էր
Միխայ պէյ կոչեցեալ, կոչէ առ ինքն, և յանկուցանէ զմիտս
նորա, գլուխ ամբառնալ ապստամբութեան 'ի հպատակու-
թենէ Օսմանեան թագաւորութեան։

Իսկ նա թէպէտ զառաջինն երկուցեալ 'ի մեծազօր տէ-
րութենէն արքայի, ոչ համարձակի միաբանել ընդ նմա, այլ
նա պէսպէս խրախուսական բանից պերճութեամբ քաջալերէ
զնա և յորդորէ միակամ լինել ընդ ինքեան ցուցանելով, եթէ

թագաւորք եւրոպականն ազգաց համամիտ և համակամ են ընդ նոքօք յայս հոգեւոր գործ ազգասիրութեան.

Եւ խոստացեալ են պաշտպան լինել նոցունց ըստ ամենայնի՝ ձեռնտուութեամբ զինուց և դրամոց և որ այլ ևս են պիտանացու կահք և կարասիք պատերազմին գործոց.

Յորդորեալ 'ի բանից սոցա և Միխայէլ, միաբանի ընդ նմա, և գաղտնի գիր գրէ և հաստատէ առ մեծամեծս և առ երևելի իշխանաւորս Յունաց, որք գտանէին յայնժամ 'ի կոստանդնուպոլիս, որք էին արք սրամիտք և մտախորհք, տեղեակք գրոց գիտութեան և հնարագէտք ճարտարք.

Որոց ընթերցեալ զգիրն, և վերահասու լեալ մեծամեծ չարեացն՝ որք լինելոցն էին, զանխուլ 'ի տէրութենէն գիշերայն մտանեն 'ի Նաւս եւրոպացի վաճառականաց, և խոյս տան 'ի կոստանդնուպօլսոյ որդւովք և ընտանեօք և մեծագին ընչիւք և ազգանօք իւրեանց, և դէպ ուղիղ գնան 'ի Պեղոպոնէսոս և 'ի կղզիս միջերկրականն ծովուն.

Եւ 'ի փետրվարի 2, յամի տեառն 1821, Միխայէլ և Աղէքսանդր հրամայեն Յունական զօրուն ջնջել ջարդել զամենայն Տաճիկս, որք գտանէին 'ի գաւառին յայնմիկ, և զքաղաքն Բալթա այրել, և զնաւս Օսմանեան վաճառականաց գերել. այս եղեւ սկիզբն պատերազմի նոցա ընդ Օսմանեան տէրութեան.

Բայց վասն զի միտ նոցա և դիտաւորութիւն էր զազգն ողջոյն յարուցանել յայս, և առաւել ևս զՊեղոպոնեսացիս, ուստի զտիւ և զգիշեր խորհէին խորհուրդ, թէ որով եղանակաւ ապստամբեցուսցեն զազգ իւրեանց 'ի հպատակութենէ տէրութեանն, զի գիտէին, թէ առանց համակամ միաբանութեան ազգին ոչինչ վճարի.

Եւ յետ ընդ երկար յաջողութեանց և խորհրդածութեանց գտին զեղանակ իմն յուսացուցանել զազգ իւրեանց 'ի միոյ հպատակութեան, և ատելի առնել զՕսմանեան տէրութիւն առաջի ազգին իւրեանց, և այս էր անպարտ մահ և չարաչար սպանութիւնք պատրիարքաց և մետրապօլտաց և եպիսկոպոսաց և քահանայական դասուց, որոց մահ արդարեւ վշտացոյց զամենայն ազգս քրիստոնէից, թող թէ՝ զՅոյնս.

Ուստի Միխայէլ պէյ և Աղէքսանդր հաւանեալ և յօժարեալ զայս գիւտ հնարից, խորհեցան, թէ որով եղանակաւ տացեն սպանանել Յունաց զպատրիարքունս և զմետրապոլիտս իւրեանց, զի կոծին նոցին ցաւեցուցէ զսիրտ ազգի իւրեանց, և ողւով վրէժխնդրութեան բորբոքեսցին 'ի բարկութիւն և 'ի պատերազմ ընդդէմ Օսմանեան տէրութեան։

Ուստի գիրս բազումս սկսան գրել առ պատրիարքն կոստանդնուպոլսոյ, և առ իւրաքանչիւր մետրապոլիտս յանուանէ յանուանէ, և այս էր խնդիր գրութեանն, եթէ բաց առաջին խորհրդեան մերում մեք Աստուծով սկիզբն արարաք ջնջել յերեսաց երկրի զՄահմէտականս, և հանդերձեալ եմք յայտնի աւուրբ գալ պատերազմաւ 'ի վերայ կոստանդնուպոլսոյ, և պաշարել, և առնուլ, և դուք որպէս խորհրդակիցք մեր, փութացէք 'ի ներքուստ օգնական լինել մեզ, հրդեհել զքաղաքն և խռովել, և այլն։

Եւ զայս ամենայն նամակս գրութեանց եդեալ 'ի մոմ ծրարի, և կնքեալ կնքով իւրով տայ 'ի ձեռն սուրհանդակի առն միոյ, և հրամայէ նմա տանել 'ի կոստանդնուպոլիս 'ի պատրիարքարանն Յունաց։

Չի գիտէր, եթէ այն գրութիւնք անշուշտ ունէին անկանել 'ի ձեռս Օսմանեան տէրութեան, զի ընդ ամենայն ճանապարհս լրտեսք երթեւեկէին։

Իսկ իբրեւ հանգոյն այսր ամենայնի հասանէր 'ի կոստանդնուպոլիս յամսեանն մարտի, և տէրութիւնն փութայր զգուշութիւն լաւ ինչ առնուլ վասն իրացն եղելոց, և աւուր ինն 'ի կոստանդնուպոլիս 'ի մարտի 11 ընտանեկանութեան զայնոսիկ և զայլն թղթաբեր, զոր կալեալ էր վերջնոյն խուզարկուք, և բացեալ զգիրսն ընթերցան, իսկ և իսկ ծանուցին արքային, և խռովեցաւ քաղաքն առ հասարակ, և հրաման եղեւ 'ի թագաւորէն, զի ամենայն ոք որ ազգաւ Մահմէտական է, զէն բարձցէ յանձին, և զգոյշ լինիցին զօրն և զգիշեր, և լրտեսեսցեն զքաղաքն ողջոյն, մինչեւ արքայն վճարեսցէ զամենայն ինչ որ կարեւորն է առնել։

Ուստի յետոյն և տասներորդ աւուր մարտի ամսոյն սկիզբն արարին սպանանել զերեւելիս Յունաց ազգին, և 'ի նախն ա_

ւուր գլխատեցին զԼեղօփէթ ազգին, զՍքանտվի օղլուն, և զփեսայն նորին, և զերկուս ևս ընդ նոսա ։

Եւ 'ի 24 աւուր մարտի գլխատեցին զՉօրպաճի օղլու կօչեցեալն հանդերձ վեց արամբք պաշտօնէիւք իւրովք, և յապրիլի 4 գլխատեցին զՏիվան Թէրճիման պէյն հանդերձ եօթն ազգականօք նորին ։

Տեսեալ զայսոսիկ Նէնիչէրի կոչեցեալ սրիկայից սկսան նոքա առանց հրամանի արքայի գանել և կափահարել զՀայս և զՅոյնս, և նախ առաջին զՊապա օղլու պարոն Հայրապետն յօշատեցին անդամ անդամ 'ի Տիվան եօլուն, և յետ աւուրց ինչ և զայլ ևս Հայազգիս սկսան սրամահ խողխողել 'ի կոստանդնուպօլիս և 'ի գիւղօրէսն, և եղև քաղաքն իբրև ըզծով ալեկոծեալ, և ամենայն քրիստոնեայք 'ի վտանգ մահու հասեալ՝ զԱստուած կարդային յօգնականութիւն ։

Իսկ 'ի տասներորդ աւուր ապրիլի՝ որ օր էր սուրբ Զատկին, Լիզօրիոս պատրիարքն կոստանդնուպօլսոյ, որ էր այր առաքինի և ծերունազարդ վարուք, մատուցեալ զպատարագն յեկեղեցւոջն, իբրև եկանէր 'ի սենեակ իւր 'ի հանգչել, եկեալ զօրականք յարքունի դրանէ՝ տարան զնա և կացուցին առաջի մեծի եպարգոսին, որ կոչէր Պէնտէրլի Ալի փաշա, որ ցուցեալ նմա զգիրն հարցանէ ցպատրիարքն և ասէ, ընթերցի՛ր զգիրս զայս և թարգմանեա՛ ինձ, թէ զի՞նչ գրեալ իցէ 'ի սմա ։

Եւ առեալ պատրիարքին՝ ընթերցանու, և 'ի տարակուսի լեալ՝ պատասխանի տայ և ասէ. տէր իմ, զայս գիր գրեալ է առ իս Միխայլ պէյ բդեշխն Մոլտաւիոյ, որպէս թէ ես խորհրդակից իցեմ ընդ նմա, բայց ես անպարտ եմ 'ի չարէ աստի

Յայնժամ հայհոյեալ զնա եպարգոսն, վճռէ արտաքս, և հրամայէ տանել զնա և կախել 'ի դրանէ պատրիարքարանին, և բերեալ կախեցին զնա անդր, և 'ի նմին աւուր հրամանաւ եպարգոսին, կախեցին և զմետրապօլիտն Էփեսոսի 'ի դուռն Պալըգ պազար, և զմետրապօլիտն Քեսարացւոց 'ի Բաղմախ խանին ։

Եւ յետ երից աւուրց զմարմին պատրիարքի եառուն զօրականք 'ի ձեռս հրէից շրջեցուցանել 'ի փողոցս 'ի նշաւակ խայտառակութեան, և ապա արկին 'ի ծով ։

Բայց նաւատորմն այն Ռուսաց՝ գիշերայն փութով մակու-
կաւ շրջահայեցաւ լինել 'ի ծովս, ուր ընկեցան, և գտեալ
զնա, առին և հանին 'ի նաւ իւր, և զփորոտիս նորին հանեալ
զմաշկն դեղովք, և յետ աւուրց ինչ ելանել և երթեալ յՕտեսա
'ի քաղաքն Ռուսաց, և ազդ արարեալ ճէնէրալի քաղաքին և
եպիսկոպոսին բարեպաշտութեամբ և մեծաւ փառօք եկեալ հանեն
'ի նաւէն, և առնեն թաղեն անդ 'ի փառաւոր շիրմի, ուր կայ
մինչեւ ցայսօր ։

Յետ աւուրց ինչ կոչեաց եպարքոսն զանդղապահ պատրի-
արքին Յունաց, և նա առ ահի սրտին ոչ գիտելով զպատճառ
կոչելոյ նորա զինքն, երկուցեալ յոյժ, անդէն 'ի դուռն
արքունի անկաւ յերկիր, և մեռաւ յանկարծակի մահուամբ ։

Իսկ յապրիլի 19 զառան անձինս կախեցին 'ի կոստանդ-
նուպօլիս, ընդ որս էին և եպիսկոպոսն Առնաւուտ գիւղին,
և խանչէրլի պէյն և եղբարք նորին, և 'ի 29 ապրիլի կախե-
ցաւ և Զարաղեան Գասպար ամիրայ 'ի դրանէ վալիտէ խանին
'ի պատճառս լինելոյ հաստատախատ Տէփէտէլէնլի Ալի փաշա-
յին, որ ապստամբեալն էր յայնժամ՝ 'ի տէրութենէն ։

Յայսմիկ աւուրս 'ի յունիս 4, հրկէզ արարին Տաճիկք
զԱյվալըն կոչեցեալ գիւղաքաղաքն, կոտորեցին զծերս և ըղ-
պատանիս, և 'ի գերութիւն վարեցին զտղայս և զաղջկունս ։

Եւ 'ի յունիսի 27 զօրաց կարգեալ Գալլիմաքի բդեշխն
Մօլտաւիոյ հանդերձ ընտանեօք իւրովք աքսորեցին 'ի Պօլիս,
և անդ սպանին ։

Եւ յետ ինն ամսոց յաւուր սուրբ Զատկին 'ի մարտի 31
յամի տեառն 1822 այրեցին զկղզին Սախըզ, և զբնակիչս նո-
րին 'ի գերութիւն վարեցին, ընդ որ առաւել զայրացեալ Մօ-
ռացիք, որք հրայրեաց նաւուք շրջէին 'ի կողմանս յայնոսիկ,
յետ երից աւուրց գիշերայն եկեալ Գերմանացի դրօշակաւ,
հրդեհեցին զմեծ նաւն եռայարկ առաջի Քիոյ կղզւոյն, և
այրեցաւ նաւն՝ և որ 'ի նաւին էին, ծախեալ բդեշխն Գարա
Մէհմէտ փաշա և զօրք նորին՝ և ամենայն ինչք նոցին, զոր
տեսեալ այլոց նաւատորմաց արքունի նաւահանգստին՝ խոյս
ետուն երկիւղիւ մեծաւ 'ի կոստանդնուպօլիս ։

Այս անգամ մահ պատրիարքին և եպիսկոպոսաց կա-

բռնէր խոցեաց զսիրտս բոլոր ազգին, մինչ զի 'ի լսելն անգամ ընդ ամենայն տեղիս, վառեցան բորբոքեցան անհնարին բար-կութեամբ, և ողջոյն վրէժխնդրութեան գլուխ ամբարձին ա-պստամբեալք 'ի զօրութիւնն Աստուծոյ և յաղթականութիւն թա-գաւորաց քրիստոնէից ։

Եւ այսպէս ապստամբեցան ամենայն Յունաստան, ոչ միայն նահանգն Պելոպոնիսու և ամենայն միջակ նորին, և դաշտն Մակեդոնիոյ և Եպիրու և Կրետէ, և բազում կղզիք Միջերկ-րականին ծովուն, և սկսան պատերազմիլ ընդ արքային, որ ան-կաց շարունակ զամս եօթն, և որ և դատէին զայլազգիս և զհրէայս, սպանանէին չարաչար տանջանօք ։ Եւ ահա այս էր, զոր խնդրէր Իփսիլանդեանն Աղէքսանդր և Միխայէլ պէյ, որք այսու խորամանկ հնարիւք մինչեւ ցայս վայր հասուցին զայս մտածութիւն և զխորհուրդ խռովութեանց, թէպէտ և բազմաց վը-նասուց եղեն պատճառք և անհամար անձանց չարաչար ըս-պանման, եթէ ազգի խռովութեանց և եթէ Տաճկաց, եթէ Հայոց և եթէ Հրէից ։

Բայց անդրդուելի ուխտապահութեամբ խռովութեանց ոչ երբէք յետս կասեցան 'ի քաջութեամբ պատերազմելոյ, և դադարի ձեռնտուութեամբ Գաղղիացւոց և Անգղիացւոց եւս և Ռու-սաց՝ ստացան ամենայն նեղութեանց 'ի մարտս պատերազմաց, և յետ ութ ամաց կանգնեցին զթագաւորութիւնն Հելլենա-կան, զոր և ընկալան թագաւորք Եւրոպիոյ, և եւտն ընդու-նել Օսմանեան տէրութեան զթագաւորութիւնն զայն՝ իբրեւ օրինօք և իրաւամբք առհասարակ և կարգեալ, և այսպէս ըզ-նաւատորմիղն արքային փոխման և հինգ նաւուց առաջի Նա-ւարին բերդին Մօռայի, որով և վերջացուցին զպատերազմն՝ որ 'ի մէջ Յունաց և Տաճկին ։

Ի սմին ամի 1822 յօգոստոսի 3, եղեւ երկրաշարժութիւն ահագին 'ի Բերիա և 'ի Գամասկոս և 'ի շրջակայս նոցա, և կործանեցան մեծամեծ ապարանք և մզկիթք և պանդոկք և բաղանիք, և բազում դիակունք ընդ փլատակօքն անկեալք մե-ռան, և էր տարաբաղդութիւն մեծ տեսանել 'ի վերայ Օսման-եան տէրութեան, չարիք մեծամեծք և վնասք բազումք, խո-ռովութիւնք և երկպառակութիւնք բռնեցին, և մարդք պա-

ժողովոց բազմամբոխականք․ որոց ամենեցուն կարծեալ լինել զտաճկաց և ակիզբն` հաստատուած նախարարն Հալէթ էֆէնտի խորհրդեան, զոր յիշատակեցաք 'ի վեր անդր, և հաստախաճա-նորին խեղդել հրէայն ամենաչարն, որք զորհանացող յարուցանէին խռովութիւն 'ի մէջ տէրութեան, և բազմադիմի չարիս հասուցանէին 'ի վերայ Հայոց և Յունաց, զոր տեսեալ ամենատես Ակն 'ի բարձանց, գթացաւ 'ի վերայ փոքու հօտին իւրոյ, և աղետալի մահուամբ երարձ զչարն յաշխարհէ, քանզի երկուքին նորա հրամանաւ արքայի փոխադրեցան յաքսոր, Հալէթ էֆէնտի յիկոնիոն քաղաք, և հրէայն 'ի Քէքէ Ասիոյ, և անդ չարաչար գլխահատեալք սատակեցան 'ի Նոյեմբերի 4, որով եղեւ ոչ փոքր խինդ ազատութիւն և խաղաղութիւն քրիստոնէից 'ի Կոստանդնուպօլիս և ընդ ամենայն տեղիս Տէրութեանն ։

(1822) Ի սմին ամի վախճանեցաւ և Կիրակոս կաթողիկոս Սսոյ, գեղ մահու արբուցեալ յայլազգի իշխանէ տեղւոյն, կացեալ 'ի կաթողիկոսութեանն զամս քսան, և յաջորդեաց նմա եփրեմ եղբօրորդի նորա 'ի յութն և տասն ամաց հասակի ։

## ԳԼՈՒԽ ԼԳ․

Յաղագս պատերազմին Պարսից ընդ Մոսկովաց, և քաջութեան ազգին Հայոց, և յաղագս գրաւելոյ Մոսկովաց զԱրարատեան գաւառն ընդ իշխանութեամբ իւրեանց ։

Ի սմին ամի 1823 յանկարծօրէն զօրքն Պարսից յարձակեցան ութսուն հազար զօրօք 'ի սահմանս Վրաց` որք կային ընդ իշխանութեամբ Ռուսաց, և եկեալ յաշխարհն Սիւնեաց` էառ զՇամախի, զՇուշի, զԳանձակ, և եկեալ պաշարեաց զՏփխիս մայրաքաղաքն Վրաց ։

Եւ որովհետեւ զօրք Մոսկովաց, սակաւք յոյժ և նուաղունք էին 'ի կողմանս յայնոսիկ, և տէրութիւնն Մոսկովաց

չէր վաղագոյն ծանօթ և իրազէկ դաւաճանութեանցն Պարսից, որք ընդդէմ կանոնի դաշնադրութեանն զօր արարեալ էին, մինչև զամս քան և եօթն չպատերազմիլ ընդ իրեարս. յանկարծուստ եկեալ կոխան արարին զսահմանակից բերդաքաղաքս Մոսկովաց, և յաւարի առեալ կողոպտեցին զինչս և զստացուածս ամենայն, և 'ի գերութիւն վարեցին զբազումս 'ի բնակչաց.

Հայք տեսեալ զահագին յարձակումն սոցին 'ի վերայ իւրեանց, և ժողով արարեալ դունդ կազմեցին, և բազմօք աշխատ արարին զՊարսիկս, և 'ի նեղ արկին այնչափ, մինչ զի ուր եկեալն էր, մնացին անդ, և չեղեն կարող խաղալ յառաջ, մինչև և զօրքն Ռուսաց մեծամեծ պատրաստութեամբ հասին 'ի վերայ նոցա, և սկսան հատանել անխնայ, և 'ի փախուստ դարձուցանել, և յառաջ խաղացեալք պատերազմաւ մտին 'ի սահմանս Պարսից, և եկեալ առին զԽոյ, զՍալմաստ, զԳանձակ, զԵրևան, և զԹաւրէժ, և զԱտրպատական.

Մինչև յուսահատ լեալ Շահին Պարսից՝ յետ զամս երկու պատերազմելոյ բազում՝ աղաչանօք և միջնորդութեամբ դեսպանաց ամոքեցին 'ի հաշտութիւն զՏէրութիւնն Ռուսաց. և զամենայն պայմանս դաշնադրութեան նոցին ընկալեալք խաղաղեցուցին զպատերազմն ահագին.

Այլ 'ի յայսմ միջոցի երևելի էր յոյժ Ներսէս արքեպիսկոպոսն 'ի Ռուսաստան աշխարհին, և հաճոյ և սիրելի յաչս տէրութեանն, և պատուեալ բազում և մեծամեծ նշանօք և պատուութեամբք կայսերն, սա իբրև ետես, զի քաղաքք Պարսից՝ որք առան 'ի Մոսկովաց, ունին անդրէն դառնալ 'ի Պարսս, փութացաւ ել 'ի ճանապարհ, և ընդ իւր առեալ զերիս գլխաւոր եպիսկոպոսունս Սիւնեաց աշխարհին, եհաս 'ի Պետրբուրգ, և օգնականութեամբ աղա Մինասին Լազարեանց յանկոյց յինքն զմեծամեծս Տէրութեանն, և բազում աղերսանաց մատուցեալ առ կայսրն՝ խնդրէր 'ի դիմաց համօրէն ազգին՝ զգաւառն կոտայից յԱրարատեան աշխարհին զերծուցանել 'ի բռնակալութենէ անօրէն խանիցն Պարսից, և լինել ընդ հովանաւորութեամբ ամենաբարձր տէրութեանն Ռուսաց.

Այս խնդիր Հայոց յոյժ ընդունելի գտեալ յայս Տէրու-թեանն Ռուսաց, խել և խել զրահաւոր առ ինն ինչ ՚ի ձեռն բերել, մանծին ՚ի կարգս գաղթականութեանն իւրեանց՝ դդա-ւան կողմից մինչև ցսերբին սահման Աստրպատականին Պար-սից՝ լինել ընդ տէրութեամբ իւրեանց, որով գաւառն Վա-ղարշապատու, սուրբ Էջմիածին, Երեւան քաղաք, Գեղար-քունի, Բջնի, Կարբի, Գառնի, և Աշտարակ անկան ընդ իշխա-նութեամբ Ռուսաց, և զերծան յայնչափ բռնազէտ հարստա-հարութեանց բռնաւորացն Պարսից, որ գրեթէ անպակաս յիրաքանչիւր ամի չնչին առ ինն ինչ գտեալ, նեղէին և չար-չարէին զբնակիչս Հայ ազգին դիւզօրէից և փանօրէից՝ ծանր և ծանր հարկապահանջութեամբ և տուգանօք, և մնասուք, կեղեքէին, կողոպտէին և մերկացուցանէին զբնակիչս, և բա-զում անգամ հրձիգ տունէին և աւերէին զտունս և զստաց-ուածս նոցին զամենայն.

Այլ այս ամենայն ողորմութեամբն Աստուծոյ բարձաւ դա-դարեցաւ յայնց քաղաքաց ՚ի ձեռն քաջախորհուրդ առն Աստուծոյ սրբազան Ներսէսի արհի եպիսկոպոսին, զորմէ ու-նիմք խօսել և այլուր.

## ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս բարձման տապալմամբ Օճաղին Եէնիչէրի զօրաց.

(1824) Ի սմին ժամանակի ծագեցաւ ՚ի Կոստանդնուպօ-լիս աղմուկ չփոթի և խռովութիւն մեծ ՚ի մէջ Եէնիչէրի զօ-րականաց Տէրութեանն, քանզի այս Օճաղ Եէնիչէրի զօրաց գոլով բնաւին անկիրթ ՚ի պատերազմական մրցմունս, յեօթա-նասուն ամաց հետէ և աւելի եւս յաղթեալք յամենայն պա-տերազմունս, կոր ՚ի գլուխ փախուստ տային յետս ընդ կը-րունկն, ուստի եկեալ էին, որով և տէրութիւնն Տաճկաց օր

քան զօր ակատ նուաճիլ և փոքրկանալ. և որ երբեմն յաղթող և անպարտելի հանդիսանայր յաչս ամենայն թագաւորութեանց, 'ի վերջին ժամանակս յայտնի և ոչ միում յապստամբաց իւրոց փաշայից ձեռնհաս գտաւ զգլուխ հարկանել և սանձահարել զըմբոստութիւն նոցին.

Եւ թէպէտ Տէրութիւնն՝ մանաւանդ իսկ քաջախորհուրդ արքայն Սուլթան Մահմուտ գուն գործէր զաւրութիւն իւր զօրացուցանել, զզօրսն զամենայն հրահանգել 'ի մարտս պատերազմաց ըստ սովորական կանոնի՝ Եւրոպական թագաւորութեանց.

Այլ այս փոյթ և կամք Տէրութեանն չէր բնաւ երբեք հաճելի Ենիչէրի զօրաց իւրոց, մինչ զի վասն այսր բազում անգամ՝ յարուցեալք յոտս, ընկեցիկ արարեալ են յաթոռոյ զութեսին թագաւորս այսր Օսմանեան Տէրութեանն, և 'ի մահ հրաւիրեալ.

Վասն որոյ և խորախորհուրդ արքայն Սուլթան Մահմուտ թէպէտ յօրէ անտի նստելոյ իւրոյ յաթոռ թագաւորութեան՝ եդեալ էր 'ի միտ բառնալ զայս ապստամբ Օճաղ Ենիչէրի զօրաց իւրոց, այլ սպասէր պատեհական աւթի և պարեգէպ ժամանակի 'ի կոր կործանել զամբարտաւան ապստամբութիւն նոցին, և հնազանդեցուցանել զնոսա ընդ լծով ծառայութեան տէրութեան իւրոյ.

Եւ վասն զի 'ի տասն ամաց հետէ յաճախեցին չարիք ամենայն 'ի մէջ նոցա, գողութիւնք, աւազակութիւնք, մարդասպանութիւնք և չնութիւնք, ահ և երկիւղ թագաւորի և ամօթ երեսաց բնաւին բարձաւ 'ի միջոյ նոցա, և ամենայն չարագործ յանձն իւր պանծայր լինել Ենիչէրի, և խրոխտայր ընդդէմ մեծամեծաց արքայի.

Արդ՝ քանի ինչ ամօք յառաջ Սուլթան Մահմուտ արքայ գաղտնի խորհրդով Յարութիւն ազայի Պէզճեան՝ որ հաւատարիմ սիրելին էր արքայի և մտերիմ խորհրդակից նմին, յինքն յանկուցեալ զոմն 'ի գլխաւոր Սնապյից Ենիչէրի զօրաց. որ կոչէր Տօղուզանճա Հիւսէյին աղայ, և մեծամեծ պարգևս և պատուութիւնս և հաւաստութիւնս խոստացեալ նմա, հնարս խնդրէ 'ի նմանէ կործանելոյ զայս չարագործ Օճաղ

ապստամբ Եէնիչէրի զօրաց. և նա խոստացաւ նմա երդմամբ զայս գործ 'ի գլուխ տանել խորագիտութեամբ իւրով. ու-որ խնդրէ յարքայէ դատել զնոքն 'ի կարգս Պէօյիւկ աղայից. և հաւանեալ յառաջ խաղացուցանել զկարգ նոցին. մի՛ չեւ 'ի սուղ ինչ միջոցի ժամանակի լինել նոքեան բառ կարգին Գուլ քէթխիւտասի և Եէնիչէր աղասի. որպէս և եղեւ իսկ.

Յորժամ եղեւ սա Գուլ քէթխիւտասի բառ յառաջնմոյն կարգի իւրոյ. յանկոյց յինքն զձեռայէտասին Եէնիչէր աղասին, որ էր առաջին իւր, և հանեալ զնա. զի դշոբեանն զլխաւոր Ըստայս Եէնիչէրի չարագործաց հանցէ 'ի Կոստանդնուպօլսոյ, և առաքեաց պաշտօնիւ 'ի վան և այլուր 'ի սահմանակից բերդաքաղաքս Անատօլուի.

Եւ նորա կացեալ զնոսա առաջի իւր, յորդորմամբ և բազմանցեօք հրամայեաց նոցա ելանել և գնալ 'ի Կոստանդնուպօլսոյ, ուր հրամայէրն երթալ.

Եւ նորա հնազանդութեամբ ընկալան զհրաման նորա առանց դիմախօսելոյ, և խոստացան երթալ. բայց անցեալք յուսկիւտար և 'ի Գուլէլուբլու, աշխատ լինէին անդրէն դամարել չարագործաց, և խռովութիւն յարուցանել 'ի Կոստանդնուպօլիս, և 'ի սուր մաշել զԵէնիչէր աղասին և զմեծամեծս Տէրութեանն որպէս և արարեալ էին բազում անգամ.

Յայամ միջոցի միակամ հաւանութեամբ առաջորդացն և նախարարացն, և մեծամեծ գլխաւորին և բարձրաստիճան օրինականացն սահմանեաց արքայ զկարգ իւրն զօրաց Էշքինճի անուամբ, և այլ իմն ձեւով զգեստու զգեցուցեալ զնոսա, կարգադրեաց նոցա որ և ժամանակ հրահանգելոյ 'ի մարզս պատերազմաց.

Զայս իբրեւ տեսին Եէնիչէրիքն, ադմուկ և շփոթութիւն մեծ ծագեցաւ 'ի մէջ նոցա. և սկսան չարագործք ժողով գումարել 'ի տեղիս տեղիս, որ և ժամ՛ արտել, զի գլուխ ամբարձցեն. և վասն այսր բազում երթեւեկութիւն եղելոց լինէր 'ի յԱնատօլու և 'ի Րումէլի 'ի քաղաքս քաղաքս, ուր կային Եէնիչէրիք, որպէս յԷտիրնէ, 'ի Կեսարիա, 'ի Տիգրանակերտ, 'ի վան, և այլուր.

Այլ խորամանկ Հիւսէին Գուլ քէթխիւտասին՝ որ բազում

լռեալ ունէր 'ի միջի նոցա, իմացեալ զդաւաճանութիւն նո-
ցին, գնաց առ արքայ գիշերայն, և խօսեցաւ ընդ նմա, զոր
պարտն էր առնել։

Եւ 'ի վաղիւն եղեւ ինքն Լէնիչէր աղասի, և սկսաւ հա-
ւատարիմ զօրականս որոնել և ժողովել առ իւր։

Եւ առեալ ընդ իւր երկերիւրս 'ի նոցանէ` էանց յԻւսկիւ-
տար, և յանկարծուստ կոխեաց զտուն մի Տաճկի` զոր ու-
նայն էր 'ի լրտեսաց իւրոց, եգիտ անդ զՄուսա ուստա զմին
'ի գլխաւորաց չարագործաց, և բերեալ 'ի Շէմնի փաշա յա-
պարանն արքայի` խեղդամահ արար զչարագործն, և ընկէց
'ի ծով։

Յետ քանի ինչ աւուրց կոխեաց յանկարծակի զԹահտա-
գալէ կոչեցեալ թաղն, յորում էին պանդուխտք, սնանկք, և
մեծամեծք որջանոցք չարագործաց, և զբազումս 'ի նոցանէ
ձերբակալ արարեալ առաքեաց յԱզա գափուսի 'ի դուռն
իւր, և գիշերայն խեղդամահ արար, և զտեղիս նոցա քակ-
եաց և աւերեաց, և ոչ եթող տեղի ինչ խորհուրդ խորհելոյ
չարագործաց։

Յետ աւուրց ինչ իբրեւ լուաւ, եթէ Տէլի Մէհմէտ գլխա-
ւորն և առաջինն չարագործաց` գնացեալ թագուցեալ է զանձն
իւր յԷտի գուլէ 'ի ձմերանոցն արքունի մաղարդաց` Սպա
օճաղի կոչեցեալ, խօսեցաւ արքայի, և եհան հրովարտակ,
զի տացեն 'ի ձեռս իւր զՏէլի Մէհմէտ, ապա թէ ոչ` զձմե-
րանոցն հիմնայատակ ունի առնել գլխովին։

Զայս հրովարտակ ընթերցեալ նոցա, երկեան յարքայէ, և
ինքեանք խեղդամահ արարեալ զՏէլի Մէհմէտ, ետուն զմար-
մինն 'ի ձեռս Լէնիչէր աղասիին, և նա ընկէց 'ի ծով։

Իբրեւ այս այսպէս լինէր, և անուն Լէնիչէրութեան սկը-
սաւ օր ըստ օրէ յանարգութիւն և 'ի նախատինս բերել, փոխ-
եաց արքայ զանուն Լէնիչէր աղասութեան, և պատիւ և ա-
նուն Երկթուղեան փաշայութեան տուեալ նմա, կոչեաց զնա
Աղա փաշա, այսինքն` Լէնիչէր աղասի` միանգամայն և փաշա,
ուստի հանեալ զՅէրանէն կէչաի Լէնիչէրութեան գլխանոցն
'ի գլխոյ իւրմէ, զկերպարանս փաշայութեան զգեցաւ, և յայնմ
օրէ եւս սկսաւ անդադար զտիւ և զգիշեր շրջել 'ի շուկայս

և 'ի թաղս Կոստանդնուպօլսի․ և զոր միանգամ գտանէր 'ի յարտաքոյ, ըմպանէր, գանէր, առաքէր և խեղդամահ առնէր․ և 'ի գիշերի ընդ այր 'ի պարս և առաքէր 'ի ծով․

(1826) Եւ զայս օրինակ գործ գործեալ առ նոսա Հիւսէին Աղա փաշայն մինչև զամս երկուս, թէպէտ կամէր բո-րոքլին վախճան հասուցանել եէնիչէր օճախին, այլ ակնածեալ 'ի բերդապահ զօրաց նեղուցին պետասի որք էին եէնիչէրք և բազմաթիւք յոյժ․ զայս ինչ խորհուրդ խորհեցաւ ընդ արքայի, և եկեալ 'ի պաշտօնէ իւրմէ Աղա փաշայութեան՝ կարգեաց 'ի տեղի իւր զոմն 'ի խորհրդակցաց իւրոց՝ եէնիչէր աղասի, որ եղև վերջինն 'ի նոսա, և ինքն ընկալաւ զպատիւ միայն փաշայութեան և զպաշտօն պահպանելոյ զնեղուցն Կոստանդնուպօլսի, (այն է՝ պօղազ մուհաֆըզը)․

Իբրև էառ զայս պաշտօն, յետ աւուրց ինչ գնաց և շրրջեցաւ 'ի բերդս յաջմէ և յահեկէ նեղուցին մինչև 'ի Գարապուրուն, և զգլխաւորս նոցին՝ որք կոչէին Գալէ աղասի, հըրաւիրեաց առ ինքն զ.ալ 'ի յիւրաքանչիւր 'ի ծովեզերեայ յարկ իւր, և զկարմիր կապայ խիլայութեան զգեցուցեալ նոցա, և պարգևս ոսկւոյ և արծաթոյ պարգևեալ նոցա առատապէս, շահեցաւ զկամս նոցա, և բազմիցս երթևեկութեամբ էառ 'ի նոցանէ խոստմունս և երդմունս մեծամեծս, զի հաւատարիմ կացցեն յամենայնի ամենայն հրամանաց արքայի, զի մինչև և 'ի մահ հրաւիրեսցէ զինքեանս, յօժարութեամբ ընդունիցին․ և եթէ զեէնիչէրիութիւնն ևս բարձցէ, և զոր առաւել զգեստ զգեցուսցէ նոցա, և զոր ինչ պաշտօն ցուցցէ նոցա պաշտել, կամակար յօժարութեամբ և ամենայն հնազանդութեամբ ընդունիցին յանձինս իւրեանց զկամս և զհրաման արքայի․

Զայս այսպէս 'ի գլուխ հանեալ Հիւսէին փաշա, ազդ արար խորհրդակցաց իւրոց որք էին 'ի Կոստանդնուպօլիս 'ի մէջ եէնիչէրի օճաղին, և կառավարք էին նոցա Պէօլիւկ աղասի անուամբ․

Եւ նոքա կոչեալք առ ինքեանս զգլխաւորս օրիկալից և չարագործաց, հրամայեցին յայտնապէս, զի ամենայն եէնիչէրիք գնասցեն հանդարտօր յորոշեալ ժամանակի 'ի կրկու-

թուն պատերազմի, և որ ոչ հնազանդեցի, 'ի մահ վարեցի.

Զայս իբրեւ լուան Լէնկթէրիք, թէպէտ և յուսահատք էին զգիտի հարկանելոյ հրամանացն արքային, զի գիտաւոր չարագործքն 'ի մահ վարեցան, և չէին նոքա 'ի միջի, բայց այսու ամենայնիւ 'ի յունիսի 2, յաւուր հինգշաբթի երկնային վիճակին, յառաջին գիշերոյն սկսեալք ամբոխ մեծ գումարեցին Լէնկթէրի որբկայից, և 'ի մէջ գիշերին կոխեցին յանկարծակի զդուռն մեծի եպարքոսին, որ էր Սէլիմ փաշա, և յայնմ գիշերի գնաս 'ի Գէյլէր պէյի հրաւիրեալ, ասքա սուր 'ի ձեռին մտեալք 'ի մէջ կանանց, ոչ թողին չարիս, զոր ոչ արարին 'ի նմին գիշերի, և զամենայն ինչս զսպեղէնս և զարծաթեղէնս և զակնակուռ զարդս զամենեսին կողոպտեցին, և անտի ելեալք արշաւեցին 'ի դուռն Աղա զարաւսին, և անդ եւս զնոյն օրինակ գործ գործեցին կատաղի գազանութեամբ.

Բայց Լէնկթէր աղասին հնարիւք հաւատարիմ աղախնոբաց'ի բաց զերծեալ զանձն 'ի տան միոյ բարեկամի իւրոյ 'ի Շահզատէ պաշին.

Իսկ ընդ առաւօտն գումարեալք 'ի դուռն Աղա զափասին, զտանէն զԹուլ քէթխուտասին, և հրամայեն նմա, զի ընդ առաջ իւրեանց անկեալ գնասցէ ընդ նոսա 'ի պալատն արքային, զի զկամս և զհաճոյս իւրեանց արասցեն առ արքայ.

Եւ նա գոլով խորհրդակից ընդ Հիւսէին փաշային, համոզէ զնոսա և յորդորէ, զի ամենեքին գնացեալք ժողովեսցին 'ի ձմերանոցն յէթ մէյտանին, և մի ոք այսր անդր շրջեսցի, այլ ամենեքին անդ գտանիցին, և հրամայէ նոցա քարոզս կարդալ 'ի փողոցս ճանապարհաց, զի ամենայն Լէնկթէրի գտանիցի յէթ մէյտանին. և ասէ ցնոսա, եթէ դուք գնացէք, և բազմութիւն մեծ գումարեցէք, և ես եկեալ առ այս, կարգադրեմ զձեզ, և առեալ զձեզ զամենեսին, երթամք 'ի պալատն արքային, և առնեմք զամենայն, զոր հաճոյ է ձեզ.

Եւ այսպէս խրատեալ զնոսա, առաքեաց զնոսա 'ի ձմերանոցն, և ինքն ազդ արար իսկ և իսկ գրով իւրով Հիւսէին փաշային զամենայն, զոր ինչ եղեւն.

Իսկ Հիւսէին փաշայն՝ որ ապահով էր 'ի վերին բերդապահ

զօրաց Նեղուցին, խաղոյն մեռեալ 'ի նաւ իւր, գնաց առ արքայ. և սրտապնդեաց զնա գալ խաղոյն 'ի մեծ պալատն Կոստանդնուպօլսի, և չերկնչիլ բնաւ երբէք.

Այգ արար և խզզէթ Մէհմէտ փաշային, որ նստէր յայնժամ յԽսկիւտար, զի փութանակի հասցէ 'ի Կոստանդնուպօլիս 'ի պալատն արքային.

Եւ ինքն գնացեալ եգիտ անդ զվէզիր Սէլիմ փաշան, և առաքեցին 'ի գլխոյ արքայի հրաւիրակս առ դենապետն մեծ, որ կոչի Շէյխիւլիսլամ էֆէնտի, և առ Գազիասկէր էֆէնտիս, և առ Նագիպ իւլ էշրէֆն, և առ ամենայն մեծամեծ մոլլայս ուլէմայութեան իւրոյ.

Իբրև եկն արքայ, և եգիտ զնոսա անդր ժողովեալս, հրամայեաց քարոզ կարդալ ընդ ամենայն փողոցս քաղաքին, զի ամենայն հաւատացեալ 'ի Մահմէտ՝ որ սիրէ զբարեպաշտութիւն հաւատոյ և փառաց, եկեսցէ 'ի Սուլթան Ահմէտ ջէթ մէյտանին՝ 'ի ներքոյ Սանճագը շէրիֆին.

Եւ ահա հետզհետէ գումարեցան անդր թօփճիք և զումպարաճիք և պօսթանճիք և չավուշք, և սօֆթայք, և արուեստաւորք, և ամենայն մեծամեծք և իշխանաւորք Տէրութեանն.

Եւ հանեալ արքայ զՍանճագը շէրիֆն՝ ել 'ի պալատէ իւրմէ, և մեծամեծ պատուով և երգելով զերգս աղօթից, գնացին 'ի մզկիթն Սուլթան Ահմէտի, և անդ աւարտեալ ըզնամազն, ել յամպիոն Շէյխ իւլ իսլամ Արիֆ պէյ էֆէնտին, և զամենայն եղեռն և զչարագործութիւն Եէնիչէրի օրթայից պատմեալ յանդիման բազմութեանն, կնքեաց 'ի վերջոյ զբան իւր առ այս, թէ սոքա չեն Մահմէտականք, այլ անհաւատք և չարք քան զանհաւատս, և անհնազանդք արքայի՝ և օրինացն Մահմէտի՝ և հրամանաց Աստուծոյ. արդ՝ պարտ է զնոսա ըստ արդար իրաւանցն Աստուծոյ և ըստ սուրբ օրինացն Մահմէտի սպանանել 'ի սուր և 'ի հուր. ուստի հրամայեմք այսօր 'ի գլխոյ Աստուծոյ և 'ի գլխոյ Մահմէտի մարտնչիլ ձեզ ընդ նոսին, և ազատել զքաղաքն և զամենայն բարեպաշտս 'ի ձեռաց չարագործացս այսոցիկ.

Իբրև աւարտեաց նա զխօսս իւր, ել Հիւսէին փաշա,

առեալ ընդ իւր և զՄէհմէտ իզզէթ փաշա, և զեօթն թնդանօթս թօփճի զօրականաց, որոց հարկաւորեալ էր յայնժամ Իպրահիմ աղա Գարա ճէհէննէմ կոչեցեալ քաջախրոխ ոմն հաւատարիմ արքայի, և գնացեալք յէթ մէյտանն, իբրև ձայն եառն պատերազմի, արձակեաց Գարա ճէհէննէմ զհինգ թընդանօթս, փախոյց զամենեսին 'ի մէջ ձմերանոցին, և ապա հուր վառեալ վառօդոյ՝ եհար և հրդեհեաց զշինուածն 'ի սարէ 'ի վեր.

Եւ ահա հուր 'ի ներքուստ, և սուր արտաքուստ, զի որ արտաքս քան զդուռն յարձակէր խոյս տալ, զօրք փաշային 'ի սուր անցուցանէին, և որ 'ի ներքս մնայր, 'ի հուր այրէր, և այսպէս 'ի միջոցի միոյ ժամու հրկէզ եղեւ ողջոյն ձմերանոցն, և ամենայն չարագործք 'ի հուր վառեցան և 'ի սուր մաշեցան, և որք փախստեամբ ապրեցուցին զանձինս իւրեանց յայն օր, յետ աւուրց ինչ կալանաւորեալք գլխահատ եղեն, և բազումք եւս յաքսորս վարեցան մերկամարմին 'ի քաղաքս իւրեանց. և մինչեւ զաւուրս քառասուն տեւեաց այս պատիժ դատապարտութեան մահու չարագործաց 'ի մէջ քաղաքին և 'ի յիւսկիւտար.

Եւ զայս օրինակ բարձաւ Օճաղ Եէնիչէրի չարագործաց, որ զսէթն թագաւորս տէրութեան իւրեանց ընկեցեալ յաթոռոյ բարձեալ էին 'ի կենաց, որպէս գրէ հաւաստաւոր բանաստեղծ նոցին քէչէճի զադէ իզզէթ մօլլայն.

Թախտի չէֆքէթմաէն սէքիզ շահի ճիհանի խալի խռիւպ,
Գըլտի մէվլա սայիրէնէ պաղի խուէն զալիմլէրի.

Կիթտի ճէվրի զատրի իլէ իւչ թանէ Սուլթան Մուստաֆա,
Շէրպէթի ճամի շահատէթ իլէ գանտի լէպլէրի.

Ահմէտ, Իպրահիմ, Մուհամմէտ, հէմտէ Օսման, ու Սէլիմ,
Խալ օլունտուլէր ճիհանտէ օլմուշիքէն Փէրման պէրի.

Տահի տէվրանտէ տիմէ՞զ մի բուհի Օսմանի չէհիտ,
Գիր կազա իթտին քի խօշնուտ էյլէ[illegible] փէյղամպէրի.

Խանի Միւրատ օլ դահրանին պէօյլէ իթմէ՞զ մի խիթապ.
Աֆէրին էյ րուզի կեարըն չէհաւարի սաֆթէրի...

Հագթառլա չաճի ռէվրանի մուվէֆֆէգ իլէյէ .
Ցարըղ խալի լանէթ օճաղէ իքի հիւղ եըլտան պէրի .

Զօրպա գալգա զօրպա գալգա գալդըռըլար ախըր ալիւթիւնը
Համուխլըյահ ռէյֆի ըէֆիռէն իլէտի չուըրու չէրի .

Իսկ յերկրորդում՝ աւուր Հիւսէին փաշայն ընկալաւ զպաշտօն և զիշխանութիւն ապարապետութեան ամենայն զօրաց , և կոչեցաւ Սէրասքէր փաշա , և նստաւ 'ի հին պալատն արքայի՝ առընթեր Սուլթան Պայազիտին , որ կոչէր էսկի սարայ, և այժմ՝ կոչի Սէրասքէր գափուսի .

Իսկ Աղա գափուսին եղեւ Շէյխիւլամ՝ գափուսի , յոր նստի զեռպետն մեծ , և երեքին դատաւորք ընդ նմա , որք են Րումէլի գազիասքէրի , Անատօլ գազիասքէրի , և Ստամպօլ գատըսի էֆէնտի .

Յետ քառասուն աւուրց կարգեցան նոր զօրք Մանսուրէ անուամբ , նոր կանոնադրութեամբ և եւրոպական զգեստուք , և ամսական խուրաքանչիւր նոցա տասնապետաց՝ և հարիւրապետաց՝ և հազարապետաց՝ և այլոյն ամենեցուն կարգեցաւ յարքունուստ ամսոյ յամսն տալ անխափան հանդերձ հանապազօրեայ կերակրովն և հացիւն և զգեստուքն .

Ուստի և վասն այսր՝ ամենայն արուեստաւորաց կարգեցաւ աօրեայ և ամսօրեայ տուրս տալ Արքայի՝ խուրաքանչիւրն ըստ խորում՝ կարի և արուեստի . Եւ զգին արքունի հարկին՝ որ էր քսան և չորս դահեկան ըստ մարդաթուի , արարին երեսուն և վեց դահեկան .

(1826) Եւ վասն նորոգ զօրացս շինեցան ձմերանոցք 'ի Տաւուռ փաշա , 'ի Րամիզ չիֆթլիկին , 'ի Յիւսկիւտար , և յայսոսիկ աւուրս զկնատեցին զՕճաղ պագիրճեանի կոչեցեալ հրեայն , որ նստէր յԱղա գափուսին 'ի ժամանակս Եէնիչէրիութեան .

Եւ յետ ամսոյ միոյ խեղդամահ արարին և զշալճի Պօխօրալի կոչեցեալ հրեայն , և զատացուածս նորին և զինչս գրաւեցին յարքունուստ .

Յետ երկուց ամսոյ յաւուր երկուշաբթի՝ յօգոստոսի 18 , մինչդեռ Արքայն և բազմութիւնք բդեշխից և ամենայն մե-

ծանծաց ժողովեալք էին 'ի Սուլթան Ահմէտ, զի զգօշ նախրական հանել 'ի Մզկիթէն՝ պատուով մեծաւ տարցեն վերստին 'ի պալատն Արքայի և դիցեն 'ի տեղի իւր, յանկարծ եղեւ հրդեհ 'ի Հօճա փաշայն Պաղչէ գաբուի, և որովհետեւ ոչ ոք 'ի բդեշխից կարողացաւ կանխել անդ 'ի շիջուցանել զհրդեհն, զի էին 'ի պալատն արքայի, հրդեհն պարապ գտեալ մինչեւ ցչորս ժամս, սկսաւ ճարակել ընդ լայնութիւն և ընդ երկայնութիւն քաղաքին, 'ի Հօճա փաշայէ մինչեւ ցԼանկա Եէնի գաբուսին, յորում այրեցան քարուկիր շինուածք, մզկիթք, պանդոկք, բաղանիք, և ամենայն շուկայք, և փաշա գաբուսին, և տունք բազմաթիւք, ընդ որս և Մայր եկեղեցին Խումգաբուի, և Պատրիարքարանն Հայոց։

Յետ երկուց ամսոց այրեցաւ և աշտարակն կոչեցեալ Եանկըն քէօշկիւ 'ի Սէրասկէր գաբուսին, որ էր փայտակերտ, և յետ այնր շինեցաւ քարուկիր։

## ԳԼՈՒԽ ԼԵ.

Յաղագս դարձի յաքսորանաց տանն Տիւզեանց եւ Պատրիարքութեան տեառն Կարապետի, եւ աքսորանաց Թընկըրեան երկուց եղբարց։

(1823) Իբրեւ ազգամիութեամբն Աստուծոյ բարձան յաշխարհէ երկոքին որդիքն սատանայի՝ Հալէթ էֆէնտի և հատավաճառ նորին Խէօսէէլ Հրեայն, Պէզճեան Յարութիւն ամիրայ ժամ՝ բարեպատեհ գտեալ, յանկոյց յինքն զսիրտ մեծամեծաց տէրութեանն 'ի ձեռն մեծագին ընծայից վասն երից եղբարցն ազնուականաց Տիւզեանց, որք էին Կարապետ և Յակոբ և Պօղոս չէլէպիք, որք յերից ամաց հետէ մատնեալ էին յաքսորս 'ի վանս Կեսարիոյ, և մատուցեալ զգիր աղերսանաց առ Արքայ, հրաման եղեւ յԱրքայէ, և վերադարձան յաքսորանացն 'ի Կոստանդնուպոլիս յամի Տեառն 1823 յապրիլի 15, ուր նախ զառաջինն մտեալ 'ի տան Յարութիւն ա-

մերային Պէզճեան 'ի յետնի դարու, և աստ 'ի փաղնջական առն հայրենեաց իւրեանց 'ի խուլոս չէջմէ.

Պօղոս պատրիարք կացեալ զամս ութ 'ի պատրիարքութեան իւրում, հրաժարեցաւ յաթոռոյն, և մտաւ հաւանութեամբ իշխանաւորաց ազգին՝ ընտրեցին զԿարապետ վարդապետ կոստանդնուպօլսեցի 'ի հոկտեմբեր 27, որ չքեղ էր առաքինութեամբ և խորախորհուրդ միօք. Յաւուրս սորա 'ի նոյեմբեր 18, փոխեցաւ երանելի Հ. Միքայէլ վարդապետն Չամչեան, որ 'ի փառս և 'ի յօգուտ ազգիս վաստակեալ էր մինչև յալիս ծերութեան իւրոյ.

(1824) Ընդ այս ժամանակ եղև և նորոգութիւն սուրբ Աստուածածին եկեղեցւոյն Օրթաքէօյի, զորոյ զհանդէս փառաւոր օծման կատարեցին 'ի դեկտեմբեր 15.

(1827) Ի ժամանակս յայսոսիկ Պէզճեան Յարութիւն ամիրայ որ երևելին էր 'ի մէն ժամանակի յիշխանաւորս ազգի մերում, և գերագոյն նախագահ յազգային ժողովի Պատրիարքարանին, խորհրդով և հաճութեամբ Կարապետ Պատրիարքին կամեցաւ կացուցանել զմի ոք 'ի վարդապետաց կաթողիկաց՝ երեսփոխան կամ փոխանորդ Պատրիարքին, որ նստիցի հանապազօր 'ի Ղալաթիա կամ 'ի Բերա, և զարքունի հրամանս և զկամս տէրութեանն՝ որ դայ հրովարտակաւ 'ի պատրիարքարանն, պատրիարքն ծանուսցէ նմա, և նա ազդարասցէ ժողովրդեան Հռոմէական հայոց.

Ուստի յաւուր միում դնաց Պէզճեան Յարութիւն ամիրայ 'ի Բերա 'ի տուն Պիլէզիկճեան Պարոն Պօղոսին, և անդ կոչեալ հաւաքեաց զամենայն զգլխաւորս անձինս Հռոմէական հայոց, որոց բազումք էին երևելիք հաստատեալք 'ի Գաղատիոյ :

Անդ էր և Տիւզեան Յակոբ չէլէպի, և Եէլքէնճեան Պարոն Սերոբ և այլն.

Եւ 'ի ժողովի անդ խօսեցաւ Պէզճեան Յարութիւն ամիրայ, և պատմեաց ամենեցուն նոցա զկամս և զհաճութիւն պատրիարքին, և ամենեքին նոքա՝ որք էին 'ի ժողովին, ընկալան և հաւանեցան, և շնորհակալ ևս եղեն վասն այսր ըղ պատրիարքէն.

Եհարց զնոսա Պէզճեան Յարութիւն, թէ զո՞ ոք 'ի վարդապետաց կամիք ընտրել։

Եւ ժողովեալքն պատասխանի ետուն, թէ հաճելի և ընդունելի է մեզ այն՝ զոր դու ընտրես մեզ։ Եւ յետ բազում խօսս լինելոյ 'ի ժողովի անդ՝ առաջարկեաց նոյն Պէզճեան Յարութիւն, եթէ կամի՞ք զՆուրիճան Անտոն վարդապետն։

Եւ նոքա միաբան հաւանեցան և կնքեցին գիրս խոստման իւրեանց, զի Նուրիճան Անտոն վարդապետ լիցի գլխաւոր 'ի մէջ վարդապետաց իւրեանց հրամանաւ պատրիարքին և ընտրութեամբ ազգին, և արձակեցաւ ժողովն։

Իսկ 'ի միւսամասունք Գաղատացի հատուածողք՝ Թընկըրեան Յակոբ, և Յովսէփ, և Գրիգոր, Տաղաւարեան Անտոն և Յովսէփ, Գրճեան Գրիգոր և Միքայէլ, Էթէյէք Ուզունեան Պօղոս, Երիզէլեան Գրիգոր, և այլք համախոհք ընդ նոսին, ժողովեալք 'ի տան Յակոբայ Թընկըրեան, ընտրեն զՄարուչ կոչեցեալ Գաղատացի Պօղոս վարդապետն՝ լինել իւրեանց առաջ և կառավար, և ասեն, ոչ կամիմք զՆուրիճանն, զոր ընտրեցին հերետիկոս Հայք։

Այս ժողով նոցա և միջ՝ հասեալ յականջս Պէզճեան Յարութիւն ամիրային՝ ոչ սակաւ ցաւեցոյց զսիրտ նորա։

Եւ որովհետև սպարապետ էր յայնժամ՝ Խօսրով Մէհէմմէտ, և նմա հաւատարիմ էր Թընկըրեան Յակոբ և որդի նորա Յարութիւն, կամեցան սոքա 'ի ձեռն այնր փաշային դատուցանել զՀռովմէական Հայս 'ի Հայոց, և կացուցանել Հռովմէական Հայոց որոշ պատրիարք՝ անկախ 'ի պատրիարքէն Հայոց։

Ուստի զատանի ժողովեալ սոցա՝ բան եդին 'ի միջի իւրեանց՝ գիր ադերսանոյ մատուցանել առ Թագաւորն, և իմաստ գրոյն էր այս։

« Յայտ է մեծազօր Տէրութեան ձերում մեծ Թագաւոր, զի յանցեալ ամին արեւելեան Հայք՝ որք 'ի Պարսից բաժնին էին, միացեալք ընդ Մոսկովայ՝ ապստամբեցան 'ի տէրութենէն Պարսից, և ոչ սակաւ վնաս հասուցին Պարսից տէրութեան։

Արդ՝ խորհուրդ խորհեալ են արեւելեան Հայք յարձակիլ և 'ի սահմանս Օսմանեան տէրութեան, և կոխան առնել

զքաղաքս և զգիւղօրէս, առնուլ և դրանել. և կանգնել ինք-
եանց զմնանուոր թագաւորութիւն իւր 'ի Հայաստան աշ-
խարհին՝ ընդ հովանաւորութեամբ Ռուսաց Տէրութեան։

Արդ զայս խորհուրդ խորհեալ են Հայք, և անձին միջնա-
մտութիւն զաւերութեանէ ձերմէ, և մեք այսինքն Համշէնական
հայքս, մի ազգ լինելով ընդ Հայոց, և 'ի միոյ պատրիարքէ և
գլխոյ կառավարեալ գոլով, յայնժամ ընդ նոսին միայն և
միախորհուրդ երևելոց եմք առաջի ձերում մեծափառ
թագաւորութեան. և մերս հպատակութիւն և հաւատար-
մարար ծառայութիւն ոչինչ երևելոց և չէ յայտնելոց ձեզ։

Ուստի խնդրեմք այժմ յամենազօրութեդ և 'ի բարերար տեսա-
նէդ զառաջանել զմեզ 'ի Հայոց. և տալ մեզ յատուկ պատ-
րիարք և եկեղեցի, զի մի միայն երևեսցուք նոցա և հա-
ղորդ չարախորհուրդ անհաւատարմութեան նոցա. և մեք ըղ-
պարտաւորական ծառայութիւն մեր և աղօթս անխափան կա-
տարեսցուք 'ի նմին եկեղեցւոջ. և աղաւթեսս լիցուք յերթա-
ւորեկեղեցիս լատինացւոց. յոր երթայաք մինչև ցայժմ՝ վասն
չունելոյ մեր յատուկ եկեղեցի»։

Զայս գիր ընթերցեալ Արքայի՝ խաւսի յանձն իւր. և կոչ-
եալ նոյն ժամայն զպետպետսն Ցարութիւն առաջի իւր, հար-
ցանէ նմա զխմաստ գրոյն։

Եւ նա բառ իբրուն խորախորհուրդ ոչ չի և բաղմահան-
ճար զգօնութեան՝ յայտ առնէ արքայի զչարախնդիր ամե-
նութիւն և զմահացոյց թշնամութիւն Գաղատացի Համշէնական
հայոցն՝ զոր ունին առ Հայս, և 'ի վերջոյ յարէ, ով Թագաւոր
մեր և տէր, պատրիարք մեր հաւատարիմ՝ ծառայ տէրու-
թեանդ է. հարց ցնա, թէ կարո՞ղ է երաշխաւոր լինել վասն
ազգի իւրոյ առաջի ձեր, զի ազգ Հայոց յամենայնի հաւա-
տարիմ՝ է ընդ ամենայն տէրութիւնս, ուր և գտանիցի։

Գրեաց արքայն 'ի դուռն առ Նշարգաս իւր, զի կոչեալ
զպատրիարքն Հայոց 'ի դուռն՝ հարցցեն և տեղեկասցեն ըղ
նմանէ. թէ երաշխաւո՞ր իցէ վասն իւրոյ ազգին լինել յամե-
նայնի հաւատարիմ՝ տէրութեան։

Կոչեցին զպատրիարքն 'ի դուռն, և զՅօզոս պատրիարքն,
որ նստէր յիւսկիւտար 'ի վանս սուրբ Երուսաղէմայ, և նա

պատասխանի եւ մեծի Նոպարդոսին․ եւ ասէ․ Երաշխաւոր եմք մեք բոլոր ազգիս ընդ ամենայն գաւառս տէրութեան ձերոյ, որ եւ գտանիցի․ Եհարց Լոպարդոսն թէ զինչ կարէք երաշխաւորել վասն Հայ բնակչաց հեռաւոր քաղաքաց․ ընդ այս եւ պատասխանի Պօղոս եպիսկոպոսն եւ ասէ․ 'ի Քրիստոնէական կրօնի մերում է խորհուրդ մի․ որով իւրաքանչիւր ոք պարտի յորչեալ ժամանակի խոստովան լինել զգաղտնիս սրրտից իւրոց քահանայից․ եւ եթէ քահանայք այդպիսի ինչ նշմարիցեն պարտաւոր գտանին անյապաղ հաղորդել եպիսկոպոսաց․ վասն այսորիկ համարձակութեամբ երաշխաւոր եմք մերոց ազգայնոց․ այլ վասն Հռովմէական Հայ ժողովրդեան ոչ եմք եւ չեմք կարող լինել երաշխաւոր․ զի նոքա յեկեղեցի մեր ոչ գան․ եւ բանից մերոց ոչ անսան․ եւ քահանայից մերոց ոչ խոստովանին․ այլ հանապազօր երթեւեկեն յեկեղեցիս Լատինացւոց եւ կենակցին ընդ քահանայս նոցա․

Այս պատասխանի Պօղոսի պատրիարքին հաճեալ 'ի լսելիս արքային՝ զայրացաւ յոյժ ընդ մերձին ասպիճան յանդըգնութեան նոցա, զոր յանդգնեցան նենգել եւ խաբել զարքայն խորամանկութեամբ իւրեանց․

Ուստի առ ժամայն հրամայեաց զԹընկըրեան Յակոբ եւ զեղբայր նորա զՅովսէփ հանդերձ ընտանեօք իւրեանց առաքել յաքսորս․ եւ անդէն աքսորեցին զՅակոբ 'ի Կեսարիա, եւ զ Յովսէփ 'ի Սեբաստիա քաղաք փոքուն Հայոց․ 1827 Հոկ․ 3․

## ԳԼՈՒԽ ԼԶ․

Յաղագս այրելոյ Եւրոպացւոց զօրքունի Նաւատորմիղն Օսմանեան Տէրութեան․

(1827) Յասս վայր ունէր պատերազմն Տաճկաց 'ի վերայ Հելլենացւոց յեօթն ամաց հետէ, յորէ անտի ապստամբեալ նոցա 'ի Մօրայիս, 'ի կղզիս Միջերկրական ծովուն, եւ առնուլ եւս 'ի Պեղոպոնիդս․

Արդ 'ի սմին ամի երեք թագաւորութիւնք, այսինքն Ռուսաց, Գաղղիացւոց և Անգղիացւոց, առաջարկեցին և պահանջեցին յՕսմանեան տէրութենէ՝ ազատութիւն շնորհել Յունաց Պելոպոնեսացւոց, և առնել զՊելոպոնէսս մանաւոր դքսութիւն իւն անկախ և ազատ, միայն ամ ըստ ամէ տացեն Յոյնք զտարեկան տուրս ինչ Օսմանեան տէրութեան ։

Ոչ հաճեցեալ ընդ այս արքային՝ առաւել ևս թափեաց ըզ ցասումն և զզօրութիւն իւր 'ի վերայ Պելոպոնեսացւոց, 'ի ցամաքէ երկոտասան փաշայս հանելով հարիւր երեսուն հազար զօրօք, և 'ի ծովէ վաթսուն և հինգ պատերազմական նաւս մեծամեծս ամենայն պատրաստութեամբ, որոց ամենեցուն կարգեցաւ սպարապետ՝ Իպրահիմ փաշա որդի Մէհմէտ Ալի փաշային Եգիպտոսի ։

Հանին և Եւրոպացի տէրութիւնք զնաւատորմիղս իւրեանց 'ի ծովն Մորայի, զի մի թողլ տացեն երկուց կողմանց այսինքն Տաճկաց և Յունաց պատերազմիլ ընդ իրեարս ։

Որոց եկեալ բացէ 'ի բաց ծանուցին Իպրահիմ փաշայի՝ զի մի իշխեսցէ պատերազմիլ ընդ Յոյնս. ապա թէ ոչ՝ և նոքեանք ձեռնտու և զօրավիգ լինելով Յունաց՝ թափեն զամենայն ցասումն և զայժ իւրեանց 'ի վերայ Օսմանեան տէրութեան ։

Իսկ Իպրահիմ փաշա պատասխանի ետ, թէ գրեմ առ արքայ և առ հայր իմ՝ յԵգիպտոս, և սպասեմ հրամանաց նոցա ։

Որոց հաւատացեալ՝ մնային 'ի նաւահանգիստն, վեց նաւք Գաղղիացւոց և վեց նաւք Անգղիացւոց, և իննն նաւք Ռուսաց, և կային հանդէպ Նաւարին բերդին Մորայի ։

Յետ չորից աւուրց մնալոյ նոցա 'ի նաւահանգիստն՝ 'ի հինգերորդում աւուր հրաւիրեաց Թահիր փաշա զծովակալս Եւրոպացւոց՝ գալ առ ինքն և խօսել զբան հաշտութեան ։

Մտանեն 'ի մակոյկս երկուս՝ ծովակալն Գաղղիացւոց և քարտուղար նորա՝ և երկու խորհրդակիցք ընդ նմա, այնպէս և Գոտրինկթօն ծովակալն Անգղիացւոց և քարտուղար նորա, ընդ ամենայն վեց երեւելի անձինք բաց 'ի նաւավարաց երկուց մակուկաց ։

Եւ իբրև գան մակոյկք դէպ 'ի կղզին, որ է 'ի մէջ նաւա-

ւահանգստին, ասեն թէ յանկարծակի արձակեալ իցեն 'ի նաւուց Տաճկաց երկու թնդանօթս ռմբաձիգս առ 'ի ընկղմել զնաւկոյկսն, բայց զգացեալ նոցին 'ի նշանաց պատրաստութեանցն, դարձ առնեն անմիտս 'ի նաւս իւրեանց. և ապա սկսեալ են թնդանօթք ձգել յամենայն նաւուց Տաճկաց՝ և 'ի պատնշաց կղզւոյն 'ի նաւս Գաղղիացւոց և Անգղիացւոց։

Որոց ոչ գիտելով յառաջնակէ զայս խարդախութիւն Թահիր փաշային, սկսանին և ինքեանք արձակել ռումբս և թնդանօթս 'ի վերայ նոցա, և զի մերձ էին Գաղղիացւոց նաւք հրայրեաց նաւուց տաճկաց, հրդեհեն զնոսա իսկոյն։

Որոց վառեալ իսկ և իսկ անկանէին 'ի վերայ պատերազմական նաւուց տաճկաց օգնականութեամբ հողմոյն՝ որ վարէր զնոսա դէպ յայն կողմն, և զնոսա եւս հրդեհեն և բոցն տարածեալ շուրջանակի, մինն զմիւսն վառէ. և այնպէս 'ի միջոցի երկուց ժամուց վաթսուն և հինգ պատերազմական նաւք արքային 'ի հուր վառեցան հանդերձ ամենայն պատրաստութեամբ կահուց և կարասեաց և գանձուց իւրեանց։

Եւ զօրքն որք 'ի նաւսն էին, և նաւավարք և պաշտօնեայք նոցին, ծովակուր եղեն. սակաւք միայն ապրեցան, որ լողալով ելին 'ի ցամաք։

Յայնմ մեծի տագնապին և հնգետասան նաւք Ռուսաց՝ որք էին 'ի բերան նաւահանգստին, սկսան մարտնչիլ և հարկանել զբերդսն յերկուց կողմանց նաւահանգստին, և զինն ժամ անդադար թնդանօթս արձակելով կործանեցին և հիմնայատակ արարին զբերդսն Նաւարին և Մոթօն. և այնպէս դադարեցուցին զմարտ պատերազմին։

Յայնմ ահագին պատերազմի՝ երկու նաւք Գաղղիացւոց, և նաւ մի Անգղիացւոց վնասեցան չարաչար. բայց զերծեալ արտաքս 'ի նաւահանգստէն, և եկեալ 'ի Սիրա՝ նորոգեցան դարձեալ։

Այս դառն աղէտ և բօթալից լուր հրդեհակէզ կորըստեան այնչափ անհամար գանձուց աւերութեանն հասեալ 'ի Կոստանդնուպօլիս 'ի լսելիս արքայի. վառեցաւ, բորբոքեցաւ 'ի սրտմտութիւն բարկութեան. և զդեսպանս Ռուսաց և Գաղղիացւոց և Անգղիացւոց վանեաց 'ի Կոստանդնուպօլսոյ. ընդ-

որ գնացին և փախստականք և երևելի անձինք եւրոպաց-ւոց՝ ահաբեկեալք 'ի ցասմանէ արքային ։

## ԳԼՈՒԽ ԼԷ․

Յաղագս վերջին հալածանաց և աքսորանաց Հռոմէական Հայոց ։

(1827) ՍՈՒԼԹԱՆ Մահմուտ արքայ, որ ցասուցեալ էր 'ի վերայ Գաղատացի Հռոմէական Հայոց, որպէս խօսեցաք 'ի վեր անդր, մանաւանդ զի՝ ատեալ էր ինքեան զայս երկպառակութիւն ազգին, և կամէր, զի ողջոյն ազգն ընդ միով գլխով հպատակեալ կառավարեսցի, և վասն այսր բազում անգամ արքունի հրովարտակս առաքեալ էր 'ի պատրիարքարանն Հայոց, յօրէ անտի 'նստելոյ իւրոյ յաթոռ թագաւորութեան. և կամէր զայս պատուականն Հռոմէական Հայոց բառնալ 'ի միջոյ, եթէ ոչ քաղցրութեամբ, գոնէ խստութեամբ, որպէս փորձիւ տեսաք անդ 'ի մահու Տիւզեան եղբարց ազնուականաց, որոց դատակնիք մահու գրեալ էր զլինելն յանցաւոր կրօնի՝ պատճառաւ կաթողիկութեան ։

Արդ թէպէտ յայս միտս էր արքայ, բայց ակնածեալ յեւրոպացւոց թագաւորութեանց, որոց հովանեաւ զինէր ըզ Հռոմէական հայս 'ի բան հաւատոյ և կրօնի, լռէր ու կամաւ, այլ ժամանակի թողլով, զոր կամէրն առնել ։

(1827) Արդ յետ վանելոյ զգեսպանս եւրոպացւոց 'ի Կոստանդնուպօլսոյ, առ 'ի լուծել զվրէժ կորուսանման նաւատորմղին 'ի Նաւարին, յանցանել միոյ ամսեան առաքեաց հրամանագիր արքունի 'ի Պատրիարքարանն Հայոց՝ յորում գրեալ էր զհինգ յօդուածս հրամանաց իւրոց ծանր և ծանր պատուհասօք առդամանաց և վնասուց, այն է ․

Ա․ Զի Գաղատացիք ամենայն աքսորեսցին 'ի Գաղատիա որդւովք և ընտանեօք ։

Բ. Քահանայք Հռոմէական հայոց՝ աքսորեսցին յերկրէ յամենայն սահմանաց տէրութեանն.

Գ. Կոստանդնուպոլսեցի Հռոմէական հայք և որք յայլ և այլ քաղաքաց իցեն եկեալք, եթէ իբրև զԳաղատացիս յամառեալ իցեն առ 'ի չհնազանդիլ պատրիարքին Հայոց, աքսորեսցին և նոքա որդւովք և ընտանեօք 'ի քաղաքս Անատոլուի.

Դ. Մայրապետք նոցին՝ որք պաշտօնեն առ ատեանս յանհնազանդութիւն խրատեն զկանայս լինել հակառակեալս, աքսորեսցին և նոքա.

Ե. Կաթոլիկք մի՛ նստիցեն 'ի Բերա, 'ի Ղալաթիա, և 'ի գիւղօրէս նեղուցին Կոստանդնուպոլսոյ, ուր դատնին եկեղեցիք Լատինացւոց, այլ նստցին 'ի Կոստանդնուպոլիս. յԻսկիւտար, և 'ի հայաբնակ գիւղօրէս. և տունք Հռոմէական հայոց՝ որք իցեն յարդեկեալ տեղիս յայնոսիկ, վաճառեսցին այլազգեաց.

Այս հրովարտակ եկեալ 'ի Պատրիարքարանն՝ որ էր յայնժամ 'ի Սամաթիա, զի այրեալ էր Պատրիարքարանն Կումկափուի 'ի մեծի հրդեհին, որ եղև ամա միով յառաջ, կոչեաց պատրիարքն, և եղև ժողով մեծ Հռոմէական հայոց յեկեղեցւոջ սրբոյն Գէորգայ, ուր ընթերցեալ զհրովարտակն, բացայայտեաց պատրիարքն ամենեցուն նոցա զհրաման արքայի.

Եւ այս սկիզբն եղև աքսորանաց Ցաւալեանց՝ և Գըլճեանց՝ և Թընկըրեանց երևելի հաստափառացն Հռոմէական հայոց 1827 'ի դեկտեմբերի 27.

Եւ յետ մեռանն աւուրց Գաղատացի Հռոմէական հայք աքսորեցան հանդերձ ընտանեօք իւրեանց 'ի Գաղատիա մեծաւ խղճութեամբ. զի աւուրք ձմերան էին, և հողմունք խիստ շնչէին.

Մանաւանդ զի՝ կանայք և մանկունք չէին սովորեալք ձիընթաց ճանապարհորդութիւնս առնել, թող թէ հիւանդք և յղիք և նորածինք՝ որք էին 'ի նոսին. Եւ զի՝ հապարատ անձինք էին սոքա, և ոչ բաւէր ամենեցուն սոցա զատ զատ ձի, և այլ պիտոյք ճանապարհի.

Ո՞ր դիցուք, զի և ամենայն ինչ թանկագին եղև, և

չունէին բաւական դրամ 'ի ձեռին հոգալ զինքեանս և զկա-րեւորացն ասկի.

(1828) Եւ 'ի յունուարի 27 եղեւ տեղափոխութիւն կաթո-լիկաց 'ի Բերայէ և 'ի Ղալաթիոյ' 'ի Կոստանդնուպօլիս և 'ի հայարնակ գիւղօրէս, և տունք նոցին վաճառեցան գիւրա-գինս այլազգեաց.

Եւ յամսեանն փետրուարի քահանայք Համիտեան ն Հա-յոց աքսորեցան յԵւրոպա յամենայն տաժանմանց տէրութեան. Թէպէտ ոմանք 'ի նոցանէ ծածկեալ 'ի կերպարանս Փռանկաց մնացին յեկեղեցիս Լատինացւոց և 'ի պալատս դեսպանաց. որպիսիք էին Գուցիանթի Աճռօնն, Խաչիքեան, Յովսէփ վար-դապետն, եւ այլք.

Եւ յետ 'ատ ուրդ հինգ երեկոնք 'ի մայրաքաղաքաց աքսորե-ցան 'ի Գանգրեա, և մետասան վարդապետք 'ի Մահայրձ, ամենեցուն սոցա տայր պատրիարքն զգիր հրամանի ճանա-պարհորդութեան նոցա.

Յայտնիկ ուռին և բազում անձինք 'ի Կոստանդնուպօլ-սեցի Համիտեան Հայոց և յայլոց քաղաքացեաց' որք ոչ հա-ղորդեցան ընդ Հայս 'ի հաղեւոր, և ոչ եկին յեկեղեցիս Հա-յոց, այնուքիկ եւ իբրեւ զանհնազանդս հրամանաց արքայի աքսորեցան 'ի քաղաքս Անատօլուի.

Եւ ոմանք խոյս ետուն 'ի Ռուսաստան, 'ի Միրա, և 'ի Թրեստ, և անդ մնացին առ աշխ ազգարանաց, բայց ամենե-քին սոքա որք մնացին յաքսորս և 'ի փախուստ, 'ի վերջին աղքատութիւն հասին, զի ոչ ունելով բաւական դրամ 'ի ձեռին' ոչ կարէին վաճառել զկահս և զկարասիս տանց իւրեանց. և այսպէս զրկեցան ամենեքին սոքա 'ի տանց և 'ի ստացուա-ծոց իւրեանց, և ոմանք 'ի կենաց զաւակի հնանդութեանց. և այժմ ամենայնի անասանելի ազնեալք և չարաչար մեռուց և հարուածոց պատճառ եղեն անմիտ Գաղատացիք, որպէս և 'ի վեր անդր յիշեցաք.

Երկու ամիք յառաջ երեք Հրեայք ընկալան զհաւատս Քրիստոնէութեան 'ի նորադարձից Ամերիկացւոց, զոր խմաց-եալ Հրէից' ետուն ըմբռնել զնոսա, և արքունի հրամանաւ արկին 'ի թի նաւատեղեաց.

Մինն 'ի նոցանէ կրկին անգամ դարձաւ 'ի հրէութիւն, և զերծաւ 'ի բանտէն 'ի ձեռս ազգին Հրէից. իսկ երկոքին միայն անդ զամս երկուս։

Արդ՝ յայսմիկ աւուրս և նոքա գիր աղերսանաց մատուցեալ առ արքայ՝ խնդրեցին ազատել զինքեանս 'ի բանտէ անտի, և ազգին Հայոց շնորհել. ընդ որս գթացեալ արքայ՝ հրամայեաց, և ազատեալ զնոսա 'ի բանտէն՝ շնորհեաց ազգին Հայոց։

Որոց եկեալ 'ի Պատրիարքարանն, յետ աւուրց ինչ ընկալան զօծումն սուրբ դրոշմին խորհրդոյ յեկեղեցւոջ սրբոյն Գէորգայ 'ի Կարապետ պատրիարքէն։

Եւ ապա սկսան սոքա համոզել և զայլս 'ի Հրէից, և դարձունել մկրտել 'ի տունս Հայոց 'ի ձեռս Հայոց քահանայից։

Զոր իմացեալ ապա Պէշճեան Յարութիւն ամիրայ, զերեքտասանսն զնոսին՝ որք 'ի հրէութենէ դարձեալքն էին, ուղարկեաց 'ի Կեսարիա քաղաք Կապադովկացւոց, և անդ միայն զամս երիս, և ապա ցրուեցան անտի այսր անդր 'ի Կոստանդնուպօլիս, յԱդրիանուպօլիս, 'ի Թրակիա, և այլուր։ Աքսորեցան և մկրտող քահանայք նոցին, Անդրէաս վարդապետ Կոստանդնուպօլսեցի, Ստեփանոս վարդապետ Զմիւռնացի, Տէր Պաղտասար Պալատացի, Տէր Զաքարիա Բերացի։

Եւ կնքահարք նոցին՝ Յովսէփ վարժապետ Տէր Սահակեան, Ոսկերիչ Մարտիրոս, և այլք։

## ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս պատերազմին Մոսկովաց ընդ Տաճկաց։

(1828) ՄԵՌԱՒ էր երեք ամօք յառաջ Աղէքսանդր կայսր Մոսկովայ, և յաջորդեալ յաթոռ նորա եղբայր նորին Նիկողայոս Բաւլովիչ։

Իսկ Սուլթան Մահմուտ որ ցասուցեալ էր 'ի վերայ Եւրոպացւոց թագաւորութեանց վասն հրկէզ առնելոյ նոցին ըզ

նաւատորմիղն արքունի 'ի Նաւահանգիստն Մօրայու․ ձայն եա պատերազմի ընդդէմ Ռուսաց 'ի 18 ամսոյ դեկտեմբերի․ և 'ի մին ամփ յամենայն ատրկի կոխեցին Մասկովք զնաւաքիս և զՄղսատուխս․ և սկսան մարտնչիլ ընդ Խղրայիլ մեծամար բերդին․ և առին զնա յամենայն յանկարծ զինի ամսորեայ պաշարման, ընդ նմին և զԻսաքճա, և զԼեսովա, և զԹուլտեղիս․ ընդդէմ սոցա եհան արքայ բանակ մեծ հարիւր յիսուն հազար զօրաց, որոց սպարապետ եղեւ Սէլիմ Մէհմէտ փաշայն, և երկրորդ նորա կարգեցաւ Հիւսէյին Աղա փաշայն․ որ գնաց դէպ ուղիղ 'ի Շումնու․ և զգուշացաւ պահպանութեան նորա զբաղում ժամանակս․ իսկ Ռուսք առեալ զԽրբայիլ և զՆէերիէօյ, անցին ընդ գետն Դանուբ, և եկեալ պաշարեցին զՍիլիսթրէ․ Գնաց ընդդէմ սոցա Սէլիմ Մէհմէտ փաշայն, բայց ոչ կարացեալ առնել ինչ, յետ քան և հինգ աւուրց պաշարման քանդեցաւ բերդն 'ի բազում հարուածոց թնդանօթաց, և մատնեցաւ քաղաքն 'ի ձեռս Ռուսաց․

Յայսմիկ ամսոյս պաշարեցին Ռուսք և զքաղաքն Վառնա 'ի ծովէ և 'ի ցամաքէ, և սկսան պատերազմիլ ընդ բերդին զաւուրս երկարս․ իսկ Սէլիմ փաշայն՝ որ նստեալ էր բանակաւ 'ի Բրավատա ընդդէմ մեծի բանակին Ռուսաց, յանկարծ յաւուր միում փութով ընդ առաւօտն առանց ազդ առնելոյ արձակեաց զերեսուն հազար այրուձիս 'ի վերայ բանակին Ռուսաց, և կոտորեցին 'ի նմին աւուր 'ի Ռուսաց զհազար ոգիս․

Իսկ մեծ սպարապետն Ռուսաց որ կոչէր Տիպիչ Յելա Մաբէչալ, զայրացեալ 'ի բարկութիւն մեծ՝ յետ երից աւուրց ձայն եա պատերազմի, և սկսաւ ռումբս արձակել իբրեւ փոնձրեւ 'ի վերայ բանակին Տաճկաց, և կոտորեաց զեօթն հազարս 'ի զօրաց նորին, և զմնացեալսն արար փախստական․ և զամենայն աւար՝ և զկապուտ կողոպուտ անկելոցն բաշխեաց զօրականին իւրում․ 'ի պաշարման անդ Վառնայի վիրաւորեցաւ զօրապետն Ռուսաց Մէնչիքօվ․ բայց Վօրօնցօվ անցեալ 'ի տեղի նորա սաստկացոյց զպաշարումն, խրամաեաց զպարիսպն, և անդադար ռումբս արձակէր ընդ մէջ քաղաքին զօր և զգիշեր հրկէզ առնել և աւերել․ և 'ի միոյ

կոփմանէ որ էր 'ի ցամաքակողմն բերդին՝ սկսաւ ականս հա-տանել 'ի ներքոյ պարսպացն, և հուր արկանել և կործանել, մինչև ուժաթափ լինել զօրաց Տաճկաց, և անտանելով զհե-տապուտ մահ և զկորուստ քաղաքին, բազումք 'ի մեծամե-ծաց՝ ընդ որս և քաղաքապետն Սերէզցի Եուսուֆ փաշայն և որդի նորա անցին 'ի կողմն Ռուսաց և անձնատուր եղեն։

Յայնմանէ առ և զօրումն պաշարեաց զբնակիչս քաղա-քին, և աղաղակ ձայնի նոցա հասանէր յերկինս, յորմէ և ծա-ռակալ Իզզէթ Մէհմէտ փաշայն անճարացեալ և յուսահատ-եալ՝ մատնեաց զքաղաքն 'ի ձեռս Ռուսաց, հանելով զբնա-կիչ Տաճիկս և զզօրս իւր 'ի մէջոյ քաղաքին։

Եւ այսպէս 'ի մէջ յետուն աւուրց առաւ Վարնա 'ի Մոս-կովաց 'ի 30 սեպտեմբերի, և բազում ճանապարհ անցանելոյ Ռուսաց ընդ աշխարհն ձիւնապատ լերինն՝ որք կոչին Պալքան և արշաւել 'ի Բուլղարս, և 'ի Մակեդոնիա, և 'ի Թրակիա, և ևս դէպ 'ի Կոստանդնուպօլիս, որպէս և եղև իսկ։

(1828) Յաւուրս յայսմիկ եղև շինութիւն Մայր եկեղե-ցւոյն Ս. Աստուածածնի 'ի Խումքափու, և Պատրիարքարա-նին Հայոց. որ այրեալ էր յերկուց ամաց հետէ, բայց մեծ և ընդարձակ շինեցաւ եկեղեցին, բաժանեալ յերիս մեծամեծ եկեղեցիս, և յերկուս փոքրագոյնս առընթեր նոցին, որպէս եղեն հինգ եկեղեցիք համակատարք և մեծայարկք։ Եւ յանց խնամ եկեղեցւոյն շինեցաւ Պատրիարքարանն առընթեր Երուսաղէմայ տանն, և յաջմէ եկեղեցւոյն առաջան մեծ ջրա-լոյ և պատրաստ վասն հրդեհի։

Եւ այս շինութիւն տևեաց զամ մի ողջոյն, և հանդէս օծութեան եկեղեցւոյն կատարեցաւ 'ի 14 հոկտեմբեր, 1828։

# ԳԼՈՒԽ ԼԹ.

Յաղագս մեծի սովուն որ եղեւ 'ի Կոստանդնուպոլիս.

---

(1829) ՅԵՏ առման Վառնա քաղաքին հրաւիրակս առաքեաց Սուլթան Մահմուտ արքայ, և ետ բերել դեսպանս Գաղղիացւոց և Անգղիացւոց, որք եկին 'ի Կոստանդնուպոլիս, և նստան 'ի պալատս իւրեանց յապրիլի 7.

Բայց յաւուրս յայսոսիկ սով մեծ եղեւ 'ի Կոստանդնուպոլիս հացի՝ և ձիթոյ՝ և իւղոյ՝ և որք 'ի կարեւորացն սակի իցեն. զի խափանեցաւ երթեւեկութիւն նաւուց բեռնաւորելոց ցորենով և այլօք.

Վաճառոց և օր ըստ օրէ պակասեցաւ և սպառեցաւ հանապազօրեայ ցորեան՝ և գարի՝ և այլք, որք առեալք լինէին յարքունուստ 'ի փուռս հացագործաց.

Եւ քաղաքեայ փոխեալ կորեակ եղեւ նիւթ հացի, և այն մոխրախառն՝ հողանման՝ և սեւ, զոր աղքատք՝ որ լոկ ուտէին, զմահ տարաժամ համբուրէին.

Եւ այն եւս դառն էր և թանկագին և դժուարագիւտ, մինչ զի հարիւրաւոր անձինք կանգնէին յարաժամ առաջի փռանց յամենայն ազգաց խառն 'ի միասին, մինչեւ չտալ անցս անցորդաց, թէպէտ և բիր 'ի ձեռին Գաւլաք փաշայից ծեծէին և վանէին զնոսին.

Եւ որպէս հացն, նոյնպէս և ամենայն այլազգք. իւղ և միս, ձէթ և պանիր, ունդ և օճառ, եղեն ծանրագին, և սով և թանկութիւն պաշարեաց զբնակիչս Կոստանդնուպոլսոյ.

Յայս հայեցեալ մեծամեծ նախարարաց տէրութեանն, և բազմիցս ժողով արարեալք՝ չգտին այլ ինչ ճար վասն սովոյ, բայց միայն այս, զի ամենայն օտարականք՝ որք 'ի տասն ամաց հետէ եկեալ էին 'ի Կոստանդնուպոլիս, գնասցեն 'ի քաղաքս և 'ի հայրենիս իւրեանց, ուստի եկեալքն են, և կոստանդնուպոլսեցիք՝ որք ունին բաւական դրամ 'ի ձեռին, եղ-

եալք մեկնեցին որդւովք՝ և ընտանեօք իւրեանց 'ի Նիկո-միդիա, 'ի Պրուսա, 'ի Թրակիա, և յայլ մօտաւոր տեղիս.

Ուստի և վճռահատեալ այս որոշումն նորա, և հաւանե-ցուցեալ զարքայն առ 'ի պակասեցուցանել զբնակիչս Կոստան-դնուպօլսոյ այսու եղանակաւ, զի բաւեսցէ մնացելոցն ցորեան և այլ պիտոյք, որ ինչ գտանին 'ի շտեմարանս արքունիս, ե-դեւ հրաման յարքայէ, և ելին հրովարտակ 'ի Պատրիարքա-րանս Հայոց և Յունաց, և առ Հրեայս, զի մեկնեսցին 'ի Կոս-տանդնուպօլսոյ կոստանդնուպօլսեցիք, և օտարականք 'ի հայ-րենիս իւրեանց.

Իսկ խորախորհուրդ և բազմահանճար Պէզճեան ամիրայ զմտաւ ածեալ զայլ ինչ եղանակ գտանելոյ զապրուստ հացի և կերակրոյ, գնաց առ արքայ, և ասէ ցնա. ով Տէր թագա-ւոր. յայտ իսկ է տէրութեան ձերում, զի այսչափ բազմու-թիւն քրիստոնէից գոլով 'ի քաղաքի յայսմիկ, ոչ իշխեն թըշ-նամիք թշնամութիւն առնել քաղաքիս, և ոչ եւս զօրեն 'ի վերայ յարձակել, զի մի՛ վնաս ինչ հասուսցեն քրիստոնէից ազգաց, որք բնակեալքն են 'ի քաղաքի յայսմիկ.

Արդ եթէ դու զսոսա բարձցես աստի, և ցրուեսցես յայլ ինչ օտար երկիր, բառնաս և զահ և զերկիւղ թշնամեաց և որպէս թէ՝ հրաւէրս կարդաս առ նոսա գալ պատերազմաւ 'ի վերայ քաղաքիս.

Ահաբեկեալ արքայի 'ի բանիցս այսոցիկ՝ ասէ ցնա, զի-՞րդ և ուստի գտանիցի այսչափ բազմութեան հանապազոր-եայ հաց և պարէն, և որ այլ ինչ են 'ի կարեւորացն սակի.

Պատասխանի ետ նմա Պէզճեան Յարութիւն, և ասէ ցնա, արքայ՝ յաւիտեան կաց, հրաման տուր ամենայնի, զի որ ոք կամիցի, երթիցէ 'ի մօտակայ քաղաքս և 'ի գիւղօրէս, և գնեալ զցորեան և զալիւր, բերցէ 'ի կոստանդնուպօլիս, և վաճառեսցէ այնչափ գնոյ՝ որպէս ինքն կամիցի, և մի՛ տացէ զմաքս կամ զայլ ինչ տուրս արքայի, զի շնորհեալ է նոցա այն ամենայն.

Արդ ընթերցցի այս հրաման 'ի լուր ամենայն ժողովրդ-եան, և տեսցես զյաճախութիւն հացի և ամենայն պիտոյից 'ի քաղաքի յայսմիկ.

Համոզեալ արքային 'ի բանիցս յայսոցիկ, յետս կոչեաց զառաջին հրաման իւր, և շնորհեաց ամենեցուն կալ մնալ 'ի քաղաքի յայսմիկ, և անդէն ընթերցաւ հրովարտակ հրամանաց արքային, զի ով ոք և կամիցի, երթիցէ 'ի մօտակայ քաղաքս և 'ի գիւղօրէս, որք շուրջ զքաղաքաւս իցեն, և գնեսցեն ալիւր և ցորեան, և այլ ամենայն պիտանիս, զոր ինչ և կամիցին, և բերցեն 'ի Կոստանդնուպօլիս, և վաճառեսցեն ըստ կամաց իւրեանց, և մի տացեն զմաքս, կամ զայլ ինչ սահմանեալ տուրս արքային, զի 'ի շնորհեալ է յարքայէ.

Իբրև տարածեցաւ այս հրաման 'ի լսելիս ամենայն ժողովրդեան, բազումք 'ի բնակչաց քաղաքիս, 'ի Տաճկաց' 'ի Հայոց' և 'ի Յունաց, նաւեցին 'ի ծովեզերս Պոնտոսի մինչև 'ի Սամսոն և 'ի Տրապիզոն, և ոմանք 'ի Պրուսա, և 'ի գիւղօրէս Նիկոմիդեայ, և այլք 'ի Թրակիա, և յԱնդրիանուպօլիս, և 'ի մէջ քանի աւուրց սկսաւ վաճառիլ ալիւր և ցորեան 'ի փողոցս քաղաքին, և եղև առատութիւն հացի և ամենայն պիտոյից, և բարձաւ սով և թանկութիւն 'ի քաղաքէս.

Եւ գովեաց արքայ զխելս և զուշիմութիւն Պէզճեան Յարութիւն ամիրային առաջի ամենայն մեծամեծաց իւրոց և ետ նմա նշան ադամանդեայ կախել 'ի կուրծս իւր, և զգենուլ զկերպարանս զգեստուց ըստ Տաճկաց.

Յաւուրս յայսմիկ և արքունի ճարտարապետ Գրիգոր ամիրայն աւարտեաց զշինութիւն մեծի պալատի արքային 'ի գիւղն Սթաւրօզ, և ետ նմա արքայ նշան ադամանդեայ, և փոխեաց և զկերպարանս զգեստուց նորա.

Շնորհեաց և արքունի վառօդապետ Սիմէօն ամիրային նշան ադամանդեայ, և զգենուլ զկերպարանս զօրէն այլազգեաց.

Եւ երեքին այսոքիկ գործաւորք երթևեկէին 'ի պալատն և յանդիման լինէին արքային, և խօսակցէին ընդ նմա սիրելաբար.

(1829) Ի սմին ժամանակի կառուցին 'ի Գարակէօզիւկ կոչեցեալ թաղն եկեղեցի մի փոքրիկ և վայելուչ՝ բազմաշխատ վաստակօք Տէր Պաղտասար քահանային Պալատու, դ կատարեցին զօծումն նորա յանուն սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի հայրապետին 'ի մայիսի 7.

Յաւուրս յայսմիկ և գին որքոնի հարկին՝ որ էր երեսուն և վեց դահեկան ըստ մարդաթուի, յաւելաւ և եղեւ քառասուն և ութ դահեկան ։

## ԳԼՈՒԽ Խ.

Յաղագս քաջութեան Հայոց Բաբերդու, և կոտորածի նոցա 'ի Մոսկովաց, և յաղագս գործոյ Տփլիս սպարապետին 'ի կողմն Րումելի ։

Մինչ բանակն Ռուսաց էանց ընդ գետն Դանուբ 'ի կողմն Եւրոպիոյ, և եկեալ պաշարեաց զբերդն Խոյրոյիլ, յաւելաւ և այլ եւս բանակ եօթնասուն հազար զօրաց 'ի կողմն Ասիոյ, որոյ սպարապետ կարգեցաւ Բասքեվիչ Ժէնէրալ այր մի քաջ և մեծախորհուրդ յազգէ Ռուսաց, որք անցեալ ընդ Վրրաստան, եկին և պաշարեցին զքաղաքն Ախլցխա, և սկսան պատերազմել ընդ նմա ։

Իսկ բնակիչքն հաստատեալ լինելով Օսմանեան Տէրութեան, յառն կացին ամենեքին մեծ և փոքր, և սկսան 'ի ներքուստ քաղաքին անդադար պատերազմել ընդ Մոսկովս զաւուրս երեսուն ։ Բայց որովհետեւ չեղեւ նոցա օգնականութիւն ինչ արտաքուստ 'ի Դրանէ Օսմանեան տէրութեան, յետ երեսուն աւուրց առաւ քաղաքն 'ի Մոսկովաց, և կոտորեցան 'ի պատերազմին քսան և հինգ հազարք 'ի քրիստոնէից, որոց բազումք էին 'ի կաթոլիկ ժողովրդենէն ։

Յետ աւուրց ինչ եկեալ Մոսկովաց, առին զԿարս, զփոթի, և զԲայազիտ, և անցեալ ընդ Սողանլը կոչեցեալ լեառն, գնացին և առին զԹօփրագ Գալէ, զՏիատին, զՀասան Գալէ, և զՄուշ, և անտի եկին յԷրզրում, և զնա առին եւս ։

Եւ զայս ամենայն քաղաք առանց պատերազմի և առանց կռուոյ ինչ առնուին, զի բնակիչք քաղաքաց՝ 'ի գալն Մոսկովաց անձնատուր լինէին, բանային զդրունս քաղաքաց, և

հասուցէին զնոսա, երկուցեալք յահէ կատարածի նոցա և ըրձրով գչարաչար Հարուած Ուլոցեսս քաղաքին. Յառաջ խաղացեալ Թուրքաց 'ի Կարնոյ' եկին 'ի Բաբերդ. բայց բնակիչք Բաբերդու Տաճիկք, Քուրդք և Հայք, միաբանեալ ընդ միմեանս' եառուն նոցա պատերազմ' և ոչ թողին Թուրքաց մնանել 'ի քաղաքս իւրեանց.

Եւ որովհետեւ կորովիք էին ազգս, և վարժք 'ի ձգել զաւր և զնիզակ. բազում վնաս հասուցին Թուրքաց. և զեօթն անգամ 'ի պատերազմին յաղթեցին Թուրքաց. և դրագունս 'ի նոցանէ կոտորեցին. որոց կոտորած անկելոյն 'ի պատերազմին իբրեւ զբլուր ինչ կանգնեցաւ 'ի դաշտն Բաբերդու.

Տեսեալ Բարքէմիկ սուլտանն, զի չիք այլ ինչ հնար յաղթելոյ նոցա, դարձոյց զջուրն' որ անցանէր ընդ մէջ քաղաքին, և արար զդաշտն ջրային իբրեւ զաւազան ամեն մաղին բարձրութեամբ, և մնեալ յերեսս երկրի բաւեաս որ բաժակս Հասարակաց և բազմաթիւս. Եւ 'ի մերձին անգամ պատերազմին սոցա, կեղծեցին Թուրք զփախուստ ինչ ընդ կռունկն, զորս զինի և Բաբերդցիք անկեալ Հալածեցին և վանեցին իբրեւ մասն երկուս.

Բայց սոքա ընդ կրունկն դարձեալ Թուրք. մինչ սխալ արձակել Թնդանօթ սփռածող 'ի մերոյ Բաբերդցւոց. յայնժամ նոցա փախուստ առեալք դարձան յետս. այլ անդէն. զի ձնձառապարչն ընդ որ եկեալ էին յի էր զորք Թուրքաց. սաստ չեղեցին երթեալ ընդ ձնձառապարչ դաշտին. և եկին 'ի դաշտն ջրային. Հարին զ'նոսա 'ի դաշտն. և որք խուսափին մնացին անդր. ոչ յառաջ և ոչ զինի կարէին երթալ.

Զի յառաջ կոյս նոցա էին բաւեաք մեծամեծք. և 'ի թիկանց կուռ այրուձիք Թուրքաց. և այնպէս 'ի դաշտին անդ կոտորեցան չորք Հազարք 'ի Թրքաց և Հարիւր յիսուն և մի ոք 'ի Հայոց.

Յետ այսր ամենայնի մինչ ամբարտակեցին անցանել ընդ դաշտն և անհնարին 'ի յարերդ. զորքն Թուրքաց որ յետ կոյս քաղաքին էին, եկին առաջի նոցա. և արձակեալ թնդանօթս երկիր սա 'ի մէջ բաղէի կատարեցին դրացանմս. և այսպէս եկեալ 'ի Բաբերդ, մինչ անդ եւս սխալ ռումբս արձակել.

բնակիչք ամենեքին ծերք և տղայք սկսան միաբան դողել և արտասուել. և այնպէս մնալ Պասքէվիչ 'ի Բաբերդ. յուսալ ևս կատարել զկործանումն բնակչաց քաղաքին 'ի Հայոց և 'ի Տաճկաց. առնուլ կամեցեալ զվրէժ կոտորածի զօրաց իւրոց, զոր նոքա կատարեցին:

Իսկ 'ի Հայոց բնակչաց 'ի Բաբերդ՝ մեռան 'ի մրցմանս անդ պատերազմին հազար մատաւոր անձինք, և 'ի Քրդաց և 'ի Տաճկաց հազար հինգ հարիւր, իսկ 'ի Ռուսաց աւելի քան զչորս հազար հոգիս:

(1829) Իսկ Տիպիչ Ֆէլտ Մարէշալ՝ որ էր 'ի կողմն Եւրոպիոյ 'ի քաղաքն Վառնա, յառաջ խաղացուցեալ զզօրս իւր 'ի վեր կոյս, գնաց և էառ զբերդաքաղաքն Սիլիստրէ, Ռուսճուք, և Խուլչա, և Մաչին, և Նիկէբոլի, և Բինէվրէ: Եւ անարգելք համարձակութեամբ անցեալ ընդ կիրճս Պալգան լերանց, էառ զՄիսւէվրէ, զԱհեօլու, զՊուրկազ, զԱյտօս, զԿարնապատ, և զԷտիրնէ, և այն յաղթեաց, որ բնակեալ էին Տաճիկք: Եւ յետ երկուց աւուրց առաքեաց Տիպիչ առաջան 'ի բանակն Տաճկաց, թէ զի՞նչ կամիք, պատերազմե՞լ, տայք ինձ զքաղաքդ, թէ առնել պատերազմ:

Անդ էր խաղիլ փաշա, որ առա փեսայացու արքային, նա պատասխանի ետ և ասէ, առանց պատերազմի չէ հնար ինձ մատնել ձեզ զքաղաքս զայս. եթէ Սուլթան Մահմուտ կամէր առանց պատերազմի տալ ձեզ զայս ամենայն երկիր, ապա ընդէ՞ր առաքեաց զձեզ այսր և զզօրս զայս ամենայն.

Յայնժամ ասէ ցնա դեսպանն, 'ի վաղիւն պատրաստ լերուք, և տեսանիցէք զմարտ պատերազմին Մոսկովաց. և զայս ասացեալ՝ դարձաւ և գնաց.

Իսկ 'ի վաղիւն ընդ այգանալ առաւօտուն՝ 'ի յուլիսի 22, սկսան Ռուսք արձակել ռումբս յայգուէ մինչև ցոր հասարակ, և ցրուեցին զբանակն. էին 'ի քաղաքին չորք հարիւր տունք Տաճկաց, և ահա յետ տունջեան՝ արձակեցին Ռուսք զինն և տասն ռումբս 'ի թաղն Տաճկաց, և հրկէզ արարին ողջոյն զչորս հարիւր տունսն:

Յայնժամ դաւումն և դուլումն սկսաւ լսելի լինել, և աղաղակ ձայնի նոցա հասանէր յերկինս, յորմէ անկաւ ահ և

գօտուն 'ի բանակ Տաճկաց, և թողեալ զբանակն՝ սկսան փախչել։

Եւ այսպէս առաւ խալիֆա 'ի Ռուսաց, և 'ի պատերազմի անդ 'ի նմին աւուր անկան 'ի Տաճկաց հինգ հազարք 'ի կըրթեալ զօրաց, և հազարք յՃախացւոց, (այն է կէօնիւլլիւ)։

Յետ վեց աւուրց յառաջ խաղացեալ Տիպիչ զօրապետ յօգոստոսի 7 յաւուր չորեքշաբաթի եհաս յԱնդրիանուպօլիս առանց պատերազմի և նստաւ 'ի պալատն արքայի, և հրամայեաց զօրաց իւրոց խաղալ յառաջ, որոց գնացեալ՝ առին զՏիւմէնթօքա, Ջէրէ, Իբսալա, Կիւմիւրճինա և Էնէզ։

Այս ամենայն քաղաքք և գիւղաքաղաքք՝ որք մնացցան 'ի ձեռս Ռուսաց, բաղումք առանց պատերազմի անձնատուրք եղեն, մի՝ զի զզուեալք էին 'ի գործոց Տաճկաց, և երկրորդ՝ զի յուսային ընդ հովանեաւ նոցա լաւ ևս ապրիլ՝ ապահովութեամբ կենաց և ընչից, մանաւանդ ընդ առաջ եկեալք Ռուսաց ուրախութեամբ մուծանէին զզօրս նոցա 'ի մէջ քաղաքաց, և անձնատուրք լինէին նմա յամենայն ծառայութիւնս, որպէս ակնատեսս եղէ այսմ ամենայնի, զոր պատմեցի այսր առաւելք։

## ԳԼՈՒԽ ԽԱ.

*Յառաջ գալն Ռուսաց 'ի վերայ Կոստանդնուպօլսոյ քաղաքին, և հաշտութեան նոցա ընդ Օսմանցիս ընդ երկոտասան դաշնադրութեամբք։*

ՏԻՊԻՉ Ֆէլտ Մարէշալ՝ կարգադրեալ զամենայն պատրաստութիւն մեծի բանակի, եհան բանակ ութսուն հազար զօրաց, յորում էին ութ ժէնէրալք, քսան գնդապետք, չորեքհարիւր թնդանօթք, և ութ հարիւր յիսուն սայլք եզանց և ձիոց, և պատրաստեաց նոցա կարգեալ զԹիրանովն ժէնէրալ յազգէ Ռուսաց այր քաջ և հզօր, հրամայեաց նմա յառաջ խաղալ և երթալ մինչև 'ի դուռն Կոստանդնուպօլսոյ։

Այս բանակ զօրաց եկ յաւուր կիւրակէի յօգոստոսի 20, զոր և ես ինքն իսկ տեսի աչօք իմովք, որ պատմեմս զայս, և հարցի ցհարիւրապետս զամն նշանացի, թէ յո՞ երթայք: Պատասխանի ետ ինձ և ասէ, [illegible]:

Իսկ ես ոչ գիտելով Ռուսերէն, հարցի զամն՝ որ տեղեակն էր Ռուսաց լեզուին, և ասեմ, զի՞նչ նշանակէ ասել, [illegible], և նա ասէ ցիս, նշանակէ թէ՝ երթամք 'ի մայրաքաղաքն:

Յառաջ խաղացեալ Ռուսաց, հասին 'ի Չօրլու, և անդի գունդ մի յառաջընթաց զօրաց՝ որք կային Պայազիդ, եկին 'ի Սիլիվրի, յորմէ երկոտասան ժամէ 'ի Կոստանդնուպօլիս:

Հանդերձ զօրականաւ այսու հասեալ 'ի Կոստանդնուպօլիս, և տարածեալ 'ի լսելիս բնակչաց, ահ և դողումն պաշարէ զամենեսին, կրպակք փակին, շուկայք դատարկանան, և ամենայն մարդ փախչի 'ի տուն իւր, երկիւղացանելով զմահուան թէ աչօք Ռուսք եկեալ են, որպէս թէ մտեալ են 'ի մէջ քաղաքին:

Յայնժամ մեծամեծք և նախարարք տէրութեանն և ընթերցողք նոյին ժողովին 'ի պալատն արքայի, և աղաչեն զնա հաշտութիւն առնել փութանակի ընդ Ռուսաց, այսպէս թէ ոչ՝ ասեն, կործանիմք առհասարակ, և կործանի թագաւորութիւն Յունաց:

Ակամայ կամօք յանձն առեալ Յովհան Մանուէլ արքայ, հաւանի խորհրդոց նոցա, և իսկ և իսկ խորհրդով և նամակադրութեամբ դեսպանաց Գաղղիացւոց և Անգղիացւոց՝ կարգեն զդեսպանն Բրուսիոյ տէրութեան՝ որ նստէր 'ի Կոստանդնուպօլիս, երեսփոխան արքայի, և խորհրդականք նըմին՝ զդեֆթերտար Սատըգ էֆէնտին, զքէհեա պէյ Թահիր էֆէնտին, զհասարի պէյ Մուսթաֆա դառըսին, և զՄէքքէճի Նուրի էֆէնտին. որք 'ի միջոցի երեսուն և չորից ժամուց հասին յԱնդրիանուպօլիս:

Իւ յանդիման լեալ Դիպիչ Պէկին Մարէշալ մեծի սպարապետին, տալ դեսպանն Բրուսիոյ. նա աւասիկ՝ երեսփոխան եմ Օսմանեան արքայի, և հրամանաւ և յանուն դրան նորա՝ և խորհրդով դեսպանաց եւրոպական թագաւորութեանց՝

նի առ մեծամեծութիւն քո խօսել զբան հաշտութեան ։

Արդ և տէրութիւն քո փութանակի այժմ հրաման առաքեսցէ ՚ի բանակ զօրացդ, որք գնան ՚ի վերայ կոստանդնուպօլսոյ, զի ուր և իցեն, յամեսցեն անդր. եթէ ըստ կամաց ձերոց չլինիցի կատարումն խօսիցս, ապա արա յայնժամ բանակիդ, և երթեալ պաշարեսցեն զկոստանդնուպօլիս ։

Խրկել զայս Տիմուր, զառաջինն ոչ կամեցաւ յամեցուցանել զընթացս բանակին, բայց դեսպանն Բրուսիոյ աղաչանօք և պնդմամբ խոստակցութեամբ իւրով հաճեցեաց զՏիմուր․ որ առնեալ զլսաւոր կնքեալ գրութիւն Սուլթան Մահմուտ արքայի, որ ՚ի գլխոց իւրոց երևակիան կարգէր զդեսպանն Բրուսիոյ, ցուցանելով, եթէ հաճոյ և ընդունելի է նմա այն անձնայն, զոր կնքէ արժանապատիւ դեսպանս Բրուսիոյ ։

Ուստի առաքեալ հրաման առ Գրանդին պաշարողեալ բանակին, զի ուր և իցեն, մնասցեն անդր, ոչ յառաջ դարձցին, և ոչ քայլ մի ոտին յառաջ դնասցեն ։

Եւ ինքն յետ երից աւուրց սկսաւ խօսել ընդ նմա զպայմանս հաշտութեան, և ՚ի մէջ քան աւուրց վճռահատեալ վերջացուցին զբանն հաշտութեան ՚ի 14 աւուր սեպտեմբերի յերկրատան դաշնադրութիւնս ։

Ա. Վալաքիա և Մօլտավիա ազատ լիցին, քաղաքական կառավարք նոցին երկուք, ՚ի կողմանէ Օսմանեան տէրութեան՝ Մօլտովան պէյլք, և ՚ի կողմանէ Ռուսաց՝ դատաւորք Ռուսք, և Մօլտովան պէյլք տացեն ամ՚ըստ ամէ Օսմանեան տէրութեան զբանն հազար քսակ ոսկւոյ ։

Բ. Ի կողմն Անատօլու Ախըլցխա քաղաք և գաւառ նորա մնասցէ ՚ի Ռուսս, և ՚ի Սեաւ ծով գաւառն Կէօնէլէ՝ և ծովեզերեայ բերդաքաղաքք նորա Անափա, և Օֆ, և փօթի, և Աղզըր, և Ախալքէլէք, որք Վրաստանու աշխարհին են ծովեզերք, այսուհետև լիցին ընդ իշխանութեամբ Ռուսաց ։

Գ. Օսմանեան տէրութիւնն տացէ Ռուսաց զծախսն հազար միլիոն վենետիկեան ոսկւոյ, որոյ չորս հարիւր հազար քըսակն է հին պարտքն հաշուեալ ՚ի յԱդրիանէ, և մնացեալն այժմեան պատերազմի ծախքն ։

Դ. Նաւք եւրոպական վաճառականաց ՚ի նեղուցէ Մի-

Չերկրական ծովուն անցեալ՝ երթեւեկեսցեն 'ի Պոնտոս, եւ 'ի կողմանէ Օսմանեան տէրութեան մի՛ զննեսցի 'ի մէջ նոցին.

Ե. Ի պատերազմական նաւուց Եւրոպական տէրութեանց ըստ պահանջելոյ հարկին մի նաւ միայարկ կամ՝ կրկնայարկ, ազատ լիցի մտանել ընդ նեղուցն Դարդանելլայ եւ գալ 'ի Կոստանդնուպօլիս, եւ յետ ամսօրեայ աւուրց վերադառնալ.

Զ. Նաւատորմիղն Օսմանեան տէրութեան՝ արտաքս քան զնեղուցն Պոնտոսի բնաւին մի՛ ելցէ, բայց վաճառականաց իրոց նաւք երթեւեկեսցեն ուր եւ կամիցին.

Է. Ութ եւ տասն ամիս միջոց տացի հարկատու ազգաց Օսմանեան տէրութեան, որ ոք կամի մնալ ընդ իշխանութեամբ նորա 'ի յերկրի նորա, մնասցէ, եւ որ կամի ելանել յերկրէ նորին, եւ երթալ 'ի սահմանս այլոց տէրութեանց, գնասցէ համարձակ. յետ լրանալոյ այսր տասն եւ ութ ամսեայ միջոցի՝ ամենայն ոք մնասցէ 'ի տեղի իւր.

Ը. Ի ժամանակի ապստամբութեան Յունաց՝ Օսմանեան տէրութիւնն զորքան տունս կամ զստացուածս Յունաց յափշտակեալ գրաւեալ է, զայն ամենայն ըստ ուղիղ հաշուին վճարեսցէ Յունաց.

Թ. Ազատութիւն տացի Հելլենացւոց, որք են 'ի կղզիս Միջերկրական ծովուն, իբրեւ մասնաւոր տէրութիւն ինքն անկախ յումեքէ, եւ զթագաւոր նոցին ընտրեսցեն եւ կացուսցեն Եւրոպական թագաւորութիւնք. այլ յաղագս սահմանաց նոցին ոչինչ հաստատեալ սահմանեցին անդ.

Ժ. Կղզիք՝ որք 'ի կողմն Եւրոպիոյ անկանին, տացին Հելլենացւոց տէրութեան, որ նստելոց է 'ի Մօրա. Իսկ Տաճիկք՝ որք բնակեն 'ի կղզիս յայնոսիկ, եթէ կամին, ելցեն եւ գնասցեն յայլ երկիր ընդ իշխանութեամբ Օսմանեանց, իսկ եթէ կամին մնալ անդր, լիցին հարկատու Հելլենական տէրութեան, որպէս Յոյնք հարկատու են Տաճկաց 'ի Կոստանդնուպօլիս.

ԺԱ. Նաւք Հելլենացւոց վաճառականաց տացեն միայն զմաքսն՝ երեք առ հարիւր, եւ բայց 'ի մաքսէն զայլ ինչ տուրս մի՛ պահանջեսցին, եւ դրօշակք նոցին իցեն 'ի կապուտ պաստառ քարշեալք.

ժբ. Հարկատուք Տաճկաց, որք են Յոյնք, Հայք, Հռովմէական Հայք, և Հրեայք, ազատ լիցին 'ի պաշտել զօ և իցէ հաւատս, և բռնութիւն հաւատոյ և կրօնի մի լիցի 'ի կողմանէ Օսմանեան տէրութեան, ուստի բռնութեամբ յեղաշրջել զքրիստոնեայս 'ի Մահմէտական օրէնս մի երբէք լիցի, և Հռովմէական Հայք ազատ լիցին 'ի պաշտել զհաւատս իւրեանց։

Դեսպանն Ռուսաց ամենայն պատուով և արտօնութեամբ եկեալ նստցի 'ի Կոստանդնուպօլիս 'ի պալատ իւր և զերկոտասան դաշնադրութիւնս զայսոսիկ հոգ տարցէ 'ի գործ դընել, և ընդ հակառակն՝ եթէ ներհակ դաշնադրութեանցս այսոցիկ գործողութիւն ինչ արասցէ Օսմանեան տէրութիւնն, 'ի նմին աւուր բացցի վերստին մարտ պատերազմի։

Յաւուրս յայսոսիկ Րէշիտ Մէհմէտ փաշայն՝ որ ամբարձեալ էր 'ի պատիւ վէզիրի ազամութեան, հրամանաւ արքայի եկն յԱնդրիանուպօլիս, որում՝ ընդ առաջ ելեալ Տիպիչ՝ մեծապատուով ընկալաւ զնա, և զաւուրս երիս արար խրախութիւնս և հանդէսս խնճոյից՝ և զամիս մի մտերմաբար ընկալաւ զամենայն ազգս բնակեալս 'ի քաղաքին, ամենեցուն ըստ իւրեանց աստիճանի և արուեստի պատիւ ցուցեալ և խնճոյս պատրաստեալ։

Իսկ յետ երեսուն աւուրց հաշտութեանն 'ի նոյեմբեր 7, դեսպանք Գաղղիացւոց և Անգղիացւոց զմեծամեծս և զբազմազան ընծայս պատրաստեցին արքայի 'ի Կոստանդնուպօլիս 'ի Գէօյսիւք տէրէ, և չնորհակալ եղեն զնմանէ, որ հոգացեալ զօգուտ և զբարին հասարակաց՝ դիջաւ 'ի հաշտութիւն ընդ Ռուսս, և վերջացոյց զպատերազմն, և անհնար արար զամենայն չարիսն, որք ունէին 'ի վերայ հասանել Կոստանդնուպօլսոյ։

(1830) Եւ յետ երկուց ամսոց յառաջներորդ օր յունվարի եկն դեսպանն Ռուսաց 'ի Կոստանդնուպօլիս։

Իսկ զօրքն Ռուսաց՝ որք եկեալ էին 'ի Սիլիվրի, յետ քառասուն աւուրց դարձան յետս, բայց 'ի Սիլիստրէ՝ որ 'ի կողմն Րումէլիյի, և 'ի կարին՝ 'ի կողմն Անատօլուի, մնացին զօրք Ռուսաց զամ մի, և յետ այնր թողին զնոսա եւս, և գնացին։

Իսկ 'ի չուելն Ռուսաց՝ բազումք եւս 'ի Հայոց և 'ի Յունաց

հանդերձ ընտանեօք իւրեանց գնացին ընդ նոսա, թողեալ զտուն և զայգիս և զանդս իւրեանց, որպէս ՚ի կարնոյ քաղաք յառաջ քան զպատերազմն էին տասն հազար տունք Հայոց, իսկ յետ պատերազմին և չուելոյ Ռուսաց մնացին հարիւր տունք, զի Կարապետ եպիսկոպոս առաջնորդ նոցա՝ զգուեալ գոլով յանարժան գործոց Տաճկաց և ՚ի բռնութենէ փաշայից, յորդորեաց զքաղաքացիսն՝ չուել ընդ իւր, և գնացին ՚ի Ռուսաստան ՚ի Տփխիս, յԱխլցխա, և յայլ քաղաքս Ռուսաց. ընդ իւրեանս տարան և զամենայն զարդս եկեղեցեաց կարնոյ՝ զոսկեղէնս և զարծաթեղէնս, և զպատկերսն ևս, այնպէս արարին և ՚ի բազում քաղաքս Անատօլւոյ.

Իսկ Յոյնք ՚ի կողմն Րումէլիի առաւել քան զՀայս գնացին և ՚ի Ռուսաստան չուեցին, նոյնպէս և Բուլկարք, թէպէտ յանցանել ժամանակաց բազումք ևս վերադարձան դարձեալ յերկիր իւրեանց, զոր թողեալ էին, վասն չգտանելոյ ՚ի Ռուսաստան բաւական ապրուստ հացի և զգեստու, և վասն անգործ մնալոյ նոցա անդր։

Ի սմին ամի եղև հրդեհ ՚ի Պօլիս գաւառն Բերայի, այրեցաւ և աշտարակն մեծ՝ որ անդ է, և՛ կոչի Ղալաթա գուլէսի, և յետ ամաց ինչ վերստին շինեցաւ շքեղ քան զառաջինն.

## ԳԼՈՒԽ ԽԲ.

Յաղագս որոշելոյ Հռովմէական Հայոց ՚ի Հայոց և Մետրապօլիտ նոցա և առաջնորդի.

---

Իբրեւ սկզբնաւորութիւն եղև ՚ի գործ դնելոյ զպայմանս դաշնադրութեան ՚ի կողմանէ Օսմանեան տէրութեան, որպէս յիշատակեցաք ՚ի վեր անդր. դեսպանք Գաղղիացւոց և Անգղիացւոց առաջարկեցին արքային՝ խնդրելով զազատութիւն և զդարձ Հռովմէական Հայոց յաքսորանաց իւրեանց, և տալ նոցա որոշ պատրիարք և եկեղեցի՝ անկախ ՚ի պատրիարքէն Հայոց.

Ընկալեալ արքային զխնդիր նոցուն՝ հրաման առաքեաց 'ի դիւան մեծի եպարքոսին. յորմէ առաքեցան հրովարտակք յԱնատօլու և 'ի Ռումէլի, ուր աքսորեալք էին Հռոմէական հայք, որպէս զի վերադարձցին 'ի Կոստանդնուպօլիս 'ի տունս իւրեանց. և աղօթող լիցին վասն կենաց արքային.

Բայց այսու պայմանաւ, զի մի՛ իշխեսցեն յայսմ հետէ երթալ յեկեղեցիս Լատինացւոց. այլ աղօթել յեկեղեցիս իւրեանց, որոց շինութեան հրաման եղեւ յարքայէ. զի ուր և իցեն բնակեալք, անդր շինեսցեն եկեղեցի իւրեանց.

Աստանօր արժան համարեցայ դնել 'ի կարգի պատմութեանս զպատճէն հրովարտակի վերադարձման Հռոմէական հայոց, որպէս զի թերութիւնքն՝ որք 'ի նմա, բարբառ ծանիցին 'ի մտաւոր ընթերցողաց.

« Գըտուէթ իւլ նէվապ իլ մութէշէրին. Քէրիմա նայիպի մէվ-
« լանա զէյտէ իւմէհու. Թէվգըի րէֆի հիւմայուն վասըլ օ-
« լանճագ մալիւմ օլա քի. Էրմէնի միլլէթինտէն Գէյօդյուն-
« տա տէօրթ եօլ աղզընտա քեային պայրգճըյար տէրուննին-
« տէ Թէրզի Արնաու, վէ Օրթաքէօյտէ մութէմէքին Թէրզի
« Յուսէփ նամ զիմմիլէր, մինհաֆի թավրի բայէթ հարաքէ-
« թէ ճիւրաաթ իյլէտիգլէրի ինհա օլունդուղունա մէպնի, պուն-
« տան աղաէմ սատր օլան էմրի շէրիֆիմէ ֆէրմանը նէֆի վէ
« իճլա օլունմուշլար իտի, մէաֆուլէր անիզէ մաղալէսին-
« տէն օլարագ, չայէտա յի մէրհամէթ օտուղլարընա պինա-
« էն, վէ ֆիմապաատ թավրի բայէթէ մինհաֆի հարաքէթտէ
« պուլունմամագ իւզրէ, մէրհամէթէն աֆ վէ իթլագլէրի
« խուսուսունտա միւսաատէի սէնիյէյի միւլիւքեանէմ էրզանի
« գըլընըպ, օլ պապտա խաթթը հիւմայուն մէրքեարըմ նու-
« մըն փատիշահանէմ մէրհամէթիւմ օլմաղլա, մանթուգ-
« մինիֆի իւզրէ մէրտումէր աֆ վէ իթլագ օլունմալէրի
« ֆէրմանըմ օլմաղըն. իմտի ֆիմապաատ սայրէյի բայէթ վէ
« իսթիգամէթտէ սէդամէթ էյլէմէյէի շարթը իլէ, մէրտումէ-
« րին աֆ վէ իթլագլէրին խուսուսինէ միւսաատէյի սէնիյէյի
« շահանէմ գըլընմըշտըր.

« Սէն քի նայիպ միւմայիլէյհ սին, մալիւմըն օլատուգտա,

«շարթի իթլաֆլերինի կիւչի հիւչլերինէ թէֆհիմ վէ թէրքին
«պիրլէ · գայրի նէֆիսէն թախլիյէ սէպիլլերինէ միւպատէ-
«րէթ էյլէմէք պապինտէ ֆէրմանի ալիշանըմ սատըր օլան-
«մըշ տըր · պույուրուլտըմ վուսուլ պուլտուգտա , պու պապ-
«տէ վէչհի մէշրուհ իւզրէ շէրէֆեաֆթէյի սատըր օլան վա-
«ճիպ իլ իթթիպա վէ լազըմ իլ իմթիսալիմին մէզմունի ի-
«թասըթ մաքրունի իլէ ամիլ օլասըն , շէօյլէ պիլէսին , ալա-
«մէթի շէրիֆիմէ իթիմատ գըլասըն ·
«Թահրիրէն ֆի էվայիլ շէհէր ճամազիլ էվէլ · սէնէ խամ-
«սա · վէ սըպային · վէ միւէթէյն · վէ էլֆ » ·

Զայս օրինակ գրեալ էին և ամենայն հրովարտակք , զո-
րոց զբազումս ընթերցայ ես ինքն ·

Իսկ զմնացեալսաց աքսորելոց զհրովարտակն վերադարձ-
ման գրեալ էր վէզիրն 'ի գխոյց իւրոց , որոյ գրութիւն կոչի
Մէքթուպի սամի , զի մնացեալսք ոչ թագաւորական հրո-
վարտակաւ աքսորեցան , այլ պատրիարքական թեզքէրէյիւ ,
վասն որոյ և նոցա վերադարձման գրութեան՝ բաւական եղեւ
հրամանագիր մեծի եպարքոսին կոչել զնոսա յաքսորանաց ,
որ գրեալ օրինակ զայս ·

«Շէրիաթ մաապ Մահալլըճ 'նայիպի էֆէնտի զիյատէ իլմէ-
«հու , պատ էս սէլամ ինհա օլունուր քի , էրմէնի միլլէթին-
«տէն մնացեալս թայիֆ օլունան գարըլարընտան՝ պունտան
«ագտէմ Տէրսաատէթտէ մուքիմ էրմէնի պատրիկի մարիֆէ-
«թի իլէ՝ օն պիր 'նէֆէրի Մահալլըճ , վէ օթուզ 'նէֆէրի Բան-
«տըրմայէ՝ պատրիք մէրգում նէտալէրինէ միւրուր թէզքիրէլէ-
«րի իլմասի իլէ տէֆ օլունմուշ իսէլէր տէ , էլհալէթիւ-
«հազա՝ մէրգումլէրին խալախի նէֆս էյլէտիքլէրի պէյանի իլէ՝
«ճէզայի կիւզէշտէլէրինի աֆի խուսուսի խահիշ օլունմուշ ,
«վէ մէրհամէթէն օլ վէչհ իլէ միւսաատէ գըլընմըշ օլմազըն ,
«ալիֆ իւլ զիքր Մահալլըճէ տէֆ օլունան օն պիր 'նէֆէր
«գարըլէրին միւրուր թէզկիրէլէրի իլմասի իլէ՝ Տէրսաատէ-
«թէ աւտէթլէրի խուսուսունա իրատէթի րուխսէթ ·
«Վէ պու վէչհլէ իլէ զինհար ապիր մէմնու օլան քէ-

«սատէն ֆէրմանն ասըլ վէրիլմէմէսի խուսուսունա թէքիդ
«էյլէմէք իչին մէքթուպ թահրիր վէ իրսալ օլունմուշ տուր ,
«ինշալլահու թաալա վուսուլիւնտէ պէր մէջէի մուհարրէր
«հարաքէթ վէ ախդ գավմ մուպաադէրէթ էյլէյէսին վէսսէլամ ․»

Այսու հրամանագրով եպարգոսին , դարձան մայրապետք յաքսորանաց իւրեանց ։

Իբրեւ այս այսպէս եղեւ , և հետզհետէ սկսան հռոմէական Հայք վերադառնալ 'ի Կոստանդնուպօլիս , եղեւ նոցա ժողով մեծ 'ի Ղալաթիա 'ի տան Գրլճեան Գրիգորի վասն ընտրութեան պատրիարքի իւրեանց ։

Բայց էր 'ի նոսա երկպառակութիւն , զի ոմանք՝ մանաւանդ Արքայեանք զՆուրիճան Անտօն վարդապետն արժանաւոր դատէին լինել պատրիարք . (որ յառաջ քան զամս չորս ընտրեալ իսկ էր 'ի Պէշճեան Յարութիւն ամիրայէ լինել փոխանորդ Հայոց , զոր պատմեցաք 'ի վեր անդր ) ։

Իսկ Գաղատացիք ամենեքին զառաջին կամակոր յամառամբ իւրեանց 'ի գլուխ հանել կամեցեալք , զՄարուշ կոչեցեալ Գաղատացի Պօղոս վարդապետն կամէին . և վասն այսր զՄօնսինեօր եպիսկոպոսն լատինացւոց և զմեծաւորս եկեղեցեաց նոցա 'ի կողմն իւրեանց շահեցեալք , գրեցին գիր աղերսանաց առ պապն Հռոմայ , զի զՄարուշ ընտրեսցէ և ձեռնադրեսցէ պատրիարք , և մի զՆուրիճան , և թէ՝ ժողովուրդք ամենեքին զՄարուշ խնդրէին , և թէ՝ Նուրիճանն կուսակից է Հայոց և ջատագով նոցին , և թշնամի եւս հռոմէական աթոռոյն ։

Այս ամենայն գրութիւնք հասին 'ի ձեռս պապին , զոր ընթերցեալ , և փոյթ եւս գիտելով զչարայայտ մախանս Գաղատացւոց , որք վասն ընտրութեան Նուրիճանին՝ եղեն պատճառք այն ամենայն չարեաց , որք հասին 'ի վերայ հռոմէական Հայ ժողովրդեան ։

Ուստի անարժան դատելով զՄարուշ՝ ետ բերել զՆուրիճան , և իջեալ յեկեղեցի՝ արար հանդէս Մետրապօլտաց և եպիսկոպոսաց , և մատուցեալ պատարագ , ձեռնադրեաց զնի պատարագին զՆուրիճան Անտօն վարդապետն՝ Արհիե-

կոպոս և Միտրապոլիտ Հռոմէական Հայոց Կոստանդնուպօլսի, և առաքեաց 'ի Կոստանդնուպօլիս.

Յետ քանի ինչ աւուրց գալստեան սորա՝ ազգ. սորին դեսպանք 'ի Դուռն արքունի, զի եպիսկոպոսն Հռոմէական Հայոց եկեալ է, և խնդրեմք, զի կոչեալ զնա 'ի Դուռն արքունի՝ կացուսցես զնա պատրիարք Հռոմէական Հայոց.

Եհարց արքայ, թէ այդ Նուրիճան հարկատու և ծառայ է ինձ, եթէ ոչ.

Պատասխանի ետուն, եթէ հպատակ է Գերմանական տէրութեան.

Ասէ ցնոսա արքայ, նա՝ որ չէ ինձ հպատակ, զիա՞րդ կարէ լինել գլուխ հպատակաց իմոց, եթէ այրդ այդ դեսպան իցէ, ասացէք ինձ. թէ որոյ տէրութեան դեսպան է, և ես ըստ արժանեաց պատուեցից զնա և ընկալայց, որպէս պահանջէ պատիւն դեսպանութեան.

Իսկ եթէ դեսպան չէ, և իմում տէրութեան հպատակ չէ, և զիա՞րդ մարթի լինել դմա գլուխ և կառավար հպատակաց իմոց.

Եւ վասն զի օրինօք խօսեցաւ արքայ, ոչ կարացին դեսպանք դիմախօսել նմա. Ուստի հրամայեաց արքայ Հռոմէական Հայոց, զի ընտրեսցեն ինքեանք զմի ոք 'ի վարդապետաց իւրեանց՝ որ իցէ հպատակ Օսմանեան տէրութեանն, և այդ տարցեն 'ի Դուռն արքունի.

Եւ ժողովեալ նոցա՝ ընտրեցին զՅակոբ վարդապետ Մոնուկեան 'ի միաբանութենէ Վիեննայի վանիցն, և ծանուցեալ 'ի Դուռն արքունի՝ կոչեցին զՅակոբ վարդապետ, և զգեցոյց եպարքոսն զխիլայ պատրիարքական իշխանութեան, և ետ նմա հրովարտակ, կոչելով զնա, «Յակոբ փիլոզոփոս Գաթոլիկեան»․ յանձն զպատուէրս արքային՝ և զպաշտօնութիւնս փոգափային Հռոմէական Հայոց՝ և զպարտիս նորա՝ և զիշխանութիւն նորա՝ անսխալ բացայայտել կամեցեալ, լաւ համարեցայ զնոյն պէրաթն Տաճկական դնել աստ 'ի կարգի պատմութեան, զոր ետ արքայ առաջնորդին Հռոմէական Հայոց օրինակ զայս.

## ՊԷՐԱԹ

Տէվլէթի Ալիէյի տայիմ՝ իւլ գարար․ վէ սալթանաթի սէ-
նիյյէի սէրմէտիյյէ իւլ իսթիգրարըմըն ճէլլէ կիւզար բայաթըն-
տան օլան Գաթօլիգլէրին պաշքանտա փիրաք ախալէրի օլմայարագ․
գաթընըն քէնտիլէրի Րում վէ Էրմէնի բաթրիքլէրի՝ թէվա-
պիի թահթի հագգաթէթլէրինտէն պուլունմուշլար իսէ տէ․ Գա-
թօլիգլէրին ուսուլի այինլէրի Րում վէ Էրմէնի այինլէրինէ ույ-
մամագ ճիհէթի իլէ թէմամէն խարիճի ային խանէլէրէ քի-
տէրէք էֆէնտի քիլիսալէրինէ տահի չըգա իլէ․ այինլէրինէ
թէալլուգ նիքահ տէյիր ումուր խուսուսլարը այիր-
լէրինէ րաւէթ իթմայէրէք․ թաաշարի նէֆաքէթ ու մէշագգաթէ
տուչար օլտուգլարը այի թաաճգին մալումի աչիքեար․ վէ մէրտումիկէր
հաթընըն մէրու գիլի ատէթի փատիշահանէմտէն օղրընմըշ
բայիի ռէֆէթի ավէճէն օլմագ մուրատէլէրի իլէ՝ ֆիլիմաղրա
էֆէնտի քիլիսալէրինէ կիթմէյապ․ քէնտիլէրինէ թասախուս գը-
լընան քիլիսալէրտէ իճրայի ային էթմէք իւզրէ․ օ միլլէ-
թի փայէթ ու մուչագգաթէթլէրինտէն թէխլիսիլէրինէ․ տիր գաթ
տախի խաթըճայի րիճայ ու այլիչէրի լազըմէյի զամանի
մէրասիմի մուտրիճէսի բէրիքէռրախան խուսուսի ալէյհինէ վէ ալէ-
ալէյհա օլմագ ուքօն նաշի․ կէրէք Ասիթանէի սաատէթ ալը-
յիմին՝ վէ կէրէք քասաբէլէի մէմալիքի մահրուսէմին քասային
պիլ ճումլէ Գաթօլիք մէզհէպինտէն օլանլարըն վիլայէթ ախալի-
չէրէֆիաթիթէի աուսուլ օլան խաթթի հիւմայունըն չէլիքէթ մազ-
մունի բատիշահանէմ մուճէպինչէ․ իշպու ային իշի ինիզ կրը
այթը տէնէօի մանչի բէչէյի չէրիֆին ինիզի այիրինէ կիւնիւ-
ու՛ էպէտիյէն ճէմաաթէ Ալէքսէմ՝ բայալարինտան օլմագ
իւզրէ․ քէնտիլէրինին ինթիխապ ու իխթիլաֆ իլէ իւլէմայ
րաֆըն թէնզիմ իլէ գայանաթ սըֆաթ իւզրէ միւթէվէլլի էպ-
իւլ միլլէթ էլ մէսիհիյէ Յակոբ վէքիլի Մասնէլ բանքալ խօ-
թամէթ ալապալըմէսի պիր խալբէ էւվէլ էյլի ային աղ ճէ վէս-
քէչի բէչինէն խաղնէյի աւիրէմէ թէսլիմ էյլէմէք․ վէ օթուզ
պիւք օթուզ աքչէյ ային աղ ճէ մալի մուգաթայի թալէփ այէ-
նէր ունէն ճանիպի միրիյէ էտա էյլէմէք շարթի իլէ․ իհսանը
թէվճիհ խիւլ․ պու պէրաթըն հիւմայունը սատաթէ մազպունի

վերտիմ, վէ պույուրտում քի, պապէլ հէմ մէրամը Յակոբ բանիլարի մէրամլէրին ալէյհինէ վէ քիւչիւկ իւ դէրլէրինէ փիլոզոֆօ ալիլեր՝ այինլէրինէ մուխալիֆ ումուրլէրինտէն մէրամըմըն ետօղլունտէն թէճավիւզ վէ ախէրէթէ մուտաալլիք օլունմայա․ վէ պաղլը նամազէ մուստահաք օլան բանիլերի մէրամ այինլէրի իւզրէ պաղլը խալք ճէրլէրին զայրի բանիլէ վերմիւքամէ, ախէրի մուտաալլիք էյլէմէյէ ․

Վէ փիլոզոֆլարի մերամըմըն աբըլի օրթա որդան, աղլը նամազլերի թէվաճիհ օլունմայա ․

Վէ փիլոզոֆլարի մերամըմըն մաքսիթէթ ու իւզէի ճօղ իքէն՝ սայիր բանիլեր այինլերինէ մուխալիֆ նիքսաճ ճայիզ օլմայան քէֆիլէյէ նիքսաճ էյլէմէյէլէր ․

Վէ պիր զիմմինին ամրէթ եէրլէրինտէ դաշտա վէ եախօտ պիր զիմմի ամրէթ պաշամայ վէ եամաշ ալմայ օլսա ․ մալլէրինէ փիլոզոֆ մերամըմըն վէ քիւլլէլերինտէն զայրի քիմէսնէ կիրմէյէ վէ զարքչմայա ․

Վէ արդի նիքսաճ վէ զինաճի նիքսաճ խուսուսլարը․ վէ իքի զիմմի այրիլերինտէ վերղու պուլան տաւայի բիյի թարաֆէյն իլէ մէրամ՝ րազըլեթ իտէրէք, տավա իտէնլէրին այրիլերինի խալաճ էյլէմէյին․ վէ քիլիսալը այինլէրի իւզրէ նէձին վերմէյինէ, էնի էօրէ թահիլէրի թարաֆընտան տախըլ ու թառաւղ ու թէձրիմ օլունմայա ․

Վէ միլլէթի մերամլէրն այսա վարիդ մալը օլան բանիալեր վէ քէշիշէ ամրէթլէրին թէրէքէլէրինի փիլոզոֆ մերամ միրրի իչիւն ալըղ ու զապթ էյլէմիյէ․ պէյթիւլմալ վէ զասսամ՝ ամէլերի վէ սայիր էհլի էօրֆ թայֆէսի թարաֆընտան մուձանէթ օլունմայա․ վէ սուղլարը վէ կէրէք ամրէթլէրին վէ Գալաթայի օլան սայիր զիմմիլէրին այինլերի իւզրէ քիլիսալարի վաղըֆլարը վէ փիլոզոֆըա մերամը հէր նէ վաքըթ իսթէրսէ, մաղալու օլմաչեր իքէ խաթիմ օլունա ․

Վէ փիլոզոֆի մերամ թարաֆընտան մաղի մուղաւթասը վէ թասատտուխ ճէմի իչիւն թային օլունան բանիլէրէ միւրուր վէ ուպուր էյլէտիքլէրի մանզըլլերտէ քիմէսնէ թարաֆընտան մումանէթ վէ մուտախէլէ իթմիյէլէր ․

Վէ փիլոզոֆոս օլանըն տասարնա՝ վէ սիւվար օրտուղի հայվանէ՝ վէ առէտլէրէ՝ վէ ճամէ՝ վէ քիալէլէրինէ՝ վէ մէրտամըն քէնտի մասաշի հաւրլ օլան պաղլարի մահսուլընտէն. վէ թատտուր նամը վէրէնէկլարփըլերի չիրա. վէ պալ. վէ եաղ. վէ սայիր էշեալէրի. խանէսինէ նագլ էյլէմէլէրինէ մուդախէլէ օլունմայա.

Վէ փիլոզոֆոսի մէրասիմին կէնտիսինտէն լիեաքի մուլահազէ կէլիւպ կիտէն վէ սայիր խըզմէթինտէ պուլունան ըն էֆէր առէմլէրինտէն ճէզիյէ վէ ավարըզ վէ թէքեալիֆ միւթալեպէ գըլընմայա.

Վէ պացի էշխասըն գուհտր խանէ տասլարըրի ախէր մահալլէրտէ խալխնա օլունմայուպ. եըրըր տասարնա կէօրիւլէ.

Վէ քիլիսա ֆուգարասընա վագֆ օլան պաղ ու պահճէ վէ սայիր էմլաքլէր իլէ՝ քիլիսայէ միւթասալլիք էշեա էմանէթի մալըլու. փիլոզոֆոս զապտ վէ թասարրուֆ իթտիրիլիւպ. ախէրտէն միւտախէլէ օլունմայա.

Վէ պանտրարըն բաշկալէրինտէն փիլոզոֆոսի մէրասիմին իրի օլմագ ոլըրն մահալլէ վէ մահալլէ կէզիւպ ֆէսատէ պայիս օլմըլեր օլուր իսէ. փիլոզոֆոսի մէրամ՝ մուրիֆէթի իլէ մէն օլունա.

Եւ ինքն ևս գնաց առ նոսա 'ի բանակ նոցա բազում ան-գամ, և ետ նոցա առնել հանդէս պատերազմի, և ետես ըզ-զինուորական կրթութիւնս նոցա, և գովեաց զնոսա, և ըն-կալաւ 'ի նոցանէ խրախութիւնս մեծամեծս:

Եւ 'ի միում գիշերի՝ որ օր էր ծննդեան կայսերն Նիկո-ղայոսի, 'ի պատիւ անուան նորա արարին Ռուսք զհանդէս լուսախառնութեան 'ի Պէօյիւքտէրէ առաջի պալատի դես-պանին Ռուսաց, յորում գայր և ինքն իսկ արքայ՝ և մեծա-մեծք իւր՝ բազմեալ 'ի վերին յարկի նորաշէն և ոսկեզօծ շո-գենաւի իւրում. և յառաւօտուն՝ հրաւիրեաց արքայ զնոսա 'ի ծովեզերեայ յարկ Խոսրով Մէհմէտ փաշայի 'ի յԷմիրկեան կոչեցեալ գիւղն, և անդ պատրաստեաց նոցա կոչունս բազ-մախորտիկս և համադամս, շնորհեաց սպարապետի նոցա և

զօրագլխաց ընչան ափամակալ և մեծագին, և ամենայն առա-կական զինուորաց՝ ընչան արծաթի կնքեալ յանուն իւր և 'ի թուղթս. և մեծամեծ գոհութիւնս և բազում շնորհակալութիւնս տուեալ նոցա, գրեաց և զգիր շնորհակալութեան առ կայսրն Նիկողայոս:

Եւ տուեալ 'ի ձեռս ստրատեղեանն, արար բարեմաղթութիւնս բազումս և զվերջին հրաժարական ողջոյնն տուեալ նոցա, ել անտի և գնաց 'ի պալատ իւր:

Եւ նոքա 'ի նմին աւուր զամենայն կահս և զկարասիս բանակին՝ և զզօրսն զամենայն՝ զետեղեալ 'ի պատերազմական նաւս իւրեանց, 'ի նմին գիշերի յաջողակ հողմով ելեալք 'ի նաւուցէն՝ գնացին ամենեքին. և ընդ առաւօտն ոչ ոք տեսաւ ինչ 'ի տեղի բանակին և ոչ մի ինչ, միայն արձան մի մեծ կանգնեալ 'ի բանակետղ նոցա 'ի յիշատակ գալստեան նոցա:

Եւ այս միջոց գալոյ Ռուսաց 'ի Կոստանդնուպօլիս և վերադառնալոյ նոցա՝ տեւեաց զամիս վեց:

## ԳԼՈՒԽ ԽԸ.

*Յաղագս մահամերձ բանտարգելութեան Ճանիկ եւ Մաղսուտ եւ Խնզիր ամիրայից, եւ ազատութեան նոցին. Եւ յաղագս կաթողիկոսութեան տեառն Յովհաննու.*

(1832) ԵՐԵՒԵԼԻ էր 'ի սմին ժամանակի ներքին քարտուղար և խորհրդակիցն արքային՝ Մուստաֆա աղա, այր ագահ և չահասէր, որ եւ չինել նաւս մեծամեծս վաճառականութեան, և տայր բերել յԱմէրիկէ ցորեան, և 'ի Վալաքիոյ՝ ոչխար և զկով, և յինքն գրաւեալ 'ի տէրութենէն զբուրդ, զմետաքս, զափիոն, և զիւղ, ժողովէր բանութեամբ զի իւրագնոյ, և վաճառէր Եւրոպացի վաճառականաց բազմագնոյ, որովք հարստացաւ յոյժ, և լինելով սիրելի յոյժ յարքայ ար-

քայլ՝ լինէր նախագահ և հրամայող ամենայն մեծամեծաց տէրութեանն ։

Զառ ոչ կարելով տանել նոցա, գտին ժամ բարեպատեհ, և պատմեցին արքային զգործս նորա, և այնպէս բանսուր պատճառս 'ի մէջ բերելով, կնքեցին զբան իւրեանց առ այս, եթէ այրս այս յանէր և յաղքատութիւն և 'ի վերջին տնանկութիւն հասուցց զբնակիչս Անատօլուի և Բումէլիի ագահութեամբ իւրով։ Զոր լուեալ արքայ, դժուարեցաւ յոյժ ընդ գործս նորա և հրամայեաց հանել զնա 'ի պաշտօնէ իւրմէ, և ընկենուլ 'ի պատուոյն, և խրատուք խաւրով Մէհմէտ փաշային եղգուղեան փաշայութիւն տալ նմա, առաքեաց զնա 'ի Թրիքալա ։

Սմա հաւատարմատար էր Մաղսուտ Յարիմեան՝ և սիրելի յոյժ յաչս նորա, որով և արքային իսկ եղեւ ծանօթ, բայց 'ի պատճառս նորա ստացաւ զբազում թշնամիս 'ի մեծամեծ նախարարաց տէրութեանն, նաև յազգէ մերմէ ։

Եւ յայնմ միջոցի ժամ բարեպատեհ վարկուցեալ Պէզճեանի, որ յոյժ սրտմտեալ էր ընդ դէմ Մաղսուտայ յաղագս զանց առնելոյ նորա զպատուիրանս իւրով չմտանել 'ի դասս քահանայից 'ի ժամերգութեան, այնպէս հաւատացոյց արքային, որպէս թէ՝ զայն ամենայն չարիս՝ զոր արար Մուսթաֆա, ուսուցանէր նմա հաւատարմատար իւր Մաղսուտ հայազգին ։

Ուստի և հրամանաւ արքային կոչեցին զՄաղսուտ և զհօրեղբայրս նորին՝ զՃանիկ և զԱնդրի, ընդ որոց ունէր ընկերութիւն, և եդին 'ի բանտի փողերանոցին, և դատաւոր սոցին կարգեցաւ հրամանաւ արքային՝ ատեան փողերանոցին Նաֆիզ էֆէնտին, այր անգութ և անողորմ, չարասէր և ագահ, որոյ նմանն չէր երբէք երեւեալ 'ի բազում ժամանակաց հետէ ։

Եւ կնքեալ զանուանս նոցա, տարան 'ի փողերանոցն զարկեղս նոցին և զհաշուեգիրս, և գրեցին զամենայն ։

Եւ բազմացաւ չարախօսութիւն թշնամեաց զնոցանէ առ արքայ, և մերձ էր նոցա վտանգ մահու ։ Այլ ողորմութեամբն Աստուծոյ և փութաջան վաստակօք Պէզճեան Յարութիւն ամիրայի սիրելւոյ արքային՝ յետ երկոտասան աւուրց բանտարգելութեան իւրեանց ազատեցան և գնացին 'ի տունս իւրեանց ։

(1833) Յաւուրս յայսմիկ եղեւ հրդեհ մեծ 'ի Կոստանդնուպոլիս, ելեալ 'ի Թիւֆէնքխանայէ առ ընթեր Ճիպալիին, և յերկուս բաժանեալ, մի ծայրն գնաց մինչեւ 'ի Սիւլէյմանիյէ, և միւսն մինչեւ 'ի Սուլթան Մէհէմմէտ, և վնաս բազում հասոյց այլազգեաց.

(1833) Ի սմին ամի և Տէր Եփրեմ կաթողիկոս՝ կացեալ յաթոռ իւրում զամս քան երկու, եհաս 'ի խորին ծերութիւն, և անկեալ յուժոյ և 'ի տեսութենէ, և կամովին հրաժարեալ յաթոռոյն, հաւանութեամբ բոլոր միաբանութեանն Սուրբ Էջմիածնի՝ և հաճութեամբ կայսերն Նիկողայոսի՝ ընտրեցին զառաջնորդն Թուստանու՝ զՏէր Յովհաննէս եպիսկոպոս Կարբեցի՝ և օծին զնա կաթողիկոս 'ի մարտի 2, 1834.

Իսկ Եփրեմ կաթողիկոս առանձնացաւ 'ի վանսն Հաղբատու, ուր կացեալ զամս հինգ՝ հանգեաւ խաղաղութեամբ 'ի Քրիստոս.

## ԳԼՈՒԽ ԽԹ.

Յաղագս գործոց Պէզճեան Յարութիւն ամիրային, եւ մահուան նորին.

(1834) ՅԱՅՍՄԻԿ աւուրս հիմնադրեաց Պէզճեան Յարութիւն ամիրայ, զորոյ զմեծամեծ գործս եթէ հարկ լինէր գովել, կամ ներբողս ինչ յօրինել, լինէր մատեան իմն մեծ արտաքոյ կարգի պատմութեանս.

Այլ թողեալ զայս ճարտասանից մերոց, մեք 'ի համառօտ փութացեալ՝ որպէս պահանջէ կարգ պատմութեանս, տացուք սակաւուք.

Իսկ զի՞ էր սա այր քաջաշխոյժ և մեծախորհուրդ, որ թէպէտ չէր յազնուական զարմէ յառաջ եկեալ, այլ նախապատիւ հանդիսացաւ քան զամենայն ազնուականս, և որք յաղ-

նական զարմէ էին սերեալք, 'ի սոցա սորա կարգեցան ծա-ռայաբար ։

Չէր 'ի Հարուստ և 'ի փարթամ Հօրէ ծնեալ, այլ փարթամք և Հարուստք առաջի սորա 'ի կարգս աղքատաց էին Համար-եալք ։

Չէր ճարտար Հնարագէտ բնական և ուսումնական ար-ուեստից, այլ Համբաւ և մեծութիւն սորա գերազոյն Համ-գիտացաւ քան զճարտարապետս փիլիսոփական և բժշկական արուեստից, և քան զՀմտավարժս աշխարհագրութեան և վա-ճառականութեան տոմարաց ։

Իսկ որո՞վ արդեօք եղեւ սա, ոչ այլով իւիք, բայց եթէ իւրով մտավարժ դատողութեամբ, և քաջախորհուրդ խոհե-մութեամբ, որով զամենայն իրաց զապագայս նկատելով զգու-շացուցանէր զանձն 'ի ձախողակի պատահարաց, և յառա-ջադէմ գտանէր 'ի յաջող բարեբաղդութիւնս ։

Զի սա յառաջին ժամանակս կենաց իւրոց աղքատօրէն ապրեալ, յետ այնր մտանէ 'ի պաշտօն Տիւզեան Յովհաննէս չէլէպիի, և առ կենդանութեամբ նորին սիրելի և Հաւատա-րիմ ցուցեալ նմա զինքն, մտանէ 'ի պաշտօն գործակալութեան փողերանոցին արտաքոյ 'ի դասէ սովական պաշտօնէից ։

Եւ յետ մահուան նորա նոյնպէս սիրելի և Հաւատարիմ գտաւ Գրիգոր և Սարգիս պայազատացն, որք յաջորդեցին 'ի տեղի Հօր իւրեանց, և սիրէին զՉէզճեան Յարութիւն իբրեւ իւրեանց եղբայր և ազգակից ։

Բայց յետ սակաւ ինչ իբրեւ ետես, զի ազգականք նոցին՝ Մկրտիչ չէլէպի, և Յովհաննէս Ալէքսանեան, և Աղնաւուրեան Յովսէփ, և այլք, սկսան վատնել զգանձս արքայի 'ի փառս իւրեանց՝ և 'ի շինութիւն ապարանից՝ և ծովեզերեայ յարկաց մեծամեծաց, զգուշացեալ զապագայս չարին որ ունէր Հասանել 'ի վերայ նոցա յարքունուստ, զգուշացուցանէր միանգամ և երկիցս Գրիգոր չէլէպի, զի մի՛ թոյլ տացէ նոցա առնել ըստ կամաց իւրեանց շռայլութիւնս 'ի գանձուց արքայի ։

Եւ իբրեւ ետես, զի ոչ ազդեցին բանք իւր 'ի լսելիս նորա, լաւ Համարեցաւ ելանել 'ի միջոյ նոցա, և մնալ առանձինն, զի մի՛ սոսա և ինքն զպատիժ պատուհասի կրեսցէ ընդ նոսին ։

Ուստի և տուեալ նմա զհաշիւ իւր զամենայն, էառ 'ի Գրիգոր չէլէպիէ զպայմանագիր ներեալ ներքին մերատեսչի փագերանոցի Աղայարաճեան աւէլին, յորում գրեալ էր. «Եթէ Յարութիւն մերս գործակալ զայսչափ ամս աշխատեցաւ 'ի պաշտաման փագերանոցիս, և յամենայնի հաւատարիմ գտաւ, և այժմ ըստ կամաց իւրոց հրաժարեցաւ, և չէ իսկ պարտական և ոչ մի ինչ փողոյ եթէ մեզ՝ և եթէ գանձուց արքայի, յորոյ 'ի հաստատութիւն զայս մուրհակ ներեալ տուաք նմա»։

Առեալ զայս թուղթ Յարութիւն Պէզճեան, գնաց 'ի տուն իւր յիւսկիւտար, և մնաց անդ։

Եւ յետ միոյ ամի իբրեւ այն սակայլի և մեծահարեր փառնդ կործանման տանն Տիւզեանց՝ պատահեցաւ նոցա 'ի դիւանց արքայի, և ամենայն գործակալք և պաշտօնեայք Տիւզեանց եդան 'ի բանտի, և աքսորեցան, Պէզճեան Յարութիւն ազատ գտաւ յայսմ աղետալի գիպուածոյ՝ իւրով իսկ կանխագուշակ խոհեմութեամբն։

Եւ փոխանակ ընդ նորին զպատիժ պատուհասի կրելոյ՝ առաջնորդութեամբ Գրիգոր ամիրայի կոչեցաւ 'ի տեղի նորին նախ հրամանաւ արքայի գլուխ և ճարտարապետ մեծի փագերանոցի արքային՝ իբրեւ յամենայնի հաւատարիմ տանգապահ ամենայն գանձուց ակերութեանն։

Եւ յայնմ օրէ սկսաւ Պէզճեան Յարութիւն 'ի կարգի դընել զպէսպէս պաշտամունս գործակալութեան փագերանոցին, և զամենեցուն նոցա զգործս և զհաշիւս ինքն իսկ տեսանել աչօք իւրովք, և ոչ հաւատալ այլոց, զանհաւատարիմս հանել արտաքսել, և կարգել զհաւատարիմս, և ամենեցուն նոցա բաւ արժանեայն տալ զապրուստ հացի և զգեստու։

Եւ որովհետեւ երեւելի էր յայնժամ Հալէթ էֆէնտի աւագ նախարարն արքայի, և համախոհն նորին Խէսկէլ Հրեայն, երկոքին ևս արիւնարբու գազանք անօրէնք, սա իւրով իսկ ընտանեկան քաղցր կենակցութեամբն և զգօնամիտ ուշիմութեամբն շահեցաւ զսէրն նոցա, և եղեւ նոցա սիրելի մինչեւ ցշարաչար տապալումն նոցին գլխաւորաց։ Եւ յետ այնր 'ի ժամանակի խռովութեան և ապստամբութեան Յունաց՝ մինչ Եէնիչէրիք սկսան զհայս և զՅոյնս սպանանել

կղզեաւն՝ անկրկնելի գոլով 'ի թագաւորէն, և յայնժամ եւս խրով առատաձեռն առուցմեամբ չանհատ զգլխաւորս նոցին զամենայն, և ոչ երբէք անձին և տան իւրոյ վնաս ինչ մինչև ցբարձումն նոցին յաշխարհէ։

Եւ յետ սոցա իբրև մի զինի միոյ երեւելիք հանդիսացան սիրելիք արքայի, նախ Հիւսէին Աղա փաշայն, և յետ նորա եղբայրդուն մեծ Իէչիա փաշայն, և ապաքարեան մեծ խորով Մէհմէտ փաշայն, և քարտուղարն արքայի Մուստաֆա, զոսա զամենեսին չանհատ Գէորգեան Յարութիւն որով և իցէ եղանակաւ, և եղեւ սիրելի յոյժ յաչս նոցա, և ոչ եթող նոցա տանել քաւթիւն ինչ զինքենէ առ թագաւորն, և անկանել 'ի փորձութիւն։

Այս ամենայն զոր աստ յաք համառօտաբար, մեծի խոհեմութեան են գործք արժանիք, զի զժամանակն նկատէր եթէ չար և եթէ բարի, և ըստ այնմ վարէր զընթացս իւր անփորձ գոլով յամենայն պատահարաց և արկածից կենցաղոյս։

Սիրելի եղեւ յոյժ յաչս արքային, և ընկալաւ 'ի նմանէ բզպէսպէս նշանս ախտանակարս և մեծարանս, յորոց միջի գերագոյն հանդիսացաւ Սուրբէթի Հիւմայուն կոչեցեալ նշանն, զոր ընկալաւ յետ պատերազմին Ռուսաց, մինչդեռ եղիտ հնարս վճարելոյ զմեծատան միլիոն վենետկեան ոսկւոյն բզպարտն արքային՝ 'ի չահուց պղնձախառն արծաթի դրամին։

Եւ յայնմ օրէ հրամայեաց նմա արքայ զտանիլ 'ի ժողովս արքունի խորհրդականաց տէրութեանն, և նախարարական պատուով հեծանել 'ի ձի և 'ի նաւ։

Հրամայեաց նմա և համապատշօր գալ առ ինքն 'ի դրօսել զարքայ, և անտեսել զկերպակերպս իւր։

Եւ 'ի միում աւուր 'ի մէջ բամազանի ամսոյն առեալ շրջեցաւ արքայ ընդ նմա 'ի շուկայս Կոստանդնուպօլսի 'ի տեսս այլոց։

Եւ այսպէս գերագոյն հանդիսացաւ քան զամենայն մեծամեծս տէրութեանն, և սկսան ամենեքին երկիւղիւ խօսել ընդ նմա, և մեծ յարգութիւն և պատիւ ցուցանել նմա իբրև արքայի։

Իսկ ըստ հոգևորին ընթացք սորա՝ թէպէտ Աստուծոյ են գիտելի, և խոստովանահօր քահանային, բայց զոր աչօք իսկ

տեսանէաք և լսէաք, այս էին, զի առատաձեռն էր առ ամենեսին, մանաւանդ առ աղքատս ո և իցէ ազգի.

Սիրէր յոյժ կերակրել զաղքատս, զգեստաւորել զմերկս, ժողովել զօտարս, հանել 'ի բանտէ զարգելեալս, ազատել 'ի մահուանէ զդատապարտս։

Որովք առաջի դրան տան իւրոյ և 'ի ճանապարհին բազում՝ նեղեալք և փորձանաւորք անպակաս գտանէին հանապազօր, և զկարօտութիւն իւրեանց լնուին։

Առատաձեռն էր և 'ի շինութիւն եկեղեցեաց, աթոռոց, վանորէից, և դպրատանց, զորս մի առ մի թուել երկարին բանքս, և ամենեցուն յայտնի իսկ են. բայց 'ի մէջ ամենեցուն նորա մեծապանծ հանդիսանայ շինութիւն Մայր եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի 'ի Խումխափու, յորոյ շինութեան ժամանակի ընկալաւ յԱրքայէ զհրովարտակ իւր, «Զի գերեզմանն Պէզճեան Յարութիւն ծառայի իմոյ եղիցի 'ի մէջ եկեղեցւոյն 'ի Խումխափու»։

Եւ այսու հրովարտակաւ ինքնին ետ շինել զգերեզման իւր 'ի կենդանութեան իւրում, և պատրաստել զինքն 'ի թաղումն նորին, որպէս և եղև 'ի մահուան իւրում։

Առատաձեռնեաց և 'ի շինութիւն սուրբ Փրկիչ եկեղեցւոյն հռոմէական Հայոց 'ի Ղալաթիա, բայց ոչ ետես զօծումն նորին, զի օրհաս մահուն յառաջեաց քան զայն։

Եւ ո՞ թուեսցէ զայնչափ անհամար ծախս քահանայական զգեստուց, և շապկաց դպրութեան, և արծաթի կանթեղաց, և ոսկեզօծ խաչից և աւետարանաց, և ամենայն սպասուց եկեղեցւոյ, զորս յօժարամիտ տուեալ տայր շինել անպակաս, և տայր յեկեղեցիս և 'ի վանորայս։

Առաքեաց և 'ի սուրբ Էջմիածին և 'ի Սիս՝ զաման մեռոնոյ արծաթի և ոսկեզօծ, և ընկալաւ 'ի նոցանէ զաղօթս և զօրհնութիւնս։

Արդ՝ յետ այսր ամենայնի մինչ կամք եղեն Ամենահատիչ Բարձրելոյն զերծուցանել զնա 'ի բազմախուռն հոգոց և արկածից կենցաղոյս, և առ ինքն փոխել զյաւիտենական կեանս, հիւանդացաւ ջերմութեան ախտիւ, և չեղեւ ճար և օգուտ 'ի բժշկաց և 'ի դեղօրէից։

Գնաց 'ի հիւանդութեան իւրում և 'ի Պրուսա 'ի ջերմ բաղանիսն, այլ ոչինչ օգտեցին նմա։

Եւ յետ ամենայնի զխաբեալ կենաց իւրոց եկեալ 'ի յՕրթագիւղ 'ի տան Բիշմիշեան պարոն Յովհաննու, ուր գնացեալ էր վասն առողջարար գոլոյ օդոյն։

Եւ ծանուցեալ արքայի զմահ սորին՝ ցաւեցաւ յոյժ, և առաք կարգաց նմա, և հրամայեաց, զի մեծահանդէս եղիցի թաղումն նորա, և բերեալ զմարմինն առընթեր պալատին արքայի 'ի նաւահանգիստն, դիցեն անտի 'ի նաւ, զի զվերջին պատուն կատարեսցէ արքայ։

Սոսի և Յակոբ չէլէպի Տիւզեան եկեալ, այդ արար իշխանութեան ազգիս, և կատարեալ զկարգ թաղման, եդին 'ի դագաղն, յորոյ առաջի գնային Սանափանոս պատրիարք, և կարապետ և Աստուածատուր եպիսկոպոսունք, և 'ի վերջոյ քանիք ոմանք յիշխանաւորաց ազգիս, և տարեալ 'ի նաւահանգիստն անդ, եդին 'ի նաւ։ Զոր տեսեալ արքայի 'ի պատուհանից պալատին, ողբաց զմահ նորա։

Եւ ո՞ կարիցէ պատմել զանհամար բազմութիւն մարդկան, որք գային յայնմ աւուր 'ի թաղումն նորա, սկսեալ յԷմինգահունէ 'ի դրանէ տան իւրոյ մինչև ցՄայր եկեղեցին 'ի Գումգափու, Հայք, Յոյնք, Ֆրանկք, և Տաճիկք, արք և կանայք, յամենայն ազգաց խուռն բազմութիւն ժողովրդեան, մինչև չլինել անցս անցորդաց, և այլ զարմանք երևել։

Եւ մինչ մերձեցան յեկեղեցին 'ի Գումգափու, եկեղեցականք Յունաց զգեստաւորեալք մոմեղինօք՝ ելին ընդ առաջ երգովք աղօթից, և մտին յեկեղեցին։

Եւ անդ որպէս սովորութիւն է տալ, եբաց կարապետ եպիսկոպոս զբերան իւր տալ ճառ ինչ դամբանական 'ի թաղումն նորա, բայց ոչ կարելով լսելի առնել զձայն իւր բազմութիւն աղաղակի ժողովրդեան, լռեաց, և սկսան կատարել զկարգ թաղման նորա, և եդին 'ի գերեզմանի իւրում առընթեր որմոյ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյն 'ի մատուռն Սուրբ Յարութեան Տեառն մերոյ, զոր նա ինքն եւս շինել 'ի կենդանութեան իւրում, և ապա արձակեցաւ ամբոխ ժողովրդեան 'ի տեղիս իւրեանց։

Զայս օրինակ մեծահանդէս թաղումն ոչ ոք 'ի ծերունեաց լուեալ և տեսեալ էր երբէք, և ոչ միումն յազգէ մերձ պա-տահեալ 'ի վաղ ժամանակաց հետէ անտի. մինչև արքայի իսկ 'ի տես բերել մարմնոյ մեռելոյն, և հրամանաւ նորին թա-ղել 'ի մէջ եկեղեցւոյ, և եկեղեցւոյն Յունաց ընդ առաջ ելա-նել 'ի թաղումն նորա երգոց պաշտամամբք։

Մինչև համառօտիւ կամեցեալ ասել, որպէս միակ և ան-համեմատ էր սա 'ի կենդանութեան իւրում, նոյնպէս և թա-ղումն նորա եղև միակ և աննման այլոց՝ յազգի մերում։

Իսկ վախճան կենաց սորա կարծեն լինել ոմանք 'ի հա-կի եօթնասուն ամաց, բայց յայտ իսկ է, զի անցեալ էր նա զվաթսնամենիւք. և թաղումն նորա եղև յամի Տեառն 1834, յերրորդ աւուր յունվարի 'ի պահս ծննդեան փրկչին։

## ԳԼՈՒԽ Ծ.

*Յաղագս օծման եկեղեցւոյն հռովմէական Հայոց և նորոգութեան եկեղեցեաց Հայոց, և յաղագս երևելի դիպուածոց ինչ։*

---

(1834) ՅԱԿՈԲ վարդապետ առաջնորդն հռովմէական Հա-յոց կացեալ զամս երկու և զամիսս ութ յառաջնորդութեան իւրում, վախճանի, և յաջորդէ նմա Յարութիւն վարդապետ 'ի միաբանութենէ վիեննայի վանիցն 'ի փետրուարի 3։

Յաւուրս սորա կատարեցաւ շինութիւն սուրբ փրկիչ եկե-ղեցւոյն հռովմէական Հայոց, զորոյ զհանդէս օծութեանն կա-տարեցին յամսեանն յուլիսի 14, յորում հրաւիրեցան և իշ-խանաւորք ազգիս Հայոց, և Նուրիճան Անտոն դերապայծառ կոչեցեալ մետրապօլիտ նոցա արար հանդէս մեծ 'ի նորաշէն եկեղեցւոջն, և մատոյց Պատարագ։

Ի սմին ամի եղև նորոգութիւն և բազում եկեղեցեաց Հայոց և Յունաց՝ եթէ 'ի յԱնատօլու և 'ի Րումէլի, և եթէ 'ի

կոստանդնուպօլիս․ և զամենս եւս նորոգ հիմնադրեալ կառուցին․ յորս ոչ դոյր եկեղեցի․

Իսկ 'ի կոստանդնուպօլիս եղեւ օծումն նորոգեալ եկեղեցեաց Հայոց 'ի ձեռն Ստեփաննոսի պատրիարքին․ որք են այսքիկ․ Օծումն սուրբ Աստուածածին եկեղեցւոյն Եէնիգիւղի 'ի յունիսի 24․ Օծումն սուրբ Նշան եկեղեցւոյն յԱլէմտաղի 'ի յուլիսի 29․ Օծումն սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն Պէյքոզի 'ի սեպտեմբերի 16․ Օծումն սուրբ Խաչ եկեղեցւոյն Խուրուչէշմէյի 'ի նոյեմբերի 16․ Օծումն սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն Ղալաթիու 'ի դեկտեմբերի 11․

Եւ յայսմ ամսեան 'ի դեկտեմբերի 21 կոչեցան պատրիարքունք Հայոց և Յունաց, և առաջնորդն հռովմէական Հայոց 'ի պալատն արքայի, յորում ներկայացեալ էին եպարդոսն մեծ Րաուֆ փաշայն, և մեծ սպարապետն Խոսրով Մէհէմմէտ փաշայն, և փեսայ արքային Խալիլ փաշա, և այլ եւս մինիստրք և մեծամեծք տէրութեան․

Եւ առաջի աչաց նոցա պարգեւեաց արքայ այսց չորից ազգայնոց զնշան ականակուռ լինել նշան ազգայնութեան, և զգեցոյց զկերպարիս 'ի պատուական չուխայէ հարմանի կոչեցեալ, և առաքեաց չքով 'ի տեղիս իւրեանց․

Յետ երկուց ամսոց ընկալաւ և բարունակեան Հրէից (այն է խախամպաշին) նշան ականակուռ ազգայնութեան յարքունուստ, և դարձաւ 'ի տեղի իւր․

(1835) Իսկ յետ չորից ամսոց փոխճանեցաւ առաջնորդն հռովմէական Հայոց Յարութիւն վարդապետ, կոչեցեալ յառաջնորդութեան իւրում զամիս երեքտասան, և այն նշանն ազգայնութեան վերադարձաւ 'ի դուռն եպարդոսին, և յետ հնգետասան աւուրց յաջորդեաց Սերոբէ վարդապետ 'ի միաբանութենէ վիեննայի վանիցն, և դնցեալ 'ի դուռն եպարդոսին ընկալաւ զնշանն, և դարձաւ չքով յառաջնորդարան իւր․

(1835) Յաւուրս յայսոսիկ արքունի ճարտարապետ Յովհաննէս աղայն ընկալեալ զհրաման յարքայէ, կառոյց զեկեղեցի իմն փոքրիկ և վայելուչ 'ի Դուզկունճուք կոչեցեալ գիւղն յանուն Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին 'ի յիշատակ

հոգւոյ հանգուցելոյ աներոյ Խրամ՝ արքունի ճարտարապետ Գրիգոր ամիրային, և փառաւոր օծումն նորա կատարեցաւ 'ի մայիսի 11, 1835, և եղաւ որ տօնախմբութեան եկեղեցւոյն կատարել ամ՝ յամէ յաւուր տօնի ելիցն 'ի վիրապէն Սուրբ Լուսաւորչին:

Որովհետեւ գոյ և այլ իմն եկեղեցի Հայոց 'ի Ղալաթիա յանուն Սուրբ Լուսաւորչին, և տօն նորա կատարի յաւուր տօնի գիւտի նշխարաց Սրբոյ Հօրն:

Յաւուրս յայսոսիկ եղեւ նորոգութիւն և Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն Գալատու, և օծումն նորա կատարեցաւ 'ի սեպտեմբերի 7:

(1835) Ի սմին ամի եղեւ երկրաշարժութիւն ահագին 'ի Կեսարիա Կապադովկացւոց, որ սկսեալ յառաջներորդ օրէ օգոստոսի՝ տեւեաց զամ՝ մի ողջոյն, և արար վնաս բազում 'ի քաղաքին, և առաւել ևս 'ի գիւղօրէս, յորոց և զերկուսն կացոյց իբրեւ անապատ ամայի և անմարդաբնակ, կործանեաց զտունս բազումս, զքարակիր շինուածս, զեկեղեցիս և զդրանիս, փլոյց և զորմունս պարսպի սուրբ Կարապետի վանիցն, և զքանի ինչ սենեակս միաբանից:

Եւ յայսմ երկրաշարժութեան մեռան անձինք 'ի Կեսարիա և 'ի գիւղօրէս նորին բաց 'ի մանկանց եօթն հարիւր, և բաց այլոց հինգ հարիւր, և բաց պատմելոյ առաջնորդի նորուն տեառն Յակոբայ վարդապետին՝ երեք հարիւր երեսուն ոգիք:

Ի վախճան տարւոյս յամսեանն դեկտեմբերի 20, յաւուր ուրբաթու յանկարծ հնչեաց փոթորիկ իմն բքաբեր՝ ձիւնալից՝ և սաստկաշունչ, և արար զօրին իբրեւ զգիշեր անտեսանելի, և ալեկոծութիւն մեծ 'ի ծովու, և վարեաց զնաւս բազումս 'ի նեղուցէն Կոստանդնուպօլսոյ 'ի ծովն Պրոպոնտեան, ընդ որս և երկու քորք Երկանեան Յարութիւն ամիրայի, և դուստր մի Գեորգա աղայի, և կին ոմն ընկերակից նորուն, և աղջիկ մի յոյն, և այլ ոմն սպասաւոր, և երկու նաւավարք ութեքին որք նաւակոծեալք անյայտ եղեն մինչ զի և ընկերք նաւուց նոցին չերեւեցան ուրեք երբէք:

(1836) Ի սմին ամի պատահեաց և այսպիսի ինչ դիպուած, որ չէր երբէք լեալ մինչեւ ցարդ, որոյ և սահմանից հե-

զինակն վայելէ անդադար զանէծս 'ի բիւրաւոր մարդկանէ .

Իսկ զի որքանի հրամանաւ բերին զմանկունս յազգէ մերմէ 'ի կողմանց Կարնոյ՝ և Սեբաստիոյ՝ և այլոց քաղաքաց Անատոլու . ծառայեցուցանել զնոսա 'ի Կոստանդնուպոլիս 'ի յեփլիքխանէն և 'ի նաւարանն արքայի , 'ի գործ մանուածոյ կտաւուց առագաստից , և 'ի ծեծել զհրավառ զերկաթ .

Եւ միայն հանդերձ և հաց հրամայեցաւ տալ նոցա առանց թոշակի և ամսականի .

Եւ այս հրաման առ՝ յամէ նորոգի մինչև ցայսօր , և յամենայն քաղաքաց ժողովեն հարիւրաւոր մանկունս հայազգիս զրկելով 'ի ծնողաց և 'ի հայրենեաց նոցա , և երեւնօրեայ ճանապարհ հետևակ ածեալ ք ընթացուցեալք մերկ և պատառատան զգեստուք՝ բերեն 'ի Կոստանդնուպոլիս , յորոց բազումք մեռանին խղճութեամբ 'ի բանտեն գործակալաց նոցա , և անանք յեղաշրջին 'ի Մահմէտական օրէնս յաւուր աղքատութեան .

Եւ զայս չար աղէտ բարձանողնայ փափաքին ոչ ոք իշխանաւորաց մերոց կարաց 'ի բաց վարել յազգէ իւրմէ , այլ այց արարեալ նոցա և մեղ .

Իսկ ամի եղեւ հրդեհ և 'ի Չիչէնլիխանէն խաղիւգի , և 'ի փայլատակմանէ վառօդոյն հրկէզ եղեն հարիւրաւոր անձինք , որք ծառայէին անդ 'ի պաշտօն արքայի .

## ԳԼՈՒԽ ԾԱ.

Յաղագս նորանենց զանկոց արքայի , և թշխատութեան որդւոց նորին . և յաղագս ճանապարհորդութեան որբունի վառօդապետ Յովհաննէս Ամիրայի յերուսաղէմ , և վերադարձման նորին .

Յամին քան զամս երկուս յամին 1834՝ արար արքայ հրաման 'ի Տօփխանայ-ջէ սարայն . և զԱյվանէհ կոչեցեալ զաւառ իւր եա 'ի կնութեան խալիլ փաշային , որ էր որդեգիր մեծի պատրիարքի խալիլ Մեհէմմետ փաշային .

Եւ զաւուրս հնգետասան տեւեաց այս Հանդէս Հարսանեաց երգոց նուագարանաց՝ և պէս պէս խաղուց, վառելով կանթեղս զգիշերն ողջոյն 'ի դրունս տանց և առաջի կրպակաց եթէ 'ի Կոստանդնուպօլիս և եթէ 'ի գիւղօրէս, և արձակէին 'ի պալատէ արքային և մեծամեծաց՝ և պատերազմական նաւուց զփամփուշտս բազմառեալս և օդաթռիչս. իսկ 'ի ցերեկի բազմութիւնք յամենայն ազգաց ժողովէին 'ի Տօլմապաղչէն, յորում խաղային խրախաղացք Տաճիկք և Եւրոպացիք զանազան զարմանալեաց խաղուց տեսակօք.

Ընդ այս ոչ շատացեալ արքայի, 'ի միւս ամի արար հարսանիս 'ի նմին պալատի Տօլմապաղչէին, և զՄիհրիմահ կոչեցեալ դուստր իւր ետ 'ի կնութիւն Սայիտ փաշային, որ էր իւր փեսեմի սպասաւոր 'ի պալատան արքայի. և զաւուրս երկոտասան նոյն օրինակ և աւելի ևս հանդէս հարսանեաց կատարեաց 'ի տես և 'ի զուարճութիւն սրտի ամենեցուն.

Հրաւիրեաց արքայ 'ի հարսանիս իւր զդեսպանս ամենայն Եւրոպական թագաւորութեանց, և զերեւելի վաճառականս նոցին, և զպատրիարքունս Յունաց, Հայոց, Հռովմէական Հայոց և զրաբունապետն Հրէից. և զերեւելի հասարակաճառս 'ի Հայոց և 'ի Հռովմէական Հայոց, և սոցա ամենեցուն յորդորեալ աւուր պատրաստեաց արքայ սեղան բազմախորտիկ և համադամ, իսկ Հրէից եդ առաջի զսեր և զշաքար և զհաց միայն ըստ խտրութեան օրինացն Թալմուտին.

Յետ երկոտասան աւուրց հարսանեաց՝ արար արքայ հանդէս և 'ի փեսայախանէ, և զերկասին որդիս իւր զԱպտիւլ Մէճիտ և զԱպտիւլ Ազիզ ետ թլփատել 'ի հանդիսին ըստ օրինաց իւրոց. ընդ նոսին և զբազմութիւն որդւոց աղքատաց չեւ ևս թլփատելոց՝ ետ բերել անդր 'ի փեսայախանէն, և պատրաստեալ նոցա տեղի վրանաձեւ՝ ետ թլփատել զամենայն.

Տեսեալ արքայի զխրախութիւն մանկանց աղքատաց՝ որք առ յղութեան կատարէին անհամեմատ բերկրութեամբ, և զզուարճութիւն ծնողաց նոցին և բնակչաց, ոչ կամեցաւ բարեփառ արքայն, զի մանկունք քրիստոնէից ազգաց հասարակաց իւրոց զատանիցին անմասն և զուրկ 'ի խրախութենէ յայսմանէ.

Ուստի հրամայեաց, զի և մանկունք Յունաց, Հայոց, Հռովմէական Հայոց և Հրէից, որք առաւելին յընթերցմանութեան պարապին 'ի դպրատունս, եկեսցեն հանդերձ վարժապետօք իւրեանց 'ի հրապարակ արքային։

Եւ առին վարժապետքն զմանկունսն և գնացին 'ի Քեաղաթխանէն, և սփռեցան 'ի ներքոյ վրանաց 'ի ծաղկոյից մարգագետնին, և պատրաստեցաւ նոցա բիւր շաքարախառն ըմպելիք և մեխակս, իսկ Հրէից միայն սեր և շաքար։

Եւ իբրև օրն ընդ միջէր, հրամայեաց արքայ, և սկսան ելանել 'ի թափօր եկեղեցական զգեստուք յառաջոյ՝ Յոյնք, և ապա Հայք, և յետ նոցա Հռովմէականք, և մի զկնի միոյ դասաւորեալք յերկուս դասս, երկու վարդապետօք եղեն յառաջընթացք կարգին, և ապա մանկունքն, և առ երի նոցին վարժապետօք և խալֆայք, և եկին 'ի թափօր շուրջ զպալատաւն 'ի տես արքայի և ամենայն մեծամեծաց։

Հայք և Հռովմէականք ունէին յօրինեալ երգս 'ի բարեմաղթութիւն արքայի, զոր գեղեցկաձայնքն երգէին, և այլք զամէնն կարգային։

Իսկ Յոյնք միահամուռ ամենեքին աղաղակէին առանց երգոց ինչ միայն «ամէն», և ունէին 'ի ձեռին տերեւս դափնեաց, որ մեռելոյն են զարդարանք, նոյնպէս և Հրէայք միայն զամէն աղաղակէին խառնիխուռն ձայնիւ։

Լուաք ապա 'ի մերձաւորաց արքայի, զի արքայ զուարճացեալ էր ընդ բարեկարգ օրհներգութիւնս Հայոց և Հռովմէականաց, և խոժոռեալ է ընդ խառն աղաղակ Յունաց և Հրէից։

Եւ յետ աւուրց ինչ եկ պարգեւ յարքայէ, և մի ոմն յաւագօրէից՝ արքունի դրանն շրջեցաւ ընդ ամենայն դպրատունս Յունաց, և Հայոց և Հռովմէականաց և Հրէից 'ի Կոստանդնուպօլիս և յԻւսկիւտար և յամենայն գիւղօրէս Նեղուցին, և ետ ամենեցուն ձեռամբ իւրով զպարգեւսն արքայի, մէն մի մանկանց՝ երեք դահեկան, և խալֆայից՝ քսան և հինգ դահեկան, և վարժապետաց յիսուն դահեկան, և գրեալ զհաշիւ ամենեցուն սոցա՝ տարաւ առ արքայ։

Ընկալայ և ես պատմագիրս զյիսուն դահեկան ըստ պաշ-

տանի խնամ, որ պարապէր 'ի դասատուութիւն Հայկաբանութեան յլատինաց կոչեցեալ ուսումնարանին 'ի Ցենէր թաղին Կոստանդնուպօլսոյ.

Եւ օրհնեցաք զարքայ և զորդիս նորա և զմեծամեծս ազգութեանն, և յօրինեցաք բազմաւեալ երգս բարեմաղթութեանց վասն կենաց արքայի.

(1836) Ի սմին ամի արար արքայ և այլ իմն գործ արժանի յիշատակաց, և ընկալաւ յամենեցուն զաղօթս և զգոհութիւնս.

Իսկ զի՛ ետ շինել և կանգնել կամուրջ մեծ 'ի վերայ ծովու, անցանել 'ի Կոստանդնուպօլսոյ յՈւնկապանի դրանէն 'ի Կալաթիոյ Ազապ գափուսի կոչեցեալ դուռն, որ մեծ դիւրութիւն և օգուտ եղեւ հասարակութեանն՝ ոչ միայն հետեւակ մարդկան, այլ և հեծելոց՝ և մեծամեծ սայլից եզանց, և թնդանօթից կառաց. անցանել դիւրաւ առանց ծախուց ինչ 'ի Կոստանդնուպօլսոյ 'ի Կալաթիա. մանաւանդ զի՛ բարձաւ այնուհետեւ ասկայլի դիպուածք նաւաբեկութեան յայնոսիկ կայմանս, որ 'ի շինելոյ կամրջի հազիւ լինէին երբեմն այնպիսի աղետալի պատահարք.

Յաւուրս յայսմիկ պատահեաց հրդեհ մեծ 'ի Սուլթան Պայազիտ, որ ոչ սակաւ վնաս հասոյց Հայազգի թիւրլէնաճի կոչեցեալ վաճառականաց, այրելով զկրպակս և զինչս նոցին զամենայն.

(1836) Ի սմին ամի արքունի վառօդապետն Յովհաննէս՝ որ սիրելին էր արքայի վասն զգօնամիտ և հանճարաւոր գիտնոց իւրոց, և ունէր զտեղեկութիւն Հայկական և Գաղղիական լեզուին, և հմուտ և վարժ էր բնական արուեստից և գիտութեանց, որովք ետ շինել զզանազան գործիս և զմեքենայս զարմանալիս 'ի վառօդարանն արքունի, և հաճոյ և սիրելի եղեւ յոյժ արքայի և մեծամեծաց ազգութեանն, մանաւանդ զի և ինքն գոլով այր հեզ և բարեպաշտ և երկիւղած յԱստուծոյ՝ ընդ ամենեցուն սիրով և քաղցրութեամբ կենակցէր և ընտանենայր, և հաճոյ էր յաչս ամենեցուն.

Սա խնդրեաց յարքայէ, զի յատուկ հրամանաւ և յանձնարարական թղթով նորին շրջեսցի յԵւրոպիա 'ի գործարանս

բնական արուեստից Եւրոպական Թագաւորութեանց, զի անե‐ղծութիւն տասացի բազմաց հարկաւոր գիտելեաց շուրջ ըզ‐նորօք, և կամ՝ զԹերթն իւր լցուցէ այն յանդիմանն առատու‐թեամբ և փորձառութեամբ, զի այլ է ընթեռնուլն և տեսա‐կանին միայն հմտանալն, և այլ է փորձով իսկ և զգալի աչօք ճանաչելն և գիտելն. և զայսոսիկ ուսեալ ապա վերադարձցի 'ի կոստանդնուպօլիս և 'ի կիր արկցէ զնոսին ըստ օրինակի Եւրոպացւոց յօգուտ և 'ի փառս Օսմանեան Թագաւորու‐թեան։

Արտաքսեցեալ արքայ ընդ այս բարեմիտ յօժարութիւն նո‐րին, որ յօգուտ տէրութեանն յանձն առնու ճանապարհ առ‐նել ընդ այսչափ հեռաւոր աշխարհս, գովեաց զբարեխոհ յառաջադիմութիւն նորին, և ետ նմա նշան պատուական ու‐նել յարամամ 'ի կուրծս իւր, և գիր յանձնարարութեան առ Թագաւորութիւնս Գաղղիացւոց և Անգղիացւոց և առ կայսրն Աւստրիոյ, խնդրելով 'ի նոցունց, զի մի՛ զլացցին 'ի ցուցանե‐լոյ Յովհաննու հաւատարիմ ծառայի իւրում հայկազնոյ զամե‐նայն՝ զոր միանգամ անձկայ տեսանել և հարցանել և զփորձ առնուլ։

Գնացեալ Յովհաննու վաւօդապետի այսպիսի չքով, շըր‐ջեցաւ յԻտալիա, 'ի Գաղղիա, և յԱնգղիա, և ետես 'ի նոցա‐նէ զպատիւ և ընդունելութիւնս, և տեսեալ բազմատեսակ ծանօթութիւնս հարկաւոր գիտելեաց բնական սկզբանց և նիւթոց՝ և որ այլ ևս կարեւորքն էին իւրում իսկ արուեստի վաւօդաչիութեանն, և մեծաւ պատուով վերադարձաւ 'ի կոստանդնուպօլիս։

Եբեր ընդ իւր և զգանազան գործիս հրաշալիս 'ի տես արքային, ընդ որ ուրախ լեալ արքայ, յաւել զպատիւ և զպաշ‐տօնութիւն նորա։

(1837) Յայսմ՝ յամի Աստուածախնամ և բարեբարոյ Հայր մեր Գրիգոր վարժապետ Փէշտըմալճեան կնքեաց զցաւալի կեանս իւր 'ի հասակի վաթսուն և չորից ամաց. և ձեռագիր մատեանք նորա՝ որք թանկագին էին վասն հնութեանն, յա‐փըշտակեցան 'ի փափագեան ջանիւ ամիրայն բանութեամբ, տուեալ միայն 500 դահեկան։

(1838) Ի բազում ամաց հետէ ոչ պակասէր 'ի Կոստանդնու-
պոլսոյ և 'ի շրջակայ գիւղօրէից նորին ժամանամահ հիւանդու-
թիւնն, որ զամս քան և զերց անընդհատ առնոյր իւր զոհս
հարիւրաւորս և հազարաւորս մանկամարդաց և երիտասարդու-
հեաց յամենայն ազգաց, և երբեմն եւս չափահասից և ծե-
րունեաց, և չէր ամս հնար բարձման կամ խափանման, և կամ
դեղ ապաքինութեան. 'Ի ձմերան փոքր ինչ մեղմանայր, և
յամարան սաստկանալով սաստկանայր և յաճախէր. Ուստի նա-
խարարք տէրութեանն խորհեալք յնւ բազմացեալ ազգաց,
համաձայնեցին զարքայ, և հրամանաւ արքայի ձմերանոցն Չէն-
կէլ գիւղի եղեւ քառասնօրեայ զգուշութեան նաւուց եկե-
լոց 'ի Պոնտոսէ, և ծոցն Բիւչիւք չէքմէճէի՝ եկելոցն 'ի Մար-
մարայէ. չինեցան և այլ եւս քառասնօրեայք վասն եկելոց
յԱսիակողմանց և յԵւրոպակողմանց, և ել հրաման ամենայն
ազգաց չթաղել զմեռեալս իւրեանց 'ի զգուշութիւն 'ի ժան-
տամահէ, մինչեւ ոչ քննեսցեն կարգեալ բժիշկք զախտ և զդ
հիւանդութիւն մեռելոյն. և այսու օրինակաւ մեռեալքն 'ի
նոյն աւուր առանց յուղարկաւորութեան հանդիսի միով յա-
ռաջընթաց քահանայիւ և չորիւք մեռելաթաղիւք տանիք
տարեալ թաղէին, և ընտանիք նոցին մնային 'ի քառասնօրեայ
զգուշութեան անմերձենալի յումեքէ. և սկսաւ մեղմանալ և
պակասել ախտն չար և տարափոխիկ 'ի մայրաքաղաքէս և ան-
հետ լինել յորէ յայնմանէ մինչեւ ցայսօր.

(1838) Ի սմին ամի նորոգեցաւ 'ի հիմանց սուրբ Երրոր-
դութեան եկեղեցին Հայոց 'ի Պէյօղլու չինեալ և փայտեայ քա-
րուկիր չինուածով, զորոյ զհանդէս օծութեանն կատարեաց
Ստեփաննոս պատրիարք 'ի յունիսի 18 հանդերձ երկու եպիս-
կոպոսօք և եօթն վարդապետօք.

Յայսմ ամի և չորեքտասանամեայ կոյս աղջիկ մի հայազգի
վաճառականի անուն Աչխարօֆայի յափշտակեալ 'ի Մահմէտական-
նաց ուրուցն վասն գեղեցկութեանն, և զբաղարանեալ առաջի
դատաւորին Ցանկոյ, եթէ խոստացաւ աղջիկս այս ընդունել
զՄահմէտական կրօնս մեր, և յաչ առնուլ նորա յանձն՝ մնա-
նեալ անսասանելի չարչարանաց և բանտարգելութեանց վասն
'ի Քրիստոս հաւատոյն, և հուսկ յետոյ աղերսանօք պատրի-

արքին բերեալ 'ի Կոստանդնուպոլիս , ածաւ յատեան մեծի մեջլիսին , և անդ եւս խոստովանեալ զՔրիստոս , աքսորեցաւ 'ի Պրուսա . բայց յետ միոյ ամսոյ միջնորդութեամբ Մադ-սուս ամիրայի զերծեալ յաքսորանացն ամուսնացաւ ընդ Հայոց ուրումն 'ի Խասգիւղ .

## ԳԼՈՒԽ ԾԹ.

Յաղագս շինութեան ճեմարանին Խասգիւղու , եւ պատրիարքու-թեան Յակոբայ .

(1838) ԵՐԵՒԵԼԻ էին 'ի սմին ժամանակի արքունի ծառա-յութեամբ Կարապետ ամիրայ Պալեան և Յովհաննէս քեռայր նորին , երկոքին եւս ազգասէրք և ուսումնասէրք յոյժ , որք ցանկային բարեկարգ յառաջադիմութեան և զարգացման դպրոցաց յուսմունս կարեւորս և պիտանիս և 'ի գիտութիւնս հասարակաց և բարի վարուց . Տեսեալ սոցա , զի չունէր ազգ մեր զգիշերօթիկ դպրոց իմն որպէս ունէին Յոյնք և Լատինք , և վասն այն յամր ընթանայր ուսումն դպրոցաց , և չէր մարթ 'ի ձեռս բերել զբաղձացեալն յառաջադիմութեան յո՛ր և իցէ դպրոցի . թէպէտ գտանէր բազումք վարժէին յիւրաքանչիւր 'ի նոսա և առաւելապէս 'ի Խասգիւղ և յՕրթագիւղ .

Սոքա խորհուրդ արարեալ ընդ իշխանաւորաց Հայոց և ընդ պատրիարքին , գրեցին և հաճեցուցին զՆարբէյ պատրի-արք սրբոյն Երուսաղեմի՝ և զՊօղոս սրբազան փոխանորդ նորին , շնորհել ազգին զխանն Երուսաղէմայ՝ որ էր յՍկիւտար , և նորոգեալ զնա 'ի հիմանց՝ կանգնեցին դպրոց մի մեծ եռայարկ և բազմասենեակ , և պատրաստեալ զամենայն կարեւոր հան-դերձանս և զպիտոյս խոհանոցին և անկողնոցն և որ 'ի սոյն սակի , ընտրեցին և զդասատուս հայկաբանութեան , գաղ-ղիական լեզուի , թուաբանութեան և քանակաբանութեան , և եդեալ զանուն նորին՝ « Ճեմարան սուրբ Երուսաղեմայ » , ո-

բռնեցին 'ի դպրոցաց իւրաքանչիւր թաղից զվարժեալսն 'ի նախակրթական ուսմունս՝ զողջոյն ուշիմս և մտավարժս յմանկաչափ. և կարգադրեալ զնոսա զամենեսին յիւրաքանչիւր սենեակս և զվերակացուս նոցին և զպատուաւորս և զպահապանս, և զառօրէն նոցա ամենեցուն, սկիզբն արարին դաստիարակութեան մանկանց յիններորդ աւուր դեկտեմբերի 1838.

Իսկ վասն եկամտից ճեմարանին՝ որ բազում ծախուց պէտս ունէր յիւրաքանչիւր ամսեան, որոշեցին վասն աղքատ մանկանց տնուլ 'ի տարւոջ հարիւր քսան հազար դահեկան 'ի սրբոյ աթոռոյն Երուսաղէմայ, որ բարեհաճեցաւ վճարել. և 'ի փարթամ ազգայոց երեք հազար դահեկան առ մին մի որդոյ հանդերձ ամսական և ձմեռան զգեստուք նոցին. Այս եկամուտ չէր ինչ հաստատուն և մշտնջենաւոր, զի 'ի կամս ապառնեալ էր տուողին. որ եթէ այսօր կամի, տայ, և 'ի վաղիւն եթէ չկամի, ոչ տայ, և յայնժամ եկամուտն պակասէ. վասն որոյ և կեանք ճեմարանին յոյժ կարճ եղեն, որպէս տեսցի 'ի ստորեւ։

(1839) Զայսու ժամանակաւ նորաղանդ քարոզիչք Ամերիկացւոց՝ որք 'ի վեց ամաց հետէ եկեալ էին 'ի Կոստանդնուպոլիս քարոզել և տարածել զաղանդ իւրեանց՝ սկսան ուսուցանել մանկանց ձրիաբար զլեզուն Անգղիերէն, զաշխարհագրութիւն և զթուաբանութիւն, և զայլ ուսմունս կարեւորս և զգիտականս, բացին զփիլերոթիկ դպրոցս 'ի Բերա և 'ի Պէպէք գիւղ, և հաւաքեցին 'ի նոսա աշակերտս բազումս բաց մեծի մասին 'ի Հայոց. որոց առաւել առաջ գաղտնի հնարիւք խորամանկութեան իւրեանց ջանային ըղթոյն մոլար վարդապետութեան կաթիլ առ կաթիլ, 'ի փոքունց սկսեալ ծխից պահոց և տօնից, հետզհետէ ձեռնարկէին և զնոսա ուղղափառ հաւատոյ առնել և տալ յուրացութիւն. յանդգնեցան և 'ի դաւաճանութիւն սուրբ Հաղորդութեանն, 'ի մէջս կուսութիւն Աստուածածնին, և 'ի բարեխօսութիւն սրբոց անարգել, ջնջելով և զպատկերաց նոցին և զնշխարաց մասանցն յարգութիւն.

Լուեալ զայսոսիկ ճարտարապետքն երկոքին Կարապետ և Յովհաննէս, տրտմեցան և զայրացան 'ի սիրտս իւրեանց, և

ոտոմնեան. այս պաշտօն հոգեւորականաց միայն էր անկ, և Թէքեանք աշխարհականք զոյով չէին ձեռնհաս 'ի խափանումն անիրաւութեան այնորիկ, զի մի՛ ճարակ գտցէ 'ի յաջգխ. և անտանելով զխիղճ և զանհոգ բնաւորութիւն Ստեփանոսի պատրիարքին, խորհեցան փոխել զնա. և ետուն բերել զՅակոբոս արքեպիսկոպոս զառաջնորդն Մարզուանու և Ամասիոյ 'ի կոստանդնուպոլիս, և առ ժամն կարգեցին զնա խորհրդական պատրիարքին, և ետուն 'ի ձեռս նորա զղեկ ազգային կառավարութեան անօրինել զամենայն ըստ իւրում խոհականութեան.

(1839) Եւ նա կամելով առհ սրբանել և դադարեցուցանել զամենայն, զի մի՛ ոք համարձակեսցի 'ի դպրոցս նորաստնդին երթալ և յաջ եկանել, առանց ինչ քննութեան և հարցման աքսորեաց յանկարծ զԹովմաս վարդապետ 'ի վանս Արմաշու, և զՊրիզիգեայ Պօղոս և զՅովհաննէս վարժապետս 'ի կեսարիա, որք անմեղք էին յայսմ մասին ըստ վկայութեան բազմաց. աքսորեաց և զսէր Գէորգ քահանայ խասգիւղի և զախրացու Յովհաննէս 'ի Թէքիրտաղ բանտարկութեամբ քառ ամաց. և յուշել նշովել յառեթքի եկեղեցւոյ զապանդն իւր լուսաւորի. Բայց յետ չորից ամաց յաւ յանդիմանութիւն 'ի Բ. Դրանէն վասն նզովիցն զապանդն լուսաւորականաց, զի դատախազ եկաց այսմ դեսպանն Անգղիացւոց Բանինկ, յորոց 'ի հերքս և լիզորիոս պատրիարք Յունաց՝ որ նզովեալ էր կանգակս իւրով զապանդն լուսաւորականաց, ընկեցաւ 'ի պատրիարքութենէն կայսերական հրամանաւ, և նոյնպէս Անթիմոս Մեծաշարաբայն եպիսկոպոսի.

Բայց Յակոբոս եպիսկոպոս սկսաւ վասահամարձակել զՊատրիարքն, թէ առ ապարդիւնութեան իւրոյ խորհեալ 'ի լուսաւորականաց 'ի կոչմն նոցա իցէ միաւորել. և 'ի ձեռն արքունի ճարտարապետացն ընկեց զՍտեփանոս 'ի պատրիարքութենէն և նոյնպէս ինքն, իսկ Ստեփանոս դնաց յառաջին վիճակն իւր յԱրմաշու վանս.

Համեմատականք Պողոսեանց բանութեամբ զրաւեալ էին զեկեղեցիս Ազգուոյ 'ի Գաղատիա և 'ի Բերիա, առեալ կաշառս դատաւորաց և քաղաքապետացն, յոյր վասն և եպիս_

կոչման նմա Աստուծոյ եկն 'ի Կոստանդնուպոլիս առ Յակոբոս պատրիարք խնդրել 'ի նմանէ զպաշտպանութիւն առ 'ի դառնալոյ ընդ Հռովմէականաց ։ Եւ Յակոբոս պատրիարք առեալ ընդ իւր զՅովհաննէս եպիսկոպոս փոխանորդն սուրբ Երուսաղէմի և զԱնթիմոս պատրիարքն Յունաց, գնաց 'ի դատ ընդ առաջնորդին Հռովմէական Հայոց առաջի Գասրի պէյ դատաւորին Կոստանդնուպոլսոյ. և անդ յետ բազում վիճաբանութեանց մնացեալ յետս դարձուցանել զեկեղեցիս Աստուծոյ առ ինքեանս ։

Սահմանեաց Յակոբոս պատրիարք և վասն ծախուց ճեմարանին զհինգ դահեկան սուրս պահանջել 'ի միոյ միոյ 'ի ճանապարհորդաց, որք ունին առնուլ զանցագիր. և գանձարան արկեղ 'ի պատրիարքարան, հաւաքել անդ զսուրս 'ի ժողովրդենէն. և անտի հոգալ զպէտս հիւանդանոցին, անանկ աղքատաց և դպրատանց. և վասն այլ ինչ դիպուածոց. և կարգեաց հոգաբարձու արկեղն զբան և չորս անձինս 'ի գըլխաւոր արուեստաւորաց, յորոց և երկուքն էին 'ի սեղանաւորաց ։

Փոփոխեաց և զառաջնորդսն Մշոյ, Կարնոյ, Սեբաստիոյ, Եւդոկիոյ, Պրուսայու, և այլոց վիճակաց առ 'ի ժողովել ըզսուրս և զընծայս 'ի նորոց վիճակաւորացն ։

(1839) Բայց իբրև մեռաւ Սուլթան Մահմուտ, և յաջորդեաց որդի նորին Սուլթան Մէճիտ 'ի գահն արքայական և բարձաւ բռնութիւն և անիրաւ մահ և աքսոր լաւ նորոց սահմանադրութեան և օրինաց արքային, որ ընթերցաւ յատարանան 'ի Կիւլխանէն 'ի լուր ամենայն բազմութեան ամենայն ազգաց, յայնժամ ժամ բարեպատեհ համարեալ ամիրայից առնուլ զվրէժ խնդրութիւն իւրեանց, դուն գործեցին 'ի ձեռս Յովհաննու արքեպիսկոպոսի փոխանորդին սուրբ Երուսաղէմայ՝ յերկարաձգել զհարիւր հազար դահեկան տարեկան սուրս ճեմարանին, հանին և զթոշակաւոր աղայս բարեկամաց և ծանօթից իւրեանց 'ի ճեմարանէն, որ չունելով զայլ ինչ եկամուտ, և վասն համապազօրեայ անհրաժեշտ ծախուցն սկսաւ հեծել ընդ պարտուք, որ օր քան զօր յաւելոյր և բըռնանայր վախճան տալ կատարածի դպրոցին ։

# ԳԼՈՒԽ ԾԳ.

Յաղագս ազգային խռովութեանց, եւ պատրիարքութեան Ստեփաննոսի եւ Աստուածատրոյ, եւ նահատակութեան Յովակիմայ:

---

(1840) ՏԵՍԵԱԼ զայս ամենայն Յակոբոս պատրիարք, եւ լուեալ հանապազօր զհակառակամարտ ընթացս ամիրայից, խորհեցաւ զառաջինն քաղցրութեամբ եւ սիրով շահել զնոսա նոյին. եւ երկիցս հրաւիրանաց նամակս գրեաց առ նոսա գալ ժողովիլ 'ի պատրիարքարանն, եւ կարգադրել զգործս ազգային, բայց ոչ ընկալան զհրաւէրն, եւ ոչ ոք գնաց առ նա, միայն Աշնանեան Պօղոս երթեւեկէր 'ի պատրիարքարանն:

Անձկացեալ պատրիարքն, եւ խռովեալ 'ի յոգի իւր առէ զգուշացմամբ «Աստուածոյն անողորմաց փախել հիւանդանոցն, զի՞ կայ իմ եւ զպատասխանին խորհելոյ» եւ փախեալ ընդ գաղտն սենեկին յարումնատէրն, էջ եւ նստաւ յերկիւղ իւր, եւ գնաց ուղղակի 'ի հիւանդանոց սուրբ Փրկչին, եւ առանձնացաւ անդ:

Իմացեալ զայս ժողովուրդք 'ի վաճառանոցն սկսան խըռնել 'ի պատրիարքարանն, եւ հարցափորձ առնել 'ի պաշտաւորացն եւ 'ի քահանայից. եւ բազում դղրդք լինէին 'ի սրճանոցս եւ 'ի տունս՝ նմա այսպէս եւ նմա այնպէս, եւ որ քան զօր շշուկ եւ աղմուկ ժողովրդեանն սաստկացաւ, մինչեւ եհաս 'ի լսելիս նախարարաց տէրութեանն:

Յետ չորից աւուրց կոչեաց եպարքոսն զերեւելիս 'ի անդամաւորաց՝ զՃանիկ Փափազեան, զՅարութիւն Երկանեան, եւ զՄագաստս Սարիմեան 'ի Բ. Դուռն. եհարց զնոսա եւ ասէ. տարի՞ք է զոր լսեմք, թէ պատրիարքն ձեր կամօքն հրաժարեալ 'ի պաշտօնէ իւրմէ առանց հրամանի տէրութեանն, գնացեալ նստի 'ի Հիւանդանոցն ձեր:

Ասեն եւ նոքա. թէ յայտնի աւուրս խելագարութեան ախտիւ ըմբռնեալ ոչ գիտէ, զոր առնէ: Եւ ասէ եպարքոսն,

չգտանիցի՞ ոք յազգի ձերում այր խոհական և չահեցող, որ տեղեկացուցէ զմիտ նորա. Պատասխանեն և նոքա, 'ի պատրաստի է նախորդ առաջնորդն մեր այր գովելի ըստ աննոյն մասին, զորս և զփորձն իսկ առեալ է տէրութիւն ձեր, և խնդրեմք զնոյն շնորհել մեզ 'ի բարւոք կարգադրութիւն ազգիս և 'ի փառս տէրութեանդ.

Յայնժամ արձակեալ զնոսա եպարքոսն յառաջոյ իւրմէ խօսի ընդ աւագանւոյն, և խորհրդով նոցին գրէ առ արքայ և խնդրէ հրաման փոխել զառաջնորդն Հայոց. և հրամանաւ արքային ընկեցեալ զՅակոբոս 'ի առաջնորդութենէն, դարձուցանեն վերստին 1840 զՅովհաննէս 'ի Նիկոմիդիայ. որում և խորհրդակից կարգեցաւ Պօղոս եպիսկոպոս առաջնորդն Զմիւռնոյ. իսկ Յակոբոս գնաց յառաջին իւր վիճակ առաջնորդութեան Մարզուան և Ամասիա քաղաքաց 'ի սեպտեմբերի 15, 1840.

Զայս տեսեալ հոգաբարձուաց ճեմարանին, հրաւիրեցին զբազմութիւն ժողովրդեան Հայոց 'ի ճեմարանն յաւուր Նոր կիւրակէի, և 'ի ժողովի անդ արար սահմանադրութիւն տնօրէն ճեմարանին Յակոբիկ Մանուէլեան փեսայ ճարտարապետին Յովհաննու, յայտ արարեալ զողորմելի վիճակ ճեմարանին, և յորդորեալ զունեւորս 'ի պաշտպանութիւն նորին. որք միահամուռ առատաբարութեամբ ուխտեցին յառաջացուցանել զճեմարանն անխափան 'ի կարգադրութենէ ամիրայից.

(1841) Ուստի և յառաջիկայ ուրբաթու 'ի 13 ապրիլի Թօհաֆճի Եղիազար անուն ոմն առեալ ընդ իւր զմիշտաման տղայս ճեմարանին՝ մատոյց առ արքայ գիր աղերսանաց, խնդրելով, զի Բ. Դուռն վաւերացուսցէ զպաշտօն քսան և չորս հոգաբարձուաց առաւելապէս՝ հոգ տանել ծախուց ճեմարանին, և լինել տեսուչ ազգային եկամտից և ծախուցն. Հրամայեաց արքայ 'ի Բ. Դրան տեսանել զգործ այսմ. և գնաց Յովհաննէս եպիսկոպոս փոխանորդն աթոռ Երուսաղէմի 'ի կոչմանէ պատրիարքին 'ի Բ. Դուռն խօսել ընդ գլխաւորաց ժողովրդեանն յանուն Արդարութեան ժողովոյն. և Բ. Դուռն խաղաղեցուցանել կամելով զխռովութիւն և զերկպառակութիւն ազգիս, շնորհեաց հրամանագիր (պույրուլթու)

յաւն և չորս հոգաբարձուացն լինել տեսուչ ազգային ելևմտից և արկեղն պատրիարքարանին ։

Բայց որովհետեւ արքունի հրովարտակաւ ոչ էին կարգեալք յայս պաշտօն, ոչինչ կարացին առնել, և ոչ զօրեցին զդէմ ունել ամիրայից, որք ծիծաղէին հանապազօր 'ի վերայ նոցա ունելով ինքեանց պաշտպան զԲ. Դուռն և զաւագ որեարն արքունի. վասն որոյ և ժողովուրդք յուսահատեալք և զայրացեալք յոյժ, ետուն դարձեալ զգիր աղերսանաց առ արքայ մեծաւ բազմութեամբ, աղաղակաւ և պաղատանօք ։

Հրամայեաց արքայ տեսանել զդատ սոցին և Բ. Դուռն կոչեաց զքսան և չորս հոգաբարձուսն, և խնդրեաց 'ի նոցանէ զպատասխանի, որք համարձակեցան բողոքել առ արքայ աղերսագրով. և 'ի չքմեղս լինել նոցա ասելով, թէ ոչ գիտեմք, հարկ դնեալ 'ի բանս ։

Կոչեցան 'ի Դուռն և եպիսկոպոսունք և ամիրայք, և գըտնացին Աստուածատուր և Յովհաննէս և Գէորգ եպիսկոպոսունք, ընդ որս և ամիրայք, և մտին առ վերատեսուչ արտաքին գործոց Րիֆաթ փաշա ։

Լուր բանապարտութեան սոցա հասեալ 'ի վաճառանոցս քաղաքին, և ահա խառնամուժ ամբոխ իբրու երից հազարաց լցան խռնեցան 'ի սրահ արտաքին գործոց վերատեսչին ունելով յառաջոյ իւրեանց զգինեպան խոհէնտէր փշին ճարտարախօս, և միաբերան աղաղակէին, թէ ոչ կամիմք զպատրիարք մեր, և ոչ ճանաչեմք զեկղանաւորս զայսոսիկ ։

Տեսեալ Րիֆաթ փաշային զայս մեծ ամբոխ, զահի հարաւ, և քաղցրութեամբ համոզեալ արձակեաց զժողովն և զբանտարկեալ հոգաբարձուսն ։

Իսկ յետ քսան աւուրց կոչեցան յԱրդարութեան ատեանն գլխաւորք արհեստաւորաց, և հարցան նոցա խնդիրք, թէ ո՛վ ետ ձեզ խրատ, կամ որո՞յ խորհրդով յանդգնեցայք կոխել զԲ. Դուռն երեք հազար արհեստաւորք. իսկ նոքա այլ ընդ այլ պատասխանելով 'ի վերջոյ խոստովանեցան, թէ արդարեւ մեծ յանդգնութիւն էր առնել, զոր արարաք, բայց յանցեաք անգիտութեամբ ։

Յայնժամ Բ. Դուռն սկսաւ խուզարկել և քննել զգլխա-

ւորս նորին, և աքսորեցան Պօղոս և Յովհաննէս վարդապետք, Յակոբիկ Մանուէլեան, Ոսկերիչ Անդրէաս, Տիվլիթեան Գէորգ, պատանեակ մահտեսի Գեւորգ, Յարութիւն Յովհաննէսեան, խակ գինեպան խաչատուր փախեաւ յԱտէնս. և այլ եւս ոմանք 'ի գլխաւորաց ամիրային փախուցեալք թագեան յաշէ աքսորանացն.

(1841) Եւ 'ի յաջորդ ամին հրամանաւ Բ. Դրան ընկեցաւ Ստեփանոս 'ի պատրիարքութենէն, և գնաց 'ի նախկին վիճակ իւր 'ի վանս Արմաշու, և նստաւ պատրիարք Աստուածատուր եպիսկոպոս կոստանդնուպօլսեցի ընտրութեամբ ամիրայից.

Փակեցաւ և ճեմարանն իբրեւ պատճառ խռովութեան ազգին, և ցրուեցան աղայք 'ի տունս իւրեանց, և ահա այս էր զոր խնդրէին ամիրայք առնուլ զվրէժ իւրեանց յարքունի ճարտարապետացն.

Բայց յետ երկուց ամաց բողոքեցին արհեստաւորք 'ի դրան արքունի զամիրայից, եթէ մեք չեմք անհնազանդ տէրութեան հրամանաց և կանոնադրութեանց, բայց և ոչ բարուկք և դերիք նեղանաւորաց. և մինչ Բ. Դուռն որ 'ի յօր յերկպառակեաց զբաղօք և զխնդիր նոյին 'ի շնորհս ամիրայից, աղաղակ ժողովրդեան ստակայաւ, և միաբան ընտրեցին մեռանել, քան ծառայել հրամանաց ամիրայից, ընդ որ զայհարան ամիրայք և Աստուածատուր պատրիարք, և առաքեցին 'ի կողմանէ իւրեանց զՅովհաննէս վարդապետ Տատեան, և զԱրզումանն ռեզանաւորն Արզումանեան, որք գնացեալ 'ի վէգիր խանն, և կոչեցեալ անդ զգլխաւորս արհեստաւորաց, այս այն համոզական խրատուք և սպառնօք հազիւ հազ կարացին խափանել զչարն և ցածուցանել զարմատութիւն ամբոխելոցն, խոստացեալ նոցա կատարել զհաճոյս ժողովրդեան և զխնդիր նոյին միաբանութեամբ ազգին.

Եւ ծանուցեալ 'ի դրան արքունի զպատճառս ամենայն ժողովրդեանն և զպահանջմունս նոյին, արքունի հրովարտակաւ ընտրեցան քսան և եօթն անձինք յարհեստաւորաց լինել ատուչ և հոգաբարձու ազգային ելեւմտից և արկեղն պատրիարքարանին և ծախուց նոյին. և առին ատոյադրութիւն 'ի

պատրիարքէն և յամիրայից չխառնել ընդ կարգադրութիւնս նոցին որով և իցէ եղանակաւ. և այս եղեւ 'ի 12 դեկտեմբերի 1841 ամին.

Բայց որովհետեւ բազումք ծախուց պէտս ունէին ազգային հաստատութիւնք, այսինքն պատրիարքարանն, վարժարանք և դպրոցք, և առաւելապէս հիւանդանոցն, անանկք, որբք, աղջկունք, և պատահական ծախք, և արդիւնաւորքն չէին բաւական հայթհայթել զպէտս պայմանին, և զոր ամենայն բողոք և տրտունջ ձանձրացուցանէր զխելս նոցին յասելն, եթէ չէիք կարող բառնալ զծանրութիւն ազգիս, ընդէ՞ր առիք յամիրայից, որք զիւրս կառավարէին զամենայն, զոլով յաջողակք յամենայնի բանիւք և արդեամբք.

Վասն որոյ ձանձրացեալ և նոցա յոյժ յայսպիսի տրտնջանաց, և ոչ գտանելով զայլ ինչ հնար 'ի դարման աղէտին, միաբան խորհրդովք գնացեալք առ Ճանիկ ամիրայ զգլխաւորն անդամաւորաց, ետուն զմուրհակ ստորագրութեանն՝ զոր առեալ էին յամիրայից, և խնդրեցին, զի ինքեանք դարձեալ 'ի ձեռս առնուցուն զգէկ կառավարութեան ազգիս, և հայթհայթեսցեն զամենայն, որպէս առնէին յառաջն, և ինքեանք հրաժարեցին յայս ծանր պաշտօնէն, զոր ոչ կարէին տանել.

Իսկ Ճանիկ ամիրայ ոչ ընկալաւ զխնդիր նոցին. և ետ պատասխանի, թէ դուք աղերսանօք և պաղատանօք թախանձեցիք զԲ. Դուռն, և մեք հրամանաւ Բ. Դրան թողաք ձեզ զայս պաշտօն. աւասիկ պատրաստ է ձեզ յայտ առնել զխնդիր ձեր 'ի Բ. Դուռն, և նա որպէս գիտէ և կամի, տնօրինեսցէ զգործսն.

Եկեալք ապա հոգաբարձուացն՝ գնացին 'ի Բ. Դուռն, և մատեալք յատեանն աղերսաւորութեան խոստովան եղեն զանկարողութիւն իւրեանց, և թողեալք զհրաժարականն, խնդրեցին հրաժարել 'ի պաշտօնէն. և հրամանաւ Բ. Դրան եղեւ ժողով 'ի պատրիարքարանին ամիրայից և գլխաւոր արուեստաւորաց, և պատառեցաւ առաջին կնքեալ թուղթն, յորում էր ստորագրութիւն պատրիարքին և ամիրայից. և վերացութիւն ազգային հոգաբարձութեան և կառավարութեան աւանդեցաւ դարձեալ 'ի ձեռս ամիրայից.

Յաւուրս յայսոսիկ այրեցաւ պատրիարքարան որոյն դէ-որդայ եկեղեցւոյն Ամասիոյ. Ցաւալի եղեւ յոյժ և հրդեհն Զմիւռնոյ, որ այրեաց գրեթէ զերրորդ մասն քաղաքին, այրեցան և թաղք Հայոց, և սուրբ Ստեփանոս եկեղեցին, և վարժարանն, և վնաս հրդեհին հաշուեցին 250 հազար քըսակք արծաթոյ.

(1842) Ի սմին ամի և երկուս սեններս ընկերութեան հաստատեաց տէրութիւնն 'ի գլխաւորս սեղանաւորաց, մին՝ յանուն Ազնական ընկերութեան, և միւսն Եւրոպական.

Ազնականումն կարգեցան անդամք Ցարութիւն Երկանեան, Քիւրքճի խանցի Գեւորգ, Մինաս, Ճէզայիրցի Մկրտիչ, Պաղտասար Զարաղեան, և Պօղոս Ռշմանեան.

Իսկ Եւրոպականումն Ճանիկ, Մագսուտ, մահտեսի Յարութիւն Կէրկէրեան, Աբրահամ Ալլահվէրտեան, Յովհաննէս Թընկըրեան, և Յովսէփ Տավութեան.

Եւ սոցա պաշտօն յանձնեցաւ զպայմանեալ հարկս և բըտուրս յամենայն գաւառաց տէրութեան վճարել 'ի Կոստանդնուպօլիս, և ունել արքունի գանձուն ըստ ժամանակին, և ամենեցուն սոցա գլուխ կարգեցաւ Ցարութիւն Երկանեան, որում և նշան ականակապ շնորհեաց՝ արքայ.

(1843) Ընդ այս ժամանակ Ամասիացի երիտասարդ մի հայազգի Յովակիմ անուն՝ որ չորս ամօք յառաջ ընկալեալ էր զՄահմէտական օրէնս, և ապա զղջացեալ և կերպարանափոխ եղեալ ըստ տարազու Եւրոպացւոց, և գաղանի խոստովանեալ քահանայի ուրումն՝ չրջէր յանծանօթս, մատնութեամբ ոմանց կալանաւորեալ մատնեցաւ 'ի ատեանս. Պատրիարքն և ամիրայք չհամարձակեցան աղաչաւոր լինել առ Բ. Դուռն, զի անարգութիւն էր Մահմէտական դենին, և խրատ տային ողորմելի ծնողաց բանտարգելոյն երթալ աղաչել զդեսպանն Ռուսիոյ.

Եւ նոցա գնացեալ եսուն աղերսագիր դեսպանին, որոյ ընթերցեալ զթուղթն՝ իսկ և իսկ հրամայեաց երթալ առ Լօրտ Քանինկ դեսպանն Անգլիոյ, և մատուցանել նմա զայն թուղթ.

Ընթերցեալ դեսպանին Անգլիոյ զաղերսագիրն, և տեսեալ զարտասուաթոր աղաչանս նոցին, առաքեաց զէֆէնտի զառա-

լին Թարգմանն իւր 'ի Բ. Դուռն առ՝ վէզիրն մեծ Րէշիտ փա-
շա և առ վերատեսուչն արտաքին գործոց, զի 'ի շնորհս ե-
րեսաց իւրոց ազատութիւն տացի բանտարգելոյ երիտասար-
դին այնմիկ։ Գնացեալ Թարգմանն խօսեցաւ առ վէզիրն ըզ-
խնդիր դեսպանին, և ընկալաւ պատասխանի, թէ յետ եր-
կուց աւուրց ժողով ունի լինել նախարարաց և օրէնսդրաց,
և 'ի ժողովին յայնմիկ յայտ առնեմ զխնդիր դեսպանի ձե-
րում, և հանեալ 'ի բանտէ զկալանաւորն առաքեմ առ նա։
Եկեալ Թարգմանն պատմեաց դեսպանին որպէս լուաւ, և
դեսպանն մխիթարեաց զողորմելի ծնողս բանտարգելոյն համ-
բերել աւուրս երկուս, և տեսանել զորդի իւրեանց առ ինք-
եանս։

Յետ ժողովին 'ի Բ. Դրան, և պատմեաց վէզիրն զբարե-
խօսութիւն դեսպանին վասն ուրացեալ կալանաւորին. բայց
զենպետն և Րիզա Ալի փաշա և այլ եւս երկուք 'ի մեծամեծ
նախարարաց՝ արհամարհեալք զխնդիր նորա՝ վճռեցին զխա-
ռել զնա ըստ օրինացն Մահմէտի. և զխառնեցաւ ողորմելի
երիտասարդն 'ի Պալըգ բազար դուռն կոստանդնուպօլսի յետ
բազում յորդորանաց և խոստմանց մեծամեծ պարգևաց, զի
դարձեալ յանձն առցէ ընդունել զմահմէտականութիւն. բայց
նա ուրախութեամբ և փառաւորելով զՅիսուս Քրիստոս խո-
նարհեցոյց զգլուխն առաջի դահճին, որ ձգեաց և ընկէց ըզ-
գլուխն միով հարուածով, որպէս և ես եղէ իսկ ականատես, և
եդաւ բեզըրն (շափքա) ընդ երասանաւ զգլխոյն 'ի նա-
խատինս քրիստոնէութեան։

Ընդ այս զայրացեալ դեսպանն Անգղիացւոց՝ ընդ որում
և դեսպանք այլոց տէրութեանց՝ բողոք կալան զայսմ՝ բարբա-
րոսական գործոյ Բ. Դրան, և գրեցին առ կառավարութիւնս
իւրեանց, և թագաւորք Եւրոպացւոց համաձայնութեամբ և
խորհրդով միմեանց յետ հնգից ամսոց գրեցին առ Օսմանեան
կառավարութիւնն խափանել պահանջելով զազատութիւն և ըզ-
համարձակութիւն կրօնի ամենայն ազգաց. այնպէս զի թէ
ուրացեալ ոք վերստին ապաշխարեալ դարձցի յառաջին կրօնս
իւր, մի լիցի նմա բռնութիւն. և եթէ ոք կրօնափոխ լինել
կամիցի, զոր օրինակ Քրիստոնեայն կամիցի լինել Մահմէտա-

կան. և կամ Մահմէտականն՝ քրիստոնեայ. մի՛ արգելցի բռնաւ, այլ թող տացի ամենայն ումեք պաշտել զ'ի՛ր կրօնն և ի՛րն կամիցի.

Առաջարկեցին դեսպանք զայս պահանջումն հաւատարութեանց իւրեանց Բ. Դրան, և հրամանաւ արքայի եղև ժողով մեծ 'ի պալատին, ուր կոչեցան և գենդեւեան, և յետ բազում բանախօսութեանց և խորհրդածութեանց զայս պատասխանի արձակեցին առ Եւրոպացւոց. Թէ կառավարութիւն յօժարութեամբ սրտի ընկալաւ զայդ առաջարկութիւն, բայց 'ի գործադրութեան մասին ոչ կարեմք այժմ հրատարակել 'ի լուր կրօնամոլ ժողովրդեան մերոյ, այլ խնդրեմք եօթնամեայ ժամանակ 'ի հրահանգել և 'ի հանգել դիրս հասարակութեան մեր առ սակաւ սակաւ. ապա թէ ոչ՝ արմուկ մեծ ծագի աղէտալի 'ի վնաս քրիստոնեայ ազգաց.

Այս մեծ և նախատակութիւն Յովակիմայ եղև սկզբնապատճառ ազատութեան կրօնի. զի որք յառաջն բռնութեամբ ուրացանէին և յեղաշրջէին զբաղում 'ի Մահմէտական կրօնս, զամենայն յորդորանօք և խրատամբ պարգևաց և զամենայն ահիւ և սպառնալեօք, տանջանօք և մահացուցմամբ, այժմ ամենայն բարձաւ 'ի միջոյ և խափանեցաւ, և համարձակ ազատութիւն եղև կրօնի ամենայն ազգաց պաշտել զկրօնս իւրեանց, շինել և նորոգել զեկեղեցիս առաւել վայելուչ և պայծառ քան զառաջինն. Եղաւ զանգակատուն յեկեղեցիս Հայոց և Յունաց փոխանակ անախորժ ձայնից ժամահարաց. և ազատութիւն առաւ կրօնափոխութեան ամենայն ազգաց եւս և Մահմէտականաց առանց անարգելոյ և հալածելոյ զկրօնս և զհաւատս այլոց, որպէս տեսանեմք այժմ.

# ԳԼՈՒԽ ԾԴ.

Յաղագս կաթողիկոսութեան Ներսէսի Հինգերորդի, և պատրիարքութեան Մատթէոսի.

---

(1842) Ի սմին ամի վախճանեցաւ Կարբեցի Յօհաննէս կաթողիկոս սուրբ Էջմիածնի, և ընտրութեան միջոց տուաւ ամ մի, լինել ժողով ազգային երեսփոխանաց յամենայն կողմանց՝ յաթոռն սուրբ, և բացարձակ առաւելութեամբ քուէից ընտրել կաթողիկոս. և առաքեցան ազդարար նամակք յամենայն կողմանս առաքել զերեսփոխանս իւրեանց յաթոռն սուրբ։

Ընտրեցաւ Պետրոս վարդապետ Կեսարացի առաջնորդն Նիկոմիդիոյ՝ երեսփոխան Կոստանդնուպոլսոյ բաժնին ընդ իւրեւ հաշուեալ զամենայն հայրենակ գաւառս Օսմանեան տէրութեան, 'ի յաջորդ ամին երթալ գտանիլ յաթոռն սուրբ, և տալ զքուէն 'ի ժողովի անդ։ ապրիլ 15, 16 և 17

(1843) Եւ եղեւ ~~'ի մայիսի 18,~~ 1843 ժողով 'ի սուրբ Էջմիածին ~~[illegible]~~ 26 անձանց հոգեւորականաց և աշխարհականաց երեսփոխանաց վասն ընտրութեան կաթողիկոսի. և յետ աղօթից և պաշտամանց եղեւ քուէարկութիւն 'ի տաճարի անդ, և զկնի բացաւ քուէհամարն, և բացարձակ առաւելութեամբ քսան և ~~[illegible]~~ ձայնից ընտրեցաւ Տէր Ներսէս Հինգերորդ Աշտարակեցի առաջնորդն Պէսարաբիոյ, Դրիմու, և Նոր Նախիջեւանու՝ այր մեծահամբաւ և խոհախորհուրդ, ուսումնասէր և ազգասէր, և յաջողակ յամենայնի գործս և արդեամբք։

Զայս ընտրութիւն ժողովոյն ընկալեալ փոխարքային Վրաստանու, ծանոյց 'ի Պետերբուրգ առ վեհափառ կայսրն Ռուսաց Նիկողայոս հաստատել և վաւերացուցանել ըստ բարեհաճութեան կամաց իւրոց։

Եւ նորա հաստատեալ բարձրագոյն հրովարտակաւ զըն-

բութիւն ժողովոյն․ Հրաւիրեալ զՆերսէս կաթողիկոս ՚ի Պե-տերբուրգ տալով յորդորանաւ զամենայն ծախս ճանապարհին․ Բայց Ներսէս կաթողիկոս յապաղեալ զերթալ իւր վասն ձմերան սաստկութեանն պատճառելով զծերութիւն իւր, և գրեալ առ կայսրն շնորհակալութիւն վասն հրաւիրանացն, յորում խոստանայր ՚ի յունիսի յաջորդ ամին ելանել ՚ի ճանապարհ և գնալ ՚ի Պետերբուրգ, իսկ զձմեռն զայն անցուցանել ՚ի Տփխիս։

Յաւուրս յայսմիկ եղեւ ժողով ամիրայից ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի պատրիարքարանին նախագահութեամբ Երկաթեան Յարութիւն ամիրայի, որ զամենայն անկարգութիւնս ազգային գործոց թէ ըստ հոգեւորին և թէ ըստ մարմնաւորին շարակարգեալ և պատմեալ․ եցոյց ամենեցուն բարոյական պատճառ զկնտուածասուր պատրիարքաց, և զանխոհեմութիւն նոցա և զգլխացկոտ բնաւորութիւն նոցա և զանխայել խռով ՚ի քաղաքի և ՚ի խոսակցութեան։

Եւ նոքա համաձայնք ՚ի շնորհս երեսաց նորին, երկուք ՚ի նոցանէ մտին ՚ի սենեակ պատրիարքին․ և յետ քանի մի քաղաքավարական բանից խնդրեցին ՚ի դիմաց ժողովոյն զհրաժարական նորին ՚ի պատրիարքութենէն․ և նա յառաջնմէ իսկ գիտակ գոլով խորհրդոց նոցա․ և զզուեալ ՚ի ցաւալի երկպառակութենէ ազգին, եւ կոչել իսկ և իսկ զգրագիրն․ և տուեալ նմա գրել զհրաժարական իւր պատճառելով զանձին տկարութիւն և զորդին անհնազանդութիւն, ստորագրեաց և կնքեաց․ Արդ առեալ զհրաժարականն, տարան առ ժողովն, և նոքա առաքեցին ՚ի Բ. Դուռն ՚ի ձեռն գործակատարի պատրիարքին․ և ինքեանք գնացեալք առ արտաքին գործոց նախարարն խնդրեցին զգործադրութիւն հրաժարականին։

Յետ երից աւուրց եկն հրաման ՚ի Բ. Դրանէն․ յորում գրեալ էր հրամայել պատրիարքին յաղագս անբաւական լինելոյ իւրոյ այնմ՝ պաշտաման․ և հրամայէր ընտրութեամբ միացեալ ժողովոյ Հայոց (այթը ճէմաաթ ինթիխապի իլէ) որոշել զոմն յեպիսկոպոսաց արժանաւոր պատրիարքական պաշտաման, և ՚ի նմին աւուր ժողով արարեալ ամիրայից ՚ի պատ-

պիտրքարանն, ընտրեցին զՄատթէոս եպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի առաջնորդն Զմիւռնոյ՝ այր ազգասէր և ուսումնասէր, բայց միանգամայն փառասէր և նախանձոտ ընդ փառս այլոց, և հաստատ յառաջադրութիւն մտաց իւրոց, զոր ոչ կամէր փոխել, թէև լինէր ինքեան այն վնաս մեծ.

(1844) Զայս ընտրութիւն ծանուցեալ 'ի Բ. Դուռն, առաքեցին և ածին 'ի Զմիւռնոյ զՄատթէոս եպիսկոպոս 'ի պատրիարքարանն, որ գնացեալ 'ի Բ. Դուռն ընկերակցութեամբ վեց վարդապետաց և վեց պատուաւոր անձանց, յառաջոյ նորա քան քահանայք, և յետուստ նորա բազմութիւն ժողովրդեան, ներկայացաւ արտաքին գործոց նախարարին, արդարութեան Բ. ատենին, և մեծի եպարքոսին. և ընկալեալ զնշան պատրիարքական իշխանութեան, դարձ արար մեծահանդէս շքով 'ի Մայր եկեղեցին, ուր համառօտ և գեղեցիկ ատենաբանութեամբ արար բարեմաղթութիւնս արքայի. և աղօթս վասն միաբանութեան ազգիս, և օրհնեալ զժողովուրդն գնաց 'ի պատրիարքարանն.

Յետ աւուրց ինչ Տէր Եղիա կաթողիկոսն Ասորւոց՝ որ յաղագս կարևոր գործոց ազգին իւրոյ դեգերէր յայնժամ 'ի Կոստանդնուպօլիս, եկն յայցելութիւն և 'ի շնորհաւորութիւն առ Մատթէոս պատրիարք, որ յետ կարևոր բանախօսութեանց և հարցափոխութեանց հրամայեաց նմա Մատթէոս պատրիարք մատուցանել պատարագ 'ի սուրբ Երրորդութեան եկեղեցւոջն Հայոց որ 'ի Բերա, ըստ սովորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, յոր վասն յատկացոյց նմա անդ և մատուռ մի վասն պատարագելոյ երբ և կամեսցի. և նորա մեծաւ շնորհակալութեամբ ընկալեալ զքրիստոնէավայել եղբայրսիրութիւն նորա և զարտօնութիւն, զի չէր յայնժամ եկեղեցի Ասորւոց 'ի Կոստանդնուպօլիս և 'ի Բերա.

Յառաջիկայ կիւրակէին մատոյց անդ պատարագ և յիշատակեաց զՏէր Ներսէս ընդհանրական կաթողիկոսն ամենայն Հայոց և զծայրագոյն պատրիարքն Արարատեան Մայր Աթոռոյն, որոյ յիշատակութիւնն չէր տակաւին սկսեալ յեկեղեցիս Հայոց. զի յաւուրս անտի պատերազմին՝ որ եղեն 'ի 1828 ամին ընդդէմ Ռուսաց, բարձեալ էր յիշատակութիւն

կաթողիկոսին Էջմիածնի յեկեղեցեաց Հայոց հրամանաւ թե-դրան, և երթեւեկութիւն նուիրակաց դադարեալ։

Հասեալ այս ամենայն յականջս սրբազան կաթողիկոսին Ներսիսի, գովեաց յոյժ զխոհականութիւն Մատթէոս պատ-րիարքին, և առաքեաց կոնդակ օրհնութեան 'ի Քիշնեւայ, որ ընթերցաւ 'ի Մայր եկեղեցւոջ պատրիարքարանին փառա-ւոր հանդիսիւ։ Գրեալ էր 'ի կոնդակին, եթէ հանդերձեալ է ելանել 'ի Պեսարաբիոյ 'ի յունիսի 9, և երթալ 'ի Պետր-բուրգ ըստ հրաւիրելոյ կայսերն Ռուսաց, և անտի երթալ յԷջմիածին, և օծանել անդ կաթողիկոս։

(1844) Զայս կոնդակ օրհնութեան առեալ կարդալ 'ի ձե-ռին Մատթէոս պատրիարքի, արար ժողով մեծ 'ի Մայր եկե-ղեցւոջն հոգեւորականաց և աշխարհականաց, և առաջադրու-թեամբ ամենեցուն և բարեհաճութեամբ սկսաւ դարձեալ յի-շատակութիւն կաթողիկոսին Էջմիածնի 'ի Պատարագին յե-կեղեցիս Հայոց յՕսմանեան տէրութեան. բայց երթեւեկու-թիւն նուիրակաց վճարեցաւ դադարել բոլորովին. այնպէս զի պատրիարքն կոստանդնուպօլսի լինիցի փոխանորդ կաթողի-կոսին, զեկամուտս սորա ամենայն նա հաւաքեսցէ, և հա-ւասցէ. միւռոնն ևս առ նա առաքեսցի, և նա բաշխես-ցէ իւրաքանչիւր վիճակի ըստ պիտոյից ժամանակին։

Զայս ամենայն գրեաց Մատթէոս պատրիարք առ Ներ-սէս կաթողիկոս, որ ոչ սակաւ ցաւեցաւ վասն նուիրակու-թեանն դադարման. բայց գիտելով զատելութիւնն Օսման-եանց՝ զոր ունէին բնաւորաբար ընդդէմ Ռուսաց, խրատունս ետ ժողովոյն կարգադրութեանն։

Իսկ ինքն կաթողիկոսն յուղի անկաւ 'ի Քիշնեւայ, և գը-նաց 'ի Պետրբուրգ, ուր մեծահանդէս շքով ընկալաւ զնա կայսրն, և հանգոյց 'ի ճանապարհի նեղութեանցն 'ի պաշտ-ման միում, զոր պատրաստեալ էր նմա յառաջագոյն։

Ցայսմ միջոցի դէպ եղեւ երբեմն Նիկողայոս կայսեր եր-թալ յայցելութիւն սրբազան կաթողիկոսին Ներսիսի, և 'ի լսելն անդ բանախօսութեանց և յիշատակութեանց անցելոց իրաց, յառաջ բերեալ Ներսէս զգովելի և զհաւատարիմ ծա-ռայութիւնս ազգին Հայոց, ասէ, ո՞չ արդեօք այս Ներսէսն

էր․ որ ՚ի խնդրոյ և յաղաչանաց Բռաքսեսի զօրավարացն յոր-գորեալ և հաւանեալ, և ընկալեալ ՚ի նմանէ գլխաւոր դաշնադրութեանն, յորում և ձերդ առաջադրութիւն ցուցանոյ ՚ի նախն վասն ազատութեան ազգի և հայրենեաց մերոց․ խորհեմանաւոր ինն գիտութիւն ընդ հովանաւորութեամբ և պաշտպանութեամբ Աստուածազօր կայսերութեանդ, լինել ձեզ միջա աջակից և օգնական յամենայն միջոցս պատերազմաց, այս նորա՝ այս այս նորա էր՝ որ յարոյց ընդ իւրեւ զամենայն քաջս Հայոց ՚ի Հայաստան աշխարհէ և ՚ի կողմանս գաւառաց վրաստանու և խմբրէթի, և առաջնորդութեամբ իւրով իւրեւ քաջ զօրավարս ոչ խնայելոց անձին, և կորուստեամբ քանի և հնգից հազարաց ՚ի գլուխ տարեալ զյաղթութիւնն, զերծոյց ՚ի հպատակութենէն Պարսից զերեւան, զնախջեւան, և զայլն ամենայն մինչև ցԱրարատական, որոց այժմ տէր էք դուք և հրամայող․

Այս յետակոյ և առաջադրութիւն ձեր պահեալ կայ առ խս, ով վեհափառ տէր, խորհեւ մնան որբացան, և ոչ գիտեմ, թէ երբ լինելոց է․

Պատասխանէ կայսրն, ես հաստատ եմ ՚ի խոստմունս, և յուսամ կատարել, զոր առաջադրեցի յանուն Աստուծոյ, և չը մոռանամ պարտականն ազգի ձերում, և այնչափ անպարտ արեանցն հեղման, որք հեղան ՚ի վասն կայսրութեանս․ Բայց այժմէական քաղաքականութիւնն եւրոպացւոց ընդդէմ եկանէ այսմ կարգադրութեանս, և ոչ յաջողի բնաւ, և ազգ ձեր անտանէ վասն յամենայն կողմանս, ուր և ցրուեալքն խոկ են․ Եթէ ողորմութեամբն Աստուծոյ ՚ի գլուխ տարցուք զԱրեւելեան խնդիրն յաղթութիւն Բրիտանիէից, յայնժամ դիւրաւ յաջողի և այդ խնդիր ձեր․ ուստի պարտ է ձեզ համբերել, մինչև Աստուած ինքն խոկ անօրինեսցէ, և ժամանակն յաջողեսցէ․

Եւ ՚ի յաջորդ աւուրն երթայ կաթողիկոսն ՚ի փոխադարձ այցելութիւն առ կայսրն Նիկողայոս, որ ընդ առաջ եկանէ նմա բացեալ գլխով և ընդունի յառանձին սենեկի իւրում մեծարանօք և պատուով. Եւ ՚ի լինել սիրալիր խօսակցութեանց՝ յոգւոց հանէ կայսրն հառաչելով, և ասէ, ով հայր սրբազան․ ցաւ մեծ ունիմ ՚ի սրտի ՚ի վաղ ժամանակաց հետէ անտի, ո-

բում ոչ ոք կարէ զարմանս տանել և հնարս հայթհայթել, բայց միայն դու՝ հայր որբական. դու եթէ կամիցիս, կարես լինել ինձ դեղ բժշկութեան փարատիչ ցաւոց անձին իմոյ։

Ասէ կաթողիկոսն. զի՞նչ է ցաւդ ով վեհափառ Տէր, պատմեա՛ ինձ, և եթէ կարեմ՝ լինել նմա դարման, ոչ զլանամ։ Ասէ կայսրն. մի է Տէր մեր, մի հաւատ, մի մկրտութիւն, և մի եկեղեցի. և զի՞նչ իցէ այս բաժանումն ՚ի մէջ Յունական և Հայկական եկեղեցւոյ, և միթէ չի՞ք հնար ՚ի մէջ երկուց եկեղեցեաց ազգափառացս լինել միութիւն, որպէս հաւատովք, նոյնպէս և ամենայն կրօնական պաշտամամբք և ծիսիւք և արարողութեամբք։ Պատասխանի տայ կաթողիկոսն և ասէ, կամիք դուք զերկու եկեղեցիս ձուլել ՚ի մի զանգուած, բայց ո՞րով եղանակաւ, հի՞նն նորո՞յն պարտ իցէ ծառայել, եթէ նորն հնոյն. ո՞րն է խաւարին և Աստուածահաճոյն։ Լուեալ կայսրն և ինչ ոչ խօսեցաւ։

Եւ յայլում նուագի ՚ի լինել բանախօսութեանց կայսերն ընդ կաթողիկոսին, ասէ կայսրն. խնդրեմ ՚ի քէն որբական հա՛յր, զի փոխեսցես զձեւ վեղարիդ, և արասցես, որպիսի է վեղար հօգևոր Միխիթրին մերոյ. Ասէ ցնա կաթողիկոսն. յաւուր յորում եդի զվեղարս զայս ՚ի գլուխ իմ ՚ի ձեռնադրութեան իմում՝ քահանայ յեկեղեցւոջ սրբոյն Անեփանոսի ՚ի Ջմիւռնիա քաղաքի, ուխտեցի յայն օր երկնաւոր Թագաւորացեալին Յիսուսի Քրիստոսի այսու վեղարով իջանել ՚ի գերեզման, արդ զայս ուխտ իմ զոր ուխտեցի Աստուծոյ, ոչ կարեմ փոխել ՚ի շնորհս մարդկան։ Յայնժամ հիացեալ կայսրն ընդ խորագիտութիւն և ընդ բարեհաճանճար խոհականութիւն կաթողիկոսին, ասէ ցմերձակայս իւր, առաւել յոյժ տեսի քան զոր լուեալ էի վասն սորա մեծի. և հրամայեաց խաչ ադամանդեայ դնել ՚ի վերայ վեղարին յորջումն յայլոց արքեպիսկոպոսաց։

Այս ամենայն բանախօսութիւնք նշանակեալք են յաւուրնալէր և շնորհափայլ Թադէոս վարդապետի յորդորութիւնն, որ էր ձեռնասուն և հաւատարիմ աշակերտ որբական կաթողիկոսին, և ընդ նմա եկաց զամս բազումս ՚ի Քիշնով, ՚ի Պէտըրբուրգ, և ՚ի Տփխիս, մինչև գնաց ընդ նմա ՚ի սուրբ Էջ-

միածին, ուր և ձեռնադրեցաւ արքեպիսկոպոս մեծի վիճակին Ջուղայու և Հնդկաստանի.

Իսկ Ներսէս կաթողիկոս յետ աւուրց ինչ հիւանդացեալ անդ 'ի Պետրբուրգ, և ախտ ցաւոյն օր քան զօր զայրացեալ և սաստկացեալ, յուսահատ արար զամենեսին ընդ առողջութիւն նորա. բայց հրաշիւք Ամենակալին և բազմաջան վաստակօք կայսեր՝ մինչ 'ի ձեռն ճարտար բժշկաց 'ի լաւ անդր փոխեալ օր ըստ օրէ սկսաւ ստանալ զառողջութիւն մարմնոյ, հրամանն արար կայսրն մնալ անդ զձմեռն զայն 'ի Պետրբուրգ, և յառաջակայ ամին 'ի մայիսի երանել 'ի ճանապարհ, և գնալ յէջմիածին.

## ԳԼՈՒԽ ԾԸ.

*Յաղագս օծման Ներսէսի կաթողիկոսի, և գործոց նորա, և ճառ-նազարեան կարապետ վարդապետի.*

(1846) Ի հետեւեալ ամին 'ի մայիսի ել Ներսէս կաթողիկոս 'ի Պետրբուրգայ հրամանաւ կայսեր ընկերակցութեամբ երեւելի պաշտօնատարց կայսրութեանն, և եհաս 'ի Տփխիս, ուր ընդ առաջ գնացին նմա մեծով աւուրբ ճանապարհաւ պաշտօնակից փոխարքայն Վորոնցոֆ, որ էր փառաւորանօք սիրելի կաթողիկոսին, և ժէնէրալք, և զօրականք, աւագք, և վաճառականք, և բազմութիւն բնակչաց քաղաքին յամենայն ազգաց, և մեծահանդէս շքով ածին զնա մեծ եկեղեցին Էջմիածնի որ 'ի Տփխիս. Ուր հանդիսաւոր օրհնեալ զկայսրն և զորդիս նորա և զազգատոհմ նորա և զփոխարքայն և զամենայն ժողովուրդն, ել 'ի վեհարան իւր և հանգստացաւ, և զաւուրս հնգետասան ընդունէր զեկեղեցին առ ինքն յայցելութիւն և յողջունիլ, և ինքն փոխադարձ գնայր յայցելութիւն փոխարքային և արքեպիսկոպոսին վրաց.

Կացեալ ամիս ինչ 'ի Տփխիս և մխիթարեալ զամենեսին՝

եւ 'ի Տփխիս, ընկերակցութեամբ եպիսկոպոսաց և միաբանից որոց էջմիածնի՝ որք ընդ առաջ եկեալք էին մինչեւ 'ի Տփխիս, և հասեալ յէջմիածին և հանգուցեալ, յետ աւուրց ինչ ընկալաւ զօծումն սուրբ 'ի գագաթն իւր փառաւոր հանդիսիւ, և նստաւ յաթոռ հայրապետութեան Հայոց 'ի յունիսի 9. 1846. ի հանդիսի օծմանն գոլով ներկայ կուսակալն Երեւանայ հանդերձ զօրականօք, և 'ի գիշերի եղեն հրախաղութիւնք և լուսաւորութիւն յամենայն կողմանս վանորէիցն, և կերակուր պատուական և առատ, և ուրախութիւն մեծ.

Յետ երից աւուրց մեկնեցաւ կուսակալն և զօրականք իւր. որոց բաշխեաց պարգեւս սրբազան հայրապետն ըստ արժանաւորութեան իւրաքանչիւրոցն, և ընկալաւ զմիաբանութիւն սուրբ աթոռոյն, զիւրաքանչիւրոցն հարցափորձ արարեալ զանուանս և զհայրենիս և զպաշտամունսն, զանցխաւանն և զանկարգսն առաքեաց 'ի Սեւան կղզի. և զբարեկիրթն կարգաւորեաց առ մէն մի պաշտօն. 'ի կարգի եդ զխոհանոցն և զգանձ խաչանց և կոչոց, և զսեղանատունն և զկերակուրս միաբանիցն, բարեկարգեաց զդպրոցն աթոռոյն և զվարժարանն և զեկեղեցին վաղարշապատու, եդեալ 'ի նոսին վարժապետս բարեկրօնս 'ի միաբանից աթոռոյն. Զհետ եղեւ պայծառութեան և բարեկարգութեան, և ետ շինել ըզլիճ մի մեծ 'ի հանդիպոյ վանուցն յերկայնութիւն հարիւր կանգուն և 'ի լայնութիւն յիսուն, և զյատակ նորա և զշըրջապատն 'ի սրբատաշ քարանց. և զջուրն՝ որ հոսէր յաւազանէն Վաղարշապատու, հանեալ 'ի լիճն ընդերկրեայ ճանապարհաւ, և բազմացոյց անդ ձկունս բազմատեսակս և ախորժահամս.

Կանգնեաց մօտ լճին և անտառ մի գեղեցիկ, տնկեալ 'ի նմա վաթսուն հազար թթենիս և քառասուն հազար ծիրանս, և շուրջ զնովաւ հաստատուն ծառս կաղամախս և բարտի, զորս առաջանէր լճին երկուանք ճանապարհաւ. Յօրինեաց և զգործարանս մետաքսի իբրեւ եկամուտ ինչ աթոռոյն, և զոր ամենայն ճգնէր այս այս բարեկարգութեամբ շքեղացուցանել և վայելչացուցանել զաթոռն սուրբ, և անհետ առնել զամենայն խանդարմունս և զաղաւաղութիւնս. Սիրէր և

պատուէր անպաշտութեանն, զորս համակամ էին ջանից իւ_
րոց և տրամադրութեանց, և առնէր աւարէր 'ի փանորայս
պատանդանցս և գրամմատեայս, և այսպէս օր յօրէ ջանա_
նար լինէր զանթառ սուրբ պայծառացուցանել, և զարդա_
րել ամենայն բարեկարգութեամբ.

Բայց և խաչեղբարք չէին նմա պակաս. յորոց մին և մե_
ծագոյնն էր կանոնադրութիւն Ռուսաց տէրութեան որոշեալ
'ի հարիւրաւոր յօդուածս և աւելի ևս, Պօլաժէնիէ անուն,
որ միամտութեամբ սրտի (չասացից թէ անխոհեմութեամբ
և փառասիրութեամբ) ընկալեալ էր նախորդ կաթողիկոսն
Յովհաննէս կարբեցի, իբրև անվնաս ինչ անկախութեան և
հաստատող բարեկարգութեան Հայաստանեայց եկեղեցւոյ,
թերևս օգտակար նմին և ազգին.

Իսկ Ներսէս՝ որ 'ի վաղ ժամանակաց հետէ լուեալ էր զըն_
դունելն կաթողիկոսին զկանոնադրութիւնն զայնոսիկ, և 'ի
ձեռն մտերիմ՝ բարեկամաց իւրոց զգուշացուցեալ էր զնա յետս
կոչել զստորագրութիւն իւր՝ համոզելով և յորդորելով, թէ
այն կանոնադրութիւնք վնասակար են անկախութեան եկե_
ղեցւոյ մերոյ, ջնջեն բոլորովին զհնաւանդ առանձնաշնորհու_
թիւնս Հայաստանեայց եկեղեցւոյ՝ տուեալս 'ի սուրբ ժողովոց
յաւուրց անտի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և Ներսիսի Մե_
ծի. բայց նա ոչ անսայր նմա, և անտի համարեցաւ ինքեան
զնա կուսակից ստորագրութեան իւրոյ.

Առանց այսր՝ 'ի նախիկ իւր յաթոռ Հայրապետութեան Հա_
յոց՝ մերժեաց և հերքեաց զամենայն իբրև վնասակար և
անընդունելի Հայաստանեայց եկեղեցւոյ, և հրատարակեաց
'ի լուր կայսրութեանն Ռուսաց։ Վասնորոյ և ոչ իսկ արժանի
վարկաք մեք տալ 'ի կարգի պատմութեանս ծանօթութիւն
ինչ յօդուածոց վնասակար կանոնադրութեանն, զոր մերժեաց
Ներսէս այրն Աստուծոյ, և նոյնպէս յաջորդ նորա Մատթէոս
կաթողիկոս մերժեաց, իսկ այժմ համարէն ոչ երբէք ծանեաւ_
ցին. ուստի լաւ է թողուլ և զայն և չյանձնել առաջադրոյ զաւակաց
մերոց. խորհեցաւ և զբաղում ժամանակս տարւոյն կամ՝ զա_
միսս ինն անցուցանել 'ի Տփխիս, զի դիւրացի նմա անդ զա_
մենայն օր տեսանել զփոխարքայն և խորհրդակցել ընդ նմա.

վասն որոյ զերիս ամիսս միայն յայց եղանէր որդոյ աթոռոյն, ընդունէր զեկեալսն յուխտ և յերկրպագութիւն, օրհնէր զմիւռոնն սուրբ, և ձեռնադրէր եպիսկոպոսունս. յետ կարգադրութեանցս այսոցիկ եւ պատրաստել զկառս իւր, և կեցեալ օր մի յերեւան քաղաք, եւ անտի բազմութեամբ ժողովրդոց, և եկեալ 'ի Տփխիս մեծաւ հանդիսիւ, հանգեաւ 'ի վեհարանի իւրում։

Յետ աւուրց ինչ գնաց յայցելութիւն վարժարանին իւրոյ՝ զոր ինքն հիմնադրեալն էր և եկամուտս պատրաստեալ, և կոչեալ Ներսիսեան վարժարան, բայց աստ յաւուրս Կարապետ արքեպիսկոպոսի վիճակաւորի տեղւոյն խոպանացեալ և 'ի վարձու տուեալ այլոց, վասն որոյ ցաւ մեծ զգացեալ կաթողիկոսն Ներսէս, և իսկ և իսկ վտարեաց անտի, զորս նստէին անդ իբրեւ 'ի տան, և պահանջեաց 'ի Կարապետ եպիսկոպոսէն զհաշիւ վարժարանին իւրոյ և վիճակին՝ կարգելով յանձնաժողովս քանի ինչ անդամս, որոյ անդամք էին Շահնազարեան Կարապետ վարդապետ և Յովհաննէս վարդապետ Արշարունեան, և յետ նորա Գէորգ վարդապետ Կոստանդնուպօլսեցի առաջնորդն Պրուսայու, և Դաւիթ վարդապետ սուրբ Երուսաղէմի, որք գնացեալք էին ձեռնադրիլ եպիսկոպոս, և զամ մի և աւելի տքնեցան յայս պաշտօն հաշուեքննութեան, և այս վէճ և խնդիր հաշուին տեւեաց զամս բազումս, որ բազմօք տառապեցոյց զԿարապետ եպիսկոպոսն և ընդպատրեօք էարկ, և մերկացուցեալ յամենայն հարստութեանցն առաքեաց զնա յԱխալցխա իբրեւ առաջնորդ անկան փոխանորդ, ուր և մեռաւ նա անդ։

Պատմի թէ Կարապետ եպիսկոպոս տայ կաշառս երից հազար մանէթաց Շահնազարեան Կարապետ վարդապետին՝ որ նախագահն էր յանձնաժողովյն իւրոյ, զի զհաշիւն տեսցէ յօգուտ անձին իւրոյ. և նա այլ ընդ այլոյ տեսանէ հաշիւ. Իմացեալ զայս կաթողիկոսին Ներսիսի խնդրէ զՇահնազարեանն պատուհասել զնա ըստ արժանւոյն. բայց նորա զգացեալ՝ գիշերայն խոյս տայ 'ի Տփխիսէ և անցանէ ընդ սահմանն Օսմանեան տէրութեան, և գնայ 'ի Կոստանդնուպօլիս յաւուրս Յակոբոս պատրիարքի. Եւ Ներսէս կաթողիկոս առաքէ զկոնդակս

առ Ցակոբոս պատրիարք և առ Իշխանաւորս ազգիս, առ Կարապետ արքունի ճարտարապետ, և առ Ցովհաննէս և Պօղոս արքունի վառօդապետս, զի չընդունիցին զՇահնազարեանն իբրև Հայոց վարդապետ, և Ցակոբոս պատրիարք ակնածեալ 'ի կենդանւոյ կաթողիկոսին' ոչ ցուցանէ նմա երես զուարթ, և արգելու զնա 'ի քարոզչութենէն Պալաթիոյ եկեղեցւոյն, ուր յղեալն էր յառաջ։

Իսկ նորա տեսեալ, զի չիք տեղի ապաստանի յերեսաց կաթողիկոսին, անցանէ 'ի Փարիզ, ուր պարապեցաւ ժամանակս ինչ 'ի թարգմանութիւնս նախնի պատմագրաց մերոց 'ի Հայէ 'ի Գաղղիացի բարբառ, զորս և սկսաւ տպագրութեամբ 'ի լոյս ածել. անտի էանց յԱնգլիա 'ի Մանչէսթէր, ուր պատիւ մեծ գտեալ 'ի Հայազգի վաճառականաց պանդխտելոց անդ' սկսաւ հրատարակել օրագիր. բայց սակս ինչ դժնդակ և անբուժելի 'ի վերայ հասեալ' արգել զնա 'ի վաստակոյն, յոր վասն վերադառնայ 'ի Փարիզ, և չգտեալ անդ դարման անձին' գայ յԵգիպտոս, ուր տեսեալ զՆուպար փաշա խօսակցի ընդ նմա, և յայտնէ զխղճս իւր զամենայն ինչս և զդրամս իւր յանձնել նմա առնելով կտակս վասն հաստատութեան ազգային դպրոցի միոյ 'ի կողմանս Կիլիկիոյ յիւրոց իսկ արդեանց, և զՆուպար փաշա կարգել կտակակատար. և ապա եկեալ 'ի Կոստանդնուպօլիս, յետ սակաւ ժամանակաց մեռանի անդ, և թաղի 'ի' Խասգիւղ։

Դէպ եղեւ յաւուրն յայնոսիկ Ներսէս եպիսկոպոսի Վարժապետեան երթալ յԵգիպտոս հրամանաւ Պօղոսի պատրիարքին Կոստանդնուպօլսոյ, գնացեալ սորա անդ, տեսանէ զՆուպար փաշա, և միանգամ և երկիցս խօսակցի ընդ նմա վասն կտակին Շահնազարեան վարդապետին։

Բայց վասն զի այնչափ գոյք հանգուցելոյն չէին բաւական 'ի հաստատել դպրոցին, և բազմաց ծախուց պէտք էին վասն շինութեան դպրոցի և կարեւոր պիտոյից նորին, ինքն իսկ փաշայն խոստացաւ հոգալ զամենայն յիւրոց իսկ արդեանց, յաւելլով 'ի վերայ հազար Օսմանեան ոսկւոյ գոյից Շահնազարեանի' երեք հազար ոսկիս եւս. և առ դիւրելոյ առ ժամանակ ինչ զպիտոյս վարժարանիս, խորհրդով Նուպար փա-

չայի հաստատեցաւ վարժարանս 'ի Խաղիւղ, ընդունելով 'ի նմա տասն աշակերտս ձրիավարժս 'ի զանազան կողմանց Սիլիկիոյ, ըստ բաղձանաց Շահնազարեան վարդապետին. որպէս զի յետ ժամանակաց դիւրեսցի հաստատութիւն վարժարանին 'ի Կիլիկիա, 'ի ձեռն ընտիր աշակերտացն վարժելոց 'ի վարժարանին Խաղիւղի.

Մեծապէս փայլի յաջողութեան հաստատութեանս յայտնի աշխատութիւն և արթնութիւն Գերապատիւ Ներսէս արքազան եպիսկոպոսի Վարժապետեան, որ յաջողեցաւ ըստ ամենայնի չահել և զսիրտ Նուպար փաշայի, և եղեւ պատճառ հաստատութեան վարժարանիս, յորում բաց 'ի ձրիավարժ տասն աշակերտաց՝ ամսականաւոր աշակերտք պարապին յուսումն՝ աւելի քան զհարիւր.

## ԳԼՈՒԽ ԾԶ.

Յաղագս դժուարութեան 'ի մէջ կաթողիկոսին, և Լազարեան Խաչիկ աղային.

---

(1846) Մինչ բարեկարգեաց զգործս իւր Ներսէս կաթողիկոս, և որ քան զոր յայց ելեալ նմին տեսանէր զբարեկարգութիւն նորա և զուարճանայր յանձն իւր, հիմնադրեաց և զվանս մի կուսանաց անդ 'ի Տփխիս, հաստատեալ և եկամուտ պատրաստեալ նմա, և եդ 'ի նմա վարժուհիս և մայրապետս և քահանայս դաստատուս բարեկիրթս և մաքրակրօնս, և կանոնօք ամփոփակեաց զնոս չմտանել անդ այր մարդ, և եթէ հիւր ինչ օտարական եկեալ՝ յայց ելանել կամիցի, գնասցէ նախ յառաջնորդարանն, և ծանուսցէ զինքն, և ընկալեալ 'ի նմանէ զբարեհաճութիւն և զհրամանագիր տոմսակ առ մայրապետն գրեալ, գնասցէ անդ, և զայցելութիւնն կատարեալ դարձցի վերստին.

Այս վանք կուսանաց որ քան զոր վայելչացեալ համբաւ-ած առաջաւ յայնոսիկ կողմանս։

Երեւելի էր 'ի սմին ժամանակի աղա խաչիկ Լազարեան՝ որ ազնուական 'ի տոհմէ Եղիազարեանց՝ ասպետ զանազան նշանաց՝ սենեկապետ և խորհրդական կայսերն Ռուսաց՝ հիմ-նադիր և տէր ճեմարանին Լազարեանց՝ որ 'ի Մոսկուայ։ Սա կա-մեցաւ զգուստր իւր հարսնացուցանել ընդ որդւոյ Մուրատ պէյի Մանուկ պէյեան, որ էր որդի աներորդւոյն իւրոյ և մերձաւոր ազգական. և վասն այսր խնդրեաց հրաման պսակի 'ի սրբազան կաթողիկոսէն, մինչ էր յայնժամ 'ի Պետրբուրգ։ Բայց սրբազանն յիշեցուցանելով նմա զմերձաւոր ազգակա-նութիւնն՝ որ 'ի մէջ երկուց անձին գերդաստանացն, և զկա-նոնս սուրբ եկեղեցւոյ, որ չտայ թոյլ այսպիսի մերձաւոր ազ-գականութեանց լծակցիլ ընդ միմեանս ամուսնութեամբ, խը-րատեաց զնա և յորդորեաց բազմօք չապստամբիլ ընդդէմ եկեղեցւոյ, և ժառանգել զօրհնութիւնս Աստուծոյ և սրբոց հարց, որք կանոնօք անփոփոխելի են զօրացան խորհուրդն, և ոչ թոյլ տան խառնադնաց վարուք լծակցիլ զօրէն Հրէից և Մահմէտականաց։

Տեսեալ խաչիկ Լազարեան, թէ չէ հնար ամոքել զսրբա-զան Ներսէս վասն հրամանին, ոչ խոստմամբ պարգևաց, ոչ աղաչանօք, և ոչ ակնածութեամբ երևելի միջնորդաց, ակա-մայ լռեաց, թողեալ այլում ժամանակի զոր փափաքէրն առ-նել։

Եւ մինչ մեկնեցաւ սրբազան կաթողիկոսն 'ի Պետրբուր-գայ, և եկն 'ի Տփխիս, առաքեաց առաջնորդ Պեսարաբիոյ Մատթէոս արքեպիսկոպոս, որ գնացեալ 'ի վիճակ իւր կոն-դակաւ կաթողիկոսին, սկսաւ հովուել և բարեկարգել զեկե-ղեցեաց բնակիչս Ղրիմու Նորոյն Նախիջևանայ և Պեսարաբիոյ. գնաց հովուական պաշտօնս և 'ի Պետրբուրգ. զի և նա 'ի վի-ճակի իւրում էր, և մնաց անդ 'ի ձմերան ժամանակի։

Յայնմ միջոցի խաչիկ Լազարեան պատրաստեալ յաւուր միում՝ խնճոյս մի մեծ 'ի տան իւրում, և հրաւիրեալ անդ ըզ մերձաւոր ազգականս իւր, և զերևելի պաշտօնակալս կայս-րութեանն, և զժէնէրալս, և զՄատթէոս արքեպիսկոպոսն.

և յետ նուագարանաց և պարուց յերեկոյեան պահու բազմին 'ի ճաշ, և հանեալ զգինի կախէթու հին և պատուական ար-բենան առաւել քան զչափն.

Զկնի ճաշուն առնու խաչիկ Լազարեան զՄատթէոս արք-եպիսկոպոս, և տարեալ յառանձին սենեակ ինչ, յոգւոց հա-նէ առաջի նորա և ասէ, Հայր սրբազան, մերք մի ունիմ 'ի սրտիս, և ոչ ոք կարէ բժշկել, բայց միայն սրբազնութիւն ձեր. Ասէ եպիսկոպոսն, Պայծառափայլ տէր, երդնում յԱստ-ուած, զի եթէ կարողս եմ, ոչ անխնայեցից 'ի քէն և զկեանս իմ անգամ:

Ասէ խաչիկ, սրբազան հայր, դու գիտես, զի միակ դուստր մի ունիմ, և չունիմ այլ. և նա է յոյս և անձկալու-թիւն իմ, զի ժառանգեսցէ զանուն հայրենեաց մերոց, և ա-նուն ազգատոհմի իմոյ մի կորիցէ իսպառ: Արդ լուայ 'ի հա-ւատարիմ բարեկամաց, զի մեծափառ կայսրն պատրաստեալ է զերիտասարդ մի 'ի դերդաստանէ իւրմէ, և կամի հարսնա-ցուցանել ինքեան զդուստրն իմ, յայնժամ ազգ եղիազարեան տոհմին իսպառ ունի ջնջանիլ և կորնչիլ, ընդ նմին և պար-ծանք ազգիս. և Ռուսք փոխանակեսցեն զտեղի հարց մերոց.

Վասն որոյ խնդրեմ և աղաչեմ, զի 'ի գիշերիս յայսմիկ դիցես պսակ օրիորդիս իմում ընդ որդւոյ Մուրատ ալէյի, որ է յազգականութենէ իմմէ, և է աստ.

Ասէ եպիսկոպոսն. բարի է զոր ասէքդ. բայց վասն մեր-ձաւոր ազգականութեան նորին՝ չգիտեմ, թէ զի՞նչ արարից: Ասէ ցնա խաչիկ, սրբազան հայր, միթէ Աստուածադիր և ա-ւետարանակա՞ն իցեն օրէնքս այս խնամութեան. և ո՞չ ապա-քէն նախահարք սուրբք աստուածային կարգադրութեամբ առին իւրեանց կանայս 'ի մերձաւոր ազգականաց իւրեանց, զի մի այլակրօն ոք մտցէ յազգ իւրեանց և խանգարեսցէ զանուն նախահայրութեանն. ահա նոյն բան է և այժմ յայսմիկ, իսկ եթէ մարդկային իցեն օրէնքս այս, ապաքէն օրէնք 'ի ձեռս առաջնորդաց են, որք կարեն փոփոխել և անօրինել ըստ ժամանակին, և 'ի պահանջել հարկին՝ բոլորովին եւս հերքել, զի հարկն զօրէնս լուծանէ:

Ի բանից սոցա խրախուսեալ և յորդորեալ եպիսկոպոսին,

ել յոտս, և ասէ ՝ առաքեա՛ արս յեկեղեցին, և բերցեն զքահանայս առ իս՝ զխաչ զՄաշտոց և զզգեստս եպիսկոպոսութեան իմոյ ։ Յայնժամ՝ առաքեաց խաչիկ արս յեկեղեցին, և բերին զամենայն զոր ասաց եպիսկոպոսն, և զգեստաւորեալ արքեպիսկոպոսն՝ ել 'ի սրահն մեծ զարդարեալ ամենայն հանդերձանօք, և փառէին հազար կանթեղք ։ և ածեալ զհարսն և զփեսայն յառենի բազմութեանն, պսակեաց եպիսկոպոսն 'ի հանդիսին յայնմիկ, և եղեւ ուրախութիւն մեծ զաւուրս երիս ։

Այս լուր հարաւնեաց այն ինչ եհաս յականջս որդւոյն հայրապետին Ներսիսի, և քաջ տեղեկացեալ, թէ Մասթէոս եպիսկոպոսն արարեալ է զայն պսակ, յանհնարին բարկութիւն շարժեալ հանէ սուրհանդակս, և գրէ կոնդակ առ Մասթէոս եպիսկոպոս, զի փութանակի և անյապաղ գայցէ առ ինքն ։

Ընթերցեալ եպիսկոպոսին զկոնդակն և 'ի վերայ հասեալ, թէ կաթողիկոսն ունի դատապարտել զինքն և չարաչար պատուհասել վասն ապօրինաւոր պսակին զոր արարն, գնաց առ խաչիկ Լազարեանն, և ցուցեալ նմա զկոնդակն, աղաչէ զնա և թախանձէ ազատել զինքն 'ի ձեռաց կաթողիկոսին ։ Եւ նա քաջալերէ զնա չերկնչիլ բնաւ երբէք, և մնալ անդ 'ի Պետրբուրգ ընդ պաշտպանութեամբ իւրով, և ասէ, ցորչափ կենդանի եմ՝ ես, ոչ կարէ կաթողիկոսն հանել զքեզ 'ի պաշտպանութենէ իմմէ ։

Բայց այսու ամենայնիւ գրեաց Մասթէոս եպիսկոպոս գիր աղերսանաց առ կաթողիկոսն Ներսէս մեծաւ պաղատանօք, յորում երկարօրէն պատմէ զբանս խաչիկ Լազարեանն առ ինքն, և թէ ինքն խոհեմութեամբ գործ գործել կամեցեալ, զերկուց չարեաց փոքրագոյնն ընտրեալ է 'ի պսակելն ։ զի արդարեւ անցանելն զօրինօքն եկեղեցւոյ՝ չար է ասէ ։ բայց և հարկացուցանելն կայսեր զօրավարդն Հայ ընդ Ռուսս՝ է չարագոյն եւս ։ զի նախ ընդդիմ ունի լինել անուն և հայրենիք պաշտպանութեան ազգասէրն Եղիազարեանց յազգէ Հայոց ։ վասն որոյ համարձակեցայ ասէ ընտրել զփոքրագոյն երկուց չարեաց ։

Բայց ոչ համոզեցաւ Ներսէս կաթողիկոս 'ի բանիցս յոյսոցիկ, այլ դարձեալ գրեաց առ նա գալ առ ինքն. յաւել եւ գրել առ կայսրն, զի զՄատթէոս եպիսկոպոս 'ի ձեռս զօրականաց տուեալ առաքեսցէ առ ինքն. այլ ոչ լուաւ նմա կայսրն 'ի շնորհս Լազարեանց, և գրեաց պատասխանի, թէ Մատթէոս եպիսկոպոս անկեալ կայ 'ի մահճս կաթուածով ախտիւ. եթէ առողջասցի, յայնժամ եկեսցէ. և այսպէս մնաց Մատթէոս եպիսկոպոս 'ի Պետրբուրգ մինչեւ ցմահ հայրապետին Ներսիսի, և 'ի վախճանիլ նորա՝ եղեւ առաջնորդ Աժտէրխանու կայսերական հրովարտակաւ.

Այս գժտութիւն և փոխադարձ ապանեղութիւն 'ի մէջ որբազան կաթողիկոսին Ներսիսի և խաչիկ ազգի Լազարեանց տեւեաց զամս բազումս, և սա եղեւ պատճառ զի յետ տասն ամաց մինչ մեռաւ կայսրն Նիկողայոս, և յաջորդեաց զաթոռ նորա Աղէքսանդր Բ. որդի նորա, և հանդերձեալ էր օծանիլ կայսր ամենայն Ռուսաց, հրաւիրեցան յամենայն կողմանց տէրութեան նորա ըստ նախնի կայսերական օրինաց ամենայն աստիճանաւորք, որք պարտ էին ներկայ գտանիլ 'ի հանդիսի օծման նորա, եկն հրաւէր և առ Ներսէս կաթողիկոս, բայց այսու օրինակաւ, զի վասն ծերութեանն մի աշխատ լիցի ճանապարհորդել 'ի Պետրբուրգ, զի մի հիւանդութիւն ինչ պատահեսցէ կամ արկած չարադէպ. այլ փոխանակ իւր առաքեսցէ զոմն յարքեպիսկոպոսաց օծանել զկայսրն. և կայսրն ընկալցի զեպիսկոպոսն զայն՝ իբրեւ զնոյն ինքն զկաթողիկոսն Հայոց.

Ընթերցեալ զայս թուղթ Ներսէս կաթողիկոս, ծանեաւ իսկ և իսկ, զի խաչիկ Լազարեան ձեռնարկեաց զայս հնար, քաղաքականութեամբ արգելուլ զնա յերթալոյ յօծումն կայսեր. և յանդէտս եղեալ խորամանկ հնարիցն՝ առաքեաց իւր փոխանորդ զհաւատարիմ իւր զՍարգիս արքեպիսկոպոս Հասանջալալեան զայն խորախորհուրդ, տուեալ նմա զշնորհաձիր կոնդակ օրհնութեան և բարեմաղթութեան վասն Աստուածընտիր կայսերն և ամենայն տան նորա. և նորա գնացեալ և տուեալ զկոնդակն, պատուեցաւ ըստ իւրում բարուցն, և ընկալաւ զնշան ասպետութեան որբոյն Աննայի, և յետ կա-

տարելոյ զծածումն կայսերն՝ վերադարձաւ պատուով առ կաթողիկոսն հանդերձ ընծայաբեր թղթով շնորհակալութեան և առաջին կարգի զանազան նշանաց ։

(Զայս պատմութիւն ինքն իսկ Մատթէոս եպիսկոպոս պատմեաց մեզ 'ի սուրբ Էջմիածին յաւուրս Մատթէոսի կաթողիկոսի, որում ընդ առաջ եկն, մինչ գայրն 'ի Կոստանդնուպօլսոյ, և հանդիպեցաւ մեզ մերձ 'ի ծովն Գեղամայ, և եկն ընդ մեզ 'ի սուրբ Էջմիածին, և գտաւ ներկայ 'ի ժամ օծմանն նորա 'ի փառաւոր հանդիսին )։

Ի սմին ամի սաստիկ և անտանելի ցուրտ եղեւ յԵրեւան և 'ի սուրբ Էջմիածին, բայց ոչ այնչափ նեղեցան միաբանք սուրբ Էջմիածնի, զի որքան հայրապետն իւրով բնածին նախատեսութեամբ հոգացեալ էր 'ի ժամանակին զամենայն կարեւոր պիտոյս միաբանութեանն ։

## ԳԼՈՒԽ ԾԷ.

Յաղագս հերձուածոյ բողոքական Հայոց.

(1846) Առաջին գործ Մատթէոս պատրիարքին եղեւ հանգել և դարձուցանել զմոլորեալսն 'ի ժողովրդենէ իւրմէ, որք որսացեալք էին 'ի ծուղակ երիցական աղանդոյն Ամերիկացւոց թելադրութեամբ և քարոզութեամբ Միսիոնարաց նոցին՝ այսինքն քարոզչաց, որք երեքտասան ամօք յառաջ եկեալք 'ի Կոստանդնուպօլիս յաւուրս Ստեփաննոսի պատրիարքին, ցուցանէին զինքեանս և հաւատարմացուցանէին լինել քարոզիչ Հրէից և հեթանոսաց, և զՀայս ջանադրէին լինել ուղղափառ և ճշմարիտ քրիստոնեայ ։

Իսկ 'ի վերջոյ ուր ուրեմն յերեւան ել բանն և խարդախութիւն նոցա, որ ոչ այնչափ զՀրեայս և զհեթանոս կամին 'ի հաւատս ածել քրիստոնէութեան, որչափ զՀայս դուն գործեն մոլորեցուցանել զհետ աղանդոյն իւրեանց. և զայս դի-

տուութիւն իւրեանց երիւք եղանակօք խորհեցան յառաջ տանել։

Առաջինն, երթեւեկէին 'ի տունս Հայոց բարեկամաբար, և զպարզամիտս յանկուցանէին 'ի հաղբս մոլորութեան իւրեանց։ Երկրորդն, աղքատաց և պարտատեարց օգնէին, ոմանց առատապէս, և ոմանց պատրաստ դրամովք։ Երրորդն, բացին գիշերօթիկ դպրոցս 'ի Պերա և 'ի Պէպէք գիւղ յուսումն Գաղղիերէն և Անգլիերէն լեզուաց, և թուաբանութեան և աշխարհագրութեան, և բնական գիտութեանց, յորս ձրիաբար սկսան ուսուցանել։ Եւ բազումք 'ի Հայոց ետուն զմանկունս իւրեանց միամտութեամբ, որք ընդ ուսմանցն գիտցին և թոյնս մոլար՝ քարոզութեան նոցին, և եկեալ 'ի տունս իւրեանց՝ սկսան զծնողս և զազգականս մոլորեցուցանել։

Եւ նախ 'ի փոքունցն սկսեալ, հետզհետէ 'ի մեծամեծս ձեռն արկին յանդգնիլ և ջնջել. և 'ի վերջոյ յայտ յանդիման համարձակեցան քարոզել, նախ՝ թէ ամենայն գիրք և մատեանք սրբոց հարց անընդունելիք են բաց յԱւետարանէն, որով և զինքեանս Աւետարանականս կոչէին։

Երկրորդ, եկեղեցին Քրիստոսի է անտեսանելի, և չիք երեւելի եկեղեցի։

Երրորդ, ուրանային զսուրբ խորհուրդս եկեղեցւոյ. չորրորդ՝ զգոյափոխութիւն պատարագին 'ի մարմին և յարիւն Քրիստոսի. հինգերորդ՝ զբարեխօսութիւնն սրբոց, վեցերորդ՝ զմիշտ կուսութիւնն Աստուածածնին մինչեւ ցմերափոխումն. եօթներորդ՝ զխոստովանութիւն մեղաց առաջի քահանային. ութերորդ՝ զերկրպագութիւն խաչին. իններորդ՝ զյարգութիւն պատկերաց և սրբոց մասանց. և տասներորդ՝ զպահս և զայլ կանոնս սուրբ եկեղեցւոյ։ Համարձակեցան և յաղագս այսորիկ տետրակս յօրինել և ջանալ հաստատել զմոլորութիւնս զայսոսիկ, զբանս Սուրբ գրոց թիւր մեկնելով և այլ ընդ այլոյ բացատրելով։

Իսկ Մատթէոս պատրիարք կամելով նախ և յառաջ գիտնալ զհաշիւ սոցա, թէ քանի՞ք ոմանք եղեալ են մինչեւ ցայնժամ 'ի մեր ազգէ մոլորեալք և զակատեալք զհետ սխալ ա-

զանգուածն այսորիկ, 'ի գտան ութ հազարիւ չափ հաշուեալք 'ի տումարաց ծխատէր քահանայից կոստանդնուպօլսոյ և գիւղօրէից նորին, յորմէ սկսեալ էր ճարակիլ և 'ի կողմանս Անատօլուի և Բումէլիի, 'ի Կեսարիա, 'ի Նիկոմիդիա և 'ի գիւղօրէս նորուն, 'ի Թէքիրտաղ, և այլուր:

Եւ սկսաւ 'ի ձեռն խուրջինչիր քահանայից հրաւիրել զմոլորեալսն դարձուցանել առ ինքն, զորս պատուասիրութեամբ ընկալեալ, բանայր զխօսս և հարցանէր, թէ զի՞րդ մեկնեալ 'ի մայրենի ծոցոյ եկեղեցւոյն իւրեանց՝ զանկառեալ են զհետ մոլար աղանդոյն, և եգիտ զբաղում, որք արծաթով խաբեալք էին աղքատութեան պատճառաւ և անճարակս առնուին. և ոմանք 'ի պարտուց իւրեանց դրամովք նոցին զերծեալք, պարտաւորեալ էին զհետ երթալ նոցին:

Զայսոսիկ առուգեալ և սիրելիացեալ, և 'ի տումարի արձանագրեալ, ինքն իսկ խոստացաւ տալ զամսականն զայնոսիկ, որք մեծաւ շնորհակալութեամբ և ուրախութեամբ դիմեցին առ քահանայս իւրեանց, և խոստովանեալք ապաշխարեցին. և այսու եղանակաւ թիւ մոլորելոցն յութ հազարէն էջ յերիս հազարս:

Իսկ նոքա՝ որք պարզմտութեամբ խաբեալք էին մոլորեցուցչաց, կամապաշտութիւն համարելով զյարգութիւնն պատկերաց և զբարեխօսութիւնն սրբոց՝ համոզեալք 'ի քարոզութենէ սրբազան պատրիարքին, որ յամենայն կիւրակէս ժամս երկուս և երիս խօսէր յատենի սուրբ եկեղեցւոյ, և հաւանեցուցանէր զնոսա 'ի սուրբ գրոց, թողին զառարկայս իւրեանց, և դարձան յեկեղեցի իւրեանց հոգևոր մխիթարութեամբ:

Եւ վասն նոցա որք վիճաբանել կամէին 'ի վերայ խնդրոցս այսոցիկ, որոշեաց զանձնեակ մի 'ի Մայր եկեղեցւոջ, և եդ 'ի նմա զվարժապետն Յովհաննէս Տէրոյէնց զայն բազմահմուտ և լեզուագէտ, և հրամայեաց, զի որ ոք ունիցի տարակուսական խնդիր ինչ և վիճել կամիցին, գնասցէ առ նա, գրեսցէ զխնդիրն, և գրով առցէ զպատասխանին. և այսու եղանակաւ հազարք ևս շահեցան, և մնաց թիւ մոլորելոցն հազար հինգ հարիւր:

Յայսմ միջոցի եկն դարձեալ 'ի կոստանդնուպօլիս Վըր-

թանէս անուն քահանայն Նիկոմիդացի, որ ամօք յառաջ եւս եկեալ էր, և քարոզէր զմոլորութիւնս աղանդոյս այսորիկ 'ի սրճանոցս և 'ի շուկայս։ Լուեալ զայս Մատթէոս պատրիարք, ետ բերել զնա առ ինքն, և նստուցեալ առաջի իւր քաղցրութեամբ և սիրալիր բանիւք, եհարց զորմէ լուեալն էր։ Եւ նա ոչ ամօթ համարեցաւ գրել զամբարշտութիւնս իւր, և յայտնի անպատրուակ բանիւք ուրացաւ զխորհուրդս սուրբ եկեղեցւոյ, զգոյափոխութիւն սուրբ Պատարագին, զմիշտ կուսութիւն Տիրամօրն մինչեւ ցվերափոխումն, և զխոստովանութիւն մեղաց։ Անարգեաց և զյարգութիւն պատկերաց և սրբոց մասանց, և յաւել ասել, թէ յարգ և պատիւ խաչափայտին՝ որում դուք երկիրպագանէք, մի և նոյն է առաջի իմ ընդ այլ ամենայն փայտից՝ որք զետեղեալք կան 'ի խանութս ատաղձավաճառաց։

Յայնժամ Մատթէոս պատրիարք քաղցրութեամբ խրատել կամելով զնա, խօսեցաւ նմա ժամս երկուս 'ի սուրբ գրոց, և յորդորեաց հնազանդիլ սուրբ եկեղեցւոյ, պահել անխախտ զհայրենաւանդ ուղղափառութիւն հաւատոյն Քրիստոսի, և միջնորդ և բարեխօս ունել զԱստուածամայրն հաւատալով ըզ միշտ կուսութիւն նորա անարատ մինչեւ ցվերափոխումն։

Պատասխանի ետ ամբարիշտն և ասէ, առ իմ՝ այդչափ յարգ և պատիւ տայք կնոջ միոյ։

Ընդ հայհոյել նորա զայս, փոխանորդ պատրիարքին Թադէոս վարդապետ այր ջերմեռանդ և խստակրօն՝ որ կանգնեալ կայր ընդ մեզ առաջի պատրիարքին և ունկն դնէր, 'ի լսել նորա զայս ամբարշտութիւն վաղեաց 'ի դուրս, և խնդրէր փայտ խաչոյ, բիր, կամ երկաթ ինչ հարկանել զգլուխ ամբարշտին և սատակել զնա 'ի նոյն տեղւոջն։

Յարեաւ պատրիարքն և ասէ ցամբարիշտն, կորիր և փախիր անզգամ, և ինքն ելեալ արտաքս 'ի սենեկէն, գրկեաց զԹադէոս վարդապետ, և աղաչէր զնա համբերել։ Իսկ նա խռովեալ և ցասուցեալ անհնարին զայրացմամբ, գոչէր և աղաղակէր, սատակեցից զամբարիշտս զայս յերկրէ, և հեղցէ արիւն իմ առաջի դրան պատրիարքարանիս 'ի փառս սուրբ Աստուածամօրն։

Եւ 'ի միջոցի յայսմիկ խոյս ետ անզգամն, բայց լռելի եղեւ արտաքս այս ձայն, և 'ի յաջորդ աւուրն եկեղեցպանք և պատուաւոր անձինք բազումք եկին առ պատրիարքն, բողոք բարձին զամբարշտութեանց զոյնոցիկ, և ասեն. Հայր սրբազան, ամբարիշտքս այսքիկ հանապազօր քարոզեն 'ի սրճատունս և 'ի շուկայս զանհաւատութիւն իւրեանց, և զՀայս կռապաշտս կոչեն և մոլորեալս, և յարուցանեն խռովութիւնս մեծամեծս, զի ողէտք մեր՝ որպիսիք են ջրհանակիրք և նաւավարք, գոլով ջերմեռանդ 'ի հաւատս իւրեանց պատասխանեն նոցա անլուր հայհոյութեամբ. Եւ ո՞ գիտէ, գուցէ և յաւուր միում արբեալ ոմն 'ի ջրհանակրաց ոչ կարելով համբերել, հարցէ զնոսա սրով կամ քարամբք և սպանցէ, և յայնժամ զի՞նչ լինիցի, ո՞չ ապաքէն դեսպանք Անգլիոյ և Ամերիկոյ յայնժամ ամբաստանեն զմեզ առաջի տէրութեան, թէ Հայք բարբարոսք են, և զբողոքականսն սպանանեն, եւ այլն.

Արդ քեզ մնայ սրբազան հայր՝ նախատես լինել չարափախման աղետիս, և հնարս գտանել, զի Հայք չխօսիցին երբէք ընդ նորաղանդիցս, և 'ի տունս և 'ի խանութս նոցա չմտանիցեն առեւտրութեան աղագաւ. ահա մեք պատմեցաք ձեզ զամենայն զոր տեսանեմքս հանապազօր. քեզ մնայ հոգալ և անօրինել զարժանն և զիրաւունսն.

Յետ մեկնելոյ նոցա զմտաւ ածեալ Մատթէոս պատրիարք, գրեաց և հրաւիրեաց զսրբազան Կարապետ նախորդ պատրիարքն՝ որ նստէրն յՈւսքիւտար, և զՅովհաննէս արքեպիսկոպոս փոխանորդն սուրբ Երուսաղէմի, և զԹէրունին Յովհաննէս վարդապետ դպրապետն Խասգիւղի, և պատմեաց նոցա մի առ մի զեղելոյն ամենայն. և խորհուրդ արարեալ ընդ նոսա, միաբան մտօք և ստորագրութեամբ յառաջակայ կիւրակէին յայնմիկ ընթերցաւ կոնդակ բանադրանաց յամենայն եկեղեցիս կոստանդնուպօլսոյ 'ի յունվարի 12, 1846.

Առաքեաց և զօրինակ կոնդակին յԱնատօլու և 'ի Ռումէլի 'ի զգուշութիւն պարզամիտ ժողովրդեան Հայոց՝ ըստ այսմ օրինակի.

« Ի Տէր Մատթէոս արքեպիսկոպոսէ և պատրիարքէ մե-
« ծի մայրաքաղաքիս կոստանդնուպօլսոյ, համօրէն եկեղե-

« ցական հոգևոր պաշտօնէից 'ի Քրիստոս, և համայն հայ-
« կազուն ժողովրդոց մերոց՝ ողջոյն 'ի Քրիստոս Յիսուս։

« Հոգւոյն սրբոյ շնորհաց անօթն ընտրեալ՝ սրբազան ա-
« ռաքեալն Պօղոս բարիոք խրատէ զպաստառս եկեղեցւոյն
« Աստուծոյ ըստ ամենայն կարգի և աստիճանաց, թէ որպէս
« պարտ է կալ եկեղեցականաց 'ի հաւատս և 'ի վարս սրբու-
« թեամբ և անարատութեամբ. որպէս պարտ է երիցանց և
« քահանայից՝ որք պաշտօնեայք են աստուածային սուրբ
« խորհրդոյն՝ սնանիլ բանիւք հաւատոց, և լինել օրինակ հա-
« ւատացելոց բանիւք՝ գնացիւք՝ սիրովք՝ հաւատովք՝ և սըր-
« բութեամբ. չառնել անփոյթ զշնորհացն Աստուծոյ, որ տը-
« ւաւ նոցա 'ի ձեռնադրութենէ երիցութեան, և զգուշանալ
« անձանց և վարդապետութեան իւրեանց, որովք կարասցեն
« ապրեցուցանել զանձինս իւրեանց և զայնոցիկ՝ որք նոցա
« լսեն։

« Զայս ամենայն բարիոք աւանդէ սրբազան առաքեալն
« գրելով առ Տիմոթէոս, Ա. Ե. « Յիշեցուցանեմ՝ քեզ որդեակ
« իմ Տիմոթէէ՛ արծարծել զշնորհսն Աստուծոյ՝ որ են 'ի քեզ
« 'ի ձեռնադրութենէ իմմէ. զբարւոք աւանդն պահեսջիր 'ի
« ձեռն Հոգւոյն սրբոյ 'ի մեզ բնակելոյ, փութասջիր զանձն
« քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ա-
« մօթոյ, ուղիղ հատանել զբանն ճշմարտութեան, յայդ
« խորհեաց և 'ի դոյն կանխեսջիր ով Տիմոթէէ, և պահեա
« զաւանդն խոտորեալ 'ի պղծոց և 'ի նորաձայն բանից և հա-
« կառակութեանց »։

« Բայց այժմ 'ի յետին ժամանակս ըստ հոգեշունչ մարգա-
« րէութեան առաքելոյն վրիպեցան ոմանք 'ի սուրբ հաւա-
« տոյն՝ խոտորեալք յամբարշտութիւնս և 'ի մոլորութիւնս գի-
« ւաց, կեղծաւորութեամբ ստաբանք, պատրեալք իւրեանց
« խղճիւն մտաց, և զհետ երթեալք չար բաղձանաց իւրեանց
« կործանին յառասպելս նորաձայն հակառակութեանց և մո-
« լորութեանց։

« Յորոց մին է այժմ 'ի մերում ազգիս չիք և թշուառ Իգ-
« նիմիոսի Վրթանէս անարժան քահանայն ձեռնադրեալ 'ի
« վաղ ժամանակաց 'ի վերայ եկեղեցւոյն Իզմիրու 'ի հոգե-

«լոյս Պօղոս արքեպիսկոպոսն յառաջնորդէ նորին խոկ քա-
«ղաքի։ Սա՝ ընդ մարմնաւէր և զերծ բնաւորութեան բա-
«րուցն թողու զեկեղեցի և զպաշտօն իւր սուրբ, սա անդ-
«թափառեալ թէ 'ի մայրաքաղաքիս և թէ յիզմիրիա, բար-
«բանջէ մոլորութիւնս անվայել իւրումն սուրբ կարգի և պատ-
«ուոյ, և լինի պատճառ գայթակղութեան բազմաց, և մերժ-
«եալ յանձնէ իւրմէ բողոքալին զհաւատոյն սրբութիւն՝ զոր
«ընկալեալն էր 'ի սուրբ և ուղղափառ եկեղեցւոյս Հայաստան-
«եայց, հետևի մոլար վարդապետութեան նորաղանդից, և
«սկսանի մոլորութիւնս քարոզել յիզմիրիա, և 'ի կեսարիա,
«յԱրեւելս, և 'ի կոստանդնուպօլիս, և յամենայն տեղիս ուր
«և կոխեալ են ամբարիշտ ոտք սորին, և ընկզմել զպարզա-
«միտ ժողովուրդս 'ի կորուստ հոգւոյ։ Եւս այսր ամենայնի
«'ի գալ նորին դարձեալ 'ի կոստանդնուպօլիս, կոչեցաք առ
«մեզ սիրով, և բազում անգամ խօսեցեալ ընդ նմա յորդո-
«րանօք և քաղցրութեամբ, առաջի արարաք նմա զհոգեշահ
«խրատս պիտանիս և օգտակարս՝ մերկանալ յինքենէ զամ-
«բարշտութիւնս մոլորական ընթացից իւրոց, և զգենուլ ըզ
«լուսափայլ զգեստ սուրբ և ուղղափառ վարդապետութեան
«եկեղեցւոյս Հայաստանեայց։

«Այլ նա յամառեալ 'ի չարիս իւր ըստ օրինակին Յուդայի՝
«որ ոչ անսայց Աստուածային վարդապետութեան կենարարին
«մերոյ Յիսուսի, զոր 'ի դէմս այլոց առաքելոց ասէր վասն Յու-
«դայի, «Բայց վայ մարդոյն այնմիկ յոյր ձեռն որդի մարդոյ
«մատնեսցի, լաւ էր նմա, թէ չէր ծնեալ մարդն այն»։ զայս
«ոչ լուաւ Յուդա, և ոչ կամեցաւ խորհել 'ի վերայ բանիս, զի
«ոչ կամէր թողուլ զչարութիւն իւր, զոր հանդերձեալն էր առ-
«նել։ Նոյնպէս և սա ոչ կամելով մերժել յանձնէ իւրմէ զգի-
«տակն հոգին, առ հասանել չար բաղձանաց իւրոց՝ մերժ-
«եալ զսուրբ շնորհսն Աստուծոյ, զոր ընկալեալն էր 'ի ձեռ-
«նադրութենէ իւրմէ։ Արհամարհեաց զուխտն սուրբ, զոր
«ուխտեաց Աստուծոյ ընդ առնուլն զսուրբ կարգն քահանա-
«յութեան. ուրացաւ զեկեղեցին Քրիստոսի՝ որ ծնաւ զնա,
«և զաւազանն սուրբ՝ որ ընկալաւ զնա յորդեգրութիւն Հօրն
«երկնաւորի։ Եւ զայս ամբարշտութիւն իւր ոչ 'ի գործոց և

« 'ի բանից խորոց և եթ եցոյց յանձին, այլ և յիւրում խոկ ձե-
« ռագրի՝ զոր ունիմք առ մեզ, ժայթքեալ է յայտնապէս
« զոր ունէր 'ի սրտին, զմաղձն դառնութեան.

« Եւ որովհետեւ մոլորեցուցիչս այս ջան գործէ մտանել
« 'ի տանէ 'ի տուն, և ճանապարհորդել այսր անդր, և պատ-
« րել զպարզամիտ ժողովուրդս մեր 'ի կորուստ հոգւոյ, վասն
« որոյ փութալով զգուշացուցանել զհաւատացեալ սիրելիդ
« իմ, յիշեցուցանեմ՝ ձեզ ահա զբան առաքելական խրատուն,
« զոր գրէ առ Տիտոս Գ. 10. « Թէ յառնէ հերձուածողէ յետ
« միանգամ և երկիցս խրատելոյ հրաժարեսջիր, գիտասջիր,
« զի թիւրեալ է այնպիսին, և մեղանչէ՝ անձամբ զանձն դա-
« տապարտեալ «. զի եթէ արհամարհեալ ուրուք զօրէնս
« Մովսիսի մեռանէր առանց ողորմութեան, ապա որչափ
« առաւել պատժոց արժանի համարիջիք զայն, որ արհամար-
« հէ զանարատ հարսն Քրիստոսի զսուրբ եկեղեցին: Ահա մո-
« լորեալ է այրս այս՝ որպէս կամաւ և յօժարութեամբ իւ-
« րով 'ի միութենէ եկեղեցւոյն Քրիստոսի, թշնամի սուրբ ե-
« կեղեցւոյ և պատուիրող անդամոց նորին, գայթակղեցուցիչ
« և մոլորեցուցիչ ժողովրդեան, մատնիչ և սպանող Քրիստո-
« սի, որդի սատանայի, և ծնունդ Նեռին, վատթարագոյն
« քան զանհաւատս և զհեթանոսս, որ հաւատացեալ անուամբ
« կեղծաւորելով ուսուցանէ զամբարշտութիւնս և զմոլորու-
« թիւնս Նորաղանդից.

« Վասն որոյ ըստ հրամանի Տեառն, թէ զգոյշ լերուք 'ի
« սուտ մարգարէից, որք գան առ ձեզ հանդերձիւք ոչխա-
« րաց, և 'ի ներքոյ են գայլք յափշտակողք, որք ոչ խնայեն
« հօտին «: Մատթ. Է. 15.

« Ահա սա է գայլ յափշտակող և պատառող, որ հան-
« դերձիւք ոչխարաց՝ այսինքն քահանայական պարկեշտու-
« թեան կերպարանօք գայ առ ձեզ պատառել և յափշտակել,
« և զանմեղ գառինս զմանկունս սուրբ եկեղեցւոյ մերոյ ան-
« խնայ կեղեքել չար և դժոխային սատանայիւք ախտիւ բերանոյ
« իւրոյ: Վասն որոյ մերժեցաք զդա և արգելաք մտանել 'ի
« խումբս հաւատացելոց մերոց իբրեւ զսատանայ և որդի սա-
« տանայի, և կտրեցաք զքահանայութիւն սորա ընդ մէջ՝ բա-

«նին տառածոյ, իբրեւ զհատեալ անդամ 'ի խորհրդաւոր
«մարմնոյն Քրիստոսի, եւ իբրեւ առ հատեալ 'ի հօտէն՝ որ
«առ ոչինչ է պիտանացու՝ բայց միայն 'ի հուր։
«Ուստի այսու աղդարարական կոնդակաւ պատուիրեմ եւ
«զգուշացուցանեմ զսիրելիսդ իմ հրատարակելով առ ամե-
«նայն քաղաքս հեռաւորաց եւ մերձաւորաց, չհայիլ յերեսս
«սորա իբրեւ յերեսս Բելիարայ. չընդունիլ զսա 'ի տուն
«տուն ձեր իբրեւ զանաւեր գայլ յափշտակող, չառնուլ
«զողջոյն սորա իբրեւ զհոգեկորոյս մահաբեր, եւ զգուշանալ
«հանդերձ ամենայն սրտիւք ձերովք 'ի այնպիսի մոլորեցու-
«ցիչ ամբարիշտ հետեւողաց մոլար վարդապետութեան նոր-
«աղանդից, եւ աղօթս առնել վասն սորա առ անյիշաչարն Աստ-
«ուած, զի թերեւս զղջասցին եւ դարձցին 'ի ճանապարհաց
«իւրեանց չարաց, եւ գտցեն փրկութիւն հոգւոյ իւրեանց,
«շնորհօք Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ է
«օրհնեալ անսպառ յաւիտեանս, ամէն։
«Գրեցաւ յայտարարութեան կոնդակս ընդ հովանեաւ
«Մայր եկեղեցւոյ սուրբ Աստուածածնին 'ի Պատրիարքարանի
«Հայոց, յամի Տեառն 1846 'ի յունվարի 12, 'ի Կոստանդ-
«նուպոլիս»։

Յետ բանադրելոյ Մաթէոս պատրիարք զերեքն վրդա-
նէս, բանադրեաց եւ զյանմառեալ գլխաւոր արբանեակս նո-
րին, որոց անուանքն են այսոքիկ. անհաւատ Յակոբ, Գա-
մաղիէլեան երկու եղբարք Պօղոս եւ Յովսէփ, Աբրահամ երա-
ժիշտ, Միքիքէլեան Կարապետ, Քէրէստէճեան Սահակ. որք
յետ սակաւ ինչ ժամանակի վճարեցան 'ի կենաց արտաքոյ կար-
գի հիւանդութեամբ, բառ վկայելոյ Լէոնի բժշկի նոյին խո-
րով ձեռագրով, զոր գրեաց առ Մաթէոս պատրիարք,
յորում ասաց, թէ անհաւատ Յակոբին լեզուն կապեցաւ
զաւուրս երիս եւ ոչ կարէր խօսել, յետ երից աւուրց բացաւ
լեզուն, եւ սկսաւ հայհոյել զԱստուած թէ ընդէ՞ր առեր
զիս, եւ 'ի հայհոյելն՝ փչեաց զոգին։

Գամաղիէլեան Պօղոսի որովայնն կապեցաւ անլուծանելի
հանդուցիւք, եւ կարիք որովայնին ընդ բերանն 'ի վեր հորդ-
եալ խեղդեցին զնա։

Յակոբի եղբայր նորին փոխեցաւ 'ի կղզի օդափոխու-թեան աղագաւ փսխէ զարիւն յորդ․ և խեղդամահ լինի․

Նրամիջա Աբիսողոմ՝ ընդոստուցեալ 'ի վեր յանկարծոյն հար-կանէ զգլուխ իւր չորից անգամ յերկաթի ծխնելոյզ վառա-րանին, և պատառեալ զգլուխն ցրուէ զուղեղն, և անկանի յերկիր մեռեալ․

Միրիքէլամ՝ կարապետ յառից մինչ ցգլուխ վիրօք լցեալ, ժահահոտեալ որդնալից եղեւ զաւուրս եօթն, և սատակ-եալ չեղեւ արժանի թաղման 'ի գերեզմանատան Հայոց, և ե-ղեւ պատճառ մեծի խռովութեան, զորմէ ունիմք խօսել այլուր․

Սանեփան Փէրէատէճեան՝ որ գլուխ կարգեցաւ նորադարձից արքունի հրամանաւ, զճաշակ գժոխոյն յառաջ էառ անձնասպանութեամբ 'ի կախաղան ելեալ և հրակէզ լեալ ա-մենայն տամբ իւրով․ զորմանէ ևս ունիմք խօսել 'ի տարբե․

Բանադրեալքս այսոքիկ 'ի մի վայր եկեալ և խորհուրդ խորհեալ, եդուն աղերսագիր առ նախարարն արտաքին գոր-ծոց Րէշիտ փաշա և առ դեսպանն մեծ՝ բողոքելով զպատրի-արքէն Հայոց, թէ բանադրեաց զմեզ վասն չընդունելոյ մեր զպատկերապաշտութիւն, և զխոստովանութիւն մեղաց, բայց վանեաց զնոսա Րէշիտ փաշա անարգանօք մեծաւ․

Յայնժամ և նոքա անկան աղերսանօք առ դեսպանն Ամե-րիկացւոց առաջնորդութեամբ Միսիոնարաց նոցին, և աղա-չէին լինել պաշտպան ինքեանց, և հանել զինքեանս 'ի հպա-տակութենէ պատրիարքին Հայոց․

Եւ նորա գնացեալ առ Քանինկ դեսպանն Անգղիացւոց բողոքէ զպատրիարքէն Հայոց՝ մեղս ծանունս դնելով 'ի վերայ նորա, և թէ նզովեալ է զնուաստր և զկրօն բողոքականաց և զեկեղեցի նոցա․

Լսելով բանադրելոցն, թէ դեսպանն Ամերիկացւոց գնա-ցեալ է առ Քանինկ վասն բողոքելոյ զպատրիարքէն Հայոց, և վասն համարձակ քարոզելոյ ինքեանց զպիղծ աղանդ իւրեանց 'ի մէջ ազգիս, փութացան և ինքեանք 'ի նմին աւուր գիր ա-ղերսանաց մատուցանել առ Քանինկ չարախօսելով և զրպար-տելով զՄատթէոս պատրիարքէն, թէ վասն պաշտելոյ մեր

տակին հաւատոյ Լուսաւորչականութեան բանադրեաց զմեզ և հրապարակեաց նզովս 'ի վերայ Լուսաւորչականութեան առ ամենայն քաղաքս յԱնատոլու և 'ի Ռումէլի. տանուտէրք մանեն զմեզ 'ի տանց իւրեանց արտաքս՝ մեղս համարելով ընտկիլ ընդ մեզ վասն բանադրեալ լինելոյ մեր, և մեծամեծք արտաքս 'ի փողոցի ընտանեօք մերովք. խանութպանք և արհեստակիցք մեր ոչ ընդունէին զմեզ 'ի խանութս իւրեանց, և չտային զհաց և զջուր, որով և ոչ կարեմք հայթհայթել ըզպարէն աւուրն, և կամք կարօտեալ և սովալլուկ որդւովք և ընտանեօք. Նաև հրամայեալ է չիշխանակրաց և բռնակալաց անզգամից, զի եթէ պատահեսցին մեզ 'ի գաղտնի տեղւոջ արկեք յառանձին փողոցի, գանեսցեն զմեզ անխնայ. վասն որոյ փակեալ կամք 'ի տան, և երկնչիմք ելանել արտաքս։ Զայսպիսի և որ սոցին նման են սուտ և անիրաւ զրպարտութիւնս, համարարգեալ յաղերսագրին մատուցին խոհեմին առ Բանբինեկ անդ 'ի Ներկայութեան դեսպանին Ամերիկացւոց։

Հաստատեալ այսպիսի Բանբինեկ, զայրանայ և բողոքէ առ Րեշիտ փաշա յանէն, թէ "Ո՞ւսա՞լ իցէ համարձակութիւն պատրիարքին Հայոց նզովել զհաւատս և զկրօն մեր. մինթէ այսքան անարգ եղեւ Թագաւորութիւն Անգղիացւոց, զի խայտառակեսցին հաւատք իւր ընդ ամենայն Տաճկաստան յատենի եկեղեցւոյ։

Առաքեաց առ Րեշիտ փաշա և զբանադրեալն զգուշոկ հանդերձ աղերսագրովն՝ զոր ետուն նոքեան, և հրամայեաց նոյա պատմել յանիսե բերանոյ զեղչանութիւն իւրեանց և զաղէտսն՝ զոր կրեն 'ի պատրիարքէն, և խնդրել, զի թոյլ տացէ նոքեանց համարձակ պաշտել զկրօն իւրեանց յՕսմանեան թագաւորութեան։

Գնացեալ նոցա 'ի Բ. Դուռն, մտանեն 'ի սենեակ Րեշիտ փաշային, և տեսանեն անդ զՄագաւա ամիրայ բարձեալ յաթոռի. ընթերցեալ փաշային զաղերսագիրն, հարցանէ ցնոսա և ասէ, եթէ գանկատ և բողոք ունէիք զպատրիարքէն ձերմէ, ընդէ՞ր ոչ եկիք այսր ծանուցանել ցմեզ. և գնացիք առ դեսպանն գլխացաւ տալ նմա։

Եւ մի ոմն 'ի նոցանէ Մկրտիչ անուն պատասխանէ անքա-

զաքավար բանիւք և ասէ, մեք զառաջինն եկաք առ ձեզ և աղաչեցաք, և դուք անտես արարիք զհայցուածովք մերովք. վասն որոյ պարտաւորեցաք երթալ թախանձել զդեսպանն, զի միջնորդ եղիցի վասն ազատութեան մերոյ։

Յայնժամ Բէշիր փաշա առ երեսս կեղծաւորի կատարել զհայցուածս նոցա, և արձակէ զնոսա քաղցրութեամբ, և խօսեցեալ ընդ Մագսուտ ամիրային վասն իրացս այսոցիկ, 'ի նմին գիշերի կոչէ զՄատթէոս պատրիարք 'ի տուն իւր, և պատմէ նմա զխօսս դեսպանին, և յանդիմանէ զնա վասն բանադրանացն։ Իսկ Մատթէոս պատրիարք պատմէ նմա զհայհոյութիւնս Վրթանէս երիցուն 'ի պատրիարքարանի, և զմոլար բարբանջմունս նորաղանդից, որք վեր 'ի վայր տապալել ջանան զազգ և զեկեղեցին Հայոց։

Զոր լուեալ Բէշիր փաշա՝ համոզեցաւ, և իրաւացի գտեալ զխոհեմութիւն և զգործս պատրիարքին, հրամայեաց նմա երթալ անձամբ առ Ֆանինկ դեսպան Անգլիացւոց, և պատմել նմա զամենայն որպէս պատմեաց ինքեան։

Երթեալ Մատթէոս պատրիարք անտի՝ գնաց 'ի Բերա 'ի տուն Միսաք ամիրայի, և հրաւիրեալ անդ զեպիսկոպոսն Անգլիացւոց, ընդ որում բարեկամացեալն էր յառաջագոյն, և պատմեալ նմա զայս ամենայն, աղաչեաց զնա 'ի միասին երթալ առ Ֆանինկ, և օգնել նմա 'ի խօսս։ Հաճեցեալ եպիսկոպոսին ընդ խնդիր պատրիարքին յանձն էառ. և առաքեաց զթարգման իւր առ Ֆանինկ ազդ առնել նմա, և խնդրել հրաման գալ առ ինքն ընդ պատրիարքին Հայոց, և խօսակից լինել զկարեւոր գործոյ ինչ։

Ընկալաւ դեսպանն զխնդիրն, և ժամադիր եղեւ յերկոտասաներորդ ժամու գնալ առ ինքն. և գնացին պատրիարքն և եպիսկոպոսն (ընդ որս և ես պատմիչս) 'ի պալատ դեսպանին, որ մեծաւ մարդասիրութեամբ ընկալաւ և պատուեաց յոյժ, և սկսան բանախօսել, և Մատթէոս պատրիարք պատմեաց նմա զամենայն որպէս պատմեալն էր Բէշիր փաշային և զհայհոյութիւնս երիցուն զկուսութենէ Տիրամօրն 'ի պատրիարքարանի, և զուրացութիւն երկուց սուրբ խորհրդոցն մկրտութեան և պատարագի, զորս ընդունին Անգլիացիք, և

մերժեն Ամերիկացիք, և եպիսկոպոսն Անգղիացւոց հաստատեաց զամենայն զբանս պատրիարքին, որպէս թէ խորհրդով իւրով արարեալ իցէ պատրիարքն՝ զոր ինչ արարեալն է։

Ընդ որ հաճեալ դեսպանին և համոզեալ, հրամայեաց թէյ և պաքսիմատ և +էյ+ շաքարեղէն ածել 'ի մեծարանս պատրիարքին, և կոչեալ զԲիզանի զաւագ թարգման իւր առ ինքն, հրամայեաց նմա երթալ 'ի փողին առ Բէյլիտ փաշա, և հասկացուցանել նմա, թէ անմեղ է պատրիարքն Հայոց զգործոց իւրոց՝ զորս արարեալ է. ուստի եթէ չարախօսք նորին եկեալ առ ինքն ամբաստանեսցեն զնմանէ, մի՛ հաւատասցէ նոցա, այլ վանեսցէ զնոսա անարգանօք և յանդիմանութեամբ։

Գնացեալ Բիզանի 'ի փողին առ Բէյլիտ փաշա, պատմեաց նմա զամենայն. և Բէյլիտ փաշա գովեաց զխոհականութիւն պատրիարքին Հայոց և զքաղաքավարութիւն նորա, և նորա զանդք զամօթի հարեալք խայտառակեցան անարգանօք, և բազումք 'ի նոցանէ զղջացան և դարձան յեկեղեցի իւրեանց և ապաշխարեցին, և որ քան զօր պակասեցաւ թիւ նոցա, և հաշուեցաւ ընդ ամենայն ինն հարիւր երկոտասան ոգիք։

Եւ յետ այնց ինչ յաւուրս Յակոբայ պատրիարքին դեսպանք Ամերիկոյ և Բրուսիոյ հաճեցուցեալ զԲամնինկ ընդ իւրեանս, խնդրեցին 'ի Բ. Դրանէն շնորհել բողոքական Հայոց զանկախութիւն զպատրիարքէն Հայոց. և Բ. Դուռն 'ի շնորհս նոցա անջատեաց զնոսա իբրև որոշ ժողովուրդ, տալով նոցա արքունի հրովարտակաւ զանկախութիւն զպատրիարքէն Հայոց, և եդեւ գլուխ նոցա Փէրէշտէճեան Ստեփան եղբայր Յակոբայ պատրիարքին Հայոց՝ մին 'ի բանադրելոց անտի, զորմէ գրեցաք 'ի վեր անդր. և եդաւ պատուանուն նոցա Լֆէնաի կամ Բրօդեսդան էֆէնտիսի։

Յաւուրս յայսմիկ նորոգեաց և Գերմանոս պատրիարք կոստանդնուպօլսոյ զաղանդն Լուտերի յառաւել կենդանի յամենայն եկեղեցիս Յունաց, նա և 'ի հեռաւոր քաղաքս յԱնատոլու և 'ի Բումէլի. բայց դատախազ եկաց դեսպանն Անգղիացւոց Քանինկ՝ գնացեալ անձամբ առ արքայ և բողոք բարձեալ. և հրամանաւ արքային ընկեցաւ Գերմանոս 'ի պատ-

րիարքութենէն· և յաջորդեաց նմա Մելետոս մետրապոլիտն Նիկիոյ, որ նորոգեաց զնոյն նշանն յաւուր մեծի Պենտեկոստէին 'ի պատարագելն յեկեղեցւոջ պատրիարքարանին.

## ԳԼՈՒԽ ԾԲ·

Յաղագս ընդունելոյ պատրիարքաց զադամանդեայ պատուանշանս յարքայէ, եւ այցելութեան առ խրեարս, եւ վերստին բացման ճեմարանին Խասգիւղու, եւ փոխման գլխաւորի եկեղեցականաց Հայոց, եւ առաքելոյ կաթողիկոսին զԳանակի առ Մատթէոս պատրիարք·

(1845) ՅԱՒՈՒՐՍ յայսմիկ արար արքայ հարսանիս քեռւրոյ Ատիլէ Սուլթանի, որ տուաւ 'ի կնութիւն Մէհմէտ Ալի փաշային· հանդէսն եղեւ յիւսքիւտար 'ի Հայտար փաշա ամարանոցն արքայի, որ տեւեաց զաւուրս եօթն։ Հրաւիրեցան 'ի հարսանիս և պատրիարքունս Յունաց, Հայոց և Հռովմէական Հայոց, և ռաբբին Հրէից· և յետ փառաւոր հացկերոյթին ներկայացան արքայի 'ի շնորհաւորութիւն և 'ի շնորհակալութիւն, որ խորալ մարդասիրութեամբն ընկալաւ զնոսա, և հրամայեաց փոխել զշքանշանս նոցա, և տալ զադամանդեայ պատուանշանն բարձր աստիճանի խորհրդականութեան (միւսթէշար փայէսի)·

Զայս առիթ առեալ 'ի ձեռին Մատթէոս պատրիարք, գնաց 'ի Պալոյգիւղ առ բարձրապատիւ ապարանեւ Ռիզա փաշայն 'ի շնորհակալութիւն վասն ընդունելոյն զպատուանշանն խորհրդականութեան, և աղաչեաց զնա շնորհել զճեմարանն Հայոց Խասգիւղու, զոր երկու ամօք յառաջ արարեալ էր տէրութիւնն հիւանդանոց արքունի զօրաց· Ի յաջորդաւուրն գնաց և առ Շէքիպ էֆէնտի նախարարն արտաքին գործոց, և զնոյն աղերս մատոյց նմա։ Եւ յետ քանի աւուրց ապարաքեան մեծ հանեալ զզօրականսն 'ի ճեմարանէն, զբանալիսն առաքեաց առ Մատթէոս պատրիարք, որ մեծաւ ու-

բախութեամբ ընկալեալ առաքելոց հրաման, և եւս որբել և մաքրել զճեմարանն, շինել և նորոգել զխլուզեալսն, և պատրաստել կահս և կարասիս, և յարդարել զամենայն պէտս նորին. և ժողով արարեալ ամիրայից և գլխաւոր արհեստաւորաց, տնօրինեաց առնուլ 'ի ճեմարանն զխուռն տղայս յաշակերտութիւն. որոց քառասունքն պարտին տալ 'ի տարւոջն կանխիկ մէն մի երեք հազար դահեկան, և զհանդերձս ամառան և ձմերան, և զգործիս ուսանելեաց. իսկ տասն տղայք յաղքատ գերդաստանաց լինիցին ձրի 'ի շնորհս ազգին. Ուսանելիք 'ի ճեմարանին նախ և առաջ քրիստոնէական վարդապետութիւն, քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, և Գաղղիերէն և Տաճկերէն լեզուք, և ուսումնապետ կարգեցաւ Տէրոյենց Յովհաննէս պատուելին. Ըստ այսմ կարգադրութեան բացաւ ճեմարանն 'ի 1 Հոկտեմբերի 1846, 'ի ներկայութեան սրբազան պատրիարքին, որ օրհնեալ զամենեսին, եդ վերատեսուչ փոխանորդ իւր զբարեպաշտ ազգասէր և ուսումնասէր Փօզօս աղա Պէտրոսեան Օտեան, և նմա յանձն արարեալ զամենայն կարգադրութիւնս, դարձաւ ինքն 'ի պատրիարքարանն.

Ի սոյն արքայի զպատուանշանս խորհրդականութեան պատրիարքայն, կոչեաց զնոսա առաջի իւր և ասէ, գոհ եմ զձէնջ, զի դուք ազգասէրք գովելի քաղաքականութեամբ և հեզահամբոյր բարուք պատուաւորէք և յարգէք զմիմեանս երկեւղածութեամբ և մեծարանօք, և ժողովուրդք ձեր օրինակ բարի առեալ 'ի ձէնջ, նոքին եւս սէր և պատիւ ցուցանեն առ իշխանս, և տիրէ սէր և խաղաղութիւն 'ի հպատակաց թագաւորութեանս իմոյ, և անհետ լինի կագ և կռիւ յամենայն կողմանց. Յուսամ, զի յայսմ հետէ եւս զայն եղբայրսիրութիւն ունիջիք միշտ առ իշխանս, որով և որ քան զոր բարեմասնական շնորհաց իմոց լինիջիք արժանի և ընդունօղ 'ի փառս Աստուածազօր թագաւորութեանս.

Պատրիարքն Յունաց ոչ դիմեալ խօսիլ համարձակ զՏաճկերէն բարբառն, միայն խնդրեաց առաջի արքային, և ինչ ոչ խօսեցաւ. իսկ Մանթէոս պատրիարք յերկիր խոնարհ-

եալ գոհ եղեւ զխնամոց մարդասիրութեան նորա, և օրհնեաց զարքայ և զորդիս նորա ամենայն բարեմաղթութեամբ, ընդ որ հաճեցաւ յոյժ արքայ։

Ելեալ յերեսաց արքային իջին 'ի վայր, և բազմեալ յուկեանձ երկվար դարձան մեծաւ շքով 'ի տեղիս իւրեանց։

Զայս հրաման արքայի առիթ համարեալ Մատթէոս պատրիարք, գնաց յԱրնաւուտ գիւղ առ Մելիտոս որբազան պատրիարքն Յունաց 'ի շնորհաւորութիւն պատուանշանին, և ընկալաւ ընդունելութիւն մեծ արժանաւոր յարգութեամբ և մեծարանօք։

Յետ երկուց աւուրց և Մելիտոս պատրիարք փոխադարձ քաղաքավարութեամբ եկն յայցելութիւն Մատթէոս պատրիարքին երկու եպիսկոպոսօք և վեց վարդապետօք. և նախ իջեալ 'ի Մայր եկեղեցին եւ յաւագ խորանն սուրբ և երկիր եպագ. և օրհնեալ զժողովուրդն եւ ապա 'ի պատրիարքարանն, և մեծարեցաւ յոյժ արժանաւոր յարգութեամբ։

Զայս լուեալ Անտոն Հասունեան պատրիարքն հռովմէական Հայոց՝ փութացաւ և նա 'ի յաջորդ աւուրն գալ 'ի պատրիարքարանն Հայոց յայցելութիւն. և եգիտ ընդունելութիւն 'ի Մատթէոս պատրիարքէ արժանավայել մեծարանօք։ Յիշատակութեան արժանի է այս, զի ոչ բաւեհաճեցաւ որբազան եպիսկոպոս մտանել յեկեղեցին մեր գոնէ տեսութեան եղանակաւ, որով գայթակղեցոյց զժողովուրդն Հայոց. և եղեւ պատճառ հայհոյութեան և տարապարտ բամբասանաց և անէրութեան։ Իսկ Մատթէոս պատրիարք առ ոչինչ համարելով զանվայել և զբռնաբարելի քաղաքականութիւն նորին, ընկերութեամբ եկեղեցական և աշխարհական յարգի անձանց դընաց առ նա 'ի փոխադարձ այցելութիւն, և մեծարեցաւ յոյժ։

Եկն և մեծ բարբին Հրէից 'ի պատրիարքարանն Հայոց յայցելութիւն վեց րաբունեօք և երեք ատենապետօք, և ետես պատիւ մեծ. վասն որոյ և Մատթէոս պատրիարք փոխադարձ այցելութիւն առ բարբին Հրէից, որ արժանավայել մեծարանօք ընկալաւ ընդ առաջ գնացեալ նմա մինչեւ 'ի դուռն տանն։

Այս երթեւեկութիւն և այցելութիւն պատրիարքաց առ-

իւրայս չէր երբէք եղեալ 'ի հին ժամանակս մինչեւ ցայն վայր . միայն փոխանորդք պատրիարքաց 'ի Զատկի և 'ի Ծննդեան երթեւեկէին առ իւրայս 'ի շնորհաւորութիւն . բայց պատրիարքունք ոչ եւս . յաւուրց անտի Ցաթիհ Մէհէմմէտայ' որ էառ զԿոստանդնուպօլիս 'ի ձեռաց Յունաց , և հաստատեաց անդ զպատրիարքութիւն Հայոց , չէ ուրուք լսեալ կամ ընթերցեալ 'ի գիրս , թէ պատրիարք Յունաց անձամբ յայց եկեալ իցէ 'ի պատրիարքարանն Հայոց , որ այժմ իբրեւ պարտք քաղաքականութեան պաշտի երթեւեկութիւն իւրեանց բանաւոր պատճառանօք կամ շնորհաւորութեան աղագաւ : Նա այժմ պատճառ եղեւ Մաթէոս պատրիարք , որ բարեմիտ քաղաքականութեամբ իւրով և խոհականութեամբ բարձրացոյց ըզպատիւ պատրիարքարանին Հայոց , որ լինել եղեւ առ որտարս , և սկսաւ գոլութեամբ հաշակիլ :

Յայն ամս և Ռուսաց կայսեր որդին բարձրապատիւ մեծ դուքսն Կոստանդինոս' որ յայն աւուրսն եկեալ էր 'ի Կոստանդնուպօլիս , լսելով զհամբաւ և զգովեստ Մաթէոս պատրիարքին , բարեհաճեցաւ գալ յայցելութիւն նորին . և նախ իջեալ 'ի Մայր եկեղեցին , մեծաւ ջերմեռանդութեամբ երկիր եպագ սրբոց խորանացն և համբուրեաց . և ապա ել 'ի պատրիարքարանն և համբուրեաց զաջ սրբազանին , որ արժանաւոր պատուով և մեծարանօք ընկալաւ զվեհափառ այցելուն :

Ընկերակից էին մեծ դքսին վսեմափայլ Րիֆաթ փաշայն 'ի կողմանէ արքայի և չորեքին հազարապետք , վսեմաշուք դեսպանն Ռուսաց , առաջին թարգման խանչէրլի պէյն , և չորեքին ատպետք Ռուս պաշտօնատարք , և Հայազգի պարոն Յովհաննէս Այվազովսքի երեւելի և քաջ ծովանկարն :

Յետ աւուրց ինչ գնաց օգոստափառ դուքսն Կոստանդինոս 'ի Պրուսա , իջեւանեցաւ զաւուրս երիս յառաջնորդարանին Հայոց , և ետես պատիւ և ընդունելութիւն մեծ . և 'ի դարձին իւր պարգեւեաց Գէորգ վարդապետի առաջնորդի քաղաքին մատանի ադամանդեայ հինգ հազար դահեկանաց արժէիւք , և հազար դահեկան աղքատաց առաջնորդարանին , և ոսկի տուփ մի թագթագեան Մարտիրոսի , որ թարգմանն էր անդ քօնսօլին Ռուսաց :

Զեւ էր անցեալ ամիս մի, և ահա եկն ՚ի Կոստանդնուպօլիս որդի թագաւորին Գաղղիոյ դուքսն Մօնփանսիէ. և լսելով, զի Ռուսաց կայսերորդին գնացեալ է յայցելութիւն առ Մաթէոս պատրիարք Հայոց, ինքն ևս սպաս քաղաքականութեան համարեցաւ երթալ առ նա. որ եկն ընդ դեսպանին Գաղղիոյ, և ընդ չորից երևելի պաշտօնատարց ընկերակցաց իւրոց, և համբուրեալ զաջ սրբազանին խօսակից եղեւ իբրեւ ժամ մի և կէս, և եսես պատիւ և մեծարանս արժանավայել յարգանօք, և դարձաւ ՚ի տեղի իւր. Սա լսելով ՚ի Մաթէոս պատրիարքէն զարատիկելի հրդեհն Զմիւռնոյ՝ ՚ի դարձին իւրում ՚ի Կոստանդնուպօլսոյ գնաց ՚ի Զմիւռնիա, և շնորհեաց աղքատաց հրկիզելոց ողորմութիւն հինգ հազար ֆրանգ։ Առաքեաց և զադամանդեայ տուփ մի մեծագին ՚ի ձեռն դեսպանին Գաղղիոյ առ վսեմափառ Յովհաննէս ամիրայ Տատեան՝ շնորհակալ լինելով զբազմաբարական մարդասիրութեանց նորա, որ պատուասիրեալ է զարքայազուն իշխանն յաւուրս քառասնօրեայ զգուշութեանն ՚ի հիւանդանոցին Այի Ստէֆանոյի ՚ի գալ նորին յայնժամ ՚ի Միջերկրական ծովէ։

Յաւուրս յայսոսիկ վախճանեցաւ Մելխոս պատրիարք Յունաց՝ կացեալ ՚ի պատրիարքութեանն զամս ութ. և յաջորդեաց նմա Անթիմոս մետրապոլիտն Կեսարիոյ, յորոյ ՚ի շնորհաւորութիւն գնաց Մաթէոս պատրիարք բազմութեամբ եկեղեցականաց, և պատուեցաւ մեծաւ յարգանօք։

Տեսեալ անդ Մաթէոս պատրիարք զգլխարկս քահանայից Յունաց, որք կանգնեալք էին ՚ի դրան պատրիարքարանին ՚ի պատիւ ընդունելութեան իւրոյ, հաւանեցաւ յոյժ, և կամեցաւ փոխել և անհետ առնել զհինաւուրց սովորական փակեղս եկեղեցականաց իւրոց, և ըստ տարազու Յունաց յօրինել ՚ի ձեւ վեղարաց. և կարգադրեաց եպիսկոպոսաց և վարդապետաց գլխարկ ՚ի մանուշակագոյն թաւիշէ, և քահանայից՝ ՚ի սեաւ շուխայէ։

Լուեալ զայսոսիկ սրբազնափայլ Ներսէս կաթողիկոս, առաքեաց զպանակի ադամանդեայ և թագաւորազարդ մինէքարոծ պատկերաւ փրկչին առ Մաթէոս պատրիարք, զոր խորհըր-

գամ ամիրայից տարան առ նախարարն արտաքին գործոց Ռէշիտ փաշա առ 'ի ցուցանել, թէ տայցէ՞ հրաման տէրութիւնն կախել զայն 'ի կուրծն ըստ օրինի արքեպիսկոպոսացն Էջմիածնի, թէ ոչ։ Առեալ զայն Ռէշիտ փաշա տարաւ առ արքայ և յետ երկուց ամսոց առաքեաց արքայ առ Մատթէոս պատրիարք կախել 'ի կուրծն թոյլտուութեամբ իւրով ըստ կարգադրութեան կաթողիկոսին։

Այս պատուախնդրութիւն կաթողիկոսին զոր եցոյց առ Մատթէոս պատրիարք, զարթոյց զխորհրդածութիւն նախարարացն և արքայի իսկ շնորհել ադամանդեայ նշանս երևելի առաջնորդաց Հայոց և Յունաց, և առաքեաց 'ի պատրիարքարանն Հայոց վեց նշան ակնակուռ, զորս առաքեաց Մատթէոս պատրիարք, զմին՝ առ Միքայէլ արքաղան կաթողիկոսն Կիլիկիոյ, և զհնգեսին՝ առ առաջնորդսն երևելի վիճակաց Արմաշու կամ Նիկոմիդեայ, Պրուսայու, Զմիւռնիոյ, Մշոյ և Եւդոկիոյ, հայեցեալ յարժանաւորութիւն և 'ի պատիւ վիճակացն և առաջնորդաց, որոց յանձնեալք են 'ի հովուել և 'ի բարեկարգել ըստ կանոնաց եկեղեցւոյ և ըստ օրինաց քաղաքականութեան։

## ԳԼՈՒԽ ԾԹ.

Յաղագս աղետալի դիպուածոց 'ի Կոստանդնուպոլիս եւ յարտաքին գաւառս, եւ բողոքելոյ Հայոց ընդդէմ Յունաց վասն դրան վանից սուրբ Ծննդեան փրկչին 'ի Բեթլէհէմ, եւ հաստատութեան Հոգեւոր եւ Քաղաքական ժողովոց պատրիարքարանին Հայոց։

(1845) Նոյն ամի պատահեցաւ հրդեհ սաստկալի 'ի Զմիւռնիա, յորում այրեցան 3500 տունք յորոց ութ հարիւր եօթանասունքն էին Հայոց. այրեցան և պանդոկք, բաղանիք, մզկիթք, և մառանք, և կալք և կարասիք միանգամայն, վնասն հասարակօրէն հաշուեալ, հրատարակեցաւ յօրագիրս երկերիւր

միլիոն դահեկան Օսմանեան. այրեցաւ և տուրք Սեւափանոս եկեղեցին Հայոց հանդերձ ամենայն անգին զարդուքն և ըղգեստուք ոսկեղէնք և արծաթեղէնք, և եկամուտք իւր՝ որք ամի ամի բերէին հարիւր հազար դահեկանս, այսպէս և տուրք Մեսրոպեան վարժարանին, և տպագրատունն Արշալոյս Արարատեան օրագրին ամենայն գործեօք և գրովք իւրովք, և Սարգսեան դպրոցն օրիորդաց. քան ժամ տեւեաց հրդեհն, և 'ի մոխիր դարձոյց զամենայն.

Այժմ աղետալի դիպուածոյս շնորհեցաւ ողորմութիւն յարքայէ 500 քսակ ոսկւոյ, 'ի մօրէ արքային 100, 'ի Թագուհեաց 200, և 'ի Նախարարաց 500. ընդ ամենայն 1300 քսակ, բաշխել աղքատաց Հայոց, Յունաց, Հրէից, և Տաճկաց.

Լուեալ զայս սրբազան կաթողիկոսին Ներսիսի՝ առաքեաց հազար բոլիճեալ ոսկի վասն նորոգութեան եկեղեցւոյն, և երեսուն ոսկի Սիւնեաց ընկերութեանն, որ էին 'ի Զմիւռնիա.

Յայտնիկ առուրս պատահեցաւ նոյն օրինակ հրդեհ մեծ և 'ի Սամաթիա թաղն Կոստանդնուպոլսի. յորում այրեցան չորս հարիւր տունք Հայոց, 150 տունք Յունաց, և 160 խանութք. խղճալիք Հայոց զետեղեցան 'ի հիւանդանոցն 'ի ներկայութեան Մաթէոս պատրիարքին, որ ըստ աղքատասէր բնաւորութեան իւրոյ եւս առ օրին 'ի քսակէ իւրմէ 25 հազար դահեկան 'ի պէտս հարկաւորութեան հրկիզելոց գերդաստանացն. Օգնեցին բազմօք և վաճառականք երկոքին բարեպաշտակք Յովհաննէս և Պօղոս կերակրովք՝ զգեստուք՝ և արծաթով.

Յետ երկուց ամսոց լսելի եղեւ հրդեհն Տփխիսու, և վընաս նորա եօթն միլիոն դահեկան.

Ի Յիլիպէ այրեցան 600 խանութք, և 140 մեծամեծ տունք և վնաս նորա 10 միլիոն դահեկան.

Ի Զմիւռնիա դարձեալ բաց 'ի վերոգրելոյն. Ի Պէրգամոն այրեցան վաճառանոցք ամենայն, և վնասն վեց միլիոն դահեկան. ՅԱնդրիանուպոլիս կրկին անգամ այրեցան 600 տունք. 1150 խանութք, տասն վարժարանք, վեց սինակոկայք, երկու մզկիթք և երկու պանդոկք, և վնասն քառասուն միլիոն դահե-

կան․ ի Թեսաղոնիկէ այրեցան 2000 տունք և կրպանք․ ի Զանոգ գաւլէ այրեցան վաճառանոցք ամենայն և տունք․ Թող զայլ հրդեհսն 'ի Բերա երիցս, յՍկիւտար երկիցս, յՕրթագիւղ կրկին անգամ, յԵէնիգիւղ և 'ի Գանտիլլի, որք բաղդատութեամբ ընդ վերոգրելոց մանր հաշուին․

Յետ միոյ ամի եղեւ և երկրաշարժ 'ի կղզին Միտիլլի․ որ կործանեաց բազում տունս և զեկեղեցիս․ և 'ի Զմիւռնիա կործանեցան բազում պանդոկք, և ընդ փլատակօքն մեռան հնգետասան անձինք․

Յայսմիկ աւուրս աւարտեցաւ շինութիւն երկաթի գործարանին 'ի Զէյթին պուրնու մերձ յԱյի Ստեփանոս, ուր ձուլեցաւ քան և վեց կանգուն լայնութեամբ միակտուր երկաթի կամուրջ իմն վասն կցելոյ զՉրաղանի պալատ արքային ընդ մեծ պարտիզին, և 'ի սմա այսր գնաց արքայ ընդ երեւելի նախարարաց, և հաճեցեալ յոյժ, շնորհեաց վերատեսչաց նոցին վառօղապետացն Յովհաննու և Պօղոսի, և ճարտարապետին կարապետի, և որդւոց նոցին զմեծագին ադամանդեայ տուփս։ Բայց յետ միոյ ամի լապտերապահ աշտարակ նորին՝ որ էր շինեալ 'ի բարձրութիւն 120 կանգնոյ, յանկարծ կործանեցաւ․ և 'ի ներքոյ փլատակին մեռան հարիւր տասն գործաւորք, յորոց եօթանասունքն Հայք էին, և վասն այսին գրեաց Մատթէոս պատրիարք 'ի Բ․ Դուռն զողորմելի խղճութիւն ընտանեաց այնին, և հրամայեցաւ տալ յարքունուստ ամսական ըստ նոցին արժանաւորութեանց․

(1846) Ի սկիզբն գարնան այսր ամի կամեցաւ արքայ յայց ելանել բերդաքաղաքացն 'ի գետեզերս Դանուբայ․ և յամսեանն ապրիլի եմուտ 'ի նաւ եռայարկ, ընդ որում երթային և երեք շոգենաւք․ և չեւ էր ճանապարհ արարեալ մղոնս յիսուն և հինգ, պատահեալ մրրիկ մեծ 'ի հիւսիսային հողմոյ, դարձաւ ընդ կրունկն 'ի Կոստանդնուպօլիս 'ի պալատ իւր․ Յետ հնգից աւուրց եւ 'ի Կոստանդնուպօլսոյ ցամաքային ճանապարհաւ երթալ յայնմիկ կողմանս, և յայն օր եւս լինելով օդն մառախլապատ և անձրեւային, զանգի կայաւ զաւուրս չորս 'ի գիւղն Այի Ստեփանոս 'ի տան վառօղապետ Պօղոսի Տատեան, որ պաշտեաց զնա մեծափայլելուչ յարգանօք, և եր ըն-

րել 'ի գայրոյեն Գումգափուի գրսան տղայս գեղեցկաձայնս տեղեակս երաժշտական երգոց, և նուագեցին առաջի արքային ընդ որս հաճեցաւ յոյժ արքայ, և ետ պարգևս իւրաքանչիւրոցն երկերիւր դահեկան, և դասատուի նոցին Արիստակեայ Յովհաննէսեան հինգ հարիւր դահեկան։

Յետ չորից աւուրց ելեալ անտի գնաց յԱնդրիանուպօլիս, և զգեցոյց առաջնորդին Հայոց Սարգսի արքեպիսկոպոսի ըզ վերարկու պատուոյ, և ետ նմա նշան ադամանդեայ. և ագ աւուրս երկուս 'ի տան Յովհաննու Պարտիզպանեան, և ետ նմա ևս նշան ականակուռ. և եղբարց և քեռայրց նորա. եբարձ 'ի քաղաքէն զցամաքային մաքսն, և այլ ևս բարիս բազումս ցուցեալ բնակչաց քաղաքին, եկ և շրջեցաւ 'ի Ռուսճուք, 'ի Շումնի, 'ի Սիլիստրէ, 'ի Թըրնովայ, 'ի Նիկէբօլի, և 'ի Վիտին. և յայս ամենայն տեղիս նուէրս և նշանս բաշխեաց։

Բդեշխին Մոլտաւիոյ ետ զպատկեր իւր գոհարազարդ. իսկ բդեշխին Վալաքիոյ՝ որք ընդ առաջ եկեալք էին, ետ զմեծագին սուր ոսկի և ականազարդ, և ամենայն պաշտօնատարց նոցա մէն մի տուփ ոսկի։

Տէրլաֆ պաշտօնատէրն Ռուսաց՝ որ եկեալն էր 'ի դիմաց կայսեր յողջոյն դալստեան նորա, ընկալաւ նշան ասպետութեան (միւշիր փայէսի), և Ցէսքօֆին հիւպատոսին Ռուսաց՝ ադամանդեայ տուփ մեծագին. իսկ Տըհէս պաշտօնատէրն Աւստրիոյ՝ ընկալաւ նշան խորհրդականութեան (միւսթէշար)։ Եւ այսպէս բազում բարիս ցուցեալ ամենեցուն, և իջեալ 'ի Վառնա, եմուտ 'ի շոգենաւ իւր, և դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս 'ի պալատ իւր։

Եղև համդէս լուսավառութեան զերիս գիշերս յուրախութիւն ամենեցուն, և երեսուն մանկունք ճեմարանին Սկիւտարու նոր երգս յօրինեալ 'ի վերադարձ արքային, և մտեալ 'ի նաւ եկին առաջի պալատի արքային, և երգելով համեղ և քաղցր եղանակաւ հաճեցուցին զարքայ և զմայր նորա, որ ետ նոցա զերիս հազար դահեկանս 'ի պարգև, և հրամայեաց այնպէս երգելով երթալ 'ի տեղիս իւրեանց։

Մեծ էր նեղութիւն ուխտաւորաց Հայոց՝ որք երթային յԵրուսաղէմ, գնալ յուխտ 'ի վանս սուրբ Ծննդեան փրկչին՝

ք 'ի Բէթլէհէմ. վասն զի Յոյնք զդուռն վանիցն միշտ փակ անէին, և դռնապան մի Յոյն սպասէր 'ի ներքս դրանն բանալ՝ որոց բաղխեին զդուռն։ Զարմանք են, զի եթէ Հայ մի գնացեալ հարկանէր զդուռն, խլանային լսելիք պահապանին, և ոչ լսէր զբաղխումն դրանն. և խեղճ Հայն սպասէր անդ, գոչէր և աղաղակէր առ պահապանն, Կոստանդին, Կոստանդին, բաց զդուռն. և Կոստանդին ոչ լսէ. և այնպէս Հայն՝ եթէ տիւ է, արեւակէզ սպասէ անդ. և եթէ գիշեր է, անձրեւաթաց և պաղ առեալ ողջունէ անշուշտ զանդուռն։ Իսկ եթէ Յոյն մի գնացեալ հարկանիցէ զդուռն, լսէ իսկոյն խուլն և բանայ։ Եւ զայս գանգատ և տրտունջ բազմիցս արարեալ էին Հայք առ Յոյնս. բայց նոքա այլս այլս մնալով պատճառանօք ներումն խնդրեալ էն սակաւ, թէ պահապանն ոչ գրաեալ է անդ 'ի պահուն, կամ թէ 'ի քուն եղեալ է և չէ լուեալ, և այլն։

Բազումք կային վասն այսր նիւթոյ պատրիարքն Երուսաղէմի առ Մատթէոս պատրիարք. և նա առեալ ընդ իւր ըզԳէորգ վարդապետ փոխանորդն սուրբ Երուսաղէմի, և զերկոսին ամիրայս զՃանիկ և զՄիսաք, գնացին 'ի Ֆէնէր 'ի ծովեզերեայ յարկ Սանֆանաքի պէյին, յորում էր և պատրիարքն Յունաց ընդ երկուց եպիսկոպոսաց և Լօգօֆէթ պէյն. և յետ բազում բանախօսութեանց որոշեցին և խոստացան Յոյնք առնել զմի 'ի չորիցս յօդուածէ. Ա. Զուրիշ բանալի մի տալ Հայոց։ Բ. Զայլազգի դռնապան կացուցանել։ Գ. Բաց թողուլ այնմ դրան զտիւ և զգիշեր։ Եւ Դ. Կից այնմ դրան բանալ և զդուռն մի վասն Հայոց։ Բայց և ոչ զմի 'ի խոստմանցս յօդուածէ կատարեցին. և այնպէս գործն մնաց անորոշ մինչեւ ցպատերազմն Ռուսաց ընդդէմ Օսմանեան տէրութեան, զորոյ զկնի համաձայնութեամբ դաշնադիր տէրութեանց եղեւ կարգադրութիւն բաց թողլոյ դրանն զտիւ և զգիշեր դռնապանս կացուցեալ 'ի նմին։

Լուեալ զայս Ներսէս կաթողիկոս, առաքեաց զկոնդակ օրհնութեան 'ի Կոստանդնուպոլիս, որ ընթերցաւ 'ի Մայր եկեղեցւոջն Խումգաբուի, յորոյ վերայ արար Մատթէոս պատրիարք սքանչելի ատենաբանութիւն իւր՝ դնելով

բնաբան ճառին, «Օրհնութիւն հարց՝ պսակ որդւոց»։

Ի սմին ամի արար Մատթէոս պատրիարք հիմնարկութիւն եկեղեցւոյ 'ի յենիգաւիւ, ուր ոչ գոյր յառաջ եկեղեցի. և աւարտեալ զշինութիւն նորա էօծ փառաւոր հանդիսիւ 'ի յունիսի 18 յաւուր առաջին լուսաւորչաց մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի սրբազան առաքելոց։ Ցետ երից ամաց էօծ և զեկեղեցին 'ի Գանտիլլի յանուն երկոտասան Առաքելոց։ Նօծ և զեկեղեցին Գարակէօմիւկի յանուն սրբոյն Յովհաննու Ոսկեբերան հայրապետին։

Հաստատեաց և օրագիր ազգային 'ի յայտարարութիւն ազգային գործոց և եղելութեանց փութացելոց 'ի պատրիարքարանէ, որ յառաջն կոչեցաւ Հայաստան, և այժմ կոչի Մասիս

Տեսին ամիրայք, զի պատրիարքն ինքնին առնու և տայ, և ինչ ոչ հարցանէ ցնոսա և ոչ խորհրդածէ, այլ ինքնին միայն կարգադրէ զամենայն, դժուարացան յոյժ և զզջացան, զի զնա պատրիարք ընտրեցին. Ջեռս արկին 'ի փոփոխել զառաջնորդս, այլ ընդդէմ ելաց նոցա պատրիարքն, և յաւելի բացարձակ խօսեցաւ, թէ աշխարհականք ոչ կարեն խառնիլ 'ի հոգեւոր գործառնութիւնս, զհոգեւորսն հոգալ, քննել, կարգադրել, պատժել, և պատկել՝ մեզ է առնել և ոչ ձեզ. զառաջնորդսն մեք կարեմք ընտրել ըստ խնդրոյ և համաձայնութեան քաղաքացեացն, որք յականէ յանուանէ խնդրեն զայս ոք կամ զայն ոք, և մեք հայեցեալ 'ի խնդիրս և 'ի համաձայնութիւն նոցա և յարմարաւորութիւն ընտրելոյն 'ի նոցանէ՝ անօրինեմք զարժանն ըստ կանոնի եկեղեցւոյ։ Բայց եթէ քաղաքական ինչ վէճ և խնդիր պատահիցի, կամ տէրութեան հրաման, կամ ազգային կալուածոց յանձնակութիւն, կամ տնանկաց և հիւանդանոցաց և դպրոցաց այցելութիւն, յայնժամ ժողովեմ զձեզ առ իս, յայտ առնեմ զեղելութիւնն, և խորհրդակից լինիմ ձեզ և օգնական. իսկ վասն հոգեւորացն՝ ձեզ չէ փոյթ երբէք։

Զայս լուեալ 'ի պատրիարքէն խռովեցան ամենեքին, և 'ի վերին երեսս առանց ցուցանելոյ զդժհաճութիւն ինչ մեկնեցան և գնացին. և խորհուրդ արարեալ ընդ միմեանս, կամեցան արքունի հրովարտակաւ իշխանակից լինել պատրիար-

քին, այնպէս զի պատրիարքն ինքնին միայնակ չգործեսցէ ինչ առանց ծանուցանելոյ ինքեանց, այլ ժողով իւրեանց որոշեսցէ և վճռեսցէ:

Ուստի ձեռն 'ի գործ արկեալ և գտեալ ընդ մէջ ածեալ՝ 'ի ձեռն ազգասէր անձինն Յակոբայ Կրճիկեանց որդւոյն ընդ մեծ եպարգոսն Րէշիտ փաշա, և 'ի ձեռն նորա ծանուցեալ արքայի, եկն հրաման 'ի Բ. Դուռն. և կոչեցան Մատթէոս պատրիարք և ամիրայք 'ի ծովեզերեայ յարկ արտաքին գործոց նախարարին 'ի յէմիրկիւն, և ընթերցաւ անդ հրովարտակն արքայի, յորում հրամայէ հաստատել երկուց ժողովոց 'ի պատրիարքարանի, մին՝ վասն հոգևորական գործոց, և միւսն՝ վասն քաղաքականաց:

(1847) Եւ Մատթէոս պատրիարք արար ժողով մեծ 'ի Մայր եկեղեցին, և հրաւիրեաց անդ զեկեղեցականս՝ և զամիրայս՝ և զգլխաւոր անձինս արհեստաւորաց. և ընթերցեալ զհրովարտակն արքայի՝ յանձնեաց ժողովոյն որոշել և ընտրել զանդամս ժողովոցն. և որոշեցան համաձայնութեամբ ամենեցուն չորեքտասան անդամք հոգևոր ժողովոյն այսոքիկ.

1. Յովհաննէս եպիսկոպոս քարոզիչ Օրթագիւղի, որ եղեւ պատրիարք Երուսաղէմի:
2. Գէորգ վարդապետ փոխանորդ Երուսաղէմի:
3. Յովհաննէս վարդապետ քարոզիչ Խասգիւղի:
4. Յովհաննէս վարդապետ քարոզիչ Գուզկունճուգի:
5. Գրիգորիս վարդապետ քարոզիչ Պալատու:
6. Տէր Գալուստ աւագ քահանայ Օրթագիւղի:
7. Տէր Գէորգ աւագ քահանայ Խասգիւղի:
8. Տէր Յովհաննէս աւագ քահանայ Ս. Խաչ եկեղեցւոյն Իւսքիւտարու:
9. Տէր Պաղտասար աւագ քահանայ Ս. Կարապետ եկեղեցւոյն Իւսքիւտարու:
10. Տէր Զաքարիա աւագ քահանայ Պերայի:
11. Տէր Գրիգոր աւագ քահանայ Պէշիկթաշու:
12. Տէր Յարութիւն աւագ քահանայ Ղալաթիոյ:
13. Տէր Գրիգոր աւագ քահանայ Սամաթիոյ:
14. Տէր Պաղտասար աւագ քահանայ Պալատու:

Իսկ քաղաքական ժողովոյն ընտրեցան քսան անդամք այսոքիկ.

1. Յովհաննէս Տատեան վառօդապետ.
2. Պօղոս Տատեան վառօդապետ.
3. Կարապետ Պալեան ճարտարապետ.
4. Յովհաննէս Պալեան ճարտարապետ.
5. Միքայէլ Փիշմիշեան սեղանաւոր.
6. Մագսուտ Սարիմեան սեղանաւոր.
7. Գէորգ Երամեան սեղանաւոր.
8. Մկրտիչ Ճէզայիրլեան սեղանաւոր.
9. Միսաք Միսաքեան սեղանաւոր.
10. Յովհաննէս Եղիա Չէլէպեան հացագործ.
11. Յովհաննէս Զօպանեան ոսկերիչ.
12. Յովհաննէս Սուրէնեան ժամագործ.
13. Թովմաճան Մարտիրոսեան վաճառական.
14. Աստուածատուր Սարաֆեան չուխաճի.
15. Քերովբէ Պաշպազիրկեանեան խազազ.
16. Սարգիս Գըլըճճի պաշի.
17. Գրիգոր Թիւյիւզեան աչէզազ.
18. Կարապետ Տէր Գրիգորեան Թիւլպէնաճի.
19. Սահակ Քիւչիւկ Յակոբեան քէրէստէճի.
20. Յակոբ Կրճիկեան ատենադպիր ժողովոյն Լէւքէֆ կոչմամբ.

Երկուց ժողովոցս այսոցիկ նախագահ՝ նոյն ինքն պատրիարքն հրամանաւ արքայի որոշեալ և 'ի հրովարտակին վաւերացեալ.

Յետ որոշման և ընտրութեան ժողովականացն՝ արար Մաթէոս պատրիարք ատենաբանութիւն ինն, յորում յորդորեաց զժողովեալսն ամենայն 'ի սէր և 'ի միաբանութիւն անկեղծ և հաստատուն, և 'ի խոնարհութիւն հնազանդանացին, տանեկաց, և մանաւանդ դպրոցաց, և համահաճութեամբ ժողովոյն որոշեցաւ քաղաքական ժողովոյն լինել յամենայն երեքշաբթի աւուր 'ի պատրիարքարանին՝ հոգալ զազգային գործս, և տնօրինել զպատշաճեալսն. իսկ վասն հոգեւոր ժողովոյն որոշեցաւ 'ի հինգշաբթի օր լինել 'ի պատրիարքարանն, և խորհել զեկեղեցական դիպուածոց յարտաքին գաւառաց գրեցն.

րդ 'ի պատրիարքարանն, զփոփոխումն առաջնորդաց և զդատից նոյին, զհարստահարութիւնն փաշայից, և զանիրաւ պահանջմանց այլոց ազգաց, և զվերաբերեալն առ Քաղաքական ժողովն յայս առնել նմին սատարութեամբ պատրիարքին ։

Եւ այսպէս անօրինեալ զամենայն, գրեցան անուանք երկաքանչիւր ժողովականացն, և առաքեցաւ 'ի Բ. Դուռն հաստատել զնոսա արքունի հրովարտակաւ. եղեալ պայման ժողովականացն, յերկու ամս միանգամ լինել փոփոխութիւն ժողովական անդամոցն, և զայս յարժանաւորաց ընտրել փոխանակ նոցին և հաստատել արքունի հրովարտակաւ. և այսպէս կարգադրեալ զամենայն, առաջին սկզբնաւորութիւն ժողովելոյ 'ի 20 մայիսի 1847 ։

## ԳԼՈՒԽ Կ.

Յաղագս ազատութեան Հայոց բնակելոց 'ի Վասպուրական, 'ի Տարօն, և 'ի Բաղիշանց գաւառս 'ի հարստահարութենէ բարբարոս ազգին Մարաց՝ շնորհիւ Մատթէոս պատրիարքին .

(1847) ՔԱՆԻ ամօք ինչ յառաջ անողորմ և ապստամբ ազգն Մարաց ունելով 'ի գլուխ իւրեանց զխան Մահմուտ և զԲէտէրխան պէյ, հարստահարէին զբնակիչս Վանայ և Տարօնոյ և շրջակայ գիւղօրէիցն, կողոպտէին զվանորայս և զեկեղեցիս, կեղեքէին և ապականէին. և կուսակալն Կարնոյ և բդեշխն Վանայ յանդգնեալ լինէին զչարագործութեանց նոցա. և ոչինչ փոյթ էր նոցա, թերեւս և ինքեանք առնուին զբաժինս իւրեանց յաւարէ անտի՝ զոր կողոպտէին նոքա, և ոչ զդէմ ունէին նոցա կամ պատերազմաւ և կամ ահացուցմամբ.

Լուեալ զայսոսիկ սոյն Մատթէոս պատրիարք, բողոքս եբարձ երկիցս 'ի Բ. Դուռն. և յերկրորդումն նուագի գրեաց,

եթէ բնակիչք վանաց ոչ կարելով այլ ևս տանել անըմբեր տառապանաց՝ զոր հասուցանէին Մարք 'ի վերայ նոցա, որոշեալ են 'ի միջի իւրեանց խոյս տալ բնաւնեօք հանդերձ և գաղթել 'ի Ռուսաստան. և որովհետև ինձ յանձնեալ է 'ի բարձրագոյն տէրութենէ ձերմէ հսկել 'ի վերայ նոցա, և ըդդուշանալ ելից և մտից նոցին, պարտ անձին վարկայ կանխաւ ազդ առնել տէրութեան ձերում, զի մի առ յապայս յանցաւոր գտանիցիմ առաջի ձեր։

Առ այս խորհուրդ արարեալ 'ի Բ. Դուռն, պատրաստեցաւ կազմեցաւ բանակ պատերազմող զօրաց, և պատրաստեալ կարգեցաւ Օսման փաշա այրն քաջ և զօրաւոր. և դիմեաց 'ի վերայ ապստամբացն այնոցիկ 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ նուաճել զնոսա անճողոպրելի փախստեամբ։

Յայնժամ գրեաց և Մաթէոս պատրիարք առ առաջնորդս Տիգրանակերտի, Բաղէշու, Բալուայ, Կարնոյ, և Վանայ, զի ժողովուրդք իւրեանց ելցեն 'ի վրէժխնդրութիւն այնչափ տառապանացն՝ զորս կրեցին մինչեւ ցարդ, յամենայնի օգնական լիցին և ծառայեսցեն արքունի բանակին, և զհաւատարմութիւն իւրեանց ցուցցեն իրօք առաջի արքայի։

Ժողովեցան Հայք վաշտուրական աշխարհին, և մարտ եդեալ յարձակեցան 'ի վերայ Ճէզիրէ նահանգին, ուր որջացեալ ամրացեալ կային յանառիկ վայրս գլխաւորք բարբարոսաց, և այնչափ 'ի նեղ արկին զՊէտէրխան պէյ նոցա, մինչեւ յոգիս լինել նմա ապաստան, և յուսահատեալ յանձնեաց զինքն ապարապեա Օսման փաշային հանդերձ իւրով գերդաստանաւն, որ իսկ և իսկ առաքեաց զամենեսին զնոսա 'ի Կոստանդնուպօլիս, և տիրեաց ամրոցի նորուն, և Պէտէրխան պէյ աքսորեցաւ 'ի Կրետէ կղզին բնաւնեօք իւրովք։

Իսկ խան Մահմուտ գլխաւորն Մարաց ըմբռնեալ 'ի վանցի Հայոց և կալանաւորեալ յանձնեցաւ 'ի ձեռս Օսման փաշային, և ածեալ 'ի Կոստանդնուպօլիս բնաւնեօք իւրովք աքսորեցաւ 'ի Սիլիստրէ. և բազումք յապստամբացն մատնեցան 'ի սուր, և մնացեալքն ցրուեցան 'ի կողմանս Ռուսաց և Պարսից։

Այս լուր յաղթանակութեան արքունի զօրաց հասեալ 'ի կոստանդնուպօլիս, ցնծութիւն մեծ պատճառեաց ազգին Հայոց. և հրամանաւ Մատթէոս պատրիարքին երգեցին յամենայն եկեղեցիս Հայոց «Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր» մինչև ցվերջն (Սաղմոս) յաղագս ազատութեան Հայոց բնակչաց Վասպուրական աշխարհի և շրջակայից նորա 'ի հարստահարութենէ անողորմ և բարբարոս ազգին Մարաց. Եւ այս գոհաբանութեան հանդէս եհաս մինչև 'ի լսելիս արքային, որ 'ի ձեռն ներքինապետին իւրոյ Թայֆուր աղայի ծանոյց մասնաւոր գրով զշնորհակալութիւն իւր.

Սոյնպէս և պարտաւորեցաւ Մատթէոս պատրիարք առաջել կոնդակաւ առ ամենայն գաւառս Օսմանեան տէրութեան յորդորել և բարեմտութեամբ լինել արքային և իւրոյ մեծազօր տէրութեան, և տօն ցնծութեան կատարել վասն ազատութեան ազգին Հայոց 'ի բռնութենէ անողորմ բարբարոսաց, զոր եւս դիւրահասկանալի լինելոյ ամենեցուն բնակելոց 'ի գաւառսն յայնոսիկ՝ գրեաց յաշխարհաբառ լեզու, որ ունի օրինակ զայս.

«Ի Տէր Մատթէոս արքեպիսկոպոսէ և պատրիարքէ մեծի
«արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ՝ գիտու-
«թիւն լիցի համօրէն լրութեան սուրբ եկեղեցւոյդ.
«Յայտնի է բարեպաշտութեան ձերում, որ մեր սիրելի
«հայրենիքը՝ Հայաստան աշխարհք՝ որ ամենայն աշխարհաց
«և ազգաց առջև Հայոց ազգին պարծանք մին էր իրեն ան-
«համեմատ և աննման ձիրքերովը, այսքան հարիւրաւոր
«տարիներէ 'ի վեր աւերակ և աշխարհաւեր Քրդաց անո-
«ղորմ և անգութ բռնակալներուն ձեռքը ինկած մնացուած,
«աւերակ և անապատ էր դարձեր. և անմռունչ բարբառով
«կուլար կոչեր իր սիրելի զաւակունքը՝ ողորմելի ազգ
«Հայոց, որ այն մարդակերպ գազաններուն պատառող ժան-
«եացը որս ինկած էին տարաբաղդութեամբ.
«Եւ որովհետև ամենազօրին Աստուած խոստա չի ձգեր
«իր ժողովուրդը անտանելի գերութեան մէջ, ինչպէս օրի-
«նակ է մեզի Իսրայելացւոց ազատութիւնը Եգիպտացւոց

« գերութենէն, նայեցաւ երկինքէն Հայոց աշխարհին վրայ,
« որ աս փայլենի բրգաց անասուններուն արօտ և ճարակ էր
« եղեր, և իւր առաջնաստեղծ մարդոյն ամենագեղեցիկ բնա_
« կութիւնը աս գազաններուն որջ էր դարձեր. յիշեց իւր
« բարերար կամքը Հայկ Նահապետին աստուածպաշտու_
« թեան եռանդը, որ աշխարհիս մէջ առաջին կռապաշտու_
« թեան հեղինակ՝ Բաբելոնեան աշտարակին վրայ պարծեն_
« ցող Բէլը՝ իւր Աստուածազօր աղեղովը զարկաւ գետինը
« փռեց անոր վիթխարի մարմինը.

« Աս աննման և գեղեցիկ աշխարհը՝ հիմա տասնեկ անօրէն
« բռնակալներուն ձեռքը ողորմելի տեսնելով, գթացաւ ողոր_
« մեցաւ իւր Աստուածային անհուն բարերար կամքը, շար_
« ժեց 'ի գութ և 'ի կարեկցութիւն՝ բարեգութ և բարեխնամ
« Սուլթան Աբտուլ Մէճիտ արքային մեր բարեսիրտ և ո_
« ղորմած բնաւորութիւնը, որ իւր օգոստափառ կայսրա_
« կան վեհափառութեամբը հրամայեց աս աշխարհին ազա_
« տութիւնը այն անիրաւ բռնաւորներուն ձեռքէն.

« Եւ որովհետեւ աս բարերարութիւնը յատկապէս Հայոց
« ազգին վերաբերեալ է, մենք ալ պարտաւորեցանք երախ_
« տագիտութեան օրինօք գիշեր ցերեկ հսկում՝ աղօթք և պա_
« ղատանք ընել առ Աստուած, որ իւր ամենակարող աջը հո_
« վանի և օգնական ընէ Տէրութեան հնազանդ և բարեկարգ
« և արիաբար պատերազմող զօրաց բանակին.

« Օրհնեալ է Աստուած, և օրհնեալ է աջ նորա ամենազօր
« և ամենայաղթ, որ լսելով դառնանց անմեղ ազգաց թշ_
« թախախոտ բարբարոսութիւնը, և քահանայից յատուկ և ջեր_
« մեռանդ և արտասուալից բազկատարած բարեմաղթու_
« թիւնը, ձգեց վախ և երկիւղ մը թշնամեաց խումբերուն
« մէջ, կորագլուխ ըրաւ, այն բռնաւորներուն գլխաւորները
« խան Մահմուտը և Պէտիրխան պէյը, որոնք ընդհանուր զօ_
« րապետին ձեռքը ինկած յուսահատ և անօթահար, իրենց
« կենացը խնայել կը խնդրէին, և շնորհեց աս մեծապանծ և
« սքանչելի յաղթութիւնը նորին կայսերական վեհափառու_
« թեան բարձր անունին և հզօր հրամանին. որով և ազատե_
« ցաւ Հայաստան աշխարհը աս դառն վիճակէն աս անտա_

«նելի գերութենէն. և կը յուսամք, որ այսուհետև կը նո-
«րոգի կը պայծառանայ, և իւր առաջին օրանչելի տեսիլը
«և գեղեցկութիւնը կ'ստանայ շնորհիւ բարեգութ և ողոր-
«մած արքային մերոյ աշխարհաշէն և մարդասէր բնաւորու-
«թեանը։

«Տեսէք հիմա և մտածեցէք այս առաջիկայ խօսքիս վրայ,
«որ պիտի ծանուցանեմ ձեզ ամենեցուն. որ որքան մտածէք,
«այնչափ աւելի պիտի զարմանաք և ապշիք վեհափառ Թա-
«գաւորին մերոյ անհամեմատ սիրոյն և յատուկ խնամոց
«առատութեանը, որ ունի Հայոց ազգին վրայ, վասն զի
«նորին կայսերական վեհափառութիւնը լսելով և իմանա-
«լով մեր բաղձատարած աղօթքն և խնդրուածքը որ ը-
«րինք առ յաղթութեանս համար, և մեր ուրախութիւնը և
«անպատմելի խնդութիւնը տաւել եւս շատցնել ուզե-
«լով, և ինքն ալ ուրախակից ըլլալով մեզի, ամսոյս նոյեմ-
«բերի 22ին շաբաթ օրը՝ իւր առաջակայ սիրելի սպասաւոր
«աէրներէն մէկ հաւատարիմ մանրմին ձեռօքը հրաման խըր-
«կեց նուաստութեանս ՚ի պատրիարքարանս, ըսելով։

«Ձեր աղօթքը և խնդրուածքը՝ որ ըրիք իմ առ բարե-
«յաջող յաղթութեանս վրայ, լսեց Աստուած և ընդունեց, և
«շնորհք ըրաւ իմ Թագաւորութեանս առ փառաւոր յաղթու-
«թիւնը, որուն կը բաղձայի իմ Աստուծմէ անդ հպատակ-
«ներուս կատարեալ հանդարտութեանը համար. Արդ՝ դուն
«պատրիարք. քու բոլոր ազգիդ խապար տուր և իմացուր,
«որ ես ալ ուրախ եմ ձեզի հետ, և ընդունելի եղաւ իմ
«թագաւորութեանս ձեր կատարեալ հաւատարմութեան սէրը
«և փափագը, և իմ փառաւոր թագաւորութեանս առջև
«ներկայացնել տեսածի պէս եմ ձեր բարեմաղթութեան
«հանդէսը՝ որ ըրիք և կընէք. Աստուած ամենաբարին իւր
«շնորհօքը պահպանէ զձեզ զամենեսին»։

«Զարմացէք այժմ առ օրանչելի մարդասիրութեանը վը-
«րայ՝ որ ունի վեհափառ թագաւորը իւր հաւատարիմ հպա-
«տակ ազգաց վրայ, և առ ամենառատ բարերարութեանս
«համար տօն ազատութեան կատարեցէք միաբան խնդրու-
«ծովք և շնորհակալութեամբք առ Աստուած, ըսենք ամենքս

«միաբերան, կեցցէ՛ բարեգութ և բարեյաղթ չէվքէթլու
«Սուլթան Աբտիւլ Մէճիտ խան ինքնակալ կայսր և թագա-
«ւորն մեր. կեցցէ՛ տէվլէթլու խանէթլու Վալիտէ Սուլթան
«ալիյէթիւշշան մայր նորին վեհափառութեան. կեցցեն
«կայսերազարմ և ծիրանածնունդ տէվլէթլու նէճապէթլու
«Շահզատէք արքայից մերոյ ՚ի պարծանս Օսմանեան հզօր
«թագաւորութեան. աջն Ամենեցին հովանի և օգնական լիցի
«՚ի վերայ նորին վեհափառութեան, զօրացուսցէ և կարո-
«ղացուսցէ զբարձրապատիւ և գլխաւորագոյն նախարարս տէ-
«րութեանն ՚ի պայծառ փառաւորութեան իւրեանց, և զազգս
«Հայոց ընդ հովանեաւ քաղցր աչաց նորին պահեսցէ և պահ-
«պանեսցէ ՚ի խնամս ողորմութեան իւրոյ, շնորհօք և մար-
«դասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստո-
«սի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն»

«Գրեցաւ հանդիսաւոր բարեմաղթութեան կոնդակս
«ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի Մայր եկեղեցւոյ ՚ի
«Պատրիարքարանի ամենայն Հայոց, որ ՚ի կոստանդնու-
«պօլիս»։

1847 դեկտեմբեր 9.

Յետ երկուց ամսոց հիւանդացաւ մայր արքային, և խնդրեաց, զի Մաթէոս պատրիարք ընթերցցի ՚ի վերայ իւր զաւետարան և արասցէ աղօթս, և զայս խնդիր նորա գրեաց ներքինապետն մեծ Թօսֆուր աղա առ պատրիարքն, որ իսկ և իսկ հրաման առաքեաց յամենայն եկեղեցիս զաւուրս ութ «Տէր ողորմեա» առնել. և ինքն առեալ ընդ իւր զՎ.Բրդանէս վարդապետ զաշակերտ իւր՝ և զշուրջառ՝ և զԱւետարան՝ և զնարեկ, կոչեաց զխառօդապետ Պօղոս Տառեան և զէրճիկեան Յակոբ, և նոքօք հանդերձ գնաց ՚ի պալատն արքայի. և ծանուցեալ մօրն արքայի զգալուստ պատրիարքին՝ և հրաւիրեալ ՚ի սենեակ նորա առանձինն հանդերձ ներքինապետաւն, էառ շուրջառ, և Աւետարան ՚ի ձեռին եմուտ ՚ի ներքս ՚ի սենեակն. զոր տեսեալ հիւանդին՝ զգաց յինքեան սակաւ մի և ելաց. յայնժամ ընթերցաւ Մաթէոս պատրիարք ՚ի վերայ նորա զԱւետարան բժշկութեան և զնարեկ, և զփարատեա.

և քաջալերեաց զնա՝ յուսադրելով զառողջութիւն և զվերա-կենդանութիւն ողորմութեամբն Աստուծոյ. զոր լուեալ նորա հանգեաւ յոյժ, և շնորհակալութեամբ մեծաւ շնորհեաց զա-ւանդեաց առ ի մի մեծագին՝ պատրիարքին, և զտուփ մի գոհարազարդ՝ Պօղոսի Տատեան, զժամացոյց մի ոսկի՝ Յակոբայ Կրճիկեան, և զգոհարազարդ գաւաթ մի արծաթ՝ Վրդա-նէս Փափազեանին. և մեծաւ պատուով դարձոյց յետս.

Եւ յիններորդ աւուր առաքեաց ներքինապետն մեծ զա-ւետիս առողջութեան նորին արքայի առ Մատթէոս պատ-րիարք, որ ուրախացեալ յոյժ փառս ետ Աստուծոյ, և առա-քեաց գիր ուրախակցութեան և բարեմաղթութեան առ ներ-քինապետն մեծաւ գոհունակութեամբ.

Յետ երեսուն և հնգից աւուրց առաքեաց նոյն արքային զմի մեծագին և պատուական առ Մատթէոս պատրիարք՝ ՚ի ձեռն արքունի ճարտարապետ Նիկողայոսի Պալեան. և Մատթէոս պատրիարք արար զնա շուրջառ ոսկեթել վերջա-ւորօք, և առաքեաց ընծայ առ Ներսէս կաթուղիկոս ՚ի սուրբ Էջմիածին.

## ԳԼՈՒԽ ԿԱ.

Յաղագս փոխադարձ այցելութեան Ֆէրիէրի կարդինալին Հռոմայ ՚ի պատրիարքարանս Յունաց և Հայոց, որ և յաղագս բանախօսութեան ՚ի վերայ հաւատոյ

(1848) Ի ՍՄԻՆ ամի առաքեցաւ Ֆէրիէրի կարդինալն Հռոմայ ՚ի Կոստանդնուպոլիս մեծագին ընծայիւք, և ընկա-լաւ զնա արքայ արժանավայել յարգանօք, և փարձեալ զհիւ-րանոցն Պօնսէլ ՚ի Բերա ամենայն կարևոր հանդերձանօք, հրաւիրեաց զնա նստիլ անդ. ցորչափ և կամք իցեն նմա մը-նալ ՚ի Կոստանդնուպոլիս. կարգեաց ՚ի նմա հիւրընկալ և տեսուչ զԱրապեան Թարգման Բ. Դրան, և առաքեաց հրա-

ման 'ի պատրիարքարանս Յունաց և Հայոց երթալ առ նա յայ-ցելութիւն քաղաքավարական օրինօք։

Եւ կամեցաւ պատրիարքն Յունաց երթալ յառ նորա, փոքրկութիւն և անպատուութիւն իւն համարելով իւրում բարձր աստիճանի, որ անգղիական պատրիարք գոլով՝ հա-ւասարապատիւ ճանաչէր զինքն Պապին Հռոմայ՝ որ առա-քեալն էր զնա, բայց և ոչ կարելով անցանել բառ հրամանն Բ-Դրան, պատճառեաց ակարութիւն անձին մեծ, և առաքեաց յիւրմէ կողմանէ փոխանորդաբար զմետրապոլիտն Թրակիոյ զԱթանասիոս ընդ երկուց եպիսկոպոսաց ողջունել զգալուստ նորա. և գնացեալ նոցա առին ընդունելութիւն մեծ, բայց քառորդ մի ժամու կեցեալ վերադարձան յետս։

Գնաց և Մաթէոս պատրիարք, առեալ ընդ իւր զԼըթանէս վարդապետ, զՏէրոյէնց Յովհաննէս պատուելին, և զքարտուղար իւր զՍեւերիս Գերպեքեան, և զԹարգման Մը-կրտիչ Աղաթոն, և մնացեալ առ նա՝ ողջունեաց զգալուստ նո-րա, և քաղաքավարութեամբ խօսակցեալ ընդ նմա իբրեւ ժամ մի, ետես պատիւ մեծ և վերադարձաւ։

Յետ սակաւուց գնաց և Ֆէրիէրի 'ի պատրիարքարանն Յունաց փոխադարձ այցելութեամբ, և ոչ՝ որպէս արժանն էր, պատուեցաւ. բայց իբրեւ եկն 'ի պատրիարքարանն Հայոց, ընդ առաջ ելին նմա երկոտասան քահանայք փիլոնազգեցք և յետ նոցա վեց վարդապետք և երկու եպիսկոպոսք վեղա-րաւորք, և յետոյ նոցա ինքն իսկ Մաթէոս պատրիարք խաչաձեւ գլխարկաւ. և բազմեցուցեալ զնա 'ի վեր կոյս նըս-տարանին՝ որ վասն նորա պատրաստեալն էր ոսկեթել և թա-ւշազարդ համդերձանօք, նստաւ և ինքն առընթեր նորա, և երկու եպիսկոպոսքն յաջմէ և յահեկէ, և պատուեաց զնա թէյիւ և քաղցր օշարակաւ հիւմիան կոչեցեալ, և քաղցրա-ւենեօք վարդի և պէրկամօթի, և օծանելի յարգութեամբ դարձոյց յետս։

Յետ միոյ ամսեան առաքեաց Ֆէրիէրի առ Մաթէոս պատրիարք զկոնդակ մի տպեալ Հայերէն, յորում յետ ցաւակ-ցական խօսից 'ի վերայ հերձուածոց և մոլորութեանց, որք երեւեցան յեկեղեցւոջ 'ի սկզբանէ անտի՝ գրէ, թէ «Այժմ-

նաւ եկեղեցին Հայոց է մոլորեալ և անջատեալ 'ի յուղղափառ-ւաղոյց նախնի հարց իւրոց –. և հրաժարէ զմոլորութիւնն 'ի բաց քեցել յանձնէ իւրեանց, և ողջամիտ վարդապետու-թեամբ ընդունել զնախնի ուղղափառութիւն իւրեանց, և մի-անալ ընդ գլխոյն եկեղեցւոյ:

Այսմ ոչ կարելով տանել Մատթէոս պատրիարք, կոչեաց առ ինքն զվառօդապետսն Տատեան զՊօղոս և զՅովհաննէս, և զճարտարապետն արքունի գլխաւորեալ Պալեան, և խօսե-ցաւ ընդ նոսա տանել զանդատ 'ի Բ. Դուռն զայսմ անխայել քաղաքավարութենէն՝ զոր արար Ֆէրիքէրի. բայց նոքա լաւ համարեցան զխորհուրդ նորա տանել այսպիսի ինչ. և ինք-եանք յանձն առին երթալ առ նա այցելութեան աղագաւ, և 'ի լինել խօսից՝ ծանուցանել նմա զցաւ սրտի պատրիարքին Հայոց վասն անտրամելին այնմիկ՝ զոր առաքեալն է առ նա:

Գնացին վառօդապետքն երկոքին, և յետ քաղաքավա-րական բանից ծանուցին նմա՝ որպէս խորհեալ էին. և խնդ-րեցին 'ի նմանէ, զի ցուցէ զմոլորութիւնն զայնոսիկ, յորս անկեալ է այժմ եկեղեցին Հայոց ըստ բանի կոնդակին:

(1848) Յանձն էառ Ֆէրիքէրի ուրախութեամբ զառաջար-կութիւն նոցա, և խոստացաւ գալ 'ի տուն Յովհաննու Տատ-եան 'ի Պէշիկթաշ, յոր հրաւիրէին զնա վառօդապետքն, և խօսիլ 'ի վերայ այնց՝ զորոց կարծիս ունէր Հռովմայ եկեղեցին 'ի վերայ Հայոց:

Ազդ արարին և Մատթէոս պատրիարքին զորոշումն իւր-եանց. և նա գնաց 'ի տուն Յովհաննու Տատեան:

Եկն անդ և կարդինալն թարգմանաւ իւրով. և յետ մե-ծածախ ընթրեացն մտին 'ի քարուկիր սենեակն, և հանեալ զպատուաւորսն արտաքս փակեցին զդուռն, և սկսան խօսիլ:

Առաջարկեաց Մատթէոս պատրիարք առ կարդինալն, զի ցուցէ զմոլորութիւնն Հայոց. և նա սկսաւ զհին մնոսի զրպարտութիւնն յառաջ բերել. յորոց վերայ բազում անգամ եղեալ են վէճք, և ցուցեալ են Հայք զուղղափառութիւն իւրեանց համաձայն յամենայնի սուրբ գրոց և սրբոց հարց, որպիսի է խնդիրն 'ի վերայ երկուց բնութեանց, 'ի վերայ բղխ-ման սուրբ հոգւոյն, 'ի վերայ կայանին ննջեցելոց, 'ի վերայ

վերջին օծման, և 'ի վերայ գլխաւորութեան Հռովմայ աթոռոյն.

Զպատասխանիս սոյին խօսեցաւ Մաթէոս պատրիարք ըստ դաւանութեան եկեղեցւոյն Հայոց, զոր դաւանի մինչև ցարդ. զի ոչ եթէ յառաջն այնպէս դաւանէր, և այժմ այլազգ. և մի առ մի բացատրեաց առաջի նորին զճշմարիտ դաւանութիւնս Հայոց, և զթշնամեաց նոցին զՀռովմէական դօլէճեանց զանխիղճ և զաստուածընդդէմ գրպարտութիւնսն, յոր ժողովեցան յայսչափ ժամանակաց հետէ ծեփել աղտոյ բերանոց իւրեանց զլոյս արեւու եկեղեցւոյն Հայոց.

Զարմացաւ կարդինալն, զի ոչ՝ որպէս կարծէրն և լուեալ էր, եւեւս այնպէս, և խոստացաւ միանգամ եւս տեսանել զմիմեանս և խօսել. և ըստ վերջին որոշման գրել 'ի Հռովմ առ Պապն զվկայական իւր յաղագս ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ. և որոշեցաւ յերկրորդումն նուագին խօսիլ յԱյլի Ստէփանայ 'ի տան Պօղոսի Ցատեան.

Յայսմ միջոցի առաջարկութեամբ կարդինալին եղև խօսակցութիւն 'ի մէջ իւր և Պրուսացի Տէրոյենց Յովհաննէս պատուելոյն, որոյ ինքնական ձեռագրովն գտեալ գրեալ իր խօսակցութիւնն, կարեւոր դատիմք առ դնել զինքնական օրինակն.

---

Պատմութիւն խօսակցութեան Մոնսինեօր Ֆէրիէրի դեսպանի արքայական Քահանայապետին Հռովմայ 'ի Դուռն Օսմանեան մեծի տէրութեան, և Պրուսացի Յովհաննէս Տէր Կարապետեան Տէրոյենց. 6/18 Փետրվար 1848.

Յունվար 29 հինգշաբթի օրը Տ. Ֆէրիէրի արքեպիսկոպոսը պատրիարքարան գալով, և սրբազան պատրիարքը և կրճիկեան Յակոբ աղայն և վերոյիշեալ Պրուսացի Յովհաննէսը մէկ կողմէն, և Տ. Ֆէրիէրին, և հետը իբրև թարգման գտնուող Հ. Արսէն վարդապետը մէկ կողմէն, բաւական ժամանակ տեսութիւն ըրելէն ետքը. փետրվար 3 երեքշաբթի օրը Լազարիստ քահանայներէն մէկուն կամսա անուն քահանայն գիր բերկեց Պրուսացիին, որ Տ. Ֆէրիէրին առանձին տե-

ութիւն ընել կուզէ հետը . գրով պատասխանելով օր որոշուեցաւ փետրվար 6 ուրբաթ օրը , և այն օրը միւսիւ Կամպա և միւսիւ Ֆուժըրէ քահանայներուն ընկերակցութեամբ Տ. Ֆէրիէրիին դեսպանատունը երթալով , այն տեղի խօսակցութիւնը այս տեղս գրեցանք . Եւ որովհետեւ այս գիրս նոյն օրը չգրուեցաւ , ուստի չեմ կրնար ապահովցնել որ հոն եղած խօսակցութիւնը բառ առ բառ հոս գրուած է . այլ խօսակցութեան նիւթը և խօսուած խօսքերը մէկ մտքի վրայ են հոս գրուածներուն հետ .

Տ. Ֆէրիէրին առաջին խօսքը բացաւ ըսելով . ձեր պատրիարքին հետ տեսնուելով շատ ուրախացայ , որ սիրոյ և միաբանութեան փափաք մը ունի . այս փափաքը Հռովմէական Հայոց պատրիարքին քովն ալ կը տեսնեմ . և ինձի այս զարմանք կուգայ , որ երկու իրարմէ բաժանեալ կողման գլուխները նոյն ոգւով վառուած ըլլալով՝ ի՞նչպէս եղեր է որ այսպէս մէկ բարի և օգտակար գործ մը մինչեւ հիմայ ետ մնացեր է , և խօսքը անգամ չէ եղեր .

Գ. Ասոր պատճառը այն է որ՝ թէպէտ երկուքին ալ միտքին մէջ դրած նպատակը նոյն է , բայց այն նպատակին հասնելու համար ընտրած միջոցներնին տարբեր է . Հասունեանը կուզէ որ՝ Հայերը խոստովանին թէ մեր Հայաստանեայց եկեղեցին մոլորած է . մենք քննեցինք , ստուգեցինք , և գտանք որ Հռովմայ եկեղեցին անմոլար է . անոր համար մեր եկեղեցին ձգեցինք հոն գացինք . Այս պայմանաւ Հռովմէականաց հետ միութիւն ընելու մեզմէ մարդ յանձնառու չըլլար . որովհետեւ ամենն ալ գիտեն որ Հռովմէացւոց և Հայոց եկեղեցիներուն մէջ հաւատալեաց տարբերութիւն չկայ .

Ֆ. Լսած և կարդացած եմ գրոց մէջ , որ Հայք Նեստորական են .

Գ. Բոլորովին սուտ և անհիմն զրպարտութիւն է .

Ֆ. Ուրեմն Հայք կը խոստովանին , որ տէրն մեր Քրիստոս որ հօր Աստուծոյ համագոյ կատարեալ Աստուած էր , կատարեալ մարդ եղաւ սուրբ կուսէն ծնանելով , և աստուածային և մարդկային բնութիւնները բնաւ իրարու հետ չշփոթեցան . աստուածային բնութեամբ աստուածային գործե-

րը, և մարդկային բնութեամբ մարդկային գործերը կը կատարէր։

Գ. Ամէն կերպով այդպէս կը դաւանին Հայք, և թէ որ մտքէդ անցնի որ ես ուրիշ լեզուներու տեղեակ ըլլալով ուղղափառ հայրապետներուն և աստուածաբաններուն գիրքերը կարդացեր և այս ուղղափառ դաւանութիւնս անոր համար կը խոստովանիմ, Հայոց եկեղեցւոյն դաւանութիւնը ձեր ըսածին պէս Նեստորական է, կրնաք ասանկ բաներու բոլորովին հմտութիւն չունեցող տգէտ աշխարհականի մըն ալ հարցնել. ան ալ իմ ըսածիս պէս կըսէ. կրնայ ըլլալ որ մէկ ժամանակ մը տգէտ մարդ մը հոգևորական իշխանութեան հասած ըլլալով ազգին մէջ, Նեստորականներուն յարած ըլլալով այս մոլորութիւնս քարոզած ըլլայ. որովհետև չեմք ըսեր և չեմք կրնար ըսել որ մեր հոգևոր գլուխները անսխալութիւն ունին։ Այլազգիներ թէ որ եղած ալ են նէ՝ բոլոր ընելիքնին այնքան կրնայ ըլլալ որ, ուղղափառութիւն քարոզողներուն ձայնը կտրելու բռնութեան ճամբայ մը բռնեն. և իրենց օրը ուղղափառութիւնը քարոզուած չըլլայ Հայոց եկեղեցւոյն մէջ, ինչպէս որ ատեն ատեն Յունաց մէջ եղած ըլլալը եկեղեցական պատմութեանց մէջ կը կարդամք. մեր եկեղեցւոյ մէջ այսպիսի բան մը եղած ըլլալուն յիշատակը չունիմք. բայց եղած ալ է նէ, որովհետև այնպիսի բռնութիւնը եկեղեցւոյն վրայ մնայուն վիճակ մը չէ, բռնութիւնը վերցածին պէս ուղղափառ վարդապետութիւնը նորէն ուժ կը գտնէ, առաձգական նիւթերու նման, որ քաշած տեղդ կերթայ. բայց քաշող ուժը դադարելուն պէս անկից ինքնին իր առաջին և բնական տեղը կը դառնայ։

Ծ. Խնդրեմ շնորհակալ եմ որ այս նիւթոյս վրայ ունեցած տարակոյսս լուծեցիր, և միտքս բժշկեցիր։

Գ. Տարակոյս ըլլալու ալ տեղի չկար։ Ամեն ատեն մեր ազգին դաւանութեանը վրայ զրպարտութիւններ ըրած են ազգին թշնամիները, մանաւանդ խաչակիրներուն ատենը և ետքը ունիթօրներուն ատենը։ Բենեդիկտոս երկոտասաներորդ պապին օրը Հայոց ընտանի թշնամիներէն երկու հոգի մինչև Աւինեօն երթալով՝ Հայոց ազգին վրայ 117 տեսակ

մարութեան մէկ ցանկ մը ներկայացուցին պապին. Անիկայ խոհեմութեամբ վարուելով ուզեց նոյն իսկ Հայերէն տեղեկանալ բանին էութիւնը. Հայոց Մխիթար կաթողիկոսին գրեց. այն ալ ազգային ժողով ըրաւ Սիս. այն գրպարտութիւնները մէկիկ մէկիկ քննելով պատասխանը գրեցին և պապին խրկեցին. թէ որ ամեն առեն այս ճամբան բռնուէր նէ՝ երկու ազգի մէջ այս պաղութիւնը չէր ըլլար. Ուստի կաղաչեմ՝ թէ որ սէրը մշտնջենաւոր մնալ կուզէք նէ, գիտնալ պէտք է որ Հայերը թշնամի ունին. անոնց ըրած գրպարտութիւնը անոնցմէ առուգել չըլլայ. որովհետեւ այս պարզապէս անոնց խօսքին առանց քննելու և առանց առուգելու հաւատալ մը կըլլայ. այլ ազգը ամեն առեն Կոստանդնուպօլիս պատրիարք ունի. էջմիածին կաթողիկոս ունի. առնք ալ հոգեւորական ժողովք ունին. անոնցմէ հարցուի և առուգուի. Ջեմ՝ յիշեր որ առանկ բան մը մեր պատրիարքին մէկուն հարցուած ըլլայ. և այն ալ պատասխանուոյ արժան չսեպելով պատասխան չտայ. ես հոս եկեր եմ նէ իբրեւ պատրիարքէ խրկուած կամ իբրեւ ազգային հոգեւոր ժողովոյ անդամ չեմ. ազգին լրութիւնը ներկայացնելու արտօնութիւն մը չունիմ հիմայ այս տեղս. այլ մասնաւոր մարդ մը, մասնաւորապէս իմ գիտցածս խօսելու եկեր եմ. իմ ըսածս ազգին ըսածն է ըսելու մէկ իրաւունք մը չունիմ. և դուք աւելի ապահովութեան համար՝ այդբանին վրայօք կրնաք պատրիարքէն և ազգային հոգեւոր ժողովքէն առուգել.

Ֆ. Այդ խօսքերուդ իրաւունք ունիս. բայց կուզէի իմանալ թէ Հռոմայ աթոռոյն և քահանայապետին վրայ ինչպէս կըսէք.

Գ. Ասոր վրայօք ալ կրնաք ազգիս մէջէն պինդ ապէս մարդու մը հարցընել թէ. երբ որ ամեն քրիստոնեայ ազգաց առաջնորդները եկեղեցւոյ մէկ պիտոյից համար ժողովք ընելու ըլլան և մէկ տեղ գան նէ՝ ժողովքին գլուխը նստելը որու կիյնայ. ամէնքը միաբան կը պատասխանեն թէ՝ Հռոմայ հայրապետին կիյնայ. ըսել է որ՝ Հռոմայ հայրապետին նախագահութիւնը ազգը բոլոր կը ճանչնայ.

Ֆ. Բայց նախագահութիւնը այլ է, իրաւարարութիւնը

ալ է. Հապա չէ՞ն մի ճանչեր որ Պապը յաստուածային իրաւանց բոլոր քրիստոնէից և բոլոր եկեղեցւոյ վրայ իրաւարանութիւն ունի, և մի՛ որ զինքը անոր իրաւարանութենէն ազատ կը սեպէ նէ՝ հաւատքի յօդուածոյ վրայօք մոլորութիւն մը չունենայ ալ նէ՝ եկեղեցիէն զատուած և հերձուածող (շիզմադիքօ) կը սեպուի.

Գ. Հապա այդ ընդհանուր իրաւարանութիւնը չե՛ն ճանչնար, ինչպէս որ կալլիքան եկեղեցին ալ որ շիզմադիք ըլլած չունի, չճանչնար. կալլիքանները կ'ըսեն որ ժողովքը Պապէն վեր է իրաւարանութեան կողմանէ. մենք ալ կ'ըսենք որ՝ եկեղեցւոյ մէջ ամեն առաջնորդներուն և եպիսկոպոսներուն միութիւնն է բուն իրաւարանութեան տէրը. և այս իրաւարանութիւնս առանձին մարդու չեմք տար, ինչպէս որ կալլիքաններն ալ չեն տար.

Յ. Այս վէճիս սկիզբը կոստանդեայ ժողովքէն է. այն ատենը մի և նոյն ժամանակի մէջ քանի մի Պապ կային, և ատոնց ճշմարիտ Պապ ո՞րը ըլլալը վէճի առարկայ եղած էր. վէճը կտրելու համար կոստանդեայ ժողովը ըսաւ որ, մի՛ որ այս ժողովքս վճռոյն չհնազանդի նէ՝ ժողովը անիկայ պապ չը ճանչնար. (Այս խօսքս քիչ մը ընդարձակ ըսելով պատմութիւնը՝ երկար քշեց. բայց հոս գրածս այն երկար պատմութեանը ամփոփումն է).

Գ. Սակայն կոստանդեայ ժողովքէն երկու հարիւր տարի ետքը Բիէր Ցէմարք փարիզու արքեպիսկոպոսը, և անկէց քիչ մը ետքը Պօսիւէ, Մօ քաղաքին եպիսկոպոսը, և կալլիքան եկեղեցւոյ բոլոր եկեղեցականները փարիզ ժողվուելով 1682ին վճիռ ըրին թէ ժողովքը պապին վրայ իրաւարանութիւն ունի, և Պօսիւէ՝ ինչպէս որ յայտնի է, մեծ գիրք մըն ալ գրեց կալլիքաններուն այս ժողովքին վճիռը արդարացընելու համար. Բայց թէ որ պապը հաւատոյ յօդուածներուն վրայօք մոլորի նէ՝ այն ատենը անոր ընդհանուր եկեղեցւոյ վրայ ունեցած իրաւարանութիւնը ի՞նչ ըլլալու է.

Յ. Անհնար է որ Պապը հաւատալեաց վրայ սխալի. որովհետեւ Քրիստոս տէրն մեր յայտնի խօսքով ըսաւ Պետրոսի, և անով անոր ամեն յաջորդներուն որ, և դու երբեմն

դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո ։ Բոլոր քրիստոնեայ եղբարց հաւատքը Պետրոսի առաքելոյն յաջորդը պիտի հաստատէ ․ և թէ որ սանկ հաւատքը հաստատող հեղինակութիւն մը չըլլայ նէ՝ հաւատալեաց վրայ հերետիկոսութիւն մը ելած ատենը վէճը լուծելու և քրիստոնէից հաւատքը հաստատելու միջոց մը չմնար ։

Գ․ Կը մնայ այն ատենը համօրէն քրիստոնեայ եկեղեցիներուն միաձայն աւանդութիւնը , որովհետեւ հերետիկոսութիւնը նոր է , անհնար է որ ամէն քրիստոնեայք և անոնց առաջնորդները գիտնան , և գիտցողները հաճութիւն տան ։ Այս կերպով այն բանը չըլլուած և նոր վարդապետութիւն ըլլալը ապացուցուելէն ետքը՝ հերետիկոսութիւն ըլլալը ինքնին կը հետեւի ․ և ասով քրիստոնեայք իրենց նախնի հաւատքին վրայ չհաստատուին նէ՝ իրենց յարգած նախնեաց հաւատքը ըլլալը գիտնալով այն հաւատքը չը բռնեն նէ ․ իրենց ժամանակակից գտնուող Հռովմայ հայրապետին այն հաւատքը ունենալը իրենց վրայ ազդեցութիւն չըներ ․ իրենց նախնեացը համար և իրենցմէ զատ բոլոր քրիստոնէից համար սխալած են ըսողները ամենեւին խիղճ չեն ըներ ըսելու թէ Հռովմայու պապն ալ սխալած է ։ Սակայն վերոյիշեալ Տէմարք և Պօսիւէ եպիսկոպոսները , և ուրիշներն ալ անոնցմէ առաջ և ետքը՝ պապերուն մէջ հաւատոյ յօդուածներուն վրայօք ալ մոլորածներ գտան , և կը յիշեն Լիբերիոս պապը որ Արիոսականներուն հաւատոյ դաւանութիւնը ստորագրեց ․ և Հոնորիոս պապը , որ Նեստորականաց մէկ ճիւղը եղող միակամեան բռնածներուն կուսակից եղաւ ։

Դ․ Հռովմայ աթոռոյն թշնամիները (այսինքն աղանդաւորները) անոնց վրայ սանկ ձայներ հանեցին , հին պատմութիւններուն գրածներէն իրենց կամացը ուզածին պէս ծուռ բաներ հանելով ։ Այն ատենը քրիտիքայի արուեստը շատ ընդարձակ նիւթ չունենալովը հիմնական պէս ծաղկեալ չէր ․ հիմայ բանին ստոյգը երեւան ելլելուն միջոցները շատցած են , անոր համար Պօսիւէ և անոր պէսերը պապերուն մէկ քանին հաւատոյ մէջ մոլորած կարծեցին նէ՝ մեղադրելի չեն ․ հիմայ բանին ճշմարտութիւնը ինչ ըլլալը երեւան ել-

ըլլէն ետքը տակաւին այդ հին և սխալ կարծիքին վրայ պըն-դելով հերետիկոսութեան մէջ ինկած պապ ցըցընելին մե-ծապէս մեղադրելի է։

Գ. Ես ալ գիտեմ որ Լիբերիոս Արիոսականներուն շինած դաւանութիւնը ստորագրած ատենը պապական պաշտօնի վը-րայ չէր. Փելիքս նստած էր Հռոմայ աթոռը, և Լիբերիոս աքսոր խրկուած էր, և ստորագրած դաւանութիւնը թէպէտ Արիոսականներուն շինածն էր, բայց Արիոսական մոլորու-թեան նշան չկար մէջը, կասկածելի անոր համար էր որ՝ հա-մագոյակից բառը չէր դրուած։ Ասանկ յայտնապէս հերետի-կոսութիւն չպարունակող դաւանութիւն մը՝ աքսորի ժամա-նակ ինքնագլուխ ստորագրելը մարդկային տկարութիւն մը ցըցընել է, հերետիկոսութեան մէջ իյնալ չէ։ Նմանապէս Ո-նորիոս պապն ալ իրեն եղած խնդիրէն խաբուեցաւ։ Քրիստո-սի մարդկային կամք ունենալը ուրացող միակամեանները հար-ցուցին Ոնորիոսի, թէ Քրիստոս մարդկային կամք ունէր արդ-եօք ուրիշ մարդոց պէս, որոյ համար առաքեալը կըսէ. «Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ»։ Ոնորիոս պատասխան տուաւ թէ չէ՛։ Այս չէ ը-սելովը բսել կուզէր թէ Քրիստոսի մարդկային կամքը Աստ-ուածային կամացը հակառակ չէր, մէկ էր միաբանութեամբ, չէ թէ թուական՝ այլ բարոյական միութեամբ։ Պատասխան ա-ռնողները այս պատասխանը իրենց բանին հաստատութեանը գործածեցին. բայց այն ատենը հաւատացեալք՝ և այս ա-ղանդոյս դէմ եղած ժողովքը մինչև չըրին Ոնորիոսի անունով զրուցուած խօսքը. միակամեանները ով կըլլան նէ ըլլան՝ նը-զովեցին։ Ետքը Սերգիոս և Պօղոս միակամեան աղանդաւոր պատրիարքներուն Ոնորիոսի գրած նամակին օրինակը գտն-ուած ատենը իմացուեցաւ որ այս երկու աղանդապետները խարդախութիւն բանեցնելով Ոնորիոսը խաբեր և անոր անու-նովը ուրիշ պարզամիտներն ալ խաբելու համար անանկ գիր մը առեր են ձեռքէն։

Ձ. Այս այդպէս է, այդ պատմութիւնները աղէկ գիտեր եղեր։

Գ. Բայց մեր բուն խնդիրը այս չէ։ Լիբերիոսի և Ոնորիո-

մի վրայօք Ճշմարիտ պատմութիւնը գիտցուելէն առաջ այս երկուքը հերետիկոսութեան մէջ ինկան բոլոր ուղղափառ փորձառականները և աստուածաբանները հաւատոյ դէմ մոլորած չեղան, շիզմաթիք չսեպուեցան։ Անանկ է նէ՝ պապը հաւատալեաց մէջ կրնայ սխալիլ ըսելը Քրիստոսի յայտնի բանին դէմ ելնել չըլլայ, և կրնայ սխալիլ ատէյի ենթադրութիւնը՝ ընդհանուր և անկոպար իրաւարանութիւն մը տալ չի փայլեր, անոր համար Գալլիքանները՝ որ պապին անսխալութիւնը չեն ընդունիր, ընդհանուր իրաւարանութիւնն ալ չեն ընդունիր։ Յանսենիստները՝ որ Հոլանտականն են, և Լուդովիկոս ԺԴ. Թագաւորին օրը Հոլանտականութիւնը տէրութեան կրօնք բռնուած էր, և մինչև 1789 ին խաղաղութիւնը ատանկ տևեց, պապին կողմէն եկած կոնդակ մը մինչև որ պարլամէնթին մէջ քննութեան չառնուէր նէ չէին հրատարակեր. ըսել է որ պարլամէնթին վրայ պապէն աւելի իրաւարանութիւն մը կը ճանչնային, և պարլամէնթը պապին հանած կոնդակին քննութեանը իշխանութիւն ունեցած կըլլար, և յարմար չտեսածներն ալ կրնար խափանել. քանզի պարլամէնթը չտեսած պապին կոնդակը չհրատարակուիլ ըսելը այս ըսել է։ Այս ալ գիտելու բան մըն է որ՝ ունեցած կասկածնին որով պապին կոնդակը քննութեան առնել կուզեն. քաղաքականութեան վերաբերեալ բան մը խառնի չըլլայ, որովհետև Հռոմայ պապին հանած կոնդակը միշտ եկեղեցական նիւթոց վրայ կրնայ ըլլալ։ Յանսենիստներն աշխարհական մարդոցմէ բաղկացեալ պարլամէնթը պապին կոնդակին քննիչ ընդունելնուն շիզմաթիք սեպուեցան։

Թ. Հռոմայ պապերուն համար համբաւ եղած էր, որպէս թէ եկեղեցական իրաւարանութիւննին առնելու պատճառաւ ժամանակաւոր իշխանութիւննին ալ աւելցնելու միտք ունին, և որովհետև պապին ժամանակաւոր իշխանութեան աւելնալը Եւրոպայի թագաւորները չեն քաշեր, այն կարծած միտքերնին առաջ երթալու միջոց չը ձգելու համար էր որ պապին կոնդակը պարլամէնթին քննութեանը տակը ձգեցին։ Սակայն աչքառ էր գիտնալին որ, պապերը ինչ ժամանակ որ թէ խաղաղցի իշխաններուն, թէ Գերմանիայի և թէ Գաղղիա-

յի դէմ կախ բացեր ենէ, կամ Հռովմայու աթոռոյն ժա-
ռանգութիւն եղած երկիրները պաշտպանելու համար էր,
ինչպէս են Յուլիոս Բ. պապին վենետիկցիներուն հետ բա-
ցած կռիւը, կամ հասարակաց մէջ իրեն զեղխ վարքովը գայ-
թակղութիւն ձգող իշխան մը զսպելու համար, ինչպէս Գրի-
գոր Է. պապին Նէմցէի Հենրիկոս Դ. կայսեր դէմ բացած կը-
ռիւը, կամ աստուածային օրինաց վրէժխնդրութեան համար,
ինչպէս է վոնիփակիոս Ը. պապին բացած կռիւը Ֆրանսայի
Ֆիլիփ Լը Պէլ թագաւորին դէմ. առանց և ուրիշ կռիւներուն
հիչ մէկուն առենը պապը իրեն իշխանութեանը երկիրներուն
վրայ թիզ մը տեղ չաւելցուց. ինչ երկիր ունէր նէ՝ այն եր-
կիրներուն տիրոջը աստուածեռնութեամբը նուէրք տրուած
էին. և պապը ետքը աս երկիրներէս մէկ քանին կորսնցուց,
նոր երկիր չստացաւ։ Բայց թագաւորները պապէն առնին
բաներու վրայ փախնալով՝ կոնդակները քննութեան տակ ձը-
գելնին քաղաքական նպատակ մը ունի. չիմանթիք չեն ըսուիր
ասոր համար։

Գ. Ուրիշ բան մը ունիմ պատմելիք, որուն մէջ ոչ քաղա-
քական նպատակ կայ, և ոչ երկիր առնելու կամ բռնանալու
երկիւղ. լոկ աստուածաբանական խնդրոյ մը վրայ է. որ մէկ
կրօնաւորական միաբանութիւն մը յայտնի հակառակած է
Հռովմայ աթոռոյն, և չիմանթիք ըսուած չէ. Սէմէս կոլա-
նոս մատենագրին օրէն 'ի վեր անանկ կարծիք մնած էր Հա-
յոց պատմութեան աղէկ հմտութիւն չունեցող Հայազգի Հը-
ռովմէականներուն մէջ, թէ Յովհան Օձնեցի Հայոց հայրա-
պետը Նեստորական է. վենետիկու Մխիթարեաններէն Հ. Մի-
քայէլ Չամչեանը ասոր ուղղափառութիւնը աղէկ յայտնեց Հա-
յոց պատմութեան մէջ. բայց [illegible] աշակերտ Հա-
յազգի վարդապետները ծանր մէծ հանեցին ասոր դէմ. Օձ-
նեցիին երեւութական հերետիկոսաց դէմ գրած ճառին հին
օրինակը փարիզու գրատանը մէջ գտնելով՝ նոյն վենետիկի
Մխիթարեաններէն Հ. Մկրտիչ Աւգերեանը ծանօթութեամբ
տպեց. վէճը նորոգեցաւ. հարկ սեպեց Հ. Աւգերեանը այս
ճառը Լատիններէն թարգմանել և տպել, և Հռովմայու երեւե-
լի աստուածաբաններուն քննութեանը յանձնել. 1816 թուին

տպուեցաւ. աստուածաբանները տեսան և քննեցին, որոց մէջէն հիմայ անունները միայն մնացածներն են կարդինալ Ճուրլա բաղմահմուտ աստուածաբանը, և կարդինալ Մաւրօ Գաբէլլարի, որ ետքը պապ ալ եղաւ Գրիգոր ԺԶ. անունով. ասոնք գրով և նամակաւ վկայութիւն կուտան որ Յովհան Օձնեցիին ընդդէմ երևութականաց ճառին մէջ ուղղափառ հաւատոյ դէմ բան չկայ. և ընդարձակ նամակներով գովութիւններ ալ կուտան և կը պաշտպանեն. Վիէննայի Մխիթարեանները կըլլեն նոյն Յովհան Օձնեցւոյն այն ճառին մէջ մոլորութիւն գտածի պէս, որպէս թէ իրենք Հռովմայու կարդինալներէն աւելի հմուտ են աստուածաբանութեան, գիրք կը գրեն, կաշխատին Յովհան Օձնեցին հերետիկոս և Եւտիքական ցուցընելու. չէ թէ այն Լատիններէնի թարգմանուած գիրքը անոր չէ ըսելով, որ սանկ ըսէին նէ, յիշեալ աստուածաբաններուն վճռոյն դէմ բան մը ըսած չէին ըլլար. այլ ընդունելով թէ անորն է, և մէջէն մոլորութիւն գտնելով. Սակայն այսպէսով ալ՝ այն Վիէննայի Մխիթարեան վարդապետները չիզմաթիք չըրուեցան. թէև ասոնք ալ Հռովմայու աթոռոյն աստուածաբանից վճիռը քննութեան տակ առին.

ե. Ասիկայ պապին վճռոյն չհնազանդիլ և անիկայ քննութեան տակ առնել չէ, քանի մի աստուածաբանից վճիռը գխադրել է, որ չիզմաթիք անուան արժանի յանցանք մը չէ.

զ. Գիրքերուն քննութիւնը կարդինալներէ բաղկացեալ ժողովքի մը մէջ կըլլայ միշտ. և հերետիկոսական խօսք պարունակող գիրքերուն ցանկն ալ հոն է, որ Ինտէքս կըսուի. անանկ որ՝ Ինտէքսի մէջ անունը գրուած գիրք ըսել՝ հերետիկոսական գիրք ըսել է. և ամէն Հռովմէական կը պարտաւորի այն գիրքը ձեռք չառնելու և չկարդալու, և հնազանդչողը հաւատոյ կողմէն կասկածելի և անհնազանդ կըլլայ. Անանկ է նէ՝ նոյն ժողովոյն աստուածաբաններուն իբրև ուղղափառ հրատարակած գիրքերնին ալ հերետիկոսական է ըսել՝ աթոռոյն վճռոյն անհնազանդ ըլլալ է.

է. Այդպիսի խօսքերուն ամենուն ալ վերջը կուգայ, երբ որ հրատարակուի այն շրջաբերականը որ Պիոս Թ. սրբազան քահանայապետը գրեց բոլոր արևելեան քրիստոնէից, որ

Հռովմայէն բաժնուած են. և մեր առնենս հրատարակելով մեզի ալ խրկեց. հրաման ալ ունիմք որ այս շրջաբերականը արեւելեան քրիստոնէից մէջ գործածուած լեզուներու թարգմանուի և տպուի որ ամենքն ալ իմանան. թէ որ լատիներէն գիտես նէ՝ բերեմ որ տեսնես։

Գ. Գիտեմ. և տեսնելու ալ կը փափաքէի։

Տ. Տէրտէրը գնաց մէկ հատ մը բերաւ. և սկիզբէն սկսելով մէկ երկու թուղթ բան 'ի միասին կարդացինք. ետքը ըսաւ Գիւղացին։

Այս բաներս աղէկ են. բայց աստուածաբանական փաստերով վիճաբանական ոճով բարակ տրամաբանութեամբ գըրուած բաները հասարակութեան մտքին շատ յարմար գալու բաներ չեն. այսպիսի բաներ առաջկուց 'ի վեր մէկ կողմէն և մէկալ կողմէն զրուցուած, և յարմար կամ անյարմար պատասխան մը առած են։ Հասարակութեան դիւրաւ հասկնալու բաներն են, որ ինչ նախադասութիւն պիտի հաստատուի նէ պատմական ձեւով հաստատուի. ինչ բանի վրայօք հասարակաց մտքին մէջ տպաւորուած թիւր կարծիքներ կան նէ պատմութեամբ հերքուին. և ասկից աստուածաբանական խնդրոց մէջ աւելի դիւրին է. որովհետեւ ճշմարիտ հաւատքը և եկեղեցին և ստոյգ աւանդութիւնը հինն է. և հին բաները պատմութեամբ գիտեմք, և պատմութեամբ կրնամք ամեններուն գիտցունել։ Այս շրջաբերականը պատմական քանի մի բաներ պարունակելուն համար աղէկ է. միայն ես կը փափաքէի որ՝ հայերէնի թարգմանողը աստուածաբանական եզերքները ճիշդ թարգմանէր հայերէն լեզուին, որպէս զի կարդացողները իրենց ընտել և սովորական լեզուն հետ դանելով հակառակութեան խմորը վերնար, Քաղկեդոնի ժողովին և Լեւոնի տոմարին ծուռ թարգմանութեանը պէս և մեր ատենները քանի մի լատինական բառերու անտեղեակ թարգմանութեանց պէս նոր հակառակութեան առիթ չըլլար։

Յ. Այս շրջաբերականիս թարգմանութեանը մեր Հ. Արսէնը պիտի աշխատի. բայց ըսած խօսքերէդ այն միտքս եկաւ որ դուք Քաղկեդոնի ժողովը և սուրբն Լեւոն Հռովմայ հայրապետը կը նզովէք եղեր։ Թէ որ_Եւտիքական_չէք նէ՝

տանք ինչո՞ւ կ՚ընդունինք, որ Նեստորէսի աղանդը դատապարտեցին։

Գ. Որովհետեւ ատեն մը թէ Յունաց եւ թէ Հռովմայեցւոց եւ մեր մէջը վէճ եղած է ասոր համար. եւ ձեր յարգութիւնը յատուկ չխօսեցաք ասոր վրայ. դիպուկ առիթ գտայ այս տեղս ձեզի յիշեցնել, որ ասոր վրայօք ալ եղած կասկածը վերնայ։ Քաղկեդոնի ժողովը եղած տարին Հայերը Պարսից դէմ՝ հաւատոյ վրայ կռիւ ունէին. քրիստոնէական եկեղեցին պաշտպանելու համար արիւն կը թափէին. Մարկիանոս կայսրէն ալ օգնութիւն ուզած էին եւ գտած չէին։ Այն շփոթմունքներուն ատենը Քաղկեդոնի ժողովքը Հայոց վարդապետներէն մարդ չգտնուեցաւ. ժողովը լմննալէն ետքն ալ Հայաստան ժողովական թուղթ մը չխրկուեցաւ. ինչպէս որ 20 տարի առաջ Եփեսոսի առաջին ժողովքը լմննալէն ետքը ժողովական թուղթ գնաց մեր սուրբ Սահակ հայրապետին։ Ասոր համար Հայերը չկրցան տեղեկութիւն ունենալ Քաղկեդոնի ժողովոյն վրայ։ Ատեն մը ետքը, երբ որ քիչ մը հանդարտեցաւ Հայաստան եւ ատանկ բաներու վրայ խօսելու պատեհութիւն եղաւ, Նեստորականները որ Եփեսոսի առաջին ժողովքէն ետքը Յունաց երկրին սահմաններէն դուրս ինկած ըլլալով Ասորեստան եւ Հայաստան բազմութիւն մէկէն եկած էին, սկսան ըսել թէ Եփեսոսի ժողովոյն անիրաւութիւնը յայտնի եղաւ. ահա Քաղկեդոնի ժողովքը վեց հարիւր հայրապետէն աւելի ժողվուելով Նեստորի դաւանութիւնը ընդունեցին. Քրիստոսի աստուածութիւնը եւ մարդկութիւնը իրարմէ զատ ըլլալը դաւանեցին, եւ երկու բնութիւն ըսին։ Անդրէն Նեստորականները՝ որ անոնք ալ Քաղկեդոնի ժողովքէն ետքը շատուոր մէկէն Ասորեստան եւ Հայաստան եկած էին, ժողովքը մերժեցաւ, Նեստորական եղաւ. եւ մենք Նեստորի դէմ ուղղափառութիւն քարոզելնուս համար ժողովքին բանաթեանը երեսէն կը հալածուինք կոր կ՚ըսէին։ Հայերը Նեստորի մոլորութիւնը գիտէին, բայց Նեստորինը ինչ ըլլալը չը գիտէին. Նեստորականներն ալ կեղծաւորելով եւ իրրեւ սուրբ եւ ուղղափառ ձեւանալով խօսքերնին լաւներուն միտքը իրենց որսացին, միտքերնին 'ի դուռ շարժեցին. բայց եկեղե-

ցին այն ատենը մէկ որոշիչ դատում մը և վճիռ մը չըրաւ. թէպէտև երկու հակառակ կողման վկայութիւնը իրարու համաձայն գտաւ Քաղկեդոնի ժողովքը Նեստորական ըլլալուն վրայ։ Այսու ամենայնիւ դատումը կախ ձգեց մինչև այն ատենը որ խմացաւ թէ Յունաց Զենոն կայսրը հրովարտակ հանելով Քաղկեդոնի ժողովոյն խօսքը ըլլալն անգամ արգիլեց։ Այն ատեն Հայերը այս հրովարտակէս մակաբերեցին որ՝ Քաղկեդոնի ժողովոյն համար լսածնին ճշմարիտ պէտք ըլլայ. ատի բոլորովին մերժեցին։ Նոյնը Լևոնի տումարին ալ՝ որ Եւտիքէսի դէմ գրած էր Փլաբիանոս պատրիարքին, դէշ թարգմանութեամբ մը հրատարակեցաւ Հայոց մէջ. Թարգմանութեան մէջ յայտնի Նեստորականութեան հոտ կար. և Նամակը Եւտիքէսի դէմ էր, և Քաղկեդոնի ժողովոյն մէջ կարդացուած և հաւնուած էր։ Քաղկեդոնի ժողովքը Նեստորական կարծողներուն ասկէց աւելի ապացոյց չուզեր կարծիք ընելու թէ Լևոն պապն ալ Նեստորական է. անոր համար Քաղկեդոնի ժողովքն ալ նզովել սկսան. Լևոնն ալ։ Սակայն Եւտիքէս ալ կը նզովուի մեր ամեն գիրքերուն մէջ. բնաւ մէկը չկրնար ցուցունել թէ մեր հայրապետաց և վարդապետաց մէկուն գիրքին մէջ Եւտիքէսի անունը գովութեամբ յիշուած ըլլայ։

Պ. Բայց պէտք էր, երբոր ընդհանուր եկեղեցին Քաղկեդոնի ժողովքը կընդունի. և Լևոն պապին սուրբ կըսէ, դուք ալ ընդունէիք. թէ որ Եւտիքէսի յարեալ չէիք նէ։

Գ. Ձեր յարգութեանը կը հարցունեմ, եղա՞ծ է անանկ մէկ ժամանակ մը որ Հռոմայ եկեղեցին պատկերաց և սրբոց մասանց յարգութիւն չտայ, և հակառակի։

Պ. Անանկ բան բնաւ եղած չէ։ Մանաւանդ Իտալիոյ ազատութիւնը Յունաց կայսերաց ձեռքէն՝ այս պատճառաւ եղաւ, որ Յունաց կայսրերը պատկերամարտ եղան. Հռոմայ հայրապետը այս նոր հերետիկոսներուն դէմ եկեղեցւոյ հաւատքը կը պաշտպանէր. երբոր կայսրը հայրապետին վրայ բռնանալ ուզեցնէ, Իտալիա ալ Յունաց կայսերութեան երկիր ըլլալէն դադարեցաւ։ Այսքան անլուր էր պատկերամարտութիւնը Հռոմ՝։

Գ. Պատկերամարտից դէմ եղաւ Նիկիոյ երկրորդ ժողովը։

որ տիեզերական ժողովներուն կարգը եօթներորդն է․ և ա-ռաքելական և արևմտեան քրիստոնէից միապէս ընդունելի է․ երբոր այս ժողովոյս պատմութիւնը նորայս հասաւ նէ՝ Հռով-մէական եպիսկոպոսներ և վարդապետներ շատ բազմութիւն ժողվուեցան Ֆրանքֆորթ քաղաքը․ և ժողովոյն վճիռը քըն-նեցին և հերքեցին․ բայց ասոր համար Ֆրանքֆորթի ժողո-վոյն մէջ գտնուած հայրապետները ոչ հերետիկոս ըսուեցան․ և ոչ չիզմաթիք։

Ֆ. Որովհետև Նիկիոյ Բ. ժողովոյն գործը որ Յունարէն էր․ Լատիներէնի սխալ թարգմանուած էր․ և այն թարգմա-նութեանը նայելով դատապարտեցին․ ետքը երբոր ժողովոյն վճիռը Յունարէն բնագրէն առուեցաւ և ճիշդ թարգմանու-թիւնը երևան ելաւ․ իմացուեցաւ ուղղափառ ըլլալը և ըն-դունելի եղաւ․

(Աղուոր բանիկ ասոր վրայ թէ Նիկիոյ ժողովոյն մէջ Հռով-մայու պապին կողմէն ալ մարդ կար․ և ետքը պապն ալ ժո-ղովքը ընդունեց և հաստատեց․ բայց Ֆրանքֆորթի ժողովքը ասոր չը նայելով դատապարտեց․ և ասկէց կերևի որ ժողովք մը ընդունելու կամ՝ չընդունելու համար այն ատենն ալ․ այ-սինքն ութերորդ դարուն մէջ․ պապին ընդունելուն կամ՝ չըն-դունելուն չէն նայիր եղեր․ Բայց այս հետևութիւնս հանե-լուն կարգը անցած ըլլալով այն ատենը միտք չեկաւ)․

Գ. Քաղկեդոնի ժողովոյն վրայով ալ նոյնն է․ գէշ թարգ-մանութեան նայելով ժողովքը դատապարտել, և ասկէց ա-լի այն ալ որ նոյն խաւ կը դատապարտէին։

Ֆ. Գէշ թարգմանելով գայթակղութեան պատճառ ե-ղած ի՞նչ բաներ կան ուրիշ։

Գ. Նատուրա և Փրօչէտէրէ և Փուրկաթօրիօ բաները․ այս ե-րեքին վրայ ալ մեր եկեղեցին զրպարտողները կըսեն․ Հա-յերը Քրիստոսի վրայ երկու Նատուրա չեն ճանչնար․ Հոգւոյն որդոյ համար միայն ՚ի Հօրէ Փրօչէտիտ կըսեն․ ՚ի յՈրդւոյ Փրօչէտիտ ըսելը չեն ընդունիր․ ներելի մեղօք կամ՝ ապաշխարութիւնը չվճարած մեռելներուն համար չեն ըսեր թէ Փուրկաթօրիօ կը կենան նեղութեան մէջ մինչև մաքրուին․ այս երեքս ալ սուտ զրպարտութիւն է․ այս երեքին վրայ ալ մեր եկեղեց-

ւոյ դաւանութիւնը Հռովմէյեցւոց պէս է. յիշեալ Լատի-ներէններուն տեղը գրուած Հայերէնները անանկ բառեր են որ այն նիւթերուն մէջ այն բառերէն ծուռ միտք կելլէ որ մենք չեմք կրնար ընդունիլ։

Բ. Ի՞նչպէս։

Գ. Նատուրա բառը որ Նաշէրէ բառէն եղած է, այսինքն նշա-նակէ ծնած առնելէն և ծնելուն վերաբերեալ հանգամանք-ները և յատկութիւնները. և որովհետև Քրիստոս երկու ծնունդ ունի, մէկը ժամանակաւոր և մէկը յաւիտենական, կըր-նայ և հարկ ալ է ըսուիլ թէ երկու Նատուրա ունի. բնու-թիւն բառը, որ Նատուրա բառին տեղը կը դրուի թարգմա-նութեանց մէջ, բուն բառէն եղած ըլլալով կը նշանակէ էու-թիւն, իսկութիւն։ Ասոնք մէկ կուգան անձն բառով նշա-նակուած մտքին. և ինչպէս որ երկու անձն չըսուիր, երկու բնութիւն ալ չըսուիր։ Քաղկեդոնի ժողովքին համար Նեստո-րականներէն և Եւտիքականներէն միօրինակ լսելով թէ ժո-ղովքը Նեստորական էր, և սահմանին մէջը երկու բնութիւն առնելով՝ կարծիք ըրին վերոյիշեալ ստուգաբանութեանը ու-ժով, թէ լսածնին իրաւ էր. բայց Հայոց եկեղեցւոյն այս նիւ-թոյս վրայօք ի՞նչ դաւանութիւն ունենալը Ներսէս Կլայեցին գիրքերէն և Յովհան Օձնեցին վերոյիշեալ ճառէն աղէկ կը հասկցուի, Ներսէս Կլայեցին գիրքն ալ Քարէլլէգգի քահա-նայն Լատին լեզուի թարգմանած և տպած է 'ի Վենետիկ, 1837.

Բռոցեդերէ բառը Լատիններէնին մէջ երկու բառէ շինուած է. մէկն է բռօ, և երկրորդը ցեդերէ։ Բռօ՝ յառաջ ըսել կըլլայ Հայերէնին մէջ. Բայց այս բառիս դէմ Հայերէնին մէջ գոր-ծածուած բառն է բղխել, որուն ճիշդ Լատիններէնը և իտա-լերէնն է էմանարէ. և Հայերէնը պարզ բառ մըն է և կը նշանակէ առաջին աղբերէն անմիջական ծագումը. առաւել չենթադրեր. անոր համար յՈրդւոյ բղխումն ըսելը Հա-յերէն լեզուին մէջ ծանր և անյար կուգայ։ Բայց որիշ կերպ բացատրութեամբ, յառաջ բղխեալ ըսելով Հայոց եկե-ղեցւոյն մէջ բարձրաձայն կը կարդացուի. 'ի հայրաշարժ 'ի յազգերէն յառաջ բղխեալ։ Եւ բնաւ մէկ առողջ մը մեր դըրոց

մէջ՝ բղխել բառով Որդւոյ վրայ գրուցուած չէ Հոգւոյն սըր-բոյ համար․ թէպէտեւ այս կողմէն Հոգւոյն սրբոյ Որդւոյ հետ ունեցած յարաբերութիւնը մեր՝ նախնի հարք ալ կը խոստո-վանին, ինչպէս որ Հ․ Գաբրիէլ Աւետիքեան՝ Մխիթարեան վարդապետը՝ յայտնի ըրած է իր ճառին մէջ, որ Իտալերէն տպուած է Վենետիկ 1824 թուին։

Purgatorium բառը purgare բառէն կուգայ, որ մաքրել ըսել է։ Ասոր Հայերէն դնել սովրած են քաւարան բա-ռը, որ քաւել բայէն եկած է․ եւ այս բայը իրեն Լատիներէն համապատասխան ունի, expiare։ Հայք հանդերձեալ աշ-խարհքը purgatorium չեն ճանչնար, որ մեղուցելոյն կողմէն ալ մէկ այս շնորհիս գործակցութիւն մը կենթադրէ, լոկ կը-րող վիճակ մը չը ցուցնէր։ Մաքրութիւն կը ճանչնանք․ անոր համար ննջեցելոց վրայ ալ աղօթքներ կարդալով կըսեմք․ թող զմեղս ննջեցելոյս, եւայլն։

Ձ. Երբեմն այդպէս բառերու նշանակութեան վրայ վէ-ճեր կըլլան անէյի կը լսէի, որպէս թէ Բրօբականտայի աշա-կերտները աւելի տեղեկութիւն չունին կամ ունին Հայերէն բառերուն ճիշդ նշանակութեանը, եւայլն․ ափսոս այն լաւծ-ներուս վերաբերեալ բան պիտի ըլլայ։

Գ. Այն վէճը ուրիշ բան է․ Վենետիկի Մխիթարեաննե-րուն եւ Հռոմէյու Բրօբականդաներուն կը վերաբերի․ Եւ-րոպացի Բրօբականդաները թէպէտ եւ Հայ են ազգաւ, բայց Հայերէն լեզուի աւելի տեղեակ ըլլալնին մինչեւ հիմայ ցուցը-նելու կարող չեն եղած ոչ իրենց գիրքերովը եւ ոչ խօսքով-նին։ Ներ նախնեաց գիրքերէն տեղեկութիւն չունին․ Լա-տին հեղինակաց գիրքերուն մէջ աստուածաբանական ու-սումնքը լինելնելնուն պէս՝ արտմնեուե Հայոց քարոզելը ի-րենց նպատակ կը դնեն, վիճաբանական նիւթերու եռանդ կըլլան, եւ ասոր վերաբերեալ տեղեկութիւններն ալ կըսեմէս կալանաւ կրօնաւորին գիրքերէն կը ժողվեն որ խառնացի մը ըլլալով՝ Հայոց ոչ ազգին բնաւորութեանը եւ ոչ լեզուին յատ-կութեանը եւ ոչ ալ պատմական աւանդութեանցը տեղեակ ըլլալով․ ինչ որ Հայոց թշնամի Յոյն մատենագիրներուն գիր-քերուն մէջ գտեր է, եւ ինչ որ քանի մը Լատին հեղինակնե-

րու մէջ կարդացեր է Հայոց համար, անոնց ամենն ալ տպագ կը կարծէ և կը վիճի անոնց հետ.

Ճօվաննի տէ Սերբօզ մարքէզը, որ բուն Հայազգի է և կըրօնիւք Հռովմէական, թէ Բրօբականդ-խաղներուն և թէ բուն Հռովմայեցի աստուածաբաններուն Հայոց եկեղեցւոյն վրայ ունեցած ծուռ կարծիքներնին չխոկելու համար երեք հատոր գիրք շինած և Բրօբականտային նուիրած է. և վէնէտիկի հոգևորական պաշտօնի որրաքննութեան նախագահ Տ. Մաաքէրօնիին քննութեամբը և Բատուայի գրոց քննութեան դիւանին հաւանութեամբը և հրամանաւը տպուած է վէնէտիկ, 1786 թուին.

Ֆ. Շատ շնորհակալ եմ որ այս նիւթերուս վրայ ինձի այս տեղեկութիւնները տուիր. Աստուծոյ կը տենչամ այն օրը որ տարապարտ գայթակղութեանց պատճառները վերնալով անկեղծ և հաստատուն սէր և միաբանութիւն մը կըլլայ.

Գ. Մեր ալ ամենուն ոգւով փափաքնիս այն է.

Ֆ. Կը ցաւիմ որ աւելի երկար ժամանակ չունեցանք ընդարձակ տեսութիւն ընելու.

Գ. Կը յուսամ որ ասիկայ մեր տեսութեանը վերջին անգամը չըլլար. երբոր հրաման ընէք՝ զիս պատրաստական ծառայ կը գտնէք. և ինծի պատիւ ալ կը համարիմ ձեր մեծութեանը քովը գալը, բայց այս ալ կը կրկնեմ ինչ որ առաջ ըսի. իմ հոս գալս չէ թէ իբրև ազգին կողմէն գալ մըն է, այլ իբրև առանձին մասնաւոր մարդ մը. ուստի այսպիսի բաներու վրայ եղած խնդիրները աւելի աղէկ կըլլայ որ գրով պատրիարքին ընէք անմիջապէս, և անկէց առած պատասխաններդ՝ ազգէն առած կը սեպուի. որովհետև այն ալ ազգային ժողովներուն չառաջարկած ատոր պատասխան չտար.

Ֆ. Ինծի ըսուեցաւ որ ձեր պատրիարքը դաւանութեան գիր մը պիտի խրկէ եղեր ինծի.

Գ. Չըլեցի. և ճշմարիտ ալ է նէ, թէ որ ինծի հարցուի նէ հաճութիւն չեմ տար. որովհետև Հայոց եկեղեցւոյն դաւանութիւնը տալ նէ՝ եկեղեցական ժողով մը ըրած պիտի ենթադրուի. Պօղոս պատրիարքին օրովը ժողով մը եղաւ 1820 ին, բայց անկէց ետքը ատանկ բաներու համար ժողով

եղած չէ ։ Այն առենի ժողովքը կը բացատրէ որ Հայոց եկեղեցին Շնորհալւոյն ժամանակը ինչ դաւանութիւն ունէր նէ՝ հիմայ ալ նոյնը ունի։ Շնորհալւոյն գիրքերը Լատիներէն թարգմանուած ըլլալով. և յիշեալ ժողովքէն ոչ առաջ և ոչ ետքը Հայոց եկեղեցւոյն ոչ դաւանութեանը և ոչ արարողութեանցը փոփոխութիւն մը չըլլալով, այդպիսի դաւանութիւն մը առլը առանց պատճառի ըլլալէն զատ, ժողովքով որոշած է կարծելով, սուտ ենթադրութեան պատճառ կըլլար։

Այս խօսքէս ետքը իրարմէ հրաժարեցանք. երեք ժամու մօտ առեն քշեց խօսակցութիւնը. և այս խօսակցութիւնս գրի առնուեցաւ։

1848 Մարտ 25.

Իսկ Անտոն Հասունեան պատրիարքն Հռովմէական հայոց լուեալ զխօսակցութիւնս զայսոսիկ, խռովեցաւ յոյժ. և իսկ և իսկ գրեաց նամակս առ մեծամեծ անձինս Հռովմէական հայոց գալ անպատճառ 'ի տուն իւր. և ժողովեալ զնոսա առ ինքն, պատմեաց նոցա զամենայն.

Եւ 'ի նմին գիշերի ժողովին ամենեքին 'ի տուն Ցէս Նագրի Ցոլճեանու, յոր հրաւիրեալն էր և կարդինալն. և 'ի սկսանիլ խօսիլ նոցա, հարցանեն ցկարդինալն զորոշումն ժողովոյն 'ի տան փաւօղայեանին. Եւ նա պատմեալ նոցա զուղղափառ դաւանութիւնն Հայոց՝ ասէ ցնոսա. համոզեցայ, թէ չիք 'ի Հայս կասկած հերձուածողութեան, և այսպէս ունիմ գրել և 'ի Հռովմ.

Յայնժամ միաբան ամենեքեան եկեղեցականք և աշխարհականք սկսանին մեղադրել զնա և ասել, դու մոնսինեօր, միամիտ ոք էք, և չէք տեղեակ չարամտութեան Հայոց. որք ոչ որպէս հաւատան, այնպէս դաւանին, զի այլազգ հաւատան և այլազգ դաւանին, և միամտութեամբ քով կործանես զտուն մեր, զոր 'ի քսան ամաց հետէ աշխատիմք շինել 'ի պարծանս դահլին Հռովմայ. բողոք գրէն բառնամք առ սուրբ գահն, զորոյ անխախտութիւնն դու օխալական երեւեցուցանես յայս հերձուածողացն 'ի նմանէ, եւ այլն. Զայս և որ զսոցին նման են բանք, խօսին առաջի նորա, և այնչափ առնեն,

մինչեւ խոստանայ նոցա յետս կոչել զխոստումն իւր, զոր խոստացաւ պատրիարքին Հայոց։ Եւ յետ չորից աւուրց հրաւիրեցաւ կարդինալն յԱյի Սթէֆանոյ, յոր գնացեալ էր երկուաւուրբք յառաջ և Մատթէոս պատրիարք, և կարապետ ճարտարապետ, և Յովհաննէս Տատեան. և 'ի լինել ընթրեացն՝ խօսեցաւ Յարութիւն Գարեգին Տատեան զճառ ինչ գովութեան և եղբայրսիրութեան, ընդ որ յոյժ հաճեցաւ կարդինալն. և յետ ընթրեացն 'ի լինել կրկին բանախօսութեանց 'ի վերայ հաւատոյ մասանց, ասէ կարդինալն, լուայ 'ի բազմաց, զի Հայք ոչ այնպէս հաւատան, որպէս ընթեռնուն. ուստի կասկածիմ, թէ մի գուցէ անխոհեմութեամբ սխալ ինչ դատեցայց եթէ զձէնջ և եթէ զայլոց. վասն որոյ ոչ կարեմ վկայել զձէնջ թէ բարի և թէ չար։

Եւ պատրիարքն ասէ ցնա, միթէ դու Աստուած ես, զի զներքին խորհուրդ սրտից մարդոց իմասցիս. ո՞չ ապաքէն 'ի բանից իւրոց արդարանայ մարդ, և 'ի բանից իւրոց պարտաւորի, և զի՞նչ առնէին սուրբ հարք 'ի հին ժամանակս, ո՞չ ապաքէն զհերետիկոսն կոչեալ յատեան, տային նմա խօսել զոր ինչ հաւատայրն, և ըստ այնմ դատէին զնա. միթէ զծածուկս սրտի՞ն դատէին, եթէ զխոստովանութիւնն. դու ասա՛ ծանեար, եթէ մեք այլազգ խօսիմք և այլազգ հաւատամք, կամ ո՛չ՝ որպէս ընթեռնումքն, այնպէս հաւատամք։ Ասէ կարդինալն, այնպէս վկայեցին զձէնջ, եթէ սուտ խօսեցան, Տէր դատեսցէ զնոսա։ Ասէ պատրիարքն, ահա չարախօսքն այնոքիկ՝ որք դիւաշունչ բերանով որպէս խաբեցին զքեզ, և դու մարդ գոլով ճշմարիտ ծանեար զզրպարտութիւնս նոցա, և սխալեցար, խաբեալ են և զպապն ձեր, զլոյսն խաւար ցուցանելով և զքաղցրագոյնն դառն. և դու որպէս խաբեցար այժմիկ և սխալեցար, նոյնպէս խաբեալ է և պապն ձեր և սխալեալ է, և սխալեսցի մինչեւ 'ի կատարած աշխարհիս։

Զայս ասացեալ՝ ել արտաքս և առանձնացաւ 'ի սենեկի միում և ննջեաց։ Ցրուեցան յայնժամ և ժողովեալքն, և ելին արտաքս 'ի սենեկէն, և գնաց կարդինալն ննջել 'ի սենեկի միում, որ պատրաստեալն էր վասն նորա։

Իսկ 'ի վաղիւ անդր ընդ առաւօտն ելեալ պատրիարքն

արտաքս, նստաւ 'ի կառս իւր, և դէպ ուղիղ գնացեալ 'ի Սամաթիա, էջ անտի 'ի Ցէնէր Թաղն կոստանդնուպօլսոյ 'ի ծովեզերեաց տուն Գէորգ աղայի Նշխա Չէլէպեան. և կոչեալ անդ զՏէր Պաղտասար աւագ քահանայն Պալատու, առաքեաց զնա 'ի պատրիարքարանն Յունաց ազդ առնել պատրիարքին, թէ պատրիարքն Հայոց եկեալ է և կամի տեսանել զնորին սրբազնութիւնն։

Յետ երկուց ժամուց եկն փոխանորդ պատրիարքին Յունաց երկու քահանայիւք, և հրաւիրեաց զՄատթէոս պատրիարք. և նա ելեալ անտի գնաց ընդ նմա, և մտեալ 'ի պատրիարքարանն, եւտես ընդունելութիւն մեծ, և բազմեցաւ։

Յետ սովորական ողջունատուութեանց սկսաւ Մատթէոս պատրիարք պատմել նմա մի առ մի զկոնդակ կարդինալին, և զբողոք իւր զնմանէ, և զժողովսն 'ի տունս փառօղապետանց, և զլեառ կոչումն խոստմանն, զոր խոստացեալն էր յառաջին ժողովին։ Ծիծաղեցաւ պատրիարքն Յունաց և ասէ, առ մեզ ևս առաքեաց զկոնդակ մի տպեալ Յունարէն, որ գրէր, թէ Յոյնք 'ի ժամանակաց անտի փառաց հերձեալ 'ի միութենէ կաթողիկէ եկեղեցւոյ անկեալ կան 'ի պէսպէս հերձուածս և յաղանդապաշտութիւնս, և յորդորէր զմեզ մաքրել զեկեղեցիս մեր։

Բայց մեք գրեցաք առ նա պատասխանին լի արժանաւոր յանդիմանութեամբ, վասն հերձուածս կոչելոյ զարեւելեան եկեղեցիս, որ է իսկ ուղղափառ եկեղեցի Քրիստոսի. և բացայայտ ծանուցաք նմա.

Ա. Թէ չէ ինքն և եկեղեցին իւր անսխալ, այլ սխալական ըստ մեզ. զի անսխալ մի միայն ընդհանուր եկեղեցին Քրիստոսի է, զոր կոչեմք Տիեզերական սուրբ ժողով։

Բ. Թէ չէ ինքն գերագոյն դատաւոր 'ի մէջ եկեղեցւոյ, կամ գլուխ պատրիարքաց, այլ հաւասար նոցա, միայն թէ առաջինն է 'ի հաւասարս։

Գ. Եօթն տիեզերական ժողովք հաւանեալք յառաջին ժողովոյն Նիկիոյ՝ ընդունելիք են մեզ, և բաց 'ի նոցունց ամենայն ժողովք նոցին՝ որպիսիք են Լատէրանու, Փլորենտիոյ, և Տրիդենդինոյ, և այլն, անընդունելիք են մեզ։

Դ. Պարտին զեկեղեցի իւրեանց մաքրել յամենայն յետա֊մնաց կարգաց, 'ի նորաձայն վարդապետութեանց, յանտեղի սահմանադրութեանց, 'ի փառասիրութեանց, և 'ի հերձուա֊ծոց, և ապա 'ի միութիւն յորդորել զայլս, եւ այլն.

Ահա այս է իմաստ գրութեան մերոյ, զոր գրեցաք 'ի պատասխանի մոլորական տետրակի Նորին համաձայն ստորա֊գրութեամբ սուրբ սինհոդոսի մերոյ։

Եւ 'ի յաջորդ աւուրն 'ի շնորհս Մատթէոս պատրիարքին, գրեաց պատրիարքն Յունաց գանգատ 'ի Բ. Դուռն, յասելն, «եթէ դեսպան է սա, ընդ Բ. Դրան ունի յարաբերութիւն, մեզ չէ փոյթ. իսկ եթէ չէ դեսպան, զի՞ է հապա, զի խռովու֊թիւն արկանէ 'ի ժողովուրդս մեր, և յորդորէ հնազանդիլ պապին Հռովմայ»։

Եւ Բ. Դուռն 'ի ձեռն դեսպանին Գաղղիոյ ծանոյց զբո֊ղոք և զգանգատ պատրիարքին Յունաց՝ վասն կարդինալին Հռովմայ, զոր լուեալ նորին՝ հրամայեաց պատրաստել զշո֊գենաւն, և առեալ նախարարաց զհրաժարական ողջոյն իւր, վերադարձաւ 'ի Հռովմ։

## ԳԼՈՒԽ ԿԲ.

Յաղագս Համազգեաց ընկերութեան.

(1848) Ի ՍՄԻՆ ամի ազգասէր և ուսումնասէր անձինք 'ի Հռովմէական հայոց՝ յորոց բազումք աշակերտեալք էին 'ի Մուրատեան և 'ի Ռաֆայէլեան վարժարանն և 'ի վանս վե֊նետկոյ և վիեննայու, համամիտ և համախոհ՝ խորհրդով և հա֊ւանութեամբ կամեցան հաստատել զընկերութիւն մի ընդ լուսաւորչեան Հայոց։

Նպատակ ընկերութեանն էր ազգասիրութիւն և ուսում֊նասիրութիւն և յառաջադիմութիւն 'ի քաղաքական մասին, և բացէ 'ի բաց հեռացումն տարապարտ վիճից և բանակռու֊

թեանց վասն հաւատոյ խնդրոյ, յորս արդէն միաբան են երկաքին կողմանք յէական մասունս հաւատալեաց, և տարբերին միայն 'ի վարդապետական բացատրութիւնսն դժուարիմաց բանից, որպիսիք են բանք, բնութիւն, անձն, բղխումն, և քաւարան կամ կայան։

Իւրաքանչիւր ընկեր պարտ էր տասն դահեկան ամսական տուօք նպաստել ընկերութեանն առ 'ի հայթայթել զնեծ գումար դրամոց՝ բաւական լինել դպրոցական ծախուց։ Եւ մինչ յառաջացին խիձք և աշխատութիւնք ընկերութեանն, տեսանելով օր քան զօր զանդամս յաւելեալ և բազմացեալ և հասեալ 'ի նպատակն, ունելով պատրաստ 'ի ձեռին զգումար դրամոց, գնեցին նոյնա եկամուտ, կամ շահեցուցին տակաւօք, և բացցեն նոքօք դպրոցս 'ի հայաբնակ քաղաքս Ասիոյ, յորս ոչ գոյ դպրոց, ոչ ընթերցանութիւն և ոչ ուսումն զանազան արուեստից, փարժեսցեն և հրահանգեսցեն զնոսա 'ի կարևոր ուսմունս հայկաբանութեան, թուաբանութեան, և աշխարհագրութեան, և երկրագործութեան, և զամենայն փոյթ 'ի մէջ առեալ, զխաւար տգիտութեան հալածական արարեալ, զլոյս գիտութեան առ համազգայինս տարածեսցեն 'ի փառս Աստուծոյ և 'ի պարծանս Հայկազեան ազգիս։

Զկանոնս ընկերութեանն խմբագրեաց Հ. Պետրոս վարդապետ միաբան վէնէտիկեան վանից, և զանուն նորա կոչեաց Համազգեաց ընկերութիւն. և սկսան ազգասէր երիտասարդքս սպասքին իւրեանց եռանդուն և աշխոյժ բնաւորութեամբն քարոզել մեծեանց զազգասիրութիւն, ջանալ որ 'ի յօր անձեցուցանել զընկերութիւնն, և միաբանաւէր ոգւով ընդգրկել զիրեարս։ Եւ այսպէս 'ի սակաւ ինչ միջոցի բացա- ընդարձակեցաւ ընկերութիւնն։

Լսեալ զայս ամենայն Հասուն վարդապետ, և իւրով բնական հեռատեսութեամբն նշմարեալ զապագայ նուաստութիւն միաբանական ինքնիշխանութեան իւրոյ, 'ի խորհուրդ կոչեաց Համախոհս իւր և զորրանեակս, և յառն եկաց քայքայել զընորոգ սկսեալ ընկերութիւնն. ցրուել զանդամս նորա հալածելով և յորդորելով, թէ այս ջան և վաստակ ձեր ընդդէմ է Հռովմէական սուրբ եկեղեցւոյ, որ արդեօք խպար յարել և

միաբանիլ ընդ հերետիկոսս, և հաղորդակցիլ ընդ նոսա հոգևոր սիրով. ուստի ոչ կարեմք տալ ձեզ արձակումն և հաղորդութիւն, մինչև ոչ զղջասջիք և յետս կացջիք յայդպիսի ընկերութենէն, որ ոչ միայն հոգւոց և մարմնոց ձերոց է վնաս մեծ, այլ նաև անարգութիւն և նախատինք է ձեզ առաջի գահին Հռովմայ։

Եւ այսուքիւք քարոզութեամբք սերմանեցին յամենայն տանն որոմն և տխլութիւն, կագ և կռիւ. հակառակութիւն ՚ի մէջ հօր և որդւոյ, եղբօր ընդ քեռ, և որ այլ ևս են չարիք։

Գրեաց Հասուն վարդապետ գանգատ ինն զօրանէ ՚ի Հռոմ, որպէս ինքն կամեցաւ. գրեցին և սուտ բողոք և գիր աղերսանաց յայտ առնելով զանձեղ նպաստակ և զխանձնադրութիւնս ընկերութեան իւրեանց, և զհակառակութիւն Հասուն վարդապետին՝ որ ջանայ ՚ի կոր կործանել զնորահաստատ ընկերութիւն իւրեանց։ Եւ Հռոմ՝ զգաստ սոյն յանձն առար ՚ի Վ. Ինչէնցիոս Ֆերրիէրի կարտինալ իւր, որ էր յայնժամ ՚ի Կոստանդնուպօլիս. յատուկ գրով, յորում էր առաքելութիւն Տարածման հաւատոյ կոչեցեալ ժողովոյն նախագահ Ց. Փ. Ֆրանսոնի կարդինալին, և Ա. Պառնապօ ատենադպրին։

Տարածման հաւատոյ սուրբ ժողովքին գերապատիւ ու գերապատիւ կարդինալ նախագահին 28 մայիս 1850 Կոստանդնուպօլսոյ Հայոց Նախագահ եպիսկոպոսապետին Հասունեան գերապայծառ Անտոն վարդապետին խրկած թղթոյն թարգմանութիւնը։

Վերջի երեք տարուան ընթացքին մէջ թէ սրբազան պապը ու թէ սուրբ ժողովքը Համազգեաց անունով գրի կանգնուած, ու ուրիշ տեղեր ալ ուղղափառ Հայոց մէջ քանի մը փոփոխութենով վերբերուած ընկերութեան վրայօք դանազան ծանօթութիւններ առին. ու ծանօթութեանց վախճանը նոյն ընկերութեան վրայ հրահանգներ առնել էր. Հրամանքնիս արթուն հովուի մը պաշտօնը կատարելով՝ ձեզի յանձնուած հաւատացելոց առաջուց ծանուցիք այդպիսի ընկերութեան մը մտակայ վտանգները, ոչ ալ զանց ըրիք խմ-

ցնելու. ՚միանգամայն սուրբ ժողովքին ու սա գործքիս մէջ ձեր բանած ճամբան ու ձեր յայտնած կարծիքը անոր առ-ջեւը դնելով՝ անոր դատումը խնդրեցիք։ Միանգամայն ըն-կերութեան գլխաւոր պաշտօնատարներէն քանի մը անգամք անգամէն աւելի սրբազան հօրը գիտեցին ու իրենց կանոննե-րուն օրինակը խոնարհութեամբ անոր ներկայացընելով՝ մէջը եղած ընկերութեան վրայ օրհնութիւնը խնդրեցին։

Աս զանազան առնուած տեղեկութեանց կատարածը կրնար ծանրապէս խուճապել սուրբ ժողովքը Հայոց ազգին հոգեւոր պէտքութեանը նկատմամբ. բայց 'ի սկզբան մինակ մասնաւոր նախադրութիւններ գործքի դրուեցան՝ որոնց վախճանը աւելի բուն իրաց վրայօք լաւ ու ճիշդ ծանօթութիւններ առնել էր։ Աս պաշտօնը մասնաւորապէս յանձնուեցաւ Սի-նէոյ արքեպիսկոպոսին գերապայծառ Վինչէնցիոս Ֆէրրիէ-րիին՝ որն որ սրբազան պապէն խրկուած էր իբր դեսպան մե-ծանձն ինքնակալ Սուլթանին ու նոյն ատեն ալ առաքելա-կան այցելուի պատուաւոր պաշտօնը իրեն յանձնուած էր։ Աս բաներուս վրայ եկան ողբալի դիպուածները՝ որով կրօնքի թշնամիները սկսան յարձակիլ անոր վրայ բուն իր կեդրոնին մէջ, ուր գերագոյն գահն է. կարելի ալ չէր սանկ դժուար պարագաներու մէջ աս գործքիս պարապիլ այնու ծանրու-թեամբ՝ զոր նոյն ինքը գործքը կը պահանջէր։ Փոթորիկը դադրելէն ետեւ՝ սուրբ ժողովքը իր ընդմիջեալ ընդհանրա-կան ժողովքները նորէն սկսելու կարող ըլլալուն պէս, իմ դե-սպանական պաշտօնակիցներս պէտք եղած մտադրութիւնը ը-րին աս գործքիս վերաբերեալ ամէն տեղեկութեանց վրայ, ու սրբազան հայրերնիս ալ սուրբ ժողովքին դատմունքը հաս-տատած ըլլալով՝ կը փութամ ձեզի զանի հաղորդելու։

Սուրբ ժողովքը Համազգեաց ընկերութեան վերաբերեալ բաները ու մասնաւորապէս իրեն կանոնները, ու որչափ ալ ա-նոր փոփոխութիւններ մտցընել ուզուեր է նէ ալ, այսու ա-մէնայնիւ իրեն մէջ օրէ օր աւելի յայտնուած հոգին ճիշդ քննութեամբ մտածելով պարապ դատեցաւ իրեն՝ ձեր արդէն յայտնած դատմունքին յարմարիլը ու աս առաջիկայ թղթովս վերջինեալ ընկերութեան վրայ իր հաճութիւնը ցըցընելը,

մանաւորապէս վտանգներուն պատճառաւ՝ ու ուղղափառ Հայոց հոգեւոր աղէկութիւնը կրնան հանկէց առաջ գալ։ Եւ յիրաւի աս ընկերութիւնը անանկ անորոշ անսահման նպատակ մը կը ցուցնէ, որ անդամները քիչ քիչ ու առանց իմանալու իրենց խղճմտանքին դատապարտած գործքերու ալ կրնան դիւրաւ ձգուիլ, աս բանս աւելի դիւրութեամբ կրնայ հանդիպիլ, որովհետեւ իր կառավարութեան մէջ աս բանս արգիլելու բաւական ապահովութիւններ չկան։

Ուրիշ ծանր փաստ մ'ալ կերեւի որ չըլլայ թէ աս ընկերութիւնը մինչեւ հիմայ Աստուծոյ օգնութեամբը Հայոց ազգին մէջ պահուած ան հաստատուն բարեպաշտութեան ու քրիստոնէական կրթութեան կորսուելուն ու զանի մոլորեցընող սկզբունքներ մտնալու միջոց ըլլայ։ Որովհետեւ հաւատքը Աստուծոյ ծանրագին պարգեւն է, պէտք է զանի նախանձով պահել ու հեռուանց ալ անոր մաքրութիւնը մթնցընող ու վնասող ամէն պատճառները մէկդի ընելու է։ Եւ թէպէտեւ 1848ին քանի մը թեթեւ փոփոխութեանց վրայ ձգուեր է, բայց նոյն բնաւորութիւնը՝ ու նոյն հոգին մնալուն համար ընկերութեան մէջ՝ նոյն հիմնական վտանգն ալ կը մնայ կոր, որ չըլլայ թէ անոր պատճառաւը ուղղափառ կրօնի եղած սերտ սէրը երթալով տկարանայ, մանաւանդ որ դեռ ամէն իշխանութենէ ազատ ըլլալու կը ջանայուի, ու անանկ ճամբայ կը բացուի վերջապէս բանաւորականաց աղանդին հանելու՝ որ ազգային բարութեան ու յառաջադիմութեան պատրուակներովը՝ կրօնքը կը փճացնէ։ Չէ՛ թէ եկեղեցին դէմ կը կենայ ճշմարիտ բարութեան ու յառաջադիմութեան, որ ինչպէս յայտնի է՝ կրօնքի ուղիղ սկզբունքներուն հետ միշտ կից կերթայ, նա մանաւանդ որ՝ ինչպէս քաջայայտ է, եկեղեցին աս պայմանաւ միշտ ու ամէն տեղ անիկայ առաջ տարած է։ Բայց ուրիշ այսչափ ազգերուն ողբալի դիպուածները յայտնապէս կը ցուցնեն թէ ինչպէս աս անունները չարաչար կը գործածուին, ուսկից ալ շատ դէշ հետեւութիւններ առաջ կու գան։ Աս տարիներուս փորձն ալ կը հաստատէ՝ թէ որչափ իրաւամբ կը վախցուի՝ որ ան վերջինեալ անկարգութիւնները, Հայոց ուղղափառ ազգին մէջն ալ

հանդիպին, որոնք ալ աւելի ողբալի կրնան ըլլալ, թէ որ ժամանակին յառաջատուութիւնը իրօք կատարուին նէ։ Ընկերութենէ ծագած բաները հրապարակաւ ծանօթ են ազգին, ու բոլոր բարի անձինք՝ որ բարերարութեամբ ազգին մեծագոյն մասն են, անոնց վրայ կուլան, ու պատճառներուն համար ով որ սրտին մէջ կրօնի ուղիղ սկզբանց փոյթն ու հոգը ունի, ապագային վրայ աղետալի նախագուշակութիւններ ընելու կըստիպուի։

Ուստի սուրբ ժողովքը յիշուած ընկերութեան որ և իցէ եղանակաւ կամ՝ բանելը ու անոր ուղղակի կամ անուղղակի օգնելը թէ աշխարհական թէ կրօնաւոր կղերին բացարձակ արգիլելէն ՚ի զատ, ձեզ ալ կը փութացուցանէ որպէս զի ձեր խնամոցը յանձնուած հաւատացելոց այդպիսի ընկերութենէ հեռ քաշուելուն պարապիք, ու սա ալ ամէն փութով գործ դնելուն բնաւ չերկբայիք, որովհետեւ համոզուած է որ մեծ մասը միամտութեամբ գրուած է անոր, ու առանց կարող ըլլալու առաջուց աղէկ մը իմանալու թէ ի՞նչ հետեւութիւններ ու պտուղներ կրնան անկից ծագիլ։ Եւ վասնզի մանաւանդթէ Կոստանդնուպոլսոյ Հայոց ազգը ապագային համար իրեն կանոն ու օրինակ բռնելով քիչ տարիներէ առաջ իրեն գլուխը եկած դիպուածները չի մոռնար, իրենց մէջ աւելի տարօք եղածները աղէկ կը յիշեն ան ամէն բաները, որով կը սորվին զգուշ կենալ ուր և իցէ ծածկուած վտանգներէն՝ որ կրնան զիրենք մոլորեցընել ուղղափառութեան միութենէն՝ որուն մէջ մինչեւ հիմայ՝ հաստատուն մնալուն համար թէպէտ ոչ զըրկանաց՝ ու ոչ այնչափ նեղութեանց խնայեցին, որն որ իրենց ազգին օգուտն ու փառքը եղաւ։ Յիշելով ուրեմն որ թէպէտ և կրթութիւնը ըստ ինքեան մեզ Աստուծոյ կառաջնորդէ ու մեզ կրօնի մէջ կը հաստատէ, բայց շատ անգամ ալ գէշի գործածուելով գլխովին ուրիշ վախճան կունենայ, անշուշտ իրենց պարտք մը պիտի սեպեն զանիկա ստանալու, ուր որ Աստուծմէ իրենց հոգեւոր բարութիւն կարգած անձինք՝ անոր ուղղափառ կրօնի սկզբանց համեմատ թէ հաւատոյ և թէ բարի վարուց կողմանէ ողջամիտ ու մոլորութեան ամէն վտանգէն ազատ ըլլալը յայտնի ընեն։ Ուստի սուրբ ժողովքն ալ հրա-

մանացը ուղիղ ու ճշմարիտ կրթութիւնը ժողովրդեան մէջ առաջ տանելու յայտնած ջանքը թէպէտեւ գովելու պարտական է, բայց միանգամայն պատշաճ ալ կը դատի ձեզ փութացուցանելու, որպէս զի յարատեւէք ոչ միայն հովուի մը պարտք եղած հսկողութիւնը պահելու, այլ յաւէտ անխոնջ տարածելու յարմար միջոցները շատցընելու, եւ բնաւ տարակոյս չկայ՝ որ հրամանոցը հպատակ եղող երկաքանչիւր գիւղերն ալ եկեղեցականները ամեն ջանքով ձեզի հետ առընդատակին գործակից ըլլան։ Այս ճամբով անգէտները խրատելու համար ու անմաքուր աղբիւրներէ թունաւոր վարդապետութիւնները ծծելու զանոնք առաջնորդելու համար՝ Հայոց ազգին հոգեւոր աղէկութեանը դէմ գինովներուն ամենեւին պատճառանք չմնար։ Վերջապէս ձեր հօտին իմացընելու չըլլայ թէ զանց ընէք, որ թէպէտեւ աւետարանական օրէնքը մեզ պիտի շարժէ ամենուն սէր ցուցընելու, ու թէ առ Աստուած աղօթքով թէ առաքինի վարուց օրինակաւ ու թէ պատշաճ յորդորանքներով ճամբէ եղած եղբայրներնուս ուղղափառ կրօնի հետ միաբանութիւնը դիւրընցընելու. այսու ամենայնիւ զգոյշ կենալու է ան անձերէն, որ բողոքականին ուրիշ միտքի ծառայելով, ան մասերուն վրայօք պայմանադրութեանց զիջանել կը պահանջեն, որոնց վրայ եկեղեցին իրաւամբ միշտ անդրդուելի կեցաւ, որովհետեւ ճշմարտութեան ու սուտութեան մէջ միաբանութիւն չկրնար ըլլալ։

Մինչեւ հիմայ յայտնուած միտքն են եւ սրբազան հօրերնուս միտքն, որովհետեւ ինչպէս 'ի սկզբան ալ ձեզի ծանուցի, սրբազան պապը սուրբ ժողովքին ան յայտնած դատումը լիով հաստատել հաճեցաւ.

Կաղաչեմ զԱստուած որ, եւայլն.

Յ. Փ. Կարդինալ Ֆրանսոնի Նախագահ

Ա. Պառնապօ Քարտուղար

Գլխաւորք միաբանութեան կարման տեսեալ եւ լսեալ զայս ամենայն, առաւել եւս բորբոքեցան հրով ազգասիրութեան, եւ զուն գործեցին յաղթանակ կանգնել ընդդէմ Հասուն-

եանց զատուն մի մեծ 'ի Բերա, զոր նորոգ չինեցին արդեամբք ընկերութեանն, և կոչեցին «Խորհրդարան Համազգեաց Ընկերութեան». և օր քան զօր յաւելոյր Թիւ անդամոց նորին. և բազումք 'ի լուսաւորչածին Հայոց յաւելան յարձանագրութիւնս ընկերութեանն.

Լուեալ զայսոսիկ Հասուն վարդապետ, խորհրդով համախոհից իւրոց ամբաստան եղեւ զոգանէ առ Բ. Դուռն. զոր խնդրեալ միաբանութեան կողման ետուն գիր ազերսանաց առ արքայ՝ յայտ արարեալ 'ի նմին. եթէ Տէր արքայ՝ ըստ բարձր հրամանի և կամաց ձերոց՝ զոր ետուք արքունի հրովարտակաւ առ ամենայն ազգս հպատակեալս մեծազօր տէրութեան ձերում, փոյթ յանձին առաք կազմել զընկերութիւն ինն մեք ազգակից եղբարքս. և զխաղաղ և ջանք մեր են ծաղկեցուցանել զուսումն և զգիտութիւն 'ի մերազնեայս 'ի գաւառս Անատօլու, շնորհիւ կայսերական անհարկութեան ձերոյ. բայց այժմ ազգապետ մեր Հասուն վարդապետ հակառակ ջանից և դիտաւորութեան մերոյ կամի ցրուել և կործանել զընկերութիւն մեր, և ոչ թողլ առ մեզ յառաջ վարել զխափաք ուսումնասիրութեան մերոյ.

Ընթերցեալ արքայի զաղերսագիրն, հրամայեաց, զի հաստանեսցի ազգային ժողովն 'ի Պատրիարքարանի հռովմէական Հայոց, և մի ոք խափան և արգել լիցի Համազգեաց ընկերութեան, և զկարեւոր հանդամանս հաստատութեան նոյին յանձն արար 'ի Բ. Դուռն հոգալ և տնօրինել զամենայն, որ ինչ կարեւոր և արժանն էր.

Եւ Բ. Դուռն հրաւիրեաց զՉնդեանն երեւելի անդամս ընկերութեանն Համազգեաց, և զչինդ կուսակից Հասունեանց, ընդ որս և զհամագահ նոյին զՀասուն վարդապետ 'ի Բ. Դուռն, և յետ բազում բանակռուութեանց և խառակցութեանց պատշաճ դատեցաւ առաքել զերեւելի պաշտօնատար մին 'ի կողմանէ Բ. Դրան յեպիսկոպոսարանն նոյին, առնել անդ ժողով յերկուց կողմանց, և 'ի ժողովին յայնմիկ քննել զխնդիրս Համազգեաց ընկերութեան, և եթէ փոխութեան և օրրագրութեան կարեւորութիւն ինչ պատշաճ դատիցի, համաձայնութեամբ որոշեսցի.

Եւ հրամանաւ Բ. Դրան առաքեցան առաջին թարգման Էմին էֆէնտի, և թահրիրաթ միւտիրի Սայիտ էֆէնտի յեպիսկոպոսարանն նոյին առնել ազգային ժողով և քննել ըզ միտս և զբաղձանս երկուց կողմանցն, զվայելուչսն յօրինել և զանվայելուչն բառնալ. և եթէ հնար իցէ, հաշտեցուցանել զնոսա ընդ եպիսկոպոսին իւրեանց։

Եղեւ ժողովն 'ի 28 յունիսի 1848, և Հասուն վարդապետ ընթերցաւ զպահանջմունս իւր, յորում փոփոխեալ էին կանոնադրութիւնք ընկերութեանն, որոց գլխաւորն էր այս, զի լուսաւորչածին Հայք ելցեն յընկերութենէն, և մի ընդունելի լիցին յայսմհետէ իբրեւ անդամ ընկերութեան։

Այսմ հակառակ կացին միաբանութիւնքն և մխճեցան յոյժ. բայց վասն զի դատաւորն եկեալ 'ի Բ. Դրանէ որոշեաց վըճռաբար յաւելն, թէ որովհետեւ սա գլուխ ձեր է հաստատեալ արքունի հրովարտակաւ, և սմա յանձնեալ է տէրութիւնն կառավարել զձեզ ըստ իւրում խոհականութեան և ըստ քաղաքական օրինաց, պարտաւորութիւն ձեր է հնազանդիլ հրամանաց և կարգադրութեանց սորա, և որ սմա ոչ հնազանդի, այնպիսին և արքայի իսկ է անհնազանդ։

Զայս լուեալ նոցա և ելեալ արտաքս, յոգի խոցեցան. և թէպէտ չեղեն հնազանդ հրամանաց նորա, բայց ցրտացան 'ի ջերմեռանդ սիրոյ և փառասիրոյ իւրեանց, և ցրուեցաւ ընկերութիւնն առաւելապէս, որ գերապանծ հանդիսանայր օր ըստ օրէ, և մեծամեծ օգուտս ունէր ցուցանել Արամեան ազգին շնորհիւն Աստուծոյ։

Գլխաւոր միաբանութիւնք ընկերութեանն էին ինքեանքն աքա, զորս ոչ կամելով անյիշատակ թողուլ յայսպես ժամանակի, 'ի ճահ դատեցայ նշանակել աստանօր յականէ յանուանէ, որք էին Մկրտիչ Սամանճեան, Յակոբ Տաղութեան, Ա. Լութֆեան, Խաչատուր Գազազեան, Յովսէփ Վարդանեան, Կարապետ Թիւլպէնտճեան, Սարգիս Աշկէրեան, և Սերովբէ Աղնաւուրեան։

# ԳԼՈՒԽ ԿԳ·

Յաղագս հրաժարելոյ Մաթէոսի 'ի պատրիարքութենէն, և կրկին անգամ պատրիարքութեան Յակոբայ արքեպիսկոպոսի ։

---

(1848) ԱՄԻՐԱՅՔ՝ որք սովոր էին 'ի վաղ ժամանակաց հետէ անտի փոխել զպատրիարքս և զառաջնորդս երեւելի գաւառաց, քանիցս անգամ՝ կամեցան ընկենուլ զՄաթէոս պատրիարք. այլ ոչ յաջողեցան. զի ամենեքին չլինէին միաբան 'ի մի սիրտ և 'ի մի խորհուրդ. ոմն կամէր և միւսն ոչ կամէր. և ոչ կարէին զկիրս իւրեանց յառաջ տանել. զի անհամաձայնք գտանէին իրերաց ։

Եւ նախ Ճանիկ ամիրայ թշնամացաւ պատրիարքին. զի քոյր Ճանիկ ամիրային մեռաւ, և պատրիարքն որ հրաւիրեցաւ 'ի հանդէս յուղարկաւորութեան ննջեցելոյն, ոչ գնաց պատճառելով զտկարութիւն անձին ։

Ի նոյն աւուրս և Միսաք ամիրայ կամեցաւ զերկերիւր կանգուն գետին սուրբ Երրորդութեան եկեղեցւոյն Բերայի որ հայէր 'ի մեծ պողոտայն, գնով առնուլ փոխանակ պահանջմանց իւրոց, զոր պարտեալ է ։ 'ի ծախս շինութեան Գայիանեանց դպրոցին և արհեստարանին օրիորդաց և մշտահաս ազգերին 'ի նոյն թաղին ։

Այսմ՝ զդէմ՝ կալաւ Մաթէոս պատրիարք, և ոչ թողլ ետ նմա. և Միսաք 'ի ձեռն Պէրպէրեան Յակոբ վարդապետին՝ որ քարոզիչ էր եկեղեցւոյն, առաքեաց ընծայ առ պատրիարքն զպատուական մուշտակ իւր յոխաղենի, որ արժէր աւելի քան զհինգ հազար դահեկանս, աղաչելով և խնդրելով. զի թողլ տացէ նմա գրաւել զգետինն ։ Բայց Մաթէոս պատրիարք ոչ զաղաչանս ընկալաւ և ոչ յերեսս ընծայիցն նայեցաւ. նաև կոչեալ զՏէր Զաքարիա աւագ քահանայ եկեղեցւոյն՝ պատմեաց նմա զկամս Միսաքայ և զընդդիմութիւն իւր առ նա. և նորա գնացեալ 'ի Բերա, ծանոյց ժողովրդ-

եանն, և ըստ խորհրդոյ պատրիարքին գրեալ գրոց ինն ստորագրութեամբ բազմաց, խնդրեցին 'ի պատրիարքէն փոխել զվերակացուն եկեղեցւոյն զՄխաք, և զայլ ոք 'ի բարեպաշտ ազգասիրաց կարգել 'ի տեղի նորա. և Մաթէոս պատրիարք կոչեալ զխաւօղլեան Պօղոս ամիրայն, աղաչեաց ըզնա և հաւանեաց, և հաճեցոյց յանձն առնուլ զվերակացութիւն եկեղեցւոյն։

Զայս լուեալ Մխաք, զայրացաւ անհնարին բարկութեամբ, և չուեաց 'ի Բերայէ յԷէնիգիւղ. և գիտելով զթշնամութիւնն՝ զոր ունէր ճանիկ առ պատրիարքն, եկեալ յարեցաւ 'ի նա. և գտեալ իւր համախոհս յամիրայից և յարհեստաւորաց, սարքին ժողով 'ի խումբի խան 'ի սենեակն Կէչէճեանց, և այէս այէս մնան բարութիւնս և զրպարտութիւնս ստայօդեալ, որոշեցին զփոփոխութիւն պատրիարքին. և ընտրեցին 'ի կողմանէ ժողովոյն պատգամաւոր զԳէորգ փափազեան և զՅովհաննէս Նաղրճեան 'ի սեղանաւորաց՝ երթալ առ պատրիարքն, և խնդրել զհրաժարական նորին 'ի գլխոց ազգին։

Եկին նոքա առ պատրիարքն, և խոնարհաբար յայտ արարին զկամս ժողովոյն, և խնդրեցին զհրաժարականն։ Իսկ պատրիարքն ընկալեալ զնոսա սիրով, մեծարեաց և օրհնեաց, և յետ բազում բանից կնքեաց զխօսս իւր առ այս, «Թէ ես ոխտիւք խնդրէի և խնդրեմ հրաժարիլ 'ի պաշտօնէ սորա, բայց ոչ այսու անարգական եղանակաւ. զայս պատասխանի տարէք, առ որս առաքեցինն զձեզ»։

Եւ 'ի հետեւեալ աւուրն 'ի սկիզբն աղօթից գումարեալ ժողովեցան ամիրայք, և առաքեցին պատգամաւոր զՅովհաննէս ամիրայ ճարտարապետ և զՊօղոս Աշնանեան, ընդ որս և յարհեստաւորաց զահաւթճի Յովհաննէս Սուրէնեան, և զսկերիչ Մելքիսեդ, զԹիւլպէնտճի մահտեսի Պօղոս և զՅովսէփ Ալէմշահեան, զմիմթանճի Աստուածատուր և զդըրճի Սարգիս, որոց եկեալ միանգամայն իբրև պատգամաւորս 'ի կողմանէ բոլոր ազգին և ոչ սակաւ ամիրայից, խնդրեցին զհրաժարականն նորին։

Իսկ պատրիարքն զոր ինչ խօսեցաւ յառաջնում աւուր,

զնոյն առաջ և առ Նոստ և արձակեաց զնոսա, որք գնացեալք 'ի ժողովն, ասեն, թէ նա բնաւ երբէք չկամի տալ զհրաժարական իւր.

Յայնժամ Ճանիկ և Միսաք առաջարկեն ժողովոյն առնել մահզարական գրութիւն 'ի գլխոց բոլոր ազգին և ստորագրել, թէ ոչ կամի համբերել ազգն զպատրիարքն, և խնդրէ 'ի տէրութենէն, զի փոխեսցէ զնա.

Յոտն եկաց Պետրոս Փիւրքճիխանճեան, պատասխանի ետ և ասէ ցնոսա, եթէ հարցանիցէ տէրութիւնն, թէ վասն որո՞յ յանցանաց փոխել կամիք, և զի՞նչ մեղս գործեալ իցէ առ տէրութիւնն և առ ազգն, զի՞նչ պատասխանի ունիմք տալ. և թէ քանի՞ խռովութիւն ծագի յայնժամ յազգի մերում. վասն որոյ ես ոչ կարեմ ստորագրել զայդ գիր.

Եթէ քաղցրութեամբ խնդրեսջիք զհրաժարականն, և ոչ ետ, բռնութեամբ ոչ կարէք առնուլ. և յայտնի ժամանակաց հետէ այս օրէնք են, զի քաղցրութեամբ խնդրի հրաժարականն և ոչ բռնութեամբ.

Այսմ համաձայնին և Մագսուտ Սարիմեան, Միքայէլ Բիշմիշեան, Մկրտիչ Ճէզայիրլեան, Յարութիւն Էրկանեան, և այլք. Ասեն ևս, թէ ո՞ր են վառօդապետքն երկոքին. ո՞ր է ճարտարապետ կարապետ ամիրայն. ո՞չ ապաքէն նոցա ևս անկ է գտանել 'ի ժողովս, զի ըստ օրինի վճարեսցի ամենայն բան. և զայս ասացեալ ելանեն և երթան, և ցրուի ժողովն.

Անցին ամիսք հինգ, և պատահեաց դէպք ինչ այսպիսի.

Ազգասէր և բարեպաշտ Պօղոս աղա Պետրոսեան Օտեան՝ գրագիր շինուածոց արքունի պալատին՝ առեալ ընդ իւր զտէր Յովհաննէս աւագ քահանայ սուրբ Խաչ եկեղեցւոյն Իւսքիւտարու, որ էր իւր խոստովանահայր, գայ առ պատրիարքն, և յետ սովորական ողջունատուութեանց խնդրէ փակել ըզդուռն սենեկին, և պատուիրէ, զի մի ոք մտցէ 'ի ներքս.

Եւ հանեալ 'ի ծոցոյ իւրմէ գլխուն հազար դահեկան, դնէ առաջի պատրիարքին, և խնդրէ, զի կոչեալ զԱրզուման աղա զվերատեսուչ սուրբ Ոսկեբերան եկեղեցւոյն Գարակէօմ-րիւկի՝ տացէ նմա և ասասցէ, թէ բարեպաշտօն ոմն զայս յի-

սուն հազար դահեկանն ես ողորմութիւն եկեղեցւոյն, որում դու վերատեսուչդ ես, բայց այսու պայմանաւ, զի զտոկոսիս սորին հինգ դահեկան առ մէն մի քսակ հաշուով՝ որ առնէ հինգ հարիւր դահեկան, տացես ամենայն ամի 'ի պէտս դպրոցի եկեղեցւոյն։ Բայց աղաչեմ ասէ, զի այս խորհուրդ խոստովանութիւն եղիցի առաջի ձեր, և մի ոք գիտասցէ, թէ ես տուեալ եմ զայս ողորմութիւն. միայն դու գիտասջիր, և այս խոստովանահայր իմ, և արձանագրեսցի 'ի յիշատակարան եկեղեցւոյն ընդ անուամբ բարեպաշտօն անձին միոյ և եթ։

Ընկալեալ պատրիարքին զյիշեալ դահեկանսն դնէ յարկեղ իւր, և օրհնէ զնա բառ բարեպաշտութեան նորին. և 'ի յաջորդ աւուր կոչէ զԱրզուման աղայն առ ինքն, որ վասն տկարութեան անձինն ոչ կարելով երթալ, առաքէ զՄիքայէլ զորդի իւր. և Մատթէոս պատրիարք յանձն առնելով նմա զյիսուն հազար դահեկանսն, տայ նմա գրել և նշանակել, թէ բարեպաշտօն ոմն ետ զայս ողորմութիւն սուրբ Ոսկեբերան եկեղեցւոյն՝ այսու դաշամբ, զի զտոկոսիս սորին հինգ հարիւր դահեկան ամենայն տարւոջ տալ 'ի պէտս դպրոցի եկեղեցւոյն. և նորա առեալ երթայ, և նշանակէ այնպէս յարձանագիրս եկեղեցւոյն։ Զայս լուեալ ճէլէպիլեանն, հետաքրքիր լինի հարցանել, թէ ո՞ է այրն այն, որ զյիսուն հազար դահեկանս տայ ողորմութիւն միոյ եկեղեցւոյ։

Հարցանէ ճէլէպիլեանն ցպատրիարքն. և նա ասէ, այդ խոստովանութիւն է, և ես ոչ կարեմ յայտնել զանուն տուողին։ Իսկ նա ասէ, տէրութիւնն՝ արքունի հրովարտակաւ խորհրդակից առնէ զմեզ 'ի պատրիարքարանիս, ընդէ՞ր դու միայն առնուս և տաս, և մեք ոչ խմանայցեմք. միթէ այս արհամարհութիւն չէ՞ մեզ։ Ասէ պատրիարքն, եթէ չլինէր խոստովանութիւն, պարտաւոր էի յայտնել ձեզ. բայց զի տուողն խոստովանաբար ետ, վասնորոյ ես ոչ կարեմ յայտնել ձեզ. և ձեզ մեղք են հարցափորձ առնել։

Յայնժամ զայրանայ ճէլէպիլեանն, և ելեալ երթայ բարկութեամբ և հայհոյութեամբ. և գնացեալ առ մեծ վէզիրն Բէչիր փաշա, որում սեղանաւորն էր և սիրելին յոյժ, աղաչէ զնա և թախանձէ փոխել զպատրիարքն, պատճառելով, թէ

գրաղաքական ժողով պատրիարքարանին՝ զոր հաստատեաց տէրութիւնն արքունի հրովարտակաւ, առ առ ոչինչ համարի, այլ ինքնին միայնակ առնու և տայ, հրամայէ և գործէ, և եթէ մեք հարցանիցեմք զնա, թէ զի՞ եղև այն գործ և ո՞րպիսի ինչ է, պատասխանէ մեզ, թէ չէ՛ արժան գիտել ձեզ զայն, և հարցանելն անգամ մեղք են ձեզ.

Յայնժամ Բէշիխ փաշա կոչեաց զԹարգման իւր զՅակոբ Կրճիկեան, պատուիրէ նմա գնալ առ պատրիարքն և ասել, զի գրեսցէ զհրաժարականն իւր 'ի Բ. Դուռն. և գնացեալ 'ի տուն իւր, հանդիպէ առ ժամանակ մի 'ի սրտամաշ հոգոց կառավարութեան ազգին. իսկ եթէ յամառեալ 'ի կամս իւր ոչ տացէ զհրաժարականն, անարգանօք հանեմ զնա և աքսորեմ։

Տօն էր վերացման սրբոյ խաչին, և պատրիարքն գնացեալ էր յՍկիւտար 'ի պատարագել յեկեղեցւոջն. երթայ Յակոբ Կրճիկեան յՍկիւտար, և գտանէ զպատրիարքն 'ի տան Միքայէլ ամիրայի Բիշմիշեան, և պատմէ նմա զհրաման վէզիրին. և պատրիարքն ցուցանէ նմա զհնազանդութիւն հրամանաց նորուն, և խոստանայ տալ զհրաժարականն, և դարձ արարեալ գայ 'ի պատրիարքարանն. և գրէ հրաւիրանաց թուղթս առ ժողովական ամիրայս։

Յաւուր հինգշաբթի եղև ժողով մեծ, և սկսաւ խօսել պատրիարքն առ ժողովեալսն, և ասէ ցնոսա։

Ըղեն ամենք 'ի ձէնջ, որք երկիցս անգամ հանել կամեցան զիս 'ի պաշտօնէ աստի, և խնդրեցին յինէն բռնութեամբ ըզ հրաժարական իմ. և ես պատասխանի ետու նոցա, «թէ զի՞նչ «իցէ պակասութիւն իմ. և զի՞նչ մեղս գործեալ իցեմ յեկեղե- «ցական և 'ի քաղաքական կարգադրութիւնս, մինչ չիցեմ «ջանադիր պայծառութեան դպրոցաց և յառաջադիմու- «թեանց նոցին, և պաշտպան յամենայնի ուղղափառ եկե- «ղեցւոյս Հայաստանեայց շնորհիւն Քրիստոսի։

«Եթէ 'ի սոսին պակաս ինչ գտեալ իցեմ, յայտնի արասցէ «հրապարակաւ ազգային ժողովս հոգևորականաց և աշխար- «հականաց զյանցանս իմ. զի գիտացեալ ըստ այնմ հրաժա- «րեսցայց 'ի պաշտօնէ աստ, և մի յետ հրաժարելոյս միւս- «անգամ մեղանչեսցիք, ըստ որում պաշտօնեայ եմ Քրիստոսի,

« և Հօրն Հոգևոր բանաւոր հօտին իւրոյ , և մինչև ցվախ-
« ճան կենաց իմոց ունիմ ծառայել ազգիս և եկեղեցւոյս ։

« Բայց եթէ բռնութեամբ հանել կամիցին զիս 'ի պաշտօնէ
« աստի որպէս այժմ , յօժարութեամբ ընդունիմ և զայն , զի
« և առաքեալք 'ի ժամանակի քարոզութեան իւրեանց անար-
« գանօք ելանէին յատենէ անտի ։ Ոչ կամիմ լինել պատճառ
« գայթակղութեան ազգիս , երկուցեալ յԱստուածային բա-
« նէն , թէ վայ որ գայթակղեցուցանէ , զի առանց հարցա-
« քննութեան յազգային ժողովի եթէ յօժարիցիմ տալ զհրա-
« ժարականս , իւրաքանչիւր ոք յազգէս յայլում ունին կար-
« ծիս լինել , և գուցէ զանազան պակասութիւնս բարդիցեն
« 'ի վերայ իմ . վասնորոյ կամիմ հրապարակաւ յայտնի լինել
« թէ հոգևոր և թէ մարմնաւոր պակասութեանցս ։

« Զի՞նչ առաջարկութիւնս արարին 'ի պայծառութիւն
« սուրբ եկեղեցւոյ և 'ի բարեկարգութիւն ազգիս , և ես զիմա-
« կաց եղէ և ոչ յօժարամտեցի յայնոսիկ , և եթէ հակառակ քա-
« ղաքականութեան Բ. Դրանն մեղանչեցի , կամիմ գիտել և զայն ։

« Զի՞նչ խնդիր մատուցին ինձ 'ի պէտս հրկիզելոց , աղքա-
« տաց , 'ի հաւատս փորձանաւորաց , և ես անփոյթ արարի ըզ-
« նոցանէ ։ Ահա 37865 դահեկան տուեալ եմ մինչև ցարդ 'ի
« պէտս դարձի Նորադարձից 'ի ծոց սուրբ եկեղեցւոյս ։ Քսան
« և հինգ հազար դահեկան ետու Սամաթիոյ հրկիզելոցն 'ի
« ձեռն եկեղեցպանաց եկեղեցւոյ նորին ։ Վեց հազար դահե-
« կան ետու Գաղատիոյ աղքատաց հացագին 'ի ժամանակի
« սովուն ։ Եւ չորս հազար հինգ հարիւր դահեկան ետու 'ի
« պէտս փորձանաւորաց 'ի հաւատս ։ Այս ամենայն որոշակի
« քննեալ և ստորագրեալ է պարոն Յակոբ Կրճիկեան յարձա-
« նագրութիւնս պատրիարքարանիս , որ այժմ նստեալ կայ
« ընդ ձեզ . թող ինքն վկայեսցէ ։

« Արդ ահա տամ ձեզ զհրաժարականս իմ որոց յանց-
« եալքն իցեն առ իս գիտութեամբ և անգիտութեամբ , թո-
« ղութիւն եղիցի նոցա . և ես եթէ ընդդէմ պատուոյ ձերոյ
« մեղանչեցի յանդէտս , խնդրեմ ներողամիտ լինել ինձ բա-
« րեաւք ոգւով . մնայք բարեաւ և ամենայն յաջողութեամբ ,
« և Տէր օրհնեսցէ զձեզ զամենեսին » ։

Եւ հանեալ զհրաժարականն 'ի գրպանակէն՝ տայ Մագսուտ ամիրային. և նա ընթերցեալ 'ի լուր ամենեցուն, ետ Յակոբայ կրճիկեան տանիլ առ մէգիրն.

Յայնժամ ժողովեալքն ելեալ յատէն, արտասուալից աչօք համբուրէին զձեռս նորա. և ոմանք 'ի նոցանէ 'ի ծունկս անկեալ աղաչէին, զի ասասցէ 'ի վերայ իւրեանց զպահպանիչ և զօրհնեսցի. և այնպէս տրտմագին եղանակաւ դարձան 'ի տեղիս իւրեանց. և պատրիարքն ելեալ անտի գնաց մեկուսացաւ առ ընթեր պատրիարքարանին 'ի տան շանիկ ամիրային, զոր 'ի վարձու կալեալ էր մահտեսի Յովհաննէս Աղանեան.

Եւ յաւուր շաբաթու ժողովեցան ամիրայք 'ի պատրիարքարանն. եկն և քարտուղար արտաքին գործոց նախարարին հրամանագրով եպարգոսին յինքնութիւն պատրիարքի.

Լուր եհաս 'ի վաճառանոցն, և սկսան արհեստաւորք խումբ խումբ իջանել 'ի պատրիարքարանն. և լցան զեղան 'ի Մայր եկեղեցւոյն և 'ի պատրիարքարանին. և գլխաւորքն 'ի նոսին ելին 'ի վեր, յառաջոյ իւրեանց ունելով զգիներեան խակէնաէր զայրն ճարտարախօս, և սկսան աղաղակել.

Ասէ ցնոսա քարտուղարն, զի՞նչ խնդրէք. Եւ նոքա ասեն, զՄատթէոս պատրիարք մեր. Ասէ ցնոսա, նա կամօքն հրաժարեցաւ 'ի պաշտօնէ իւրմէ, և Տէրութիւնն ընկալաւ զհրաժարական նորա, և հրամայեաց զայլ ոք արժանաւոր կարգել 'ի տեղի նորա. Ասեն և նոքա. մեք գնացեալ առ նա աղաչեմք և թախանձեմք և հաճեցուցանեմք յանձն առնուլ դարձեալ զպատրիարքութիւնն. Ասէ ցնոսա քարտուղարն. անդարձ է հրաման տէրութեանն. Մատթէոսն ոչ կարէ դարձ առնել վերստին յիւր պաշտօն.

Յայնժամ գիներեան խակէնաէր պատասխանի տայ քարտուղարին և ասէ ցնա. ժողովուրդս այս խնդրէ, զի եթէ անհնար է Մատթէոս պատրիարքին վերադառնալ. Յակոբոս եպիսկոպոս առաջնորդն Եւդոկիոյ լիցի պատրիարք. կամ Մատթէոս և կամ Յակոբոս. զայլ ոք ոչ ճանաչեմք և ոչ ընդունիմք, թէև յերկնից իջեալ լիցի. Ընդ այս բան նորա աղաղակեցին միաձայնու ժողովուրդքն, թէ զՅակոբոսն խնդրեմք, Յակո-

րոս Յակոբոս։ Եւ քարտուղարն խոստացաւ նոցա կատարել զխնդիր նոցա, եթէ ցրուեսցին և գնասցեն 'ի տեղիս իւրեանց։

Եւ եղ ամիսն արտաքոյ պատրիարքարանին, և կային առ դրան Մայր եկեղեցւոյն. և ամբոխք ախմախ կամօք զիջան յընդդիմութիւն ժողովրդոյն. և սատարութեամբ իւրեանց որոշեցին զՅակոբոս. և հրամանաւ Բ. Դրան առաքեցին հրովարտակ յԵւդոկիա, և ածին զՅակոբոս 'ի Կոստանդնուպօլիս, որ գնացեալ 'ի Բ. Դուռն, ընկալաւ զնշան պատրիարքական իշխանութեան, և դարձաւ մեծաւ փառօք 'ի պատրիարքարանն։

Իսկ Մատթէոս պատրիարք առանձնացաւ 'ի տան իւրում յՕրթագիւղ, որում շնորհեաց արքայ 'ի գանձուց իւրոց երկու հազար դահեկան ամսական. և նա զանձն իւր յընթերցանութիւնս սուրբ գրոց, և արար ճառս հոգեշահս բազումս։ Շարադրեաց զմատեանն «Հանդիսարան հաւատոյ ուղղափառութեան Հայոց», յորում երկուսեք հերքէ զզրպարտութիւնս պապականաց և նորաձևից։ Գրեաց յետ այնր և ըզ մատեանն «Բարի մարդ և բարի Քրիստոնեայ» ընդդէմ զըրպարտողաց եկեղեցւոյն Հայոց։

Գրեալ էր և յեպիսկոպոսութեան իւրում 'ի Զմիւռնիա քաղաքի «Խորհրդածութիւնք նշանաց և խորհրդոց սուրբ եկեղեցւոյ», զոր կրկին տպագրութեամբ հրատարակեաց գրաբառ և աշխարհաբառ։

Յետ երից ամաց հրաժարելոյ իւր 'ի պատրիարքութենէն յամին 1851 'ի մայիսի 19 ընկալաւ դարձեալ յարքայէ զնշան ադամանդեայ և մեծագին 'ի տան իւրում յՕրթագիւղ։

Եւ յետ երկուց ամաց ըստ բազում թախանձանաց և խնդրոյ ազգին կարգեցաւ առաջնորդ մեծի վիճակին Նիկոմիդեայ և սուրբ ուխտին Արմաշու, յոր գնացեալ բարեկարգեաց և մխիթարեաց զժողովուրդն զամ մի և կէս. և հրաժարեալ անտի վերադարձաւ 'ի տուն իւր յՕրթագիւղ, պարապեալ 'ի գիրս հոգեշահս առանձինն։

## ԳԼՈՒԽ ԿԴ.

Յաղագս աղմկի և խռովութեան Հայոց և Հռովմէականաց, որ եղև 'ի պատճառս հրատարակման Իտալերէն և Հայերէն պարբերագրոյն.

---

(1848) Յանուրս յայսոսիկ հրատարակեցաւ յանկարծ 'ի մայրաքաղաքին պարբերագիրք մին Իտալերէն, որ ամբաստանէր զմիաբանութիւն վենետիկեան վանիցն իբրև զհերձուածողս և զհերետիկոսս, պատճառելով և հաստատելով, թէ սոքա ջատագով և պաշտպան են Հայոց հերձուածողաց, արտաքուստ կեղծաւորաբար Հռովմէական ուղղափառ ցուցանեն զինքեանս, բայց գաղտնի հաղորդակից են ընդ հերձուածողաց 'ի հոգևորս, և այլ այսպիսի ամօթալի և եպերելի զրպարտութեամբք և այլոց բանիւք զՄխիթարեան միաբանութիւնն դատապարտէր իբրև զհերետիկոսս. հեղինակ գրոցն չէր նշանակեալ 'ի գրոցն մատենին, բայց խոհական անձինք վաղ ընդ փոյթ գուշակեցին և հաստատեցին, թէ մասն Հասուն վարդապետին է 'ի սմա, և նորին խորհրդով շարադրեալ է սա յանխիղճ և յանամօթ գրչէ նորա։

Յետ ամսոց հնգից հրատարակեցաւ և այլ մին պարբերագիրք Հայերէն 'ի կողմանէ վենետիկեան միաբանից, որպէս թէ հերքել կամելով զցուցմունս և զփաստս Իտալականին, ցուցանէ զինքեանս և զմիաբանութիւն իւրեանց ջերմեռանդ յոյժ և յամենայնի հպատակ հրամանաց պապին Հռովմայ, յայտ յանդիման խոստովանի, թէ մեք բնաւ հաղորդակից չեմք եղեալ ընդ Հայոց 'ի հոգևորս, և թէ ազգ և եկեղեցին Հայոց է հերձուածող և հերետիկոս. և պարբերագրոյն հեղինակ էր Հ. Արսէն Կոմիտասեան երևելին 'ի միաբանս վենետիկեան վանիցն, որ էր յայնժամ 'ի Կոստանդնուպոլիս։

Իբրև հրատարակեցաւ այս մատեան 'ի մէջ ժողովրդեան, զարմանք կալաւ զամենեսին. զի ամենեքին մանաւանդ Հայք այնպէս գիտէին և այնպէս հաւատացեալ էին յայսչափ ժա-

մանկանց ՚հետէ, թէ Արքայեան հարք ջատագով և պաշտպան են Հայաստանեայց եկեղեցւոյ, բարեկամ և սիրող հայրենի ազգին և հնաւանդ կարգաց և սովորութեանց. վասն որոյ և յամենայնի ձեռնտու և նպաստող էին առատաձեռն պարգեւօք և նուիրօք ՚ի տպագրութիւնս մատենից նոցին և բազմավէպ օրագրին, որպէս Յովհաննէս Պէյ Տատեան աւելի քան զհազար քսակ ոսկւոյ ջերմեռանդ սիրով նուիրեաց ՚ի նըպաստ տպագրութեան նորոգ աշխարհագրական տախտակաց և ներածութեան նոցին, և բազմավէպ օրագրին. այնպէս և այլք բազումք, զորոց չէ աստուստ յերկարել մի ըստ միոջէ.

Բայց այժմ ծանեան ամենեքին, զի և նոքա ոչինչ ընդհատ ՚ի Գաղղիացւոց կամ ոչ պակաս քան զնոսին ոխերիմ թշնամիք են Հայաստանեայց եկեղեցւոյ. որպէս յետ ոչ բազում ամաց փորձիւ ծանուցին զինքեանս. Իբր զի Աբրահայր նոյին Հ. Պետրոս եպիսկոպոս Հիւրմիւզեան գրեաց գգիր իմն, թէ ազգ և եկեղեցին Հայոց է հերձուածող և հերետիկոս, և ետ ստորագրել բոլոր միաբանութեան իւրոյ, և ներկայացոյց առաջի դահճին Համինոյ. որով որպէս թէ ասաց և գրպարտիչ կացուցանել կամեցաւ զՀասուն եպիսկոպոս, վասն որոյ և արար բողոք առ ժողովն տարածման հաւատոյ, և խնդրեաց ՚ի դատ ելանել ընդ նմին, և արդարացուցանել զմիաբանութիւն իւր.

Բայց ժողովն տարածման հաւատոյ ոչ ետ հրաման ժողովով քննել և որոշել զդատաստանս. միայն հրամայեաց, զի պարտագիրքն այնուքիկ թէ իտալական և թէ Հայկական՝ երկոքին եւս խափանեալ մնասցեն և բարձցին ՚ի միջոյ.

Այս էր միտ և դիտաւորութիւն Հիւրմիւզեանին, զի եթէ ոչ յաջողեսցի ինքեան յաղթող լինել ՚ի դատին, ՚ի չքմեղս եղիցի ինքն, և հաշտութիւն խօսեսցի ընդ Հասուն եպիսկոպոսին միջնորդ ունելով ինքեան զամենայն եպիսկոպոսաց ժողովյն. Այլ եթէ յաղթող գտանիցի, յանկուցէ զինքն զՀռովմէական ժողովուրդս մայրաքաղաքիս ՚ի ձեռն միաբանից իւրոց, և ընկեցիկ արարեալ զՀասուն, ինքն փոխանակեսցէ զանգի նորին իբրեւ մետրապոլիտ կամ պատրիարք Հռովմէական Հայոց.

Զայսոսիկ գեղեցիկս նկարագրէ բազմավաստակ ծերունին

Հ. Սարգիս վարդապետ Թէոդորեան 'ի քառաձայն օրագրութիւնս իւր. տեսցէ անդ, որ կամիցի լիովին տեղեկանալ այս ամենայն անցից ըստ հարկաւոր պարագայիցն. մեզ տաղտկալի է գրել զայսոսիկ:

(1855) Յետ երկուց ամաց Հ. Գաբրիէլ վարդապետ Այվազովսքի հրաժարեցաւ 'ի կեղծաւոր միաբանութենէ վենետիկեան վարդապետաց վասն տարագրելոյ նոյին զազգն Հայոց հերձուածող և հերետիկոս. և առանձնացեալ 'ի փարիզ գրեաց և հրատարակեաց յայտարարութիւնս վասն հրաժարման իւրոյ, և սկսաւ հրատարակել նորոգ օրագիր ամսօրեայ Մասեաց Աղաւնի անուն:

Եբաց և զվարժարան իւր անդ 'ի փարիզ Արեւելեան վարժարան կոչեցեալ. և սկսաւ անդ ժողովել զմանկունս յուսումն լեզուագիտութեան և բնական գիտութեանց:

Հ. Սարգիս վարդապետ Թէոդորեան՝ և Հ. Ամբրոսիոս վարդապետ Գալֆաեան՝ ոգւով ազգասիրութեան վառեալք ելին և միաբանեցան ընդ Այվազովսքի վարդապետին. ընդ որս յետոյ միաբանեցաւ և Հ. Խորէն վարդապետ Գալֆաեան: Զորեքին սոքա գրեալք զգիր հպատակութեան սիրոյ և մեծարանաց առ Յակոբ պատրիարք և առ սրբազան Ներսէս կաթողիկոս, միանգամայն և զողջամիտ դաւանութիւն հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ, ընկալան զկոնդակ օրհնութեան և եկեղեցական իշխանութեան իւրեանց՝ և զվեղար և զփիլոն ըստ սովորութեան եկեղեցականաց Հայոց, և մտին ընդ հովանաւորութեամբ և պաշտպանութեամբ պատրիարքին Հայոց՝ անկախ և ազատ գոլով 'ի պապական լծոյն:

Բացաւ և մատուռն մի Հայոց անդ 'ի փարիզ վասն պատարագելոյ Հայ քահանայի ըստ արարողութեան Լուսաւորչեան եկեղեցւոյ հրամանաւ Նաբոլէոն կայսեր՝ ըստ խնդրոյ Յակոբ պատրիարքին. և սկսաւ պատարագել անդ Շահնազարեան Կարապետ վարդապետ:

Ի չորեսին կղզիս՝ որք կան յանդիման Կոստանդնուպօլսոյ, մինչեւ ցայս վայր չէր եկեղեցի Հայոց. և Հայազգիք՝ որք օդափոխութեան աղագաւ երթային 'ի կղզիս յամարանոյս, աւուրս կիւրակէից գնային ակամայ յեկեղեցիս Յունաց առ

՚ի չլինելոյ եկեղեցւոյ Հայոց. ուստի ՚ի ամին ամի ժրաջան փա-տակօք բարեպաշտ անձանց մարզնեայց և սիրայորդոր քա-ղաքութեամբ Ցակոբայ պատրիարքին՝ եղև հիմնարկութիւն ե-կեղեցւոյ ՚ի Գրնալը կոչեցեալ կղզւոջն, ուր ՚ի քանի ինչ ամաց հետէ սկսեալ էին Հայք շինել տունս անդ և բնակել. և կա-տարեալ շինութիւնն էօծ Ցակոբ պատրիարք փառաւոր հան-դիսիւ յանուն սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին ՚ի 15 յուլիսի 1855.

## ԳԼՈՒԽ ԿԵ.

Ցաղագս պատուելոյ սրբազան կաթողիկոսին Ներսէսի զՑակոբ պատ-րիարք արժանաւոր մեծարանօք, և ահագին պատերազմին Ռուսաց, որ եղև վասն անօրինական տեղեաց սուրբ Երուսաղէմի, և վախ-ճանի սրբազան կաթողիկոսին Ներսէսի, և կաթողիկոսութեան Մատ-թէոսի առաջնոյ.

(1850) Զայս ամենայն դէպս՝ զոր ՚ի վեր անդր յիշատա-կեցաք, պարտ և արժան համարեցաւ Ցակոբ պատրիարք գը-րել և ծանուցանել սրբազան կաթողիկոսին Ներսէսի, որ հո-վուապետն էր Հայաստանեայց եկեղեցւոյ, և այս ամենայն դէպք վերաբերէին առ եկեղեցին Հայոց. ուստի գրեաց ըն-դիր հպատակութեան սիրոյ և մեծարանաց առ սրբազան կա-թողիկոսն, և պատմեաց զամենայն. Առաքեաց ընդ գրոյն և զշուրջառ մի ոսկեթել և ծանրագին ընդ այլոց ընծայից. և սրբազան կաթողիկոսն ուրախացեալ յոյժ գովեաց զհաւա-տարմութիւն նորա և զհարազատութիւն առ աթոռն և եկեղե-ցին Հայոց, և առաքեաց զմարգարտազարդ մեծագին կոնքեա հայրապետական զարդարեալ պատկերօք սուրբ փրկչին և Ա-ւետարանչաց, և զկոնդակ օրհնութեան առ ժողովուրդս մայ-րաքաղաքիս, որ ընթերցաւ յամենայն եկեղեցիս. Առաքեաց Ներսէս կաթողիկոս և հազար ոսկի բոլխմէշեալ ՚ի Զմիւռնիա

'ի նպաստ շինութեան հրկիզեալ սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն Հայոց, որ ակնեալն էր նորոգ շինել քարուկիր յօրինուածով։

Յաւուրսն յայնոսիկ փոխարքայն կովկասու վօրօնցով ընդ իշխանուհւոյն իւրոյ յայց եկ 'ի սուրբ Էջմիածին, ուր եղեւ ընդունելութիւն մեծ 'ի սրբազան կաթողիկոսէն Ներսէսէ, և եղեն լուսավառութիւնք և ուրախութիւնք։ Յետ ամաց երկուց և թագաժառանգ մեծ որդի կայսերն Ռուսաց դուքսն Աղեքսանդր եկն յայցելութիւն 'ի սուրբ Էջմիածին, ընդ առաջ նմա գնաց սրբազան կաթողիկոսն ընդ երից եպիսկոպոսաց, և արժանաւոր մեծարանօք եցոյց նմա սիրալիր ընդունելութիւն, որ կացեալ անդ օր մի, մեծաւ շնորհակալութեամբ վերադարձաւ, տուեալ 'ի նպաստ սուրբ Աթոռոյն Էջմիածնի երկու հարիւր յիսուն ոսկիս Հոլանտոյ (Մաճառ)։

(1852) Ի սմին ամի կայսերք Գաղղիոյ և Աւստրիոյ պահանջեցին զնոր կարգադրութիւն ինչ յարքայէ վասն անօրինական անցելոց սրբոյ Երուսաղէմի․ յորում պահանջէին 'ի Յունաց նախ՝ զբացարձակ իշխանութիւն մատուցանելոյ զԱստուածային պաշտօնն 'ի վերայ սրբոյ գերեզմանին, որպէս ունէին յամին 1808։

Երկրորդ՝ պահանջէին զթոյլտուութիւն նորոգելոյ զգըմբէթն սուրբ Յարութեան տաճարին։

Երրորդ՝ պահանջէին զմկրատարանն, և զեօթն աղեղունսն Մարիամ կուսին, որք մօտ համարին սուրբ գերեզմանին։

Չորրորդ՝ զԲէթղէհէմի մեծ եկեղեցին և զմերձակայ երկու պարտէզսն, զորս առին Յոյնք 'ի ձեռաց Լատինացւոց յամին 1757։

Հինգերորդ՝ զեկեղեցին, յորում են գերեզմանք Յովակիմայ և Աննայի ծնողաց սուրբ Աստուածածնին, սրբոյն Յովսէփայ Աստուածահօրն, և սրբոյն Սիմէօնի ծերունւոյն։

Վեցերորդ՝ զայրն հովուաց, զոր առին Յոյնք 'ի ձեռաց Լատինացւոց յամին 1828։

Եօթներորդ՝ զաստղն, որ էր 'ի վերայ Ծննդեան խորանի Լատինացւոց․ զոր յափշտակեցին Յոյնք 'ի նոցանէ յամին 1847 հոկտեմբեր 30։

Ընդ այս խնդիր եւրոպական տէրութեանց՝ եղեւ ժողով

նախարարաց և օրէնսդրաց 'ի Բ. Դրան, և արժանաւոր վարկուցեալ զպահանջմունս նոցին, կամեցաւ արքայ նոր հրովարտակաւ տալ նոցա զոր պահանջէինն, բայց դեսպանն Ռուսաց ընդդէմ եկաց այսր կարգադրութեան, և որ քան զոր սաստկացաւ վէճն, մինչեւ եղեւ պատճառ մեծի պատերազմին Ռուսաց ընդդէմ Օսմաննեանց և Եւրոպական թագաւորութեանց Անգլիոյ, Գաղղիոյ, և Իտալիոյ. և տեւեաց զամս երկուս, և 'ի սուր մաշեցան աւելի քան զմի միլիոն անմեղ անձանց յերկուց կողմանց, ընդ նմին և անբաւ հեղեղք ոսկւոյ 'ի ծախս պատերազմին, և աւերմունք քաղաքաց, գիւղից, և բնակութեանց, մինչեւ վերջացաւ մահուամբ Նիկողայոսի Ռուսաց կայսեր։

(1857) Յետ միոյ ամի Ներսէս կաթողիկոս յանկարծ 'ի գիշերի միում կնքեաց զկեանս իւր 'ի հասակի իննսուն և վեց ամաց բազմեալ յաթոռ դրից 'ի ձեռին 'ի մեհարանի իւրում 'ի Տփխիս քաղաքի՝ կացեալ 'ի հայրապետութեան զամս չորեքտասան, և ընդ առաւօտն ձայն ետուն զանգակատունք զանակնեալ մահ սրբազան հայրապետին, և լցան զեղան քաղաքացիք յեկեղեցւոջ, և մեծաւ հանդիսիւ կատարեաց զկարգ թաղման Սարգիս արքեպիսկոպոսն Ջալալեան, և ամփոփեալ յարկեղ միում եհան սուրհանդակս յԷջմիածին և ազդարար զմահ սրբազանին։

Եւ իսկոյն եկին վեց արքեպիսկոպոսունք յԷջմիածնէ և եկին 'ի Տփխիս, և յետ աւուրց ինչ առեալ տարան զմարմին հայրապետին 'ի սուրբ Աթոռն, և հանդուցին առ մեծի դրրան կաթողիկէ եկեղեցւոյն սուրբ Էջմիածնի։ Կոծ մեծ առարին Հայք ընդ մահն առն Աստուծոյ, որ զօրն և զգիշեր պարապէր թերեւս գտանել հնարս ինչ կանգնել զկործանեալ տունն Հայկայ 'ի վաղեմի փառս իւր. առ այս ազնէր, և այս անձկանք՝ սրտին և անձկալութիւնք ազգին թաղեցան ընդ նմա, բայց յիշատակ իւր յազգին մերում անմոռաց մնացէ յաւիտեան։ Եւ գրեալ ազդ արարին 'ի Կոստանդնուպոլիս զվախճան սրբազան կաթողիկոսին 'ի 13 փետրվարի 1857, ծանուցանելով միանգամայն, եթէ 'ի յաջորդ ամի յամսեանն յունիսի ունի լինել ժողով ազգային երեսփոխանաց յաթոռն սուրբ՝ վասն ընտրութեան նոր կաթողիկոսի։

Ի պարսից Շահ աթոռոյն՝ Սարգիս արքեպիսկոպոսն Ջալալեան կայսերական հրովարտակաւ կարգեցաւ առաջնորդ Վրաստանու և Իմերեթի․ և Մատթէոս արքեպիսկոպոսն առաջնորդ Ատրպատականի, և Գաբրիէլ վարդապետ Այվազովսքի՝ որ ընդ եղբօր իւրոյ պարոն Յովհաննու եկն 'ի փարիզէ 'ի Կոստանդնուպօլիս, և պատիւ մեծ ընկալեալ յարքունի, յետ տասներեք աւուրց դնոյ 'ի Դրիմ 'ի հայրենիս իւր, կայսերական հրովարտակաւ կարգեցաւ առաջնորդ նոր Նախիջեւանու, Բեսարաբիոյ, և Դրիմու։ Պաշտօնաբաշխութիւնքս այսոքիկ էին գլխովին հակառակ օրինաց և աւանդութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ, վասնորոյ ոչ սակաւ ցաւեցան սիրտք ազգասիրաց, տեսեալ 'ի վերայ նոցա որք զխնդրով զկարգ և կանոն, զիջան յընդունելութիւն այսց պաշտամանց։

Յաւուրս յայսոսիկ եղեւ և գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի 'ի Շուշի քաղաքի աշխարհին Սիւնեաց 'ի վանսն Ամարասու, զոր նորոգ սկսեալ էին շինել վասն հնութեանն, եւ 'ի գետնափորս արկղ մի մեծ երկաթի՝ կնքեալ կնքով Վաչական թագաւորին Աղուանից, յորում էր մարմին սրբոյն հանդերձ յիշատակարանաւ անապական մնացեալ յայնչափ դարուց հետէ։

Յամսեանն ապրիլի եղեւ ժողով եկեղեցականաց և աշխարհականաց 'ի պատրիարքարանի վասն ընտրելոյ զերիս արժանաւոր անձինս յարքեպիսկոպոսաց 'ի կաթողիկոսութիւն 'ի բաժնի Օսմանեան տէրութեան, և համաձայնութեամբ ամենեցուն ընտրեցին նախ զՅակոբ պատրիարք․ բայց նա հրաժարեցաւ պատճառելով զծերութիւն իւր և զտկարութիւն անձինն, և աղաչեաց արտասուօք զժողովեալսն ընդունիլ զհրաժարականն իւր։

Եւ նոքա զիջեալ յաղաչանս ծերունւոյն ընտրեցին ապա նախ զՅովհաննէս պատրիարքն սրբոյ Երուսաղէմի, երկրորդ՝ զնախորդ պատրիարք Մատթէոս սրբազան արքեպիսկոպոսն, որ առանձնացեալն էր 'ի յՕրթագիւղ։ Երրորդ՝ զվիճակաւոր սրբազան Գէորգ արքեպիսկոպոս զառաջնորդն Պրուսայու։

Եւ գրեալ զանուանս սոցա և ստորագրեալ ժողովելոցն ամենեցուն՝ գրեցին և առաքեցին 'ի Տփխիս, կարգելով և

ընտրելով երեսփոխան 'ի կողմանէ իւրեանց զերկուս յերեւելի իշխանաց Տփխիսեցւոց, զի գնասցեալք յԷջմիածին տացեն քուէս 'ի կողմանէ Հայոց յՌուսմենեան բաժնին եղելոց.

Եւ 'ի 18 յունիսի 1858, եղեւ ժողովն 'ի սուրբ Աթոռն. և ըստ վաղեմի սովորութեան արկին վիճակս երեսփոխանք ամենեքին, և ել վիճակն Մատթէոսի Նախորդ պատրիարքին Կոստանդնուպոլսոյ. և ըստ այնմ գրեցին և ծանուցին 'ի ձեռն փոխարքային Կովկասու 'ի դուռն կայսերն Ռուսաց 'ի Պետրբուրգ.

Վաւերացոյց կայսրն զընտրութիւն կաթողիկոսին, և ծանուցան հրաման նորին դեսպանին Ռուսաց 'ի Կոստանդնուպոլիս, որ պաշտօնական կերպիւ առաքեաց զառաջին թարգմանն իւր զԱրգիրօփուլի 'ի Բ. Դուռն՝ ծանուցանել, եթէ վեհափառ կայսրն Ռուսաց հաստատեալ զընտրութիւն Մատթէոսի կաթողիկոսին Հայոց, խնդրէ, զի հրաման տացի նմա մեկնել 'ի Կոստանդնուպոլսոյ 'ի սուրբ Էջմիածին.

Եւ Բ. Դուռն ըստ խնդրոյ կայսերն Ռուսաց մասնաւոր գրով բարեհաճեցաւ շնորհել հրաման նորընտիր կաթողիկոսին գնալ 'ի սուրբ Էջմիածին երբ և կամեսցի. Եւ Մատթէոս կաթողիկոս շնորհակալութեամբ մեծաւ ընկալեալ զհրամանն, կամեցաւ զձմեռն առաջակայ անցուցանել 'ի Կոստանդնուպոլիս, և 'ի գարնան յաջորդ ամին ճանապարհորդել յԷջմիածին. և յայնմ օրէ սկսաւ յիշատակութիւն անուան իւրոյ յեկեղեցիս Հայոց 'ի սուրբ Պատարագի.

## ԳԼՈՒԽ ԿԶ.

*Յաղագս պատրիարքութեան Գէորգայ, և ճանապարհորդութեան Մատթէոսի 'ի սուրբ Էջմիածին.*

(1858) ՅԱԿՈԲ պատրիարք պատճառելով զծերութիւն իւր և զտկարութիւն անձին, կամովին հրաժարեցաւ 'ի պատրիարքութենէն, և ընտրեցաւ 'ի տեղի նորա Գէորգ արքեպիս-

կայոս առաջնորդն Պրուսայու յաղագս այնն ժողովի ընդ նախագահութեամբ սրբազան կաթողիկոսին, զոր ծանուցեալ արքունի Դրան, ամէն 'ի Պրուսայէ և առաքեցին 'ի Բ. Դուռն, որ ընկալեալ զնշան պատրիարքական իշխանութեան, մեծահանդէս շքով վերադարձաւ 'ի պատրիարքարանն։ Իսկ Յակոբ պատրիարք առանձնացաւ 'ի տան սուրբ խաչ եկեղեցւոյն Սկիւտարու, և սպար 'ի նմա նորոգութիւնս բազումս։

Յետ քանի ինչ ամաց նորոգեաց և զդպրոց Թաղին քարուկիր յօրինուածով և հոյակապ շինուածով, որ հրկէզ եղեալն էր. և 'ի պարտիզի նորին պատրաստեաց զգերեզման իւր, բայց թաղեցաւ 'ի վանս սուրբ Փրկչին Յերուսաղէմ, յոր գնացեալն էր յուխտ և յերկրպագութիւն 'ի կատարումն ուխտին, զոր ուխտեալն էր 'ի մանկութենէ իւրմէ։

Յետ երկուց ամաց եկին 'ի կողմանէ սուրբ Էջմիածնի հրաւիրակք առ սրբազան կաթողիկոսն՝ Մակար արքեպիսկոպոսն և Մկրտիչ և Գալուստ վարդապետք և երկու սուրհանդակք. և նստան 'ի Բերա 'ի տան միում, զոր պատրաստեաց նոցա Պօղոս աղէյ Տատեան հաճիւք և կարասւովք և ամենայն կարեւորօքն հանդերձ։

Ի նոյն աւուրն հրաւիրեցաւ սրբազան կաթողիկոսն 'ի պալատն արքայի, որ առեալ ընդ իւր զՊօղոս աղէյ Տատեան, և զՄակար եպիսկոպոս, և զՄկրտիչ և զԳալուստ և զՅնդրէաս վարդապետսն, գնաց առ արքայ. և ընկալեալ զառաջին կարգի Մէճիտիյէ շքանշանն՝ վերադարձաւ մեծահանդէս շքով. Իսկ Մակար եպիսկոպոսի և երից վարդապետաց շնորհեցան երրորդ կարգի Մէճիտիյէ նշանք, որք յետ աւուրց ինչ խնդրեցին հրաման 'ի սրբազան կաթողիկոսէն երթալ յուխտ յԵրուսաղէմ, և վերադառնալ զկնի Զատկին։

Եւ 'ի քսաներորդ աւուր ապրիլի Լօրիս Մելիքով Հայազգի ժէնէրալն եկն 'ի կոստանդնուպոլիս ուղեկցութեամբ իւր բանակի օգնականն Հայազգի Միքայէլ Մխանարով հարիւրապետին տանել զսրբազան կաթողիկոսն յԷջմիածին. և իջեալ յապարանս դեսպանին Ռուսաց յերկուշաբթի աւուր, ծանոյց 'ի պատրիարքարանն. և 'ի յաջորդ աւուրն գնացեալ ընդ Տատեան Պօղոս աղէյին 'ի պատրիարքարանն, տեսութեան ընդ

Գէորգայ պատրիարքին, և որոշեցին 'ի հինգշաբթի աւուր գնալ առ սրբազան կաթողիկոսն յՕրթագիւղ, և զորոշումն զայս ծանուցին սրբազան կաթողիկոսին։

Եւ 'ի հինգշաբթի աւուր Գէորգ պատրիարք չորս վարդապետօք, և Պօղոս պէյ և Յովհաննէս պէյ Տատեան և Գէորգ պէյ Երամեան բազմութեամբ իշխանաւոր անձանց եկեալք 'ի Բերայէ ընդ վանականայ զօրականօքն, եկին յՕրթագիւղ առ սրբազան կաթողիկոսն, որ սպասէր գալստեան նոցին ընդ ուխտից վարդապետաց և Սարգսի եպիսկոպոսի և Նախկին պատրիարք Յակոբ սրբազանին յընդառաջ և գեղեցիկ տան գերդաստանին Էտուաֆեանց։

Վանականայ զօրականն ներկայացեալ առաջի նորին վեհափառութեանն՝ համբուրեաց զաջ նորա և ասէ. «Վեհափառ Տէր, փոխարքայն կայսեր բարեհաճութեամբ Թագաւոր կայսեր իմոյ եդ 'ի վերայ իմ՝ զքաղցր պարտաւորութիւն գալ 'ի Կոստանդնուպօլիս, և 'ի գլխոյ ամենայն Հայոց Ռուսաստանի շնորհաւորել սրբազնութեան ձերում՝ զհաստատութիւն ձեր յօգոստափառ կայսերէ 'ի կաթողիկոսութիւն ամենայն Հայոց. հրաւիրել զձեզ 'ի սուրբ աթոռն Էջմիածնի, և ուղեկից լինել Սրբազնութեանդ յամենայն սահմանս Ռուսիոյ. Երջանիկ համարիմ՝ զանձն իմ, որ այսօր՝ առ 'ի կատարել զեդեալն իմ՝ պարտաւորութիւն, շնորհ ունիմ՝ ներկայանալ վեհափայլութեան ձերում, և եռանդեամբ հոգւոյ համբուրել ըզսուրբ աջն ձեր»։

Եւ սրբազան կաթողիկոսին համառօտ և գեղեցիկ ատենաբանութեամբ ետ նմա զհայրապետական օրհնութիւն իւր։ Յայնժամ՝ Էտուաֆեանց Տիգրան աղա երիտասարդ ազնուականն 'ի գլխոյ ազգային երեսփոխանաց և ամիրայից արար համառօտ ատենաբանութիւն իմն առ վեհափառ կաթողիկոսն և ասէ. «Վեհափառ Հայրապետ, աներկբայ լինելով, թէ հայրախնամ սիրտ ձերդ վեհափայլութեան անպատում բերկրութեամբ լցեալ է այսօր, տեսանելով առաջի վեհափառութեան ձեր զյարգելի պատգամաւորս երեւելի իշխանաւորաց ազգիս և բոլոր հասարակութեան՝ որք գան 'ի մայրաքաղաքիս, խնդրեմք հրաման 'ի Սրբազնութեան ձերմէ

յայտնել վսեմափայլ զօրապետիդ զհաւաստիս անպատում բերկ-
րութեանց, զոր զգամք և վայելեմք շնորհիւ գալստեան Նորին։
Եւ դարձուցեալ զերեսս իւր առ զօրապետն, ասէ, տէ՛ր
զօրապետ, այս ներկայութիւն ձեր զկրկնակի ուրախութեանց
պատճառ մատակարարէ մեզ, տեսանելով նախ զձերդ մե-
ծանձնութիւն արժանաւորապէս վարձատրեալ յօգոստափառ
ինքնակալէն ամենայն Ռուսաց, և նոյնպէս մեծարանօք պատ-
ուեալ յօգոստափառ սուլթանէ մերմէ, որ ամենամեծ պա-
տիւ և միանգամայն պարծանք է ազգի մերում, որով կա-
րեմք պարծիլ այսօր և մեծարիլ յօտար ազգաց։ Եւ երկրորդ՝
մեծ է ուրախութիւն մեր տեսանելով զհաւաստիս բերկրու-
թեանց Ռուսիաբնակ մերազնեայց, զոր զգան յանձին՝ տե-
սանելով զընտրութիւն Նորին վեհափառութեան Մատթէոսի
սրբազան կաթողիկոսիս, բարձրացեալ 'ի գահ հայրապետու-
թեան Հայաստանեայց եկեղեցւոյ յառաքելական աթոռ սրբոյ
հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, և համաձայնութիւն նոցին
յայս աստուածապարգև շնորհ՝ հաւաստիք իմն են արդի
համաշխարհական քաղաքակրթութեան սկզբունքոց միա-
բանութեան, որ անհրաժեշտ կերպիւ կարեւոր է՛ և իցէ ըն-
կերութեան, որ ցանկայ մնանել ընդ լուսաւոր նորին տո-
ղոսայ։

– Ուրեմն իրաւունս ունիմք յուսալ միխթարութիւն և ըղ-
ձալ ուրախութիւն տէր զօրապետ, տեսանելով զօգոստափառ
ինքնակալացն ամենայն Ռուսաց և Տաճկաստանի զհնաշխար-
հիկ համարումն, զոր ունին առ ազգ մեր, և զոր յայտ՝ առ-
թի փառաւորագոյն կերպիւ յայտնեցին մեզ. որոց և բարե-
կամական յարաբերութիւնքն միջոց իմն են յառաջադիմու-
թեան ազգի մերում։

– Ազգ մեր 'ի վաղ ժամանակաց հետէ առատապէս վա-
յելեալ է զհայրագորով խնամս օգոստափառ ինքնակալացս
այսոցիկ փոխարէն իւրոց հաւատարիմ ծառայութեանցն. և
որովհետեւ վեհափառութիւնք նոցին պատուիրեն մեզ մնա-
նել 'ի շաւիղ լուսաւորութեան այժմեան դարու, յոր զառա-
ջին կարեւոր քայլափոխն արարեալ է ազգ մեր, և խոստա-
նայ կատարել զբաղձը պատուաւորութեանն զայնոսիկ, խընդ-

րեմք 'ի ձէնջ առ'ր զօրավարս, զի լինիցիք թարգման յուսալից զգացմանցս այսոցիկ առ օգոստափառ ինքնակալն, որոյ կայսերական անդին կենաց և յարատեւ բարեկամութեանն եմք ցանկացողք և աղօթարարք »:

Պատասխանի ետ Մելիքով զօրավարն և ասէ « Ամիրայք, յորմէ հետէ ազգս Հայոց վայելէ զպաշտպանութիւն Ռոմանեան և Ռուսիոյ մեծազօր տէրութեանց, զոմեկի հաստատմութեամբ իւրով արժանի եղեալ է վստահութեան և հաւանութեան նոցա, ջանասցուք ուրեմն պահել միշտ և առաւելուլ զայս պարծանս ազգիս, հաստատուն կալով խոստում՝ դուք ձերում թագաւորի և մեք մերումն. և այսպէս կատարելով զպարտաւորութիւն մեր՝ յառաջադիմեսցուք ընդ շաւիղ քաղաքակրթութեան դարուս »:

Յետ ցնծալից այցելութեանս և բազմապատիկ մեծարանաց՝ զոր արար ազգասէր դերդաստանն Եուսուփեանց 'ի շընորհս սրբազան կաթողիկոսին և 'ի պարծանս ազգիս, վերադարձաւ զօրավարն մեծաւ գոհունակութեամբ 'ի Բերա ընդ որոց եկեալն էր :

Եւ 'ի յաջորդ աւուրն հրաւիրանօք Բ. Դրան գնաց զօրավարն ընդ դեսպանին Ռուսաց 'ի պալատն արքայի, և գտեալ սիրալիր ընդունելութիւն և մեծամեծ յարգանս, գնաց անտի 'ի Բ. Դուռն, և արար այցելութիւն մեծի եպարգոսին՝ և արտաքին գործոց տեսուչ Ֆուատ Փաշային՝ և այլոց երեւելի պաշտօնակալաց :

Բազմապատիկ եղեն կոչունք և խնճոյք և հրաւէրք վսեմափայլ զօրավարին 'ի Բերա, յՕրթագիւղ, և 'ի Պէշիկթաշ, բայց գերազանցեաց քան զամենեսին հրաւէրն 'ի Բերա յօթեւանին՝ որ կոչէր Օթէլ տը պիզանս, զոր արարին ուսումնականք ազգիս 'ի պատիւ նորին վսեմութեանն, ուր բազում ճառք խօսեցան համառօտ ձեւովք, և եղեն փոխադարձ բարեմաղթութիւնք :

Մեծահանդէս էր և շուք փառաւորութեան Սրբազան կաթողիկոսին 'ի հրաւէրսն յեկեղեցիս 'ի մատուցումն սրբոյ Պատարագի և 'ի լուր սքանչելի ատենաբանութեանցն :

Առաքեաց և պատրիարքն Յունաց զփոխանորդ իւր հան-

գերձ երկու եպիսկոպոսօք 'ի շնորհաւորութիւն առ Սրբազան կաթողիկոսն, բերել շնորհաւորութիւն 'ի պատրիարքէն, որք ընկալեալ սիրալիր ընդունելութիւն, վերադարձան 'ի տեղիս իւրեանց։

Իսկ դեսպանն Անգղիացւոց արար 'ի պալատի իւրում ըղ փառաւոր հացկերոյթ 'ի պատիւ սրբազան կաթողիկոսին և Մելիքով զօրապետին, ընդ որս սեղանակից էին և դեսպանքն Ռուսաց և Պէլճիքայի՝ և Փօղոս պէյ Տատեան։

Յաւուրն յայնմիկ բարձրապատիւ Դուքսն կոստանդի-անոս եղբայր կայսերն Ռուսաց ընտանեօք իւրովք գնացեալ յուխտ 'ի սուրբ Երուսաղէմ, արար այցելութիւն. սրբոյ Յակոբեանց դերահռչակ ուխտին Հայոց. և սիրալիր ընդունե-լութիւն գտեալ 'ի Յովհաննէս պատրիարքէն հանդերձ ոսկի խաչիւ ընծայիւք սուրբ կենաց փայտին և սրբոց մասանց, վե-րադարձաւ մեծաւ շնորհակալութեամբ 'ի նաւ իւր. և յետ հնգետասան աւուրց եկն 'ի կոստանդնուպօլիս, որում պատ-րաստեալ էր արքայ զապարանն Էմիրկինի։

Գնացին անդր յայցելութիւն նախարարք տէրութեան, դեսպանք Եւրոպացւոց, և պատրիարքունք Յունաց և Հայոց։ Իսկ սրբազան կաթողիկոսն պատրաստեալ զխաչ մի հա-մակ ոսկի մարգարտազարդ, ագուցեալ 'ի նմա զմասն սրբոյ կենաց փայտին և սրբոյն Ստեփաննոսի նախավկային, գնաց առ բարձրապատիւ Դուքսն ընկերութեամբ Գէորգայ պատրիար-քին և Փօղոսի Տատեան. զորս ներկայացոյց Մելիքով զօ-րապետն առաջի նորին վեհմութեան, որ բազում գլխով ընդ-առաջ եկեալ համբուրեաց զաջ սրբազան կաթողիկոսին. և նա օրհնեաց զնա, համբուրեաց զճակատ նորա. և ետ նմա զսըր-բազան նուէրն տանել և կախել զպարանոցէ որդեկին իւրոյ։ Եւ բարձրապատիւ Դուքսն մեծարեալ յոյժ զսրբազան կաթո-ղիկոսն, խօսեցաւ ընդ նմա սակաւ ինչ, և ընդ իւր մեկնել 'ի կոստանդնուպօլսոյ 'ի միում աւուր։

Եւ 'ի նմին աւուր հեռագրով հրաման առաքեաց 'ի Նի-քօլայէվ նաւատեղին յերկիրն Դրիմու, առաքել զշոգենաւ մի մեծ պատրաստեալ ամենայն զարդուք 'ի կոստանդնուպօ-լիս առ 'ի տանել զսրբազան կաթողիկոսն 'ի Բօթի։

Եւ ըստ հրամանին յետ երից աւուրց եկն պատուական և գեղեցիկ շոգենաւ մի 'ի Կոստանդնուպօլիս, և ըստ պղգաբարութեան դեսպանատանն Ռուսաց եկն և խարսխեաց առաջի Օրթագիւղի։

Լուեալ արքայ, եթէ բարձրապատիւ Դուքսն ունի մեկնիլ 'ի Կոստանդնուպօլսոյ յերկիր իւր, հրաւիրեաց զնա 'ի Կէօքսու յամարանոցն 'ի հացկերոյթ, յոր զվերջին հրաժարական ողջոյն ետ արքայի Դուքսն մեծ, ծանուցանելով միանգամայն, եթէ և կաթողիկոսն Հայոց ունի 'ի վաղիւն մտանել 'ի շոգենաւ երթալ 'ի սուրբ Էջմիածին։

Եւ 'ի յաջորդ աւուր առաւօտուն հրաւիրեաց արքայն ըզ Սրբազան կաթողիկոսն 'ի պալատ իւր տալ զվերջին հրաժարական ողջոյն, և սիրալիր ընդունելութիւն և բազում մեծարանս ցուցեալ նմա, դարձոյց շքեղ փառօք և պատուով յՕրթագիւղ. ուր եղեւ հանդէս մեծ 'ի ծովեզերեայ յարկի Ճանիկ ամիրայի, յորում ժողովեալք էին պատրիարքն, եպիսկոպոսք, վարդապետք, և քահանայք, իշխանք մեծամեծք, և բազմամբոխ հասարակութիւն Հայոց ընդ ծով և ընդ ցամաք. որոց ամենեցուն տուեալ սրբազան հայրապետն զսիրալիր ողջոյն իւր և զօրհնութիւն, եմուտ 'ի շոգենաւ ընդ Մելիքով զօրապետին յիններորդ ժամու երկուշաբթի աւուր 'ի յունիսի 2, 1859։

Ի նմին պահու և բարձրապատիւ դուքսն եմուտ 'ի շոգենաւ իւր, և 'ի միասին ելաք 'ի ճանապարհ ընդ նեղուցն Վոսփորի։ Ուղեկից եղեն ընդ սրբազան հայրապետին և Սարգիս եպիսկոպոս Անդրիանուպօլսոյ, Սարգիս վարդապետ Թէոդորեան, Աբրահամ վարդապետ Գիւլպիւլեան, և այլք։ Ընդ նոսին էի և ես, որ գոլով ատենադպիր նորուն վեհափառութեան և դաստառու նորին 'ի քառասուն և հինգ ամաց հետէ, ականատես եմ այս ամենայն անցից, զորս հաւատարմաբար 'ի գիր անցուցի մեկին և պարզ ոճիւ առ դիւրիմաց ընթերցողաց ամենեցուն։

# ԳԼՈՒԽ ԿԷ·

*Յաղագս հանդիպից, որք եղեն 'ի ճանապարհորդութեան սրբազան կաթողիկոսին մինչեւ յէջմիածին, եւ փառաւոր մտման նորա, եւ գործոց նորա, եւ պատրիարքութեան Սարգսի.*

---

(1859) Յետ երից աւուրց հասաք 'ի Բօթի, ուր ընդ առաջ ելին Սարգիս արքեպիսկոպոսն Ջալալեան առաջնորդն Վրաստանու եւ Իմերէթի, եւ Գաբրիէլ վարդապետ Ալիխանովի առաջնորդն Պեսարաբիոյ եւ Ղրիմու. եւ 'ի յաջորդ աւուրն մտեալ 'ի փոքր շոգենաւ, նաւարկեցաք ընդ գետն Ռէյօն ժամս իբր երկոտասան, եւ ելաք 'ի Մառան. ուր նստեալ 'ի պատրաստեալ կառսն, ուղեւորեցաք 'ի Գութայիս, 'ի Սուրամ, 'ի Գորի, 'ի Մծխիթայ, եւ հասաք 'ի Տփխիս.

Յայս ամենայն տեղիս մեծահանդէս շքով ընդ առաջ ելին բնակիչք եւ զօրականք. բայց գերազանցեաց քան զամենեսին հանդէսն՝ որ եղեւ 'ի Տփխիս, մինչեւ ըստ պատմելոյ իսկ քաղաքացեացն աւելի քան զքառասուն հազար ոգիս յամենայն ազգաց հեծեալ եւ հետեւակ թեւակոխէին յընթացս ճանապարհին, եւ փոշին որ ելանէր յերկրէ, ծածկէր զերեսս երկնից. եւ արք եւ կանայք լցեալ էին զճանապարհն, ընդ որ ունէր անցանել հայրապետն մինչեւ յեկեղեցին մեծ անուանեալ սուրբ Էջմիածին. յոր իջեալ հայրապետն ազդու ատենաբանութեամբ իւր օրհնեաց զկայսրն եւ զկայսրուհին եւ զորդիս եւ զամենայն ազգատոհմ նորին, եւ զզօրավարս եւ զամենայն բնակիչս Ռուսիոյ.

Օրհնեաց եւ զազգ մեր զեկեղեցականս եւ զաշխարհականս մեծաւ բարեմաղթութեամբք. եւ եկեալ այս 'ի վեհարանն հանգստացաւ. Ի գիշերին եղեւ լուսավառութիւն մեծ ընդ քաղաքն ողջոյն. եւ 'ի յաջորդ աւուրն գնացեալ յայցելութիւն 'ի դուռն փոխարքային՝ ընկալաւ զշքանշանն հանդերձ ադամանդեայ եւ ականակուռ՝ քառասուն հազար փռանքաց ար-

ժողովեամբ, զոր առաքեալ էր օգոստափառ կայսրն ընդ բարձր հրովարտակի կաթողիկոսական մերամբարձ իշխանութեանն. զոր ընթերցեալ 'ի մեծի սրահին, յորում կանգնեալ էին դասք դասք ճէնէրալաց և պաշտօնէից, կախեաց զնշանն իւրով իսկ ձեռամբ տեղապահն փոխարքային, զոր ընկալեալ Հայրապետն, յայտնեաց զգոհունակութիւն իւր մեծ առ կայսրն ամենայն բարեմաղթութեամբ և օրհնութեամբ, և վերադարձաւ 'ի վեհարանն.

Եւ 'ի յաջորդ աւուր եկն տեղապահ փոխարքային յայցելութիւն Հայրապետին, և այս զաւուրս տասն յայգուէ մինչեւ ցերեկոյ անպակաս էր այցելութիւնն կարգ կարգ ճէնէրալաց, պաշտօնակալաց, ասպետաց, ատենականաց, վաճառականաց և արհեստաւորաց.

Այն օրինակ եղեւ փառաւոր հանդէս մեծ 'ի Տփխիս յետ չորեքտասան աւուրց յաւուր երանելոյ Հայրապետին 'ի Տփխիսէ ճանապարհորդել յէջմիածին, և ուր և եհաս ընդ ամենայն գիւղս և իշխանս եղեւ ընդունելութիւն մեծ և պատիւ բազում մինչեւ յէրեւան քաղաք, ուր կուսակալն զօրականօք և դենպետն Պարսից իւրովք օրինակօք, և ծերունի տեղապահն Ղուկաս արքեպիսկոպոս վարդապետօք և քահանայիւք և բազմութեամբ բնակչաց Հայոց՝ եկին ընդ առաջ մինչեւ 'ի Քանաքեռ գիւղ, և անցեալք ընդ առաջ՝ մտին յէրեւան և տարան զՀայրապետն 'ի վեհարան եկեղեցւոյն, և մեկնեցան 'ի տեղիս իւրեանց.

Ի գիշերին եղեւ լուսավառութիւն մեծ, և 'ի յաջորդ աւուրն հացկերոյթ մեծածախ պատրաստեաց կուսակալն 'ի պատիւ Հայրապետին, և յերրորդում աւուր ելեալ յէրեւանայ եհաս յէջմիածին. և 'ի գիշերին եղեւ լուսավառութիւն 'ի չորեսին վանորայն մինչեւ ցառաւօտ. Ի յաջորդ աւուրն ընկալաւ զհամբոյր հնազանդութեան ուխտ եպիսկոպոսաց, քսան եւ չորս վարդապետաց և քսան սարկաւագաց. որոց ամենեցուն տուեալ զօրհնութիւն իւր սուրբ, արձակեաց 'ի տեղիս իւրեանց.

Յաւուր շաբաթու Նաւակատեաց վարդավառին էջ Հայրապետն յեկեղեցին. և յաւարտման Պատարագին եկն եկաց

'ի սուրբ իջման տեղին, և ընթերցաւ 'ի լուր ամենեցուն զերդ-մաթուղթն հաւատարիմ' ծառայութեան կայսեր. և եկեալք 'ի թափոր, արարին օրհնութիւնս և բարեմաղթութիւնս վասն յաջողութեան կայսեր և ընտանեաց նորին, և տուեալ Պահպանիչ, արձակեցաւ ժողովն.

Եւ յաւուր շաբաթու նաւակատեաց սուրբ Աստուածածնի եղեւ օծումն վեհափառ հայրապետին յընդհանրական կաթո-ղիկոսութիւն ամենայն Հայոց' և 'ի ծայրագոյն պատրիարքու-թիւն Արարատեան կաթողիկէ եկեղեցւոյ Առաքելական գա-հին լուսոյ սրբոյ Էջմիածնի, հանդէս հրաշալի, զոր չէ մարթ ընդ գրով արկանել.

Ի յաջորդ աւուր հրամայեաց բանալ դպրատանն գըմ-բեթի եկեղեցւոյն, որք փակեալք էին յերկիւղէ պատերազ-մին' որ եղեւ 'ի 1853 ամի ընդդէմ դաշնակից տէրութեանց.

Եբաց զուսումնարան վաղարշապատ գիւղին' որ կայր խա-փանեալ. Բարեկարգեաց զուսումնարանն Էջմիածնի և զժո-ղովատունն միաբանից. խղճալի էին ընթացք միաբանիցն. կարգեաց նոցա տարեկանս զզեստս, և փայտ և ածուխ վասն ձմերան, և մոմ, և մխիթարեաց զնոսա յոյժ.

Առաքեաց զհայրապետական կոնդակ օրհնութեան իւրոյ յԱնատոլու և 'ի Ռումելի. 'ի Կոստանդնուպօլիս և 'ի Վալաքիա, 'ի Պեսարաբիա, և 'ի Պետրբուրգ, 'ի Պարսս և 'ի Հնդիկս.

Շնորհեաց և արժանաւոր եպիսկոպոսաց զպանակիս, և վարդապետաց և քահանայից զխաչս, և ընկալաւ յամենեցուն զգոհութիւնս բարեմաղթութեամբ հանդերձ.

Գրեաց և առ վեհափառ կայսրն ամենայն Ռուսաց և խնդրեաց վասն սրբազան Սարգսի եպիսկոպոսին' որ ուղեկիցն եղեւ 'ի Կոստանդնուպօլսոյ մինչեւ յԷջմիածին, շնորհել զա-ռաջին կարգի պատուանշանն ասպետութեան սրբոյն Աննայի. նոյնպէս և աշակերտի նորուն Մեսրոպայ վարդապետի' զերկ-րորդ կարգի նշանն սրբոյն Աննայի. Ընկալեալ կայսրն զխնդիր սրբազան հայրապետին' առաքեաց յետ միոյ ամի զպատուա-նշանն 'ի Կոստանդնուպօլիս առ դեսպան իւր. զոր անձամբ գնացեալ մատոյց նորին սրբազնութեանն 'ի դիմաց կայսերն և հայրապետին.

Յետ վեցից ամաց հիւանդացաւ սրբազան կաթողիկոսն, և սկսաւ օր քան զօր տկարանալ. անդ առօրեայ և բորբոք թանչից տառապեցուցանէր զնա յոյժ, և ոչ գտանէր դեղ և դարման ՚ի բժշկացն Ռուսիոյ. խնդրեաց հրաման ՚ի կայսերէն օդափոխութեան աղագաւ գնալ ՚ի Կոստանդնուպօլիս, և վե-րադառնալ յետ չորից ամաց. բայց ոչ ետ հրաման կայսրն ցուցեալ նմա զԱղեքսանդրուպօլ, զՏփխիս, զՊետրպուրգ, և զամենայն սահմանս Ռուսիոյ. զի յոր կամս և կամիցի, գնասցէ օդափոխութեան աղագաւ, բայց արտաքոյ սահմանաց կայսե-րութեան քայլ մի ոտին մի անցանիցէ։

Ընդ այս վշտացաւ մեծապէս կաթողիկոսն, և սկսաւ ող-բալ զծերութիւն իւր. հեռացեալ յիւրմէ զբարեկամս իւր, և ոչ կամէր լսել յումեքէ բանս մխիթարութեան, այլ առանձ-նացեալ ՚ի սենեակի իւրում՝ զօր ամենայն սկսաւ պարապիլ յըն-թերցանութիւնս և ՚ի մատենագրութիւնս, զորս և տպագրել ետ ՚ի Տփխիս. և զայս վիճակ ցաւալի կեցութեան ունելով յանձին՝ տխրագին սրտիւ և ցաւալի հեծութեամբ ոչինչ խիք այնպէս ցանկայ որպէս մահու. և այնպէս կայր անմխիթար ՚ի կառավարութեան իւրում, զամենայն անօրէնութիւն և զչոգ յանձն արարեալ սուրբ Սինհոդին։

(1860) Ի սմին ամի Գէորգ պատրիարք տաղտկացեալ ՚ի ցաւալի երկպառակութեանց ազգիս, հրաժարեցաւ ՚ի պաշ-տօնէ պատրիարքութեանն յոչ կամաց. և յաջորդեաց ՚ի տեղի նորին Սարգիս եպիսկոպոս Անդրիանուպօլսեցի ազգային ընտ-րութեամբ. իսկ Գէորգ պատրիարք ընկալեալ ՚ի տէրութենէն զամսական երկու հազար և հինգհարիւր դահեկանաց, ա-ռանձնացաւ ժամանակս ինչ ՚ի տան միում ՚ի Բուժելի Հիսար, և ապա գնաց ՚ի նախկին վիճակ առաջնորդութեան իւրոյ ՚ի Պրուսա։

(1860) Մեռաւ ՚ի սմին ժամանակի Հայ բողոքական ոմն Միրի քէլամ՝ կարապետ անուն, զորոյ զմարմինն կամէին բո-ղոքականք թաղել ՚ի գերեզմանատանն Հայոց յԷտիրնէգա-փուսի, բայց Հայ ժողովուրդք դիմադրելով յառաջնմէ զհայհոյիչ բերան նորա՝ որ ՚ի կենդանութեան իւրում հայհոյէր զօր ա-մենայն զեկեղեցին և զազգն Հայոց կռատունս և կռապաշտս

կոչելով և ծաղր առնելով. և ասէր զանձնէ իւրմէ լինել առաքեալ Քրիստոսի, և թէ տեսեալ իցէ զՔրիստոս և ձեռնադրեալ 'ի նմանէ 'ի քարոզութիւն Աւետարանին հանդերձ Պօղոսիւ, և այլ ևս բանս զժտխալուրս, որոց ոչ կարելով տանել ժողովրդականք Հայոց՝ ամբոխ մեծ յարուցին և ոչ թոյլ ետուն թաղել 'ի գերեզմանատան իւրեանց, լաւ համարեալ ըղ մեռանիլ 'ի պարծանս ազգին, քան ընդունիլ զհայհոյիչն Տիրամօր կուսին 'ի սրբավայր իւրեանց.

Եւ 'ի սաստկանալ խռովութեանն՝ դեսպանք Անգղիացւոց և Ամերիկացւոց միջամուխ լեալք 'ի պաշտպանութիւն բողոքականաց՝ առաքեցին զառաջին թարգմանս իւրեանց 'ի պատրիարքարանն Հայոց, և մեծաւ զանգատանօք խնդրեցին 'ի պատրիարքէն թոյլ տալ թաղել զմեռեալն 'ի գերեզմանատանն Հայոց.

Բայց Սարգիս պատրիարք պատճառելով զաղմուկ ժողովրդեան իւրում՝ ոչ կարաց ընդունել զխնդիր նոցա, և գուշակելով զսաստկանալ կռուոյն 'ի վերջին ատեան, ընտրեաց զմահ քան զկեանս 'ի փառս սուրբ եկեղեցւոյ և 'ի պարծանս ազգին.

Բողոք կալան յայնժամ դեսպանք 'ի Բ. Դուռն. և սպարապետն մեծ Բիզա փաշա՝ և նախարարն ատեանաց Մէհմէտ փաշա բազմութիւ զօրօք գնացին 'ի գերեզմանատունն. գնաց անդ և Սարգիս պատրիարք 'ի պաշտպանութիւն ազգին, և իւրով խոհական և քաղցր բնաւորութեամբն ցածոյց զըրդոմնութիւն սպարապետին՝ որ սպառնայր հրացանիւ գնդակայց ցրուել զամբոխն Հայոց. և յետ բազում վիճաբանութեանց կնքեաց զխօսս իւր Սարգիս պատրիարք առ այս բան. թէ լաւ է մեզ մեռանիլ վասն օրինաց մերոց, քան տեսանել զորբովայրս մեր պղծեալ և ապականեալ յայտնի հայհոյիչ թշնամեաց եկեղեցւոյ մերոյ.

Յայնժամ տեսեալ սպարապետն, թէ վասն միոյ մեռելոյ հազարաւոր անձինք պատրաստեալ են զոհ լինել 'ի պաշտպանութիւն օրինաց իւրեանց, խորհեցաւ ընդ Մէհմէտ փաշային, և որոշեցին զանկիւնին արտաքոյ սահմանի գերեզմանատանն Հայոց ընդ մէջ ճանապարհին, և անդ ետուն թաղել զմա-

հաճոտեալ մեռեալն, որ ընդ բերանն և ընդ ռնգունսն որդնալից եղեալ էր յերից աւուրց հետէ. և այսպէս վերջացաւ կռիւն։

Լուեալ զայս ամենայն արքայի՝ հրամայեաց որոշ տեղի ցուցանել բողոքականաց թաղել զմեռեալս իւրեանց եթէ 'ի Կոստանդնուպոլիս և եթէ այլուր, և տուաւ նոցա տեղի յարքունուստ 'ի Պէյօղլու։

(1860) Լեռնականք Լիբանանու լերանց՝ որք կոչին Տիւրզիք սերեալք 'ի նախկին բնակչացն Տիւրոսի և յեղաշրջեալք 'ի Մահմէտական օրէնս, հանապազ գժտութիւն ունին ընդ Մարօնի կոչեցեալ Քրիստոնէից ազգացն իւրեանց, որք գուցէ Սիդոնացիքն իցեն հաստատեալք 'ի նոցանէ յաղագս Քրիստոնէութեան։ Սոքա 'ի սմին ամի յարձակեցան 'ի քաղաքն Զահլէ, սպանին զերց հարիւր ոգիս 'ի Քրիստոնեայ Մարօնեայց, և անտի սկսան յարձակիլ 'ի Տէյրէլգամէր. յարձակեցան և 'ի Հաշպէյա, 'ի Ռաշէյա, և 'ի յայնոսիկ կողմանս, զհինգ հարիւր յիսուն գիւղս յաւարի առեալ յանհուն գործուցին, և աւելի քան զտասն հազար անձինս սպանին չարաչար։

Ի սոսա հայեցեալ և Մահմէտական բնակիչք Դամասկոսի սկսան և նոքա 'ի սուր անցուցանել զՔրիստոնեայ բնակիչս քաղաքին հինգ հազարի չափ, յորս էին ութ Ֆրանչիսկեան կրօնաւորք, երեսուն քահանայք, երկու Համիմէական եպիսկոպոսք, և մի Յոյն եպիսկոպոս։ Այրեցին նաև զհիւպատոսարանս Ռուսիոյ, Բրուսիոյ, Հոլանտայի, Պէլճիքայի, և Հելլենացւոց, ևս և զբոլոր վանորայս և զեկեղեցիս և զառաջնորդարանս։ Եւ երկու հազար Քրիստոնեայք փախուցեալք ապաստանեցան 'ի տուն Ճէզայիրցի հռչակաւոր Ապտ իւլ Գատիր էմին իշխանին, զորս պաշտպանեաց մարդասիրական գըթով և մխիթարութեամբ։

Լու եղեւ այս 'ի Կոստանդնուպոլիս յականջս տէրութեան, և խոկոյն հրամանաւ արքայի առաքեցաւ 'ի վերայ նոցա արտաքին գործոց տեսուչ Ֆուատ փաշա քսան և հինգ հազար կայսերական զօրօք երթալ յաղթահարել զապստամբսն զայնոսիկ, վրէժխնդիր լինել չարագործաց, և հաստատել զխա-

անկարգութիւն աշխարհին, որ ծփայր իբրեւ ծով ալէկոծեալ։

Եհաս 'ի Դամասկոս Ֆուատ փաշա, և նախ զքաղաքապետն Ահմէտ փաշա և զզօրապետն Խուրշիտ փաշա, և զերկոտասան պաշտօնակալսն, և զհարիւր քսան և մի 'ի պաշտպան զօրաց քաղաքին զգլխաւորսն ածեալ կապեալս 'ի մեծ հրապարակի քաղաքին, ետուն հրացանից հազարաւոր զընտակաց իբրեւ զանձրեւ տեղացեալք 'ի վերայ նոցա ըստ օրինի զինուորական կարգաց։

Յետ նոցա զեղեռնագործ ապստամբսն 'ի քաղաքացեաց ամբարձ 'ի կախաղան մահու. և տուգանս մեծամեծս ետ 'ի վերայ բնակչաց Դամասկոսի Մահմէտականաց՝ վճարել զբոլոր ծախս չինութեան հրկիզեալ տանց Քրիստոնէից, և եկեղեցեաց, և վանորէից, և զգողացեալ աւարսն զամենայն հատուցանել ըստ նոցուն հաշուի։

Յայսմ միջոցի և ութ հազար զօրք Գաղղիացւոց և չորս հազարք Անգղիացւոց եկին 'ի Բէրութ 'ի պաշտպանութիւն Օսմանեան բանակին, և անտի յարձակեցան 'ի վերայ լեռնականացն Լիբանանու, էր՝ զորս սպանին, և էր՝ զորս փախուցին 'ի մեծ անապատն, և սասանեցուցին զաշխարհն ամենայն մինչեւ նորոգ կարգադրութեամբ պահանջեցին յՕսմանեան տէրութենէ օրինադրել և կարգել 'ի վերայ նոցա կուսակալ Հայազգի Հռոմէադաւանս ամենայն իշխանութեամբ, զոր ունին Եաղուղեան փաշայք Օսմանեան. և ընկալաւ արքայ զպահանջումն նոցա և հաստատեաց, և առաջին փաշա կամ կուսակալ ընտրեցաւ Անտօն կարապետ Տաւուտեան 'ի Հռոմէադաւան Հայոց, և գրեցաւ 'ի հրովարտակին Տաւուտ փաշա, և առաքեցաւ պատուով 'ի պաշտօն իւր։

Աստանօր արժան համարիմ զեկուցանել, զի որպէս 'ի Հռոմէական Հայս, նոյնպէս և 'ի մերազնեայս էր տեսանել օր քան զօր բազմանալ պաշտօնէութեան ազգին թէ 'ի քարտուղարութեան արտաքին գործոց դիւանատան Բ. Դրան, և թէ յայլ և այլ վարչական մասունս տէրութեան, զորոց մի առ մի թուումն այլոց պատմագրանից որ զկնի իմ գալոց են, թողում առնել։

Իսկ արքունի վառօդապետութիւնն՝ Տատեան երկոցուն

գերդաստանացն, Ցոլչաննէս պէյի Տատեան, և Պօղոս պէյի Տատեան սեփականեալ գոլով որպէս նախնեաց սոցա, նոյնպէս և որդւոց սոցա, որք ամենայն յաջողութեամբ վարեն զայս պաշտօն ցարդ։

Նոյնպէս և ճարտարապետութիւնն Պալեան գերդաստանին սեփականեալ, Կարապետ պէյի Պալեան, և որդւոց սորա, յայտնաբարբառ քարոզեն արքունի ճարտարարուեստ նորոգ շինութիւնք, պալատք, մզկիթք, և այլք զյաջողակութիւն սոցա յարուեստ և զհաստատարիմ ծառայութիւն առ վեհափառ Սուլթանս. մանաւանդ անուանի գտաւ 'ի ճարտարապետութեան որդի Կարապետ պէյի Նիկողոս աղա, որ վաղ կնքեաց զընթացս կենաց իւրոց 'ի ցաւ գերդաստանին և ազգին, այլ յաջորդեցին նմա և միւս որդիք Կարապետ պէյի, Սարգիս պէյ և Յակոբիկ պէյ, որ գերազանցեալ յարուեստ, զնոյն իսկ նըրբագոյն ճարտարարուեստս, և զՕգոստափառ հիւրս, որք 'ի ժամանակս ժամանակս յայց եկանեն Սուլթանին, 'ի զարմացումն զրաւեալ են. Այս յաջողակութիւնք սոցա ոչ սակաւ պատիւ և պարծանս յաճախեն ազգիս. և մանաւանդ բազում Հայ արուեստաւորաց ասպարէզ կարդան յառաջադիմութեան և զարգացման, և բազմաթիւ գործաւորաց իսկ աւուր պարէնս հայթայթելոյ։

Այսպէս և յատաղձագործութեան անուանի եղեւ յոյժ Քէմհաճեան գերդաստանն, Գալուստ աղա տօղրամաճըպաշի, որ առաջինն եղեւ 'ի կայսրութեանն Օսմանեան հաստատելով գործարան մի մեծ (ֆապրիքա) 'ի Պէշիքթաշ, բազմադիմի տատաղանց և դժուարութեանց յաղթահարեալ, և բազմաթիւ Հայ արուեստաւորաց ծնող եղեալ. մանաւանդ որդի նորին Որդիք էֆէնտի յոյժ անուանի եղեւ, մինչեւ հայթայթել զամենայն ինչ որ 'ի զարդ կայսերական պալատանց և 'ի գործածութիւն կայսեր և կայսերազանց, ազգի ազգի կերտուածովք և նորագիւտ յօրինուածովք, և ոչ այլ եւս պէտս ունել եւրոպական կահուց և կարասեաց։

Այս յառաջադիմութիւն Պալեան և Քէմհաճեան գերդաստանաց որչափ պարծանք և պատիւ է ազգիս, նոյնչափ և բարեխնամ կառավարութեան մերում, զի յայտնի յայտ է թէ

արուեստք և ճարտարութիւնք որ առաւել զարգանան 'ի շնորհս նորա, և զամ քան զամ պակասին հարկաւորութիւնք գնելոյ յեւրոպական ճարտարութիւնս և արուեստս.

# ԳԼՈՒԽ ԿԸ.

Յաղագս հաստատութեան Ազգային Սահմանադրութեան Հայոց.

(1860) ՅԱՒՈՒՐՍ պատրիարքութեան Մատթէոսի հաստատեցան ազգային կրկին ժողովք, Հոգեւոր և Գերագոյն, որպէս պատմեցաք անդր 'ի վեր, այլ ընթացութիւն սոցա ոչ օրինաւոր էր, որպէս արժան է լինել ժողովրդական կառավարութեանց. վասնորոյ խոհական անձինք կամելով բառնալ զանպատեհ ընթացս զայս և առ 'ի բարեկարգել զազգային իշխանութիւնն, խորհեցան 'ի գիր անցուցանել զվաղեմի արտօնութիւնս ազգայինս շնորհեալս յառատագութ կայսերաց Օսմանեան տէրութեան, և զձեւ ազգային իշխանութեանն, որ 'ի սկզբանէ հետէ ժողովրդապետական է, սահմանադրել և կանոնաւորել.

Յայս մեծ գործ փութացեան ոչ սակաւ. Օտեան Գրիգոր, Ռուսինեան, Սէրվիչէն, Ալանեան Ստեփան, Բարունակ Ֆէրուհ խան, Աղաթօն Մկրտիչ, Խաթիւճեան Կարապետ, Ալթուն Տիւրրի, Մինասեան Մինաս, եւայլք.

Աստ դնեմք զօրինակ Սահմանադրութեանն որ 'ի 24 մայիսի 1860 միաձայն հաւանութեամբ ընկալաւ ազգային ընդհանուր ժողովն և ստորագրութեամբք վաւերացոյց. և մեք կնքեմք զընթացս պատմութեանս, յանձնելով պատմաւէր երախտագիտաց յարատեւել կամ զվերջին մասանց պատմութեանս, զորովք մեք համառօտիւ անցեալ եմք, կամ զանց արարեալ, լիուլի տեղեկութիւնս տալ.

# ԱԶԳԱՅԻՆ

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

---

### ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Ա.

Ազգին ամեն մէկ անհատը առ ազգը պարտաւորութիւններ ունի․ ազգն ալ իր կողմէն առ ազգային ամեն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի․ դարձեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի ազգէն և ազգն անհատներէն։

Այս պարտքերն որոշող և այս իրաւունքները հաստատող խնամութիւնը ազգային վարչութիւն կը կոչվի, որում Օսմանեան տէրութենէն յատուկ արտօնութեամբ յանձնեալ է Տաճկաստանի Հայոց ներքին գործոց տնօրէնութիւնը։

Բ.

Ազգային վարչութիւնը հիմնեալ է իրաւանց ու պարտեաց սկզբունքին վրայ, որ արդարութեան սկզբունքն է․ իր ույժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ օրինաւորութեան սկզբունքն է։ Ամենայն տնօրէնութիւն ազգային որ չէ համաձայն սոյն սկզբանց, ոչ արդար է և ոչ օրինաւոր։

Գ.

Ազգն ու ազգային վարչութիւնը փոխադարձ պարտքներով կապված է իրարու հետ։

Դ.

Ազգայնոց պարտականութիւնն է՝ ազգին պիտոյքը պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւրը իր կա-

բաղութեան չափովը, ազգին խնդրած ծառայութեանցը յանձնառու ըլլալ, և ազգային վարչութեան ըրած անօրէնութեանցը ազգասիրաբար հնազանդիլ.

Ե.

Ազգային վարչութեան պարտականութիւնն է՝ ազգին բարոյական, մտաւորական և նիւթական պիտոյիցը հոգ տանիլ, Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնները անխախտ պահել, մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումը ազգին ամեն աստիճանի թէ մանչ և թէ աղջիկ տղայոց հաւասարապէս տարածել, ազգային հաստատութիւնները պայծառ պահել, ազգին հասոյթները օրինաւոր կերպով աւելցնել և ծախքերը խնայողութեամբ տնտեսել, ազգին ծառայութեանը մշտնջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը լաւցնել և ապագան անդորրել, կարօտելոց խնամ՝ տանիլ հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վէճերը արդարութեամբ խաղաղել, և վերջապէս ազգին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը աշխատութիւն չը խնայել.

Զ.

Ահա՛ այս ամեն պարտիքները կատարելու և իրաւունքները պահպանելու դիտմամբ է որ ազգը հետևեալ կերպով կը սահմանադրէ զազգային գործոց վարչութիւնը.

# ԳԼՈՒԽ Ա.

## ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

1. Բարձրագոյն Դրան շնորհած արտօնութեանը համեմատ՝

Ազգային վարչութիւնը երեսփոխանական է․

Ազգը ընդհանուր ժողովով մը կը ներկայանայ և անոր միջնորդութեամբը կը վարէ ազգային իշխանութիւնը։

Ընդհանուր ժողովը՝ ազգին ընդհանրական գործոց տնօրէնութիւնն իրեն պահելով, սովորական գործոց վարչութիւնը երկու ազգային ժողովներու կը յանձնէ, կրօնական գործոց մասը՝ կրօնական ժողովի մը, քաղաքական գործոց մասը՝ քաղաքական ժողովի մը. իսկ խառն գործոց տնօրէնութիւնը՝ այս երկու ժողովոց առժամանակեայ մէկ տեղ գալովը ձևացած խառն ժողովին կը յանձնէ։

2. Ազգային վարչութիւնը՝ աշխատութեանց բաժանումը բարեկարգութեան առաջին պայման բռնելով, ազգային գործոց մէջ տեսչութիւնն ու մատակարարութիւնը իրարմէ կը զատէ երկու կարգ խորհուրդներու միջոցով։

Տեսչութեան համար՝ ազգային գործոց գլխաւոր մասերուն յատկացեալ չորս ազգային խորհուրդ կը հաստատէ, որ են՝ Ուսումնական խորհուրդ, Տնտեսական խորհուրդ, Ելմտական խորհուրդ, Դատաստանական խորհուրդ, և վաւերագործութիւնն իրեն պահելով՝ այս խորհուրդներուն իւրաքանչիւրին ձեռնհասութեանը կը յանձնէ ազգային գործոց այս իւրաքանչիւր մասին տեսչութիւնը։

Մատակարարութեան համար՝ Պոլսի մէջ թաղական խորհուրդներ կը հաստատէ թաղին եկեղեցւոյն անուամբը, և ամեն մէկ թաղին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնը իր թաղական խորհրդին կը յանձնէ, ազգային խորհրդոց տեսչութեանը տակ։

3. Ազգային՝ վարչութեան պաշտօնական գլուխ՝ Պոլսի պատրիարքն է, և կեդրոն՝ Պոլսի պատրիարքարանը։

Ազգային ժողովներն ու խորհուրդները իրենց գլուխ ունելով ազգին պատրիարքը՝ Պոլսի մէջ ազգային վարչութեան կեդրոնական մասը կը կազմեն, որոց իշխանութիւնը բոլոր Տաճկաստանի Հայոց վրայ կը տարածվի։

4. Ազգային կեդրոնական վարչութիւնը Տաճկաստանի առաջնորդանիստ գաւառներուն մէջ կը ներկայանայ գաւառական ժողովներով, որոնք Պոլսէ դուրս ազգային վարչութեան գաւառական մասը կը կազմեն որոց պաշտօնական գլուխ վիճակին առաջնորդն է, և կեդրոն՝ տեղին առաջնորդարանը։

5. Գաւառական վարչութիւնը նոյն փոխադարձ պարտեօք կապված է գաւառարնակ ազգայնոց հետ, ինչպէս կեդրոնական վարչութիւնը ընդհանուր ազգայնոց հետ. և իրեն յարացոյց պիտի բռնէ զկեդրոնական վարչութիւնը։

6. Գաւառական վարչութիւնը առաջնորդանիստ քաղաքներու մէջ կրօնական և քաղաքական ժողովներ կը հաստատէ և անոնց կը յանձնէ գաւառին կրօնական և քաղաքական գործոց տեսչութիւնը։

Այս ժողովները քաղաքին թաղերուն մէջ թաղական խորհուրդներ կը հաստատեն իրենց վերատեսչութեանն ու հսկողութեանը տակ և անոնց ձեռքովը կը մատակարարեն տեղական գործերը, նոյն յարաբերութիւններով որով կը վարվին կեդրոնական ժողովները Պոլսի թաղական խորհրդոց հետ։

Նմանապէս իրենց վերատեսչութեանն ու հսկողութեանը տակ թեմական խորհուրդներ կը հաստատեն, և ամեն մէկ թեմին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնը իր թեմական խորհրդին կը յանձնէ։

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ

7. Իւրաքանչիւր ժողով և խորհուրդ իր մասին մէջ ձեռնհաս է՝ համապատասխանութեան պայմանով։

Գաւառական վարչութեան մէջ՝ թաղական ու թեմական

խորհուրդները համարատու են Գաւառական ժողովներուն․ Գաւառական ժողովները համարատու են գաւառական ընդհանուր ժողովներուն․ Գաւառական վարչութիւնք կեդրոնական վարչութեան համարատու է, և Առաջնորդը Պատրիարքին։

Կեդրոնական վարչութեան մէջ՝ Պոլսի թաղական խորհուրդները համարատու են ազգային Տեսուչ խորհուրդներուն ըստ իւրաքանչիւր մասին․ Տեսուչ խորհուրդները համարատու են ազգային Քաղաքական ժողովին՝ բացի Դատաստանական խորհուրդէն որ համարատու է Խառն ժողովին։

Կրօնական ու Քաղաքական ժողովները և Պատրիարքը Ընդհանուր ժողովին համարատու են։

Ընդհանուր ժողովը բարոյապէս պատասխանատու է Ազգին առջև։

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

8. Ազգային վարչութեան՝ Ազգին հետ, Արքայական մեր Աթոռին հետ, Բարձրագոյն Դրան հետ ունեցած յարաբերութիւնները սա սկզբանց վրայ հիմնեալ պիտի ըլլան։

Ազգին և ազգայնոց հետ՝ միշտ հայրաբար վարվիլ։

Արքայական մեր Աթոռին հետ՝ աւանդապահ մնալ միշտ նոյն յարաբերութեանց որոնցմով նախնեացմէ անոր կապուած են իրարու հետ Ազգն ու Աթոռը։

Բ. Դրան հետ՝ թէ Ազգին և թէ ազգայնոց կրօնական ու քաղաքական իրաւունքները պահպանելու համար ուղղութեան պաշտպանութիւնը խնդրել, և Ազգին հպատակութիւնը հաւատարիմ պահել առ Տէրութիւնը։

Այս յարաբերութեանց միջնորդ Պատրիարքն է։

---

1. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

9 Ազգային ընդհանուր ժողովը կը բաղկանայ 220 ազգային երեսփոխաններէ որոնցմէ 160ը Պոլսի թաղերուն եկե-

ղեցեաց կողմէն ընտրեալ. և 60ը առաջնորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ.

Ընդհանուր Ժողովին մէջ ազգային երեսփոխանաց անդամակից են.

Նախ՝ ազգային կեդրոնական վարչութեան անդամներէն՝ կրօնական ու Քաղաքական Ժողովներուն և չորս Տեսուչ խորհուրդներուն անդամներն ու Թաղական խորհուրդներուն ատենապետները.

Այս կարգի անդամոց թիւը իբր 100 է. բայց այս թիւը երեսփոխանաց թիւին վրայ ճշգիւ չը կրնար աւելցվիլ, վասն զի ասոնց մէջ արդէն երեսփոխան ընտրվածներ ալ կրնան գտնվիլ.

Երկրորդ՝ Ազգին կամ Տէրութեան ծառայութեանը մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք որոնց արժանաւորութիւնը Ազգին կամ Տէրութեան կողմէն վկայեալ կը համարվի, ինչպէս են Եկեղեցական դասէն՝ Պօլիս գտնվող եպիսկոպոսները, Պօլսի եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները. ուսումնական դասէն՝ ազգային մատենագիրներ, վկայեալ բժիշկներ, գլխաւոր դատաւորներ, լրագրապետներ. քաղաքական դասէն՝ վերին պաշտօնաւորաց աստիճանակիցներ, արքունի ժողովոց անդամներ, Բ. Դրան դիւաններուն մէջ անօրէններ և թարգմանապետներ, ազգային կամ արքունի հաստատութեանց մէջ անօրէններ, ուսումնապետներ. զինուորական դասէն՝ վերին բաղայից աստիճանակիցներ.

Այս կարգի անդամոց թիւն ալ չը կրնար ճշդվիլ վերոյիշեալ պատճառով. բայց իբր ընկղրունք՝ այս երկու կարգի անդամոց բովանդակ թիւը երբէք չը պիտի հաւասարի երեսփոխանաց թիւին (1).

40. Ընդհանուր Ժողովը էն շատը 400էն աւելի անդամ չը պիտի ունենայ, և քանի որ երեսփոխանաց մեծագոյն մասը

(1) Այս յօդուածը վերաքննելի է երբ թէ ազգային եւ թէ Տէրութեան պաշտօնաւորաց թիւը այն աստիճան աւելնայ որ անկարելի ըլլայ այն համեմատութիւնը պահել.

այսինքն 114ը գոնէ ներկայ չըլլայ․ նիստ չը պիտի կարենայ ըլլալ։

11․ Ընդհանուր Ժողովին պաշտօնն է՝ Ազգին կողմէն ե-րեսփոխանութեամբ ազգային բարձր պաշտօնատարները ընտ-րել․ Ազգային Ժողովները կարգել․ անոնց վարչութեանը հա-մարատու ըլլալ․ և ազգային ծանր կամ ընդհանրական գոր-ծերը վճռաբար տնօրինել։

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային Սահմանադրութեան սկզբունքները անխախտ պահել և անոնց տրամադրութեանցը համեմատ վարուիլ։

12․ Ընդհանուր Ժողով կը գումարուի․

Նախ՝ կանոնաւորապէս ամեն տարի մարտ ամսին վեր-ջերը ազգային վարչութեան տարեկան ընդհանուր համարա-տուութիւնը մտիկ ընելու, ազգային Ժողովականաց կէսին ընտրութիւնն ընելու և ազգային տարեկան տուրքին անօրէ-նութիւնը հաստատելու համար։ Այս տարեկան նիստին մէջ վարչութեան անդամները՝ տուրքի խնդիրէն զատ՝ միւս խըն-դիրներուն մէջ խօսք միայն ունին և ոչ քուէ․

2․ Կաթողիկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար։

3․ Երուսաղէմի և Պօլսի Պատրիարքաց ընտրութեանը համար։

4․ Կրօնական ու քաղաքական Ժողովոց մէջ կամ Պատրի-արքին ու Ժողովոց մէջ պատահած անհամաձայնութեանց հա-մար։ Այս պարագայից մէջ ալ վարչութեան անդամները խօսք միայն ունին և ոչ քուէ։

5․ Ազգային Սահմանադրութեան վերաքննութեանը հա-մար․

Եւ վերջապէս արտաքոյ կարգի պատահած այնպիսի ծանր խնդիրներու համար զորոնք Ազգային Ժողովները Ընդհանուր Ժողովով որոշել հարկաւոր դատեն․

13․ Ընդհանուր Ժողով կը հրաւիրեն, նախ՝ Պատրիարքը՝ Ազգին կողմէն․ երկրորդ՝ Ընդհանուր Ժողովին ատենապետը՝ այս Ժողովին դիւանին կողմէն, երրորդ՝ Կրօնական կամ քա-ղաքական Ժողովին ատենապետները՝ այս Ժողովոց կողմէն։

## Բ. ՊԱՏՐԻԱՐՔ

14. Պատրիարքը Ազգային Ժողովոյ նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ։

15. Պատրիարքը իրեն եկած ամեն գործ՝ որ Ժողովին ձեռնհասութեանը տակ է նէ՝ նոյն Ժողովին քննութեանն ու որոշմանը պիտի յանձնէ, և ազգային որոշմանց մէջ իր պաշտօնական գրութիւնքը անխաւեր պիտի համարին եթէ ձեռնհաս Ժողովին կողմէն ալ կնքեալ կամ ստորագրեալ չըլլան. իսկ երբ բախյողական գործ մը պատահի որոյ անօրէնութիւնը չ'ներէ սպասել մինչեւ Ժողովոյ գումարման օրը և արտաքոյ կարգի Ժողով գումարել կարելի չըլլայ. Պատրիարքը կրնայ ինքնին անօրինել՝ պատասխանատուութիւնը իր վրայ առնելով. բայց եղելութիւնը կանոնաւոր կերպով միշտ արձանագրել տալով ձեռնհաս Ժողովին պէտք է որ ներկայէ առաջիկայ նիստին մէջ զանի վաւերացնել տալու համար։

16. Պատրիարքը իր բացակայութեան առեն Ազգային Ժողովներու մէջ որևէ որոշում մը չըստորագրած՝ իրաւունք ունի դիտողութիւն ընելու և խնդիրը կրկին քննութեան առնել տալու. իսկ երկրորդ որոշմէն ետքը պարտաւորեալ է ստորագրելու՝ եթէ այն որոշումը Սահմանադրութեան տրամադրութեանցը անհամաձայն չը գտնէ։

17. Պատրիարքը իրաւունք ունի Սահմանադրութեան տրամադրութեանցը համեմատ չը վարւող ազգային գործակալ մը, այսինքն՝ եկեղեցական մը, վարժապետ մը, եկեղեցւոյ, վանքի, դպրատան կամ հիւանդանոցի մատակարար մը, իր պաշտօնէն հանելու կամ արգիլելու առաջարկութիւն ընել որում որ անկ է։

18. Պատրիարքը իրաւունք չունի ազգային Ժողովները կամ խորհուրդները ինքնին լուծելու. բայց երբոր տեսնէ թէ այն Ժողովները Սահմանադրութեան հակառակ ընթացքի մը մէջ են, առջի անգամին՝ անոնց ատենապետին հետ կը բանակցի բացատրութիւն ուզելու համար. երկրորդին՝ գրով իմաց կու տայ նոյն Ժողովին իր ապօրինաւոր ընթացքը և ի

կարգ կը հրաւիրէ զանի. իսկ երրորդին՝ ընդհանուր ժողով կը կոչէ եթէ ամբաստանեալին Ազգային Ժողովներէն մէկն է, կամ Քաղաքական ժողովին կը դիմէ եթէ խորհուրդներէն մէկն է, և պատճառներն իմացնելով ամբաստանեալ ժողովին լուծումը կը պահանջէ։

19. Պատրիարքը ազգային մնաւկէն իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ, և Պատրիարքարանին ներքին մատակարարութեան պահանջած ծախքը իր վրայ ըլլայ։

### Դ. ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

20. Կրօնական ժողովը 14 բանիբուն եկեղեցականներէ կը բաղկանայ։

21. Կրօնական ժողովին պաշտօնն է՝ ազգային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնքն են՝ Ազգին մէջ կրօնական զգացումը զարգացնել, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնքը անխախտ և անարատ պահել, եկեղեցեաց և եկեղեցականաց բարեկարգութեանը հսկել, քահանայից կացութիւնը լաւցնելու և ապագան անդորրելու հոգ տանիլ, արժանաւոր ու բանիբուն եկեղեցականներ հասցնել, և ազգին մէջ ծագած կրօնական վէճերը քննել ու լուծել։

22. Երբ պատահի կրօնական այնպիսի ծանր խնդիր մը զոր կրօնական ժողովը չը կարենայ լուծել, ընդհանուր ժողովին բազմական գալոց եկեղեցականաց հետ համագումար ժողով պիտի կազմէ. եթէ այն համագումար ժողովն ալ իր ձեռնհասութենէն վեր դատէ զխնդիրը, Արարատեան մայր Աթոռին պէտք է դիմէ։

23. Թէ մայրաքաղաքիս և թէ գաւառներու մէջ վարդապետի և քահանայի ձեռնադրութեան հրամանը Կրօնական ժողովէն կը տրուի։

24. Քանի որ եկեղեցւոյ մը ժողովուրդը ուրիշ քահանայի մը հարկաւորութիւնը չըզգայ և Թաղական խորհրդին միջնորդութեամբը չը խնդրէ, նոյն թաղին եկեղեցւոյն համար քահանայի ձեռնադրութեան հրաման չը պիտի տրուի։

25. Պօլսոյ եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները կրօնական ժողովը կ'որոշէ, և Պատրիարքը կ'անուանէ։

26. Կրօնական ժողովին սրբազան պարտաւորութիւնն է հսկել որ՝ հոգևոր պաշտօնները ձրի կատարուին և հոգևոր պաշտօնեայք եկեղեցիէն ապրին։

### Դ. ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

27. Քաղաքական ժողովը 20 քաղաքագէտ աշխարհականներէ կը բաղկանայ։

28. Քաղաքական ժողովին պաշտօնն է՝ ազգային քաղաքական գործոց ընդհանուր վերատեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային խորհուրդներուն կողմէն իրեն մատուցված ազգօգուտ առաջարկութիւնները ուշի ուշով քննել և կարևորութիւնը յայտնուելէն ետքը հաստատել զանոնք և անոնց գործադրութեանը արգելքները՝ եթէ կան՝ բառնալու հոգ տանիլ, և Ազգին բարեկարգութեան ու յառաջադիմութեանը ըստ ամենայնի փոյթ ունենալ։

29. Քաղաքական ժողովը իրեն եկած գործերը՝ որ խորհրդին վերաբերեալ է նէ, նոյն խորհրդին քննութեանը պէտք է յանձնէ, և անոր կարծիքը չառած չը անօրինէ։

30. Քաղաքական ժողովը կրնայ՝ բանաւոր պատճառով մը՝ չը հաստատել կամ՝ ետ ձգել խորհրդի մը բրած որոշումը, բայց՝ անոր ձեռնհասութիւնը յարգելով՝ չը պիտի կարենայ նոյն որոշման ներհակ որոշում և գործադրութիւն ընել։

31. Քաղաքական ժողովը իրաւունք չունի զազգային խորհուրդներէն մէկը լուծելու, քանի որ Սահմանադրութեան տրամադրութեանցը հակառակ ընթացքի մէջ չը մտնէ զանի. իսկ եթէ պատահի այսպիսի պարագայ մը, առջի անգամին՝ անոր ատենապետէն բացատրութիւն կ'ուզէ, երկրորդին՝ գրով խիստ կուտայ խորհրդին և կարգի կը հրաւիրէ զանի, իսկ երրորդին կը լուծէ. բայց Ընդհանուր ժողովին տրուելու տարեկան տեղեկագրին մէջ այս լուծման պատճառները պէտք է որ բացատրէ։

32. Երբ պատահի քաղաքական այնպիսի ծանր խնդիր մը զոր Քաղաքական ժողովը իր ձեռնհասութենէն վեր գտնէ, Ընդհանուր ժողովին պէտք է որ դիմէ։

## Ե. ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

33. Ուսումնական խորհուրդը 10 ուսումնական աշխարհականներէ կը բաղկանայ։

34. Ուսումնական խորհրդին պաշտօնն է՝ ազգային դաստիարակութեան ընդհանուր տեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնքն են՝ ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, ազգային դաստիարակութեան ընդհանուր հիմնագիր մը և դպրոցական կանոններ հաստատել, և անոնց համեմատ՝ ազգային վարժարանաց մէջ միօրինակութիւն մը որոշել թէ ուսման և թէ ուսուցման, սկզբնական գիտելեաց ուսումը ծաւալել, աղջկանց դաստիարակութեանը յատուկ կերպով հոգ տանիլ, այն նպատակով հաստատեալ ընկերութեանց խրախոյս տալ և ձեռնտու լլալ. ազգային դաստիարակաց կարողութիւնը քննելու և արդարուն ընտրելու խնամ տանիլ, ազգին մէջ բանիբուն դասատուներ հասցնելու և դպրոցաց ընտիր դասագիրքներ պատրաստելու փոյթ ունենալ։

35. Ուսումնական խորհուրդը պէտք է իր կողմէն ամենայն ջան ՚ի գործ դնէ որ՝ թէ Պոլսի, և թէ գաւառներու մէջ ամեն թաղ սկզբնական դաստիարակութեան դպրոցներ ունենան, նոյնպէս Պոլիս և առաջնորդանիստ քաղաքները մէյ մէկ ազգային ուսումնարան ունենան դասական ուսմանց համար։ Այս ուսումնարանէն վկայականով կ'ելնեն աշկերտները, և մանաւոր ուսմունք ընողներուն՝ դասատուութեան վկայագիր ալ կը տրվի։

36. Ուսումնական խորհուրդը կ'որոշէ ազգային վարժարանաց մէջ ընդունելու դասագիրքերն ու դասատուները. իսկ քրիստոնէական վարդապետութեան դասագիրքն ու դասատուն կրօնական ժողովէն պէտք է որ խնդրէ։

37. Ուսումնական խորհուրդը կը նախագահէ ազգային

վարժարանաց տարեկան քննութեանը․ իսկ քրիստոնէական վարդապետութեան մասին քննութիւնը կրօնական ժողովին ձեռօքը կ'ըլլայ։

Զ․ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

38․ Տնտեսական խորհուրդը 10 տնտեսագէտ աշխարհականներէ կը բաղկանայ։

39․ Տնտեսական խորհրդին պաշտօնն է՝ ազգային հաստատութեանց և կալուածոց մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը։

Իր պատասխանատուութիւնն է՝ այն հաստատութեանց պայծառութեանն ու բարեկարգութեանը հոգ տանիլ։

40․ Տնտեսական խորհուրդը վանօրէից և հիւանդանոցի համար մասնաւոր հոգաբարձութիւններ կը հաստատէ և անոնց միջնորդութեամբը կը մատակարարէ զայս հաստատութիւնները։

41․ Վանօրէից հոգաբարձութիւնը եօթ հոգիէ կը բաղկանայ, որոնց երեքը եկեղեցական և չորսը աշխարհական։

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ զայս հոգաբարձուները և քաղաքական ժողովին հաւանութեամբը Պատրիարքը կ'անուանէ։

42․ Վանօրէից հոգաբարձութեան նպատակը պիտի ըլլայ այն հաստատութեանց եկամուտներն ու հասոյթները ազգին օգտին ծառայեցնել․ նախ՝ վանօրէից մէջ ուսումնարան հաստատելով՝ կրօնական ժողովին և Ուսումնական խորհրդին տուած հրահանգին համաձայն, և որի մէջ որ պէտք կայ՝ հիւանդանոց, տպարան, թանգարան։

43․ Վանօրէից հոգաբարձութիւնը իւրաքանչիւր վանքի համար երկերկու գործակալ պէտք է ունենայ տեղացի, որոնք վանահօր նախագահութեամբը կը մատակարարեն ըզ վանքը՝ Գաւառական ժողովէն անկախ կերպով։

44․ Հիւանդանոցի հոգաբարձութիւնը եօթ հոգիէ կը բաղկանայ որոնց երկուքը բժիշկ։

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ այս Հոգաբարձուները և քաղաքական ժողովին հաստատութեամբը Պատրիարքը կ'անուանէ։

45. Հիւանդանոցի հոգաբարձութեան նպատակը պիտի ըլլայ այն հաստատութիւնը իր նպատակին ծառայեցնել, հոն անօրինելով նախ՝ կանոնաւոր Հիւանդանոց մը աղքատ հիւանդաց համար. երկրորդ՝ Պատսպարան մը ծեր ու անկար աղքատաց համար. երրորդ՝ Ջղատապարան մը անառակաց համար. չորրորդ՝ Կրթարան մը որբ ու անտէրունչ աղայոց համար.

Այս օթեւաններուն իւրաքանչիւրը թէ՛ շէնքի եւ թէ՛ կարգի կողմէն բժշկական կանոնաց եւ ողջապահիկ օրինաց համաձայն պէտք է կարգադրեալ ըլլայ.

46. Կտակաց անօրէնութիւնը Տնտեսական խորհրդին կը վերաբերի. Այս խորհուրդը պէտք է հոգէ որ ամէն կտակ օրինաւոր կերպով վաւերացեալ ըլլայ. կտակօղին դիտաւորութիւնը անխախտ պահուի եւ գործադրութիւնը ապահով ըլլայ.

Այս տրամադրութեանց համեմատ՝ կտակի վերաբերեալ յատուկ կանոններ ու մանաւոր Հոգաբարձութիւն պէտք է հաստատէ Տնտեսական խորհուրդը.

Երբ կտակին գործադրութիւնը կտակօղին դիտաւորութեանը համեմատ չըլլայ. ժառանգները իրաւունք ունին բողոքելու.

47. Թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառներու մէջ գտնուած ազգային անշարժ ստացուածոց կալուածագիրներուն (Սէնէտ, Հիւճճէթ, Թէփու) օրինակները Տնտեսական խորհրդին ձեռքով ժողվըւելով ազգային դիւանատան մէջ պիտի պահուին ամենայն ապահովութեամբ.

48. Տնտեսական խորհուրդը պէտք է հոգէ որ ամէն ազգային ստացուած օրինաւոր կալուածագիր ունենայ.

49. Ազգային որ եւ է կալուածի գնումն ու վաճառումը չը կրնար գործադրուիլ առանց Տնտեսական խորհրդին գիտութեանը, Քաղաքական ժողովին հաճութեանն ու Պատրիարքին կնքադրութեանը.

Այս տրամադրութեանց ուժովը Ֆ-Ըէ-Լէ-Ա-Ըէ ըսուած բանը վերցած է.

50. Պոլսոյ մէջ եւ շրջականները ազգային որ եւ է շինութիւն կամ նորոգութիւն չը կրնար ըսկսիլ առանց Տնտեսական եւ

Կրօնական խորհրդոց գիտութեանն ու Քաղաքական ժողովին հաճութեանը.

Նմանապէս ազգային որ և է հաստատութեան համար ստակ չը կրնար ժողովուիլ առանց վերոյիշեալ պայմանին.

### Է. ԱԶԳԱՅԻՆ ԵԼՄՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

51. Ելմտական խորհուրդը 10 հաշուագէտ աշխարհականներէ կը բաղկանայ.

52. Ելմտական խորհրդին պաշտօնն է՝ ազգային հասութից և ծախուց ընդհանուր տեսչութիւնը և ազգային սնտուկին համարակալութիւնը.

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային հաստատութեանց մատակարարութեան հաշիւները կանոնաւորապէս առնել, ծախուց օրինաւորութիւնն ըստուգել, ազգային եկամուտներն աւելցնելու ջանք ընել՝ այն տարիման որ օր մը ազգային սնտուկին մուտն ու ելքը իրարու հաւասար գալով ընդհանուր տուրքը մեծապէս թեթեւնայ.

53. Ազգային սնտուկին մուտքն են գլխաւորապէս՝ տարեկան ընդհանուր տուրք, կալուածական հասոյթ, դիւանական հասոյթ, կտակ, նուէր և այլն. ելքն են գլխաւորապէս՝ պատրիարքարանի և դիւանատան ծախք, Հիւանդանոցի ծախք, կարօտեալ թաղերու եկեղեցեաց ու վարժարանաց նպաստ և այլ պատահական ծախքեր.

54. Ազգային սնտուկին հաշիւը տօմարակալութեան կանոնով պիտի բռնուի.

55. Ելմտական խորհուրդը տարեգլխէն երկու ամիս առաջ յառաջիկայ տարւոյն մէջ ըլլալու հասոյթն ու ծախքը կշռելով՝ հաշուեցուցակը Քաղաքական ժողովին պիտի ներկայացնէ.

### Ը. ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

56. Դատաստանական խորհուրդը 10 իրաւագէտ անձերէ կը բաղկանայ, որոնց հինգը եկեղեցական և հինգը աշխարհական.

57. Դատաստանական խորհրդին պաշտօնն է ազգային դատաստանական գործոց ընդհանուր տեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ հակառակորդները արդարութեամբ իրաւախոհ ընելու ջանալ և իր վճիռներուն հիմ բռնել կրօնական մասին՝ Նախնեացմէ աւանդեալ կանոնները, և քաղաքական մասին՝ Տէրութեան դատարանաց արդի կանոնները։

58. Երբ պատահի այնպիսի խնդիր մը զոր Դատաստանական խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դատէ, ազգային ժողովներէն որու որ անկ է անոր կը ղրկէ։

59. Դատաստանական խորհրդին մէջ դատեալ անձ մը միշտ իրաւունք ունի կրօնական կամ քաղաքական ժողովին բողոքելու կամ խառն ժողով պահանջելու ըստ գործին։

### Թ. ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

60. Թաղական խորհուրդները կը բաղկանան ըստ տեղւոյն 5 էն մինչև 9 անդամներէ։

61. Թաղական խորհրդին պաշտօնն է՝ թաղին տեղական գործոց մատակարարութիւնը, եկեղեցւոյն եկեղեցպանութիւնը, դպրատան հոգաբարձութիւնը, աղքատաց խնամակալութիւնը, ազգայնոց մէջ պատահած վէճերուն քննութիւնը ու խաղաղարարութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ թաղին եկեղեցւոյն պայծառութեանը խնամ տանիլ, թաղին մէջ թէ աղջկանց և թէ տղայոց համար սկզբնական դաստիարակութեան բարեկարգ դպրատուններ ունենալու ջանք ընել, և թաղին կարօտեալ բնատնեաց ձեռնտու ըլլալ։

62. Թաղերուն մէջ թէ եկեղեցւոյ և թէ դպրատան որ և է կալուած Թաղական խորհուրդին անմիջական տնօրէնութեանը տակ է. այսպիսի կալուածոց գնումն ու վաճառումը ըստ 49. Յօդ. կը գործադրուի։

63. Ամեն թաղ մէյմէկ մնտուկ պիտի ունենայ Թաղական խորհրդին հսկողութեանը տակ։

Այս մնտուկին մուտքն են՝ Թաղական տուրքը, եկեղեց-

ւոյ և դպրատան կալուածոց եկամուտները, եկեղեցւոյն հա-սոյթները, աղքատաց համար եղած նուէրներն ու կտակները և այլն. Ելքն են՝ թաղին եկեղեցւոյն և դպրատանց ծախքերն ու աղքատաց օգնութիւնները.

64. Ամեն թաղական խորհուրդ իր թաղին մէջ եղած ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց արձանագրութիւնը պէտք է որ ունենայ կանոնաւոր կերպով.

65. Թաղական խորհուրդները իրենց պաշտօններուն մէջ Տեսուչ խորհուրդներուն հետ ուղղակի յարաբերութիւն ու-նին. եկեղեցպանութեան գործերու համար՝ Տնտեսական խոր-հրդին հետ, դպրոցաց ուսումնական մասին համար՝ Ու-սումնական խորհրդին հետ, դրամական գործերու համար՝ Ելմտական խորհրդին հետ, դատական գործերու համար՝ Դա-տաստանական խորհրդին հետ.

Թաղական խորհուրդը երբ չը կրնայ հակառակորդները իրաւախոհ ընել, գործը Դատաստանական խորհրդին պէտք է ղրկէ իր քննութեան տեղեկագրովը.

Ժ. ԱԶԳԱՅԻՆ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

66. Պատրիարքարանին մէջ դիւանատուն մը պիտի հաս-տատուի որոյ գործը պիտի ըլլայ ազգային պաշտօնական գը-րութեանց տնօրէնութիւնը.

67. Դիւանատունը երեք գրասենեակի պիտի բաժնուի.

Ա. Թղթակցութիւն, որ Պատրիարքարանէն դրկուելու գի-րերուն և ի Պատրիարքարան հասած թուղթերուն կարգաւո-րութեանը կ'զբաղի.

Բ. Արձանագրութիւն, որ ազգային ժողովոց և խորհրդ-ոց վերաբերեալ թուղթերուն կարգաւորութեանը կ'զբաղի.

Գ. Ազգահամար, որ ազգայնոց քաղաքային վիճակագրու-թեանը՝ այսինքն ծննդեան, ամուսնութեան և վախճանման վերաբերեալ արձանագրութեանց կարգադրութեանը կըզ-բաղի. Այս գրասենեակէն կը տրուին ազգայնոց թէ՛ ճամբոր-դութեան համար և թէ՛ առևտրական գործողութեանց համար պէտք եղած վաւերական թուղթերը, նաև ծնընդ-

եան, ամուսնութեան և վախճանման վկայականները։

68. Թղթակցութեանց դրասենեակը՝ ներքին և արտաքին թղթակցութեանց և Թուրքերէն գրութեանց համար պէտք եղածին չափ դիւանագիրներ պիտի ունենայ։ Այս դրասենեակը Պատրիարքին հրամանին ներքև է և ինք կանոնանէ անոր անդամները Քաղաքական Ժողովին հաւանութեամբ։

Արձանագրութեան դրասենեակը վեց դիւանագիր պիտի ունենայ. երկուքը Կրօնական ու Քաղաքական Ժողովներուն գործոց յատկացեալ, և չորսը՝ չորս Տեսուչ խորհուրդներուն գործոց կարգեալ։

Այս դրասենեակին անդամները ամեն մէկը իր վերաբերական ժողովին կամ խորհուրդին հրամանին ներքև է, որոնք նոյն ժողովները կամ խորհուրդները կընտրեն և Պատրիարքը կանոնանէ Քաղաքական Ժողովին հաւանութեամբ։

Ազգահամարի դրասենեակը պիտի ունենայ նոտար մը, զոր Քաղաքական Ժողովը կընտրէ և Պատրիարքը կանոնանէ։

Այս դրասենեակներուն անդամներուն թիւը ըստ հարկին կաւելնայ կամ կը պակսի։

69. Դիւանատունը պիտի ունենայ դիւանապետ մը որ Դիւանատան բոլոր գործոց անօրէն և պատասխանատու է, զոր Քաղաքական Ժողովը կընտրէ և Պատրիարքը կանոնանէ։

Դիւանապետը կընէ ընդհանուր Ժողովին դիւանադպրութիւնը։

70. Դիւանապետը պարտաւորեալ է տարին անգամ մը Պօլսի ամեն մէկ թաղէն և հինգ տարին անգամ մը ամեն մէկ գաւառէն իրենց ազգահամարին, այսինքն՝ ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց տոմարներուն օրինակները պահանջել և ազգային Դիւանատան ընդհանուր ազգահամարին մէջ արձանագրել տալ։

71. Դիւանապետը ազգային լեզուն քաջ գիտցող և Տաճկերէնի ու Ֆռանսերէնի բաւական հմտութիւն ունեցող անձ մը պէտք է որ ըլլայ։ Նմանապէս դիւանագիրները ազգային լեզուն քաջ գիտցող և իրենց մասին մէջ հմուտ անձինք պէտք է որ ըլլան։

72. Դիւանագիրները մասնաւորապէս պատասխանատու

են իրենց վերաբերական ժողովին կամ խորհուրդին առջեւ և ընդհանրապէս Դիւանապետին առջեւ ։

73. Ազգահամարի դրասենեակէն տրուած որ և է թուղթ և վկայական՝ պատրիարքական կնքով և դիւանապետին ըստորագրութեամբ վաւերացեալ պէտք է ըլլան ։

74. Ազգային դիւանատունը ամեն օր ութ ժամ բաց և դիւանադպիրները ներկայ պիտի գտնուին բաց ի տօնելի օրերէն ։ Եթէ տօնելի օր մը ժողով կամ խորհուրդ ըլլալ պատահի, նոյն ժողովին կամ խորհրդին դիւանապետը նոյն օրը ներկայ պէտք է գտնուի ։

---

## Զ. ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### Ա. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

75. Գաւառներու մէջ ընդհանուր ժողով կը կազմին թաղական և թեմական երեսփոխաններէ, որոց անդամակից են նախ՝ գաւառին կրօնական և քաղաքական ժողովներուն անդամներն ու թաղական խորհուրդներուն ատենապետները, երկրորդ՝ Ազգին կամ տեղական իշխանութեան ծառայութեանցը մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք. (տես Յօդ. 9) ։

76. Գաւառական ընդհանուր ժողովներուն պաշտօնն է՝ իւրաքանչիւրը իր գաւառին կողմէն երեսփոխանութեամբ գաւառին առաջնորդը ընտրել. կրօնական ու քաղաքական ժողովները կարգել, անոնց վարչութեանը համարատու ըլլալ, և գաւառական ծանր կամ ընդհանրական գործերը տնօրինել ։

### Բ. ԱՌԱՋՆՈՐԴ

77. Առաջնորդը Գաւառական ժողովներուն նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ ։

Իր պարտաւորութիւնն է՝ գաւառին մէջ ազգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկել։

78. Առաջնորդը չը պիտի կարենայ վանքերու մէջ բնակութիւն հաստատելով իր պաշտօնին գլխէն հեռանալ. այլ գաւառին գլխաւոր քաղքին մէջ ազգային Առաջնորդարանը պիտի բնակի ուր կը գումարվին և Գաւառական ժողովները։

79. Առաջնորդը գաւառական սնտուկէն իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ և Առաջնորդարանին ներքին մատակարարութեան ծախքը իր վրայ ըլլայ։

Դ. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՔ

80. Գաւառաց կրօնական ու քաղաքական ժողովները՝ ըստ տեղւոյն 7էն մինչև 12 անդամներէ կը բաղկանան։

81. Գաւառաց թաղական և թեմական խորհուրդները ըստ տեղւոյն 5էն մինչև 9 անդամներէ կը բաղկանան։

82. Ամեն գաւառ իր քաղաքական ժողովին հսկողութեանը ներքև մէյմէկ գաւառական սնտուկ պիտի ունենայ գաւառին ազգային եկամտից և ծախուց տնտեսութեանն ու համարակալութեանը համար. նմանապէս ամեն թաղ և թեմ իր սնտուկը պիտի ունենայ։

Այս սնտուկներուն համարակալութիւնը կանոնաւոր կերպով պիտի կատարվի։

83. Գաւառներու մէջ ամեն Առաջնորդարան իր գաւառական դիւանատունը պիտի ունենայ. նմանապէս ամեն թաղ և թեմ։

Գաւառական դիւանները պարտաւոր են գաւառին թաղական և թեմական ազդահամարները ժողվել և անոնցմով գաւառական ընդհանուր ազդահամար կազմել։

# ԳԼՈՒԽ Բ.

## ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔ

84. Ամեն ազգային անհատ՝ որ չափահաս է և վաստակի տէր, պարտաւոր է ազգային պիտոյից պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ. բաց անոնցմէ որոնց կարօղութիւն չունենալը իրենց թաղին կամ իրենց արհեստակցաց կողմէն վըկայեալ է։

85. Ազգային տուրքը տարեկան է և բաշխման հիմ պիտի բռնըւի իւրաքանչիւրին կարօղութիւնը։

86. Երկու կերպ է ազգային տուրքը. մէկը ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է և կը հաւաքըւի կեդրոնական վարչութեան կողմէն ազգային սնտուկին համար. և միւսը մասնաւոր՝ որ մասնաւոր ծախուց յատկացեալ է և կը հաւաքըւի թաղական խորհրդոց կողմէն թաղական սնտուկին համար։

87. Պօլսի մէջ ընդհանուր տուրքին բաշխման ու հաւաքման եղանակը Քաղաքական ժողովին մէջ կ'որոշըւի և ընդհանուր ժողովով կը հաստատըւի. Իսկ թաղական տուրքը ամեն թաղ իր խորհուրդին մէջ կ'որոշէ ու կը հաստատէ։

Այնպէս կը տնօրինըւին և գաւառներուն մէջ գաւառական ընդհանուր տուրքն ու թաղական մասնաւոր տուրքը։

88. Գաւառները մասնակից պիտի ըլլան ազգային ընդհանուր տուրքին։

Գաւառներուն կողմէն ազգային կեդրոնական սնտուկին տըրվելու մինչև ցարդ սովորութիւն եղած տարեկան տուրքին փոխարէն՝ գաւառական սնտուկը իր հաւաքած գաւառական ընդհանուր տուրքին հարիւրին այսքան պիտի տայ ազգային կեդրոնական սնտուկին։

Հարիւրին որքան տըրվիլը Պօլսի Քաղաքական ժողովը պիտի որոշէ։

# ԳԼՈՒԽ Գ.

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

---

### Ա. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՔ

#### 1. ԸՆՏՐՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

89. Ընտրելու իրաւունքը լման 25 տարւոյ հասակէն կ'ըսկսի։

90. Ընտրելու իրաւունքէն զրկեալ կամ արգիլեալ են դատապարտեալք.

Նախ՝ քրէական յանցանօք դատապարտեալ և հրապարակաւ նշաւակեալ անձինք, որոնք մեռեալ են քաղաքականապէս ըստ օրինաց տէրութեան։

2. Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենգութեամբ բռնուած և ազգային ատեանի մը կողմէն դատապարտութիւն կրած անձինք, որոնց համար դատող ատեանը ազգային գործոց մէջ չը գործածուիլը վճռած ըլլայ։

3. Տէրութեան կողմէն զգաստացուցիչ պատիժ կրած կամ ազգային զգաստարանէն ելած անձինք, որոնց ազգային ատեան մը արգիլած ըլլայ ընտրելու իրաւունքը։ Այս արգելքը կը վերնայ երբոր այսպիսեաց կատարելապէս զգաստացեալ ըլլալը արգիլող ատեանին կողմէն վկայուի։

4. Խելագարութեան պատճառով անբուժական դատեալ անձինք, որոնց կատարելապէս առողջացեալ ըլլալը վաւերական կերպով վկայեալ չըլլայ։

5. Հարկ եղած ազգային տուրքը կարողութիւն ունենալով մերժող անձինք, որոնք ազգովին եղերելի են իբր ազգային պարտեաց զանցառու։ Այս արգելքը կը վերնայ երբ այսպիսիք ազգային այս անհրաժեշտ պարտականութիւնը ճանչել ըսկսին։

#### 2. ԸՆՏՐԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

91. Ազգային գործոց տնօրէնութեանը մէջ որոշողական ձայն ունենալու իրաւունքը լման 30 տարւոյ հասակէն կ'ըսկսի։

Ամենայն անհատ ազգային որ երեսուն տարին լրացուցած է և չէ դատաստանապէս զրկեալ կամ արգիլեալ ազգային իրաւանց վայելումէն, ընտրելի է ազգային որ և է պաշտօնի համար։

Բ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

92. Ընտրութեան հիմ պիտի բռնուի բնակչաց թիւը։

Պոլսի ամեն մէկ թաղին և ամեն մէկ գաւառին ընկած երեսփոխաններուն բաշխման ցուցակը յատուկ պատկերով պիտի նշանակուի։

Երեսփոխանաց բաշխման ցուցակը՝ ամեն հինգ տարին անգամ մը կը նորոգուի, ազգային Դիւանատան ընդհանուր ազգահամարին համաձայն։

Այս վերանորոգումը՝ վարչութեան գլխաւոր անդամոց, այսինքն կրօնական ու քաղաքական ժողովոց ատենապետներուն և Տեսուչ ու Մատակարար խորհրդոց ատենապետներուն մէկ տեղ գալովը ձեւացած Համախորհուրդ ժողովին մէջ կըլլայ։

93. Թէ՛ Պոլսի թաղերէն և թէ գաւառներէն ուղղած երեսփոխանները հարկ չէ որ ընտրող թաղին կամ գաւառին բնակիչներէն ըլլան, բաւական է որ Պոլսի մէջ բնակին, և ազգասիրութեան ու պատուաւորութեան մասին ընտրողաց համարումը վաստըկած անձինք ըլլան։

Այս երեսփոխանները չէ թէ զիրենք ընտրող թաղին կամ գաւառին երեսփոխանները կը սեպուին Ընդհանուր ժողովին մէջ, այլ Ազգին երեսփոխաններն են համազօր իշխանութեամբ։

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

94. Ընդհանուր ժողովին լուծուելու օրէն երկու ամիս առաջ գաւառներուն՝ և մէկ ամիս առաջ Պոլսի թաղերուն կը ծանուցանէ Պատրիարքը ամեն մէկ թաղէն կամ գաւառէն ուղղուած երեսփոխանաց թիւը և կը հրաւիրէ ընտրողական ժողով գումարել, յիշելով ընտրելութեան պայմաններն ու ընտրութեան կանոնները։

Այն կանոնակին օրինակը Թաղական խորհրդարանին մէջ բացադրեալ կը մնայ մինչեւ ընտրութեանց աւարտումը։

95. Ամէն թաղի մէջ ընտրողական ժողովներ կը կազմուի թաղին բնակիչներէն՝ երեսփոխանաց հետ անդամակից ըլլալու արժանաւորութիւննին արդէն վկայեալ (տես Յօդ. 9) և ընտրողութեան պայմաններն ունեցող անձանցմէ։

Ընտրողական ժողովը 21 հոգիէ կը բաղկանայ. եթէ թաղին մէջ վերոյիշեալ անձինքը այս թիւը չը լցնեն, պակասը նոյն թաղին մէջ էն շատ տուրք տուող ընտրողացմէ պէտք է լցնել։

Ընտրողական ժողովին նախագահ՝ եկեղեցւոյն քարոզիչը կամ անոր բացակայութեանը՝ աւագերէցն է. իր դիւանը կը բաղկանայ մէկ ատենապետէ, մէկ ատենադպրէ և երեք քննիչներէ։

Ընտրողական ժողովը Թաղական խորհուրդին հետ միանալով կը նախագահէ ընտրական գործողութեանց։

96. Ընտրողական ժողովը [illegible] մը կը պատրաստէ ուզուած երեսփոխաններու թիւէն եռապատիկ աւելի՝ ընտրողաց որոշումը դիւրացնելու համար։

Այն ցանկն ալ բացադրեալ կը մնայ Թաղական խորհրդարանին մէջ, իսկ ընտրողք ոչ մէկ կերպով բռնադատեալ են այս ցանկին հետեւելու։

97. Ընտրողական ժողովները ամէն մէկը իր թաղին մէջ ընտրողութեան պայմանները բռնողներու՝ [illegible] մը պիտի պատրաստեն այբուբենի կարգով. այս ցանկը ութը օր բաց պիտի մնայ Թաղական խորհրդարանին մէջ, որպէս զի թաղին ընտրողները կարենան իրենց անուանը վրայ դիտողութիւն ունին նէ՝ ընել։

98. Ընտրողական ժողովը ամէն մէկ ընտրողի մէյմէկ [illegible] պէտք է տայ այս օրինակ.

Ա. . . . [illegible]

Ա. . . . ([illegible])

և ընտրողական ժողովին կողմէն ստորագրեալ։

Առանց այս ընտրողագիրը ներկայացնելու ոչ ոք պիտի կարենայ քուէտուփին մերձենալ։

99. Եթէ ընտրութեան հրաւէրը՝ որ և է պատճառով

Պատրիարքին կողմէն չըլլայ (տե՛ս Յօդ. 94) ազգային վարչութեան կողմէն պէտք է որ ըլլայ Քաղաքական ժողովին ատենապետին ձեռօք։

Եթէ ազգային վարչութիւնն ալ զանցառութիւն ընէ իր այս պարտականութիւնը կատարելու, և ընտրութեան համար Սահմանադրութեան որոշած ժամանակը հասած ըլլայ. այն ատեն ընտրողները իրաւունքնին վարելով՝ լիակատար իշխանութեամբ կը ժողվըվին իրենց թաղին կամ թեմին եկեղեցւոյն խորհրդարանը և ընտրողական ժողով կազմելով կընտրեն իրենց երեսփոխանները ըստ ընտրական կանոնաց։

Երբոր այս կերպով երեսփոխանաց մեծագոյն մասին ընտրութիւնը լմննայ, անմիջապէս լուծեալ է ըստ օրինի հին ընդհանուր ժողովը և զուրկ ամենայն իշխանութենէ, ուստի և ինչ որ գործէ կամ գործած է նոյն կէտէն ասդին, ապօրինաւոր է և ապաղոր իբրև չեղեալ։

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ

100. Ընտրողաց ցանկին բացվելէն շաբաթ մը ետքը՝ կիրակի առաւօտ ժամերգութեան աւարտումէն ետեւ՝ թաղական խորհրդարանին մէջ քուէարկութեան կը սկսուի այսպէս։

Ընտրողական ժողովին նախագահը ընտրողաց ցանկը ձեռքը առած կարդալով կը կոչէ ընտրողները որոնք ընտրողագիրնին կը դնեն սեղանին վրայ և ընտրողաց ցանկին մէջ իրենց անուանը առջեւ ստորագրելէն ետքը՝ հոն թուղթի մը վրայ քանի երեսփոխան ուզված է նէ՝ այնքան անձի անուն կը գրեն իրենց ձեռքովը վերէն ի վար կարգով և ամէն մէկ անուան առջեւ մականունն, բնակութիւն, արհեստ նշանակելով՝ թուղթը կը ծալեն քուէատուփին մէջ կը ձգեն։

101. Քուէարկութիւնը գաղտնի է. ուստի պէտք է որ քուէարկուք առանձին կերպով մը գրեն իրենց քուէթուղթը. որպէս զի ուրիշ մը չը կարենայ տեսնել գրված անունները։

102. Քուէարկութիւնը սկսած օրը պէտք է լմննայ։

Ընտրողացմէ ով որ այն օրը քուէարկութեան չը ներկայանայ՝ իրաւունք չունի ետքը բողոքելու։

103. Ան որ պիտի կարենայ միանգամայն երկու Թագի կամ գաւառի մէջ քուէ տալ։

104. Միացեալ Թագերն ու Թեմերը՝ եթէ իրարու մօտ ըլլան, մէկ տեղ գալով կընեն քուէարկութիւնը, իսկ եթէ հեռի ըլլան՝ իւրաքանչիւրը զատ զատ քուէարկութիւն կընեն ու ետքը քուէարկութեանց արդիւնքը կը միացնեն։

ՔՈՒԷՀԱՄԱՐ

105. Քուէարկութիւնը լմննալէն ետքը՝ նոյն օրը միեւնոյն նիստի մէջ ընտրողական ժողովին հսկողութեանը ներքեւ տուփը կը բացուի. քննիչները քուէները կը համրեն և քուէարկուաց Թիւին հետ կը բաղդատեն. եթէ տարբերութիւն գտնուի կամ եղած տարբերութիւնը աննշան ըլլայ, այսինքն՝ մէկ կամ երկու Թիւի (վասնզի կրնայ պատահիլ որ քուէարկուացմէ մէկ կամ երկուքը մոռցած ըլլան ընտրողացանկին մէջ ստորագրելու), քուէարկութիւնը վաւերական կը համարուի. իսկ եթէ երկուքէն աւելի ըլլայ տարբերութիւնը և ընտրողական ժողովը խարդախութեան կասկած ունենայ, դարձեալ քուէարկութիւն ընել կ'որոշէ միւս օր մը մինչեւ առաջիկայ կիւրակէն։

Նմանապէս եթէ ուզված երեսփոխանաց Թիւը չը լեցվի առաջին անգամին՝ մնացածին համար երկրորդ անգամ ընտրութիւն կ'ըլլայ ուրիշ օր մը։

106. Եթէ պատահի որ մէկը պէտք եղածէն աւելի Թըւով անուն գրած ըլլայ իր քուէԹուղԹին մէջ, նոյն Թիւէն ետքը եկած անունները անընդունելի են։

Նմանապէս վերէն ի վար կարգով չը գրված անուններուն քուէԹուղԹը անհամարելի է։

107. Քուէարկուաց Թիւին կէսէն աւելի քուէ ստացողներուն մէջ էն շատ ստացող անձինքը երեսփոխան ընտըրված են։

108. Եթէ մէկ կամ երկու անգամով առաւելութիւն չըստացվի, ընտրողական ժողովը կը ծանուցանէ էն շատ առաւելութիւն ստացող երկու անունները, և երրորդ քուէար-

կութիւնը օրինաւորապէս այն երկու անուանց վրայ կըլլայ։

109. Եթէ հաւասար քուէ պատահի երկու անձանց վրայ, երիցագոյնը ընտրեալ է։

### ՎԱՒԵՐԱՑՈՒՄ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ

110. Ամէն ընտրողական ժողով՝ իր թաղէն կամ գաւառէն ընտրուած երեսփոխանաց անունները Քաղաքական ժողովին կը ներկայացնէ Պատրիարքին ուղղեալ տեղեկագրով մը, որոյ մէջ պէտք է ճշդիւ նշանակուած ըլլայ քուէթողութեան օրինակը, այսինքն՝ ընտրեալին անունը, մականունը, բնակութիւնն ու արհեստը և քուէարկութեան բոլոր պարագաները։

Քաղաքական ժողովը՝ քուէարկութեանց տեղեկագիրները քննելով, կ՚ըստուգէ երեսփոխանաց իշխանութիւնը։

Այս ըստուգութենէն ետքը Պատրիարքը պաշտօնական կերպով խմաց կուտայ նորընտիր երեսփոխանաց և կը հրաւիրէ զանոնք ընդհանուր ժողով գումարել որոշեալ օր մը։

111. Ընդհանուր ժողովը իր առաջին նիստին մէջ Քաղաքական ժողովին քննած տեղեկագիրները մէկիկ քննելով՝ ընտրութեանց ըստուգութիւնը կը վաւերացնէ և երեսփոխանաց իշխանութիւնը հաստատելով իր կազմութիւնը կը լրացնէ։

112. Ընդհանուր ժողով կրնայ գումարուիլ երբ երեսփոխանաց մեծագոյն մասը՝ որ Պոլսոյ մէջ է՝ ընտրուած ըլլայ, առանց սպասելու ընտրութեանց վերջը կամ գաւառական երեսփոխանաց որոնց ընտրութեան լուրը մէկ կողմէն Պոլիս հասնելու վրայ կ՚ըլլայ։

113. Եթէ մէկը քանի մը թաղերու կամ քանի մը գաւառներու կողմէն ընտրուած ըլլայ, ինքը կ՚որոշէ որ թաղին կամ որ գաւառին երեսփոխանութիւնն ընդունելը։ Եթէ ինքը չուզէ որոշել, Ընդհանուր ժողովը վիճակով կ՚որոշէ։

Այն պարագային մէջ ընտրող թաղին կամ գաւառին իմաց կը տրուի ուրիշ երեսփոխան մ՚ընտրել։

Այնպէս կ՚ըլլայ երբ վախճանման կամ հրաժարման պատճառով երեսփոխանաց մէջէն պակսող ըլլայ։

114. Ժողովարանին մէջ բացադրեալ պէտք է մնայ երեսփոխանաց ցանկը այբուբենի կարգով շինուած, որոյ մէջ թըւականովը կը նշանակուի անուան առջեւ՝ հրաժարում, փոխանում, ևայլն։ Նմանապէս երեսփոխանաց հետ առաջին և երկրորդ կարգէ անդամակից (Յօդ. 9) եղող անձանց ցանկը։ Այս ցանկերը հինգ տարին անգամ մը կը նորոգուին ընդհանուր ժողովին նորոգմանը հետ։

Ըստ հարկին գործածելու համար երեսփոխանաց մէյմէկ տպեալ վկայագիր երեսփոխանութեան պէտք է տրուի այս օրինակ։

Ա... Ազգային Երեսփոխան

(Ա՛ Թուական)

. . . . . . . .

(Ստորագրութիւն Երեսփոխանին)

Եւ ճակատը պատրիարքական կնքով կնքեալ

Դ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

115. Պատրիարքը պէտք է որ Էջմիածնայ կաթուղիկոսէն ձեռնադրեալ կամ՝ անկէ իբր Էջմիածնայ եպիսկոպոս ընդունեալ անձ մ՚ըլլայ և Օսմանեան Տէրութեան հպատակ։

116. Կրօնական ու քաղաքական ժողովները խառն ժողով կազմելով ընտրելութեան պայմանները ունեցող եպիսկոպոսաց և վարդապետաց արժանիքը կը քննեն թէ կրօնական և թէ քաղաքական մասին և կ՚որոշեն երեք ընտրելի որոնց անունները ընդհանուր ժողովին կը ներկայացնեն։

Ընդհանուր ժողովին մէջ այն երեք ընտրելի անձանց վրայ գաղտնի քուէարկութիւն ըլլալով՝ ով որ մեծագոյն մասին հաւանութիւնը ստանայ, անի կ՚ըլլայ օրինաւոր Պատրիարք Ազգին։

Եթէ առաջին անգամին մեծագոյն մաս չը վաստկի, երկ-

բորդ՝անգամ քուէարկութիւն կ՚ըլլայ. եթէ երկրորդին ալ չըյաջողի, երկու առաւելագոյն քուէ ըստացողաց անուն-ները կը ծանուցվի դիւանին կողմէն և երրորդ քուէարկու-թիւնը օրինաւորապէս այն երկուքին վրայ կ՚ըլլայ.

Եթէ պատահի որ քուէները երկու անձի վրայ հաւասա-րապէս բաժնըվին, այն ատեն երկուքին մէկը վիճակով կ՚ըն-տրըվի.

Եթէ ընտրեալը վարդապետ ըլլայ, անմիջապէս Էջմիածին կը ղրկվի եպիսկոպոս ձեռնադրըվելու համար.

117. Ընտրութիւնը լմննալէն ետքը տեղեկագիր մը կը շինվի զոր բոլոր բազմականք կ՚ըստորագրեն, և որոյ օրինակը՝ Ընդհանուր ժողովին կնքովը կնքեալ՝ խառն ժողովին միջնոր-դութեամբը Բ. Դրան կը մատուցվի որ կ՚անուանէ զՊատրիարքը.

118. Նորընտիր Պատրիարքը՝ դեռ Բ. Դրան չըներկայա-ցած՝ Եկեղեցւոյ մէջ և Ընդհանուր ժողովին առջեւ հանդի-սաւոր ուխտ կ՚ընէ այն օրինակ. «Առաջի Աստուծոյ և ա-ռաջի Ազգիս Հայոց ներկայացեալ յԸնդհանուր ժողով՝ ուխ-տեմ հաւատարիմ մնալ Ազգային Սահմանադրութեան և հըս-կել բոլոր սրտով նորին անթերի գործադրութեան».

119. Եթէ Պատրիարքը Սահմանադրութեան դէմ պակա-սութեան մը մէջ գտնվի, ամբաստանութեան տակ կ՚ընկնի.

120. Պատրիարքին վրայ ամբաստանութիւն մը՝ կամ ազ-գային երեսփոխանաց կողմէն, կամ կրօնական ժողովին և կամ քաղաքական ժողովին կողմէն կրնայ ըլլալ.

Երբ այսպիսի ամբաստանութիւն մը պատահի, Ընդհա-նուր ժողովը կը գումարվի և իր մէջէն քննիչ յանձնաժողով մը կը կարգէ 21 հոգիէ բաղկացեալ (7 եկեղեցական, 7 քա-ղաքական երեսփոխան, 7 գաւառական երեսփոխան) որոնք ամ-բաստանողաց մէջէն պէտք չէ որ ըլլան.

Քննիչ յանձնաժողովը՝ ամբաստանութիւնը քննելով, տե-ղեկագիր կու տայ Ընդհանուր ժողովին որ գաղտնի քուէար-կութեամբ կ՚որոշէ խնդիրը. Եթէ այս որոշումը՝ որ ստորա-գրեալ պէտք է ըլլայ որոշման կողմը քուէ տուող ժողովա-կաններէն, Պատրիարքի հրաժարումը վճռած ըլլայ, երկու ժողովոց ատենապետները Պատրիարքին կը ներկայացնեն որ

յայնժամ Ազգին որոշ կամքը առնելով Հրաժարականը տալու պարտաւորեալ է ։

121. Հրաժարեալ Պատրիարքը վիճակաւոր եպիսկոպոսաց կարգը կ'անցնի և ըստ այն կը անօրինուի խառն ժողովին կողմէն ։

### Դ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ

122. Առաջնորդի ընտրութիւնը գաւառական Ընդհանուր ժողովին մէջ կ'ըլլայ նոյն և նման Պատրիարքի ընտրութեան ։

Այն ընտրութիւնը գաւառական խառն ժողովին միջնորդութեամբ վաւերական տեղեկագրով կը ծանուցվի Պատրիարքին որ կեդրոնական խառն ժողովին հաւանութեամբը կ'անուանէ զԱռաջնորդը ։

123. Եթէ Առաջնորդը Սահմանադրութեան դէմ պակասութեան մը մէջ գտնուի ․ ամբաստանութեան տակ կ'ընկնի Գաւառական ժողովոյ կողմէն ․ և քննութիւնը ըստ 120 յօդուածին ըլլալով դատը կեդրոնական խառն ժողովին մէջ կը տեսնուի որ ըստ պատշաճին կը անօրինէ ։

### Ե. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎԱԿԱՆԱՑ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԱՑ

124. Ընդհանուր ժողովը կ'ընտրէ կրօնական ու քաղաքական ժողովոց անդամները ։

Քաղաքական ժողովը կ'ընտրէ Տնտես․ խորհրդոց անդամները բաց 'ի Դատաստանական խորհրդէն որոյ եկեղեցական անդամները կրօնական ժողովը կ'ընտրէ ։

Դատաստանական խորհրդին անդամները 40 տարին լրացուցած և ամուսնացեալ անձինք պէտք է որ ըլլան ։

Թաղին ընտրողները կ'ընտրեն Թաղական խորհրդին անդամները Թաղին Ընտրողական ժողովին ներկայութեամբը ․ ըստ ընտրական օրինաց ։

Այնպէս կ'ըլլայ և գաւառներու մէջ ժողովականաց և խորհրդականաց ընտրութիւնը ։

125. Ընդհանուր ժողովը հինգ տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվի և ապրիլի սկիզբը կը նորոգվի ։

Կրօնական ու Քաղաքական Ժողովներն ու Տեսուչ Խորհուրդները ամեն տարի մարտի վերջը կիսով չափ միայն կը լուծվին և ելլելի ընկերքը կը նորոգվին (1).

Թաղական ու Թեմական Խորհուրդները չորս տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվին և ելլելի ընկերքը կը նորոգվին.

Նոյնպէս կ'ըլլայ և գաւառներու մէջ Ժողովոց և Խորհրդոց նորոգումը.

126. Ազգային Երեսփոխաններն ու Թաղական և Թեմական Խորհրդականները անմիջապէս վերընտրելի են նոյն պաշտօնին համար. իսկ Կրօնական ու Քաղաքական Ժողովոց և Տեսուչ Խորհրդոց անդամները՝ որ անմիջապէս վերընտրելի չեն նոյն պաշտօնին համար, ուրիշ որ և է պաշտօնի համար վերընտրելի են.

Նոյնպէս է նաև գաւառներու մէջ գաւառական պաշտօնատարաց վերընտրութիւնը.

127. Ամեն անգամ որ Ազգային Ժողովներն ու Խորհուրդները նորոգվին, նորընտիր անդամոց ցանկը օրագրի միջոցով պէտք է հրատարակվի.

## ԳԼՈՒԽ Դ.

### ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

### ԺՈՂՈՎՈՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ

#### 1. ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

128. Ամեն Ժողով և Խորհուրդ պէտք է ունենայ ատենական դիւան մը, որ կը բաղկանայ ատենապետէ մը, ատենադպրէ մը և պէտք եղածին չափ փոխանորդներէ զորոնք Ժողովն իր մէջէն կընտրէ.

(1) Առջի անգամին միայն՝ Ժողովականաց և Խորհրդականաց կէսին լուծումը վիճակով կ'որոշվի.

Առաջին անգամին երիցագունին ատենապետութեամբ և կրտսերագունին ատենադպրութեամբ նիստ կընէ և իր դիւանը կը կազմէ ։

129. Ատենապետին պաշտօնն է՝ ատեանը բանալ և գոցել, ատեանին ներքին վարչութիւնը տնօրինել, վիճաբանութիւններն ուղղել, կանոնադրութեանց պահպանութեանը հսկել և ատենաբաններուն կարգով խօսք տալ։

130. Ատենադպրին պաշտօնն է՝ ատեանին մէջ խօսվածները գրի առնել, եղած որոշումներն ու տրված պատճառաբանութիւնները ճշդիւ նշանակել, և ատենագրութիւնը հետեւեալ ատեանին ներկայացնել, և ամեն ատեանին խնդիրներու ցանկը պատրաստել առաջնութեան կարգով։

131. Ատենապետի ու ատենադպրի փոխանորդներուն պաշտօնը պիտի ըլլայ անոնց ներկայ չըգտնված ատեաններուն մէջ զանոնք փոխանակել ։

132. Ատենական դիւանը տարին անգամ մը կը նորոգվի և անդամներն անմիջապէս վերընտրելի են ։

Ընդհանուր ժողովին դիւանը 5 տարին անգամ մը Ընդհանուր ժողովին հետ կը նորոգվի ։

## 2. ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

133. Կրօնական ու Քաղաքական ժողովներն ու Տեսուչ խորհուրդները շաբաթն անգամ մը կը գումարվին ի Պատրիարքարան որոշեալ օր մը։

Ատենապետները կրնան ուրիշ օր մը կամ ուրիշ տեղ մը արտաքոյ կարգի ժողով կամ խորհուրդ գումարել բանխօսական պարագայի մէջ ։

Ընդհանուր ժողովին գումարվելու օրը լրագրի միջոցով պէտք է ծանուցվի գոնէ երեք օր առաջ։

134. Առանց մեծագոյն մասի ներկայութեան նիստը անբաւական կը համարվի և խնդրի մը վրայ վերջին որոշում չը կրնար տրվիլ ։

135. Առանց ատենապետի և ատենադպրի ատեան չը կրնար բացվիլ ։

Երբ մեծագոյն մասը ներկայ ըլլալով՝ ատենապետը կամ ատենադպիրը և անոնց փոխանորդները ներկայ չըլլան, երիցագոյնին ատենապետութեամբն ու կրտսերագունին ատենադպրութեամբը կը բացուի ատեան։

136. Ատենապետէն խօսք չը խնդրած և չառած ներելի չէ խօսիլ ատեանի մէջ։

137. Խնդիր մը առաջարկել ուզողը՝ նախ խնդիրներուն ցանկին մէջ պէտք է գրել տայ խնդիրն ու իր անունը, և երբ կարգը գայ, այն ատեն իրաւունք ունի խօսելու նոյն խնդրին վրայ և ժողովը զանի մտիկ ընելու պարտաւոր է։ Այս կարգը այն ատեն միայն կրնայ փոխուիլ՝ երբ ուրիշ խնդիր մը պատահի որոյ բանախօսական ըլլալը ժողովն որոշէ։

138. Խնդիր մը լաւ մը քննուելէն, վիճուելէն և անոր վրայ ամենուն կարծիքը առնուելէն ետքը պէտք է որ քուէի դրուի, և որոշումը ներկայ գտնուող անդամներուն մեծագոյն մասին հաւանութեամբը կը տրուի։

139. Երբ ձայները հաւասար գան՝ եթէ նախագահը ներկայ է՝ նախագահին կողմը կը հակի որոշումը, եթէ ոչ՝ ատենապետին կողմը։

140. Խառն ժողովին մէջ խնդրի մը որոշում տալու համար պէտք է որ երկու ժողովները զատ զատ քուէարկութիւն ընեն. երբ երկուքին ալ մեծագոյն մասը մի եւ նոյն որոշումն բռնած ըլլայ՝ խնդիրը կը լուծուի. իսկ հակառակ դիպուածի մէջ անհամաձայնութիւն կը սեպուի երկու ժողովոց մէջ, և անօրէնութիւնը ընդհանուր ժողովին կը մնայ (Յօդ. 1. 12)։

141. Ժողովներուն մէջ ո՛ր և է ընտրութիւն, դատաստան, ազգային տուրքի հաստատութիւն, Սահմանադրութեան վերաքննութիւն, գաղտնի քուէարկութեամբ կ'որոշուի. Նոյնպէս կ'ըլլայ նաև ուրիշ ո՛ր և է խնդրի մէջ երբ գաղտնի քուէարկութիւն պահանջող ըլլայ։

142. Խորհրդոց ատենապետները կրնան մինակ կամ՝ ըստ հարկին խորհրդական մ'ալ հետ առնելով՝ ուզած ատենին Քաղաքական ժողովին մէջ ներկայանալ և իրենց խորհրդին վերաբերեալ գործերուն վրայ խօսիլ, բայց քուէ չունին։

143. Ժողովներու և խորհուրդներու մէջ ամեն նիստ իր ատենագրութիւնը պէտք է ունենայ, զոր ներկայ գտնուող անդամները կ'ստորագրեն ։

Ընդհանուր ժողովին ատենագրութիւնները Պատրիարքն ու դիւանին անդամները միայն կ'ստորագրեն ։

Ընդհանուր ժողովին անդամները Ներկայութեան Տոմար մը վրայ կ'ստորագրեն ժողովարանը մտած ատեննին ։

144. Ամեն ժողով և խորհուրդ իր տեսչութեան կամ մատակարարութեան վրայ տարեկան ընդհանուր տեղեկագիր պէտք է որ տայ իր համարատու ժողովին կամ խորհրդին ։

Այն տեղեկագիրը բոլոր անդամոց կողմէն ստորագրեալ պէտք է ըլլայ ։

145. Երեք անգամ իրարու վրայ առանց բանաւոր պատճառ մը գրով իմացնելու ներկայ չը գտնուող ժողովականին կամ խորհրդականին անունը ատենագրութեան մէջ կը յիշուի, և ժողովին կամ խորհրդին կողմէն ատենապետը անոր կը գրէ չը գալուն պատճառը հարցնելու համար. եթէ պատասխան չընդունի ժողովը, կամ ընդունած պատասխանը զինքը գոհ չընէ, երկրորդ գրութեամբ ժողովին դատում մը կ'իմացնէ անոր և կը յորդորէ որ յաջորդ ատեանին ներկայ գտնուի. եթէ նորէն չը ներկայանայ, այնպիսին իր պաշտօնական պարտուցը մէջ զանցառութիւն բրած ըլլալով՝ իր զանցառութիւնը հրաժարական կը սեպուի. եթէ այդպիսեաց թիւը մինչև 3 հասնի, ժողովին նախագահը կամ ատենապետը անոնց տեղ զանոնք ընտրող ժողովէն ուրիշ անդամներ կը խնդրէ (1) ։

Նոյնը պէտք է ընել երբ նոյն թուով ժողովականք կամ խորհրդականք պակսին թէ վախճանման և թէ հրաժարման պատճառով ։

---

(1) Այս տրամադրութիւնը Ընդհանուր ժողովին վերաբերեալ չէ ։

## ԳԼՈՒԽ Ե.

### ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

146. Սահմանադրական ժողովով որոշեալ Ազգային Սահմանադրութիւնը առաջին անգամ առժամանակեայ ընդհանուր ժողովով կ'ընդունուի ու կ'ըստորագրուի, և յետոյ սահմանադրականապէս կազմեալ Ընդհանուր ժողովը դարձեալ ըստորագրելով՝ Ազգին կողմէն կը վաւերացնէ զայն և վճռաբար կը հաստատէ։

Սահմանադրութեան ըստորագրեալ բնագիրը ազգային դիւանատան մէջ կը պահուի և օրինակը տպագրութեամբ կը հրատարակուի։

147. Ազգային Սահմանադրութիւնը ազգովին ընդունելէն ետքը՝ Ազգին որոշ ու յայտնի կամքը կը սեպուի. և անոր պարունակած տրամադրութիւնքը անփոփոխելի են ազգային վարչութեան կողմէն։

Իսկ՝ երբ ազգային վարչութիւնը Սահմանադրութեան գործադրութեանը մէջ երկար փորձով ինչ ինչ յօդուածներու փոփոխութեան պէտք տեսնէ, ինք միշտ համեմատ վարուելով անոնց, իր ընթացքին երրորդ տարւոյն վերջերը միայն քննութեան առաջարկութիւն կրնայ ընել Ընդհանուր ժողովին։

148. Երբ Ընդհանուր ժողովը վերաքննութեան առաջարկութիւնը ընդունի, վերաքննութեան ժողով մը կը կազմէ այս կերպով.

Կրօնական և Քաղաքական ժողովներէն չորսական հոգի, Տեսուչ խորհուրդներէն երեքական հոգի, և ասոնցմէ դուրս 10 հոգի զոր Ընդհանուր ժողովը իր մէջէն կամ դուրսէն կ'ընտրէ, ընդ ամէնը 30 հոգի։

149. Վերաքննութեան ժողովը ազգային վարչութեան կողմէն եղած դիտողութիւնները միայն քննութեան տակ առնելով, պէտք եղած փոփոխութիւնները կ'որոշէ և Պատրիարքին միջնորդութեամբը Ընդհանուր ժողովին կը ներկայացնէ։

150. Սահմանադրութեան վերաքննութիւնը Ազգին համար անընդունելի է, երբ հիմնական սկզբանց տրամադրութեանցը համաձայն չըլլայ. այն սկզբանց՝ որով պաշտպանեալ են Ազգին իրաւունքները, իրաւունք՝ որոնց վրայ Ազգն անգամ չունի իշխանութիւն անօրէնութեան զի միանգամայն պարտիք են.

## Վ Ե Ր Ջ

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ ԱՆԴԱՄՔ

---

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ<br>ՍԵՐԱՍՏԻՈՅ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ<br>ՊԱԼԱԹԻՈՅ

Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅ<br>ԽԱՍԳԻՒՂԻ

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ<br>ՓԱՓԱԶԵԱՆ

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ<br>ՀԻՒՆՔԵԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ

ԱԼԹՈՒՆ ՏԻՒՐՐԻ<br>
ԱՃՆԱՆԵԱՆ Գ.<br>
ԽԻԹԻՒՃԵԱՆ Կ. Ս.<br>
ՄԻՍԱՔԵԱՆ Վ.<br>
ՍԻՒՐԷՆԵԱՆ Յ.<br>
ՓԷՇՏԸՄԱԼՃԵԱՆ Ս.<br>
ՔՈՒԹԻԿԵԱՆ Բ.

ԱՂԱԹՕՆ Մ.<br>
ՆԱՂՈՒՊԵԱՆ Ե.<br>
ՄԻՆԱՍ Մ.<br>
ՌՈՒՍԻՆԵԱՆ<br>
ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ Ն.<br>
ՔԱՅՍԷՐԵԱՆ Թ.<br>
ՕՏԵԱՆ Գ. Ս.

*Ղալաթիա*. 20 *մայիս* 1860.

---

***Ազգային Ընդհանուր Ժողովին միաձայն հաւանութեամբն ընդունուած և ստորագրուած։***

***Կ. Պոլիս, ի Պատրիարքարան Հայոց.***

***24 Մայիս 1860.***

**ՎԵՐՋ.**

# ՑԱՆԿ ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ


Գլ. Ա. Յաղագս պատրիարքութեան Զաքարիայ, եւ Յովհաննու Համատանեցւոյ, եւ հալածանաց Համշէական Հայոց . . 1

Գլ. Բ. Յաղագս փոփոխութեան անուանցն Հայոց եւ կաթողիկոսութեան Սսոյ Տ. Թէոդորոսի, եւ պատրիարքութեան Երուսաղէմի Տ. Թէոդորոսի, եւ պատրիարքութեան Կ. Պօլսոյ Տ. Դանիէլի . . . . . . . . . . . . . . . . . . . . 4

Գլ. Գ. Յաղագս վախճանի Ղուկասու կաթուղիկոսի, եւ ընտրութեան Յովսեփայ, եւ Բարթողոմէոսայ եւ Դանիէլի . . 8

Գլ. Դ. Յաղագս գործոց Յովհաննու եպիսկոպոսի Կ. Պօլսոյ, եւ Գալուստ Նուիրակին Էջմիածնի, եւ ընտրութեան Դանիէլի ՚ի կաթողիկոսութիւն, եւ Դաւթի ՚ի պատրիարքութիւն . . . 10

Գլ. Ե. Յաղագս խռովութեան եւ երկպառակութեան Ազգիս ՚ի Կ. Պօլիս, եւ պատրիարքութեան Յովհաննու . . . . . 14

Գլ. Զ. Յաղագս աքսորանացն Դանիէլի եւ Գալուստ Նուիրակին, եւ ընտրութեան Յովսեփայ ՚ի կաթողիկոսութիւն Էջմիածնի, եւ վախճանի նորա . . . . . . . . . . . . . . 18

Գլ. Է. Յաղագս երկիցս անգամ ընտրութեան Դանիէլի, եւ բռնանալոյն Դաւթի ՚ի կաթողիկոսութիւն, եւ գործոց նորին. 20

Գլ. Ը. Յաղագս գրութեան Եփրեմայ Արքեպիսկոպոսի առաջնորդի Ռուսաստանու, եւ աքսորանացն Յովհաննու պատրիարքի, եւ պատրիարքութեան Գրիգորի, եւ վախճանի Թորոսի կաթողիկոսին Սսոյ, եւ յաջորդելոյ Կիւրակոս եպիսկոպոսի. 29

Գլ. Թ. Յաղագս օծման Դանիէլի ՚ի կաթողիկոսութիւն, եւ ժողովոյն Պայազիտու . . . . . . . . . . . . . 38

Գլ. Ժ. Յաղագս գործոց Գրիգորի պատրիարքի, եւ աքսորանաց նորին, եւ Դանիէլի, եւ վերադառնալոյ Յովհաննու կրկին անգամ յաթոռ պատրիարքութեան Կ. Պօլսոյ . . . . . 48

Գլ. ԺԱ. Յաղագս պատերազմին Պարսից եւ Ռուսաց, եւ դարձին Դանիէլի յաքսորանացն, եւ նստելոյ յաթոռ կաթողիկոսութեան Էջմիածնին. . . . . . . . . . . . . . . . . 51

Գլ. ԺԲ. Յաղագս գալոյ Անգղիացւոց պատերազմական նաւաց ՚ի Կ. Պօլիս, եւ բազմադիմի խռովութեանց, որք եղեն ՚ի Կ. Պօլիս . . . . . . . . . . . . . . . . . . . . 55

Գլ. ԺԳ. Յաղագս ջանալոյ Յունաց գրաւել զվանս սրբոյն Յակոբայ ՚ի յԵրուսաղէմ, եւ յաղագս դատի նոցին ընդ Հայս. 59

Գլ. ԺԴ. Յաղագս մախմանի Տ. Դանիէլի կաթողիկոսի, և յաջորդելոյ Ներսէսի և յաղագս բանի միաբանութեան ընդ Հռոմէական Հայ կոչեցեալ ժողովրդեան . . . . . . . . . . 64

Գլ. ԺԵ. Յաղագս հրաժարելոյ Յովհաննու 'ի պատրիարքութենէ, և յաջորդելոյ Աբրահամ պատրիարքի . . . . . . 71

Գլ. ԺԶ. Յաղագս գործոց Աբրահամ պատրիարքի և արտորանաց նորին և յաջորդելոյ Պօղոսի եպիսկոպոսի Անդրիանուպօլսեցւոյ . . . . . . . . . . . . . . . . . 73

Գլ. ԺԷ. Յաղագս կոչելոյ Պօղոսի պատրիարքին զՀռոմէական Հայս 'ի սէր միաբանութեան . . . . . . . . . . . . 81

Գլ. ԺԸ. Յաղագս առնհարձութեան Պօղոսի պատրիարքին, և կանոնական կոնդակի նորին . . . . . . . . . . . . 84

Գլ. ԺԹ. Յաղագս գործոց Պօղոսի պատրիարքին . . . . . 95

Գլ. Ի. Յաղագս աղաստամբութեան Ուլնեցւոյ Հայազգեաց, և մահամերձ վտանգի Տ. Կիւրակոսի կաթողիկոսին Սսոյ . . 98

Գլ. ԻԱ. Յաղագս կործանման տանն Տիւզեանց, և բանի միաբանութեան Հայոց ընդ Հռոմէական Հայս . . . . . . . 102

Գլ. ԻԲ. Յաղագս ջատագովութեան Աբրայեան Հարց զեկեղեցւոյն Հայոց . . . . . . . . . . . . . . . . . 106

Գլ. ԻԳ. Յաղագս արտորանաց և փախստեան Դօլէճեան կարգաւորաց, և գալստեան առ մեզ Աբրայեան Հարց, և խօսելոյ նոցա ընդ վարդապետս մեր վասն խնդրոց ինչ . . . . 112

Գլ. ԻԴ. Յաղագս խօսելոյ Աբրայեան Հարց ընդ վարժապետաց վասն մասանց հաւատոյ, զորոց էին խնդիրք . . . . . 117

Գլ. ԻԵ. Սուրբ և ազգասէր վարդապետութիւն եկեղեցւոյն Հայոց այս է, յորոյ վերայ միայն է խնդիրն . . . . . . 122

Գլ. ԻԶ. Յաղագս խնդրոց Աբրայեան Հարց և ընդունելութեան նոցին . . . . . . . . . . . . . . . . . . 126

Գլ. ԻԷ. Յաղագս գալոյ Աբրայեան վարդապետաց յեկեղեցիս մեր, և հաղորդելոյ ընդ մեզ 'ի հոգևոր պաշտամանս . . . 131

Գլ. ԻԸ. Թուղթ Հ. Թովմայ վարդապետին ընդդէմ Վրենկենտիոսի Քռնեսի եպիսկոպոսին Լատինացւոց . . . . . . . 137

Գլ. ԻԹ. Յայտարարութիւն 'ի Գրիգոր վարժապետէ Փէշտըմալճեան . . . . . . . . . . . . . . . . . . . . 143

Գլ. Լ. Թուղթ Հ. Սերովբէ վարդապետի Ճէվահիրճեան, ընդդէմ բանադրանաց Թղթոյ Քռնեսի եպիսկոպոսին Լատինացւոց . . . . . . . . . . . . . . . . . . . . 148

Գլ. ԼԱ. Յաղագս օրհնութեան իւղոյ վերջին օծման, և

ազմկի մոզոլբղեան Հայոց . . . . . . . . . . . . . . . . . 161

Գլ. ԼԲ. Յաղագս ապստամբելոյ Յունաց 'ի հպատակութենէ Օսմանեան տէրութեան, և գլխատման Կիզորիոսի պատրիարքին և մետրապօլտաց և մեծամեծաց Յունաց և բազմաց հատապակութեան . . . . . . . . . . . . . . . . 171

Գլ. ԼԳ. Յաղագս պատերազմին Պարսից ընդդէմ Մոսկովաց և քաջութեան ազգին Հայոց, և յաղագս գրաւելոյ Մոսկովաց զԱրարատեան գաւառն ընդ իշխանութեամբ իւրեանց . 177

Գլ. ԼԴ. Յաղագս բարձման ապստամբ Օճաքին Եէնիչէրի զօրաց . . . . . . . . . . . . . . . . . . . . 179

Գլ. ԼԵ. Յաղագս դարձի յաքսորանաց տանն Տիւզեանց, և պատրիարքութեան Տ. Կարապետի, և աքսորանաց Թընկըրեանց երկուց եղբարց . . . . . . . . . . . . . . 188

Գլ. ԼԶ. Յաղագս այրելոյ Նաւարինու զարքունի նաւատորմիղն Օսմանեան տէրութեան . . . . . . . . . . . 192

Գլ. ԼԷ. Յաղագս վերջին հալածանաց և աքսորանաց Հռոմէական Հայոց . . . . . . . . . . . . . . . . . 195

Գլ. ԼԸ. Յաղագս պատերազմին Մոսկովաց ընդդէմ Տաճկաց. 198

Գլ. ԼԹ. Յաղագս մեծի սովուն, որ եղև 'ի Կոստանդնուպօլիս . . . . . . . . . . . . . . . . . . . . 201

Գլ. Խ. Յաղագս քաջութեան Հայոց Բաբերդու և կառբածի նոցա 'ի Մոսկովաց, և յաղագս գործոց Տիպիչ ապարապեանն 'ի կողմն Ռումէլիի . . . . . . . . . . . . 204

Գլ. ԽԱ. Յաղագս գալոյ Ռուսաց 'ի վերայ քաղաքին Կոստանդնուպօլսոյ, և հաշտութեան նոցա ընդ Օսմանցիս ընդ երկոտասան դաշնագրութեամբք . . . . . . . . . 207

Գլ. ԽԲ. Յաղագս դրոշելոյ Հռոմէական Հայոց 'ի Հայոց, և մետրապօլտի նոցա, և առաջնորդի . . . . . . . . . . 212

Գլ. ԽԳ. Յաղագս գործոց Յակոբայ առաջնորդին Հռոմէական Հայոց, և նորին Անտօնի մետրապօլտի նոցա . . . 234

Գլ. ԽԴ. Յաղագս խնամութիւն առնելոյ Գաղատացի Հռոմէականաց ընդ Ֆրանկաց, և արգելմանց հրովարտակին 'ի դրանէ տէրութեան . . . . . . . . . . . . . . . . 236

Գլ. ԽԵ. Յաղագս վտանգաւոր հարուածոց և անցից Կոստանդնուպօլսոյ քաղաքին . . . . . . . . . . . . . 241

Գլ. ԽԶ. Յաղագս պատերազմի Մէհմէտ Ալի փաշային Եգիպտոսի ընդդէմ Ապտուլլահ փաշային Ակկայոն քաղաքի. 242

Գլ. ԽԷ. Յաղագս պատերազմի արքային ընդդէմ Մէհմէտ

Ալի փաշային Եգիպտոսի, եւ գալոյ Ռուսաց 'ի Կոստանդնուպօլիս 'ի պաշտպանութիւն արքային . . . . . . . . . . . 245

Գլ. ԽԸ. Յաղագս մահամերձ քննադատելութեան ճանիկ եւ Մազատա եւ Խնդիր ամիրային եւ ազատութեան նորին, եւ յաղագս կաթողիկոսութեան Յովհաննու Կարբեցւոյ . . . . . . 250

Գլ. ԽԹ. Յաղագս գործոց Պէզճեան Յարութիւն Ամիրային, եւ մահու նորին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 252

Գլ. Ծ. Յաղագս օծման եկեղեցւոյն Հռովմէական Հայոց. եւ նորոգութեան եկեղեցեաց Հայոց, եւ յաղագս երեւելի դիպուածոց ինչ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 258

Գլ. ԾԱ. Յաղագս հարսանեաց դստերց արքային, եւ թըլփատութեան որդւոց նորին, եւ յաղագս ճանապարհորդութեան արքունի փառօղաւոր Յովհաննէս ամիրայի յԵւրոպա, եւ վերադարձի նորին . . . . . . . . . . . . . . . . . . . . . 261

Գլ. ԾԲ. Յաղագս չինութեան ճեմարանին Իւսկիւտարու, եւ պատրիարքութեան Յակոբայ . . . . . . . . . . . . . 267

Գլ. ԾԳ. Յաղագս ազգային խռովութեանց, եւ պատրիարքութեան Ստեփաննոսի, եւ Աստուածատրոյ, եւ նահատակութեան Յովակիմայ . . . . . . . . . . . . . . . . . . . . . 271

Գլ. ԾԴ. Յաղագս կաթողիկոսութեան Ներսիսի հինգերորդի եւ պատրիարքութեան Մատթէոսի . . . . . . . . . . . 279

Գլ. ԾԵ. Յաղագս օծման Ներսիսի կաթողիկոսի, եւ գործոց նորա, եւ Շահնազարեան Կարապետ վարդապետի . . . . 285

Գլ. ԾԶ Յաղագս գժտութեան 'ի մէջ կաթողիկոսին եւ Լազարեան Խաչիկ աղային . . . . . . . . . . . . . . . . . 290

Գլ. ԾԷ. Յաղագս հերձուածոյ Բողոքական Հայոց . . . . 295

Գլ. ԾԸ. Յաղագս ընդունելոյ պատրիարքաց դաշնամանդեայ պատուանշանս յարքայէ եւ այցելութեան առ իշխանս, եւ վերստին բացման ճեմարանին Իւսկիւտարու, եւ փոփոխման գլխաւորի եկեղեցականաց Հայոց, եւ առաքելոյ կաթողիկոսին զԳահանակն առ Մատթէոս պատրիարք . . . . . . . . . . 308

Գլ. ԾԹ. Յաղագս աղետալի դիպուածոց 'ի Կ. Պօլիս եւ յարտաքին գաւառս, եւ բողոքելոյ Հայոց ընդդէմ Յունաց վասն գրոց վանից Ս. Ծննդեան փրկչին 'ի Բեթղեհէմ, եւ հաստատութեան Հոգեւոր եւ Քաղաքական ժողովոց պատրիարքարանին Հայոց . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 313

Գլ. Կ. Յաղագս ազատութեան Հայոց բնակելոց 'ի Վասպուրական, 'ի Տարօն, եւ 'ի Բագրեւանդ գաւառս, 'ի հարստա-

հարութենէ բարբարոս ազգին Մարաց շնորհիւ Մատթէոս պատրիարքին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 321

ԳԼ. ԿԱ. Յաղագս փոխադարձ այցելութեան Ֆէրիէրի կարդինալին Հռոմայ 'ի պատրիարքարանս Յունաց եւ Հայոց, որ եւ յաղագս բանախօսութեան 'ի վերայ հաւատոյ . . . . . . . 327

ԳԼ. ԿԲ. Յաղագս Համազգեաց ընկերութեան . . . . . . 350

ԳԼ. ԿԳ. Յաղագս հրաժարելոյ Մատթէոսի 'ի պատրիարքութենէ եւ կրկին պատրիարքութեան Յակովբոսի արքեպիսկոպոսի . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 359

ԳԼ. ԿԴ. Յաղագս աղմկի եւ խռովութեան Հայոց եւ Հռովմէականաց վասն հրատարակման Տաճկերէն եւ Հայերէն պարտաւագրոյն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 366

ԳԼ. ԿԵ. Յաղագս պատուելոյ սրբազան կաթողիկոսին Ներսիսի զՅակոբ պատրիարք արժանաւոր մեծարանօք, եւ Արեւելեան պատերազմին Ռուսաց որ եղեւ վասն տնօրինական տեղեաց Ս. Երուսաղէմի եւ վախճանի սրբազան կաթողիկոսին Ներսիսի, եւ կաթողիկոսութեան Մատթէոսի առաջնոյ . . . . . 370

ԳԼ. ԿԶ. Յաղագս պատրիարքութեան Գէորգայ, եւ ուղեւորութեան Մատթէոսի 'ի Ս. Էջմիածին . . . . . . . . . . 374

ԳԼ. ԿԷ. Յաղագս հանդիսից, որք եղեն 'ի ճանապարհորդութեան սրբազան կաթողիկոսին մինչեւ յէջմիածին, եւ փառաւոր օծման նորա, եւ գործոց նորա եւ պատրիարքութեան Սարգսի . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 381

ԳԼ. ԿԸ. Յաղագս հաստատութեան Ազգային Սահմանադրութեան Հայոց . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 389

## ԲԱՇԽՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

### ՊՈԼԻՍ

| | Թաղ | Եկեղեցի | Երեսփոխանաց թիւ |
|---|---|---|---|
| 1 | Գումքափու | Մայր Եկեղեցի | 24 |
| 2 | " | Ս. Յարութիւն | 2 |
| 3 | Կէտիկփաշա | Ս. Յովհաննէս | 6 |
| 4 | Եէնիքաբու | Ս. Թադէոս և Բարթողոմէոս | 4 |
| 5 | Սամաթիա | Ս. Գէորգ | 15 |
| 6 | " | Ս. Յակոբ | 1 |
| 7 | Նարլըքափու<br>Մաքրի գիւղ<br>Այ Ստեփան<br>Այ Եօրկի | Ս. Յովհաննէս<br>Ս. Ստեփան<br>Ս. Աստուածածին<br>Ս. Աստուածածին | 2 |
| 8 | Թօփքափու | Ս. Նիկողայոս | 2 |
| 9 | Քարակէօմրիւկ | Ս. Յ. Ոսկեբերան | 1 |
| 10 | Պալատ | Ս. Հրեշտակապետ | 15 |
| 11 | Էյիւպ | Ս. Աստուածածին | 1 |
| 12 | " | Ս. Եղիա | 1 |
| 13 | Խասգիւղ | Ս. Ստեփան | 15 |
| 14 | Քասըմփաշա | Ս. Յակոբ | 1 |
| 15 | Բերա<br>Ղալաթիա | Ս. Երրորդութիւն<br>Ս. Լուսաւորիչ | 17 |
| 16 | Պէշիկթաշ | Ս. Աստուածածին | 10 |
| 17 | Օրթագիւղ | Ս. Աստուածածին | 14 |
| 18 | Քուրուչէշմէ<br>Հիսար<br>Միրկիւն<br>Նորգիւղ<br>Պէօյիւքտէրէ | Ս. Խաչ<br>Ս. Սանդուխտ<br>Ս. Երեք Մանկունք<br>Ս. Աստուածածին<br>Ս. Հռիփսիմէ | 5 |
| 19 | Պէյքօզ<br>Քանտիլլի | Ս. Նիկողայոս<br>Ս. Ս. Առաքելոց | 1 |
| 20 | Քուզկունճուք<br>և Իճատիէ | Ս. Լուսաւորիչ | 2 |
| 21 | Ըսկիւտար | Ս. Կարապետ | 8 |
| 22 | "<br>Ալէմտաղ | Ս. Խաչ<br>Ս. Նշան | 11 |
| 23 | Քաղկեդոն | Ս. Թագաւոր | 1 |
| 24 | Քարթալ | Ս. Նշան | 1 |
| | | Ընդ ամէնը | 160 |

# ԳԱՒԱՌՔ

| Առաջնորդական վիճակ | Եպիսկոպոսաց թիւ |
|---|---|
| 1 Երուսաղէմ | 1 |
| 2 Եգիպտոս | 1 |
| 3 Բերիա | 1 |
| 4 Կիպրոս, Տարսոն, Սիս | 1 |
| 5 Մարաշ | 1 |
| 6 Հաճին | 1 |
| 7 Զէյթուն | 1 |
| 8 Ադանա | 1 |
| 9 Եդեսիա | 1 |
| 10 Տիգրանակերտ | 1 |
| 11 Բիւրախստան | 1 |
| 12 Պաղտատ | 1 |
| 13 Բաղէշ | 1 |
| 14 Վան | 3 |
| 15 Աղթամար | 1 |
| 16 Կարս | 1 |
| 17 Մուշ | 2 |
| 18 Երզնկա | 1 |
| 19 Բաբերդ | 1 |
| 20 Կարին | 2 |
| 21 Խարբերդ | 3 |
| 22 Արապկեր | 1 |
| 23 Բալու | 1 |
| 24 Գեղի | 1 |
| 25 Ակն | 1 |
| 26 Տիվրիկ | 1 |
| 27 Մալաթիա | 1 |
| 28 Կիւրին | 1 |
| 29 Անթէպ | 1 |
| 30 Քիլիս | 1 |
| 31 Շապին գարահիսար | 1 |
| 32 Սեբաստիա | 2 |
| 33 Եւդոկիա | 1 |
| 34 Մարզուան | 1 |
| 35 Ամասիա | 1 |
| 36 Տրապիզոն | 1 |
| 37 Ճանիկ | 1 |
| 38 Եոզղատ | 1 |
| 39 Կեսարիա | 2 |
| 40 Գաղատիա | 1 |
| 41 Կուտինա | 1 |
| 42 Զմիւռնիա | 1 |
| 43 Պրուսա | 1 |
| 44 Պանտրմա | 1 |
| 45 Նիկոմիդիա | 3 |
| 46 Ռոտոսթօ | 1 |
| 47 Ադրիանուպօլիս | 1 |
| 48 Վալաքիա | 1 |
| 49 Մոլտավիա | 1 |
| 50 Վառնա | 1 |
| Ընդ ամէն | 60 |

# ՔՐՈՆԻԿՈՆ

## ԱՂԻՒՍԱԿ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՅԵՏ ՔՐԻՍՏՈՍԻ

## ԴԱՐ Ժ.Ը.

---

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ԱՒԵՏԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՊԷՐՊԷՐԵԱՆ

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆԱՒՈՐ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՍԻՄԷՈՆ | ԶԱՔԱՐԻԱ | ՄՈՒՍՏԱՖԱ |
| Պատերազմ Տաճկաց ընդ Ռուսաց։ Սուլթան Մուստաֆա տայր հանդէս պատերազմի (էանաֆ ալայի)։ Այսպէս և դրօշակին Մահմէտի, և վասն անտանելւոյ գնոյ սպանան 'ի քրիստոնէից 127 անձինք։ Մազապուր գերծաւ գեաղանն Գերմանացւոց Գրումեան . . | Մարտ | 3 | 1769 | ՌՄԺԸ | ١١٨٢ | 7 | 7 | 13 |
| Տեղայց մարախ յոյժ 'ի Կոստանդնուպոլիս . | Յուլիս | 15 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Ի Ներքոյ Բէթրօ խանին 'ի Ֆէնէր' 'ի գիշերի կայծակնահար եղեալ տուն մի, այրեցաւ բոլորովին . . . . . . . . . . . . | . . . . | 24 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Աղա խանութն այրեցաւ. . . . . . . | Հոկտ. | 20 | 1770 | ՌՄԺԹ | ١١٨٤ | 8 | 8 | 14 |
| Բանակցի Յարութիւն Նուրիջանին Էջմիածնի փախեաւ 'ի Թրկաս . . . . . . . . . . | Օգոստ. | 14 | 1771 | ՌՄԻԱ | ١١٨٥ | 9 | 9 | 15 |
| Նաւք կոտեցան 'ի Դալաթիա ընդ Նաւամարս. այրեցին զնէնի գիւղ. և յետ աւուրց ինչ այրեցին և զպալատ գեղաղակին Բուռսայ 'ի Բերա . . . . . . . . . . . . . . | Փետր. | 12 | 1772 | ՌՄԻԲ | ١١٨٦ | 10 | 10 | 16 |
| Հրդեհ 'ի պալատն արքայի 'ի կողմն կանանոցին . . . . . . . . . . . . . . . . . . | Յունիս | 3 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |

| ՑԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնայ | Պատրիարքք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՍԻՄՈՆ | ԳՐԻԳՈՐ | ՄՈՒՍՏԱՖԱ |
| Հանդէս 'ի սիւրրէ ալայիին, յորս 'ի բազմութենէն կոխ լինել պատահեալ, մեռան 28 անձինք | Սեպտ. | 16 | 1772 | ՌՄԻԱ | ١١٨٦ | 10 | 10 | 16 |
| Գրիգոր պատրիարք հրաժարի, և յաջորդէ Զաքարիա | . . . | 29 | . . . | . . . | . . . | . . . | ԶԱՔԱՐԻԱ | . . . |
| Մեռանի սուլթան Մուստաֆա Գ. և յաջորդէ եղբայր նորա սուլթան Համիտ Ա. 'ի 40 գիլգաւէլի | Դեկտ. | 24 | 1773 | ՌՄԻԲ | ١١٨٧ | 11 | 1 | ՀԱՄԻՏ 1 |
| Թլփատեցաւ Սէլիմ արքայորդին Մուստաֆայի, գոլով տասներկու ամաց | Մայիս | 1 | 1774 | ՌՄԻԳ | ١١٨٨ | 12 | 2 | . . . |
| Հաշտութիւն Ռուսաց ընդ Տաճկաց | Սեպտ. | 2 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ յԷնիգափուսի դուռը | . . . | 6 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Տեղաց կարկուտ մինչև 40 դրամ կշռեալ | Մայիս | 20 | 1775 | ՌՄԻԴ | ١١٨٩ | 13 | 3 | 2 |
| Աթանաս եպիսկոպոս խայս եա 'ի Վէննա | Յունիս | 5 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Աշաղաղ ժողովրդեանն առաջնորդաւ, և միաբան բնակեցին Մեծամէջ, քան ծառայել հրամանաց ամիրայից. ընդ որ զանձն հարան հաստափառաց և պատրիարքն ևս. և մի ոմն ՚ի հաստափառաց Արքունեանն ասաց՝ այր արդարակ և խոհական՝ բայց ամենազայրացք և այլայլ՝ համոզողական խորհուրդ և ագերամաց հագին. հաշ կարող խոսփանել զչարն և յանդուգնել զպատահմամբ ժողովրդեան. | Դեկտ. | 4 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Արքունի հրամանաւ բնակեցին զբոսան և եղեն անձինս յարուեստաւորաց լինել առեւտ. և հայազարմս եկամուտ արկեղն պատրիարքարանին, և ասին կինքս ՚ի պատրիարքարանն և յամիրայից՝ չխառնել ընդ գործս նոցա ոլորտ և ֆիդէ եղանակաւ. . . . . . . | . . . | 12 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |

| ՑՈՒՑԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնի | Պատրիարք Կ. Պօլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՅՈՎՀԱՆՆԷՍ | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ՄՋԻՏ |
| Մեռաւ արքայի դուստր Էլիֆա Սուլթան․ | Յունիս | 25 | 1842 | ՌՄՂԱ | ١٢٥٨ | 10 | 2 | 3 |
| Թուղթ արքունի հարկին՝ որ երբեմն ազգայնոց յանձնեցաւ հաւաքել, այժմ յանձնեցաւ փոխանակէ Նազըրին, որ եւ յետոյ ստանձնեցաւ Իհթիսապ աղասիին · · · · · | Մարտ | 11 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Վախճանեցաւ Յովհաննէս կաթողիկոս Ս․ Էջմիածնի, եւ ընտրութեան միջոց առաւամ մի, 'ի յաջորդ ամին 1843 ազգային ժողովով ընտրել 'ի Ս․ Էջմիածին · · · · · · | Մարտ | 25 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Երկու անձնական ընկերութեան հաստատեաց ազգութիւնն 'ի գլխաւոր հաստատածասս, մին՝ Ասիականգամեան, եւ միւսն՝ Եւրոպականգամեան․ Ասիականգամեանն՝ կարգեցան Ռուզունեան Յարութիւն, Քիւրքճիեանցի Պետրոս, Միսաք, Ճէզայիրլեան Մկրտիչ, Պաղտասար Զարաղեան, եւ Գողոս Աշնամեան․ Իսկ Եւրոպականգամեանն՝ Ճանիկ, Մագոսուս, Մահտեսի Յարութիւն Կէլկէլեան, Աբրահամ Այլահվէրտեան, Յովհաննէս Թընկըրեան, եւ Յովսէփ Տավուսեան․ Եւ | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնայ | Պատրիարգք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | [illegible] | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ՄԷՋԻՏ |
| ացա պաշտօնէ գաղթականաց հարկս եւ տուրս իւրաքանչիւր քաղաքաց վերածել 'ի Կոստանդնուպօլիս, եւ հաստատանել արքունի գանձարանին ըստ ժամանակին։ Բայց ամենեցուն ացա գլուխ կարգեցաւ Ուղուրեան Յարութիւն ամիրայ՝ որում եւ Նիֆթիխար նիշանի պարգեւեաց Արքայ ակնածական . . . . . | Մարտ | 26 | 1842 | ՌՄՂԱ | ١٢٥٨ | . . . | 1 | 3 |
| Ութերին հատուածաք հայադիրք խոյս տուեն 'ի Ռուսաստան՝ մնանել ընդ իշխանութեամբ Ռուսաց . . . . . | Ապրիլ | 25 | . . . | . . . | . . . | . . . | . . . | 4 |
| Սկսաւ շինութիւն Փաշա գամուարին, որոյ ճարտարապետ կարգեցաւ Յոյն ոմն Հաճի Սամֆանի անուն . . . . . | Յունիս | 9 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ յՍէնի գիւղ, այրեցան 21 տունք Յունաց . . . . . | . . . | 24 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ 'ի Դատի գիւղ, այրեցան չորեքին տունք Հայոց . . . . . | . . . | . | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ 'ի Գարա կէօմրիւկ, այրեցան 19 տունք Տաճկաց . . . . . | . . . | 23 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնի | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեան |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | [illegible] | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ԱՊՏԻՒԼՄԷՃԻՏ |
| Հրկէզք սաստիկ 'ի Գալաթա զթաղս մասամբ ամս հայազգի, եւ բազմութեամբ կաշառաց զերծան. բայց Աստուածատուր պատրիարք հրաման կարդաց յեկեղեցիս Հայոց՝ չտանել առեւտուր ընդ Հրէից . . . . . . . | Յուլիս | 9 | 1842 | ՌՄՂԱ | ١٢٥٨ | . . . | 1 | 4 |
| Հրդեհ 'ի Գուրու չէշմէ, այրեցան 31 տունք Յունաց, եւ 3 Հայոց, եւ մի եւս Հրէից, եւ քանի մի կրպակք . . . . . . . . . . | . . . . | 25 | . . . . | . . . . | . . . . | . . . | . . . . | . . . . |
| Մեռաւ Արքայի գուսար Ճէմիլէ Սուլթան անուն րէճէպ 22 . . . . . . . . . . . | Օգոստ. | 6 | . . . . | . . . . | . . . . | . . . | . . . . | . . . . |
| Ծնաւ Արքայի որդի Սուլթան Ապտիւլ Համիտ, չապան 17 . . . . . . . . . . | Սեպտ. | 10 | . . . . | . . . . | . . . . | . . . | . . . . | . . . . |
| Բանն եւ խօթն հազարարձուք ընդդիմութիւն ամիրայից դնացին 'ի Դուռն արքունի՝ եւ հրաժարեցան 'ի պաշտամանէն . | . . . . | 23 | . . . . | . . . . | . . . . | . . . | 2 | . . . . |
| Առաքեաց արքայ զարքունի փառօզաւորն զՊարոն Յովհաննէս 'ի Փարիզ եւ 'ի Լոնտրա՝ 'ի չինութիւն կարեւոր մեքենայից չուխայի եւ այլոց կարեւորաց . . . . . . . . . | Հոկտ. | 15 | . . . . | . . . . | . . . . | . . . | . . . . | . . . . |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պօլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | [illegible] | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ՄԷՃԻՏ |
| Մեռաւ արքայի զօրաց Ալիէ Սուլթան . . | Հոկտ. | 17 | 1842 | ՌՄՂԱ | ١٢٥٨ | . . . | 2 | 4 |
| Հրդեհ 'ի Նաքըշ պէյ, այրեցան 48 տունք . | . . . | 18 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Եղեւ ժողով 'ի պատրիարքարանին ամիրայից եւ գլխաւոր արուեստաւորաց, եւ պատանեցաւ առաջին կոչեալ թուղթն՝ զոր ետուն ամիրայք, եւ վերատեսչութիւն ազգային հաշուապահութեան դրուեցաւ ձեռնեալ 'ի ձեռս ամիրայից . . . . . . . . . . | Նոյեմ. | 13 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ մեծ 'ի Լիվերպուլ քաղաք Անգլիոյ, որոյ վնասն հաշուեցին 11 հազար քսակ ոսկւոյ | Դեկտ. | 13 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Մեռաւ քոյր արքային Սուլթան Մէհմէտ Սալիհէ Սուլթան, որ էր կին ծովակալին Խալիլ փաշային . . . . . . . . . . . . . | Յունվ. | 24 | 1843 | ՌՄՂԲ | ١٢٥٩ | . . . | . . . | . . . |
| Փոթորիկ անհամեմատ հիւսիսային հողմով. 106 նաւք կորեան 'ի Պոնտոս . . . . . . . . | . . . | 25 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Եղեւ ժողով 'ի տունս Էջմիածնի 40 անձանց հոգեւորական եւ աշխարհական երեսփոխանաց վասն ընտրութեան նոր կաթողիկոսի, եւ առաջնորդական վիճակաց ընտրեցան. Տէր | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | [illegible] | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ՄԷՋԻՏ |
| Ներսէս Ե. Աշտարակեցի առաջնորդն Բեսա-րաբիոյ եւ Նոր Նախջեւանու. Զայս ընտրու-թիւն ուրբ Սինոդին ընկալեալ փոխարքային Վրաստանու՝ ծանոյց ՚ի Ս. Պետերբուրգ առ վեհափառ կայսրն Ռուսաց՝ հաստատել եւ վա-ւերացուցանել ըստ բարեհաճութեան կամաց իւրոց . . . . . . . . . . . . . . . . | Մայիս | 18 | 1843 | ՌՄՂԲ | ١٢٥٩ | . . . | 2 | 5 |
| Ճէզայիրլեան Մկրտիչ աքսորեցաւ ՚ի Պրու-սա յետ երկամեայ բանտարգելութեան . . | Յունիս | 9 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Եկն կարկուտ խոշոր ՚ի Կոստանդնուպօլիս 50 դրամոց ծանրութեամբ . . . . . . . | . . . | 10 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Ալպէրթ Իշխան որդի թագաւորին Բրու-սիոյ եկն ՚ի Կոստանդնուպօլիս, եւ հրաւիրե-ցաւ ՚ի մեծ կոչունս արքայի ՚ի պալատն Պէյ-լէրպէյի, ընկերակցութեամբ եւ այլոց դես-պանաց տէրութեանց, եւ նախարարաց ար-քայի . . . . . . . . . . . . . . . . | . . . | 15 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Կայսրն Ռուսաց հաստատեալ զընտրութիւն սրբազան կաթողիկոսին Ներսիսի, հրաւիրեաց | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեան |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ՄԷՃԻՏ |
| 'ի Պետրբուրգ՝ տարով յարքունուստ զամենայն ծախս ճանապարհին . . . . . . . . . . | Յունիս | 15 | 1843 | ՌՄՂԲ | ١٢٥٩ | 1 | 2 | 5 |
| Հրդեհ անկեալ 'ի Կարին, այրեցան 345 խանութք և մթերանոցն . . . . . . . . | Օգոստ. | 6 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Ներսէս կաթողիկոս հրաւիրեցաւ 'ի Պետերբուրգ ամիս երկուս, հրաման արար կայսրն ձմերել 'ի Պետերբուրգ. և 'ի մտանել գարնան յաջորդ տարւոյն երթալ 'ի ճանապարհ դառնալ յԷջմիածին . . . . . . . . . . | . . . | 13 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Սամաթիացի երիտասարդ մի հայազգի Յովակիմ անուն՝ որ չորս ամօք յառաջ ընկալեալ էր զՄահմետական օրէնս, և ապա զղջացեալ և կերպարանափոխ եղեալ բառ տարազու Եւրոպացւոց շրջէր յանծանօթս, ճանաչեալ ոմանց կալանաւորեալ մատնեցաւ 'ի ատեան. Դեսպանն Անգղիոյ Լորտ Քաննինկ թախանձեալ յաղագս կենաց երիտասարդին, բազմօք աշխատ եղեւ ազատեցուցանել 'ի մահուանէ, բայց կառավարութիւնն զգլ- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնի | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեան |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ՄԷՃԻՏ |
| խառնեաց 'ի Պալըղ բազար գիւղն Կ. Պոլսոյ, եւ բեզոյին (չուզղա) եղաւ ընդ երաստանաւ. գլխատակոյն . . . . . . . . . . . . . . . . | Օգոստ. | 17 | 1843 | ՌՄՂԲ | ١٢٥٩ | 1 | 2 | 3 |
| Աւարտեցաւ շինութիւն փաշայ գաւթուխին, եւ ճարտարապետ նորին Սաքէֆանի ընկալաւ նշան պատուոյ 'ի Բ. Դրանէ . . . . . . . . | . . . | 27 | . . . | ՌՄՂԳ | . . . | . . . | . . . | . . . |
| Անձրեւ սաստիկ յՕրթագիւղ, կործանեցան երկու տունք, եւ ջրատար եղեն երկու կանայք եւ երեխայ մի. քակեցան եւ բազում տունք, լցան ջրհորք եւ փողոցք աւազովք: Նոյնպէս եւ 'ի Գասըմ փաշա, 'ի Պէշիկթաշ, 'ի Պալթա լիմանի, 'ի Չէնկէլ գիւղ, եւ 'ի Գուզկունճուք . . . . . . . . . . . . . . | Սեպտ. | 30 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Մէհմէտ Ալի փաշայն Եգիպտոսի առաքեաց ընծայ արքայի գինկ անուն արծաթապատ գեղեցիկ շոգենաւն . . . . . . . . . . . . | Նոյեմ. | 2 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Շարժ սաստիկ 'ի Կարին, որ կործանեաց ըզ բազում ծխնելոյզս, քրանի մի տունս, եւ ըզ մի մասն բերդին, եւ մնաց ընդ փլատակօք | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պօլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հինգ անձինք . . . . . . . . . . . . . . . | | | | | | ՆԵՐՍԷՍ | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ՄԷՃԻՏ |
| Ջիւն առատ էկ 'ի կարին, ամպատարծոցք բազումք մեռան, եւ տունք թաղեցան 'ի մէջ ձեան զաւուրս 16, եւ մեռան բազումք յանսուաղութենէ . . . . . . . . . . . | Հոկտ. | 14 | 1843 | ՌՄՂԲ | ١٢٥٩ | 1 | 2 | 5 |
| Պօղոս պէյն Եգիպտոսի մեռաւ. եւ թաղեցաւ փառօք յԱղէքսանդրիա. 44 ամ եկաց 'ի պաշտօն վերատեսչութեան Եգիպտոսի, եւ մեռաւ 75 ամաց։ Մարմինն թաղեցաւ նախ յեկեղեցւոջ Աղէքսանդրիոյ. բայց ապա բառ խնդրոյ ազգականաց հանգուցելոյն՝ հրամանաւ փոխարքային հանեալ անտի եւ դնեալ, բերաւ 'ի Զմիւռնիա, որում բազում երախտիս պարտեալ էր. եւ թաղեցաւ 'ի դիրս հարց իւրոց . . . . . . . . . . . . . | Դեկտ. | 12 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Առատացեալ գետոյն Մէրիճ եւ Թունճա եւ Արտա յԱնդրիանուպօլիս, կործանեցան 200 տունք, եւ ջրահեղձ մեռան 5000 ոգիք . . | . . . | 23 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Ի Ռումէլի 'ի գաւառն Լիբրիկէ 'ի գեղջն Կա- | Փետր. | 1 | 1844 | ՌՄՂԳ | ١٢٦٠ | . . . | . . . | . . . |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պօլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ՄԷՃԻՏ |
| զապխս՝ ապստամբեալք Տաճկաց, դարձուցին 'ի կրօնս իւրեանց զՅոյն բնակիչս քաղաքին, եւ զքահանայ նոցին կախեցին . . . . . . . | Փետր. | 11 | 1844 | ՌՄՂԳ | ١٢٦٠ | 1 | 2 | 5 |
| Գաղղիոյ եւ Անգլիոյ տէրութիւնք պահանջեցին յարքայէ զազատութիւն եւ զհամարձակութիւն կրօնի ամենայն ազգաց, այնպէս զի թէ ուրացեալ ոք վերստին դարձցի յիւր կրօնս, մի լիցի նմա բռնութիւն. Բ. Դուռն խնդրեաց եօթն ամսոյ ժամանակ 'ի համոզել զհասարակութիւն իւրեանց առ սակաւ սակաւ 'ի մասին յայսմիկ, զի մի ծագեսցի աղմուկ ինչ 'ի ժողովրդեանն . . . . . . . . | Փետր. | 21 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրամանաւ արքայի եղեւ աշխարհագիր 'ի Կ. Պօլիս եւ 'ի գիւղօրէս, եւ արձանագրեցան ամենայն բնակիչք, եւս եւ Եւրոպացիք . | . . . | 23 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Ճէզայիրլեան Մկրտիչ դարձաւ յաքսորանացն 'ի Պրուսայէ 'ի Կ. Պօլիս . . . . . . . | Մարտ | 6 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Արքունի հրամանաւ կոչեցան ամենայն Տաճիկք 'ի մզկիթս, եւ պատուէրք 'ի նոցանէ | | | | | | | | |

| ՑՈՒՑԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պօլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ՄԷՃԻՏ |
| ընտրեցան 'ի գլխաւորութիւն, բայց ոչ 'ի կոստանդնուպօլսեցւոց, այլ յԱսիացւոց եւ յեւրոպական կողմանց եկելոց . . . . . . . . | Մարտ | 12 | 1844 | ՌՄՂԳ | ١٢٦٠ | 1 | 2 | 5 |
| Հրամանաւ արքայինշան ակնեղէն Թուղրայի տուաւ Տատեան արքունի վառօդապետաց, եւ արքունի ճարտարապետաց, դնել 'ի վերայ փէսից իւրեանց . . . . . . . . . . . . . | Ապրիլ | 1 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Գնաց արքայ 'ի Նիկոմիդիա յայցելութիւն գործարանացն չուխայի, որք էին ընդ վերակացութեամբ Յովհաննու Տատեան. եւ անտի գնաց 'ի Պրուսա տեսանել զհանքային բաղանիսն, եւ դարձեալ անտի եկեալ 'ի չոգենաւ, եւ ելեալ արտաքս 'ի Նեղուցէն Ձանաղգալէի, գնաց 'ի Միտիլլի. եւ յետ 23 օրեայ ճանապարհորդութեան իւրոյ վերադարձաւ 'ի կոստանդնուպօլիս։ Ուղեկից էին արքային եւ 'ի միրաղնեայց վառօդապետացն Յովհաննէս եւ Պօղոս, ճարտարապետացն Կարապետ եւ Յովհաննէս, եւ Տիւզեանք Կարապետ եւ Յակոբ, | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեան |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ՄՃԻՏ |
| որոց եւ պարգեւեաց մէն մի ադամանդեայ տուփս 'ի փարձաւորութիւն նոցին հաւատարիմ ծառայութեանց . . . . . . . . . | Մայիս | 13 | 1844 | ՌՄՂԳ | ١٢٦٠ | 1 | 2 | 6 |
| Յորժամ 'ի Միսիլլի էր արքայ, փութային Զմիւռնացիք 'ի տես գալ արքային 'ի բարեմաղթութիւն, եւ 'ի մերձաւորաց հոգեւոր առաջնորդն նոցա տէրն սրբազանն Մաթէոս եւ Ազգային հոգաբարձուք եկեղեցւոյն՝ եկին ընդ առաջ արքային բարեմաղթութեամբ եւ օրհնութեամբ. եւ արքայ պարգեւեաց եւ զգեցոյց նոցա զմի մի խիլայ 'ի պատուական չուխայէ, եւ սրբազան արհւոյն ետ ցփոխ պատուական . . . . . . . . . . | . . . | . | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Ի վերադառնալ արքային 'ի Կոստանդնուպօլիս, ընդ առաջ եկին նմա յամենայն ազգաց գլխաւորեալք եկեղեցականք եւ աշխարհականք, եւ 'ի գիշերին եղեւ ջահալոյց ընդ ծով եւ ընդ ցամաք . . . . . . . . . | . . . | 29 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Օծումն սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն Այի | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնի | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ | ՄԷՃԻՏ |
| Սուլթանայի փառաւոր հանդիսիւ . . . . . | Յունիս | 13 | 1844 | ՌՄՂԳ | ١٢٦٠ | 1 | 2 | 6 |
| Հռչակաւոր օդագնաց Փօմարին օդապարիկ գնաւ. իւրով վերացաւ յօդս 'ի Պէյօղլուէ 'ի 5½ ժամու 40 մղոնաչափ բարձրութիւն եւ աներեւութացեալ, էջ 'ի դաշտ մի մերձ 'ի Նալլըխա . . . . . . . . . . . . . . . | . . . . | 26 | . . . . | . . . . | . . . . | 2 | . . . . | . . . . |
| Ազգային ժողով եղեւ 'ի պատրիարքարանն, Աստուածատուր եպիսկոպոս հրաժարեցաւ 'ի պատրիարքութենէն, եւ ընտրեցաւ Մատթէոս արքեպիսկոպոս առաջնորդն Զմիւռնիոյ հաւանութեամբ ժողովոյն. եւ գործուածս գայր ծանուցեալ 'ի Բ. Դուռն, որ յատուկ հրամանագրով իւրով հաստատեաց, հրաւիրեալ առաքեցին 'ի Զմիւռնիա զԱրքեպիսկոպոսն փութապես ընդ հագեծին որով 'ի նորընտիր պատրիարքին եւ զաւէր Արքէն քահանայ լուսաւոր Մայր եկեղեցւոյն եւ դերկուս ժամանակոյս հանդերձ միով պաշտօնատարաւ Բ. Դրան . . . . . . . . . . | Յուլիս | 1 | . . . . | . . . . | . . . . | . . . . | . . . . | . . . . |
| Հրդեհ 'ի Պէյլէր պէյի, այրեցան յիսուն ծա- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնի | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| վերջերեայ յարկք մեծամեծաց եւ բազում խանութք . . . . . . . . . . . . . . . . . | Յուլիս | 10 | 1844 | ՌՄՂԳ | ١٢٦٠ | 2 | 1 | 6 |
| Հրդեհ 'ի Ֆինճանճեանէն Խասգիւղի, այրեցաւ բոլորովին . . . . . . . . . . . . . . . | . . . . | 8 | . . . . | . . . . | . . . . | . . . . | . . . . | . . . . |
| Նորընտիր Մատթէոս պատրիարքն յերկուշաբթի աւուր ելեալ 'ի շողենաւէն, հանդիսիւ մեծաւ գնաց 'ի պատրիարքարանն, ուր ապաւէր հրովարտակն եկեալ 'ի Բ. Դրանէ. եւ անտի գնաց 'ի Բ. Դուռն ընկերակցութեամբ վեց վարդապետաց եւ վեց իշխանաց, եւ ութ հողաբարձուաց. յառաջոյ նորա գային քահանայից եւ յետուստ նորա անհամար ժողովուրդք. եւ հասեալ 'ի Դուռն, ներկայանայր արտաքին գործոց նախարարին, արդարութեան բարձրագոյն ատենին, եւ մեծի վէզիրին. եւ ընկալեալ զնշան պատւոյ ակնածական յարգանօք եւ մեծարանօք, դարձ առնէ 'ի պատրիարքարանն, յառաջոյ նորա 30 չաւուշք, եւ 40 գաւասք, եւ յետուստ նորա բազմաթիւ ժողո- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնի | Պատրիարքունք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| վուրցք. եւ հասանել 'ի Մայր եկեղեցին, համառօտ եւ գեղեցիկ առանձնաբանութեամբ առնէ բարեմաղթութիւնս արքային, եւ աղօթս վասն միաբանութեան ազգին, եւ պայծառութեան սուրբ եկեղեցւոյ . . . . . . . . . . | Յուլիս | 17 | 1844 | ՌՄՂԳ | ١٢٦٠ | 2 | 1 | 6 |
| Տէր Եղիա կաթողիկոսն Աղուանից՝ որ յառաջագոյն քանաւոր պատճառի եկեալ էր 'ի Կոստանդնուպոլիս, մատոյց Պատարագ 'ի սուրբ Երրորդութեան եկեղեցին Հայոց, որ 'ի Պէյօղլու, Հայազգի գրքոց եւ ըստ արարողութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, յարուցմն երկայ զատն անհամար ժողովուրդք յամենայն ազգաց. եւ 'ի յաջորդ աւուրն գնաց 'ի պատրիարքարանն Հայոց վասն շնորհակալ լինելոյ զորբացան պատրիարքէն, որ յանկարծ նմա մատուցանէ վասն պատարագելոյ. երբ եւ կամեցի նա . . . . . . . . | . . . | 30 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Օծումն սուրբ Կարապետ նորաշէն եկեղեցւոյն Խասգիւղու . . . . . . . . . . | Օգոստ. | 19 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնայ | Պատրիարքք Կ. Պօլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| Հրդեհ 'ի Կոստանդնուպօլիս 'ի թաղն Աթ բազար, այրեցան 150 տունք, եւ 200 խանութք . . . . . | Սեպտ. | 11 | 1844 | ՌՄՂԳ | ١٢٦٠ | 2 | 4 | 6 |
| Ազգային ժողով 'ի պատրիարքարանին Հայոց յորում սահմանադրութեամբ ամենեցուն սկսաւ յիշատակութիւն անուան Տեառն Ներսիսի սրբազան կաթողիկոսին . . . . . | Սեպտ. | 14 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ 'ի Փաշա մահալլէսի թաղն Գէչիկ-թաշու . . . . . | . . . | 15 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ 'ի Գէյօղլու, 'ի թաղն Փիւչիւկ մէզարլըք, այրեցան 160 տունք, յորոց բազումք հոյակապ շինուածք էին, եւ ընդ փլատակօք մեռան երեք անձինք . . . . . | . . . | 20 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Մեռաւ որդի արքային Սուլթան Մէհէմմէտ Րէշատ 'ի 21 չէվալի 1260 . . . . . | Հոկտ. | 28 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ 'ի թաղն Ալաճա համամի, այրեցան 40 տունք եւ 27 խանութք . . . . . | Նոյեմ. | 8 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Գընալը ատա արքունի հրամանաւ տուաւ Հայոց 'ի շինութիւն տանց, այսու պայմանաւ. | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսն Էջմիածնայ | Պատրիարքն Կ. Պոլսոյ | Թագաւորն Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՋԻՏ |
| գի ով որ փութով կամիցի շինել զտուն, տանու ձրի 300 կանգուն երկիր. եւ ոչ թէ տանել ձրի եւ չշինել, եւ զերկիրն վաճառել այլոց. Եւ բաց 'ի 300 կանգնոցն՝ թէ կամիցի գնել այլ եւս զետին, տա մի կանգունն հինգ փող վճարեսցէ Էվգաֆին . . . . . . . . . . | Նոյեմ. | 46 | 1844 | ՌՄՂԳ | ١٢٦٠ | 2 | 1 | 6 |
| Հրդեհ յԷնիփգիւղ. այրեցան 130 տունք, 60 կրպակք. 48 ծովեզերեայ յարկք . . . . | Փետր. | 5 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Մեռաւ արքայի զաւակ Սամիէ Սուլթան . | . . . | 9 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ դարձեալ յԷնի գիւղ. այրեցան 55 տունք . . . . . . . . . . . . . . . | . . . | 27 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Ի կողմանց Անատոլուի եւ Ռումէլիի կոչեցան հրամանաւ արքայի երեսփոխանք յիւրաքանչիւր տեղէ 'ի Կ. Պոլիս եւ գնացեալ 'ի Բ. Դուռն 'ի ժողովս արդարութեան, եւ հարցափորձ արարեալ զվիճակէ հասարակութեան քաղաքի իւրեանց, եւ զորպիսութենէ կառավարչաց, եւ զվաճառաց տանուտերաց, եւ զայլս այլս խնդրոց նոցին, եւ ըստ նոցա զծախս ճանա- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեան |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| պարգեւին, եւ առաքեցին 'ի Անգլիա խոբեանց . | Ապրիլ | 1 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | ՆԵՐՍԷՍ<br>3 | ՄԱՏԹԷՈՍ<br>2 | ՄԷՃԻՏ<br>7 |
| Կարապետ պատրիարքն Հռոմէական Հայոց առ ծերութեանն հրաժարեցաւ, եւ յաջորդեաց նմա Անտոն եպիսկոպոս Հասունեան . | . . . | 3 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Պաշտօն քէհեայի պատրիարքին Հայոց Գ. Մարգար, եւ քարտուղար նորին Աւետիս Վ. Պէրպէրեան, եւ եկեղեցպան Գ. Սարգիս՝ 'ի գլխոց նորին ուրացութեանն գնացին 'ի շնորհաւորութիւն պատրիարքին Հռոմէական Հայոց. այս եղեւ սկիզբն երթեւեկութեան նոցին առ միմեանս . . . . . . . . . . | . . . | 7 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրամանաւ Բ. Դրան փոխեցաւ գլխարկ եկեղեցականաց Հայոց, եպիսկոպոսաց եւ վարդապետաց 'ի մանուշակագոյն Թաւիշէ, եւ քահանայից 'ի սեաւ չուխայէ . . . . . . . | . . . | . | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Սուլթան Մէճիտ գնաց 'ի Նիկոմիդիա յայցելութիւն գործարանացն չուխայի եւ մետաքսի, եւ հաւանեալ յոյժ, կոչեաց զվերատեսուչ նոցին Յովհաննէս Տատեան. եւ ետ նմա, խրախ- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսունք Էջմիածնի | Պատրիարգունք Կ. Պօլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| րեա յինէն եւ տայց քեզ։ Եւ նա խնդրեաց ըզ հացային հիւանդանոցին Հայոց. եւ հրամանաւ արքային կարգեցաւ հացային յաւուրն 100 դահեկան 'ի գանձէ արքային . . . . . . . . . | Ապրիլ | 14 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Գերմանոս պատրիարք Յունաց անկաւ 'ի պատրիարքութենէն, եւ յաջորդեաց նմա Մելիտոս մետրապօլիտն Նիկիոյ . . . . . . . . . | . . . | 17 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հարսանիք Ադիլէ Սուլթանի քեռ արքային, որ տուաւ 'ի կնութիւն Մէհմէտ Ալի փաշային. հանդէսն եղեւ յԻւսքիւտար 'ի Հայտար փաշա ապարանոցն արքային, որ անուանեալ դաւուրբա-եօթն։ Հրաւիրեցան 'ի հարսանիս եւ պատրիարքունք Հայոց, Յունաց, Հռոմէական Հայոց, եւ Ռաբբին Հրէից. եւ յետ փառաւոր հանդիսութեան ներկայացան արքային 'ի շնորհաւորութիւն եւ 'ի շնորհակալութիւն. որ խորին մարդասիրութեամբն ընկալաւ զնոսա, եւ հրամայեաց փոխել զշքանշանս նոցա, եւ տալ զադամանդեայ շքանշանն բարձր աստի- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՐԵԽԵԼԻ ԽՐԱՏ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՋԻՏ |
| ձանի խորհրդականութեան (միւսթէշար փաշէարի)․ ի հանգիստ յայտնիկ 'ի չորեքշաբթի աւուր հռչակաւոր ազգայնոց Թոմարին իւրով ահագին ազատարիկ գնտոյն բարձրացուցօդն, եւ ապաւէ անդ մինչեւ 'ի կատարած աշխարհի . . . . . . . . . . . . . . . . | Ապրիլ | 18 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Երեք Գուխարացի Տաճիկք յԱւստրիական Իմպէրաթօրիչէ շոգենաւէն՝ որ գայր 'ի Տրապիզոնէ 'ի Կ․ Պոլիս, սպանին զերիս անձինս 'ի ճանապարհորդաց, որոց անուանքն են, Ազապարպ փառաւական Հայազգին Տրապիզոնցի, Մարինովիչ գրագիր նաւապետին, եւ Փիլացի Յոյն մի․ Վիրաւորեցին եւ զեւս անձինս․ Տեսեալ նաւապետին զկատաղութիւն սոցա, եւ ոչ կարելով ըմբռնել եւ կապել զնոսա, հրաման ետ նաւաստեացն, որք անմիջապէս հրացանս արձակեալ 'ի վերայ նոցա, սպանին զնոսա, եւ ընկեցին 'ի ծով . . . . . . . | Մայիս | 5 | . . . . | . . . . | . . . . | . . . . | . . . . | . . . . |
| Հրդեհ 'ի Սամաթիա․ այրեցան 400 տունք | | | | | | | | |

| ՑԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնի | Պատրիարքք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեան |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| Հայոց, և 150 տունք Յունաց, և 160 խանութք. խղճալիք Հայոց գնացեալք 'ի հիւանդանոցին առաջնորդութեամբ Մատթէոս պատրիարքին, որ 'ի քսակէ իւրմէ 25 հազար դահեկանս ետ առ օգնութիւն ըստ հարկաւորութեան հրկիզեալ գերդաստանացն ողորմելեաց. օգնեցին բազմաց և փառօղացելոց կերակրովք և զգեստուք և արծաթովք . . . . . | Մայիս | 5 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Եկն կոնդակ օրհնութեան և նամականի 'ի Տէր Ներսէս կաթողիկոսէն ամենայն Հայոց 'ի Գրիգորեան . [illegible] թերցաւ 'ի Մայր եկեղեցւոջ պատրիարքարանի փառաւոր հանդիսիւ. Գրեալ էր 'ի նամակին, եթէ հանդերձեալ է ելանել երթալ 'ի Պետերբուրգ 'ի յունիսի 9, և յետ վերադառնալոյն անտի յէջմիածին, օծանել կաթողիկոս . . . | Յունիս | 5 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Մատթէոս պատրիարքն գնաց 'ի Ղալա-գիւղ առ Ռիզա փաշայն 'ի շնորհակալութիւն վասն ընդունելոյն զչքանչանն Միւաթէշարու- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| թեան։ Սոյն ամին աղերս մատոյց Նորին վսեմութեանն վասն շնորհելոյ մեզ զձեռնարանն մեր 'ի Սկիւտար, զոր երկու ամօք յառաջ արարեալ էր Տէրութիւնն հիւանդանոց աղքատի զօրաց։ Ի յաջորդ աւուրն գնաց եւ 'ի Գամլըճա առ Շէյխի էֆէնտի արտաքին գործոց նախարարին, եւ [illegible] եւ նմա . . . . . . . . . . . . . . . . | Յունիս | 5 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | • |
| Ռուսաց կայսեր որդի մեծ Դուքսն Կոստանդիանոս եկն 'ի Կ. Պօլիս Գերապայծառ շոգենաւով, եւ գնաց 'ի պալատն գեղապանծն 'ի Պէյլէրպէյի։ Նորին կայսերական մեծութեան ուղեկից էին փոխանորդ ծովակալի Միւսիւ Լութքը, զնդապետ Լութքովսքի, առաջինն Կրին, եւ բժիշկն Հօրովից, եւ Հայազգի երեւելի ծովանկար պատկերահան Յովհաննէս Այվազովսքին, եւ երկու ծովային պաշտօնատարք։ Ի յաջորդ աւուրն գնացին 'ի դիմաց արքայի 'ի շնորհաւորութիւն զա- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնի | Պատրիարք Կ. Պօլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| յառնեն նորա՝ ծախապէս Խալիլ փաշային, արտաքին գործոց նախարար Շէքիպ էֆէնտիին, եւ Բ. Դրան առաջին Թարգմանին․ Յետ երից աւուրց հրաւիրեցան 'ի պաշտօնատունն 'ի Պէյլէրպէյի, եւ ընկալան ընդունելութիւն մեծ արքայավայել փառօք . . . . . . . . . . . | Յունիս | 6 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Անտոն Հասունեան պատրիարքն Հռոմէական Հայոց եկն առ Մաթէոս պատրիարքն 'ի Պատրիարքարանն Հայոց 'ի շնորհաւորութիւն արքայապարգեւ շքանշանին․ եւ եւս ընդունելութիւն արժանաւոր յարգութեամբ եւ մեծարանօք․ Յիշատակութեան արժանի է այս, զի ոչ բարեհաճեցաւ արքայական եպիսկոպոսն մտանել յեկեղեցին մեր՝ գոնէ այցելութեան եղանակաւ, որով գայթակղեցոյց զժողովուրդն Հայոց . . . . . . . . . . . | . . . | 7 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Մաթէոս պատրիարքն գնաց յԱրնաւուտ գիւղ առ Մելետիոս պատրիարքն Յունաց 'ի շնորհաւորութիւն շքանշանին, եւ ընկալաւ | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆԱՒՈՐ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| ընդունելութիւն մեծ արժանաւոր յարգութեամբ և մեծարանօք . . . . . . . . . . . | Յունիս | 8 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Մելետիոս պատրիարքն Յունաց փոխադարձ քաղաքավարութեամբ եկն յայցելութիւն Մատթէոս պատրիարքին Հայոց, և նախ իջեալ 'ի Մայր եկեղեցին' եղ յԱւագ խորանն սուրբ և երկիր եպագ, և ապա ելեալ 'ի Պատրիարքարանն, մեծարեցաւ յոյժ, և դարձաւ 'ի տեղի իւր . . . . . . . . . . . . . . | Յունիս | 11 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Ռուսաց կայսրորդին մեծ Դուքսն Կոստանդինոս 'ի չորեքշաբթի աւուր բարեհաճեցաւ գալ յայցելութիւն 'ի Մայր եկեղեցին Հայոց 'ի Դումգափու, ուր մեծաւ ջերմեռանդութեամբ երկրպագեալ սրբոց խորանացն և համբուրեալ զԱւետարանն սուրբ, եկ ապա 'ի Պատրիարքարանն Հայոց յայցելութիւն Մատթէոս պատրիարքին, որ ակնածական մեծարանօք և արժանաւոր պատուով ընկալաւ զօգոստափառ Այցելուն. Ընկերակից էին մեծ | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| Դքսին Ռիֆաթ փաշային, եւ չորս երեւելի հազարապետաց, դեսպանին Ռուսաց, դեսպանատան առաջին Թարգման Խանչէրլի պէյին, եւ չորս գլխաւոր պաշտօնատարք Ռուսաց, եւ Հայազգի Յովհաննէս Այվազովսքի պատկերահանն ։ Օգոստափառ Դուքսն 'ի նոյն աւուր գնաց յայցելութիւն սուրբ Փրկչի հիւանդանոցին Հայոց յԵէտիգուլէ . . . . . . . . . . | Յունիս | 13 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Մատթէոս պատրիարքն ընկերութեամբ եկեղեցականաց եւ քանի մի աշխարհականաց յարգի անձանց՝ գնաց 'ի Ղալաթիա յայցելութիւն հռոմէական Հայոց պատրիարքին, եւ ընկալեալ մեծարանս եւ պատիւ յոյժ, դարձաւ 'ի տեղի իւր . . . . . . . . . . . . . | . . . . | 14 | . . . . | . . . . | . . . . | . . . . | . . . . | . . . . |
| Հրէից մեծ Ռաբբին եկն 'ի Պատրիարքարանն Հայոց յայցելութիւն սրբազան Պատրիարքին վեց ռաբունեօք եւ երեք նշանաւորօք եւ քանի մի սպասաւորօք . եւ ընկալեալ պատիւ մեծ՝ դարձաւ 'ի տեղի իւր . . . . . . | . . . . | 15 | . . . . | . . . . | . . . . | . . . . | . . . . | . . . . |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթուղիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պօլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄՃԻԴ |
| Վեհափառ արքայն արար փառաւոր հացկերոյթ և ընդունելութիւն մեծ 'ի Պէյլէրպէյի 'ի պալատն իւրում հրաւիրեալ զօգոստափառ դուքսն Կոստանդինոս և զընկերակիցս նորին. որ հրաւիրեցան նաև դեսպանք եւրոպական տէրութեանց, և բդեշխք և ատենակալ իշխանք արքայի . . . . . . . | Յունիս | 16 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Մատթէոս պատրիարքն գնաց 'ի Պալատ յայցելութիւն թագուհւոյն Հրէից, որ ընկալաւ բազում պատուով, և վերադարձաւ 'ի տեղի իւր . . . . . . . . . . . . . . . . | . . . | 18 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Դուքսն Կոստանդինոս գնաց 'ի Հէյպէլի կղզին, և կեցեալ անդ օր մի, գնաց անտի շոգենաւով 'ի Նիկոմիդիա, և անտի 'ի Պրուսա . | . . . | 21 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Դուքսն Կոստանդինոս գնացեալ 'ի Պրուսա, իջեւանեցաւ դաւուրս երկու յառաջնորդարանին Հայոց. և 'ի դարձին իւր շնորհեաց Դէորգ վարդապետի առաջնորդի քաղաքին մատանի ադամանդեայ 3000 դահեկանաց ար- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնայ | Պատրիարքք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| ժէխ.ք · 1000 գահեկան՝ ապաստարաց առաջնորդարանին, եւ ամկի տուփ մի Թարթաբեան Մարտիրոսի՝ որ Թարգմանն էր անդ քոնսոլին . | Յունիս | 27 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Հրդեհ անկանի 'ի Տփխիս, որոյ վնասն հաշուի եօթն միլիոն գահեկան . . . . . . . . | . . . | 30 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Գետն Գանգէս 'ի Հնդկաստան առատացեալ ծածկէ զերեք մասն Բանգալու գաւառս բազում · բնակիչք 'ի ծառս ելեալ մնացին անսուաղ, նաւք բազումք անկեալ 'ի ջուրս 'ի մակընթացութենէ ծովուն՝ խորտակին, եւ այլ եւս վնասք բազումք . . . . . . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Գաղղիոյ թագաւորի որդի դուքսն Մոնթբանսիէ եկն 'ի Կոստանդնուպօլիս Կօմէր շոգենաւով · եւ արքայավայել պատուով ընկալաւ զնա արքայ · եւ զաւուրս վեց պահեալ քարանթինա յԱյա Ստէֆանոս 'ի թագաւորական հովանոցն · եւ ապա շրջեցաւ յերեւելի մզկիթս Կոստանդնուպօլսոյ, 'ի փողերանոցն, 'ի նաւահանգիստն, եւ 'ի պատրիարքարանս Հայոց եւ | | | | | | | | |

| ՑԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| Յունաց. եւ յետ 22 աւուրց գնաց 'ի Զմիւռնիա, ուր շնորհեաց հրկիզելոցն ողորմութիւն 20 հազար դահեկան։ Արքայորդին 'ի ձեռն դեսպանին Գաղղիոյ նուիրեաց զադամանդեայ տուփ մի մեծագին՝ վառօդայեա Յովհաննէս ամիրայի Տատեան, շնորհակալ լինելով զքաղաքավարական մարդասիրութեանց նորա, որ պատուաստեալ է զիշխանն յաւուրս քառասնօրեայ զգուշութեան յԱյի Ստէֆանայ հովանոցին . . . . . . . . . . . . . . | Օգոստ. | 4 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Հրդեհ յՕրթագիւղ. այրեցան ծովեզերեայ կրպակք 56, եւ տունք 50, ախտահոկայն Հըրէից, աղանդաւորք 2, գինետունք 3, ջաղացք մի, եւ փոքր խանութք 30 . . . . . | . . . | 15 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Շարժ մեծ 'ի Միտիլլի կղզին, քաղում տունք խանութք, եւ եկեղեցիք փլան . . . . . . | Սեպտ. | 29 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ մեծ 'ի Զանագ գալէ. բովանդակ թաղք Հրէից եւ Յունաց այրեցան, եւ 70 տունք Հայոց, 40 տունք Տաճկաց, եւ 2 մզկ- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսն Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| կիթք, եւ բազում կրպակք եւ շտեմարանք . | Հոկտ. | 16 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Աւարտեցաւ շինութիւն երկաթի գործարանին 'ի Զէյթին պուրնի մերձ յԱյա Ստեփանոսի, որ ձուլեցաւ 26 կանգուն լայնութեամբ միակտուր երկաթի կամուրջ ինն վասն միաւորելոյ զՉըրաղանի պալատն ընդ մեծ պարտիզին. եւ 'ի տես այսր գնաց արքայ ընդ երեւելի նախարարաց, եւ հաճեցեալ յոյժ, շնորհեաց զադամանդեայ մեծագին տուփս վառօդապետաց Յովհաննէս եւ Պօղոս ամիրայից Տատեան, եւ ճարտարապետի կարապետ ամիրային, եւ որդւոյ նորին . . . | . . . | 25 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Պաշտօնանկեցաւ Մելետիոս պատրիարքն Յունաց, եւ յաջորդեցաւ նմա Անթիմոս. յորոյ 'ի շնորհաւորութիւն գնաց Մատթէոս պատրիարքն բազմութեամբ եկեղեցականաց, եւ պատուեցաւ մեծաւ ընդունելութեամբ . . . | Նոյեմ. | 27 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Ներսէս կաթուղիկոս եհաս 'ի Տփխիս, եւ մեծահանդէս շքով ընկալեալ եղեւ 'ի քաղա- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնի | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՋԻՏ |
| հայ քաղաքին . . . . . . . . . . . . | Դեկտ. | 17 | 1845 | ՌՄՂԴ | ١٢٦١ | 3 | 2 | 7 |
| Նշանեցաւ Վրթանէս Նորատանգ քահանայն եկեղեցւոյն Նիկոմիդեայ. ընդ նմին եւ քանի մի յամանակաւ աղգատանցք համանոր նմին . . . . . . . . . . . . . | Յունվ. | 12 | 1846 | ՌՄՂԵ | ١٢٦٢ | 4 | 3 | 8 |
| Եէնիչէհիր Բումելիի տեղաց յերկրից մանանայի նման հիւթ իմն դորչագոյն (սրճագոյն) կարկառաչափ մեծութեամբ. յորմէ ընակիչք տեղւոյն ժողովեալ արարին ալիւր եւ հաց. եւ զատուցա երկու բաւական եղեւ. Նոցա 'ի յազուրդ անձեանս . . . . . . . . . . | . . . | 25 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ 'ի Զմիւռնիա, այրեցան 600 խանութք եւ 140 տուներ մեծամեծք. վնասն հաշուի 40 միլիոն ղահեկան . . . . . . . . . . | . . . | . | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Մեռաւ Սուքիաս Սոմալ Արքեպիսկոպոսն Վենետիկու շնչարգել ախտիւ 'ի հասակի 70 ամաց . | . . . | 29 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Յամանակաւ Նորատանգքն եռուն ազերոպագիր առ Խարիճիլէ միւշիր փաշայն եւ առ Դինտւլեանն, թողոքելով զպատրիարքն Հայոց, | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսունք Էջմիածնայ | Պատրիարքունք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| թէ «Բանագրեաց զմեզ վասն չընդունելոյ մեր զյարգութիւն պատկերաց, եւ զխոստովանութիւն մեղաց»։ Բայց վանեցան ՚ի Դրանէն անարգաբար . . . . . . . . | Յունվ. | 31 | 1846 | ԹՄՂԵ | ١٢٦٢ | 4 | 3 | 8 |
| Հրդեհ ՚ի Սամաթիոյ Տօղբուեօլի. այրեցան 32 տունք եւ 20 խանութք . . . . . . | Փետր. | 27 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Ներսէս կաթուղիկոսն առաքեաց զՊանակի ադամանդեայ եւ թագազարդ մինէագործ պատկերաւ Փրկչին՝ առ Մատթէոս պատրիարքն. զոր յետ ինն աւուրց տարաւ առ Արտաքին գործոց անսու. Րէշիտ փաշային ՚ի ցուցանել արքային, թէ զինչ հրամայեսցէ։ Յետ երկուց ամսոց տուաւ Պանակին ՚ի Բ. Դրանէն հրամանաւ արքային առ ՚ի կախել ՚ի կուրծն | Մարտ | 27 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Համազգեաց ընկերութիւնն հաստատեցաւ ՚ի Պէյօղլու. . . . . . . . . . . . . | Ապրիլ | 1 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հէօ Տարմագանի Աղէքսանդր իշխանն՝ որ էր անհարազի կայսրորդւոյն Ռուսաց, եկն ՚ի Կ. Պոլիս հանդերձ քանի մի պայազատօք, եւ | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնի | Պատրիարք Կ. Պօլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻԴ |
| եգիտ ընդունելութիւն մեծ յարքայէ . եւ շըրջեալ յերեւելի տեղիս քաղաքին՝ անդ ՚ի Յունաստան, եւ անտի ՚ի Գերմանիա յերկիր իւր . | Ապրիլ | 4 | 1846 | ՌՄՂԵ | ١٢٦٢ | 4 | 3 | 8 |
| Ել հրաման յարքայէ, զի ամենայն Մետրապոլիտք Յունաց գնասցեն ՚ի վիճակս իւրեանց, եւ մի՛ մնասցեն ՚ի Կ. Պօլիս . . . . . | . . . | 5 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Արար Մաթէոս պատրիարք հիմնարկութիւն եկեղեցւոյ ՚ի յՆէշնի գարու՝ յանուն առաջին Լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարթողիմէոսի . . . . . . . . . . . . . . | . . . | 6 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Եմուտ արքայ ՚ի նաւ եռայարկ եւ երեք շոգենաւք ընդ նմա, գնալ յայցելութիւն բերդաքաղաքացն Պոնտոսի. բայց չեւ էր գնացեալ մղոնս 55, պատահեալ մրրիկ մեծ ՚ի հիւսիսային հողմոյ՝ դարձաւ ընդ երեկս ՚ի Կ. Պօլիս ՚ի պալատ իւր . Յետ հինգ աւուրց յապրիլի 4, ել ՚ի Կ. Պօլսոյ ցամաքային ճանապարհաւ երթալ յայնոսիկ կողմանս . եւ յայն օր եւս լինելով օդն մառախլապատ եւ անձրե- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| ւայքն, զանեղն կալաւ զաւուրս չորս 'ի գիւղն Այի Սանփանայ 'ի տան փառօղալեա Պօղոսի Տատեան, որ եւ ընկալաւ ճանփէկ ամիրայ Փափազեան զմի աւուր ապաստանեալ։ Համե-ցաւ արքայ եւ ընդ քաղաքն հայադր մահ-կանան, որք 'ի դպրոցէն Նուաճարանի գնա-ցին յԱյի Սանփանայ երգել առաջի արքային, եւ ետ նոցա պարգեւս՝ իւրաքանչիւրոցն 200 դահեկան, եւ վարժապետի նոցին 300։ Եւ ելեալ անտի գնաց յԱդրիանուպոլիս, եւ անդ զգեցոյց առաջնորդին Հայոց Օսրդսի արքե-պիսկոպոսի զմեծարեալ պատուոյ, եւ ետ նմա նշան ապաստանեալ։ Եւ այսու աւուրս երկուս 'ի տան Յովհաննու Պարոնեպապանեանն, եւ ետ նմա եւս նշան ակնածութեան եւ քեռ-արց նորա։ Նրածի 'ի քաղաքէն զշամբի մաքրան, եւ այլ եւս բարիս բաշխեաց յազգ-եաց ընտանեաց քաղաքին, եւ եւ շրջեցաւ 'ի Ռուսճուկ, 'ի Շումլի, 'ի Սիլիստրէ, 'ի Թրնովա, | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պօլսոյ | Թագաւորք Օսմանեան |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 'ի Նիկէբօլի, 'ի Վիտին, 'ի Վառնա, և յայլ տեղիս. և ուր և գնաց, Ռուէրս և Նշանս բաշխեաց. թղեչխին Մոլտաւիոյ՝ եւ զինն-դանադիր իւր զօրդարեալ ադամանդիւք. իսկ թղեչխին Վալաքիոյ եւ զմեծագին սուր ոսկի և ադամանդեայ. և առանձնակի պաշ-տօնատարց նոյն մէն մի ադամանդեայ մատ. և հիւպատոսին Ռուսաց՝ որ կոչէր Տէպօ-ֆին, եւ զադամանդեայ մատն մի մեծագին. Տը Նըրաֆ մեծ պաշտօնատէրն Ռուսաց ընկա-լաւ նշան ասպետութեան (միւշիր բայէսի) և դարձաւ 'ի Պետերբուրգ. իսկ Տը Հէօ պաշ-տօնատէրն Աւստրիոյ՝ նշան իֆթիխար, և դարձաւ 'ի Գերմանիա։ Եւ այսպէս բազում բարիս ցուցեալ ամենեցուն, եկեալ 'ի շոգե-նաւ 'ի Վառնայէ, և դարձաւ 'ի Կ. Պօլիս 'ի յունիսի 2. Եւ մտեալ 'ի պալատն, ընկալաւ զհամբոյր նախարարաց և մեծամեծաց իւրոց, որք յառաջեցին երկրպագանել նմա սր- | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոսք Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| քայի. եւ եղեւ հանդէս լուսավառութեան եւ ջահավառութեան զերիս գիշերս յուրախութիւն ամենեցուն. Ի նմին գիշերի երեւումն մանկունք ճեմարանին Իւսկիւտարու՝ նոր եւ գեղեցիկ երգս յօրինեալ ընդ վերադարձ արքային, մտեալ 'ի նաւ, գան ընդ վարժարանի իւրեանց առաջի պալատին արքային, եւ երգելով համեղաձայն, հաճեցուցին զարքայ եւ զմայր նորա, որ ետ նոցա զերիս հազար դահեկանս 'ի պարգեւ, եւ հրամայեաց այնպէս երգելով երթալ մինչեւ յԻւսկիւտար . . . . | Ապրիլ | 19 | 1846 | ՌՄՂԵ | ١٢٦٢ | 4 | 3 | 8 |
| Լարախաղաց Յովհաննէս Գասպարեան եւ ընկերք իւր Հայազգիք՝ արքունի հրամանաւ սկսան զճարտարութիւն իւրեանց ցուցանել 'ի Պէյօղլու 'ի գաւառին Նէրպալացւոց . . . . | Մայիս | 3 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Վախճանեցաւ Զաքարիա պատրիարք Երուսաղէմի . . . . . . . . . . . . . . . | . . . . | 7 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ 'ի Զմիւռնիա. այրեցան 100 կրպակք 'ի Թէսթանէ բազարի չուկային . . . . . . . | . . . . | 17 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆԱՒՈՐ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| Շարժ մեծ 'ի գաւառն Մէսսինայի 'ի Մօրա. հինգ քաղաք եւ 30 գիւղք կործանեցան ընդ ամենայն 1500 տունք փլան, եւ 30 անձինք մեռան . . . . . . . . . . . . . . . . | Մայիս | 19 | 1846 | ՌՄՂԵ | ١٢٦٢ | 4 | 3 | 8 |
| Մեռաւ պապն Հռոմայ Գրիգոր ԺԶ. եւ յաջորդեաց կարդինալն Մասթայի Ֆէրրէթթին եպիսկոպոսն Իմոլայի, եւ կոչեցաւ Պիոս Թ. | . . . | 20 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Օծումն Տեառն Ներսիսի կաթողիկոսի ամենայն Հայոց եւ ընդհանրական պատրիարքի Առաքելական կաթողիկէ եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի . . . . . . . . . . . . . . . . | Յունիս | 9 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հ. Գէորգ Հիւրմիւզ եղեւ Աբբահայր վանիցն Վենետիկոյ . . . . . . . . . . . . . . . . | . . . | 12 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Շարժ 'ի Զմիւռնիա. մեծ վնաս արար շինուածոց. կործանեաց զբազում տունս, եւ մեռան 15 անձինք . . . . . . . . . . . . . . . . | . . . | 14 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Օծումն Նորաշէն եկեղեցւոյն Նէնիգանիւ . | . . . | 18 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ 'ի Մէնիմէն. այրեցաւ շուկայն եւ Պէզէստէնն . . . . . . . . . . . . . . . . | Յուլիս | 1 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |

| ՑՈՒՑԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆԱՒՈՐ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՄԷՋ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| Ի Նէմրուտ քաղաքին Նինուէի գաւառ աւերեալ մնացաչէն պալատի միում քաղմաւննեալ. յորոց յորմունան էին քարեղէն 3000 արձանք չաստուածոց, և մարդկան. ոմանց գլուխն մարդոյ, և մէջքն առիւծու, ոմանց գլուխն արծուոյ և մէջքն մարդոյ. և ամենեքին ոչ էին խանգարեալք և եղծեալք. Եւ 'ի սենեկի միում գտաւ արկղ մի, յորում էին հազաչէն անօթք, մատանիք, և զարդք կանանց. և 'ի վերայ նոցա չինեալ զարմանալի ճարտարութեամբ գլուխք առիւծու մանր. գտան անդ և երկաթաման պղնձածոյլ առիւծք. Հաստատեցին Եւրոպացիք, թէ այսպիսի ձևացեալ են յաւուրց անտի Նաբուգոդոնոսորայ արքայի . . . . . . . . . . . . . . . . . | Յուլիս | 3 | 1846 | ՌՄՂԵ | ١٢٦٢ | 4 | 3 | 8 |
| Կայսրն Ռուսաց տարեալ շոգենաւ մի յընծայ առ Շահն Պարսից. նաւն ունէր հինգ մէթրօ երկայնութիւն, և զարդքն ամենայն յակնտոյ և 'ի խաւրիճէ՝ 500 քանկի արժո- | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՐԻՆԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնի | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւորք Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՋԻՏ |
| ղութեամբ. Կալիցին իշխանն տարաւ զայս չոգենաւ 'ի Պետրբուրգէ մինչեւ ցԹէհրան ցամաքի ճանապարհաւ. եւ իջուցին 'ի Բամիրի քաղաք առաջանն մեծ մօտ 'ի Թէհրան . . . | Յուլիս | 5 | 1846 | ՌՄՂԵ | ١٢٦٢ | 4 | 3 | 8 |
| Հայաստան անուն օրագիրն սկսաւ 'ի Կ. Պոլիս . . . . . . . . . . . . . . . . . | . . . | . | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Միխիլ Գիթօֆ դեսպանն Ռուսիոյ եկն 'ի Գալթա լիմանի 'ի տուն Րէշիտ փաշայի, եւ հաստատեցաւ անդ նոր դաշնադրութիւն իմն առեւտրական 'ի մէջ Ռուսիոյ եւ Օսմանեան տէրութեանց, որ կոչեցաւ «Դաշնադրութիւն Գալթա լիմանիյի». Մին 'ի յօդուածոց դաշնադրութեանցն է, զի Ռուսիոյ տէրութիւն ունիցի իրաւունս պաշտպանելոյ զՔրիստոնեայ հաւատակիցս իւր 'ի մէջ Օսմանեան տէրութեան . . . . . . . . . . . . . . . . . | . . . | . | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Մէհմէտ Ալի փաշա փոխարքայն Եգիպտոսի եկն 'ի Կ. Պոլիս, եւ ընկալաւ զնա արքայ արժանաւայել յարգութեամբ . . . . . . . | . . . | 7 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնայ | Պատրիարք Կ. Պօլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| Հրդեհ 'ի Գէբզամա, այրեցաւ բոլոր շուկայն, 2 պանդոկ, եւ քանի մի տուն Տաճկաց. մնաց հաշուի 6 միլիոն դահեկան . . . . . | Յուլիս | 12 | 1846 | ՌՄՂԵ | ١٢٦٢ | 4 | 3 | 8 |
| Վեհափառ արքայն բարեհաճեցաւ ականակուռ նշանս շնորհել երեւելի առաջնորդաց Հայոց եւ Յունաց, եւ սոյն առթիւ առաքեցաւ 'ի պատրիարքարանն մեր վեց նշան ականակուռ. զորս առաքեաց սրբազան պատրիարքն, զմին՝ առ սրբազան Միքայէլ կաթողիկոսն Սսոյ, եւ զհինգսին՝ առ առաջնորդն Նիկոմիդիոյ, Եւդոկիոյ, Զմիւռնիոյ, Մշոյ, եւ Պրուսայոյ . . . . . . . . . . . | . . . | 15 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Մահ Նուռուֆեան Պետրոս ամիրայի 'ի Թըրբէզա . . . . . . . . . . . | . . . | 20 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Մեռաւ Մարուշ Պօղոս գերապայծառն Հռոմէական Հայոց, եւ յաջորդեաց նմա Անտոն Հասունեան . . . . . . . . . . | . . . | 29 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Երուսաղէմի սուրբ Գրիգոր փոխանցին մեծաբարգաւաճ Աղանա Մաթթեան Եպարքոսի Աստղի | | | | | | | | |

| ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆԱՒՈՐ ԻՐԱՑ | Ամիս | Օր | Ամ Փրկչական | Թուական Հայոց | Թուական Տաճկաց | Կաթողիկոս Էջմիածնի | Պատրիարք Կ. Պոլսոյ | Թագաւոր Օսմանեանց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՆԵՐՍԷՍ | ՄԱՏԹԷՈՍ | ՄԷՃԻՏ |
| եպիսկոպոսն եկեալ 'ի Կոստանդնուպօլիս քաղաքս աշխատութեամբ շինեաց 'ի Պերա դպրատուն մի վասն տղայոց իւր ազգին. ուր ուսան եւ քանի մի Հայազգի մանկունք Ասորերէն, եւ եւս ձուլել գիրս Ասորւոց լեզուին, եւ եւս տպել զաւազմաս եւ զաղօթագիրս միտրոպոլեանն մինչեւ ցայժմ Ասորիք չունէին ըզ տպարան, եւ այս եղեւ հրամանաւ Մատթէոս պատրիարքին Հայոց . . . . . . . . . . . | Օգոստ. | 27 | 1846 | ՌՄՂԵ | ١٢٦٢ | 4 | 3 | 8 |
| Հրդեհ յԱնդրիանուպօլիս, այրեցան 110 խանութք, 600 տունք, 40 գինետունք, մեծ ոճնախնկայք, 10 փարմատունք. վնասն հաշուի 18 միլիոն դահեկան . . . . . . . . . | . . . | 29 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Գիւտ նոր մոլորակին Լըվէրիէ կոչեցելոյ 'ի Բռուսաստան . . . . . . . . . . . | Սեպտ. | 1 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Ցուրտ սաստիկ յԵրեւան եւ յԷջմիածին անտեսանելի մինչեւ ցարդ . . . . . . . . | . . . | 2 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ 'ի Սէլամիէ թաղն Իւսկիւտարու . . | . . . | 13 | . . . | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Հրդեհ յԱնդրիանուպօլիս. այրեցան 1000 | | | | | | | | |

